ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ՀԱՅ ԲԱՐՏԷԶ

յորում հաւաքեալ կան անուանք բուսոց եւ բուսականաց
յիշատակելոց ի գիրս Նախնեաց եւ Յետնոց
հանդերձ այնոքիւք որ պահեալք են միայն ի բերան ռամկին

Ստոկհոլմ, 3 B, Arsenalgatan, 6 մայիս 1900:
Զառաջին հաւաքումն սկսեալ եմ ի Պարիս յամին 1877 յունուար 1:

Հրատարակութեան պատրաստեց ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆը
Ձեռագրի սեփականատէր՝ Գէօթեբորգի Համալսարանի
Կենտրոնական գրադարանի տնօրէնութեան թոյլտուութեամբ:
Սահմանափակ տպաքանակով ոչ շահութաբեր հրատարակութիւն:

Ժնեւ, 2001

726 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 337.

[illegible] 2861 [illegible]

"[illegible]" [illegible] 388.

~~[illegible]~~

[illegible]

[illegible] 337.

[illegible] 482.

"[illegible]"

[illegible] 484. [illegible]

[illegible]

[illegible] 1367.

[illegible] 727
[illegible] 312, 319 [illegible]
[illegible] 45.
[illegible] 38–39. 80. [illegible] 136 [illegible]
[illegible] 168.
[illegible] 185.
[illegible] 186, [illegible]
[illegible]
[illegible] Rose [illegible].
[illegible]
[illegible]
[illegible] 683.
[illegible] 2873.
[illegible] Rose à cent feuilles. [illegible] 1843, 230 [illegible]
[illegible] 1843, 230 [illegible] ekatophyllon. Centifolium. [illegible]
[illegible]
[illegible] 220–221.
[illegible] 730. [illegible] 2880.
[illegible] 451 [illegible] 321.
[illegible] 76.
[illegible]
[illegible] 337.
[illegible] 334.
[illegible] 580. [illegible] 47, [illegible]

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

Հ Ա Յ Պ Ա Ր Տ Է Զ

յորում հաւաքեալ կան անուանք բուսոց եւ բուսականաց
յիշատակելոց ի գիրս Նախնեաց եւ Յետնոց
հանդերձ այնոքիւք որ պահեալք են միայն ի բերան ռամկին

Ստոքհոլմ, 3 B, Arsenalgatan, 6 մայիս 1900:
Զառաջին հաւաքումն սկսեալ եմ ի Պարիս յամին 1877 յունուար 1:

3526

Հրատարակութեան պատրաստեց ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆը
Ձեռագրի սեփականատէր՝ Գէօթեբորգի Համալսարանի
Կենտրոնական գրադարանի տնօրէնութեան թոյլտուութեամբ:
Սահմանափակ տպաքանակով ոչ շահութաբեր հրատարակութիւն:

Ժնեւ, 2001

NORAYR N. BUZANDATZI

JARDIN ARMÉNIEN
DICTIONNAIRE DE NOMS DE PLANTES
mentionnés chez les auteurs du Moyen Age
ou conservés uniquement dans le langage parlé

Publication à tirage limité et sans but lucratif,
avec l'aimable autorisation de
Göteborgs Universitetsbiblioteket Centralbiblioteket,
dépositaire de l'original.

Genève, 2001.

© Pour la publication: Martiros MINASSIAN, 108, route de Genève, 74240, France.

ՀՐԱՏԱՐԱԿՉԻՑ

*Մեծանուն Նորայր Ն. Բիւզանդացու դիւանում, որ պահւում է Շուէդիայի Գէօթենբորգ քաղաքի Համալսարանի Կենտրոնական գրադարանի ձեռագրատանը Նորայրի անտիպ ձեռագրերի բաժնում, նրա **Հայ պարտէզ** Թանկագին աշխատութիւնից պահպանուել են աշակերտական տետրերում գրուած հետեւեալները.*

*1. **Մաքրագրուած տիտղոսաթերթ** եւ էջ 1 — 61, այն է՝* Աբեղախոտ — Ախրիզան (Gtg. Bibl. N° 20)*:*

*2. **Սեւագրութիւն**, էջ 63 — 818՝* Արջ — Օշօշ *+ էջ 819 — 902՝ զանազան տարիներում կատարուած (եւ յաճախ Թուագրուած) յաւելումներ (8 : 0. 10, էջ 63-902): Սեւագրութեան գլխաբառերի ընդհատուած շարքը յուշում է, որ դրանից **պակասում են** 1-62 էջերը, որոնց մաս էր կազմում, իհարկէ, 61 էջ Թերի մաքրագրութեան բովանդակութիւնը: Աշխատութեան սկզբից տետր կամ տետրեր պակասելու փաստերից են հեղինակային յղումներ, որոնցից են հետեւեալները.*

ա. էջ 66, Արքայկաղնի*. «Տե՛ս եւ ատէն յերես 4». արդ՝ սեւագրութեան այս էջը չկայ, սա ո՛չ էլ մաքրագրութեան էջ 4-ն է, քանի որ այնտեղ այդ բառը յիշատակուած չէ:*

բ. էջ 837, Աղբերաց արիւն*. «Տա՛ր յերես 21», որը չկայ սեւագրութեան մէջ, եւ մաքրագրութեան նոյնահամար էջում այս երկար բառայօդուածը չկայ:*

գ. էջ 870, Անիւ՞*, «Տա՛ր յԱնիւ էջ 40», որ չունի սեւագրութիւնը, եւ մաքրագրութեան նոյնահամար էջում այս բառը չկայ:*

Սեւագրութեան կորած էջերի բառերի մի քանիսը կարելի է գտնել հեղինակի **Բառագիրք ստորին հայերէնի** *աշխատութեան մէջ (Հրատ.՝ Մարտիրոս Մինասեան, Ժնեւ, 2000 Թ.):*

Հեղինակը **Հայ պարտէզ**-*ում յաճախ յղում է իր* "Օտարաձայն բառք" *(կամ սոսկ* "Օտարք"*) կոչածին, որը կա՛մ իր այս բառարանի երկրորդ մասն էր, կա՛մ՝ առանձին աշխատութիւն, սակայն դա չի պահպանուել նրա անտիպներում:*

*Հեղինակը երբեմն ակնարկում է իր այս աշխատութեան **ընդարձակեալ** տարբերակին, որը նոյնպէս չի պահպանուել. նա այնտեղ լրացրած պիտի լինէր այն, ինչ յաճախ յիշեցրել է իր համար նշուած **գրեա՛** հրամայականով. մաքրագրուած էջերը գուցէ դրա սկիզբն էին:*

***Հայ պարտէզ** Թանկագին բառարանի պահպանուած էջերը հրատարակում եմ նոյնութեամբ, հետեւեալ պայմաններով.*

ա. Հնարաւորին չափ ջանացի ճիշտ տեղադրել նոյն բառայօդուածին վերաբերող հեղինակային մանրատառ բազմաթիւ լրացումները, որոնց նախորդում են նրա իւրայատուկ նշանները, բայց գտնւում են նոյն կամ յաջորդ էջի զանազան տեղերում կամ ձեռագրին աւելացուած աշակերտական տետրերի Թերթերի էջերում, որոնց համարները բառայօդուածում նշուած են մի անկիւնում. կարեւորը յայտնաբերելն էր. այս բոլորից առաջացել են գլխապտոյտ պատճառող խճողումներ:

բ. Հեղինակի եւ բնագրային վկայութիւնների մէջբերումների կէտադրութիւնը խառն է: ԺԹ դարում ստորակէտին փոխարինող միջակէտերի անհամար չարաշահումները շատ յաճախ առաջացնում են վերծանման դժուարութիւններ: Արել եմ, որքան հասկացել եմ. ստուգումների համար հայագիտական ճոխ գրադարաններից հեռու եմ:

գ. Տպագրական զանազան տառատեսակներով ձգտեցի աչքառու դարձնել գլխաբառերն իրենց այբբենական կարգում Թաւ տառատեսակով, շեղատառերով՝ մէջբերումներում, ինչպէս նաեւ հայերէն յղուած բառերը՝ Թաւ կամ շեղ գրերով, օտարալեզու բառերը՝ "արամեան" կոչուածներով:

դ. Նուազագոյնի եմ հասցրել օտարալեզու բառերին վերաբերող օտարալեզու մէջբերումները, որոնք մեր օրերում աւելորդ են, ինչպէս՝ բոյսերի կամ պտուղների տեսակների մանրամասն նկարագրումները կամ անունների Թուարկումները բառարաններում, գրքերում, օրաթերթերում կամ հանդէսներում: Լատիներէն կամ ֆրանսերէն բառերը հայերէն տառադարձեցի շարուածքի դիւրութեան համար:

[ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ]

[Քանի որ Հայ պարտէզ բառարանը չունի մատենագիտական ցանկ, ուստի օգտակար համար] այստեղ տեղադրել հեղինակի *Բննադատութիւն Հայբուսակ*-ինը (Վիեննա, 1925, առանձնատիպ), որ այժմ պէտք է աւելացնել հեղինակի *Բառագիրք ստորին հայերէնի (Հրատ.՝ Մարտիրոս Մինասեան, 2000 թ.)]*.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԻՑ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ
ՅԻՇԱՏԱԿԵԼՈՑ Ի ԲԱՌԱԳՐՈՒԹԵԱՆՍ

Alex. — C. Alexandre, Dictionnaire Grec-Français, 21ème édit., Paris, Hachette, 1884. Յոյն բառից ամենայն գաղղիերէն համանիշք եւ մեկնութիւնք յընթացս գործոյս՝ են յայսմ բառարանէ։

Ամիր. Անգ. անպ. — Ամիրտովլաթայ Ամասիացւոյ Անգիտաց անպէտ, յօրինեալ Թարգմանաբար յամին 1478։ Վկայութիւնքն զորս յառաջ բերած եմ՝ յայն Ձեռագրէ են զոր հաղորդած է ինձ ազնուաբար յամին 1879 ի Կ. Պոլիս Տ. Սերովբէ Ալիշան, Հ. Ղեւոնդ Վ.-ի պատուական եղբայրն։

Առձեռն. — Առձեռն Բառարան Հայկազեան լեզուի. Ս. Ղազար. Ա. տպ. 1846. Բ. տպ. 1865.

Աւգեր. — Հ. Յարութիւն Աւգերեան, Բառգիրք ի գաղղիականէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ. Ս. Ղազար, 1840։

Բժշ. Ա. — Բժշկարան Ա. Այսպէս կը կոչեմ զայն յաւ եւ ընտիր Բժշկարանն՝ զոր Հ. Ալիշան կ՚անուանէ ՀԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, գրեալ ի թուին ՉԽԳ. = 1294 ի վայելումն Հեթմոյ Կոստանդեայ։ Բժշկարանիս հնագոյն մասն կ՚երեւի մինչեւ յաւուրս «յաղթող թագաւորին Հայոց Գագկայ [Առաջնոյ]», այսինքն յամին 989—1019։ (Տես զԲժշկարանս ի Հ. Գար. Զ... Մատեն. Հայկ. Բժշկ. Դպրութեան, Ս. Ղազար, 1889, երես 761—762։)

Գաղ. Ա. — Գաղիանոս Ա., այսինքն բառք Գաղիանոսի, վերնագրեալ Մեկնութիւն բառից Գաղիանոսի Բժշկապետի։ Ընդօրինակած եմ ի Պարիս յամին 1877 ի Ձեռագրէ Ազգային Մատենադարանին (Bibl. Nat.), որոյ թուահամարն է Suppl. 43։ Թիւ գրչութեան Ձեռագրիս է ՉԼԱ = 1282։

Գաղ. Բ. — Բառք Գաղիանոսի Բ. ընդօրինակած եմ ի Ս. Ղազար յամին 1862 ի Ձեռագրէն Վարդան Բ., որոյ գրչութեան թուականն է ՉԾԶ = 1307։

Գաղ. Գ. — Բառք Գաղիանոսի Գ. ընդօրինակած եմ ի Ս. Ղազար ի Ձեռագրէն Բառգիրք ԺԶ։ Բնագիրն կարծեմ անթերի է. իսկ իմ ընդօրինակութիւն կը հասնի մինչեւ յառաջին բառս Հ գրոյ։

Գաղ. Դ. — Բառք Գաղիանոսի Դ. ընդօրինակած եմ ի Ձեռագրէ Ս. Ղազարու՝ զորոյ զմակագիրն չեմ յիշեր։ Բնագիրն թերի է. եւ կը հասնի մինչեւ ի մէջ Ո գրոյ։

Գէորգ. — Գէորգ Տէր Յովհաննէսեան Պալատցի, Բառարան Գաղղիերէն, Կ. Պոլիս 1826։ Այս գործ՝ որ մեծ օգուտ կարէր մատուցանել Հ. Ալիշանի՝ հազիւ կը յիշուի ի հինգ տեղիս Հայբուսակ. թիւք 10. 219. 236. 340. 759 (ի թիւսն 236 եւ 759, գրեալն Չէքլէմէ պէտք է ուղղել Չէնքէլէ գրութեամբ)։

Dezobry. — Dezobry et Bachelet, Dict. général de Biogr. et d'Hist, 2 vol., Paris 1857.

Լիմն. — Հ. Սրապիոն Լիմնեան. Բառարան Գաղղիերէն-Հայերէն-Տաճկերէն. Վիեննա 1853, Ա. տպ.։

Emm. Le Maout. — Botanique, Organographie et Taxonomie, Hist. naturelle des familles végétales, Paris, L. Curmer, 1852.

Fialon. — (Eugène.) Étude historique et littéraire sur Saint Basile, suivie de l'Hexameron traduit en français, 2ème édit., Paris, Ernest Thorin, 1869.

Թրգմ. Գեղոց. — "Թարգմանութիւն Գեղոց զոր ընտրեալ են իմաստունքն եւ կարգեալ ճշմարտութեամբ ի յայլ լեզուաց ի մերս:" Ընդօրինակած եմ ի Ս. Ղազար յամին 1862 ի նմին Ձեռագրէն Վարդան Բ. զոր յիշեցի ի Գաղ. Բ.:

Ինճիճ. Նոր Հայաս. — Հ. Ղուկաս Ինճիճեան, Նոր Հայաստան, որ գտանի յԱ. հատորի Աշխարհագրութեան չորից մասանց աշխարհի, Ս. Ղազար, 1806:

Լիտրէ. — E. Littréի ծանօթ բառագիրքն Գաղղիերէն լեզուի, քառահատոր: — Յաւելուածն (Supplément) հրատարակեալ է յամին 1877:

Կելսիոս. — Olaus Celsius, Շուէտացի. Hierobotanicon, sive de Plantis Sacrae Scripturae dissertationes breves, 2 հատոր, Upsaliae, 1745—1747.

Հայկ. Բառաքնն. — Նորայրի Հայկական Բառաքննութիւն, Կ. Պոլիս 1880:

Ճամճեան. — (Հ. Փիլիպպոս.) Բառարան Իտ.-Գաղղ.-Հայ.-Տճկ., Վիեննա 1846:

— Նորին Վերլուծական Խօսակցութեան ձեռն. Վիեննա 1848:

M. Devic. — Marcel Devic, Dict. étymologique des mots d'origine orientale, հրատարակեալ յաւելուած Լիտրէի Յաւելուածին (Supplément):

Meninski. — Onomasticon. զայս գործ չունիմ այժմ ի ձեռին. քաղած եմ ինչ ինչ ի Պարիս յամին 1879 Ազգային Մատենադարանի (Bibl. Nat.) օրինակէն:

Նոր Հայկզ. — Ս. Ղազարու Մխիթարեան Հարց ծանօթ երկհատոր Բառարանն հայերէն լեզուի՝ մակագրեալ Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, 1836—1837:

Շահրիմանեան. — (Ստեփանոս.) Բժիշկ Տփղիսեցի, յօրինած է Տնկաբանութեան Բառարան, յորում ինչ

ինչ քաղած է Հ. Եփրեմ Սեթեան։ Ընդօրինակած եմ զքաղուածս Սեթեանի։

Pasini. — (Jos.) Vocabularium latinum et italicum, Venetiis 1823.

Payne Smith. — Thesaurus Syriacus, Oxonii, 1868—1893. Պրակք Ա.—Թ., մինչեւ ի գիրն Կոֆ (Qof). Միայն հրատարակելի Րէշ, Շին, Թաւ։

Պօղաճ. — Հ. Յակոբոս Պօղաճեան, Բառարան Հայերէն-Տաճկերէն, Վիեննա 1838։

Ջախջ. Իտ.-Հայ. — Հ. Մանուէլ Ջախջախեան, Բառարան յիտալական լեզուէ ի Հայ եւ ի Տաճիկ բարբառ, Ս. Ղազար, 1804։

— Նորին Հայ.-Իտ. — Բառգիրք ի բարբառ Հայ եւ Իտալական, Ս. Ղազար, 1837։

Ուշքեան. — «Գանձ Հայոց լեզուին, կամ Բառարան Ստեփանեան. այս է, յօրինեալ ի բազմապայծառ Տ. Ստեփաննոսէ Ստեփանեան Ուշքեայ աստուածարան վարդապետէ կամենիցացւոյ:» իմ քաղուածք են ի Ձեռագրէն Ս. Ղազարու եւ ի Ձեռագրէ Ընտանեան Հարց Կ. Պոլսոյ։

Րէատէն. — (Միքայէլ.) Սորա Բառգրքոյն հրատարակեալ է ի Ս. Ղազար յերկուս հատորս. քաղած եմ հարեւանցի առ անպարապութեան. այժմ չունիմ ի ձեռին։

Օղուլլուխեան. — (Յովակիմ.) Նոր Բառգիրք, Վենետիկ 1806։

Այլ մատենից մակագիրք եւ հրատարակութեան տեղիք նշանակեալք են իւրաքանչիւր յիւրում վայրի։

Ա

Աբեղախոտ, *-ոյ, -ով*, գղ. stéchas, որ եւ **Եզնախոտն**. *աբեղախոտ* է թարգմանութիւն թուրքականին *քէշիշ օթու*, *գարապաշ օթու* եւ յիշատակուի ի Հէքիմարանի (= բժշկարանի) Սիմէոնի Կամենկացւոյ. «Հայոց՝ *աբեղախոտ*, արապաց՝ *քէշիշ օթի*, տաճկաց՝ *քարապաշ օթի*, պարսից՝ *ստատախօտոս*. ինքն խոտ է, ծիրանածաղիկ ունի. լաւն Պուրսայ լինի. տաք է եւ չոր»:

Աբոսի, *-սւոյ*. ազգ ազնիւ տանձի, որ թուրքերէն կը կոչուի *ապպասի*: Տե՛ս ի կարգի տանձից ի բառն **Տանձի**:

Ագարակի խոտ, թուրքերէն *էկիր քէօքիւ* կամ լոկ *էկիր*, որ եւ *էկիր օթու*, գղ. roseau odorant, acore (Լիտրէ ի Roseau, 3), որ եւ **Բաշխ**: Կը յիշատակուի ի *Հայբուսակի*, 4. «*Ագարակի խոտ*. ի գիրս յիշուած չէ, բայց ի Նոր գրողէ [ո՞վ է "Նոր գրող"ն], որ համարի գրոց *բաշխ* կոչածը (տե՛ս ի Բ). սա արաբերէն կոչի *ակիր*, *ակար* եւ լատինն acorus, փռ. acore. արդեօք այս անուննե՞րն են *ագարակ* փոխուած, թէ *ակարն*՝ *յագարակէ*»: Թուրքերէն *էկիր* (Գէորգ) յ'*Ալվահ*, ի *Սիւրթ*: «*Էկիր քէօքի* ի *Վէժէն*, ի *Վէճ*, ի *Վէրէճ*» (Աւգեր.). գղ. «acorus, արմատ կամ բոյս ինչ բժշկական, *էյիր օթու*, *աղաղ էյիրի*» (Աւգեր). լտ. «acorus palustris, *վէճ*, *էկիր օղու*, *օղուլլուխ*, 109. լտ. calamus aromaticus, համեմ եղէգն, *քաղաք էյրիի*», անդ 60, որ յերես 167ա գրի «Համեմ եղէգն, *քաղաք էրիյի*»: «*Ագաք էկիրի*, acorus verus» եւն (Րէսսէն). տե՛ս ի **Բաշխատակ**:

Ագարիկոն, *-ի, -իւ*.

Ագռաւի թուր, թարգմանութիւն արաբականին *սէյֆ իւլ ղուրապ* = "սուսեր ագռաւու", գղ. épée du corbeau (Իբն էլ-Բէյտար, Բ, 875բ, 984, 1260). յն. *կիֆիոն*, petite épée, quelquefois glaïeul, plante, Alex., 962ա: *Հայբուսակ*, 5, յԱմիրտովլաթայ. թուրքերէն *ղուզղուն գըլըճը* = Ամրտ. *ղուզղուն գլիճի*: Սխալ գրէ *Հայբուսակն*, 5, ծան. «*Ղուզղուն*՝ արծուի տեսակ բարձր թռչող հաւ մ'է, հայերէն *ոսկրկուլ* կոչուածն համարուի» եւ այլն: Գղ. «glaïeul, *յուրջ շուշան*, *մաճի գէմպաղ*, *ղուզղուն գըլըճը*» (Ճմին). իսկ Աւգեր՝ «տունկ ինչ հիրկանման, *հիրիկ*, *էկիր օղու*, *մաճի զամպաղ*». «glaïeul, *բրաշուշան*» (Վակներ, 163): Թուրք. «*ղուզղուն*, *արջնագռաւ*, ազգ ագռաւու», (Պօզան.):

Ագռաւի ծաղիկ, թարգմանութիւն թուրքականին *գարգա չիչէկի*, գղ. jonc, որ եւ *կնիւն*: «*Ագռաւի ծաղիկ*, կնիւն». այսպէս գրեալ է ի *Բառգիրքն հայոց* Երեմիայ վարդապետի տպագրեալ յամին 1728. տե՛ս զայս *Բառգիրք հայոց*, երկրորդ տպագրութիւն, ՌՃՀԷ = 1728 ի *Հայկ. մտնգիտ.*, երես 88. ի սմին բառագրոց է եւ *փրփրուկ* եւ *մայարրայ*, զոր տես յԱխոտ: Նոյնպէս եւ Սիմէոն Կամենկացի ի *Հէքիմարանին*. «Հայոց՝ *կնիւն*, արապաց՝ *պրտու*, տաճկաց՝ *խասոյ [= գարգա] չիչէկի*. պարսից՝ *ճկլ*. ինքն է *ագռաւի ծաղիկ*»: «*Ագռաւի ծաղիկ*. ի գիրս չեմ հանդիպած, այլ ի Նոր բառագիրս [ո՞ր բառագիրս] ջրային եղէգի տեսակ է, որպէս կնիւն» (*Հայբուսակ*, թիւ 6): «Հանգիստ նիրհում էր նեխված նաւիրը: Նրա ափերը շրջապատված էին եղէգով, որ մեղմիկ շնչում էր հոսած տղմոտ ջրի վրայ կոացած տխուր *ագռաւածաղիկի* հետ» (Սկիտալեց, լրագրական թերթը, Առակ, *Մշակ*, 21 Նոյեմբեր 1902, Ա., ա, թարգմանութիւն ի ռուսերէնէ Կ. Կրասիլնիկեանի). ի նմին յօդուածի յիշի

ագռաւածաղիկ եւ այլ հնգիցս:

Ագռաւի նանկ, ագռաւու նանկ, թարգմանութիւն արաբականին *ըինճլ իւլ ղուրապ* = "ոտն ագռաւու", ptychotis verticillata ըստ Լըկլէրի (Իբն էլ-Բէյթար, Ա., 2): «*Ատրիլալ, աատրիլաղ* (այսպէս գրած եմ յՕտար, յ՛*ըռինճլ իլ ղուրապ*). բուրն *խյէլ* ասէ., բայց չէ ստոյգ. եւ *զուզզուն* (տե՛ս *զուզզուն* յԱգռաւի թուր) *այայլ* կ՛ասեն: Եւ ինքն ամենայն դիմօք ի սամիք կու նմանի, բայց ծաղիկն սպիտակ է: Եւ այլ կու ասեն, թէ հունդն նման է կարոսի հընդին եւ խիստ լեղի է եւ կապուտգոյն, եւ կայ, որ՝ կանաչ, ֆիչ մի մեծկակ է. այն է *այատրիլալի ղալյն*: Եւ այն, որ կապուտն է, *այատրիլալի մըրրին* [= եգիպտական] է, եւ *ըռինճ իլ ղուրապ* կու ասեն, որ է հայերէն *ագռաւու նանկ*. եւ *ճուզվի չէյխան* [= արբ. *ճէզէր իւլ չէյթան*, [*Հայբուսակն*, 7, կը գրէ *ճէզըրի չէյզան*], *սատեպղին* *սատանայի* կ՛ասեն» (Ամիրտոլվաթ, *Անգիտաց անպէտ*, ըստ *Հայբուսակի*, 7). զվերջին մասն վկայութեանս ես ընթերցած եմ յ*Անգիտաց անպէտն*, ՁՁ Ս. Ղազարու, *Բժշ*. Ն [= *Բժ. բոգ*., Գ], երես 1: «Եւ այն, որ կապուտ է, այն *այատրիլալի մըրին* (Ձ *մըրին* է կարծեմ) է, եւ *ըռինճ իլ ղուռապ* կու ասեն, որ է հայերէն *ագռաւի նանկ*»: Ի նմին ձեռագրի Ս. Ղազարու գրեալ է եւ յերես 3. «*Ագռվոյ նանկ*, որ է *ըռինճլ իլ ղուռապպա ատրիլալն*», պիտի *ղուռապ ատրիլալն*: Տե՛ս, aathirilal, ptychotis verticillata Իբն էլ-Բէյթար, Ա., 2:

Ագռաւի ոտք, թարգմանութիւն արաբականին *ըինճլ իւլ ղուրապ* = "ոտն ագռաւու", յն. *կորոնոփուս* = "ոլուոյ ոտն", lotus ornithopodioides ըստ Ֆրասսի եւ Լըկլէրի, plantago coronupes ըստ Շպրենգելի. տե՛ս Իբն էլ-Բէյթար, Բ, 1031 եւ ծան.: «*Ըռինճլ իլ ղուռապ*, որ է *ագռաւին ոտքն*. ի գետնէն վեր մէկ թիզ կ՛ելնէ եւ երբեմն երբեմն տերեւ ունի. նման է կոտման տերեւին. եւ այն տերեւն, որ ի մէջն է, յերկանուկ է քան զերկուքն, եւ երկու քովինն եղրմակ կու լինի. նման է ագռաւի ոտաց» (Ամիրտոլվաթ, *Անգիտաց անպէտ*, Ձ Տ. Սերոբէի Ալիշան, երես 92ա): Ա՛յլ Բժշկարանք կը գրեն (ըստ *Հայբուսակի*, 7). «Խոտ է, երբեմն տերեւ ունի, միջինն՝ երկան, եւ քովինն՝ կարճ». «Մայիսն կը բուսնի այս խոտս. դեղին ծաղիկ ունի»: *Հայբուսակն*, 7, խառն կը գրէ. «*Ագռաւի նանկ* կամ *ագռաւի ոտք*», փոխանակ որիշ որիշ գրելոյ:

9 մայիս 1900

Ագռաւուկ, *-ւկի*, ռամկօրէն *ակռվուկ*, զղ. églantier, gratte-cul, որ եւ *մասուր*՝ *մասրենի*. «*Ակռվուկ*, տն. *գուշ պուրնու*. բուսի է» (Խոտրջուր), (Հ. Սիմոն Ճուղարտեան, *Գաւառական բառք*, *Գտ*., Գ, 5): «*Ակռվուկ, ղուշպուռնի* [= *ղուշ պուրնու*], բուսի է» (*Բառք խոտրջրեցւոց*, 45): Թուրքերէն «*Գուշ պուրնու*. 1 կտուց. 2 սերմն, պտուղ վայրի վարդի, վարդ վայրի» (Պօզաճեան ի *Գուշ*): «*Ակռվուկ*, վայրի վարդ եւ իր պտուղն. թ. *գուշ պուռնու*: Լաւագոյն հայերէնը տեսնենք ի *մասրենի*» (*Հայբուսակ*, 43):

Ագրի, ռամկօրէն. տե՛ս Ցակրի:

Աղմաթիրոն, *-ի*, արմաթիդոն, *-ի*. «*Աղմաթիրօն*, մշեցւոց բառ. բուսի մի է, որոյ ծաղիկը բաց կանաչ *ճէնկեարի* է, իսկ արմատի ներքեւ կաղինի (տպ. կաղնիի) մեծութեամբ համեղ հիւթ մը կը գոյանայ, զոր տեղացիք նոյնպէս իբրեւ համեմ կը գործածեն» (Տէր-Վարդանեան, *Արեւելեան մամուլ*, 1896, յունուար 1, երես 32, թիւ 141): Կը յիշուի *արմաթիդոն* ի կարգի վայրի բանջարոց Մշոյ ի յօդուածին *Մշոյ աշխարհ*, որ հրատարակեալ է ի *Լումայ* հանդիսի, 1899, յունուար, երեսք 114–115. տե՛ս ի ստորեւ ի թիւն 39. «Տարօնոյ ժողովուրդը պարտիզի բարիքէ զուրկ մնալով՝ վայրի բազմաթիւ բանջարներ կուտէ կէս վայրենիի նման. գարունը եւ ամառը զօր հանապազ անոնց ետեւէն պտըտելով, ժողվելով եւ ցանուած արտերը վնասելով: Կերած վայրի բանջարներուն տեսակներն են՝ 1. *խաւրծիլ*, 2. *կանկար* (տպ. *կանկառ*)՝ երկու տեսակ, 3. *ժախ*՝ երկու տեսակ, 4. *բող*, 5. *նուիկ*, 6. *սպիտկուկ*, 7. *գմուկ* (տպ. *կմուկ*), 8. *մանտակ*, 9. *քեղ* (տպ. *գեղ*), 10. *աւելուկ*, 11. *սոխուկ*, 12. *սետորուկ*, 13 *բորբիկ*, 14. *օձխուկ*, 15. *լողմատի նար*, 16. *դաղձ*, 17. *անանուխ* (տպ. *անոխ*), 18. *անիսոն*, 19. *ծարթին*, 20. *կատղէն* (*կատղէն նոյն բուսի ընդ կատաղին*՝ *կատղենի*), 21. *դդման*, 22. *բրուարաշ*, 23. *կերդուկ*, 24. *էրնննակ* (տպ. *երնջակ*), 25. *սինձ*, 26. *կիծակ* [= *կայծո՞ւկ*], 27. *սատղնիուշ*, 28. *խնձորուկ*, 29. *տատրակ*՝ երկու

տեսակ, *30. սաւտուկ, 31. կոնդէզ, 32. ծիակոնդէզ, 33. խանտող* (տպ. *խանտոխ*), *34. մատուկ, 35. չէչլուկ, 36. գոզիկ* (տպ. *կոզիկ*)*, 37. կոպեղ, 38. կակաչ, 39. արմարիդոն, 49. սունկ*՝ երկու տեսակ, *41. փարփառ, 42. բազկիկ, 43. տանդոնիկ, 44. մորեմուկ, 45. ոդին* (տպ. *օդին*)*, 46. շաղգմուկ, 47. առուի կարոս, 48. առուի կոտմուկ կամ ջրկոտմուկ, 49. խրխնդուկ, 50. սիպեղ, 51. բդուկ [= պտուկ], 52. ծինկ, 53. խոչուպլուր, 54. նդիկ, 55. վայրենի մեղր, 56. պատրխան, 57. պոչով փարչիկ, 58. ննեղու պաշար կամ մոլոշ, 59. մոմիմար, 60. փնկի* (տպ. *բնկի*)*, 61. ծնեբեկ, 62. գամպուր, 63. կանճրայ* (տպ. *գանճրայ*) եւ այլն, որոց շատերը տեսակ տեսակ կերակուր կ'ընեն եւ քանի մը տեսակներն ալ հում կ'ուտեն»: «*Աղմարիրոն* կամ *աղմարիւրիւն*. կարմրուկ, կոնդէզաւոր բոյս մ'է, ուտելի. տերեւները՝ մոլոշի նման, թանձր ու մանր. ծաղկները դեղնագոյն կ'երեւին (չորցածը տեսնելով), բաժակաձեւ կամ շրթնաձեւ: Ծանօթ է ի Կարին, Խոտրջուր, Ալաշկերտ» (*Հայբուսակ*, 3269):

Ադոլ, տե՛ս **Ատոլ**:

Ազազուն.

Ազատ, *-ի*. «*Ազատ*. այսպէս կոչուած է նոր գրուածի մի մէջ [ո՞ր գրուած] *բրաբիոն* ծաղիկն. տե՛ս գայս» (*Հայբուսակ*, 9): Գրս. «*Սուսէնի ազատ*. է տեսակ իմն շուշանի, որ քան զայլսն լինի երկայնահասակ. *պէր նէվ սուսէն տիբը*» (Գէորգ). — «*Սուսէն*. է ծաղիկ իմն յայտնի եւ ունի չորս տեսակս. մին սպիտակ լինի, զոր կոչեն *սուսէ՛նի ազատ*, որ ունի տերեւս տասն. եւ ոմանք զսա *ըէնպագ* ասացին, բայց ոչ է» եւ այլն (Գէորգ, ի *Սուսէն*). (տե՛ս ի **Շուշան**): Գրս. «*Ազատ* "անկապ" ...: *Ազատ* կոչի նաեւ *սէրվն*, այսինքն նոճին, եւ՝ *սուսէնն*, այսինքն շուշանն. եւ ցուցանէ զնոսա զերծ ի կապից եւ ի զոլոյ պատատեալ յոստ ինչ ...: Հեղինակ ոմն վասն *սուսէնին*, որ է շուշանն, *ազատ* կոչէ, սակս լինելոյ նորա սոսկ եւ թափուր ի զունոյ եւ յերանգոյ: Ամենայն ծառ, որ ոչ ունի պտուղ, որպէս *սէրվ* եւ *սուսէն*, *ազատ* անուանեալ է» (Գէորգ, յ*Ազատ*). տե՛ս *զազատ* բառէդ եւ ի **Նոճի**: Ի պարսկականէն *ազատ* է նաեւ *ազատատարու* = աւելուկ (Գէորգ) եւ *ազատտիրախտ*. տե՛ս **Ազատդրախտ**:

Ազատդրախտ, *-ի*, գդ. azédarac, arbre saint, arbre à chapelet. *Բժշ.* Բ (հինն Չ), 867. «*Ազատդրախտ. ջանդարի*» (*Թրգմ. դեղոց*): «*Ազատդրախտ*. ինքն մէկ ծառ մն է, միրգ ունի, որ ի կաղին կու նմանի ... լաւն այն է, որ յածվենիքն բուսնի ... : Իպն Պայտարն ասէ, թէ իր ծառն նման է պլուտին ծառին, եւ միրգն այլ ի յալուն կու նմանի, բայց ի մրգէն մի՛ ուտել, վնասակար է, կու սպաննէ. եւ թէ ծաղիկն հոտվտաս, զըղեղան կալուածն բանայ ...: Պատեհին ասցել է, թէ այս ծառին ի Կուրկան [ի Վրկան] *գահրիգամին* ասեն եւ ի Տապարիստան *տաղաք* ասեն եւ պարսկերէն *տրախտի տաղ* ասեն ... եւ գոյնն ի սեւութիւն քշտէ. եւ թէ գիր տերեւն սողունքն ուտեն, մեռնին» (Ամիրտովլաթ, *Անգիտաց անպէտ*, Ալիշան, 15բ): *Հայբուսակն*, 10, յաւելու յԱմիրտովլաթայ. «Մէնհաճին տէրն* ասեր է, թէ սպաննող է. եւ մեք փորձեցաք, որ չէ հանգզուն, եւ իր պտուղն քիչ մի քաղցրութիւն ունի. եւ Մինհաճին տէրն ասէ, թէ խիստ լեղի է. եւ չէ այսպէս: Եւ տերեւն զմազն կու երկնցնէ, թէ զգլուխն իրմով լվանաս»:

**Մէնհաճին տէրն է Իբն Ջէզլա Բաղդադեցի բժիշկն ԺԱ դարու (Վիւսթենֆելդ, յօդ. 145), որ Մէնհէճ (= պրահեռ՝ արքունի ճանապարհ) անուամբ բժշկական նիւթոց բառարան մի գրած է. գայս բառարան յաճախ կը յիշէ եւ կը հերքէ Իբն էլ-Բէյթար (Լըկլէրք, Ա, երես ԺԶ):*

Գրս. «*Ազատտիրախթ* է ծառ իմն, որ ունի ծաղիկ որպէս *գլէյլաք* եւ հաստ կապէ, որ ոչ կարէ ուտիլ, որոյ ծաղիկն անուշահոտ է, եւ զհատս նորին *թէսպիհ* առնեն, եւ յայն սակս կոչի *թէսպիհ ազաճի*, զոր *թաճէք* կոչեն յաշխարհին Դապէրիսթանու» (Գէորգ): *Թաճէք* բուն ուղղելի *թաղէք* կամ *թախէք (= տաղաք)* ըստ Ամիրտովլաթայ, tahek ըստ Լըկլէրի, զոր տե՛ս խոնարհագոյն, որպէս գրէ Գէորգ ի կարգի Դ նշանագրի. «*Դաղէք* նոյն է ընդ բառին *ազատ տիրախթ*, որ է ծառ իմն, զոր կոչեն ի Կիւրկեան *գէհրիգէմիյն* եւ ի գաւառս Բէյի եւ Դապէրիսթանու՝ *գախէք*»: Իսկ ի *Զէհրիգէմիյն* (= բոյն եկրի) գրէ Գէորգ. «Տե՛ս *ազատ տիրախթ* (տպ. *տիտիրախթ*). եւ է սա բառ ընակչացն Կիւրկեանու»: Տե՛ս ի Լիտրէ azédarac, arbre saint, arbre à chapelet յArbre, 13: Տե՛ս ի M. Devic, azédarac, որ զոր ինչ ասէ Գէորգ զնոնւոյ ի բառն *ազատ*, զայն Դըվիկ ասէ *զազատդրախտէ*:

Շփոթութիւն կամ սխալ կայ ի յաջորդ բան *Հայրուսակի*, 10. «Մեզի ամենէն կարեւորն է … բժշկապետին Ասարայ յայտնածը, թէ Խորենացւոյ *Աշխարհագրութեան* մէջ Արաբիոյ բուսոց կարգը դրուածն *խախակ* այս *ազատտիրախտ* ծառն է. ինքն ի՞նչպէս ստուգեր է արդեօք»: Ասար անշուշտ գրած է *թախակ* կամ *գախակ*, որ է միւս անուն *ազատդրախտի*. տե՛ս վերագոյն *տաղաք, գաղէք, գախէք*, tahek: Իսկ յ*Աշխարհագրութեան* Խորենացւոյ, 612, ուր գրեալ է. «Երջանիկն Արաբիա … եւք անոյշք ի նմա եւ ծաղիկք վեշտասան, հալի, ջափու, մաղապ, *խալակ*», այլովք հանդերձ. ի ծան. 4 կ՚ըսուի վերջին *խալակ* բառին համար. «Հին տպ. *խախակ*, մի օր. *խալոկ*, այլ օր. *խաղուկ*, որ է քրքմեղ»: Ուղիղն է *խալուկ* կամ *խաղուկ*, արբ. *խալուկ*. տե՛ս յԻբն էլ-Բէյտար, Բ, 898:

10 մայիս 1900

Ազատքեղ, *-ոյ*, գղ. persil, թուրք. *մաղտանօս*, որ եւ *վայրի կարաւս, վայրի քրեւս, քարի քրեւս.* «*Պետրոսելինոն. ազատքեղոյ* սերմն» (Գաղիանոս Ա). Գաղիանոս Բ ունի «*Ազատքեղի* սերմն», այլ լաւ եւս է *ազատքեղ, -ոյ*, որպէս *քեղ, -ոյ*: «*Փտրասալինոն*. վայրի կարօսի հունդ» (*Թրգմ. դեղոց*): «*Պէտրասէլինա*. վայրի *քրէվս*» (*Բժշ. Ա.*, 145): «*Սեւալիօս* (= գղ. séséli). վայրի *քրէվսի* ունտ» (*Բժշ.*, Ա., 145): «Քարի քրէվսի ունտ» (*Բժշ. Ա.*, 48): Դիտ.. *ազատքեղ* է ի բառից *ազատ* եւ *քեղ*. ի նոյն *քեղ* բառէ է եւ *քեղակարաւս*: *Ազատ* բուն նշանակել "վայրի, վայրենի", իբր "վայրի քեղ": «*Ազատ* հացին … այս ինքն վայրի հացին» ասէ եւ Հ. Արս. Բագր. ի Վիրգ. *Մշ.*, Բ, 69, ծան. եւ 71: «*Պետրուսելինոյ*, որ է *փատրասալինն*» (Ամրտ., *Անգ. անպ.*). — «*Ֆատրասալինն*, եւ ինքն է վայրի քարաւիզն. եւ լաւն այն է, որ հունտն սեւ լինի եւ պինտ լինի եւ խոշոր լինի … եւ թէ զինքն շատ ծամեն, զոտին եւ զխտորին հոտն կու կորէ … եւ իր հունտն աւգտէ ամենայն մահացու դեղոց», նոյն, անդ, *Հայրուսակ*, 11: Լտ. *պետրոսելինում*: «*Ազատքեղ, -ոյ*, խոտ որ ի քարուտ տեղիս բուսանի, շատ մեծագոյն քան զընտանի *մատանոս*. դաշտի *թարա*, *պետրոսելինում*. *Գաղ. Բառ.*» (Ռոշքեան):

11 մայիս 1900

Ազոխ 1, *-ի, յազոխէ*. (ստի՞ *շնազոխ*). գղ. "խակ խաղող", որ եւ **ժուռ, ժռատ**. «Որպէս *ազոխ* ատամանց վնասակար է, եւ ծուխ՝ աչաց, նոյնպէս եւ՝ անաւրէնութիւնն, որոց վարին նովաւ», Առակք Ժ 26: «Յառաջ քան զհունձս, յորժամ բովանդակեսցի ծաղիկն, եւ *ազոխն* ծաղկեսցէ, ծաղիկն ազոխացեալ, եւ հատանիցէ զմանր մանր ողկուզոցն մանգաղաւ, եւ զուռսն կտրիցէ եւ ի բաց հատանիցէ», Ես ԺԸ 5, որ յՍսկ., *Ես.*, ԺԸ, 70, թարգմանեալ է. «Յառաջ քան զամառն, յորժամ կատարեսցի ծաղիկն եւ *բուզխն* ծաղկիցէ, ծաղիկն ազոխացեալ, եւ բառնայցէ զմանր ողկուզոյն մանգաղաւ եւ զմանունս որթոյն [տպ. որթւոյն] հատանիցէ եւ կտրիցէ»:

«Յաւուրսն յայնոսիկ մի եւս ասիցեն, թէ "Հարքն *ազոխ* կերան, եւ որդւոց ատամունք առին". այլ իւրաքանչիւր ի մեղս իւր մեռցի, եւ որ ուտիցէ *զազոխն*, նորին ատամունքն առցին» (Երեմիա ԼԱ 29-30): «Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ. "Որդի՛ մարդոյ, զի՞նչ է ձեզ առակդ այդ ի մէջ որդւոցդ Իսրայէլի, զոր ասեն, թէ 'Հարք *ազոխ* կերան, եւ որդւոց ատամունք առան' "» (Եզեկ ԺԸ 1-2): «Այնպէս եւ յերեւել խաղողոյ յորթոյ ջուր թթու եւ աղտաղտ (Զ Անտոնեանց՝ շեղտեղտ) ունի, եւ *ազոխն*՝ թթու եւ գխտորահամ. եւ իբրեւ հասանէ ի չափ խաղողն, առնի ամենեւին անուշարար քաղցրութիւն» (Բրս., *Վեց.*, Է, 102), ըստ Զ Անտոնեանց, իսկ տպ. ունի «*յազոխն* … գխտորահամս … հասանի չափ խաղողոյն»: «Զորթդ ո՞չ տեսանես, յորժամ յաւուրս գարնայնոյ զպտուղն ծնանիցի, քանզի զառաջինն տերեւովքն ծածկէ եւ ապա զաւրէն մաւր առ սակաւ սակաւ սնուցանէ անեցուցանելով. եւ փոփոխումն դարձեալ *յազոխէն* խաղող գործէ, մինչեւ ամենեւին հասուցանել զմիրգն» (Փիլ., *Կենդ.*, 164): «Իսկ այն, որ *զազոխն*՝ այժմիկ ասացեալ խաղող, եւ կամ զխակ՝ բուզսն անուանեալ, մրգեքաղել կամիցի, թէ յիւրոցն իսկ առցէ, որպէս եւ կամիցի, եւ յորժամ ախորժիցէ, պտղաքաղեսցէ» (Պղատ., *Աւրէնք*, Ը, 298): «Խակագոյն *ազոխից* անտիոցն» (Մագ., ԺԶ, *Նոր Հայկզ.*), որ ի Զ Մելքոնի, 45, է *աղօրիցն*: Աստի՝ *ազոխանամ, ազոխացուցանեմ, ազոխջուր* (*Վստ.*):

18 մայիս 1900

Ագոխ 2. *-ոյ՞* կամ ագուխ, *ագխոյ՞*. «Եւ եղ (պատանեակն Եղիսէի) յանդն քաղել արիովտ. եւ եգիտ որթ յանդին եւ քաղեաց ի նմանէ *ագոխ* լի շալակաւ իւրով եւ եկն եւ արկ ի սան եփոյն, զանգի ոչ ճանաչէր, եւ արկ առաջի արանցն ուտել: Եւ եղեւ յուտելն նոցա յեփոյէ անտի, աղաղակեցին եւ ասեն. "Մահ է ի սանի աստ, ա՛յր Աստուծոյ": Եւ ոչ կարացին ուտել» (Դ Թագ Դ 39-40). իսկ յեփր., *Որ ունի զհարսն*, թարգմանեալ է "դառն դդում", տե՛ս ի Դդում: «Եւ ծովք են երեք մեծք, զորովք երկիր շուրջ է: Առաջին՝ հնդկացն, որ ասի Կարմիր ծով ... յորոյ ծոցոյ ելանէ Պարսայ եւ Արաբացոց ծովքն. որպէս թէ ի հիւսիսի յարեւմտից կոյս՝ Պարսայն, սակաւ ինչ իբրեւ զաղիւսակ. եւ Արաբացւոցն՝ *ագխոյդ* նման» (ընդարձակեալ *Աշխարհացոյց* Մ. Խորենացւոյ, 11), ուր ասէ հրատարակիչն Հ. Արսէն Սուքրեան *զագխոյդ* բառէ ի ծան. 1. «Այսինքն ի ձեւ դդմոյ վայրի» եւ ի գաղղիերէն թարգմանութեանն, 11, դնէ «որ ունի դառն դդումի ձեւ»: Տե՛ս զոր ինչ գրէ *Հայրուսակն*, 1789, *զագոխ* բառէդ: Պրս. «*Քէպէսթ, քէպէսթու* է այն բոյսն, որ կոչի թուրքերէն *չըպուճէհլ գարփուզի*, եւ արաբերէն *Հանզալ*. ասի եւ *խառաս*: Եւ է յոյժ ազդու լուծողական ի վարել զմաղձ» (Գէորգ). — պրս. *խառղէհրէ* [= իշարոյն], (Գէորգ, 2դ. նշ).. Ն՛ս *քէպէսթ*: Արբ. *Հանզալ* "դառն դդում" (Իբն էլ-Բէյտար, Ա., 714): *Վայրի ձմերուկ* (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայրուսակ*, 1789):

Ագոխ 3 (վայրի), վայրի ագոխ, որ եւ Գառնադմակիկ. «*Ասպուռն*, որ է *Հայլըն յոլամն*, որ է *վայրի ագոխն*, որ ինքն հանապազ կենդանի է եւ կանանչ է եւ դալար է. յիշած է ի վերայ *հոյին* Աստուծով», (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 32ա). «Գառնադմակիկ, որ յ. [= յարապն] *Հայ լըլ յոլամ* ասէ, եւ ֆռ. [= ֆռանկն] *սեմպերվիվում* [լտ. *սեմպերվիվիւում*] ասէ, եւ թ. [= թուրքն] *դայեա դուասուզի* ասէ: Եւ ինքն երեք ցեղ է. ա. ցեղին տերեւն տափակ է եւ թանձր է. եւ ա. ցեղն մանր է, զէդ *ագոխ* է. եւ մէկայլն ի քարերուն վերայ կու բուսնի ... Պատեհին ասէ, թէ այսոր պարսկերէն *ասպուռն* կու ասեն» եւ այլն. նոյն, անդ. տե՛ս լիով ի Գառնադմակ: Թուրք. «*դայյա գօրուղու*, *զառնադմակ*, բոյս» (Պօղանեան ի *Գայյա*). — «*տամ գօրուղու*, *աղջկտակ*, խոտ» (Պօղանեան ի *Տամ*): Իտ. «*սեմպրեվիվա* է բազմատեսակ բոյս ինչ անբարշամ, Հէր տէմ թաղէ կամ գուլադ օթու: *Սեմպրեվիվա մաջջիորէ*, *սազըր կիւզէլի. սեմպրեվիվա մինորէ*, *տամ գօռուղու*» (Ջախջախեան, *Հայրուսակ*, 15, 421):

[[**Ագուխ**, տե՛ս Ագոխ 2:]]

Արմաբիդոն, տե՛ս Արմաբիրոն:

Աժրի (ռամկօրէն), տե՛ս Հանարի:

Ալաժահրի, *-բւոյ*. գրի եւ իբր ռամկօրէն *ալանէհրի*. պտուղն՝ *ալաժահր*, *-ի*, զղ. gaude՞. «Տորենու տակ, *դէրադէշաւ*, *տարուն*, *ալանէհրի*. սղկէ զամենայն եւ ի միատեղ լի՛ց յաման ջրով» (*Արուեստաբանութիւն*, ՉՉ Անտոնեանց, թիւ ձեռ. ՃԻԴ). աստ *ալանէհրի* դնի իբր պտուղն՝ *ալաժահր*:

Յիշատակութիւնք յարդի բուսագրողաց. «Ի հարաւային լերինս իւր, երից աւուրց երկայնութեամբ Մշոյ գաւառին յարեւելից յարեւմուտս ունի (Մուշ) բազմութիւն անտառաց պէսպէս ծառոց, զորս կոչեն՝ 1. *ալաժահրի*, որոյ պտղովն ներկեն ի գոյն դեղին զմորթս եւ տանին մինչեւ յԷրզիրում, 2. *տըխկի [= դղքի]*, 3. *նորգենի*, 4. *հացի*, 5. *քարհացի* [տպ. բուի *քառհացի*], 6. *մամոխի*, 7. *մոշի*, 8. *հոշի*, 9. *ծըպեխի*, զորոյ զկեղեւն մթին կարմիր ի գործ ածեն ի ներկս տկաց կարին, որ սաստիկ պնդացուցանէ եւ անփուտ պահէ, 10. *կաղամախ* կամ *կաղմխի*, 11. *բեղօշ* կամ *բեղի*, 12. *յրդենի*, 13. *ալոճի*, 14. *կաղնի*, 15. *ընկուզի*, 16. *տանձի*, 17. *ուռենի* տարբեր տեսակաւ, 18. *մասուրենի*, որ է վայրի վարդ ծառացեալ, 19. *խնձորի*, 20. *շլորենի* եւ այլն, բայց չունի բնաւ մայրի ծառ, որ ինքն *չամ*, եւ մախր» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 183): — «*Ալաժահրի* է թուփ ինչ կամ փոքրիկ ծառ, որ տայ զպտուղս զնծանման, զորս աղան յերկանս կամ յաղօրիս խաղախորդք, որով ներկեն զդեղին մորթս: Իսկ զպտուղս սորին անուանեն *ալաժահր*» (Հ. Պաւղոս Մեհերեան, *Գիռ.*, Բ, 15-16): — «*Ալաժարի*՝ թուփ բարձր, պտուղ նորա՝ ի չափ սիսռան, ներկանէ ի գոյն սեաւ» (Հ. Ներսէս Սարգսեան, *Բառք մշեցւոց*): — «*Ալաժահրի (ճէհրի)* 3000 օխա. Էրզրումի, Տիարպէքիրի, Գայսէրիի համար, օխան 20 փարայէն» (Գ. Անդրէասեան, *Մուշի տնտեսական վիճակը*, *Հայրենիք* լրագիր Կ. Պոլսի, 14 սեպտ. 1895, Ա., ե. Գալուստ Անդրէասեան, տե՛ս *Հանդէս ամսօրեայ*, 1897, հոկտ., 305ա): — Պտուղն *ալաժահրոյ* կոչի *ալաժահր*, *-ի*.

«Ամենայն բոյսք ընական որակ ունին կանաչ. եւ այսմ գունոյ պատճառ ուսանիմք ի ներկոցէ անտի, քանզի զտօրունն եւ զլեղակն յիրար խառնեն, այս ինքն զսեաւն եւ զկարմիրն, ծնանի լուշ [= լուրջ]. իսկ յորժամ *յալաժահրն* ձգեն, որ է դեղին, կանչի [= կանաչանայ], եւ նիւքն ընական սպիտակ լինի» (Մատթէոս վրդ.՝ աշակերտ Գրիգորի Տաթեւացւոյ, *Մեկնութիւն Վեցաւրէին*, երես 60, ՁՁ Ս. Ղազարու, թիւ Զ 340, Թ. գ.. իմ ընդօրինակութիւնն սկսանի ի *զտօրունն* բառէ, նախընթացն է ի *Հայբուսակէ*, 18):

Ցիշատակութիւնք յարգի բուսագրողաց. «Ի Ներկս հայաստանեայս երեւելի են տօրոն, այսինքն *քէօք պօյա* ի Կէնճէ ... *Ալաժահր*. ծառ սորա՝ փոքր եւ ի տեղիս ինչ՝ բուփ. բերէ պտուղ մեծ քան զգինձ, զոր տիրապէս անուանեն *ալաժահր*, որով ներկեն ի գոյն գեղեցիկ դեղին զմորթս խաշանց» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 41): — *Ալաժահր*, Մեհերեան, տե՛ս վերագոյն յ**Ալաժահրի**: «*Ալաժար*՝ պտուղ *ալաժարւոյ*» (Հ. Ներսէս Սարգսեան, *Բառք մշեցւոց*): «*Ալաժար*. պտուղ բփոյ կամ բերք ծառոյ ի ձեւ զնձոյ, որ լինի նիւք դեղին ներկոյ, իսկ տունկն կոչի *ալաժահրի*» (*Նոր հայկազեան, Գաւառականք*): — «*Ճէհրին* բուփ», որոյ հատապտուղն «կը ծառայէ կանաչ ներկ շինելու» (*Արամս* Սիմէոնի Գուլամիրեանց, 1889, հ. Ա., երես 20):

Էմինեան զգղ. gaude դնէ «*Ալաժարի*. տունկ ինչ, *նէմէա զաֆրանը, ճէհրի*», որպէս եւ Գ. Անդրէասեան *ալաժահրի* (*ճէհրի*): Gaude ըստ Լիտրէի է espèce de réséda [...], ըստ Լինէի reseda luteola, յորմէ gauder, teindre une étoffe avec de la gaude [...], որում նման եւ Մատթէոս վարդապետ *զալաժահրէ*: Ըստ այսմ արդարանայ բուն Էմինեան, այլ լուայ ի Կ. Պոլիս յամին 1880 կամ 1881 ի Տ. Խաչիկ ...-է, թէ *ճէհրի* ոչ է gaude, այլ ասի զգղ. graine jaune կամ graine de Perse (այսպէս գրեալ եմ յիմ *Բոգ.* Էմինեանի): Նման *ալաժահրի* բառի կայ զգղ. alizari, որ է արմատ տորունի, յորմէ եւ՝ alizarine (տե՛ս զբառսդ ի Լիտրէ եւ ի Մ. Դըվիկ). *Հայբուսակն*, 18, alizari դնէ *զալաժահրի*, այլ ջրուի ուղիղ:

Ալանկի բանջար. «Բանջար. ի կողմանս Շոռոբոյ (յանուն լերին[ն], ուստի եկանէ ի սկիզբն զարնան) կոչեն *ալանկի բանջար*: Արմատ սորա՝ փոքրիկ, տերեւքն՝ նուրբ եւ երկայն, նման սիզոյ, զոր չորացուցեալ՝ նիւք համեմիչ պատրաստեն ի կերակուրս» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 30): — «Յատուկ *բանջար* կոչուի եւ բերեւ ու արմատով [արմատով ու՞] մազանման բարակ ծիլերով բոյս մի, զոր չորցնելով՝ կերակրոց համեմ կ'ընեն. շոռոբեցիք իրենց լերան անուամբ *ալանկի բանջար* կոչեն» (*Հայբուսակ*, 309):

Ալանկի տակ. սխալ բառ, փոխանակ *աղանկի տակ* եւ լաւ եւս *աղանգան տակ*. տե՛ս **Աղանգն**:

23 մայիս 1900

Ալեւորեակ 1. -*եկի*, որ եւ ալեւորուկ, -*րկի*. աղաւաղանօք՝ *ալվորեկ* = *ալեւորեակ*, եւ ըստ վանեցւոց՝ *հալեւորեկ*, զոր նոքա հնչեն *խալիվորեկ*. նոյնպիսի աղաւաղանօք եւ՝ *հալեւորուկ*, *հալվորուկ*, *ալվորուկ*, *ալեւորուկ*. աղաւաղանօք ռամկօրէն *ալվորեկ*, *հալեւորուկ*, *հալւորուկ* (*հալվորուկ*), *ալվորուկ* եւ ըստ վանեցւոց՝ *խալիվորեկ*: Ասի եւս *ալեւորաց ռահան*, *ծերոց դաղձ*, զղ. marum: «*Ալվորեկ*, որ է *մարվն*. յիշած է յիր համարն կամօքն Աստուծոյ» (Ամրտ., *Անգ. անդ.*, Ալիշան, 20): «*Մարվ. հալեւորկի հունդ*» (Գաղիանոս Ա. եւ Դ): «*Մարվ. հալեւորկի հունդ*» (*Թրգմ. դեղոց*, յետ եւ յառաջ են): «*Մավոր. հալվորուկ*» (*Բժշ*. Ա., 144): «*Պղպ մարու. ալվորկի ունտ*» (*Բժշ*. Ա., 145): «*Խալիվորեկ*. խոտ ինչ լեռնային, որոյ արմատն է ուտելի» (Ղեւոնդ վ. Փիրղալէմեան, *Գաւառականք*), ուր գրի եւս «*Խալիվոր*՝ ալեւոր, ծերունի, ծեր, տարիքն առած. *խալիվորնալ*՝ ալեւորիլ, ծերանալ, ջոջանալ»: «*Հալեւորեկ*, գ. եւ *հալեւորկի հունդ*. անուն խոտոյ, որոյ ծաղիկն նման է զուիրակի եւ աղդողագոյն հոտով, եւ տերեւքն՝ սպիտակագոյն. յն *մարոն*, լտ. *մարում*, խտ. *մէպրաապեռլ*. ըստ Մենինսքեայ՝ *Հաղէ գուշչիւյուհ*» [= *Հալալ խուշ չիւյուխ*՝ դաղձն ծերոց] (Գաղիանոս եւ *Բժշկրն.*), ուր մեկնի *մարվ*, *մարմահուզ* [= *մէրմահուզ*] եւ ի *Հին բռ.* [= *Թրգմ. դեղոց*] *հորփ*». սխալ է *հորփ*, զի յետ եւ յառաջ են տողքն ի *Թրգմ. դեղոց*. *հորփ* = արբ. *հուրֆ*, է կոտիմն: «*Ալեւորիկ*, *հալւորիկ*, լտ. *մարում կորտուսի*. երկու տեսակքն են. առաջինն է ի տեսակէ զարօշի.

տերեւն է նման լեռնային ծորրինոյ, ծաղիկն՝ ծիրանի, անուշահոտ եւ համով կծու: Երկրորդն՝ *ալեւորիկ սպիտակ*, լտ. *մարում վուլգարէ*» (Շահիմանեան): Գղ. «marum, *հալեւորեկ*, խոտ ինչ, *մէրմահուզ, հապագ խուշ շիւյուխ*» (Էմինեան): Իտ. «*սկարասալեալէ*, խոտ ինչ, որոյ ծաղիկ նման է *օրիգանոյին. սկարասալեալէ սալվատիկո*. տե՛ս *Օրիգանո* (Ջախջախեան): «*Սկարասալեալէ*, գղ. marum, *հալեւորեակ*, խոտ ինչ, *հապագխուշ-շիւյուհ. մէրվ, մէրհահուզ*» (Ճամճեան): Պրս. «*Մէրվ*, խոտ ինչ անուշահոտ» (Գէորգ), իսկ *Երաշխիքտարու* մեկնի անդ՝ «Է անուն բժշկի միոջ, որ վարէր դառն դեղորէիւք. ուստի եղեալ է առակ, եւ ասի զո՛ եւ իցէ մարդոյ, որ ի գործ ածիցէ զդառն դեղորայսն»: *Հայբուսակն* շփոթելով *զմարվ* ընդ *մալվա* բանջարոյ՝ սխալ գրէ 1599. «*Հալեւորաց ռեհան, հալեւորիկ*. մոլոշի տեսակ մի է անուշահոտ, ծիրանեգոյն կամ սպիտակ ծաղկըներով: Առանձինն յիշուի եւ *հալեւորկի հունտն*. ար. *պզըր ըլ-մարվ*, եւ լաւն այն է, որ դալար լինի եւ գէր, եւ գոյնն ի կարմրութիւն քշտէ»: *Մարվ = մալվա* եւ 129, 614, 2099: Անգիտանայ ի 2030: Սխալ եւ 2144, 2959: Տե՛ս անդ *մարում*, 68 եւ 2024 ([Նորայր] *Քննադ. Հայբուսակի*, ԶԱ., թիւ 7): Տե՛ս եւ *Աղուորիկ = հալեւորիկ*, 67: *Ալեւորաց ռահան* եւ *ծերոց դաղձ* են թարգմանութիւնք արաբականին *ռէհան էլ-շիյուխ = մարում* Իբն Էլ-Բէյտար, Ա., 594 եւ *հապագ խուշ-շիյուխ. հապագ* = դաղձն. *շիւյուխ* = ծերք, ալեւորք. է յոգնականն *շէյխ* բառի:

24 մայիս 1900

Ալեւորեակ 2, *-եկի*, որ եւ ալեւորակ, *-րկի* եւ ալեւորուկ, *-րկի* (ռամկօրէն *հալեւորեակ, հալուորեկ*). ազգ ընտիր խաղողոյ, մեծահատ եւ սպիտակ. տե՛ս ի *Խաղող* ի ներքոյ Որթ բառի. *Հայբուսակ*, 3271:

Ալի. «*Ալի*. Գեղաքուենեաց կամ Սեւանայ ծովու եզերաց ծաղկանց եւ բուսոց կարգին կու յիշէ նոր գրող մի [Տէր-Աւետիքեան], առանց բացատրելու» (*Հայբուսակ*, 21):

[[**Ալոն**, տե՛ս **Ալոնի**:]]

Ալոնի, *-նւոյ*, գղ. azerolier, որ եւ **Սնձենի**, **Սնձնի**, **Սնձի**. պտուղն՝ *ալոն*. զայս բառ կը յիշէ Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 183, ի կարգի ծառոց Մշոյ. տե՛ս յ**Ալաժահրի**, թիւ 13: Ամիրտոլվաթ կ'ըսէ *ալունի ծառ* եւ զպտուղն եւս կը կոչէ *ալուն*, իսկ ի *Գիրս վաստակոց ալուն* կը դրուի իբր անուն ծառոյն. «Իպն Պայտարն ասէ, թէ իր (ազատտրախտի) ծառն նման է *ալունին* ծառին, եւ միրգն այլ ի *յալուն* կու նմանի, բայց ի մըջէն մի՛ ուտել, վնասակար է, կու սպաննէ» (տե՛ս յ**Ազատդրախտ**). «Վասն սերկեւիլի, դամոնի, կեռասի եւ սնձեաց, որ է *ալունն*» (*Վաս*., Մխն, վերնագիր, 155): Պտուղն *ալոնւոյ* կոչի *ալոն*, *-ի*, գղ. *ազըրոլ* (որ գրի եւ *ալօն* ի Բժշկարանս). ոմանք գրեն այժմ եւ *ալոչ*, իսկ Ամիրտոլվաթ՝ *ալուն*, զոր հոլովէ *ալունի*, այլ լաւ եւս է *ալնի*, որպէս *ալուց, ալցի*. աստի եւ *խնկալուն* (որ եւ *խնկասինձ*), *մկնալոն* կամ *մկնալուն*, որ եւ *սինձ, վայրի խնձոր, սարի խնձոր*: «*Սինձն*, որ է *ալօնն*» (*Բժշ*., Բ, 326): «*Զարուր*, որ է վայրի խնձորն, որ թ. [թուրքն] *ալօճ* ասէ» (*Բժշ*. Բ, 327): «*Ալօնն*. վայրի խնձորն, որ է սինձ» (*Բժշ*., Գ, 154): «*Զարուրի ճապալի*, որ վայրի խնձորն, որ է *ալունն*, որ հ. [= հայ] բառով *սինձն*. լաւն այն է, որ հասուն լինայ ... իր փոխանն *զուպայրան* է, որ է փշատն» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 74ա). «Իր (ազատտրախտի) ծառն նման է *ալունին* ծառին, եւ միրգն այլ ի *յալուն* կու նմանի» (Նոյն). տե՛ս յ**Ալոնի**. «Միրգն (եղջերենւոյ) նման է *ալունին* եւ սեւակ լինի եւ խիստ քաղցր» (Նոյն, *Հայբուսակ*, 662 = Իբն Էլ-Բէյտար, Գ, 2320): «*Ազրան*, որ է վայրի խնձորն, որ է *ալունն* թ. [= թուրքերէն]. եւ այլ ասեն *զարուր*» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 50): **Յիշատակութիւնք ի Նոր գրողաց ժամանակիս.** «*Ալոն, -ի, -իւ, -ից, -իւք*. է պտուղ ինչ փոքրիկ իբրեւ գկաղին, գունով դեղին եւ մերթ կարմիր եւ համով թթուաշ եւ ախորժելի, որ բուսանի ի ծառս, մանաւանդ ի վայրի տեղիս. ռամկօրէն եւս *ալոն* կամ *հալըն*» (ի Բժշկարանս, *Բառագիրք Մխիթարայ Աբբահօր*): «*Ալոչ*. ասի եւս *մկնալոչ*. վայրի պտուղ ինչ ծառոյ, գոյնն՝ կարմիր, համն՝ քաղցր» (Սրուանձտեանց, *Մանանայ*, 441): Կայ եւ այլ *ալուն* յԱմրտ.. «*Ալուն*, որ է ինքն ի *մուխալլասային* ցեղերուն, որ պարսկերէն *քաղնաք* կ'ասեն», կամ *քաղռանկ* (*Հայբուսակ*, 23):

Ալոց, *-ի*, որ եւ **Լոց**, *-ի*. ազգ ինչ մսուտ դեղձի, որոյ կորիզն կից է ընդ մարմնոյն. տե՛ս ի կարգի դեղձից ի բառն **Դեղձի**:

Ալու. «*Փաթաթ* անուանեալ զնանախնձորն է, ըստ Մեսրոպ Թաղիադեանց» (*Առաջն. մանկանց*) եւն. *Հայրուսակ*, 26:

[[Ալուճ, տե՛ս Ալոճի:]]

Ալուչայ, -*ի*. տե՛ս Հաղենան:

[[Ալօճ, տե՛ս Ալոճի:]]

Ախեռնոտ. ազգ ինչ ծառոյ. «Աղջերուք, հիւնոտք, *ախեռնոտք*, բզենիք» (ՁՁ Երուսաղէմի, Թ. Սաւալանեան). տե՛ս եւ ի Հիւնոտ:

Ախլախնձոր, -*ի*, գրի եւ ախլայխնձոր եւ աղաւաղանօ՞ք *խալխայխնձոր* [[Խալխախնձոր]]. «Իսկ ի Բժշկարանս եւ ի *Հին բառ*. ծիւնծաղիկն եւ ձնծաղկիտակն մեկնի բառիւքս այսոքիւք. *սորընջան, սիւրրիւնճան, մախմուր չիչէկի, Հիւզպէ, խըլպուղ, խլօպուղ* եւ *խալխայ խնձոր*: Ի սոսին բերի կոչեցեալն յայլոց *կողքիսեան* ծաղիկ, զի Մենինսի ունի այսպէս՝ *քոլքիկում, քոլքիկուս ֆլոս, մախմուր չիչէկի, Հիւզպէ, քոլքիկում էֆեմերում, Հերմոդակտիլուս. սիւրրիւնճան*» (*Նոր հայկզ*. ի *Ձիւնածաղիկ* կամ *Ձիւնծաղիկ*): «Խօրօտ մօրօտ մաւի ներկած ժանկառի, Եման սուրմայուն, Աչեր հազար պիտի նայի, խառնել հետ *ախլայխընձորուն*» (Դաւ. Սալաձորեցի, *Գովասանք ծաղկանց*, տողք 65-66, ուր ի տողն 35 որիշ յիշի *ձնծաղիկ*): Պրս. «*Հիւզպէ*՝ ծիւնածաղիկ (է ծաղիկ ինչ վայրենի), բուրբերէն *չիկտէմ չիչէկի*» (Գէորգ):

Յիշատակութիւնք ի նոր գրողաց. «*Ախլախնձոր* ի Բասեն» (Ինճին., *Նոր Հայաստան*, 38), ուր այսչափ միայն գրի. որիշ յիշի անդ եւ *ձնծաղիկ*: «*Ախլախնձոր*. բառս կարմրցոց. եւ մենք [այս ինքն խոտրջրեցիք] կ՚ըսենք *ձնծաղիկ*. արմտիք սոխի պէս է» (*Խոտրջ*., 40): «*Ախլախնձոր*. ձնծաղիկ, սոխի նման է. ի բառնիլ ձեան ընդ նմին ելանէ. բառ կարմրքցոց» (*Գռ*. Գ, 5): «*Ախլախնձոր*. ըստ պաշկերտցոց բզաչափ բոյս մի է անուշահոտ եւ դեղին ծաղկով» (*Հայրուսակ*, երես 675, թիւ 31). տե՛ս անդ եւ ի կարգի Ա. Եշանագրի, երես 17, թիւ 31, ուր ասի, թէ ըստ շիրակացւոց՝ տեսակ մի առուոյտ է, *տրիֆոլիում պրատենզէ*. ըստ կարմերքցոց՝ ծիւնծաղիկն է. բայց տե՛ս, որ ծիւնծաղիկն ալ այլեւայլ նշանակութիւն ունի»: *Ախլախնձոր* բուի ազգ ինչ ծիւնծաղկի, բերեւս աշնանայինն» [աշնան *չիկտամ*՝ դեղին սուսան] (Ամրտ., *Անգ. անպ*., 2706, 2357), զդ. hémérocalle: Համեմատե՛ ընդ բանս Սալաձորեցւոյն, զոր ինչ ասէ Կոստանդին Երզնկայեցի. «Հօրօտ մօրօտ ու *ձուն ծաղիկ*». տե՛ս ի Սօսամբ: Գդ. «colchique. բոյս ինչ բունաւոր, *մախմուր չիչէյի, սիւրրիւնճան*» (Աւգեր). «hermodactile կամ hermodatte, արմատ ինչ բուսոյ, *սիւրընճան*» (Նոյն): Ըստ այլոց՝ *մախմուր չիչէյին* է *սպանդ*, զդ. harmale, moly. «Վայրենին (փեգենայի) կոչի *մախմուր չիչէյի*» (*Նոր Հայկզ*. ի *Փեգանայ*՝ Փեգենայ). «*Իսփէնտ*, պրս. (*մախմուր չիչէյի*) *սպանդ*, վայրի փեգենայ» (Պօզանեան). «harmale, *սպանդ*, վայրի փեգենայ, *մախմուր չիչէյի, Հէրմէլ*» (Էմինեան): Կայ *մախմուր ծաղիկ* յԱբանասեանց, 63. «*Մախմուր ծաղիկ* բերրիկները բաւշանման են. սերմերը պատպարուած են յինում ծաղկի տակ գտնուող ձուաձեւ բնի մէջ: Ծաղիկը բաւականին անուշ հոտ ունի: Սերմերը երկայնաձեւ են եւ աղանման». անդ, 66, որիշ որիշ յիշին եւ *ձնծաղիկ, խլոպուզ*:

Ախոռ, -*ի*. «*Ախոռ* (մանիսացու բառ). տան. *մալաթըրայ* ըսուած խոտն է, զոր պահոց մէջ խաշելով կ՚ուտեն» (Տէր-Վարդանեան, *Արեւելեան մամուլ*, 1897, փետրուար 15, երես 15): *Մալաբրայ* բառդ մեկնի բուրբերէն *բէզէնէ* ի *Բառգիրք հայոց* Երեմիայ վարդապետի, տպ. ՌՃՀԷ = 1728, զորմէ ասի ի *Հայրենիք* լրագրի Կ. Պոլսի, 9 մարտ 1895, Բ, գ. . «Կը պարունակէ յատուկ անուններու ցանկ մը: *Բառք խոտոց, ծաղկանց եւ բուսոց* վերնագրին տակ դրուած են զանազան բոյսերու անուններ, որոնցմէ մէկ քանի օրինակներ ի մէջ կը բերենք. *արտինուկ, էնկինար, կիտր, վարունգ, կիթրին, սերկեւիլ, այվա, յալօնք, տանձ* եւ այլն: Բառգիրքին վերջը դրուած է *Բառք Գաղիանոսի բժշկապետին*, ուրկէ ես կը քաղենք հետեւեալները. *դարսենի, դարչին, չապպալաթ, քէսթանէ, մալաթրայ, բէզէնէ, վարս, չէրտէչավ* եւ այլն»: *Մալաթըրայ* կամ *մալաթրայ* է աղաւաղութիւն յունականին *մարաթրոն*, որ է զդ. fenouil եւ հայերէն ասի *հոռոմ սամիթ*. «*Մարաթրոն*՝ հոռոմ սամիթ» (Գաղիանոս):

Ախունայ, զդ. séneve sauvage. «*Ախունայ*, արաբերէն *ախինէ*, լտ. *սինապի սիլվեստրիս*,

3526

մանանիխ վայրի. տերեւն՝ նման ասորկի [= ասորենկի]. սերմն՝ կարմիր. բուսանի յանապատս եւ նահնուտս» (Շահրիմանեան): Ի Խորենացւոյ *Աշխարհագրութեան*, 612, կը յիշուի *աղխունա*. «Եւղ անոյշ ի նմա [յերջանիկն Արաբիա] եւ ծաղիկ վնշտասան ... *աղխունա*», ուր կ'ըսուի ի ծան. 6. «Երկու օր. *ախունա*, մի օր. *ալկունա*, այլ օր. *դիունաղիունար*». զվերջին բառը Հիւբշման, *Հանդէս ամսօրեայ*, 1893, սեպտ., 263բ, նոյն եւ ի Հիւբշման, *Arm. Gramm.*, Մասն Ա., երես 269-270, թիւ 86, ուղղէ *զուՀն ալ-Հանա* = արբ. *տիւՀն էլ/իւլ-Հինա* = խւղ հինայի. *Հայրուսակն*, 34, կ'անգիտանայ զայս: Պրս. «*ալկինէ*, *ալղունէ*, որ եւ *կիւլկիւն*, *կիւլկիւնէ* եւ *ֆիկէր*, է սնգոյր, որով շպարեն կանայք զերեսս իւրեանց, *գըզըլձէ*» (Գէորգ):

Ախրիզան, *-ի*, *-աց*. ազգ ինչ ծաղկի, որոյ յիշատակութիւնն կը գտնուի միայն յ*Առակս* Մխիթարայ Գոշի ԻԶ եւ ԻԷ. «Տեսեալ այնուհետեւ բուսոց, թէ բարւոք կարգաւորութեամբ վարին, հաստատեալ յիւրեանց թագաւորութիւն, տուեալ [= ծառք] նախանձ բերեալ ընդ նոսա՝ կամեցան եւ իւրեանց կարգել թագաւորութիւն: Եւ եղեւ ոչ սակաւ հակառակութիւն, զի ոմանք ասէին զշուշանն լինել, եւ այլք՝ զ*ախրիզան*. եւ բազումք՝ զհամասպրան. եւ ամենեցուն հանոյ թուեցաւ լինել համասպրանն ... Եւ ապա ամենեցուն հաւանութեամբ թագաւորեաց համասպրանն ... Եւ ի թագաւորելն իւրում [բանն Աստուծոյ, որում օրինակէ զհամասպրանն] զոմանս արար աւետարանիչս, որպէս զ*ախրիզանն* [բուի. թէ orchidée է *ախրիզանն*], երկս [երկուս*] ունելով կենդանութիւն յարմարս, զի եւ նա [*ախրիզանն*] զրանաւորական [տպ. զրնաւորական] եւ զգրաւորականն ընդ իւրեան ունի զաւրութիւն ... Իսկ ըստ կերպարանի շուշանի՝ զրնաւս կարգեաց զեկեղեցի ընդ իմաստութեամբ աւետարանին ծաղկեալ, որպէս նա ի գետն Եփրատէս եւ յայլսն» (ԻԶ, 30-32): — «Ուսանել ոմանք ի բուսոց կամեցան, թէ ընդէ՛ր թագաւոր մեր [համասպրան] զանձն իւր այնքան ծածկէ, եւ զայլսն ամենայն դիւրապատահս արար մարդկան եւ բժշկաց, որոյ աւուրքն [յաւուրս*] գրեթէ երեսուն յայտնի ոչ լինելով, բէպէտ եւ այլ ժամանակն անգիտելի [գիտելի*] է, եւ գտեալ ի բժշկաց՝ այնուհետեւ ի պէտս վարի, ընդ իւրեան [տպ. ընդ իւրեամբ] անյայտ եւ զ*ախրիզանն* արար՝ լուսով նշանի ի գիշերի գտանել: Իսկ նա [համասպրանն] գիտացեալ զխորհուրդս նոցա՝ եւ ասէ. "Գիտէք, զի միանգամայն անյայտ ոչ լինիմ, այլ երեւիմ աղաւթիւք եւ պահովք խնդրողացն. նմանապէս եւ զ*ախրիզանն* արարի, զի մի դիւրարհամարհելի լինիցիմք՝ դիւրագտանելի լեալք": Եւ նոցա ուսեալք՝ ուրախ լինէին գոհանալով: Առակս զայս ինչ նշանակէ: Տարակուսելի է ոմանց խորհուրդն Քրիստոսի, զի երեսուն ամ անյայտ եղեւ եւ ապա յայտնեցաւ՝ ի բժշկութեան վարեալ առաքելովքն. այս գիտելին է, թէ անժամանակ է. իսկ զայլ սրբոց բժշկութիւնս ընդարձակ արար, զիւրն ծածկելով եւ նոխաւէ վարի: Ընդ իւր անյայտ եւ զաւետարանն [որում օրինակէ զ*ախրիզան*] արար՝ ի գիշերի ամբարշտութեանն յայտնելով: Իսկ նա [համասպրանն] խորհրդագէտ [տպ., *իսկ նա* նախախորհրդագէտ] զոլով ուսոյց, թէ "Եւ ոչ բնաւ ծածկիմ, որպէս եւ գիտէք, այլ աղաւթիւք եւ պահովք երեւիմ խնդրողաց": Եւ այս յայտ իսկ է: Սոյնպէս եւ զմիտս աւետարանին աղաւթիւք եւ պահովք եւ սրբութեամբ գտանեմք, զի մի դիւրաւ գտեալ որպէս հրեայքն՝ արհամարհիցեմք [գտեալ՝ որպէս հրեայքն արհամարհիցեմք], եւ ոչ բնաւին անտես եղեւ, զի մի անյուսութեամբ տրտմիցեմք, այլ այսուիկ ուրախ եղեալ՝ գոհանամք» (ԻԷ, 32-34): Գոշի մրին խօսքերէն այնպէս կ'երեւի, թէ *ախրիզանն* գեղեցիկ ծաղիկ մի է, այնչափ գեղեցիկ, որ ծաղկանց թագաւոր ըլլալու արժանի կը համարուի. թէ *ախրիզանն* սակաւագիւտ կամ դժուարագիւտ է, եւ գիշերները նրագի լուսով փնտռելու է, եւ բերեւս վասն զի գիշերանց կը բացուին ծաղկները. եւ թէ ոամկական կարծեօք՝ *ախրիզանի* արմատն խօսելու եւ գրելու կարողութիւն կու տայ խօսել եւ գրել չգիտցողաց, եւ վասն այսորիկ աւետարանիչ կը կարգուի ի համասպրամէ: Երկբայական է Շահրիմանեանի գրածն. «*Ախրիզան*. լտ. *տրիպոլիում*. ծղօտ նորա՝ ոտնաչափ եւ կէս. տերեւքն՝ նման ուռենւոյ, ստուար եւ կանաչ. ծաղիկն՝ նանանչաւոր, որոյ սկահակն՝ դեղին, եւ նառագայթքն՝ կապոյտ կամ ծիրանի»: Չիք *տրիպոլիում* ի Պասինի. կայ *տրիֆոլիում* (Պլին.): Կայ ըստ Լիննէի, արդի տնկարանից՝ tropaeolum, որ է զղ. capucine. կը նշանակէ զայս եւ *Հայրուսակն*, 35: *Ախրիզան* բառի նման կայ եւ *ախրինանակ* (*Հայրուսակ*, 3273), բայց կղմուխ է կ'ըսուի, զղ. aunée:

[[Այստեղ աւարտւում է մաքրագրութիւնը, որից յետոյ պակասում են էջեր, որոնց է վերաբերում սեւագրութեան էջ 837-843-ի Հետեւեալ յաւելումը.

[[Աղբերաց արիւն՝]]. տա՛ր յերես 21՝ Աղբերաց արիւն՝ աղբրանց արիւն (9 յունիս 1909). 1909 Բազմավիպի յունիսի թուոյն մէջ կայ յօդուած Վանրուսակ. Ախպէրանց արուն վերնագրով, երեսք 256ա-258բ, յղեալ ի Վան քաղաքէ եւ Զիրունի ստորագրութեամբ: (Այս Զիթունի է Տիգրան Զիֆրնեան, որ եւ գրեաց դՀայկական

բառաքննութենէս, ի Հանդէս ամսօրեայ, 1908, փետրուար, երես 33ա–37բ)։

Յօղուածն սկսանի (256ա). «Որչափ կրնամ վստահիլ յիշողութեանս՝ կարծեմ տարի մ'առաջ [1905, զի Չիթունի գրած է գիրը յօղուածն յամին 1906, ինչպէս կ'ըսէ 256ա, ծան 1] էր, որ *Սուրհանդակի* մէջ երեւցաւ *Դիցաբանական ծաղիկ մը* խորագրով յօղուած մը՝ *ախպէրանց արիւնի* մասին։

Յօղուածագիրն իր գիտցած տարտամ ծանօթութիւնները տալէ յետոյ՝ կոչում կ'ընէր գաւառացի բառագէտներու, մասնաւորապէս կարնեցիներու, որ այս բոյսի մասին ունեցած իրենց ստոյգ ճանաչողութիւնը, կազմական նկարագիրն ու այլ յատկութիւնները ծանօթացնեն բուսաբանական աշխարհին ... »։

Կը գրէ Չիթունին, անդ, 256բ. «Արդ, *ախպէրանց արունը* [այսպ.], որ բուրբերէն *զարտաշ* [տպ. *զարդալ*] *զանը* եւ քրդերէն *կոլիլիկ* կը կոչուի, պիտի դասաւորենք երկրլրակ փողածաղիկներու դասուն՝ մակարոյս տունկերու կարգին, ինչպէս որ պիտի ցուցնէ իր կազմական նկարագիրը»։

Կը նկարագրէ գրոյսն եւ ծաղիկն, 256բ–257բ, ուր առէ յերես 257ա. «Տունկին հասակն ի վեր երբ նայիս, գրեթէ յար եւ նման է *կաղրնձի* կոչուած մակարոյսին, զոր գեղացիք *հովըւու կիր* կոչեն, եւ ծանօթ է որբաթփերու արմատներուն վրայ, արտերու մէջ, ամենուրեք, իր գորշագոյն, մսագոյն եւ կապտորակ տեսքովը եւ տերեւականաչէ զուրկ իր կազմութիւնովը։

Իսկ ծաղիկը կ'նմանի անպոչ, կարմիր *կապիւսինի*, զոր կ'ճանչնանք *գլաթին* անունով» եւն եւն։

Անդ, 257բ. «Այսպէս մեր ճանչցած *ախպէրանց արունը*, որ հազիւ 10–20 հրդմբր. հասակ կ'ունենայ, մայիսէն մինչեւ յունիսի վերջ կը բանայ ծաղիկ մը, որ իր բաւշակերպ, վառ կարմիր ծաղիկին համար լեռնային դաշտերու հազուագիւտ եւ շատ գեղեցիկ զարդերէն մէկն է»։

Անդ, 257բ–258ա. «*Ախպէրանց արունը* հոտ չունի, բայց տեսքն իննին կ'արժէ քան զամէն անուշահոտութիւն։ Ժողովրդական բուսական բժշկութեան մէջ կը գործածուի միայն իբր *աչքի* դեղ։ Ծաղկաբերրերն ու մերր ալ ցօղունը չորցնելով՝ կը սղկեն եւ բուխ դեղի (ծարիր) հետ խառնելով՝ *կը քաշեն աչքեր*։ Գեղջկուհիներ այս *աչաղեղը քաշելով*՝ կը հաւատան, թէ ազդեցութիւն կ'ընեն իրենց սիրած երիտասարդներու սրտին վրայ, զի *ախպէրանց արունը սիրու դեղ* է եղեր, ինչպէս այնքան խորհրդապաշտ, երկիւղած լեզուով կը պատմէր գեղացի մամիկ մը»։

Ախպէրանց արունն իր չքնաղ տեսքին համար վաղուց արդէն ներբողուեր է ժողովրդական բանահիւսութեանց մէջ անուշահոտ *սուսուն* ծաղիկին հետ. 'Ինչի' կուլաս կուցկուց էրուն, Հա' կէօ էկու բարի զարուն, *Ախպրանց արուն*' մէջ քարերուն, Թռնիմ վեր բարձրիկ սարերուն, Բոյն կը դնեմ մէջ քարերուն, Երդիս բանամ դէմ հով քամուն, [երես 258ա] Դեղին *սուսուն* վեր սարերուն, Քե՝ կ'առնեմ վեր իմ բեւքերուն, Հոտն անուշ գայ ծաղկըներուն, Իմ ձէն քո ձէն զառնը մաքուն'։

Ախպէրանց արունի ստուգաբանութիւնն իր գաւառական ըմբռնումով *եղբարց արիւն* ըլլալով՝ կրնայ բացատրուիլ իր ծաղկին խիստ կարմիր, — հարազատ եղբայրներու արիւնին պէս կարմիր — գոյնովը։

Սակայն ոմանք ստուգաբաներ են *աղբերաց արիւն* (աղբիւրներու արիւն). զուցէ անոնք ալ իրաւունք ունին. մանաւանդ որ ուելի ներքին գաւառականներու — Մոկս, Շատախին, — մէջ այս բոյսին *ախպրի էրուն* անունը կու տան, որ գրականօրէն նոյն է *աղբերաց արիւնին* հետ, զի գաւառական *ախպիւր* բառը *աղբիւր* գրականին աղաւաղն է, ինչպէս *ախպէր* կամ *ախպ(ե)րանց* բառերը՝ *եղբայր* կամ *եղբարց* բռերուն ձայնաշրջութիւնները։ Առ այս ալ ունինք բանահիւսական ապացոյց մը, զոր քաղեր եմ մոկացի մամիկի մը բերնէն, երբ ան մանկիկ մը խաղցնելով իր ծնոքներուն վրայ՝ իր *քաղուկ* պուկըներովն ալ զովք կը հիւսէր անոր մատաղ հասցէին՝ ըսելով. 'Սարի սունկ ը. Տովու ձուկ ը. Սօղըլըի ծաղիկ ը. Անրառամ ը. Գեներուկ ը. Ասմին ը. Ներգիզ ը. Սօսըն ը. Ալալ-Բայրիւն ը. Ախպրի էրուն ը (է)' եւ այլն։ [Իմա՛ ' Սարի սունկ է. Ծովու ձուկ է' եւն եւն։]

Գեղացիք, ոմանք, կը պնդեն, թէ երբէք տեսակ *ախպէրանց արուն* կայ, եւ անոնցմէ ամէնէն գեղեցիկն ու հոտաւէտը կ'բուսնի բարձրիկ սարերէն վիժող սառ աղբերակներու վրայ։ Այդ տեսակն ունի, կ'ըսեն, պոչի նման կարբ մը իր ծաղկապսակին եռեւը։ Կը հաւատան, թէ այդ տեսակն իրօք աննման գեղեցկութիւն մ'ունի եւ մեր ճանչցած դաշտային *ախպէրանց արունն* անոր առաջ շա՜տ բան կը կորսնցնէ իր գեղէն։ Դժբախտաբար այդ միւս տեսակին ոչ տեսքը տեսած եմ, ոչ ալ կրնամ վստահաբար ըսել, թէ գոյութիւն ունի, միայն լսողաց այսքան մ'ալ ըսելու կրնայ [երես 258բ] լուսաբանութիւն մ'ըլլալ աւելի քաջ բուսագէտներու եւ բուսահաւաքներու։

[Գան յետոյ եւ 11 տողք, զորս ի բաց թողի, եւ յօղուածն աւարտի, ստորագրեալ] Չիթունի, Վան։ [Զայս յօղուած Բաղմավէպի, 1909 յունիսի, յղեաց ինձ ի Մուրատ-Ռափայելեան վարժարանէն Հ. Յովհաննէս Թորոսեան յ8 յունիսի 1909, եւ ընդօրինակեցի զվերոյ գրեալդ յ9 եւ ի 11 յունիսի 1909։]

[[Արժի. տե՛ս Հաճարի։]]

[[Յաջորդող բառով սկսւում է նեւագրութիւնը՝ էջ 63-ով։]]

Արտինուկ, բուի հայացուցեալ յիտալականէն *արտիչոկկո*. տե՛ս յԱխոտ։

Արոտակ, ծառ. «Վանուց եւ Նարվեոի մէջտեղն *արոտակ* (*արտուճի* պէս) ծառ մի կայ, զոր նուիրական կը համարին հայք եւ քուրտք եւ որոյ վրայ եւս կապ կը կապեն» (Յովսէփ Կ. Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, 1895, երես 52):

Արջ. *արջու ընկոյզ, արջու խաղող*. տե՛ս յԸնկոյզ, ի Խաղող [բէեւ հեղինակը գծով ջնջել է այս յղումը]:

Արջմըրջըմի. «*Արջմրջըմի*. բուփ է, որոյ տերեւն սրածայր է. բառ խոտրջրեցւոց» (Հ. Սիմոն Ճուլտարեան, *Գւոկնք*., *Գւռ*. Գ, 4):

Արջնդեղ, այսպէս եւ *յուսնդեղ*, **Խաշնդեղ**, **Հացադեղ**, **Ճակնդեղ**, *մկնդեղ*, որ եւ Սոնին. տե՛ս եւ Սեւուկ *հնտիկ* (*հնդիկ*). Ես ԻԸ 25, 27. Մխ. Գոշ, Խէ: Գղ. *նիէլ*, *ժերղո*, *նիժել*: «*Դաւանոն*. *արջնդեղ*» (Գաղ.). «*Ասրոգոզիկէ*. *արջնդեղ*, որ է սոնին» (Գաղ.). «*Ասրոգոզիկէ*. *խաշնդեղ*» (Գաղ.):

Արջնի. «*Արջընի*. նման է վայրի հունի ծառի» (Հ. Սիմոն Ճուլարտեան, *Գւոկնք*., *Գւռ*. Գ, 4):

Արջտակ, յն. *կիկլամինոս*, գղ. *սիկլամ* կամ *սիկլամեն*, որոյ ազգ մի կոչի *պեն դը պուրսո*. «Նշանք տակի մի, որ ֆռանկն *սիկլամ* կոչէ, եւ հայերէն՝ *առջտակ*, եւ արապկերէն՝ *պախուր Մարիամ*» (Բժշ. ՊՁ, ՁՁ Մխիթ. Վիեննայ, երես 181. *Բժշ*. բստ *Հայկզ*.): «*Արտանիտա* [տե՛ս գայս յ*Օտար*], որ է *պուխուրի Մարիամն*, որ *արջտակն* [որ է *արջտակն* ի բ. 236]. իւրն բոլոր զէղ շողգմրուկ է, եւ զունն ծիրանի լինի» (*Բժշ*., *Հայրուսակ*, 236, 759): «*Եէր ոսմունու*, *մաճար չալզամը*, *պուխուրի մէրիէմ էյմասը*, *Բժշ*., ուր կոչի նաեւ *տոնղուզ պըրըշաղը* եւ մեկնի "բանձր փուշ", որով լուանան զրուրդ» (*Հայկզ*.): Թուրքերէն ասի եւս *թավշան գուլաղը*. տե՛ս Պօզաճեան. տե՛ս եւ ի *Հայկզ*. *Լօշ*:

Արքակաղին, **արքայական կաղին**՝ **կաղին արքայական**, որ եւ **արքայական ընկոյզ**, պտուղ. «Քշտեալն եւ անպտուղն եւ անկեղեւն եւ ցամքն [զաւազանն Ահարոնի] բուսաւ եւ ոստս արձակեաց եւ պտուղ եբեր վաղվաղակի *արքայկաղին*» [*արքայական կախին*] (*Նոր Հայկզ*., Կիւր. Երուս., *Կոչ*. *ընծ*., ԺԲ, 227). «Աւրհնեալ ես, փա՛յտ սուրբ, իմանալի զաւազա՛ն, որ իբրու ցամաք զոլով՝ նոյնժամանայն իսկ ղալարաբերեաց ոչ *կաղին արքայական*, այլ զամենեցուն բազաւորն» (Գաւիթ Անյաղթ, *Ներբողեան ի սուրբ խաչն*, 114, յորմէ եւ Յոհ. Աւձնեցի, *Ճառ յեկեղեցի*, 138): «Գաւազանն ահարոնեան՝ *արքայական պտուղ* բերեալ» (Գր. Մագ., *Ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսընկալ*, տող 32, երես 82): «Իբրեւ *զկաղին արքայական* պատեան լուսոյ» (փեղովն) (Ն. Շն., *Բարձր*., *Հայկզ*. ի *Կաղին*: «*Կարի բասիլիկոս*. *արքակաղին*» (Գաղ. Գ). «*Կարի բադսիկա* [*բազսիկ*]» (Գաղ. Բ). *արքակաղին* (Գաղ. Ա., Բ, Գ). *արքայկաղին* (*Բժշ*. Ա., 102): «Տխլի ձէթն *արքակաղնկի* ձէթն է» (*Հայրուսակ*, 2961). *արքակաղին* (*Հայրուսակ*, 242), ուր Լըկլէր, Ա., թիւ 357, ունի [[գղ.]] *նուազետ*: Էմին՝ գղ. *շատեն ը*: Պրս. *պէյլուտ* է կաղին, իսկ *շահպէյլուտ*՝ գղ. *շատենյը*. կայ եւ գղ. *ժվըլին*: *Արքայակաղնոյ փանք* (*Սիսուան*, 8ա, Բ. 229բ, 253ա–254ա, 517ա, 546ա–բ. տե՛ս Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 364): Ասորերէն *բալուտ*, *բալուտո*, *կուէրկուս բալլոտա*, *բալուտա մալկո* (= կաղնի արքայական). պրս. *շահ պէլուտ*, *կաստանէա սըթիվ*. *Արքայկաղնոյ փանք* ի *Քրոնիկոնին* Բար Հեբրէոսի:

Արքայածաղիկ, *-ղկի*, գղ. *կուրոն էմպերիալ*. *ատրայ լոյէսի* բստ Յակոբայ Աստուածատուրեան. տե՛ս զրուղըն, զոր գրեաց առ իս. Մխ. Գոշ., Լ:

Արքայական ընկոյզ, պտուղ. [[տե՛ս **Արքայկաղին**]]:

Արքայիկ խոտ, տե՛ս ի *Սոորին հայերէն*. «*Մարգացնծու*, *իմպերատորիա*, *գրալ օթու*» (Ստ. Շահրիման.): *Բժշ*. Ա. 332, Ասար 117: «*Արքայեկ*. արբ. եւ թուրք. *չէվքէթ*. իւրն [է] խոտ մի. ջուրն կու հանեն, *չէվքէթ սույի* կ՚ասեն» (Սիմէոն Կամերկայցի): Թուի թարգմանութիւն արաբականին *Հաշիշ իւլ մէլիք*. «Լտ. *իմպերատորիա օսթրութիում*, *աստրանտիա*, *յանրպիտիում ժերմանիկում*, իտ. *իմպերատորիա*, թուրք. *փատիշահ օթու*, *բատէրճան*. արբ. *Հաշիշ իւլ մէլիք*» (Բէտէն, հ. Բ, 190). գղ. *էմպերատուար*:

Արքայկաղնի. տե՛ս եւ ստէն յերես 4 [[որ չի պահպանուել]. Մխ. Գոշ, ԻԳ. *Վստ*., ՄԻԸ 143, ՄԼԸ 151. «Եւ խառնէի փարոցով, որ էր *արքայկաղնի* յերկար յոյժ, մինչեւ ի ծաղիկ դառնայր» (*Քիմիար*., 26ա):

Արօսախոտ, *Բժշ.* Ա., 393. տե՛ս ի *Ստորին հայերէն*:

Ուգեր ծաղիկ. Դաւիթ Սալաձորեցի:

Ուել. *Մանանայ*, 442. իցէ՞ *արմուագ*, եղեւին. տե՛ս եւ *Հայբուսակ*, 1315, տե՛ս եւ Կանտորի, Բ, 14. նման *փէյինի*, յորմէ՝ *գղձի ուել*: — *Կապոյտ ուել* (*Հայբուսակ*, 1315): *Հոտած ուել* (*Հայբուսակ*, 3296):

Ուելախոտ. Արանասեանց, 95:

Ուելուկ, *-լկի*, արբ. *հմէյիթ*. տե՛ս ի Ցանկն Բէստէնի. յորմէ՝ **Ծռաւելուկ** (Արանասեանց, 75-76. *Մանանայ*, 442. *Հայբուսակ*, բիւ 251). արբ. *հումմաղ էլ պաքար*, [[գղ.]] *օղէյ գը բէօֆ* (Լըկլէր, Ա., 702): Գրս. «*Աֆիյյէն*, *ուելուկ*, *լապատէ*. է տերեւ իմն տափարակ, զոր դնեն ի վերայ ոմանց պալարաց եւ ուռուցից» (Գէորգ): Յն. *լաբաթոն*, կայ եւ *օկիլապատոն*, լտ. *լապատում*, թուրք. *աչխուն օթու*. ա՛յլ է *խչխուն*, *խաւարծիլ*. «*Աչխուն օթու*. ուելուկ» (Պօզաճ.): «Զշեղփ *ուելկի* տերեւն ի վերայ դի՛ր, ողջցնէ անապին» (*Բժշ.* Ա., 373): Տե՛ս *լապատին* ի Լիտրէ, ուր գյն. *լապատոն* թարգմանէ *պատիանս*. տե՛ս վկայութիւն ի **Մրջիբոյն** ի *Ստորին հայերէն*: «*Ուելուկ*. բանճար է, *հմէյիթ*, *ուելուկ*» (Հ. Մկ. Անանեան, *Աշխարհագրաքանութիւն*): «*Ավելկի* (*Զ ավկելի*) ունտ» (*Բժշ.* Ա., 45): *Ուելուկ* (Յովհ. Վանական վրդ., *Հայբուսակ*, բիւ 2826): «*Ուելկի* տակ» (*Հայբուսակ*, 1886, 2826). *ուելկի* տակ, անդ, 2998. «*Ուելկին* էգն» եւն, անդ, բ. 356. կայ գղ. եւ *պարսկ*: *Ուելուկ* (*Հայբուսակ*, 2826 եւ *Գւռ.* Ա. 31, Բ 51). *ալթ գուլաղը*, Ա. 62: «*Ծնդխանա*. էգ *ուելուկին քօքն* է» (Ձեռագիր Բժշկարան Ազգային մատենադարանի Գալատայի): «*Ուելուկ*, *-լկի*, *-աւ*. է բանջար ինչ պարարտ, որոյ տերեւքն են երկայն իբր շմնի, այփնքն սպաննախի, զոր ժողովեալ հիւսեն եւ չորացուցանեն եւ եփեալ՝ ուտեն. ռմկ. եւս *ուելուկ* եւ տճ. *հմէյիթ*: Է սորա եւ այլ տեսակ ինչ, զոր մասնաւորապէս կոչեմք *խաւարծիլ*, յունարէն *լափաթօս* կամ *լափաթօն*, լտ. *լափաթում* կամ *ռումէքս*, իտ. *ռոմպիչէ*. ի հին Բժշկարանս» (Մխ. Աբբ., հ. Բ, 86). իտ. «*լապացիո*, *ռոմբիչէ*, *ռոմբիչէ*, *ուելուկ*, *աչխուն օթու*» (Ջախջախեան). իսկ արդ *խչխուն* = խաւարծիլ: «*Աչխուն օթու*, *ուելուկ*» (Պօզանեան):

Ուետիկ, տպ. *աւէտիկ*, գրեա՛ ի Յոբեան. կարմրահատ ցորեն, որոյ հասկերն անփուշ են (*Մանանայ*, 442): «*Ուետիկ* (Վ. [այս ինքն բառ վանեցւոց]. Վանի ամենապատուական եւ առոք ցորենն է, հատերի գոյնը՝ նուազ կարմիր. դեռահաս եղած ժամանակ նորա ցօղունը եւ հասկը կարմրում է, իսկ լաւ հասնելուց յետոյ՝ սպիտակում» (*Գաւառաբառբ*, *Լումայ*, 1898, յունիս, երես 274): *Հաւետիկ*, (*Հայկզ.*, *Գաւառականք*):

Ուիւն, կնիւն (Հայր Ղեւոնդ):

Ուշինդր, *-ընդեր* (*Հայկզ. Օշինդր*). «Ի վերայ լուսոյ խաւար ածել եւ ընդ մեղր խառնել *ուշինտր*» (Գր. Նազ., *Առ որս*, ԺԱ): «(Խոնաւութիւնն) դառնանայ *յուշընդերն*» (Գր. Նիւս., *Կազմ.*, տե՛ս ի Մոլախինդ): «*Ուշինդրն* եւ դառնութիւն իւր» (Նար., Զ). «Ընդ քաղցրութեանն նաշակ *ուշինդր* խառնեմ» (Նոյն, ՀԱ): *Ուշինդր*. *Վստ.*: «Զոր արինակ՝ սակաւ մի *ուշինդր* (տպ. *օրինակ*, *օշինդր*) գրգռում մեղրին համն դառնացընէ, եւ փոքր մի քացախ զբոլոր կարասն քացախ առնէ» (*Ոսկիփորիկ*, *Բազմավէպ*, 1846, 194ա): «Խիժ եղեւնափայտի զբոր քերէ, եւ աւգտակար է դառնութիւն *ուշընդեր* Թան զքաղցրութիւն մեղու» (Պիսիդէս, տող 1535-1537): — *Հռոմ ուշինդր*, *կոչւում ռումի = աբսենթ* (Լըկլէր, Գ, 1942. Մխ. Հեր., ԽԱ, 126). արբ. *գէշխււ ռումի*, լտ. *աբսինթիում*, տճ. *փէլին օթու* (Բէստէն, Բ, 41). տե՛ս *գէշխււ ռումի* ի *Մաժիյա* (Գէորգ):

Ուշնայ, պրս. *խւշնէ*:

Ուշնան, *-ի*, տե՛ս եւ **Բալախ**. գղ. *ռուզ*. «Գոմէգն *ուշնան* (Զ՞ եւ տպ. *աշնան*) խոտ է, զոր այլ գիրք *ուճառ* ասէ լուալեաց, կամ զոզ եզանց» (թարգմ. *Վարդանգրոց* [այս ինքն մեկնութիւն պարսիկ բառից *Պատմութեան Վարդանայ* յեղիշէէ], Զ ժէ դարու, որ պահի ի Կայս. մտենդր. Վիեննայ (Տաշեան, *Ցուցակ հայ. ՁՁ Կայս. մտենդր.ի*, Վիեննա, բիւ 3, երես 9բ), որ այլուր գրի «*Բումիզ*. *օշնան* խոտն է, զոր այլ գիրք *օճառ* ասեն լուալեաց», *չօղան* խոտ (Ստ. Կանայեանց, *Ցուցակ հայ. ՁՁ Ներսիսեան դպրոցի* Տփղեաց, 45բ). Եղշ., Ը, 156. Ստ. Ասողիկ, Բ, գ, 140. չիք այս ի վկ. ի *Հայկզ.* «*Ոշիան*, որ է *օշնան*, որ է *չօղան*» (*Բժշ.*, Հայկզ. *յՕշնան*): «*Ուշնան*, որ է *չօղանն*» եւն (Ամրտ., *Հայբուսակ*, 3255): Պրս. *խւշնան*, *խւշնէ* (Գէորգ). գղ. *ռուզ* (Լըկլէր, Ա., 87). սխալ է գղ. *սապոներ* ի *Հայբուսակ*, 3255:

Ափիոն.

Ափսինթին. գրեա՛ յԱւշինդր. Բրս., Վեց., Ն, 101 (տպ. *օշինտր*). ՎՀ, Ա., 696. խնդրելի *ափսինդ* եւ *ափսինք*, զորս նշանակէ *Հայկզ*.. պրս. *էֆսինթին* (Գէորգ):

Աֆլորակատար. Արանասեանց, 64–65. զդ. *կլեռ ըլ կոկ*:

Աֆլորակոտոշ. տե՛ս Յոպոպասար ի Ստ. Շահր.:

Աֆլորիկ, զոր վանեցիք հնչեն *այլէօրիկ (= այլորիկ)*. *այլէօր* ըստ վանեցւոց է աֆաղաղ= *աֆլոր* (ատ գրեա՛ զԱյլորիկ), [[որի էջը չի պահպանուել]]:

Բ

Բազկարան, *Ստորին հայերէն*:

Բազկիկ, [[Գտո.^]] Բ, 19, *Մանանայ*, 442:

Բազուկ, *-զկի*. «*Բազուկ* սպիտակ որպէս ձիւն» (Յակոբ Կարնեցի, *Տեղագիր վերին Հայոց*, 41. *Մանանայ*, 442. Արանասեանց, 49): Պրս. *փազու* (Գէորգ), լտ. *բետա*, զդ. *բետ*, *պուարէ* (Աւգեր, Էմին): «*Ճակնդղի բազուկ*» (Մխ. Հեր., Լ, 83. Խ, 117). ի վերջին տեղւոջս յիշի առանձին եւ *Ճակնդղի ջուր*: «*Ճակնդղի բազուկ* բռնպատ մի» (*Բժշ.* ՊՁԷ = 1438 Վիեննացւոց, 121): «Վասն ճակնդեղի, որ է *բազուկն*» (*Վստ.*, ՄԿԱ, 167): «*Բազուկ*, որ յարապն *սիլխ* ասէ, եւ հռ. *սեւքլաւն* [յն. *սէֆւտլոն*, [[զդ.]] *բետ* կամ *պուարէ*] ասէ, եւ ինքն *բ*. ցեղ է, կարմիր եւ սպիտակ է. լաւն այն է, որ սպիտակ լինի … եւ իր փոխանն շողգամբն է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 53): Տե՛ս *բազուկ* եւ ի Զօխօ, որ սխալ գրեալ է *բողկի* ի *Հայբուսակ*, բիւ 730 եւ երես 677: *Բազկի տերեւ* (*Հայբուսակ*, 1784). տե՛ս եւ *Տերեւ ճակնդեղի* ի *Հայկզ*. ի *Բազուկ*: *Բազկի բբու* (Առաք. Բաւբիժ., Լէ, 380, տպ. Էջմ., 1884): «*Բազուկ*. է եւս խոտ ծանօթ, զոր եւ պառաւունք առ մեզ զիտեն եւ *տակ* կոչեն. *ճակնդեղ* ասի ի գրոց, *բետա*, Առաք., Լէ. "*Բազկի* բբու ուտէաք", *Բժշկրն.*» (Ռոշքեան): «*Բազուկ*. կանաչ տերեւ ճակնդեղի» (Փիրղալէմեան): *Բազուկ* եւ *ճակնդեղ* շփոթին ի հայումս. *վայրի բազուկ*, արբ. *սիլք պէրրի* (*Հայբուսակ*, բիւ 276 եւ Իբն էլ-Բէյտար, հ. Բ, բիւ 1208 եւ հ. Ա., բիւ 698):

Բաքաբուկ, [[Գտո.^]] Ա. 32, Բ 1, Գ 9, 10. տե՛ս եւ Պատատուկ:

Բաղկենի, բաղդկենի, բաքկենի, գրեա՛ ի Պատկենի. զդ. *քիւաքիտ*, որ եւ Այգւոյ գայլ, Գայլ, Գայլխոտ, Գաղձն: *Բաղկենի* (*Վստ.*, ՅԳ, 206): «*Բշուշթրի* (տպ. եւ Զ^ո *չբուշթրի*) ուետ, որ է այն *բաղդկենին*, որ լինի յայգիքն» (*Հին բժշ.' Բժշ. Ա.*^), *Հայբուսակ*, 277): «Բաքտուկ, որ է *բաքկենին*, որ է *քչօթն*» (*Բժշ.* Բ, 325): «*Բաքկենի*, որ է *գայլխոտն*, որ է *քչուսն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ, 51, Ալիշան, 55): Թուի գրելի *պատուկենի* կամ *փաքքկենի* ի *պատատիմ* (յորմէ՝ *պատատուկ*) կամ *փաքաքիմ* բայէ, զի պատատի զտնկովք: «*Բաղկենո* խէժ, ար. *սամղ*, լդ. *կոմիտարա*» (Անուանք դեղերոյ, Հ. Ղեւ. Յովն.). այդ "լդ. *կոմիտարա*" է լտ. *ռուտտա գամանդրա*, պրս. *գամաթրան* = զդ. *գոմ գիւտ*. (տե՛ս ի Բէստէն, հ. Բ, 223 *կումի կութթա*), որոյ ծառն է «իբրեւ գրաղեղն» (7 դեկտեմբեր 1913): «*Բաքտուկ*, որ է *բաքկենին*, որ է *քչօթն*» (*Բժշ.* Բ, 325): «*Բաքտուկ*, որ է *քչուսն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 54ա):

Բալ, *-ի*, գ., ի պարսկականէն *պալու*, որպէս համարի եւ Հիւբշման, երես 263, բիւ 18. «Ըստ Բժշկարանի եւ ըստ Հայոց վրացւոց՝ է կեռաս, անոյշ եւ բբուաշ պտուղ, *կեռասին*, *կեռասիում*, խտ. *չիրէջա*, պ. *պալու*, *ալու պալու*, բ. *քիրազ*: Իսկ ըստ այլոց գաւառաց Հայոց՝ է այլ տեսակ այն պտղոյ, որ ռմկ. *վիշնէ* կամ *ֆիշնէ* ասի. ըստ լտ. [[…]] բբու կամ կծու կեռաս» (*Նոր Հայկզ.* ի *Բալ*): «*Բալի* պտուղ, որ է *զարասիայ*, որ է կեռասն [[դրածն՝ կերասն]]» (Ամրտ., *Անգ. անպ.*, Զ Ալիշան Սերովբէի, 54ա): «*Ղարասիա*. բուբքն *կեռաս* ասէ, եւ հայն՝ *բալի պտուղ* ասէ» (Ամրտ., *Անգ. Անպ.*, *Հայբուսակ* բիւք 282, 283): *Բալ* (Յակոբ Կարնեցի, *Տեղագիր վերին Հայոց*, 41): «*Բալ*. կեռաս» (Գտո. Ա., 63): Տե՛ս *ջերաչա*, [[զդ.]] *սըրրիզ* յԻբն էլ-Բէյտար, հ. Ա., բիւ 480 եւ *կարաչիա*, *սըրրիզ*, անդ, հ. Գ, բիւ 1749: Պրս. «*Պալու*, տե՛ս *Ալուպալու*» (Գէորգ): *Ալու* է սալոր, շլոր, որպէս եւ լտ. *պրունուս կերասուս*:

«*Ալուպալու*. կեռաս, *քիրաս*, արդ. *գարաիյալի Հիւլմ*» [= Fաղցր՞] (Գէորգ). Իտ. «*աղըխուտա*, զղ. *գրիոտ*, բալ ինչ բրու» (Ջախջախեան): Իտ. «*վիսչոլա*, *բալ*, *վիշնէ*, *ֆիշնէ*. *վիսչիոլո*, բալենի, *ֆիշնէ աղաճը*» (Հ. Մն. Ջախջախեան, *Բոգ. իտ.-հայ.*): Գղ. «*գրիոտ*, բալ, հալիf ինչ, *վիշնէ*, *պիր նէվ քիրազ*» (Հ. Ար. Էմինեան, *Բոգ. զղ.-հյ.*): *Կեռաս*. այլեւայլ ազգf կեռասի զաղղիերէն ի բառագրոցն Լիտրէի. [[«Կեռաս. կլեպը կարմիր է. ծառն՝ կեռասենի»]], որպէս եւ պրս. *ալուպալու*, ուր *ալու* է սալոր՝ շլոր, եւ *պալու* = հայերէն *բալ*:

Բալախ. տե՛ս եւ ի Խաճին. կայ յիրն էլ-Բէյտար, Լըկլէր, Ա., բիւ 344 *բալախիա*, *Բալխի ուռենի*. տե՛ս անդ եւ բիւ 345 *բոլեյսա*, *ունգեղա*. ՎՀ, Բ, 590 (տե՛ս ի *Հայկզ.*). «*Բալախ*, որ է ուշնանն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 53ա): «*Բալախ*. է խոտն այն, զոր հիւսեալ են յարոոս վանից» ([[Գւռ. ՞]] Բ, 44 եւ Բ 72):

Բալասան, *-ի*, արբ. *բալեսան*, Լըկլէր, Ա., բիւ 336. Խորենացի, *Աշխարհագրութիւն*. *Մաշտ.*. «*Բալասանի* տունկ» (Միխ. Աս., 369):

Բալասենի, գրի եւ *պալասենի* եւ վրիպակաւ *փալյասենի*. «*Ննֆուլ*. *բալասենոյ* պտուղ, *գելիխա*, հինգ հինգ դրամ» (*Բժշ*. Ա., 308): *Պալասենոյ* պտուղ (*Բժշ*., Ա., 37): *Բալասենի* պտուղ (*Բժշ*. Է, 135, *Թանգարան* Ա., 14): *Բալասենի*. «Նարդոսն, որ է *բալասենի*» (*Պատմ. փառուցն Ադամայ եւ Եւայի*, Ն. Մառ, *Ամառն. ուղեւոր.*, 29. *Թանգարան*, հ. Ա., 14):

Բալենի, զղ. *գրիոտիէ* (Էմին). տե՛ս եւ ի Ջախ., *Իտ.-հայ.*, *ամարինօ*, *ամարասկօ*. տե՛ս 846-847. «Հացին, կեչին եւ խածին, *բալենին*, կապոշենին» (*Յղ. ծառոց*): Գէորգ՝ *բալի*, յորմէ *հալկալ բալի*, որ բուի զղ. *բիգարրոտիէ*. տե՛ս *Հայրուսակ*, բիւ 282, 283:

Բալուտ, *Հայկզ.*, տե՛ս եւ Խոզկաղին, Մոմոչ. պրս. *պէլլուտ*, կաղին: «*Պլուբ*, որ է խոզին կաղինն» (*Բժշ.*): Պրս. «*Պէլլուտ*, կաղին», (որ է բերն կաղնի ծառոյ), բուրfերէն *փէլիտ*» (Գէորգ), յորմէ արբ. *պէլլուբ իւլ-էրդ* = կաղնի (կաղի՞ն) գետնոյ, զոր տե՛ս ի Կաղնի:

Բակլայ, *-ի* (գրեա՛ եւ *Բակլախորան*). պրս. *պագըլէ* = *բակլայ*, տե՛ս ի Գէորգ, *Հայրուսակ*, բիւ 1093: *Բակիլլա* = *բակլայ* = յն. *կիամոս* (Լ. Լըկլէր, Ա., բիւ 224): Արբ. *պագլա*, *բակլայ* (Պօզան.), որ գրէ *բակլա*. *պագլա*, *պագլաթ*, *պագլէ*, *պագլէթ*, նշ. եւս "բանջար, արմտիf" (անդ): Ն. Լմր., *Առ Լեւոն Ա. թգր.*, 242: Մխ. Գոշ: *Եգիպտացի բակլայ* = *թրմուզ*, զղ. *լիւպէն*, (կայ եւ "Եգիպտոսի բակլայ"), *Հայրուսակ*, 284: Տե՛ս *մըսըր բակլասը* ի *Պագլա* Պօզանեան: *Բակլախորան*, տե՛ս յիմ *Ստորին հայերէն* = *բակլայախորան* = *բակլայակերf* (*Զրզ. fեր.*, երես 681), զոր ոմանf այժմ գրեն եւ ստուգաբանեն *փակեալ խորան*:

Բաղարջուկ. այս բուի ուղիղն, որ ամփոփմամբ ասի *բաղրջուկ*:

Բաղրաf, եւ *Հայկզ.*. տե՛ս եւ Աղրաղրուկ, Ջրարար, զղ. *անեթ*. «*Սպեթյոն*. *բաղրաf* կամ *ջրարար*, որ յաղրեր լինի» (Գաղ. Ա). «*Սպեթյոն*. *բաղրաf*, որ է ջրարարոյ» (Գաղ. Բ). արբ. *բեսբաս*, *բէզէնէճ*, [[զղ.]] *ֆընուլ* (Լըկլէր, Ա., 286). տե՛ս *Սպեթյոն* յՕտար: «*Մողոքին*. *բաղաf*, ջրարար» (Գաղ.): «*Բաղրաf*. սամիր» (*Բժշ*. Ա., 143): «*Բաղրակ*, որ է սամիրն, որ յարապն *շիպթ* ասէ. յիշած է ի յիւր համարն ի վերայ սէին կամ շային» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 53): Կայ զղ. *բասիլ*, որ եւ *ֆընուլ մարէն*, համեմ, սամիր ծովային: «*Բաղրակ*. տուղտ, *Հաթմի*» (*Բժշ*., *Հայկզ.* ի *Տուղտ*): «Սիսեռ որպէս բոլոր խաշեն եւ գջուրն խմեն եւ կամ *բաղպաf* խաշնդեղ աղամր (խաշնդեղամր՞, կաղամր՞) եփեալ՝ կերիցեն եւ գջուրն արբցեն» (*Յակոբայ բժշկապետի բան*):

Բաղեղն, *-եղան*, *-եղունf*. սեռ. *բաղեղի* տե՛ս ի Պատատուկ. Նեղոս, *Խրատf*.. Փիլ., *Յղ. բան ուենլ.*, 169. *Յղ. սնափառութեան*, 656 (տե՛ս ի Պատաղին). սեռ *բաղեղան*, տե՛ս Ամրտ. ի Համասպրամ: Գղ. *լիգըրոն*, *կոնվօլվուլուս*, իսկ *լիեր* = շաղիպատուկ, *թուրք*. *չարմաշաղ*. տե՛ս եւ Պատուտակ. «*Քշուբր*, որ է գայլխոտն. յայգիfն լինի, որպէս *բաղեղն* է» (*Բժշ*. Ա՝ ժԴ, *Հայրուսակ*, բիւ 3201): «Բաղրակ. տուղտ, *Հաթմի*» (*Բժշ*., *Հայկզ.* ի *Տուղտ*): «*Բաղեղ*. խոտ է եւ ուր կպչի, յերկննայ, եւ ծաղիկն գէտ գվրան է. աղէկն կապուտծաղիկն է» (*Բժշ*., *Հայկզ.*). այս է զղ. *լիգըրոն*, *կոնվօլվուլուս*, *չառըր չիչէյի*: «*Հիւսնի իւսւֆ*, որ է *բաղեղն*, որ ծառերն կու փաթթըվի» (*Հայրուս.*, բիւ 292): Աստ եւս *բաղեղն* = *լիգըրոն*, զի սակամռնւոյ տերեւfն նման են տերեւոց *Հեւկինի* կամ *լիերի*»

(ընբերցի՛ր *մզըրոնի*) (Լըկլէր, Բ, 1193, որպէս դնէ անդ ի ծան. *կոնֆոլվուլուս*)։ *Բաղեղան կարն*, գղ. *սկամոնէ*. «*Սկամունի. բաղեղան կարն*. լաւն սեւն անտարցին է» (*Բժշ*. Ա., 145)։ Ստորին հայերէն *բաղեղ*, -ի. «Վարդենեաց նըման բոլոր ես եղեր նօճան, *Բաղեղին* նըման ոլոր՝ ես քեզ փարուբան» (Յովասափ Սեբաստացի, տաղ, *Յիս նայէ՛ յըստակ, սիրո՛ւն*, տող 9-10)։

Բաղմ. «*Բաղմ է քթան, քէթէն*» (Կալիօկ., Ն 121, Թ 167)։

Բաղուկ. (ընդօրինակեա՛ զոր ինչ գրեալ եմ ի Ցաւելուածի *Բննաղ. Հայրուբակի*).

«Դղում կ՚ըսէ՝ Հավկըրով եմ.	
Բաղուկ *կ՚ըսէ՝ Ես համով եմ	**բազուկ*". գղ. *բևտ, պուարէ*.
Շաղգամ կ՚ըսէ Ես խոռվ* եմ.	*սրդողած, քէն.
Ձմերուկ կ՚ըսէ՝ Ջանէս* հովլ** եմ.	*մարմնովս, ինքնէս. **զով.
Կամբետ կ՚ըսէ՝ Խեյքէս ծով եմ.	
Տաղտեղ* կ՚ըսէ՝ Ուրացող եմ.	*[աւ. պաղտեղ]. տաք դեղ, պղպեղ.
Դդում կ՚ըսէ՝ Ես փփուկ* եմ.	*փափուկ.
Խիյար կ՚ըսէ՝ Ես քաքուկ* եմ.	*պահուրտած.
Բակլէն* կ՚ըսէ՝ Ես չքուկ** եմ,	*բակլայն. **խրուած, բուրք. *չեօքիւք*.
Նազուկ* մատներով հնտրուկ** եմ։	*ուռած, փքուած. ** ընտրուած։

(*Մշեցւոց երգեր*, հաւաքեց Մ. Սարըեան, *Մասիս շաբաթաթերթ*, 1885, մայիս 25, երես 1045բ)։

Բաղսամոն, յորմէ՝ Ապարաղսամոն. այսպէս եւ Եղեբորոն (Ոսկ.), *եղեբորոս* (Բրս.). Ոսկ., *Ա Տիմ*., Բ, Յորդ., 20, որ եւ **Վաղսամ**, -*ոյ*. «Բանզի ո՞վ ոք տեսանելով խնծոր եւ կամ զներկ վարդի, եւ ոչ նոյնժամայն ծանիցէ զներկոյն մշակք. եւ կամ ո՞վ ոք ի հոտ *վաղսամոյ* եւ ոչ նախ քո անուշահոտութիւնդ բուրեսցէ նմա» (Պիսիդէս, տող 909-912)։

Բաղսամոս (ծառ), գղ. *բոմիէ* (Բրս., *Վեց*., Ն, 101)։

Բաղրջուկ, որ եւ Աղեկտատ. «*Բաղրջուկ. մոլոշ*», (*Բժշ*. Բ, 63, *Հայկզ*.) . գղ. *մով*։

Բանին. [*Գւռ*. [՞]] Բ, 1. «*Բանին*. ոլոռին պտուղն խուռէն չզատած» (*Գւռ*. Ա., 63)։

Բամբակ, -*ի*. Խորենացի, *Աշխարհագրութիւն*. «Աբեւորդիք պատուեն *զբամբակ* կամ զծաղիկն *բամբակի*» (Մխ. Ապար., տե՛ս *Հանդէս ամսօրեայ*, 1896, 16ա), Ար. Լաստիվ. 69, Կիր. Գանձակեցի, *Պատմութիւն Աղուանից*, Ա., դ, 15 (իմ ձեռագիր). Յոհ. Երզնկ., *Մաթ*.: «Որպէս ակն արական է, կարող էաք եւ ունիմք սովաւ առնել *զբամբակ* (կամ *զբանբակ*) արական» (Մազ. եւ Երզն., *Քեր*.)։ Պրս. *փէնպէ* (Գէորգ), յն. *պամբակ, պամբակիոն*։

Բամբակենի. Մխ. Գոշ։

Բամբաս, անուն կնոջ. Տաշեան, *Ցուցակ*, 666ա։

Բամբաւս, ծաղիկ ինչ, գղ. *նար*", *ժասէնթ, Հիասենթ*". «Ի խնկածաղկէն եւ ի *բամբաւսէն*» (Թ. Սալալանեան, *Ձեռագիրք Երուսաղեմի*)։ Տէր Սեբոբէ ասաց ցիս, թէ ի Հայս *պամպոս* կոչեն *զսիւմպիւլ*։ «*Բամպուզ* խոտ. ցողնաւոր խոտ ինչ կոկոնաւոր, որ մէջն բամբակի պէս ճերմակ նիւբ մ՚ունի» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 312)։ Տե՛ս *Նարգոս* եւ *Սիւնբուլ* ի Կելսիոս, հ. Բ, 3-6. տե՛ս *Սիւնպիւլ* ի Գէորգ։

Բամբոց. «*Ամոնիակոն. իբամբոցի* խունկ» (Գաղ. Ա., Գ). «*Ամոնիակոն*. ի *բամբոցէ* խունկ» (Գաղ. Դ)։

Բամպլուկ, **բանպլուկ**. «*Բամպլուկ*. տեսակ մը համեղ խոտ 15-20 սմ. երկայնութեամբ եւ 1/2 սմ. լայնութեամբ» (Մելիք Ս. Դաւիթ-Բէկ, *Աբարկիրի գաւառաբարբառը*, *Հանդէս ամսօրեայ*, 1900, սեպտ.-հոկտ., 298ա)։ «*Բանպլուկ* (արաբկիրցու բառ). տե՛ս **Սինձ**» (Խաչատուր քհ. Տէր-Վարդանեան, *Արեւ. մամուլ*, 1897, մայիս 1, երես 36)։

Բան, գրի եւ **Պան**, զոր տե՛ս ի *Ստորին հայերէն*. արբ. *պէն, մորինգա* (Լըկլէր, Ա., 226), գղ. *բէն. բան* (Խորենացի, *Աշխարհագրութիւն*, 612)։ *Բան* (*Հայրուսակ*, 1198, Ն. 274, տող ա)։ «*Բանի* պտուղ, որ է *աղբզանտի* հունտ» (*Բժշ*. Ա., *Հայրուսակ*, բիւ 302)։ Պրս. *պէն*, որ եւ *վէն*. է *խինճէբ* = արբ. *Հապճպէթ իւլ- Հաղրա* (Գէորգ)։

Բանգ, -ի, գղ. *ժիւսքիամ*. պրս. *պէնկ* (Գէորգ). լտ. *հիոսկիամուս*. *պէնճ* (Մնենինսքի, *Օսմանական*): «*Հիոսկիամու. բանգ*» (Գաղ. Բ). «*ւոսկիամու. բանգ*» (Գաղ. Ա, Գ): Հայկզ. գրէ ի *Բան*. «Ոչ ամենայն բանջար (Հայկզ. ի *Ցմախ*, իսկ ի *Բան՝ բաներ*) ուտելի է, որպէս ցմախ, որպէս *բանք*, շաղինտր եւ այլք ոմանք դառինք եւ կէսք մահաբերք իսկ» (Վարդան Արեւելցի, *Մեկն. Ծնն.*): Աստ գրեա՛ զ*Աղվաշ բանգ*, որ յԱ, 23 [[չպահպանուած]]. *աղուաշ բանգ* (*Բժշ*. Ա., 52). այսպէս գրեալ եմ, եւ ոչ *աղվաշ բանգ*, այլ ստուգելի է ի ձեռագրէն. պրս. «*Ջէվզէք*. է սերմն այն, որ ասի *պէզրպէնճ* եւ ուրեք ասի թուրքերէն *հանիլէր օթի*» (Գէորգ). այս *զէվզէ՞ք* է *աղուաշ*:

Բանջար. *բանջար*, որ եւ **Ալանկի բանջար**:

Բանջարիկ, յգ. *բանջարկունք*. ՎՀ Ա., 239. *բանջարիկ*, Ոսկ., *Ա. Տիմ.*, ԺԴ, Յորդ., 127. *Եփես.*, ԺԴ, Յորդ., 815. ՎՀ Ա. 233, Բ 301:

Բաշխ. «Ակարոն. *բաշխ* է» (Գաղ.). պրս. *վէժէխ*. արմատն այն, որ կոչի *էկիր քեօքի* (Գէորգ, *Բռգ. պրս.-հայ.*). տե՛ս անդ եւ *վէճ*, *վէրէճ*:

Բաշխատակ, գղ. *բոզո օդորան*, *ակոր* (Լիտրէ) եւ *գլայէօլ*. *բաշխտակ*, տե՛ս յՕձտակ. թուրք. *էկիր օթու*. «*Վոչ*. բշխատակ» (Գաղ. Ա.). «ՈՆՆ. *բաշխատակ*» (*Բժշ*. Ա., 145). տե՛ս անդ *բաշխտակ* եւ 38. տե՛ս ի *Ստորին հայերէն*: «*Վաչ. բաշխտակ*» (*Թրգմ. դեղոց*): «*Վաճ*, որ է ակիր» (Արիստակէս գրիչ, *Բառք. Եբրող.*): *Բաղշտակ* գրէ Ամրտ.. «*Բաղշտակ*, որ է վանն, որ է ակիրն. ինքն սպիտակ եւ թեթեւ տակ է, ի ջրին մէջն կու բուսնի. լաւն այն է, որ ի լի լինի եւ անուշահոտ լինի. զմոռացկոտութիւնն տանի եւ զրաշանունն եւ զլեզուին ծանրանալն այլ տանի ... եւ զլերդին եւ զերիկամաց զկալուածն բանայ եւ տաքցնէ եւ զփայծղան պնդութիւնն տանի ... եւ զիւր չորութիւնն տանի պատպատն, եւ իւր փոխանն *դուսառն* է: Ասէ Պատեհին, թէ ֆռ. այսոր *ակարոյս* ասէ, եւ հռ. *զրուն* ասէ, եւ պ. *ակիր* ասէ, եւ *յաւստ բլ-զարհ* ասեն. եւ իր ոյժն մօտիկ է *այրասային [իրիս]*ուժին եւ զրեւանդին. լաւն եւ աղէկն այն է, որ ի լի լինի եւ բանձր լինի, եւ համն՝ անուշ, եւ զհով եւ զզէն բնութիւն մարդոյն զմերձաւորութիւնն յաւելցնէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 54ա): «ՈՆՆ, որ է ակիրն, որ է *վաճն*, որ հայերէն *բաղշտակ* ասի» (*Բժշ*., *Հայկզ.* ի *Բաղշտակ*): Լտ. *ակորուս վերուս*, *կալամուս արոմատիկուս օֆֆիչինարում*. տն. *ագաք էկիրի*, *քազաք էյրիի*, *օղողչուխ* 60. *քազաք էրիյի* 267, ի **Համեմ** եղէգն. արբ. *ըրք ըլ-ձէըր* (Բէստէն, Բ, 65):

Բառբառ, տե՛ս **Փառփառ**:

Բառեղն, *Ս[[տորին հայերէն]]*. տե՛ս **Բաղեղն**: (*Թրգմ. դեղոց*). *բառեղ* (*Մանանայ*, 442):

Բարգժառ. «Մաղր. *բարգժառ*», տե՛ս [[Նորայր]], *Հայկ. բառաքնն.*, 25-26:

Բարդիսապահ [պարտիզապա՞հ]. ծաղիկ պայծառ եւ անուշահոտ, մշակեալ (*Մանանայ*, 442): Կայ եւ *գուլիստապահ* ի Դ. Սալաձորեցի:

Բարձնիկ. *ջանգիւլում*, վայրի ծաղիկ (Առաքասեանց, 66):

Բարձունենակ, *-եկի*, որ եւ **Հոտըզունենի**, գղ. *օրոն*. տե՛ս եւ **Բացմենակ**. յորմէ եւ՝ **Իգաբարձունենակ**: «*Արրոտինոն*. *բարձունենակ*» (Գաղ.): «*Արրոտանոն*. բարձվենեկ կամ *կիսօն*» (*Բժշ*. Ա., 143): Գրի եւ *բարձինեկ*. [[տե՛ս ստորեւ *Սպիտակ բարձունենակ*]]: «Ա՛ռ բարունին եւ թուրք եղեւին, որ է *բարձունենեկ*» (Մխ. Հեր., 133): «*Բարձունենեկ*, որ է *զայխումն*, որ թուրքն զայս խոտս *դուվան չիչակի* անուանէ, եւ հոռոմն *այիոտանայ* ասէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 53): *Դօվան չիչէկի* = պրս. *շիւվիյլա* (Գէորգ), որ է [[գղ.]] *արմուազ*: Ի *բարձունենեկէն* (*Հայրուսակ*, 809, 1495). *բացվենեկի* տերեւ (անդ, 104), *բացվենու* ճիւղ (անդ, 21 29): *Բացւենեկ*, տե՛ս ի **Գնդածաղիկ**, տե՛ս ի Հայկզ.: *Բարձունենակն* է որձ եւ էգ. որձն կոչի *գնդածաղիկ*, գղ. *արմուազ*, իսկ *բարձունենակ* է մասնաւորապէս էգն, որ կոչի գղ. "էգ *օրոն*": Յն. *արրոտոնոն*, լտ. *արրոտոնում*: «*Բարձունենկն* **Համբարձում** *ծաղիկ* ասեն» (Նորագիր Բժշկարան Ազգային մատենադարանին Գալատայի): — **Դեղին բարձունենակ**. *բրնջաս* (*Թրգմ. դեղոց*, տե՛ս անդ): «*Արտամիսա* [գղ. *արմուազ*]. եւ ինքն *պարանճաւիֆն* է» (*Բժշ*. Դ. 150): — **Սպիտակ բարձունենակ**. *կայծոս* (*Թրգմ. դեղոց*), պիտի *կայծում* = *գայսում*. «Արտացաւի. սպիտակ *բարձինեկն* կարազով ուտէ, զամէն քամին ի փորէն եւ ի սրտէն հանէ» (*Անուանք դեղերոյ*, *Բժշ*. ՌՄԼԵ = 1786, յընդօրինակութենէ Սերոբէ Ալիշան, Յօղուած Ա.): Լտ. *արտեմիսիա*, *պէրէնճաւէ*,

գօվան չիչչինին ազը, Հապաղ խըր-բախ (Մնեննմի, *Օնոմաստիկոն*):

Բարտի *-տւոյ, -եաց*, գղ. *տրամըլը*՞. «Ոստղ. *բարտի* ծառի նիւղոց արմատ» (Փիրղալէմեան): Ի *բարտի* բառէ բուի *պարտէպաշտ* = *բարտեպաշտ* (տե՛ս *Արարատ*, 1900, մայիս, 257ա, *Հայբուսակ*, 2343): Արեւորդիք պատուեն *զբարտի* (Մխ. Ապար., տե՛ս *Հանդէս ամսօրեայ*, 1896, 16ա). եփր., Դ 209. Ն. Շնորհ., *Թուղթ*, 243, 244. *Վստ.*, ՀԱ. 58, ձԼ. 93 ուր, գրի "*բարտւոյ* կամ կոռմխոյ", ՄԻԸ 142: «Ճշի, որ *մաճլպի* ասեն. *բարտեաց* նման է» (Յոհ. Վանական, *Հայբուսակ*, 2343, տե՛ս անդ). նման է ուռոյ: «*Ղուրպ*, որ է *ղարապ* [նաեւ Բէստէն, Բ, 122, *զպոպուլուս* դնէ արր. *կառապ*], որ է *ղավախն*, որ է *բարտին*. երբ ցեղ կու լինի ... Ասէ Պատեհին, թէ *ղարապն* ծառ մն է եւ միրգ չունի. եւ ոմանք ասեն, թէ *խէն* մն է, որ կու նեղքեն եւ կու հանեն. եւ թէ հետ պղպեղին խառնես եւ տրորես եւ տաս, որ խմէ, օգտէ այլայլուսին ... Ասէ Պատեհին, թէ ծառ մն է, որ *տտայ* կու ասեն եւ ի Շիրազ [Զ Շիրաց] *տարաք* կու ասեն եւ *պաճրամթ ուլ-փատայ* կու ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 172): Ըստ Կլեսիոսի՝ արր. *ղարաբ* է լտ. *սալիքս*, ուռի եւ նոյն ընդ եբր. *արաբիմ սալիկես*, ուռիք (*Հեբրոբ.*, հ. Ա, 304): *Բարտի* եւ *կաղամախի*, տե՛ս *Հանդէս ամսօրեայ*, 1905, փետրուար, 51ա–53: «Ձեր տան ծառն է *բարտի*, խելք տարեր ես շատ մարդի» (*Հայերգ*, երես 81): «*Բարտի* ծառ. *պոպոլուս ալբա*» (Ռիվոլա, տպ. Միլանու, 1621, երեր 69): — *Բարտի* = [[բուրք.] *գավագ* (Իննիհ., 35 եւ Հ. Ներսէս, *Բառք մշեցւոց*). ար. *փետրու*, *53*, պրս. *սփիդդար*. *ազնուա կաառուա* ըստ *Հայկգ*.. *սպիտակ բարտի*, *պէյազ գավագ ազաճի* (Գէորգ): «Երկայն բարտին շուք չունի» առած (*Հանդ. ամս.*, 1905): Իտ. *տրեմուլա*, բարտի կամ *կաղամախի* (Զախ.): Գղ. *տրամըլը*, *բարտի* (Աւգեր, Էմին): Պրս. *պիդմանշ*, բուրք. *աքչէ գավագ* (Գէորգ): *Գավագ* = [[գղ.]] *պէօպլիէ*, կաղամախ (Էմին): *Բարտի*, զոր ի պաշտօն առնեն արեւորդիք. տե՛ս եւ Սաւսի: Յարդ եւս գտանին ի Հայս նուիրական ծառք (տե՛ս *Մասիս* շաբաթաթերթ, 1885, մարտ 2, երես 756բ): «Երկար բարտի շուք չունի» (Գետ), հանելուկ ակնեցւոց (Յովսէփ Կ. Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, Տփղիս, 1895, երես 189):

[[**Բարցմանակ**, տե՛ս **Բացուեենիկ**:]]

Բարք, ծաղիկ. ուղիղն բուի ***բարդ***. Դաւիթ Սալաձորեցի (*Բզմ.*, 1869, 163). տե՛ս յիմ *Դաւիթ Սալաձորեցի* ի *Բանասէրն*:

Բացմենակ [**բացուենեակ**՞], ծաղիկ, որ գործածի ի ցքի (*Մանանայ*, 442):

Բացուենիկ կամ **բարցմանուկ** հայերէն, *տարկուան* տանկերէն, *տանակէտում* [տպ. *տանտ-գէտում*] լատիներէն (Բօշարեանց, 128):

Բերկի, տե՛ս **Բեւեկնի**:

Բեխի, ծառ (Բարխուտարեան, 54, 207 եւ ծան.): *Բեխի*. բեղուոյ նման ծառ (*Հայբուսակ*, 2535): [[Տե՛ս եւ ի **Բող**:]]

Բեկրին՞ = արր. *բախիրուջ* (Լըկլէր, Ա., թիւ 336):

Բեհեշտի խնձոր. տե՛ս ի **Խնձոր**:

Բերբեր, տե՛ս **Փերփեր**:

Բերեզատ, խոտ մի է (*Բժշ.* Ա., 390):

Բերկրին (*Բժշ.* Ա., 333), գղ. *անֆրեզ*՞. տե՛ս զտուգարանութիւնն ի Լիտրէ: «Մեծէ *զբերկրին* ղալար կամ չոր, Հին բժշկարան» = *Բժշ.* Ա (*Հայբուսակ*, թիւ 336):

Բեւեկն. *բեւեկնոյ խիժ* կամ *խէժ*. «*Կոզփնիաս. բեւեկանի* խիժ» (Գաղ. Ա). «*Կոզփնիաս. բեւեկնի* խէժ» (Գաղ. Գ). «Կողփինիաս. *բեւկի* խէժ» (Գաղ. Դ. Գ *բերկի*. *Մանանայ*, 442), ռմկ. *բեւկի*, *բովնուկի* (*Բզմ.*, 1846, 206ա, ծան. 1):

Բեւեկնի, գղ. *տերեբենթ*. Բրս., *Վեց.*, Ե, 97: *Բեւեկնի* տերեւարուփ (Ոսկ., *Ես.*, Զ, 73, 74):

Բիբեղ, տե՛ս **Աղջկուտակ** (*Մանանայ*, 442): «*Փիփերր*. տե՛ս *Մոլոշ*» (Բօշարեանց, 132). «*Մոլոշ*, աշխարհաբար *փիփերտ* [գրած՝ *փերփետ*]. վանեցիք՝ *ննեղկարլիր*. ի Փայտակարան՝ *կուտառուկ*» (Տաիրիմիրեան):

Բիծխի, գղ. *հրապլ*, տե՛ս **Պիծխի**:

Բիշ, պրս. *պիշ*, գղ. "Երկայն *ժեգոնէր*" (Խորենացի, *աշխարհագրութիւն*): Եբր. *բէշա* (Յովբ ԼԱ. 40),

յն. *բաստռ*, մերս *մորենի* (Կեյսիոս, Բ, 201)։ Եբր. *բէյշիմ* (Ես Ե 4), յն. *ականթոս*, մերս *փուշ* (Կեյսիոս, Բ, 201). ըստ Կեյսիոսի՝ եբրայեցի բառքդ նոյն են ընդ *բիոչ* բունաւոր խոտոյ։

Բլբենի, գղ. *փենիւ գրեկ, նիէլ*ֈ. տե՛ս եւ **Հացհամեմ**. «*Բլբենի*, որ է հացհամեմն, որ է *Հապաթ ըլ-սավտան*. եւ ինքն յիշած է յիր համարն ի վերայ հոյին կամօքն Աստուծոյ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 56)։ «*Հապի սավտայ*, որ է շոնիզն, որ է սեւ գնտիկն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ, 141)։ «Տեղիս. *բլիբէն*» (Գաղ.)։

Բկլօր (շկլաւր°). «*Բկլօր*. ցախի վրայ բուսած կլոր խոզակ, գխտոր°. "Ի՞նչ *բկլօրի* պէս ջրին երեսը կը խաղաս"» (*Բառք բաղիշեցւոց*, հաւաք. Հ. Սուք. Պարոն., բիւ 8)։

Բծեծ. «Կաղարոյս. է անուն իմն սեռական, որ պարունակէ ընդ ինքեամբ զամենայն բանջարս վայրիս, որք ի միօջէ եւեր գնդաձեւոջէ արմատոյ արձակեն զտերեւս ուղիղս եւ երկարաձիգս, բէ՛ ջրայինք իցեն եւ բէ՛ ցամաքայինք, որպիսիք են գայլասխտոր, *բծեծ*, աղպաշար եւ այլք նմանիք» (Առսէն Կ. Պօլսեցի, *Գիրք սահմանաց*, Կ. Պոլիս, 1749, երես 235բ ի բառն *Կաղարոյս*)։

Բղինչք, Բ 19. «Բերէ Սասուն ... *փղինն* նման փշատի, այլ բոլորակաձեւ եւ քաղցր յոյժ» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 201)։ «Ի վերնատանն, որ ի հոգիս յար անցինջ, Իբրեւ զանուշ եւ զքաղցր եղար դու *բըռինջ*. Ի մէնջ ժրտեմք առնել զյանցանս մեր բնաջինջ, Ի գալ առ մեզ սրբոյդ որպէս զուտ երինջ» (Մարտիրոս՝ սրբագրիչ մատենին *Գիրք եւ նառ ողեշահ*, յորում կան 10 նառք Սրնեցւոյ, *Մաղթանք առ Հոգին սուրբ*, յաւարտ մատենին, երեսք 486-487. "Մարտիրոս չնչին դպիր բուզանդեան" կոչէ զանձն ի Յօշբ., երես 5, տպ. Կ. Պոլիս, 1722)։

[[**Բղինչք**, տե՛ս **Բռինչ**:]]

Բոլորհամեմ, [[լտ.]] *ակետոգա*, գղ. *օղեյ* (*Հայրուսակ*, բիւ 360)։

Բոխ, գայլարոխ. տե՛ս ի Ստ. Շահրիմանեան ի *Նարդէս*, գղ. *փերիւլ*. ատի° «*Բողի խէժ, օշախ*». տե՛ս *Բող* ի *Հայկգ*.։

Բոխի, ծառ. «50. 000 ծառեր փշատերեւ անտառի, եղեւնի եւ շոճի, վեց *վերշոկ* եւ աւելի, տրվում են կտրելու իշխանուհի Մարիա Իօսիֆօվնա Ջավախօվայի կալուածքում։ Կալուծքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն եւ հինգ *վերստ* հեռաւորութեան վրայ։ Բացի սրանից՝ կալուածքում կան եւ ուրիշ տեսակի ծառեր. չինար, կաղնի, *բոխի*, անառի եւ կնչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանուհի Ջավախօվային» [ի Գորի եւ ի Կարսեւն] (*Մշակ*, 6 մարտ 1903, Դ, բ). այս ծանուցումն հրատարակուեցաւ ի *Մշակի* 20 անգամ։

Բող. գրի եւ *փոխ*, *փոխի*. կարճանման հիւր սորա, որ *բոխիչ* կոչի, բուի [[գղ.]] *Հիւեյ ըը պիրեաըը* (Լըկլէր, Բ, բիւ 959 եւ ի բիւ 1507, երես 434, տողք 1-8)։

«*Փոխի* կամ *փոխ* կամ *բող*. բանջար եռաշառաւիղ ծանրահոտ. ունի եւ ի միջի բուն կամ ծիղ ["բուն կամ ցիղ՝ որձայ", *Հայրուսակ*, բիւ 364, ուր սխալ է *ցիղ*, փոխանակ *ծիղ*] սերմնաբեր, զոր ի բաց արկեալ՝ գշառաւիղսն խարշեալ՝ բողուն ի ջուր առ ի բառնալ զհոտն, ապա արկանեն ի ջուր աղի, որ տեւէ մինչեւ յաշուն. իսկ զարմատ սորա մինչդեռ է ի գետնի, ընդ մէջ հատեալ՝ դնեն անօթ առ նովաւ ի հաւաքել զկարճանման հիւթ նորա, որոյ հոտ զօրաւոր գոլով սաստիկ՝ ի գործ ածեն հովիւք ի սատակումն որդանց, որք գոյանան ի վէրս նարպալիր դմակաց խաշանց, զոր *բոխիչ* կոչեն» (Հ. Ղուկաս Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 39-40)։

«*Բող*. է բանջար ինչ, որ բուսանի ի դաշտի, ծառանայ բազմատերեւմբք, բարձրանայ մարդաչափ. ունի գնտակաձեւ դեղին ծաղիկս, տերեւքն նման են սամիթ. մաքրեն ի տերեւոց զբոյսն նորա, որ է տափարակ, լայն, երկմատնաչափ, խարշեն եւ դնեն ի մէջ ջրոյն գերկու աւուրս եւ հանեալ՝ դնեն յաղջուրս եւ ի ձմերան ուտեն։ Յոյժ հոտաւէտ է խոտս այս. սորին վասն դնեն ի մէջ ջրոյ, զի ցնդեսցի հոտն։ Իսկ արմատ սորին տայ դեղնագոյն կաթն, զոր ժողովեալ հովուաց յեղջիւրս՝ մածնանայ, եւ զորդնեալ եւ զվիրաւորեալ ոչխարս նովաւ բժշկեն, զի այնչափ հոտաւէտ է, մինչ զի միայն հոտովն որդունք վիրաց սատակին։ *Բոխին*. է կաթն վերոյգրեալ խոտոյն» (Հ. Պօղոս Մեհերեան, *Բառք այլեւայլ գաւառաց Հայաստանի*, իմ Բ տետրակ *Գաւառական բառից*, 19)։

«*Բող*. -ի, կամ *բողիկ*, -ղկի, ռամկօրէն *բողիկ* ասի բանջարն, որ տաճկերէն կոչի *եապան քէրէվիզի*։ Իսկ ի *Բառս Գաղիանոսի* եւ ի Բժշկարանս գրի *բողի* կամ *բողի տակ* (իբր յն.). *ակիկարա*, *բազբ լալ*, *Հարմալ*. կամ *բողի խէժ*, *օշախն*, *տանա*. կամ *բողբուն*, *տամալան*։ Վարի եւ ի Հայաստան աշխարհ որպէս գաւառական բառ *բող* կամ *բոխ*. ըստ ոմանց՝ անուն բանջարոյ, իբրու *անճմ բոխի*, *չաշուր*, *չաշիր*, որ լինի աղցան, եփի ընդ ձուոց եւ կազմի բրուաշ ուտելի, *Թուրշի*. իսկ ըստ այլոց՝ *բող* է խոտ բարձր՝ նարակ ոչխարաց, յորոց արմատս գոյանայ

սունկ ընտիր» (*Նոր բառգիրք հայկազեան լեզուի*)։ Այս Թուի առեալ ի Ստեփանոսէ Ռոշքեան։ — «*Բոխ* կամ *բոխի*, *բոխի*. տե՛ս *Բող*» (Նոյն, անդ, Յաւելուած, *Աշխարհիկ բառք անվկայք ի գրոց առ մեզ եղելոց*, հ. Բ, 1061ա)։ *Բոխին*. կարճ արմատոց՝ *բող* բանջարոյ, զոր ժողովեն հովիւք եւ դնեն յեղջեր, ուր մածուն դառնայ, եւ նովաւ օծանեն զորդնեաց վէրս խաշանց, քանզի եւ հոտ է սաստիկ՝ սատակիչ որդանց» (անդ)։

«*Բող*. խոտ ինչ, համեղ պարէն եզանց» (Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան)։

«Լեռնային աղցաններ համարուեն հետեւեալ բանջարները. *ա. բոխ. բ.* էրնջանուկ ... *Բոխը*, ինչպէս եւ միւս զոխերը, գլխաւորապէս դուրս է գալիս Նոր-Բայազէդի գաւառներում եւ այլ լեռնոտ տեղեր։ Դուրս եկած տեղից այդ բանջարը արձակում է իրանից մի ոտնաչափ բարձրութեան չորս, հինգ ցօղուն, տափարակ, բաւականին հաստ, դալար եւ սպիտակ դեղնագոյն։ Արմատի մօտ այդ ցօղունները բոլորովին սպիտակ են, քարակ եւ նաւի ձեւով։ Ցօղունների ծայրերից արձակուում են փնջի նման մի քանի նիւղեր, որոնք աղ դնելու միջոցին կտտրուում են։ Տեղական ժողովուրդը այդ աղ դրած *բոխից*, որ սկզբում դառնաւուն է լինում, պասուց զանազան կերակրներ է շինում. օրինակ՝ տապակում է այն ալրով շինած փոշու մէջ եւ այլն» (Յովհ. Արանասեանց, *Երեւանի նահանգի բուսականութիւնը*, տպ. Երեւան, 1881, երեսք 80-81)։ Զայս *բոխ* Արանասեանցի, բանջար, *Հայբուսակն* ի թիւն 361 սխալ իմանայ լտ. *ֆերուլա կոմմունիս*, գղ. *ֆերիւլ*, եւ նոյն դնէ ընդ *նարդէս*։

«*Բողիկ, բող, բողիկ* բանջար, զոր խաշեն եւ աղջուր դնեն» (Գարեգին վրդ. Սրուանձտեանց, *Մանանայ*, 442։ «ժախ. բանջար նման *բողիկի*, զոր աղջուր դնեն եւ ուտեն» (Նոյն, անդ, 445)։

10 ալգոստոս 1915. «Ուշտալ գիւղ... տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, հաճար, ոսպ, սիսեռ, բակլայ, խաշխաշ, կտաւհատ, սորեկ, խաղող, *սումաղ*, նարնջափայտ, ընտիր **բխխի** եւ կապար» (Մակար վրդ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր եւ դրացիք*, տպ. Տփղիս, 1893, երես 206), ուր "Նարնջափայտ"ն մեկնի ի ծան. 1. «Ներկելու փայտ, որով ներկում են նարնջագոյն բել»։ — «Ղալակիեայ գիւղ. շինուած Բօզ-դաղի հարաւային բարձրութեան վերայ. գերազանց օդ, կլիման եւ ջուրն ... տեղական բերքերն՝ նոյն, բայց աւելի ընտիր՝ *բխխին*» (անդ, 207) եւ ի ծան. 1 ասէ. «Հաւանական է, որ այս բոյսի անուամբ *Բխխ* կոչուած լինի գաւառս։ Ամբողջ Աղուանից երկրում *բխխի* են անուանում բոյսս, որ ամեն տեղ չէ բուսնում. ոմանք *բխի*, ուրիշ տեղերում *պողիկ*, Երեւանեան նահանգում *բոխ* են յորջորջում»։ Աստ "բոյս" անուանէ *գրխխի*, իսկ յերեսն 54՝ "ծառ"։ - «Ալբի-Աղաջից մինչեւ Ղուբայի արեւմտեան կողմերն՝ հիւսիսահայեաց լանջերն ծածկուած են անտառներով, որոց մէջ կան կաղնի, աղոցի, ընկուզի, հանարկի, բեղի, լայնատերեւի, տխկի, կոզենի, հացի, *բխխի*, եղանի, լորենի, սզնի, կեչի (վայրի կեռասի), գենի (գիհի), ցրդնի, մայրի (սակաւ), նռո-տանձի, նռո-խնձորի, ակոռնի (արքայակաղնի), զկոի (զկեռի), ծտի տանձի, մոխրի տանձի, սալորի, լկրրնի եւ բռնոնի (միայն Արցախի կողմերում) ծառեր»։ Սխալ բուի նոյն համարել *գրխխի* ծառ ընդ *բոխ* կամ *բող* բանջարոյն։

«*Պօղիկ*. տեսակ մը անտերեւ բոյս, որ աղջուրը կը դնեն ու կ'ուտեն» (Յովհ. Գազանճեան, *Բառք եւդոկիացւոց*, *Հանդէս ամսօրեայ*, 1898, հոկտեմբեր-նոյեմբեր, երես 299բ)։

«Բարգաւան է բուսաբերութիւն սահմանաց Զագաց եւ առատապէս բերէ զպարարտահամ բանջարն *բող*, վասն որոյ եւ *Բողի լերինք* կոչին շրջակայքն» (Հ. Ղեւոնդ Ալիշան, *Այրարատ*, երես 291ա)։

«*Բող*. Ստ. Ռոշքեան (տպ. Ստ. Շէհրիմանեան) կ'ըսէ, թէ բարձր բոյս մ'է, արմատն լաւ սունկ [ասուի բուի առեալ *Նոր հայկազեանն*], լ. *կաւկալիս*. ստեպղինի [պիտէր "հոռոմ սամիթի"] տեսակ մի»։ Եւ յետ յիշելոյ զբանս Հ. Ղուկայ Ինճիճեանի (զոր գրեցի ի վեր անդր) եւ զբանս Հ. Պօղոսի Մեհերեան, քաղելով (զոր նոյնպէս գրեցի լիով ի վեր անդր) յաւելու. «Յիշուի եւ ի հիւսիսային արեւելեան Հայս եւ ի Պարսկահայս՝ յատուկ ստեպղինի նման, լ. *կաւկալիս դաուկոիդես*» (Հ. Ղ. Ալիշան, *Հայբուսակ*, թիւ 364)։

Իտ. *կաւկալէ*. խոտ ինչ նման սամիթի» (Հ. Ման. Ջախջախեան, *Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ*). «*Բող*. բոյս ինչ, *ապեցիէ դի պիանտա*» (Հ. Ման. Ջախջախեան, *Բառագիրք հայ եւ իտալական*)։

Վկայութիւնք ի Նախնեաց. «*Ակրկարհա. բողի տակ (Բառք Գաղիանոսի)*։ — «Առօրք մրջեռման։ Ա՛ռ զհին պատի ծեփն, քնով շաղըղէ՛ յանօրից եւ ա՛ծ ի վերայ վիրին զշողաղն եւ ա՛ զաղօրս զայս. "Մրջումեկն հերկ է արեր, *բող* է լուծն, եւ բողժ է հարօրն ... ի վրան երուք եւ չորացաւ. այնպէս եղիցի եւ բժշկութիւն ծառայիս Աստուծոյ"։ Երեք օր այդպէս արա՛, եւ ազատի» եւ այլն (*Բժշկարան*, *Հայբուսակ*, երես 676, թիւ 364)։

10 ալգոստոս 1915. Թուի ի *Բառս Գաղիանոս* եւ ի *Բժշկարանս* մեր զակրկարհա բարգմանելով *բողի տակ* եւ *իգարողի տակ*՝ իմանան արաբերէն *թարխուն*, [[գղ.]] *էստրագոն*, հետեւելով արաբացի բժշկին Մասիհի, որով *բող* եւ *իգարող* ոչ եւս լինին գղ. *պիրեթրը*, այլ՝ գղ. *էստրագոն*, զի ասէ Իբն էլ-Բէյտար ի բառն *թարխուն* [եւն]։ Տե՛ս եւ յԱմիրտովլաթայ *տարդուն* ի

Հայրուսակն, թիւք 2940, 44, 365. «սա օգտէ ամենայն պեղծ խոցերուն» ասի ի թիւն 2940: *Թարխուն*, անդ, թիւ 774. *տարղօն* (Յովհ. Գառնեցի), անդ, թիւ 2093. *տարղին*, անդ ի թիւն 2348: «*Թէրխուն*. խաւարտ իմն, որ կերեալ լինի իբրեւ զկոտեմ [= գղ. *կարզամին*], զոր արապացուցեալ *զարխուն* ասեն» (Գէորգ Տէր Յովհաննէսեան, *Բառարան պարսկերէն [-հայերէն]*. — «Նէվէշր. *թարխուն* [է, տեսակ ինչ խաւարտի, զոր ուտեն մարդիկ ընդ կերակրոյ], *պիր նէվ հէշիլլիք տիւր*. ասի եւ *թէրխուն*» (Նոյն, անդ):

Բողրոջ, որ եւ **Գհրեհի**, գղ. *տրիւֆ*: «*Բողրոն*, որ է բուրմերէն *տօմալանն* է [այսպ.], եւ *սամարուխ* եւ *քամաճ* այլ կու ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 56ա):

Բողիկ, յորմէ՝ *բողի տակ*, **Իգարող**, **Իգարողկի տակ**: [[Տե՛ս նաեւ Բող:]]

Բողիտակ, գղ. *պիրեթըը*: «Ակիկարիայ. *բողի տակ*» (Գաղ. Ա., Գ). «*Ակիկահրայ*. *բողի* [Զ բողկի] *տակ*» (Գաղ. Բ). «Ակիրկարիայ. *բողի* [Զ բողկի] *տակ*» (Գաղ. Գ). «*Ակիրկահրայ*. *բողի* [Զ բողկի] *տակ*» (*Թրգմ. գեղոց*): «*Ախրկարհա*. *իգարողի տակ*» (*Բժշ.* Ա., 143. գրելի յ**Իգարող**). «*Ակրկահրայ*, որ է *իգարողին տակն*» (*Բժշ.* Է, 16):

Բողկ, -*ի*, գղ. *րեֆոր*, իսկ գղ. *բայլ* ասի *ֆրէնկ թուրփու* (լուայ ի Հ. Նեգինէոսէ Ոսկանեան). բուրմ. *թուրփ*. «*Ռեփանին*. *բողկ*» (Գաղ.): «*Բողկ*, *թուրփ*» (Փիրղալէմեան): Տե՛ս *բողկ* ի **Խաւարտ**: «Տո՛ւր *բողկ*, որ ուտէ» (Մխ. Հեր., 81). «Ա՛ռ *արբնճպին* ... եւ ընդ *բողկի* ջուրն խառնէ» (անդ, 86): «*Բողկ*, որ յարապն *ֆիլճ* ասէ, եւ պարսիկն *թուրփ* ասէ. եւ ինքն երկու ցեղ կու լինի. *ա.* վայրի, *պ.* այնոր *թարպուզա* կ՛ասէ, եւ մէկայլն ածուցն է, եւ լաւն այն է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 56): *Վայրի բողկ*. տե՛ս ի **Ժախուկ**: — Նոյն բուի եւ *բողժ* (*Հայրուսակ*, երես 676, թիւ 364):

Բոշխ. *Խոտրջր.*, 35, Բ 51. «*Բոշխ*. տն. այս խոտիս *փօշիլ* կ՛ըսեն» եւն (*Խոտրջ.*, 35):

Բորկոնիմ, -*այ* (-*ի Հայկզ.*), -*աւ*, Դատ Ը 7, 16. եբր. *բարկանիմ*, *կինոսբատուս վետերում* (Ակիլիոս, *Հիերոն.*, հ. Բ, 192): «*Բորմիմ*. առիւծամորենի» (Արիստ., *Բոգ. մերբ.*), տե՛ս յ**Առիւծ մորենի**, *բատոս*:

Բուրու. է դեղին ծաղիկ մի, նման վարդի (Ղեւոնդ վ. Փիրղալէմեան). եւս բոչուն մի ի ձայնէն կոչեալ. «*Բուրու*. դեղին ծաղիկ ունեցող խոտ մի» (*Մանանայ*, 442):

Բուինենենիկ. (այսպէս եւ **Դարինենենիկ**), (Խորենացի, *Աշխարհացոյց*, 616):

Բուխտակ.

Բուտ (*Մանանայ*, 442):

Բուրդի ծառ. (*Հայրուսակ*, 564):

Բոմի, -*մւոյ*. նոյն բուի եւ **Պոմի**, զոր տե՛ս. *բոմի*, յորմէ՝ *բոմոյ* [*բոմւոյ*], արմատ, որ եւ **Խոնդատ**. խոտ ինչ, որ է բոյն ձկանց, աւելուկ, ծաղիկն՝ դեղին ([[Գւո. °]] Ա 32, 36. Բ 4 (աւելուկ), 19. Գ 10): «*Գենդիան*. *բոմոյ* արմատ» (Գաղ. Բ). «*Գենդիանէ*. *բոմոյ* արմատ» (Գաղ. Ա., Գ). «*Գենդիանէ*. բուրոյ արմատ» (Գաղ. Գ): «*Ջանդիանա*. երնջնանի տակ, ի կրիտն լինի» (*Բժշ.* Ա., 145): *Բոմի* = աւելուկ (Բ, 4). *Ճնդիանա* = աւելկին էգն է:

Բոի ծառ. «Չար աչքից ազատ մնալու համար *բոի ծառի* փայտից կտորներ են պահում գրպաններում. գիւղերում նոյն փայտից յուռուր են շինում եւ կախում զոմէշների ու եզների վզից, դարձեալ նոյն նպատակով» (Գալուստ, *Ճակատագրի տօնը*, *Արարատ*, 1908, նոյեմբեր, երես 1028): Ա՞յս է *բարարրի ծառ* = *բարա բրի ծառ* (19 նոյեմբեր 1913): «*Բարարրի*". այս անծանօթ կամ անստոյգ բառս գտուի գուսանական երգոյ մի մէջ. "Գիշեր ցորեկ չունիմ դադար. Միշտ կը շրջիմ սարէ ի սար. Ո՞ւր գըտանեմ մի անգին ճար, Որ ճեզ լինի *բարարրի ծառ*"» (*Հայրուսակ*, թիւ 314, երեսք 84–85). (19 նոյեմբեր 1913):

Բոինչ. «*Կալկալ*. *բոինչ*» (Գաղ. Ա). բուի *կալկաշ*, գի արբ. *քէրբաշ* կամ *քէրքնաշ* = *մայս* = *տաղօն* = *միկոկուլիէ* (*Հայրուսակ*, 892). «*Կալալ*. *բոինչն*» (Գաղ. Գ). «*Կալկալ*. բոինչ» (Գաղ. Գ). «*Մուսթադանէս*. *բոինչ*» (Գաղ.). բուի *մայս*. *թադանէս* = տաղաւն: «Հրկն. *բոինչ*» (*Թարգմ. գեղոց*). արբ. *նարիկա*, *նիրկա*՝ [[գղ.]] եղջերենիի տեսակի մը պտուղն է, տե՛ս *նարկա* ի Մ. Դրվիկ: «*Բոինն*. պտուղ ինչ կլոր, սխտորէն փոքր, կարմրագոյն, կուտը մեծ, տն. *չէթլէմպիճ*» (Յովսէփ Ճանիկեան, *Ակնայ հնութիւնք*, երես 312): «*Մայս*, որ է բուրմ [Զ բ.] բառով *տաղաւնն* է, եւ հայն *բոինչ*

կ'ասէ. եւ իրենն վայրի պղպեղ կու ասեն, եւ քան զպղպեղ ա՛յլ մեծ կու լինի. եւ միրգն քաղցր կու լինի եւ անուշահամ կու լինի եւ ստամոքին աղէկ է եւ զփորն կու կապէ. եւ զփայտն խարտեն եւ զխարտուքսն առնուն եւ եփեն եւ զջուրն խմեն եւ կամ հուկնայ առնեն, օգտէ աղեաց ցաւերուն եւ արգանդին զինութեանն. եւ զմազն կարմիր կու առնէ. եւ օգտէ հազին [այսպ.] փորձած է տղակներուն հազին [այսպ.]. եւ թէ զկուտն ուտեն, այլ օգտէ. եւ թէ զտակն ջրով եփեն եւ դնեն յայն զօդվծին վերայ, որ կոտրել է եւ ծուռ է բուսել, կակղացնէ. եւ թէ ի մազն այլ օծես, ներկէ. եւ թէ սպեղանի առնես եւ ծուքուռանին դնես, օգտէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 205), նոյն եւ *Հայբուսակ*, թիւ 892: «*Բոհնչ. տարտաղանի աղաճ*» ([[°]] Ա., 63, Բ 4, Գ 10). թուրքերէն *տարտըղան աղաճը*, գղ. *օրէշ* (Էմին): Գրի եւ *Բղինչք, փղինն, փոինչ*. տե՛ս եւ **Փղինչք**, **Փղնջքի**: «*Լիպլիթ. փոինջ, չէթլէմպիկ, գուշ նէմիշի*»[[Գււ. °]] Ա. 39: «*Տարտաղան*. միջակ բարձրութեամբ ծառ մի է, որոյ պտուղն մանր եւ դեղին է, իսկ համը՝ անուշ» (Խաչատուր Տէր-Վարդանեան):

Բոնչի, գղ. *մինկուլիէ*°. «Ես իմ գտեալ զակն բիւրեղ՝ եկի առ ծառովն *բոնչի*, զոր ասեն հովանի [տպ. Հովանի] Բարտոմայ արքայի, եւ աղաւրեցի անդ զվեց աւր» (*Պատմ. Վրաց*, 48). տպ. ունի *բանչի*, նոյնպէս եւ *Հայկզ.* ի Յաւելուածին՝ *բանչի*, որ եւ ասէ. «Անուն ծառոյ առ վրացիս», յորմէ՝ եւ *Առձեռն* ա. եւ *բ*. տպ.: Այլ Բրոսէ ի թարգմ. հայերէն *Պատմութեան Վրաց* [[գրել է *բրինչ, բրինջ*]]:

Բրաբիոն, (*Հայկզ.*, Ինճին., 38), որ եւ **Ազատ**, տե՛ս ի **Հաւրուտ** եւ **Մաւրուտ**. թուրք. *թէպէր* (Պօզան.). գղ. *տիւրեբօղ, բրաբիոն*, հօրուտ եւ մօրուտ, *թէպէր* (Էմին): «*Բրաբիոն* ծաղիկ», Թաղոս ի տաղին *Հայր Աստուած զբած*, տող 26, տե՛ս ի Յաւելուած *Հատընտիր տաղարանիս*, 313 [[անտիպ]]:

Բրինձ, պրս. *պիրինճ*, յորմէ՝ թուրքերէն *փիրինճ*. տե՛ս եւ **Որիզ**. տե՛ս *Բրինձ* չիմ *Նոր Հայկզ*. եւ ի *Ստորին հայերէն*:

Բօլի. դառնահամ բանջար վայրի (*Մանանայ*, 442):

Գ

Գար, **գափ**, գղ. *ախրարր*. «*Գար*. թուրքերէն եւս կ'ըսեն *գար*. բոյս ինչ, ցօղունն՝ մատնաչափ հաստութեամբ, տափակ, թզաչափ եւ աւելի երկայն, գագարն՝ եղերով, համն՝ թթու: Իսկ գարծիլին *եցխուն* կ'ըսեն առ հասարակ» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, երես 349-350): «Բոյսն՝ խաւրծիլ, տերեւքն՝ *գար*, արմատն՝ խնշնդեղ, այս ինքն *գափնաա*» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 39): Տե՛ս *թաւռնդիխենի* ի *Հայբուսակ*, երես 682: Տե՛ս *Գար* ի *Հայկզ.*, *Մանանայ*, 443: Տե՛ս Գարտակ ստէն: «*Գար* [գրածն՝ *կեապ*] խաւրծլի տերեւ» (Փիրղալէմեան): «*Ռեւանդ*. *գափին* տակն, կամ խաւրծիլ ասեն» (*Բժշ.* Ա., 145): «Խավրծոյն տակն, որ է *գափն* » (*Բժշ.* Ա., *Հայբուսակ*, 2662): «*Գափի* [Մխ. Հեր., 69, խաւրծլի] քամուքս տո՛ւր հետ նռան ջրի» (*Բժշ.* Ա., 175): Տե՛ս *գափ* եւ ի *Հայբուսակ*, 2662: «Արբ. *ռաւենդ*, [[գղ.]] *ախրարր*, յն. *ռա* (Լըկլէր, Բ, երես 1018), պրս. *րիպվէնտ, ռւվէնտ, մէնճ* , խաշնդեղ, խաւարծիլ» (Գէորգ):

Գարծիլ, -*ծլի*, լտ. *բեթում բիրեա*. տե՛ս *բիրեա* ի Լիտրէ: «*Գարծիլ*, որ է *ըախվանաճ*, որ է *ըախպան*. ինքն ցեղ մն է. լաւն այն է, որ մատղաշ լինի եւ դալար ... Պատեհին ասէ, թէ իր ուժն նման է հումազին եւ ութրունին եւ ազոխին ուժին, եւ լաւն այն է, որ ի Պարսից գայ, եւ եղերն յերկան եւ հաստ լինի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 58-59: «Զարնիյան° [պրս. *զերնիշէ*, *բիչխա*, Գէորգ], որ է *ըախպան*, որ է *գարծիլն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 74ա). «*Ըռեւանդ*, որ է *ըաավանդն*, որ է *գարծլին* տակն» (անդ, 91): Պրս. *իշխուն*, արբ. *ռիպաս*. տե՛ս *Իշխուն* ի Գէորգ. հայերէն *խաւարծիլ*: Արբ. *րիբաս*, *բէտում բիրեա* (Լըկլէր, Բ, թիւ, 1072), որ եւ *եակմիսաս* (Գ, թիւ 2316), իսկ ի Գ, երես 274 *բէտում բիրեա* = *րիւբարբ*: Պրս. *րիպաս* խաւարծիլ, *իշխուն* (Գէորգ):

Գարտակ, [[գղ.]] *րիւբարբ*, տե՛ս յերես 39 [չպահպանուած]:

Գազ, -*ի*, -*իւ*, գղ. *տամարիս*° (*Մանանայ*, 442). տե՛ս եւ **Մոշի**. պրս. «*Կէզ*, մոշայ. է ծառ ինչ, որ բուսանի յաճախ յափունս ջուրց. *իլղուն աղաճի*» (Գէորգ). «*Կիլկէզու*. աւել արարեալ ի ցախից

մոշայի. *խլլուն աղաճընտան օլան սեւիփիրիկ*» (անդ). բուի գաւառական բառիւ ցախաւել: Գազ, *կէվէն*» (Ա. 65, Բ 73): «*Գազ.* փուշ ինչ իրրեւ զրուփ բարձրացեալ, զոր Թուրքք կոչեն *կավան*» (Ինճիճեան, *Նոր Հայաստան*, 57). բերէ **Գազապէն**, տե՛ս անդ: «*Գազ.* սակս վառելու է փշալից խոտ մի» (Ղեւոնդ վ. Փիրղալէմեան): «Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ռոնայրի՝ ասաց. "Աստ արկեր *զգազի*ւ գիրկս. բայց քեւ ժողովել կարիցես, մեծ զարմանք իցեն"» (Փ. Բիւզանդ, Ե, դ, 197, բ. տպ.). [[Հմմտ.]] «Իբրեւ լուաւ Մանուէլ Մամիկոն՝ եղբայր Մուշեղայ քաջի, ասէ ցնա [ցրազաւորն Յունաց]. "Գիրկս արկեր զրազում *փշով*. քեւ ժողովես, մանուկ ես"» (*Պատմ. Ս. Ներսեսի*, *Սոփերք հայկ.*, Զ, 71): «*Զուգաղ*, որ է *գազին* փայտն, եր գփուշն ի վայր տան» (*Բժշ*. Ա., 145): «*Գազ*, որ է մաւշին, որ է *տարփայ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 58ա): «*Զոզմազին. գազի* պտուղ» (*Թրգմ. դեղոց*). «*Գազմազին.* մոշո [Զ զմոշո] պտուղ» (*Բժշ*., Ա., 143). տե՛ս *Գազմազուկ* յՕտար: «Գազին ծառն, յորժամ ի լեառն բուսնի, *Նազար* ասեն, եւ յորժամ ածուենիքն՝ *խալ* կու [ասեն]» (*Բժշ*., *Հայկգ.*). այս է բիւ 2198 *Նզազ* (փոխ. *Նազար) Հայրուսակ*. բառ առ բառ թարգմանեալ է յարաբացւոյն (Լըկլէր, Գ, բիւ 2228): «*Խալ*, որ է մուշին, որ բուրքն *խլլուն* կու ասէ» (Ամրտ., *Անգ. անպ.*): Գրս. *կէզ*, մոշայ, *խլլուն աղաճը* (Պօզաճեան): *Գազ* բուի ունել 2 նշ.. 1. ազգ փշոյ, *կէվէն*. 2. մոշի կամ ազգ ինչ մոշւոյ, արբ. *խալ*, արեւելեան *տամարխուկ* (Լըկլէր, Ա., բիւ 17): *Գազի խէժ*, գղ. *գոմ ադրագան* կամ *ադրագանտ*. տե՛ս *գոմաաաա* ի Լիտրէ, *գոմ*, 1: «*Գազի խէժ*, որ է յարապ լեզուաւն *քիթրայ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 58ա):

Գազապէն, գազպէն եւ Կանկար. Խոր., *Աշխարհագրութիւն.* Զենոբ. տե՛ս ի **Կապռաշենի.**

«Մուշի բնական արտադրութեանց մէջը պէտք է յիշել *ծիւրն* ու *գազպէն*, որոնք լեռան հսկայ կողերուն յատուկ են: Ծիւրը Մշոյ դաշտի կիները կը հանեն կանկառի արմատէն, զարնան եղանակն: Գլխաւորապէս Գըզըլաղաճի, Գոմերի, Շէխլանի, Քուրրմէյտանի հայ կիները մէկ մէկ աման եւ դանակ ձեռքերնին, լեռներու վրայ կը պըտըտին, կանկարի [այսպ.] արմատը կը կտրեն, անկէ հոսած ճերմակ կաթը կը հաւաքեն ամանի մէջ, ուր կը թանձրանայ. թանձրացած կաթը եռ ջուրի մէջ կ'փեն ու այդ կերպով կակղած ծիւրը կտոր կտոր մէկ ձեռքով կը բռնեն, միւսով կը քաշեն: Ծիւրը կը նեւայ, կ'երկարի. ան ատեն բութամատի ու ցուցամատի մէջտեղ մաս մը կը տափակցնեն, կը կտրեն ու այսպէս շարունակաբար: Այս կերպով կտրուածը *լոշտակ* կ'ըսուի. լոշտակները բելի վրայ կը շարեն. 12 լոշտակ մէկ շարան, 12 շարան մէկ տաստա կ'ընէ. մէկ շարանը 10–20 փարա, մէկ տաստան 3–4 դրուշ կ'արժէ: Գլխաւորապէս Վարդավառի, Աստուածածնի տօներուն կը ծախուի Ս. Կարապետի վանքին մէջ. կիները, կողովներու մէջ լեցուցած, կը շալկեն, կը բերեն իրենց վաստակը, այն կիները, որ կ'ելլեն Ս. Կարապետի տհազին յէլը: Կան գեղեր ալ՝ Ավրան, Տէրիք եւ ուրիշներ, որոնք էգ կանկարը չունին, ճարճրուկի արմատէն կը հանեն ծիւրը. *կորդի ծիւրն* է աս:

Ծիւրը կը ծամեն. նախ լեղի համ մը կու տայ, յետոյ՝ քաղցր: Ծիւրը շաքար կը պարունակէ, որ լորձնիտի հետ միացած՝ *կլիւքոզ* կը պատրաստէ: Ծիւրը իր լեղի յատկութիւնով ստամոքսին օգտակար է, միեւնոյն ատեն ակռաները կը մաքրէ: Ծիւրը տեղական վիրաբուժութեան մէջ ալ կը գործածուի. խողի մէջ կ'եռացնեն, մորթային չիպաններու վրայ կը դնեն, հոն հաւաքուած *գոհխը* դուրս կը քաշէ, վէրքի բերանը կը բանայ, կը մաքրէ:

Գազպէն լեռներու բաւերուն վրայ կը նստի. բաւը կաղնիի ցախն է. բաւը կը կտրեն, արեւու առջեւ կը չորցնեն, կտաւի կամ կապերտի մը վրայ կը թօթուեն, տերեւախառն *գազպէն* յետոյ մեծ զանգուածներու կը վերածեն: Իսկ երբ ուզեն ռուփ պատրաստել, գազպոտ բաւը ջրով լի տաշտի մը մէջ կը թաթխեն, *գազպէն* կը լուծուի, ջուրը կ'եռացնեն, որ կը ցնդի, կը մնայ թանձր ռուփը:

Ծիւրն ու *գազպէն* Մուշի նշիրական արտադրութիւններն են. Ս. Կարապետի ամէն ուխտաւոր կը գնէ սոնցմէ: Կովկասի մէջ պաշտելի յարգ ունին:

Գազպէն այն տարիները առատօրէն կ'իջնէ, երբ յունիսի, յուլիսի տօթագին օրերուն մէջ երկինքը երկար ատեն սեւ ու թանձր ամպերով շրջապատուի: Առողջութիւնը բունաւորող այս օրերը *գազպէ* կ'իջեցնեն: Այս տարի շատ նուազ է *գազպէն*. անոր առատութիւնը ցորենի առատութեան հետ խոտոր կը համեմատի: Բնախօսական արգասիք. բացատրութիւնը ուրիշ ատեն:

Զմոռնամ յիշել Մշոյ եւ դաշտի կիներու գլխաւոր ձեռագործները, արախչի, բուն, մէզար» (Գ. Անդրէասեան, *Մուշի տնտեսական վիճակը*, *Հայրենիք* լրագիր, 20 սեպտ. 1895, Ա., գ–դ):

Գազար, -*ի*, գղ. *պանէ*, *պաստընագ*. պրս. *կէզէր*, արբ. *ճէզէր* (Լըկլէր, Ա., բիւ 481), է *կարոտ*. իսկ առ մեզ *գազար* է գղ. *պանէ*. պրս. «*Կէզէր* նշանակէ ստեպղին, *Հավուճ*» (Գէորգ). «*Կէզէրի տէշթի*, *կէզէրի պէրրի*, ստեպղին վայրի. է արմատ ինչ» (Նոյն): «*Գազար.* արմատ ջերմ բնութեամբ, նման

ստապղնոյ (*լաստերնաք*), *պաստինակա*, *ստաֆիլինուս*» (Վիլլ., *Բառ. բժշկ.*): «Գազար լուծանէ զորովայնն» (Ռոշքեան): «*Պաստինակա*, *գազար*, է արմատ ինչ բազմատեսակ եւ ուտելի որպէս ստեպղին, այսինքն որպէս *զհավուճ*, *ճէզեր*, *կէզր*, *քէզեր*» (Զախջ., *Իտ.-հայ.*):Գազար. բանջար, որոյ արմատ է սպիտակ դեղնագոյն եւ ուտի ի կերակուրս. տե՛ս ի լտ. *պանուս*. կերեալ եմ ստէպ ի Ստոքհոլմ, ուր ասեն *պալստերնակա*:

Գազբրրուակ, գղ. *Նուռ միւսկադ*. արբ. *ճուզ պու* (Լըկլէր, Ա., թիւ 526), Գէորգ՝ *ճէվզ պէվվա* ի *Փուփէլ*, *ճէվզ պէվա* ի *Ֆուֆէլ*: Արբ. *ճէվզ պուվա*, պրս. *կէվզ* ընկոյզ. Նոյն է, որ ի *Բժշ*. Ա. գրի *ճօզպուէ*. թուրք. *Հինտիսթան ճէվզի*: Տե՛ս Գազբրուակ ի Շահրիմանեան եւ *Միրխաթիրա մօսքհաթա* ի Բէստէն. Խորենացի, *Աշխարհացոյց*, 615: Լտ. «*միրիստիէնա*, ի յունէն *միւրիստիկոս*. արբ. *կէօզլ թիպ* կամ *ճէօվզ պուվա*, *ճէվզ իւթ-թիպ*. տճ. *Հինտիստան ճէվիզի*. եւ ըստ մեզ՝ *ընկոյզ հնդկային* կամ *ընկոյզ մշկահոտ*» (Բէստէն, հ. Բ, 258): Վաղ գրեալ եմ յիմ *Բոգ. գաղղ.- հայ.* ի բառն *Միւսկադ*. «Բննելի, թէ ո՛ւր գտեալ եմ արբ. *ճէվզի պէվվա*: Իսկ *գազբրրուակայ* ուղղագոյն ձեւն բուի *գաւզիրուակ* կամ *գոզիրուակ*. պարսկերէն *կէվզի (կէվզ՞) պույա*, այս ինքն՝ ընկոյզ անուշահոտ. տե՛ս Խոր., *Աշխարհացոյց*: *Գազբրրուակ*. լտ. *նուքս մուսկատա*. *Հինտիստան ճէվիզի*» (Ստեփանոս Ռոշքեան): Գտի ապա, զի եւ Հիւբշման գրէ, *Արմ. Գրամ.*, Մասն Ա., երես 124. *գազ ի բոյակ*, զոր առաւէ ի *բուինննիկ*, երես 123, թիւ 119, այլ ոչ ասէ, թէ զի՛նչ է *գազ ի բոյակ*: «*Ծօզպուէ*. ի Հնդկաց գայ» (*Բժշկարան* Ա., 144): Տե՛ս ի *Հայրուսակն*, թիւ 397 *գազբրրուակ*. թիւ 1916 *ճօզպէ*, *ճավզպաուէ*. թիւ 2177 (տպ. 1177ծ եւ երես 460 *նարգիլակ*, *նարնիլ*: Տե՛ս եւ յիբն էլ-Բէյտար, հ. Ա., թիւ 526 *ճուզ պու մուսկատը*, *ճուզ էտ-թիպն* է եւ այլն: Կայ արբ. *թնյեիպ* 1. բարի, լաւ. 2. հրամայեալ, օրինաւոր. 3. անուշահոտութիւնք (Պօզանեան): Կայ արբ. եւ *թըպ* 1. ազնուութիւն, լաւութիւն իրաց. 2. բուրումն, ծխանելիք (Պօզանեան): Իսկ արբ. *թըպպ* է բժշկութիւն, եւ *թըպպի*՝ բժշկական (Պօզանեան): Տե՛ս եւ *անճիտանի տնյիպ*, *հլթիսի տայիպ* (*Հայրուսակ*, թիւ 118): *Գազբրրուակի* ուղիղ ձեւն բուի **գաւզիրուակ**, որ ի Մովսեսի Խորենացւոյ յընդարձակեալ *Աշխարհացուցին*, 44, գրի *գոզիրոյեկ*. տե՛ս ի *Հայրուսակ* զհատածն: Պարսկերէնն ունի լինել *կէվզ պույա*, այս ինքն՝ ընկոյզ անուշահոտ:

Գազպէն. տե՛ս ի Կապռաշենի. [[տե՛ս եւ **Գազապէն**]]:

Գահրշակ. կայ պրս. «*Էրշէք*. է անուն խոտոյ իրիք, որ կոչի *ուլդու օթի*» (Գէորգ): «*Հրշակ*. տեսակ ինչ մրգի» (Ստեփ. Կամենցացի): Նոյնպէս եւ Շահրիմանեան՝ *հրշակ*, *հրշակենի*: Շահրիմանեան ունի *հրշակենի*. «Գաւառս. հոն, հուն, չում, *հրշակենի*, լտ. *կորնուս*, տճ. *զօզալ*, *զըղըլճըգ*», գղ. *կոռնույյէ*: «*Հրշակ*. [ըստ հին *Բժշկարանի* Հերմոյ բազաւորի անուանելոյ. իսկ աշխարհաբար՝ *ծուաղ*, *ծուաղենի*, *արշուկ*. եւ ծառն՝ *արշկի ծառ*]. ծառ է, արմն՝ չափաւոր հաստ, ամրապինդ, բազմոստեան, դաժանափուշ, կեղեւն՝ կարմրաշուրբ, տերեւն՝ նման ընկուզի, ծաղիկն՝ վարդաձեւ, մանր» (Շահրիմանեան):

Գաքաքուկ, *հայէմ կէօմէճի*, [[*Գւռ.*°]] Ա. 32. աղաւաղութիւն **Կոստեակ** բառի. *Լաքաքուկ*, մոլոշ, [[*Գւռ.*°]] Ա., 37:

Ծիպանուկ, բերեւս ի թուրք *չիպան* բառէ. գղ. *կլեմանտիտ*. «*Ծիպանուկ*. խոտ է, եւ ասոր ծաղիկ կը ծեծեն ու կաղինի կպենով մարդու մարմնոյն վրայ կը կապեն, որով վէրք կը բանան, ու երկար ատեն կը բանցնու *ֆիթիլով* առողջութեան համար. տն. *եագը օթու*. ծաղիկն՝ դեղին եւ կարմիր» (*Խորտչ*., 35): «*Ծիպանուկ*. խոտ է, զորոյ զծաղիկն ճմլեալ՝ թէ կապես ի մարմինդ, խարան բանայ: Կարնեցիք՝ *ձունկ* կամ *զինկ*, այլուր՝ *կոպռոշ*» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 33-34). տե՛ս եւ *Ցինկ*, զորմէ ասի, թէ խարան բանայ:

Ծիտ. *ծտի աչք* (*Հայրուս*. 1231). *ծտի լեզու*, բանջար (*Մանանայ*, 446). *ծտի պաշար*. տե՛ս *Ծտապաշար*. *ծտի խնձոր* (*Հայրուս*., 1233). *ծտի ճնգի* (անդ, 1234). *ծտի տանձ* (անդ, 1235) որ եւ *Ցինկ*:

Ծիրան. բուի դառնակորիզն, որ եւ *խորիկ*, *պարկուկ*. ստոյգ դառնակորիզն է, *զէրտալի*, զի ասի ի *Վստ*., ՄԼԷ, 150. «*Զծիրանն* եւս այսպէս արա՛, որ կուտն քաղցրանայ»: «*Ծիրան. մշմիշ*» (*Բժշ*. Ա., 144): «*Բորոկոկին. ծիրան*» (Գաղ. Ա): «*Բորոկոկին. ծիրան, միշմիշ*, որ է *զարտալու*» (Գաղ. Դ): «*Բրոկոկոին. ծիրանի*» (Գաղ. Դ): «*Զալապայ*. տեսս *ծիրան*» (Փիրղալէմեան): «*Միշմիշ*. պ. *զարտալու* եւ հ. *խորիկ* ասեն եւ *ծիրան* ասեն» եւն (Ամրտ., գրեա՛ ամբողջ, *Հայրուս*., 1198): Տե՛ս *ապրիկո* ի Լիտրէ եւ ի Մ. Դըվիկ. տե՛ս եւ *ծիրան* ի Հայկզ.. տե՛ս եւ *պարկուկ* (*Հայրուս*., 2526): «*Զծիրանն* եւս այսպէս արա՛, որ կուտն քաղցրանայ» (*Վստ*., ՄԼԷ, 150): «*Ծիրան*. միրգ ինչ. *անեմ էրիկի*» (*Մանանայ*, 446): «*Նուժպանայ*. կուտ հանած չորացուցեալ *ծիրանի* չիր» (Փիրղալէմեան). Մխ. Գոշ: «*Շարուկ* եւ *պանկուկ*. *ծիրան* ի Բալու» (Իննին., *Նոր Հայաստան*, 224): «*Քամար էտ-տին ծիրան* Ատալիոյ» (*Միսուան*, 304ա):

Ծիրանի ծաղիկ, *Հայրուս*., 1199:

Ծծմոր, տե՛ս եւ *Խտուտ*. «Որ աչքն վիրաւորել է ի մաղասոյ եւ արոյն ունենա կամ այտոյց, *զծծմորն* եփէ՛ ջրով, լեսէ՛ եւ ա՛րկ ի վերայ աչիցն» (*Բժշ*. Ա., 252): «*Ծծծմոր*. կապուտ, անուշահամ ծաղիկ մ'է, տն. *լիսանի սէլվի*» (*Բժշ*. 58): Թուի գղ. *բլէօէ*, որ եւ *բարբո, կաս-լիւնետ, էօֆրեզ*. կայ եւ գղ. *վիպերին* «վայրի կամ կապոյտ եզնալեզու. *նէպանի եախօտ մավի լիսան իւս-սէվր*» (Էմին): *Բլէօէ, ծծմոր, փէյղամպէր չիչէյի* (*Հայրուս*., 1204): Իտ. *ֆիորալիզո*, շուշան հովտոց, *փէյղամպէր չիչէյի* (Ճամնեան):

Ծծուկ. *ծծուկ* կամ [այսպէս գտաարկ ի գրութեանն], որոյ ծաղիկն ծծեալ քաղցրահամ է» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 34):

Ծմել, տե՛ս *Ծիմել*:

Ծներեկ, որ եւ *ծնեյրեկ* եւ ռամկօրէն *ծներուկ* կամ *ձներուկ*. տե՛ս եւ *Մոզքոր*. յն. *ասպարագոս*, գղ.

տապերժ, իսկ կորրիգ է վայրի ծներեկ. «Ոսկի անուն լեառն [ի Կորսիկա կղզւոջ], ուր ոսկի եւ արծաթ հատանի երկրաւորս իբրեւ գծնէրեկ» (Խոր., Աշխարհ., 595): «Ասպարդին. ծներեկ» (Գաղ. Բ). «Ասպարթին. ծներեկ» (Գաղ. Ա, Գ). «Ասպարթին. ծնէրեկ» (Գաղ. Դ). Ծներեկ. Հիլիօն» (Բժշ. Ա, 144): «Եւ կերակուր՝ սխտան ջուր տո՛ւր չամանով ... եւ տո՛ւր նակնդեղի տակ եւ ծնելրեկ [Բժշ. Ա, 190, Հիլիօն] մորէով» (Մխ. Հեր., ԼԲ, 89): «Ծներեկ. բանջար վայրի» (Մանանայ, 446): «Ծներեկ կամ ծներուկ. գուշ գօնմազ խաֆիրան. սփարանկի. ծներեկ» (Հ. Մկ. Անան.): «Ջներուկ [տպ. ծնեփուկ]. տե՛ս Ծներեկ» (Հայրուս., 3353):

[[Ծներուկ, տե՛ս Ծներեկ:]]

[[Ծնելրեկ, տե՛ս Ծներեկ:]]

Ծնծեղ. «ծնծեղ. ծառիկ է. ճնճեղ» (Հ. Մկ. Անան., Բոգ. յաշխարհաբառէ ի գրաբառն): Ջնծղի. անից աղանը (գեղջ.)» (Նշան Գ. Խտշեան):

[[Ծոբոր, ծոբորն, տե՛ս Ծաքքին:]]

Ծոբորուն, -րնոյ, -րն, -ով. (սաս գրեա՛ զԾաքքին). **[[տե՛ս Ծաքքին:]]**

Ծոպեխի. Բ, 28. «Ծպեխի. ծառ, որոյ կեղեւ ներկէ ի գոյն մթին կարմիր եւ սաստիկ պնդացուցանէ եւ անփուտ պահէ իբրեւ զրուղան կամ զվէռնիչ» (Իննին., 41 եւ 36, 183):

Ծոր 1, -ի, -իւ, որ եւ Կոծոխուր, Ջառատաղ. գղ. էպին-վինետ, կրեպինիէր. թուփ ի ծորիմ բայէ, զի եւ պրս. սիրիշք, որ է անուն պտղոյս, նշանակէ եւս "կպչիլ, արտասուք" (տե՛ս Պօզան.). «Ծոր, որ է պարպարիսն, որ է ամիրպարիսն, որ է զրիշքն. ինքն սեւ եւ կարմիր կու լինի, եւ լաւն այն է, որ կարմիր լինի եւ նոր. թուրքն [Ձ եւ տպ. Թ.] զարամուխ եւ խաթուն տուզլուղի ասէ. եւ լաւն այն է, որ հասուն լինի եւ նոր եւ զէր լինի եւ կարմիր, որ ի սեւութիւն քշտէ» (Ամրտ., Անգ. անպ., Հայրուս. 1218): Պրս. էնպէրպարիս, թուրք. զարամուզ (Գէորգ, գրեա՛). տե՛ս անդ եւ «Հիւրուք, ծոր, թուրքերէն զարամուզ եւ խաթուն տուզլըղի» եւն (գրեա՛): «Մուզ ծոր» (Մխ. Հեր., ԻԲ, 45). «ծորի կուրս» (անդ, Խ, 122): Ծոր, -ի, Հայրուս. 716 եւ 2472. «Ծորի տերեւ» (անդ, 662). «Ծորի շարապ» (անդ, 1102): «Ծոր. տն. ըըզամուզ [պիտի զարամուզ] կամ ամպէրպարիս. ըստ խոտրջրցոց՝ պտուղն սորա՝ ծոր, իսկ թուփն՝ ծորենի» (Ա., 34): «Պէրպէրիս, որ է ծորն, որ է կծօխուրն» (Բժշ. Բ, 335):

Ծոր 2. նշանակէ աղտոր [չպահպանուած] ըստ մշեցւոց (Իննին., 4):

Ծորենի, 1. գղ. էպին-վինետ. «Գղակլիօն. ծորենւոյ աւշարակ» (Գաղ. Ա, Դ. իսկ Գաղ. Բ՝ ազարակ): «Գղակլիօն. ծորենոյ օշարակ» (Գաղ. Գ): Կայ յն. գլիւկիւ՝ արեւի տակ որթի վրայ չորացած խաղողից հանուած գինի:

2. Գղ. սանտալ. «Սքինոս. ծորենի կամ ծառատաղ» (Գաղ. Ա). «Սքինոս. ծորենի» (Գաղ. Բ): Կայ յն. սքինոս, սանտալ: «Ջեռատաղոյ տակ. ծորենոյ տակ» (Բժշ. Ա, 144): «Ծորենւոյ կեղեւ» (Վստ. Յէ, 208). գղ. էպին-վինետ: «Ծորենի (աշխարհաբար կոծախոր). բերբերի, տն. ըըզամպուլս. թուփ է ջով եւ փշալից. փայտն՝ դեղին, տերեւն՝ մանր, երկայն, կանաչ. թանձր. ծաղիկն՝ փունջ, բազմաբերրի վարդաձեւ, դեղին» (Տահրիմ.):

Ծորի. «Ծորի [ի լս.՝ "որ է կոծոխոր"], որ օգտէ տաքութեան, խարտէշ մաղձի, սափրայի» (Բժշկրն., Հայկզ.). թերեւս է սեռական ծոր բառի:

Ծործորակ. «Շամղիտակ (յԱյրարատ՝ ծործորակ, ի Փայտակարան՝ սոսան), որով ներկեն կանայք զմանածն ի գոյն կապոյտ. լտ. սիմֆիտում. [գղ. գրանդ կոնսուզ]. ստուգարանի շամղիտակն քոքա-խոտ, որոյ հինգ տեսակ [այսպ.] են» (Տահրիմ.):

Ծուաղ. «Ծուաղ. կեռասի պէս սեւ պտուղ է. գարայ եէմիշ. ծուաղ» (Հ. Մկ. Անան.): «Ծուաղ. տնկ. կոչեցեալ գարա եէմիշ կամ գաքլան» եւն (Իննին., Նոր Հայաստան, 382. օրինակեա՛):

[[Ծպեխի, տե՛ս Ծոպեխի:]]

Ծտապաշար, Ծտի պաշար. տե՛ս եւ Ճնճղկան պաշար. «Ծտապաշար կամ ծտի պաշար. լտ. բուրս պաստորիս, տն. չօպան չանթէսի. տունկ, է յաճախեալ ի Հայաստան. տերեւն՝ երկայն, հերձոտեալ եւ տարածեալ ի գետնի. արձակէ բազում ծղօտս. ծաղիկն՝ մանր, սպիտակ, եւ պտուղն՝ եռանկիւնի ի ձեւ փոքու քսակի» (Տահրիմ.): Ծտապաշար (Արանասեանց, 74 (գրեա՛) եւ 76: Գղ. բուրս ա պաստէօր,

կապսել, բուրս ըլ բերժէ, տաբուրէ:

Ծտի լեզու. տե՛ս ի Ծիտ:

Ծտի պաշար. տե՛ս ի Ծտապաշար:

Ծրդենի, ծրդի. նո՞յն ընդ *Ցրդենի, Ցրդի*, որ գրեալ է *Ջրրի*. «*Ծրրի* կամ *ծրրենի*. է ծառ ինչ, եւ անուն նորին փայտին» (Հ. Պաւղոս Մեհերեան, Բ, 28): «*Ծրդենի*, բփանման բոյս ինչ» (Հ. Ներս.):

Կ

Կազմարէ, կազմորենի, կազմորէ, կազմորի, կազմուրէ, որ եւ *Մրուանտակ, Վայրի՝ վայրենի նարդին.* գղ. *ազարե, կաբարէ, նար սոլաժ*. «Խոտիշ. *կազմարէ* կամ *հոռոմ սնֆուլ* կամ *ասարոն*» (*Բժշ*. Ա., 144). «*Նարդ*, որ է *կազմուրէ*» (անդ, 145): «*Նարդեան* [Զ *նարգեան*]. *կազմորէ*» (*Թրգմ. դեղոց*): «*Ասարոն* [Զ *ակարոն*]. *կազմորոյ* տակ» (Գաղ. Գ). «*Ասարոն* [Զ *ասասարոն*]. *կազմազի* կամ *մարանդիտակ* կամ *նարդին*. ամէնտ *կազմորենի* տակ է» (Գաղ. Գ). «*Ասարոն* [Զ *ակարոն*]. վայրի *նարդին*, *կազմորենի* տակ» (Գաղ. Ա): «*Նարդեան* [Զ *նարգեան*]. *կազմորէ*» (*Թրգմ. դեղոց*): «*Թոմոն*. *կազմորոյ* հունդ» (Գաղ. Գ). «*Թոմոն*. *կազմորենի* ունդ» (Գաղ. Ա). «*Թոմոն*. *կազմորենի* ունդ» (Գաղ. Դ): Տե՛ս *Ասարոն* յՕտար: Էմին՝ «*ազարե, վալերիան, Սեեր*»: «*Կազմորենի* ունդ. ի *Բառս Գաղիանոսի*, որպէս յն. *թիմոն*. տե՛ս *Թիւմ*: Ըստ լեհ.՝ *կազմոր*, ա՛յլ բուփ ցած» (Նոր հայկզ.):

Կաթնրեկ, -*ի*, գղ. *լեալըրոն*. «*Կաթնրեկ*, որպէս *ծնեբեկ*. խոտ փշուտ, անկիւնաւոր, որոյ ծիղն ի ներքս է ունայն. ի բեկանելն գշատ կաթն հոսէ. *սոնքուս* Գաղ. *բառ*: *Բժշկ*. "Ա՛ռ *զկաթնրեկ* խոտն եւ նորին կարամբն օ՛ծ զխոցն"» (Ռոշքեան): Կայ եւ պրս. *շիրկիյա* = *կաթնխոտ*, նոյն ընդ *շէփրէմ, սիւտլիւյէն*, տե՛ս ի Գէորգ, որ եւ *Իշկաթնուկ*, զոր տե՛ս:

Կաթնխոտ. «*Իշկաթնուկ*. *կաթնխոտ* ըստ խոտրջրեցւոց. վայրի բոյս է անպիտան» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 33): «*Իշկաթնուկ*. (Կ.) *կաթնխոտ* ըստ խոտրջրցոց. դեղին, փոքր ծաղկամբ. ի բնոյն եթէ հատցես, ելանէ կաթն. տն. *սիւտլիւյէն*» (Գ, 32). «*Կաթխոտ*. կաթով խոտ» (*Խոտրջր*., 63). — «Մազկաղ. *կաթխոտ* է, եւ արմատ սոխի պէս է» (անդ): Գղ. *պոլիգալա, պոլիգալ*. այլ ինչ է եւ գղ. *կայ-լե*: Ըստ Ագուլեցւոց՝ *կխցա՛խուտ* (=*կաթնխոտ*), զի ըստ բարբառոյ նոցա՝ *կախոց* է *կաթն* (Հր. Աճառեան, *Բանասէր*, հ. Գ, պրակ Բ–Գ, 1901, երես 79):

Կաթնուկ. Դաւ. Սալաձոր., *Բզմ*., 1869, 163: «*Կաթնուկ խոտ*. խոտ ինչ, փշատի տերեւի մեծութեամբ. *աասա չայրի* կը նմանի» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, երես 313). *աասա չայր* է գղ. *սոժ*, իտ. *սալվիա*: «*Կաթնուկի* ծաղիկն է դեղին, գոյնն է գլուխ դեղիններուն» (Դաւ. Սալաձոր.):

Կաթնտերեւի, գղ. *օռն*. «*Կաթնտերեւի*. դղփին [գրածն՝ բըխփին], [այս ինքն *էբարըլ*] հետ նոյն է համեմատութեամբ տերեւոց, բայց ասոր փայտ բոյլ է» (*Խոտրջր*., 62): «*Կաթնտերեւ*. է ծառ ինչ փոքրիկ, որոյ տերեւքն լինին այծից սնուցիչ կերակուր» (Բ, 6). այսպէս եւ *Լեհտորի*: «Ի Պոնտոս *ագ աղաճ* կոչեն» (*Հայբուս*., 1248). «*ագ աղաչ*. կաղամախի, հացի» (Պօզան.). «*օռնօ, ոռնի*, ծառ ինչ նման հացւոյ, *աք աղաճ*» (Զախջ.). «*օռն, ոռնի* (ծառ), *ագ աղաճ, գըզըլ աղաճ*» (Աւգեր.). «*օռն*. վայրի գագրենարեր հացի, *ագ աղաճ*» (Էմին): «*Կաթնտերեպի, կաթնտերեւի*, տն. *ագ աղաճ* (գեղջ.)» (Նշան Խտշեան):

Կաթնփուղրի. *Հայբուս*.. *կալէշ*, որ եւ *Քալէշ*, զոր տե՛ս:

Կալամոն, որ է *եղէգն* (*Պտմ. վարուցն Ադամայ եւ Եւայի* , Ն. Մառ, *Ամառն. ուղ*., 29, *Թանգարան*, h. Ա., 14): Տե՛ս եւ «Վանք *կալամոնի*», Վ.Հ, Ա., 506, բ. բրգմ.. «*Կալամոն* Արսենոյիտոյ» (անդ, 567, բ. բրգմ.) , ուր հինն ունի «*Եղեգնուտն* Արսենտու», յորմէ եւ «Հայրն Սիսոյ *Կալամոնացի*», անդ, 571, բ. բրգմ., հինն՝ «որ բնակեալ էր յ*Եղեգան*ն»:

Կալաֆար. «*Կալաֆար*, տն. *չաՀտէրէ*», Ա., 34: *Կալաֆարի խոտ*, գղ. *սուզ՞, կալի՞*. կայ եւ *ալկալի*. տե՛ս եւ *Աղտաղտուկ* ի *Հայբուս*., 71. «*Կալաֆարի խոտ*. կարծեմ, թէ զայս խոտ *սոտա* կամ *փօթաս*

հանելու խոտն է. իրեն աւանդութենէն կ'իմացուի, որով կ'ըսեն, թէ այս խոտ էրեն եւ մոխիրն ջուրով եփեն, մինչէն կ'ըլլէ գոհարի քար» (Խոտբչ., 65). "գոհարի քար" ինչէ՞ արդեօք թուրքերէն *կիւվէրճին*, որ է "բորակ":

Կախմախ, *կախմխի*. (Հայկզ. *կաղամախ*), ռամկական. տե՛ս *Կաղամախ*, *Կաղամախի*:

Կակալ, կակալայ. «*Կակալ*. ընկոյզ» (*Բառք խոտբչրցոց*, Ա., 76): «*Կակալ*. տե՛ս *Ընկոյզ*» (Հ. Մկ. Անան., *Բոց. յաշխարհաբառէ ի գրաբառն*), ուր գրի դարձեալ. «*Կակալ*. տե՛ս *Ջրւանք մարդոյ*. *Կակալիծ* կամ *կակալից*. տե՛ս *ծրւանկ*»:

Կակաչ, -ի, գղ. *տիւլիպ*, թուրք. *լալէ*. Մխ. Գոշ., *Առակք*, Լ, 36. Դաւ. Սալաձոր.. «*Փասալարբաչ*. *կակաչ*» (*Թրգմ. դեղոց*): «*Կակաչ*. ծաղիկ վայրի եւ մշակեալ. դեղնագոյն եւ կարմրագոյն, հոտով եւ անհոտ» (*Մանանայ*, 446): «*Կակաչ*. դեղին եւ կարմիր ծաղիկ գեղանի» (Փիրղալէմեան): *Դեղին կակաչ* (*Հայբուս*., 1261). *կարմիր կակաչ*, *ճերմակ կակաչ*, *մոխրիկ կակաչ* (*Խոտբչր*., 62):

Կակուիկ, տե՛ս եւ *Աւձկաքաւի*, *Օձկաքաւի*. կայ յն. *ալիկակալոն*, [[գղ.]] *կոկըրէ*. «*Կակուիկն* կծու է. զջուրն ի քիթ ա՛ծ, մաղաս հանէ եւ զխելք սրբէ. քաղցր իրօք եփէ եւ ի վերայ այտոյց աչաց դիր» (*Բժշ*. Ա., *Հայբուս*., 1259):

Կակժիրակ, տե՛ս եւ *Կանկիրակ*. ինչէ՞ ի *կակժիրակ* բառէս *ժիրակարոյս*. «ժողովարան անմարմնոց, *ժիրակարոյս* ծաղիկ» (*Բռ. գով*., 257): Այլ տե՛ս «Գրիգորիոս *ժրարոյս* ծաղիկ, ժիր մշակ երկոց» (Յովհ. Երզնկ., *Ներբ. Գր. Լուս*., *Սոփ. հայկ*., Ե, 104): «*Փինոնա*. ոմանք եշնարոտ ասեն եւ այլք քահանայաստակ, խաչափայտ, *կակժիրակ*, պանտուստան, յուսարոն» (*Բժշ*. Բ, 358). իսկ *կակծիրակ* կամ *ժմիրակ* կամ *ժմերակ* տե՛ս *Կնոկոն յՕտար*:

Կաղամ, կաղամախ*. «զի *կաղամք* յորբոյ խուսափեն եւ սարդք» եւն (Փիլ., *Յղ. բան ունել*., 169). ի ծան. «*Կաղամք* կա՛մ *կաղամախք* էր, կա՛մ՝ *կաղամբք*»:

Կաղամախ, -ի, -ից, կաղամախի, -*խւոյ*, -*խեաց*. ռմկ. *կախմխի*. տե՛ս եւ *Բարտի* եւ *Հաճարի*. «Բարձրաձաղն իբրեւ զկաղնիս եւ իբրեւ զսաւս եւ *զկաղամախ*» եւն, տե՛ս ի *Ցակրի*, (Սարգիս, *Մեկն. Յուղայի*, Բ, 819բ):

Կաղամախ. Ես ԽԱ 19, Ազար. 480: Տե՛ս *պոպուլուս ալբա* եւ *պոպուլուս նիգրա* ի Բէսսէն, հ. Բ, 122-123 [21 մարտ 1905]. յորմէ՝ *Կաղամախուտ* եւ ռմկ. *Կաղմխուտ*, անուն տեղւոյ (Ինճին., 134): [[Գղ.]] *պէօպլիէ բլան*, իտ. *գատտերո*, *գատտիչէ*, *պոպոլո բիանկօ*, [[թուրք.]] *ագճա գավագ*, *աք թօղ աղաճը* (Զախ., *Իտ.*): [[Գղ.]] *պէօպլիէ նուար*, [[Թուրք.]] *գավագ*, *գարա թօղ աղաճը*. տե՛ս *Կաղամախ* ի Զախջ., *Հայ-իտ.*:

Կաղամախի. Ովս Դ 13, Բրս. *Վեց*. Ե 92, 93. *Պիտ*. Թ, գ, 546:

«Կաղնի ծառ պաշտէին, *կաղամախի* ծուեր ածէին եւ սաւսոյ նուիրէին եւ խաւարեալ աղջմրղջին» (Գր. Մագ., *Մեծ են գործք*, տողք 861, 862): «*Կախմրխի* եւ կաղնի. *ռոբուր*, *կուերկուս*, *իլեկս*» (Ռիվոլա, տպ. Միլանու, 1621, երես 232). «Կաղնի եւ *կախմրխի*. *կուերկուս*, *ռոբուր*» (անդ): «Ա՛ռ անտառովն, որ կոչի *կաղամախեաց* (2 ՁՁ *կախմխեաց*) բլուր» (Յոհ. Մամիկ., 50). «Գային ի *կաղամախեաց* բլրէն» (անդ, 53): «Ընդ կաղնւոյ եւ ընդ *կաղամախ[ւ]ոյ* ընդ հովանեաւ» (Ոսկ., *Ճառք*, 45, բ. բրգմ.), ուր ա. բրգմ. ունի «հովանեաւ կաղնոյ կամ ոփը[ւ]ոյ»:

«*Ղեւկէ*. սօսի կամ *կաղամախ*» (Գաղ. Ա). «*Ղեւկէ*. [ս]աւս կամ *կաղամաղ*» (Գաղ. Դ). «*Ղեւկէ*. սօսի» (Գաղ. Բ): Որ է *ղեւկէ՞*. «*Որեղեւկէ*. *կաղամախ*» (Գաղ. Ա, Բ): «*Այծար* կամ *այծառ*, գ. անուն ծառոյ, տե՛ս ի բառն *Կաղամախ*» (Նոր հայկզ. եւ Զախջ.): Յն. *լեւկէ*, [[գղ.]] *պէօպլիէ բլան*. յն. *այգեիրոս*, [[գղ.]] *պէօպլիէ նուար* (Լըկլէր, Ա., 108). *պէօպլիէ նուար* ասի գղ. եւ *լիար* (Լիտրէ): Կայ եւ «Բարտւոյ կամ *կաղմխոյ*» (Վստ. ՃԼ 93): Արբ. *Հավվէր*, *կաղամախի* (Պօզան.): Էմին՝ «*Պէօպլիէ*, *կաղամախ*»: *Պոպուլուս*, Ոփնի, տե՛ս:

Կախմախ (Հայկզ. ի *Կաղամախ*: «*Կախմխի*. *կաղամախ*» (Հ. Նեբս.):

Կաղամբ, -ի, -ից կամ -աց. *Կաղամբոս* . յն. *կրամբէ*, [[գղ.]] *շու*, *շու պոմէ*. լտ. *կրամբա*, *բրասիկա*, *կաուլես*, իտ. *կավոլի*. պրս. *քէրէմպա*, *քէլէմ* (Գէորգ). թուրք. *լահանա*: Յորմէ՝ *կաղամբավաճառ*: [13 յունիս 1914] Գրի ի յոգնականն *կաղամք*. կա՛մ զի է ըստ պարսկականին *քէլէմ*, կա՛մ փոխանակ գրելոյ

կաղամբք, զեղչեալ զնշանագիրն *ք*, որպէս առնեն յաճախ գրիչք ի յոգնականս բառից, զոր օրինակ՝ *միմեամբ* փոխ. *միմեամբք*: «Իսկ որ միանգամ յերկրայս է, ուսցի ի ծառոց եւ միանգամայն ի տնկոց՝ մի՛ պատրիլ, քանզի այսոքիկ զի թէպէտ եւ ոգւոյ մասն ոչ ունին, ընտանութեան եւ ատարութեան այլ ոչ ինչ նուազ յայտնութեան. շարժէ եւ անէ, իբր սիրական համբուրիւք ողջունի զմիմեամբք պատատի, որպէս զծիրենեւք՝ բաղեղն, եւ կամ զնշդարեւք՝ որթք: Եւ է՛ ինչ, յորմէ խուսէ եւ ի բաց դառնայ ... զի *կաղամբք* յորթոյ խուսափեն եւ սարդք: Այլ ոչ զօք կարծեմ այսչափ լի յիմարութեամբ, մինչ զի իշխել ասել, իբր զի եթէ ոք ի սոցանէ մտերմութիւն կամ թշնամութիւն բեւակոխեաց գործել. այլ վերնագոյն բնութեան բանի, է՛ ինչ, որ ի մի վայր ածեալ լինի, եւ է՛ ինչ դարձեալ, որ անջատեալ մեկնի, ոչ յարելով ի միմեանս» (Փիլոն, *Յղ. բան ունել եւ անասուն կենդանեաց*, 169-170): Հ. Մկ. Աւգերեան թարգմանէ ի լատինն *պոպուլուս* կամ *կրամբէ* եւ ի ծան. 1 ասէ. «*Կաղամբ* կամ *կաղամբք*»: Տե՛ս եւ ի *Գիրս վաստակոց*, ՄՀԳ, 175. որպէս գրէ իսկ Նոր հայկազեանն ի բառն *Սարդ*. «*Կաղամբք* յորթոյ խուսափեն, եւ սարդք. Փիլ. *Լիւս.*»: Ստոյգն է *կաղամբք*:

«Իսկ ի գիջոյն եւ ի թեթեւէն, որ ըստ մասանց ջերմին է, *պրաս*. իսկ հողանման ջերմ՝ *կաղամբ* եւ այլ ամենայն կծու. իսկ թեթեւագոյնսն ի դդումսն եւ ի սեխս եւ ի մեղ» (Եփրեմ, *Վասն երաշտի եւ վաշխառուաց*, հ. Դ, 204–205). Մխ. Գոշ, *Առակք*, ԿԱ., 59. Կիր. Գանձակ., *Պտմ.*, 28. — *Վստ.*, ՄԾՁ 162, ՄՀԱ 174:

Անտակ կաղամբ, [[գղ.]] *չու նարատէչն*, զոր Ամրտ. կոչէ *նապտի* (*Հայբուս.*, թիւ 1270), ուր իմացեալ է եւ ինքն՝ Ալիշան): «*Քարաք [քարամբ] ալ նափատի. անտակ կաղամբ է*» (*Թրգմ. դեղոց*). տե՛ս *նապաթի* յ*Այգեպրասխ*:

Խոզի կաղամբ (*Հայբուս.* 1270). արբ. *խուզի*, զոր Լըկլէր, Գ, թիւ 1909, երես 155, չիմանայ:

Կաղամբի տակ. *Կանոնք°*, *Վստ.°* (Հայկզ.):

Կարմիր կաղամբ (*Հայբուս.*, երես 679, թիւ 1270):

Հոռմցի կաղամբ (*Հայբուս.* 1270, 3176), թուրք. *գարնապիթ*, գղ. *չու-ֆլէօր:*

Կաղամբակուրծ, գղ. *տրոնյոն դը չու*, ՎՀ Ա 93. «կաղամբի կուրծ» (*Վրք. հց.*, ԻՁ. *Կանոն°*, Հայկզ.):

Կաղամբոս. «*Ղաննապիտ*, որ է ինքն *կաղամբոսին* ցեղերուն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 167ա), այս ինքն [[գղ.]] *չու-ֆլէօր*. տե՛ս *գարնապիթ* ի Պօղան., որ եւ *կիւլ լահանա*. տե՛ս *Հայբուսակ*, 1270. յն. *կաւլոս*, թուրք. *գօչան*:

Կաղամիտ. գղ. *կալամիտ*. «Լինի յաշխարհիս յայսմիկ [յիսաւրիա] խունկ ստիւրակ, կունում, ոպոգոմփիտ [յն. *օպոկարպաղոն°*], *կաղամիտ*. ամենեքեան ի ծառոյ ծորելոյ, ի ննւոյ միոյ կերուածոյ» (Խոր., *Աշխարհ.*, 602):

Կաղանչանն, *-անան*, ստորին հայ. *կաղշնայ*, գղ. *տիթիւմալ*, որ եւ *Մեղմերդ°*, տե՛ս. աղաւաղանօք ասի եւ *կաղնչնան, -ի, կղնչանան, կաղննանա, կաղնչնայ, կաղնշան, կաղշնայ, կաղշնակ*. տե՛ս *Ականդուկ*. «Եւ *կաղանչանան* ազգ ինչ առանձինն սպանող է եւ խառնեալ ընդ այլ դեղոյ [դեղս°] մաղձաղեղ է, բուժիչ ի մահուանէ» (Եզնիկ, 67): Հայկզ. սխալ գրէ «Ակքան. բանջար ինչ եւ կամ թուփ փոքրիկ՝ նման մրտի [*մորի*, Հայկզ. յ*Ակքան*, ի *Մորի* կամ *կաղանչնանն*. *կաղանչնանն* Հայկզ. եւ յ*Ակքան*, իսկ ի *Մորի*՝ *կաղնչնան*. [թուի կիտադրելի եւ գրելի «նման մրտի, կամ *կաղանչանն*»] ... կոչէ զնա *կաղանչան*, զի *կաղանչանն* թէպէտ եւ փոքր է, այլ նման է ձեւով եղեւին ծառոյ. եւ ծայրն խոպոպի» է (Կիւրեղ Աղեքս., *Մեկն. Թագ.*, Հայկզ. ի *Կաղանչան*, ի *Խոպոպի*): Տե՛ս եւ *Մեղմերդ* = *կաղնչնանի տակ* եւ *Հայբուս.*, թիւ 2370: — «Ճպրուն. *կաղնչնանի* տակ. եւ անվնաս մծրնցին է» (*Բժշ.* Ա. 145). «Ճպրուն, որ է *կաղնչնանին* տակն, զայն, որ ի Մծրնա բերեն» (անդ, 43): — «Գիր քամոյ: Գրգեայ կամ *կղնչանան* կտրէ՛ եւ կաքն ի վերայ կաքեցո՛ւր, երբ լուսինն նոր լինի» (*Ախտարական գիրք*, *Հայբուս.*, 534):

Կաղին, *-ղնի°*, *-ղնոյ°*, գղ. *գլան*. տե՛ս եւ *Տկողին*, ուր յիշի որիշ եւ *կաղին*, որ եւ *Խոզկաղին*. «Եւ դարձեալ եղիցին ի գերութիւն եւ յափշտակութիւն իբրեւ զբեւեկնի եւ իբրեւ *զկաղին* թաւթափեալ յիւրաքանչիւր պատենից զաւակն սուրբ արձանութիւն նորա» (Ես Զ 13). Եբրայեցին՝ *ալլոն*, որ է լտ.

կուերկուս (Կելսիոս, հ. Ա., 58, 59). տե՛ս անդ երես 41-42. *կաղին* յԵս Զ 13 թուի նշանակել *կաղնի*: — «Իբրև զբևեկնի տերևաթափ և իբրև *զկաղին*, զի թաւթափեալ իցեն յիւրաքանչիւր պատենից». զոր օրինակ մերկ ի վայելչութենէ լինի *կաղին*, յորժամ թաւթափեսցի ի պատենից, նոյնպէս և նոքա ժող և նախատ լինիցին, յորժամ եղանիցեն ի քաղաքէն և մերկանայցեն ի փառացն» (Ոսկ. *Ես* Զ 74): — «*Կաղին* ծամէր» (Ոսկ., Յոհ., Ա., ա). աստ թուի *ընտանի կաղին*, գղ. *նուազեա*. պիտի ըստ յունին *ոյոոն*, *կիւամոս*. թարգմանիչն թուի ընթերցեալ *կարիւոն* (Հայկզ.): — «Քանզի ստեղնատունկն վայրենի է, իսկ պտուղն նորա *կաղին*՝ ընտանի, որ նախագոյն և վաղագոյն քան զցորեան ի մարդկան կերակուր տուեալ է» (Փիլ., *Լին.*, Դ, ա). տպ. ունի «Իսկ պտուղն նորա՝ *կաղին ընտանի*», իսկ ի *Կաղնի* կիտադրէ Հայկզ. ըստ եղելոյս, նոյնպէս և՝ *Հայբուսակ*, 1273: — «Յառաջագոյն ուտէին [մարդիկ] կաղինս վայրի [ի] տնկոց անտի» (Նոննոս, Գ, կ, 59): — «Արքականին ծանր և չոր է քան զընգոյզ, և ա՛յլ շատ կերակրէ քան զընգոյզ. և ընկուզի ձէթ լաւ է քան *զկաղնի*. բայց *կաղին* լաւ է քան զընգոյզ» (*Բժշ.* Ա., *Հայբուսակ*, 242):

Կաղին, գղ. *նուազեա*. «*Պնտուխ*, որ է *ֆնտուխն*, որ հայերէն [տպ. Հ] *կաղին* կ'ասեն» ևն (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայբուսակ*, 242):

Կաղին արքայական. տե՛ս *Արքայկաղին*:

Կաղին, ծառն, որ և *Կաղնի*, գղ. *չեն*. այսպէս և *Արմաւ*. Ես Զ 13 (*աստ գրեա՛*). «Եւ ետ հրամանս թագաւորն [Հայոց՝ Խոսրով Բ] զաւրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն թագում և բերել զվայրենի *կաղին* մայրեաց և տնկել զայն յԱյրարատեան գաւառին: Եւ առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամաւրի՝ ի բլուրն, որ անուանեալ կոչի Դուին ... տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի» (Փ. Բիւզ., Գ, ը, 18):

Կաղնի, *-նւոյ*, գղ. *չեն*. կայ գղ. *բուվրը*, իտ. *բուվերչ*. յորմէ՝ *Արքայկաղնի*, *Սարկաղնի*, *Փշակաղնի*. Սղ ԾԺԹ 4, Երեմ Բ 34, Ոսկ., հ. Բ, *Ճառք*, 660. Եփր. *(ՅԱբրահամ և ի պատարագն Իսահակայ)*, հ. Դ, 209. «*Զկաղնին* յաղագս պատճառին ոմանք պաշտեցին» (Գր. Նազ., *Առ որս*, Է, Հայկզ.): — «Արք երկրածինք և սերմանեալք *ի կաղնոյ* և ի վիմէ ըստ քերթութեանն» (Դ. Անյ., *Ա լծ. Պորփ.*, Է, 272): — «Եւ երկրորդ՝ քանզի ծայրքն սքանչելիք են, և այն, որ երեւին, քանզի Աստուած է. և որում երեւին, քանզի այնմ, որ տեսանէն, զմիջոցն երկոցուն կարգեաց նշանակագոյն *կաղնի*, զհզաւրագոյնն և զիշխանականագոյնն» (Փիլ., *Լին.*, Դ, ա, 238-239. թանն է *զկաղնւոյն* Մամբրէի). — «Քանզի ստեղնատունկն վայրենի է, իսկ պտուղն նորա կաղին՝ ընտանի, որ նախագոյն և վաղագոյն քան զցորեան ի մարդկան կերակուր տուեալ է. վասն որոյ պատճառաց և կեանք նմա զիշխանութիւն բաշխեալ՝ ետուն տաճար և բագին միոյն Աստուածոյ համարեալ *զկաղնին*» (անդ, 239). — «Վասն որոյ և զբազումս ի նոցանէ կոչել սովորութիւն է, ոչ յորոց են, այլ յիշխանականէ և յառաջնմէն *կաղնւոյն* կոչեն, ի տեղեացն, յորս մանաւանդ խիտ ծառոց և [են՞] անտառք թանձունք, զի բէպէտ և ոչ մի *կաղնի* ի հարկէ վրէժ խնդրիցէ. և կաղնահարք [կոչին] և որք զեզաստ և զմայրս և զհամանմանս հատանեն և զայլս, յորոց արդեւք և դէպ լինիցի յանտառից նիւթոց կառուցանել ինչ, որ *դրխփաքատայքն* կոչին: Եւ ծառոցն պտուղք՝ ամենեքեան, ընտանեացն և վայրենեացն, կաղնա-պտուղք. և ձիթենիս կաղնահասունս [տպ. կաղնապտուղք, և ձիթենիս (կոչին) կաղնահասունս] կոչեն զայնս, որ ի վերայ ստեղին հասանեն. և *զկաղնւոյ* անուն ե՛ւ ձիթենւոյ [տպ. և զձիթենւոյ] ե՛ւ ամենեցուն՝ իբր իշխանականի և առաջնոյ ի վերայ դնելով» (անդ, 239-240):

«Զծառս *կաղնիս*» (Նոննոս, Գ, հ, 68). «Դոդոնական *կաղնի*» (անդ, Ա., ժբ. Գ, ի, 31. Դ, ժ, 89-90): «Զխոնարհիլն և զգալ» (Փիլ. *Լին.*, Դ, նկա, 369) «Մեկնի Իսաւ՝ Արարած կամ *կաղնի* ... նմանեալ *կաղնւոյ*, որ բեկցի յառաջ»: — «*Կաղնի* ծառ պաշտէին, կաղամախի ծունր ածէին, սաււոյ նըւիրէին և խաւարեալ աղջմըղջին» (Գր. Մագ., *Մեծ են գործք*, տողք 861, 862). — «*Կաղնին* արմատացեալ ծառ, որ ըզխոյն փոխանակեալ, Աւետեւքն հրեշտակին ըզմիածինն ապրեցուցեալ» (ՆոյնՆ, *Ներբողեան ի սուրբ խաչն քրիստոսընկալ*, տողք 10, 11, երես 80-81). — «Ոչ *կաղնին* արամազդեան, այլ Մամբրէին արքահամբեան» (ՆոյՆ, *Յղ. խաչանշան զաւազանին* ևն, տող 13, երես 89):

«Ես ննջէի ի ներքոյ *կաղնւոյ* միոյ» (Գ Եզր, *Թանգարան*, հ. Ա., 297):

«*Կաղնի* պառաւեալն Կիրրայի, յոր աւագս պատուեալ [յոր աւագ անպատուեալ՞] յանպատին, և զերակատար զազարանն Արամազդայ [ի] տապ ժամու հովանաւորեալ պարածածկէր ի բեզիկեան

[բեզեկեան] տպոյն» (Եոյն, Թուղթ ԺԱ., *Հայրուս.* 1273, երես 288): — «Սակս *կաղնւոյս* արքայական կամիմք իմաստասիրել զախորժելիսն քեզ: Ոչ արամազդեանն *կաղնին* պաուեալ տայր պտուղ, յորում աւազ անպատուիր [տպ. աւազան պատուիր] եւ ոչ *կաղնին* տրովադական կամ տիւռենային *կաղնի*, այլ՝ Մամբրէին, եւ որ ի նմանէն մեզ պտուղ ընծեռէ ծիր շնորհի» (Եոյնն, Թուղթ ԿԸ., *Հայրուրակ*, 1273, երես 288 եւ Հայկզ. ի *Կաղնի*). կան եւ այլ բանք ի *Հայրուս*.. խնդրելի ի Մագ.: — «Բասան ստուարս եւ երկայնս ունի *կաղնիս*» (Գէ. Սկեւռ., *Մեկն. Ես*., Նոր Հայկզ ի *Ստուար*): «Անհամ է պտուղ *կաղնոյն*» *(Տօնակ.)*. ուղղական բառիս կարծէ Հայկզ. *կաղին*, այլ ըստ իս է *կաղնի*: — «Բարձրածաղկ իբրեւ *զկաղնիս*» եւն (Սարգիս, *Մեկն. Յուդայ*, Բ, 819բ, տե՛ս): «Ջհում *կաղնին* բէ ծեծես եւ ի վերայ դնես, օգտէ բունաւորաց խածմանց եւ զայտումն եստցնէ. եւ բէ ի չար ախտից լինի այտոյցն եւ խառնես ընդ հին խոզտի եւ ի վերայ դնես, բժշկէ» (*Բժշ*. Ա., *Հայրուս*, 1273, երես 288):

Վարի եւ *իբր ածական*. «Սկսաւ *կաղնի* մահակաւ հարկանել զնա» (Վարդան, *Առակք*):

Յորմէ՝ *կաղնուտ*, գ., գղ. *չենէ*. «Սովոր են մարդիկք, որ կամենան ի մայրին զնալ եւ փայտ կտրել, ասեն, բէ "Ի *կաղնուտն* երթանք", բէպէտ որ այլ եւ այլ փայտս հատանեն՝ փիճի եւ սօսի եւ զեղատսն, որ է սօնոպարենին եւ *զրիփաքտայքն*, որ է վայրենի ծառոցն անունն» (*Լուծմունք Փիլոնի Լին*., Դ, ա, 240, ծան. 2):

Ածանցք. *կաղնածին* (Հայկզ.). *կաղնահասուն ծիրենի*, տե՛ս *Ջիրենի*. *կաղնահար* (Փիլոն), տե՛ս վերագոյն. *կաղնապտուղ* (Փիլոն), տե՛ս վերագոյն. *կաղնատունկ տունկ* (Փ. Բիւզ., Գ, ը, 18):

Կայ գղ. *բուվըը*, ազգ կաղնոյ, կարճարբուն քան զսովորականն: *Կաղնի*, գղ. *նուազեակէ* (խնդրելի). կայ եւ *ավըլինիէ*, *կուգըը*, *կուգըիէ*:

Գետնի կաղնի, որ եւ *Ջարտաւշ*, *Լերդախոտ*, *Կենարար*. բարգմանութիւն յունին *քամադրիւս*, գղ. *ժերմանդըէ*: Նոյն եւ արբ. *պէլլութ խլ-էրդ*, կաղնի գետնոյ. «*Լերդախոտ*, որ է *գետնի կաղնի*, հոռոմի *խամէտարիոս* կամ *քամատարիոս*, որ է հայերէն *կենարարն*» (*Բժշ*., Հայկզ. ի *Լերդախոտ*): *Գետնի կաղնի* (*Հայրուս*. 906, 1391): Կայ գղ. եւ *նուազեա ըը տեր*, որ է ունդ *արաչիդի*: Տե՛ս եւ *Առիւծախոտ*, *Կաղնծնի*, *Հովուի կիիր* ի Ստ. Շահրիմանեանէ, *Հայրուսակ*, բիւ 1276, գղ. *օրոբանչ*: Տե՛ս եւ *կաղնծի* = *օրոբանչ մաժոր յԱղրերաց արիւն*:

Լեռի կաղնի. լտ. *կուէրկուս կոկչիֆերա* ըստ Լինեէի. [[գղ.]] *չեն օ կերմես*, *Հայրուս*. 79, 1273. տե՛ս *կերմես* յիրն էլ-Բէյտար եւ յիմ *Գաղ. բոգ*.. տե՛ս եւ *Ղրմզ յՕտար*:

Կաղնու բուրդ (*Հայրուս*. 1274), *կաղնու ծառի բուրդ* (*Հայրուս*. 3254). տե՛ս *Օշնայ*:

Կաղնւոյ սունկն. տե՛ս ի *Սունկն*:

Կաղննանա, **կաղնչնայ**. Ամրտ., *Հայրուս*. 1277: «*Տիթիմալին*. կաղնչնան» (Գաղ. Ա). «*Տիթիմալին*. *կաղնշան*» (Գաղ. Բ). յն. *տիթիմալոս*, [[գղ.]] *տիթիմալ* կամ *էօֆորբ*, ի *տիթէ* բառէ, որ է "ստնտու": *Կաղանչանան* ազգ է գղ. *էպիւրժ*՝ *Քռիկան*, եւ այս բուի յիշատակեալն յնգնկայ. ոմն. *կաղշնա*, տե՛ս ի *Քռիկան*:

Կաղնուտ. բուի բառ գաւառի. գղ. *արետ-բէօֆ*. «Սէզ ատելի ասի արօրոյ, զի դժնդակ արմատովքն կռուեալ ընդ խոփն՝ արգելու զընթացս նորին, մանաւանդ որ *կաղնուտն* կոչի ի մշակաց» (Հ. Արս. Բագրատունի, ծան. ի Վիրգիլի *Մշակականս*, Բ, 190):

Կաղնչնայ = *ժախուկ*. տե՛ս *ժախուկ*. «Ծղերն [*սկղավ բուսոյ*]՝ նօսր եւ սփռին աստ եւ անդ որպէս *կաղնչնանի*» (*Բժշ*. Ա). տե՛ս ի *Սկղավ*:

Կանապ, գղ. *արէօն*, որ եւ *Նուիկ*. «*Կանապ*, *լֆա*, *ֆիլճուշ*» [տպ. *ֆիլճուղ*] (*Հայրուս*. 1279): «Նուին, Նուիկ (Շամքոր եւ յԱրցախ՝ *կանապ*), լտ. *արում*, տն. *եըլան եասթուղի*» եւ այլն, Շահրիմանեան, տե՛ս զամբողջն ի *Նուիկ*:

Կանկիրակ. տե՛ս եւ *Կակժիրակ* (եւ *կանկրակ*, *Հայրուս*., երես 290). «Ասացեալ է գրոց ժողովողն, բէ այսոր [*զուրտում* = գղ. *կարթամ*] հայերն *կանկիրակ* կ'ասեն եւ պարսկերէն *Հասաքտանայ* կու ասեն» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 173ա). այլազգ ի *Հայրուս*., բիւ 1262, ուր եւ ի բիւ 176 գրի *հանկիրակ* ("լաւ եւս *հակժիրակ*" ""), որպէս գրէ եւ յերես 352. տե՛ս *կնիկուս* = *կարթամ* ի Լըկլէր, Գ, բիւ 1761, ծան. եւ 1762, որով *կակժիրակն* Գաղիանոսի լինի *կարթամ*, այլ յաւելուն ՉՉ «որ է

խիարիշամբ»: *Մակժիրակ*, *Հայրուս.* թիւ 1262, բուն *Հ[[ակժիրակ]]*:

Կանրար. «*Կանրար*. բանջար, որ ունի տերեւս լայնս» (*Մանանայ*, 446):

Կայծխոտ. տե՛ս եւ *Վայրի մառոլ* = *Կաքուռ եղեգ*, տե՛ս եւ *Վայրի հազար*. «*Կայծխոտ*. է նոյն եղերդ խոտն, *լեղի մառոլ*, *նապանի մառոլ*» (Բ, 6): «*Կծմախոտ* կամ *կծմակօլօթ*. է խոտ ինչ, որ նման *կայծխոտի*» (Բ, 6):

Կայծուկ, գրի եւ **կայծու**. ռամկօրէն ***կէծուկ***. «Եւ զի ծաղիկքն եւ ծառատունկքն զարդարին, նա եւ փուշքն բուսանին, որպէս դժնիկն եւ տատասկն ... ժանտափուշն, տափափուշն, սրափուշն, որոմնն, *կայծուկն* [տպ. 335. 2], զաղձն վնասակար եւ որ ինչ նման է սոցա» (Ագաթ. 484). *կայծուն* եւ ի Զ Աբրահամ Երիցու, այլ ի Ճ. Գ. գրեալ է *կայծուկն*, ասէ Հայկզ. ի *Կայծու*. Նոյնպէս եւ *Հայրուսակն*, նախադրութիւն, երես Է, *կայծուկն*, ըստ Ջեռագրի գրելոյ յամին 1271: Պրս. «*ալփիուշ*. *կայծուկ* [եւ թարգմանի "եռանկիւնի"], թուրքերէն *տէմիր տիքէնի*» (Գէորգ): «Կածու փուշ. *կայծու*» (Հ. Մկ. Անան., *Բոց. յաշխարհաբառէ ի գրաբառն*): «*Կայծուկ* փուշ» (*Բժշ.*, *Հայրուսակ*, 1287 [տպ. 1286]): «*Կածուկ* փուշ. տատասկ» (Բ, 58): «Ականջ, որ չի լսէ: Ձկէծուկ ծաղիկ եւ հին պանիր ձէթով եփցո՛ եւ յականջ [Զ զականջ] դի՛ր Աստուծով» (*Անուանք դեղերոյ*, յօդուած զ, հանեալ ի Բժշկարանէ գրելոյ յամին 1786, յընդօրինակութենէ Տ. Սերոբէ Ալիշանի). այս է, որ յիշի ի *Հայրուսակ*, 1389: «*Կէծուկ* [գրած՝ *կեծուկ*]. բոյս բազմափուշ» (*Մանանայ*, 447): «*Կեծկի* ծաղիկ» (Սիմէոն Կամարկապցի, *Հայրուսակ*, 1286 [տպ. 1285]): «*Կայծու* փուշ. (գաւառական), լտ. *լէո կարդուուս ֆերոխ*, արբ. *շէվքէ պէրրի*. ցածագոյն տունկ է փշոտ, ոստքն՝ ծամածուռ, ծաղիկն՝ դեղին. ձեռօք չմարթի հատանել, այլ՝ դանակաւ, եւ արկանեն առաջի ուղտուց» (Տահմիր.):

Կանաչ թագաւորաց, (Զ *կանաչաց թագաւոր*). տե՛ս *Աստուածախոտ*. թարգմանութիւն արբ. *բակլաթ էլ-մալէք* եւ պրս. *շահքերէ* = "թագաւորի բանջար" (Լըկլէր, Ա., թիւ 330):

Կանեփ, -*ոյ* կամ *կանեփի*, Էմին՝ սեռական *կանեփոյ* (ի *Ֆիլեն*). գրի եւ **կանափ**, արբ. *գընեապ* (Գէորգ ի *Քէնէպ*), եւ *գընեպ* (Գէորգ ի *Շէն*), թուրքերէն *քէնտիր* (անդ). ի *կանեփ* բառէ են *կանեփուկ* յնգնիկ եւ *կանեփհատ* ի Մանդակունի. գղ. *շանվըը*, պրս. *քէնէպ*, *քէնէվ*, *քեաշնի*, *շէն* (Գէորգ). «Մուրացի ոմն *զկանափ* մեռաքս կարծեալ» (Գր. Մագ., ԺԶ): «Կայի մանելով *զկանափն* անդադար» (ՎՀ Ա. 303): *Կանեփ* (*Վստ.* ԻԶ 22 երիցս): «*Կանեփի* տերեւ» (*Հայրուս.* 509): «*զկանեփի* կանաչ ցախն» (*Վստ.*, ՃԵ, 79). տե՛ս անդ զգրութիւնն *զկամփի*: Յորմէ՝ *կանեփի*, ածական (Հայկզ.):

Հնդի կանեփ (*Հայրուս.* 304). *հնդի կանափ* = *պանկ* = *հաշիշ* (անդ, 1296. տե՛ս եւ ի Գէորգ *Քէնէպ*, Զ):

Կանեփհատ, աղաւաղանօք՝ *կանեփայտ*. ռմկ. *կանեփատ*, գղ. *չէնըվիս*. Յոհ. Մանդ., 210 (չիք ի Հայկզ.): «*Կանափատ*. կանեփի հատ կամ հունդ, զոր բովեն, ուտեն. եւ ի սանտի ծեծելով զխաշածն՝ կարն հանեն, գործ ածեն պահոց օր ի պէտս կերակրոյ» (*Մանանայ*, 446–447): *Կանեփայտ* (Բժշ. Ա., *Հայրուս.* 1296, երես 294):

Կանեփուկ, -*փկի*. բուն գղ. *ագնուս-կաստուս*. տե՛ս *Մասիս*, 6 յուլիս 1880, Ն. տ., յօդուած Խաչիկ Ուղուրիկեանի: «*Ագնուս-կաստուս* կամ *վիտեկս ագնուս կաստուս* ... է ծառ փոքրիկ, գեղեցիկ տեսլեամբ, հոտաւէտ եւ գորշակեղեւ. ունի եւ ոստս յոգնափիւս, նուրբս, կրկնածոյս եւ դժուարաբեկս: Տերեւք սորա կարգաւ բուսանին առ միմեամբք՝ հանգոյն տերեւոց *կանեփոյ* եւ են երկայն, ուղղորդ, սրածայր եւ աղուամազոտ» (Բէտէն, հ. Բ): Նոյն եւ *զոբեց ճանկ* ըստ *Հայրուս.* 509, լտ. *ագնուս կաստուս*, *վիտեկս*, գղ. *գատտիլիէ*. «Թ. *այիտ աղաճի* ասէ. եւ տերեւն է *կանեփի* տերեւին» եւն (Ամրտ.): Տե՛ս *փէնճէնկիւշթ* [=հինգ մատն] եւ *տիլաշուպ* [=սրտի վրդովիչ] ի Գէորգ:

Կանթեղխոտ, -*ոյ*, որ եւ *Հողմափայտ*. «*Կանթեղխոտն*, որ է *հողմափայտն*. *մամոլրան* կ՚ասեն. յիշած է ի վերայ մենին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 132ա). գղ. *քելիդուան*, *էկլեր*:

Կանկառ*, յգ. *կանկառունք*, *կանկարունք**. «Մորենիք եւ մոլաբուզք եւ մոլաձիթենիք եւ *կանկառունք* եւ քուռկք կարի յոյժ սաստիկք են եւ առանց մշակութեան արուեստի բուսանին: Իսկ միշտ այնր, որ անեցուցանէն, հազիւ հազ յամի պտուղ ծնանել» (Փիլ., *Յոբխն.*, Բ, 104): «Դժնիկ է

կամ փուշ մի, որ *կանկատ* ասեն» (*Լուծմունք Փիլոնի, Հայրուս.* 1301). Հայկզ. գրէ *կանկատունկ*, նոյնպէս եւ ի *Կառափուշ*. «*Կանկատունկք*՝ կառափուշն» (*Լուծմունք Փիլոնի*):

Կանկար, *-ոյ*, գրի եւս ***կանգառ, կանկառ***. բուի գղ. *կարդ* կամ *կարդոն*: Պրս. *քէնկէր, էնկիւպան* (Գէորգ): *Կանկար եւ գազպէն*. տե՛ս Գազպէն եւ կանկար: Ի *կանկար* բառէս է անշուշտ *Կանկառ լեառն* Զերունոյ (տե՛ս Տաշեան, *Ցուցակ* եւն, 341ա): «էր կերակուր նոցա *կանկար* լերինն. եւ կացեալ անդ ամիսս երիս: Իսկ սուրբն Սոմնաս եղեալ յաւուր միում ի պատճառս սպասաւորութեան եղբարցն ի լերինն, յետոյ ի հովտաձեւ տափարակն՝ ժողովել *ի կանկարոյն*: Եւ ահա հովիւ մի արածէր զհաւտն ի լերինն. եւ տեսեալ զսուրբն Սոմնաս՝ վաղվաղակի եկն առ նա եւ ասէ ցնա. "Ուստի" ես, ա՛յր դու": Եւ ասէ սուրբն. "Ծառայ Աստուածոյ եմ ես եւ եկեալ եմ տանել զրանջարս զայս ի պէտս եղբարց իմոց եւ քերց"» (*Վկ. սրբոյն Ստեփանոսի [Ուլնեցւոյ] եւ երեսուն երից ընկերաց նորա, Վարք եւ վկ. սրբոց*, հ. Բ, 326–327): *Կանկառ* (*Վստ.*, ՄՀ 174, ՄՀԱ 174): *Կանկար*. Հ. Պաւղոս Մեհերեան, Բ, 31–32 (օրինակիա՛):

«*Կանգառ*. ուտելու անուշ խոտ ինչ լեռնային» (Փիրղալէմեան): «*Կանգառ*. փշատերեւ բոյս դաշտային եւ լեռնային: Երկու կերպ է, իբր արու եւ էգ: Մէկ տեսակն բարմ՝ աղջուր կը դնեն, եղով տապակեն, թանապուրի մէջ արկանեն. իսկ միւս տեսակէն կարն հանեն եւ բանձրացունեն բլիթ բլիթ, կազմեն ծամոն: *Կանգառն* անորժանօք ուտեն անասունք: Իսկ զսերմն, որ նման է *ֆստըղի*, բովեն եւ ի տեղի սուրճի գործածեն» (*Մանանայ*, 447):

«*Կանկառ*. լայնարձակ, այլ փշալից տերեւովք նման *տէվէ թիքէնի* խոտոյն. զրուն սորա կեղեւեալ մարթ է ուտել առանց եփելոյ» (Ինճիճ., 40):

Կանկար եւ ծամոն. տե՛ս Գարեգին վ. Սրուանձտեանց, *Գրոց եւ բրոց*, 33–34:

Կանկարի խէժ. «Կանկարի խէժ ի Բժշկարանի մեկնի *կինապարին*» (Հայկզ. ի *Կանկար*): «*Կանկարի խէժն*, որ է *կինայ պարրին*. յիշած է ի վերայ դատին յիւր համարն Աստուծով» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 132ա): Տե՛ս *Ղինայ յՕտար*. տե՛ս *դինապարի* ի *Հայրուս.*, 1294: Պրս. «*Վէնիյզ*. Նշանակէ *կանկառ ծիւր, քէնկէր սագըզի*» (Գէորգ). տե՛ս զսխալ բառն *չէնկէլ սագըզը* յիմ Պօզան.: «*Հարչաֆ*. իր խէժն զպալզամի զինուրիւնն կու հալէ ... Ասէ Պատեհին, թէ ինքն *յուբուպն* է, եւ իր բնութեանն ի վերայ ազգի ազգի խօսք են ասցել է [այսպ.]. եւ պարսկերէն այսոր *քանկառ* կու ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 139):

Կանճրակ, *-ի*, գղ. *նավեա՞*. կայ պրս. *սէրշէֆ*, տե՛ս ի Գէորգ. «*Կանճրակ*. ուղղ, գոյն եւ չափ նորա նման *պէօհրիւճէի* փոքր մի երկայնաձեւ, մանրատերեւ եւ հերձեզրոտ եւ փշալից» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*): «*Կանճրակ*. հեղեղէն ինչ համեմիչ պահոց կերակրոց» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.): «*Կանճրակ*. փշաբոյս մշակեալ, որ ունի ծաղիկս նման *զաֆրանի* եւ հասկս կազմէ, որոյ հատիկներ նման են արեւածաղկի հատին, զորս խաշեն, ծեծեն, կաթ հանեն եւ պահոց կերակրոց ի պէտս գործածեն» (*Մանանայ*, 447): «*Կանճրակ*. *կոլզա*» (Ա. Գալֆա, *Բառագիրք հայ-գաղղիարէն*). տե՛ս եւ *Հայրուսակ*, երես 679, թիւ 1303: «*Կանճիրակ, կանճրակ*. սպիտակ ուղղ զայս ձեւ» (դնէ զձեւն, այլ եղծեալ է) (Հ. Սուք. Պարոնեան, *Բառք վանեցւոց*, թիւ 19):

Կանջոխ, *-ոյ*, ***կանչող, կանչո̄խ***, գղ. *ֆերիւլ՞*. տե՛ս վկ. ի *Իշկարնուկ*. «*Կանչուխ*. լինի դեղին եւ կանաչ, լաւն՝ դեղինն. ուտի եփեալ եւ անեփ. արմատն բղխէ հիւթ կաթնային, յորմէ գործեն ծիւթ կամ կիւ. բոյսն փշալից եւ բազմոստեան է, երկրզաչափ բարձր, զնտազլուխ» (Հ. Պաւղոս Մեհերեան. *Հայրուս.*, 1305):

Կանտող, որ եւ *Գլնտոր*. «*Կանտող*. արմատ ինչ ուտելի. *չաչալ* [*չալչալ*], *կանտող*» (Փիրղալէմ.). Ինճիճ. 39, Բ 31. տե՛ս *գանդոլ* ի Մարսել Դըվիկ:

Կանտորի, *-բւոյ*, տե՛ս *յԱւել*. Բ 14, 31:

Կապար, *-ոյ*, գղ. *կապրիէ*, պրս. *քէվէրզ, քէվէրզէ*. պտուղ *կապարոյ* եւն (Գէորգ): Ժող ԺԲ 5: «*Կապար*. կապրցախի պտուղը. *քէպէրէ*: *Կապար*. *կապպար*» (Հ. Մկ. Անան.): «Եւ ցրուեսցի *կապարն*, այս ինքն է՝ փշալից անաւրէնք, զի ի ժամանակի անդ յայնմիկ ցրուեսցին» (Կիւր. Երուս., *Կոչ. ընծ.*, ԺԵ, 321–322): «Տարածեսցի *կապարն*, որ են մեղաւորք փշալից, ժահահոտ. եւ զի խոտն *կապար* տարածանի ընդ երկիր եւ ոչ բարձրանայ, այսպէս եւ մեղաւորքն առ երկիրս մնան» (*Տաւնական*):

«Կապարն խոտ է դաշտի, որ ընդ երկիր տարածի» (Ոսկիփ., օրինակեա՛. Հայրուս. 1319): «Կապար, որ է հայերէն կապրցախն. լաւն այն է, որ ի լի լինի» ենն (Ամրտ. օրինակեա՛. Հայրուս. 1319. այս է, որ յիշի ի Հայկզ. ի Բժշկարանէ): «Կապար, որոյ պտուղ աղջուր դնեն, ուտեն» (Մանանայ, 447): Կապարի տակ. տե՛ս վկ. ի Կարմիրտակ եւ ի Հայրուս. 1462: «Կապարին տակին կեղեւն» (Հայրուս. 341, 131): «Քաւառ, քառ, այն է քէպէրէ, անհամար բուսանի ի կողմանս Տոռոբոյ» ենն (Իննին., 40): «Կապպար (աշխար-հարար կապրցախ). քառ, քաւառ» (Տահիրմ.): Կարմիր կապար. Մխ. Հեր., Լ, 85: Կապարոյ սերմն՝ ունդ. տե՛ս Անիսու յՕտար:

Կապարենի, գղ. կապրիէ, աղաւաղանօք կապրենի, քապրենի. կապրենոյ տակ (Բժշ. Ա, Հայրուս. 132). քապրենոյ տակի կեղեւ (Նուսխայք, ի շալակի Ջերմանց մխիթարութեան Մխիթարայ Հերացւոյ, 145):

Կապարխոտ. այս է ուղիղ ձեւն Քապրխոտ գրութեան, զոր տե՛ս:

Կապարցախ. այս է ուղիղն կապրցախ գրութեան. «Կապրցախ. քէպէրէի բուսը [այս ինքն՝ բոյսը]. կապարցախ, կապարի, կապարենի» (Հ. Մկ. Անան.) [[Կապար-ի տակ էր]]:

Կապնդեղ, -ոյ, գղ. լիվեշ [էմին]: «Կապնդեղ, որ է քաշիմն. յիշած է ի վերայ քէին» (Ամրտ., Անգ. անպ., Ալիշան, 132ա). «Քաշիմի ռումի. ինքն ի բարձր լերունքն կու բուսնի» եւ այլն, անդ, 234. ամենայնիւ յարմարի [[գղ.]] լիվեշի. Հայրուս. 118: «Անկիտան, որ է կապնդեղ» (Ձեռագիր Բժշկարան Ազգ. մատենադարանի Գալատայի): «Կապնդեղ. գ., որ եւ կոչի քեղոյ սերմն, քաշմ. խոտ եւ արմատ կծու, ախորժ, օգտակար ստամոքաց, իբր համազօր պղպեղի եւ մանանխոյ. էլ ճէտանի [պիտի էնճէ-տանի] ռումի, էքաճը, ըստ Մենենսքեայ որպէս լատիներէն լիգուստիկում, սիլեր մոնտանում կամ կունիլագո ենն, Բժշկրն.» (Հայկզ.):

Կապռաշ, -ի. [[գղ.]] բուս ըը կամպեշ յիշի ի Պէյտարայ (Լըկլէր, Ա, թիւ 259, երես 210). «Կապռաշ փայտ» (Բժշ. Բ 318). կապռաշ, Ա. 34, 43. Բ 6. «Կիլիկ. կապռաշ ծառէն կը հանեն թել եւ կը գործեն» (Խ 63):

Կապռաշենի, -նոյ. գրի աղաւաղանօք կապոշենի. «Լօքն ի՞նչ է: Կռէզ է. բուփ կայ կապռա-շենեաց չափ, ի Սասունք լինի, ուր զազպէն իջանէ» (Յոհ. Վանական, Հարցմունք. Հայրուս. 1320): «Հացին, կեչին եւ խածին, բալենիքն, կապռշենիքն» (Յղ. ծառոց):

Կապստայ, կապստան. Հայրուս. 1270, երես 287. գղ. ներպրճօն՞, կամպեշ՞. նոյն բուի եւ գղ. չու կարիւ. տե՛ս կարիւ ի Լիտրէ. լեհարէն կապուստա, հունգարերէն կապոշտա, յորմէ կապստայ ըստ հայոց Տրանսիլվանիոյ, որ է կաղամբ (Հանդէս ամս., 1898, փետրուար 46ա): «Կապստայ. տե՛ս [[բուրք.]] լաՀանա» (Հ. Մկ. Անան.): «Կօպուստուն. տն. լաՀանա» (Ա. 76). «Կոպռստուն. քափուստա, տն. լաՀանա» (Խ 60):

Կապրենի, տե՛ս Կապարենի:

Կապրցախ, աղաւաղանօք Քապրցախ. «Կապար. քապրցախ» (Բժշ. Ա. 144). «Քապրցախի տակի կեղեւ» (Բժշ. Ա. 47). «Կապար, որ է կապրցախն» ենն (Ամրտ., Հայրուս. 1319):

Կառ. Մխ. Գոշ, Առակք, ԼԴ, 40. «Ուտել զկառս եւ զարնենուկս» (Յով. վ., Ջեռն., Ռոշքեան, տե՛ս Արճնուկ): «Կառ. բանջար լայնարձակ տերեւովք, նման դդմենւոյ. զկանք տերեւոց սորա եփելով՝ ուտեն, իսկ զրունն, զոր կոչեն որձա, նաեւ զարմատս իսկ՝ առանց եփելոյ կեղեւելով» (Իննին., 40): «Կառ. է փուշ երկայն, որ եւ զծղօտն կեղեւեալ՝ ուտեն» (Ա. 34): «Կառ. փշոտ խոտն է, ծաղիկն է անուշ, մեղրահամ» (Ա. 76): «Կառ. ուղտփուշ, տն. տէվէ տիքէնի» (Տահիրմ.): «Կառ, կռնուկ. փուշ՝ բոյս երկարաձիգ, որոյ գլուխն փոքր ինչ նման է ճէնկինառի. ցօղունն ուտեն» (Մանանայ, 447): «Իշու կառ. էշէք տիքէնի», այսպէս նշանակեալ եմ յիմ Բառս գաւառի:

Կառափուշ. «Կանկառունկք՝ կառափուշն» (Լծ. Փիլ., Հայկզ.):

Կառն, -ռին. գրի եւ կառ, -ի, որոյ յգ. է կառք, զկառս. բուի գղ. չարդոն-Մարի, չարդոն ըը Նոտրը-Դամ. կայ եւ չարդոն էտուալէ, որ եւ չոստրապ. տե՛ս եւ Աստղփուշ. «Ականթա ըլիկէ. կառն» (Գաղ. Ա, Գ, Դ). յն. ականտա լեւկէ, գղ. չարդոն ա ֆէօյ բլանշ, երբեմն օրեպին՞. զայս ականթա ըեկէ Նոր հայկզ. ընբեռնու ի կառն ական Թաղիկէ եւ ասէ. «Իսկ ի բառս Գաղիան. կառն եւ բաղիք իբր նոյն

ղնին»: «*Հապալանդոս (Հապ սալանդոս*"*)*. պգրղատուն կամ *կառն* փշի ունղն» (Բժշ. Ա. 144): «Ով *զկառին* տակն առ իւրն պահէ, օձն չիարկանէ ... աչաց հում մեղրով դի՛ր, օգտէ» (Հին ձեռագիր, *Հայրուս*. երես 679, թիւ 1324): «Մատուկին մատանց նման երեք տակոի ի վայր լինի, եւ *կառին* պէս դի՛ր ի վեր, որ աղքատքն ուտեն. այսպէս էր կեանք մարգարէիցն» (Յով. Վանական", *Մեկն. Յոփբայ*, *Հայրուս*. 1996): «"Արա՛ զնոսա որպէս զանիւ" ... *շրջանակեա՛* զնոսա, ասէ, յինքեանս եւ ի չարիս իւրեանց: Ոմանք ասեն՝ անիւ կոչի փուշն, որ ի ծայրս *կառինն* ի չորանալն անկանի» (Վարդան, *Մեկն. Սղ*., տե՛ս [[Հայկզ.]] *Անիւ*): Փոխանակ *կառն*՝ *սպիտակ փուշ* դնի ի *Մեկն. սաղմոսաց* Դանիէլ վարդապետի. տե՛ս *Հայրուս*, 87. եւ *սպիտակ փուշն* է յն. *ականտա լեւկէ*, որ է *պատավարդ*. տե՛ս անդ 313. եւ *պատավարդ* է գղ. «*կառ*. փուշ ինչ» (Փիրղալէմ.): «*Կառն*, որ է փուշ» (Երգն., *Քեր*., Հայկզ.), յորմէ *կառնուտ*, տեղի, ուր յաճախէ *կառնն* (*Վստ*. ՄՀԲ, 175). *կառնուտի արտ* (Արձանագիր ՆՁ = 1031 ամի ի Շիրակ (Ալիշան, *Շիրակ*, 60):

Կառնուկ, ռամկօրէն **Կռնուկ**. «*Կառ*, *կռնուկ*. փուշ՝ բոյս երկարաձիգ, որոյ գլուխն փոքր ինչ նման է *նէնկինառի*. ցօղունն ուտեն» (*Մանանայ*, 447):

Կասի, **կասիա**, որ եւ *Դարիճենիկ*, գղ. *կանելլ*:

Կասիմոն, Խոր., *Աշխարհ*.. կայ յն. *կասամոն*, [[գղ.]] *սիկլամ* կամ *պեն դը պուրսո*. ծագումն բառիս է անյայտ:

Կաւլայ, -*ի*, **կաւլայի**, -*յւոյ*, որ եւ *Դափնի*. «*Դաշմուզտա*. *կաւլայի* պտուղ» (Բժշ. Ա., 143): «*Սաւէճ Հնդի*. ի Հնդկաց գայ, զէդ *կաւլայի* տերեւ է» (Բժշ. Ա., 145): «Ապա ածէ՛ զմարմինն խիրի ձիթով եւ մարձէ՛ աղէկ կամ ածէ՛ *կաւլի* ձիթով կամ բաբունճի ձիթով» (Մխ. Հեր., Զ, 10): *Կաւլայ* (*Վստ*. ԴՁ 74, ՃԾԱ 105, ՄՀԸ 180): *Կաւլայի* (*Վստ*. ՄԻԸ 143): «Ճառագայթ արեգական յորժամ ի վերայ *կաւլային* անկանի, անուշահոտ բուրէ ի նմանէ, եւ է, յորժամ ի վերայ խամրու կամ այլ վատթար իրաց անկանի, դաժան հոտ ելանէ, վատառողջ գործէ զօդսն» (*Լծ. Փիլոնի Լին*., Դ, ա, 239, ծան. 3): «Ի մրտենոյ, ի ձիթենոյ, *ի կաւլայէ*» (Մարքին):

Կաւլապտուղ. *կաւլապտուղ ձիթենի*. տե՛ս ի *Ձիթենի*:

Կակ. «Բայց յորժամ կարի տկարացաւ մարմինն [Եւագրի] ի խիստ վարուցն, սակաւ մի *կակ* ընդ արմաւաջուր խառնեալ վասն կարի ցաւոյ ստամոքսին՝ զայն էառ ջեռուցեալ հրով. այլ ի հաց եւ ի գինի եւ ոչ ի կարի կարէ պէտս հիւանդութեանն մերձեցաւ, բայց միայն ճաշակէր սուղ ինչ բանջար եւ ունդս եւ *կակաջուր* մինչեւ ի վախճանն» (*Վարք Եւագրի Պոնտացւոյ*, ՎՀ Ա. 322. "Եւագր. ա. 4." դնէ Հայկզ.): «*Կակ*, որ է գարի կամ գարեջուր» (*Լծ. Եւագրի*, Հայկզ.): «*Կակն* պտուղ ինչ է բժշկական անունն [Թերեւս՝ "ինչ է, բժշկական անունն"] կատանայ» (*Լծ. Եւագրի*", Հայկզ., Տաշեան, *Ցուցակ* եւն, 697ա): «Լինի [ի Կիլիկիա] ... ձմերուկ, շամամ գեղեցկախայտ եւ կօթայ, սերկեւիլ եւ յունապ եւ *կակ*» (Թովմա վդտ. Կիլիկեցի", *Ոսկիփ*. Դ 47): *Կակ* (պտուղ), յորմէ եւ *կակենի*, իցէ" նոյն ընդ *Կոզակ*: Պրս. «*քէշքեապ*, *թերխանէ* եւ գարեջուր» (Գէորգ): Յն. *պտիսանէ*: Արբ. *քէշէք* = *թէրխանէ*, տե՛ս ի Գէորգ: Էմին *կակ* դնէ [[գղ.]] *գշատենյը* եւ *զօրժ մոնդէ*: Յորմէ՝ *կակաջուր* (*Վարք Եւագրի Պոն-տացւոյ*, ՎՀ Ա. 322), ուր յոյնն Պաղլադիոսի եւ լտ. թրգմ. ունին *պտիզանա*:

Կակենի, -*նւոյ*:

Կատաղենի, **կատաղի**. տե՛ս *Թզենի կատաղենի*, *Կատաղի թզենի* ի բառն **Թզենի**:

Կատաղին, տե՛ս ի *Նշօշ. կատղէն*, տե՛ս *յԱղմարիրոն*, թիւ 21: *Կատղենի*, տե՛ս ի *Հայրուսակ*, թիւ 1340:

Կատաւան, գղ. *օրիգան*". «*Որիքանոն*. *կատաւան*» (Գաղ. Բ). «*Որիգանոն*. զուխակ» (Գաղ. Բ). «*Որիգանոն*. զուիրակ» (Գաղ. Ա, Դ):

Կատու. «*Կատուեղիշ*". անպիտան խոտ մի կոչուի ի կողմանս Սեբաստիոյ, բայց անունն ստուգելի» (*Հայրուս*. 1349): *Կատուի լլիչ*. «*Կատուի լլիչ*. վայրի սիսեռ» (Բ 58): *Կատուի լիլիկ*". տե՛ս եւ *Հաւլիլիկ*: *Կատուի կող*. խոտ է բժշկական (Խոտրջ.): *Կատուի կօշիկ* (այսպէս եւ *Ծիծռան կօշիկ*) (*Հայրուս*. 1353): *Կատուի ճանկ* (*Հայրուս*. 1353):

Կատուազանգակ. վայրի ծաղիկ յԵրեւան (Արանասեանց, 66):

Կատուախաղող. *Հայբուս*. 778, 1344, 2499:

Կատուակ. *Բժշ*. Ա. 303. տե՛ս զվկ. *յԱրբղուկ*:

Կատուականջ. «*Աղան ալ-փար. կատվականճ*» *(Թրգմ. դեղոց)*. այլ *ադան ալ-փար* է *Մկնականջ*. անելի էր «*Աղան ալ-դըթ. կատուականջ*». տե՛ս *Հայբուս*. 1346:

Կարապետ. *Սուրբ Կարապետի ծաղիկ*. տե՛ս յ*Անթառամ*: *Սուրբ Կարապետի ձիւք*˝ *(մաղտաքէ)*, Մխ., *Դտ*. 326, ծան. 696:

Կարաւս (կարօս). յորմէ եւ *Քեղակարաւս*. գղ. *սեւըրի*. արբ. *քարաֆս* կոչի *սեւըրի* յԻպն ալ-Ավամ՝ թարգմանեալ ի Կլեման Միւլլէ, հ. Բ, Մասն Ա, երես 295. թուրք. *քէրէվիզ*. «*Կարօս. քըէվս*» (Բժշ. Ա. 144). «*Նիախուր. կարօս*» *(Թրգմ. դեղոց)*. *Նիախուր* կամ *լախուր* է գղ. *աչ*. Մխ. Հեր., 14, 34: «Տո՛ւր զդեղերն, որ զզօղն յորդորեն, զերդ զեփած *կարօսն* (որ է *քըէվսն*, Բժշ. Ա., 204) եւ հալիլէ եւ աւշինդր» (Մխ. Հեր., ԼԶ, 108): *Կարոս*, *Հայբուս*. 927, 1373: «*Կարոս. մայտանօզ*» (Փիրղալէմ.): *Հոռոմցի կարօս (Հայբուս*. 1375). տե՛ս եւ *Առուակարոս*: *Վայրի կարաւս*, գղ. *սեսելի*. «*Սասալիօս*. վայրի *կարոսի* հունտ է ... ի հով լերունքն լինի. բազուկն՝ հաստ, մէջն՝ բարակ, տերեւնին՝ լայն» (Ամրտ., *Անգ. անպ*., *Հայբուս*. 1376): «*Սասալիօս*. վայրի *քըէվսի* հունտ» (Բժշ. Ա. 145):

Կարդին. այսպէս ըստ Զ ի Խոր, *Աշխարհ*., իսկ տպ. *Ճարդիս* (Հայկզ. ի *Կարդին*):

Կարկար, կարկարիոն, արբ. *կօրկեր*, [[գղ.] *պինյոն*. Լկլէր, Գ, թիւ 1018 *դաւմիզուրէչ*, պրս. *կուրկու*. պրս. *կէրէկման* "սեւե եւ առաւոյտ", *խէնաէզուգ* (Գէորգ): «Բզուրն հանդակօկի կարկարիոն ասի» *(Թրգմ. դեղոց)*. արբ. *պէզր* "սերմն, ունդ" (Պօզան.). տե՛ս եւ *Հայբուս*. 1362: *Կարկարիոն* = *կակարիոն* ՛, յն. *ալիկակաբոն* "*լոտոսի* պտուղը" *(Հանտատագա)*: «*Քամեղոն. կարկար*» (Գաղ. Ա.), արբ. *կաամ կօրէիշ* (Լըկլէր, Գ, 1806):

Կարմիրկապ, չիք ի *Հայբուս*. «*Կարմիրկապ*. տեսակ խաղողոյ, որոյ չաչքն կարմրագոյն են» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց)*:

Կարմիրտակ, չիք ի *Հայբուս*., տե՛ս եւ *Շիկատակ*. արբ. *կարմիր տակ*, *օրուկ հոմը*, է, [[գղ.]] *գարանս* (Լըլկէր, Բ, թիւ 1530): «*Հալիմուս. հումազի ճապային*, որ է *կարմիրտակն*» (Բժշ. Գ 164). կայ *հալումա* եւ *հոմեյրա* = *անքուզա* (Լըկլէր, Բ, թիւ 1344): «*Կարմիր տակերն*» *(Անանուն Ըուսխայք*, Մխ. Հեր., 146): «Ասէ Դէոսկրիտոս, թէ իր *[Հայֆարիղոնին]* փոխանն *իթխիրն* է եւ *կարմիրտակն* է, եւ կէս ի չօրքն կապարին տակն է» (Ամրտ., *Անգ. անպ*., *Հայֆարիղոն*, Ալիշան, 152). տե՛ս զայս ի Լըկլէր, Գ, թիւ 2265, երես 402, ուր կան *իթխիր* եւ *կապար*, այլ՝ ոչ *կարմիրտակ*:

Կարմրաբանջար. *կլմրօզ*, *ճակնդեղ* *(Մանանայ*, 447): Տե՛ս Լըկլէր, Ա թիւ 698, Բ թիւ 1208: «*Սիլխ ճապըի (ճապալի)* եւ *սիլխ պարրի* = վայրի բազուկ. իր տակին *Հալիմու* (սխալ է յն. *ալիմոս)* ասեն եւ պրս. *ագատտարու* եւ *Հալմօթ*» (Ամրտ., *Հայբուս*. թիւ 276, 2478). *ագատտարու* = աւելուկ (Գէորգ):

Կամրաղեղձ. տե՛ս ի *Դեղձ*:

Կարմրախնձոր. տե՛ս ի *Խնձոր*:

Կարմրահատ. նոյն եւ *Կարմրուկ ցորեան*. ըստ *մշեցւոց*՝ *Դարնցան* (Ինճին., 36): *Կարմրահատ ցորեան, սպիտակահատ ցորեան* (Աբանասեանց, 30):

Կարմրավարդ. տե՛ս ի *Վարդ*:

Կարմրատանձ. տե՛ս ի *Տանձ*:

Կարմրուկ. «*Կարմրուկ*. պտուղ ցրդւոյ» (Բ 57):

Կարմրուկ ցորեան. տե՛ս ի *Ցորեան*:

Կաւդայ, -*ի*. ստտ գրեա՛ զ*Կօդայ*:

Կափուր. այս է լաւագոյն գրութիւնն, եւ ոչ *Քափուր*. Խոր., *Աշխարհ*., *Հայբուս*. 1378. յն. *կափուրա*. «Տայ զհովութիւն *քափուրի*, որ ի Հնդիկս ի մէջ խաղողենւոյ հանեն» *(Ոսկիփոր*., Նոր Հայկզ. ի *խաղողենի)*:

Կաքաւ. *կաքաւու եղէգ*, որ եւ ռամկօրէն *Կաքուու եղէգ*, *Կաքուեղէգ*. տե՛ս յ*Եղէգ*. *կաքուու տոտիկ* (Ա. 34). բուի նոյն ընդ *Կաքոտ*. նոյն եւ *ԿաքաւոտՆիկ* [գրածն՝ *կաքաւատնիկ]* (Աբանասեանց 84, 89):

Կաքաւախաղող. «*Կաքաւախաղող*. ծառ ինչ յԱրագած, բարձր՝ երկու կանգնաչափ, որոյ տերեւքն՝

սղոցանման. առ մէն մի տերեւ ունի պտուղ ինչ նման եղակի, ուտեն եւ քաղցրեղէն կազմեն» (*Մանանայ*, 447):

Կաֆուարատ, այսպէս եւ *Աղաւնարատ, Ճշնարատ*. «*Կաֆվարօտ*, որ է *կենդանարար*» (Բժշ. Ա 284). բուի արբ. *քաֆֆուր՝ քաթայի* = կաֆաւի որոնած բոյս, (Լըկլէր, Գ, թիւ 1815), նոյնպէս եւ *նեֆել* [[գղ.]] *լիւզերն* (թիւ 2231). «*Կաֆուարօտ*. ֆարձանձ» (Ասար): Կայ յն. *պերդիկաս* (ի *պերդիկս* = կաֆաւ բառէ), [[գղ.]] *պարիետեր*, որ եւ *պերդիկոն*. կայ բուրֆ *քէքլիկ օթու*, զոպայ, ծորոր ըստ Պօզան.:

Կաֆոտ, կաֆաւուոտն*, կաֆաւոտն*. «Կաֆվու տոտիկ. *կաֆոտ*, զորոյ զարմատն հանեն եւ ուտեն» (Ա 34): «*Կագուոյտ, կագուուտ*. է խոտ ինչ, զոր իբրեւ զհամեմ արկանեն ի մէջ բանի» (Բ 7):

Կեղի.

Կեմ, *-ոյ, -ով*, գղ. *սպարտ*°. Փ. Բիւզ.. տե՛ս վկ. ի *Կոծոծ*:

Կենարար, կենդանարար. «Լերդախոտ, որ է գետնի կաղնի. հոռոմի *խամէտարիոս*, որ է հայերէն *կենարարն*» (Բժշ., Հայկզ. *Լերդախոտ*). «Կաֆվարօտ, որ է *կենդանարար*» (Բժշ. Ա 284):

Կեչի. Աբանասեանց, 23 (յիշէ եւեր). տե՛ս եւ *կեչի* աստէն ի բառն *Բոխի*. նոյն բուի եւ *Ջեֆի (=Քեչի °)*. *Հայբուս*. թիւ 2461. բուի *բխտենի*, [[գղ.]] *բուլս* ծառն, յն. *սեմիւդա*. կայ արբ. *ղէզա*, պրս. *թախ, թաղ*՝ ծառ ինչ անպտուղ, զոր առնեն փայտ վառելի (Գէորգ). «*Ղորկա*. *կեչի*» (Գաղ.). «Անձնին, դղբին, մանին, հացին, *կեչին* եւ խածին» (*Յղ. ծառոց*). «*Ջարխի* փայտ. եւ կ՚ասեն, թէ *կեչին* է» (*Բժիշկր.*, Զ Պարիզի Ազգային մատենադարանին, 104ա). Բ 29, 74, 80: «*Կիչի* (վայրի կեռասի)» (Բարխուդարեանց, 54): Լտ. *բետուլա*, ըստ Կարապետի Քօշարեանց, *Տանու բժիշկ*, 130, որ է գղ. *բուլո*. ստոյգ *բուլո* բուի. տե՛ս *Հայբուս*., թիւ 1388: Յորմէ՝ *Կեչուտ*, անուն տեղւոյ. Ստեփ. Ուռպ., 373, եւ բնակիչքն՝ *կեչուտեցիք*:

Կեռաս, *-ի*, ռամկօրէն *Գիլաս*. տե՛ս *կեռաս* եւ ի *Բալ*. գղ. *սըրիզ*. տե՛ս եւ *սըրիզ*, ստուգաբանութիւն ի Լիտրէ. *կեռաս* յանուանէ *Կեռասուս*, գղ. *Կեռազոնտ* քաղաքի Պոնտացւոց. Լուկուլլոս եմոյծ զկեռասենի յԻտալիա (Ամմ. Մարկ., ԻԲ, ը, 173բ). Առաքել Թաւրիժեցի, գլ. ԽԶ երկիցս, տպ. էջմ. 188°. *Վստ.*, 156 երկիցս: Կան գղ. եւ *բիգարրո, գոբէ, գրիոտ*: Իմ *Հատընտիր տաղարան*, երես 846: *Կեռասի* կուտ (*Հայբուս*. 1170): *Գիլաս* տե՛ս ի *Կոզակ* եւ *գիլազի ծառ*, *Մանանայ*, 298: *Կիլաս*. *Յաւելուած Հատընտիր տաղարանիս*, երես 529: *Կեռասի ծառ*, որպէս եւ *Ծառ արմաւոյ*. «Ի կեղեւոյ կեռասի ծառոյ» (Մարբին, Հայկզ. ի *Կեռաս*). նման թուրքերէնին *քիրազ աղաճը*. տե՛ս եւ *Եղջիւրի ծառ* փոխ. *Եղջիւրենի*:

Կեռասենի, որ եւ *Կեռասի ծառ*, գղ. *սըրիզիէ*, «ռմկ. *կռեսի, կռսենի*» (Նոր հայկզ. ի *Կեռասենի*): *Կեռասենի*, այլ Զ *կռենոնի* (*Վստ.*, ԾԴ, 44. ՀԱ (յոր հանեն զորբս), 59. Մբ, 130. ՄԻԸ, 143, ՄԽԵ, 156]: *Սեաւ կեռասենի* (*Վստ.*, ՄԽԵ, 156):

Կեռք, սեւ ծամոն (Փիրղալէմ.). «ծամոն, ծամելիք, *սագըզ*» (Նոյն, անդ). իցէ° *Կրդու ծիւր*:

Կեռոտնի. տե՛ս *Կռատուկ*:

Կերտ. Բ, 32. կայ արբ. *քիրտ* = *պրաս* (Լըկլէր, Գ, 1760). «Կայ եւ մի տեսակ խոտ, նարնջտուկի նման, որ աւելի Վանայ գիւղացիներուն ծանօթ է, *կերդ* կ՚ըսեն. ասկէց կաթ կը հանեն, բարձրացնեն, *եախու* կը շինեն, մարմնոյ ո՛ր տեղ որ ֆամին բանած լինի, կը փակցնեն վրան. այնքան կը պրկի, մնայ, մինչեւ ֆամին ծծէ, հանէ, ապա կը փրթի» (Գարեգին վ. Սրուանձտեանց, *Գրոց ու բրոց*, երես 34):

Կէծուկ. տե՛ս *կայծուկ* ի *Կայծու*:

Կէսիկ. «*Կէսիկ*. տեսակ ինչ լաւ սալոր» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.). իցէ° ի *գայսը* բառէն:

Կըլըմբոզ [տե՛ս Կլմբոզ]:

Կիլկիլ. տե՛ս *Գլկիլ*:

Կինամոմոն, *-ի, կինամոն, -ի*, գղ. *սիննամ, սիննամոն*. Երեմ Զ 20. տե՛ս եւ ի *Դարինենիկ*. «Լինի (կասիա) յԵթովբիա եւ յԱրաբիա, ի դաշտին Կինենամայ. վասն որոյ եւ *կինամոմոն* ասի» (*Հայկզ*. ի *Կասիա*). Կելսիոս, հ. Բ, 350: *Կինամոմոն*. Գր. Նարեկ., *Մեկն*. *Երգ*. 310. տե՛ս եւ Ինճին., *Ստրգր*. 147, *Հնախ*. Ա 175:

Կինամոն, *Պտմ. վարուցն Ադամայ եւ Եւայի*, Ն. Մառ, *Ամառն. ուղ.*, 29:

Կինճ, տե՛ս եւ *Գնձմնձուկ*. «*Կինճ*. մշակեալ բոյս, որոյ տերեւ նման *մաղաանոզի*» (*Մանանայ*, 447):

«*Գինձ*. անուշ բանջարեղէն ինչ, համեմիչ բանի» (Փիրղալէմ.):

Կիպարիս, որ եւ *Նոճ*. կիւպարիս, կիւպեռիս, *-ի*, *-աց* եւ ռմկ. կիպարի, *կիպարւոյ* կամ ռմկ. *կիպարու*. յն. *կիւպարիսսոս*, [[գղ.]] *սիպրէ*. «ի կիպարիս փայտէ» (Վրբ. Քերթ., 327): Ըստ յունաց՝ փայտ խաչին էր յերից փայտից՝ ի մայրէ *(սեդր)*, ի շոճւոյ *(պեն)* եւ ի նոճւոյ *(սիպրէ)*. տե՛ս Կիպարիս յիմ Հայկգ.. *կիպարիս* (փայտ խաչին) (Դաւ. Անյ., *Բարձր.*, 105). *կիպարիս* (Մ. Խոր., *Թուղթ առ Սահակ Արծրունի*, 290). Միսայէլ, *Ի խաչն* (Հայկգ.). *կիպարիս* (Ղեւոնդ, *Պտմ.*, 90). *կիպարիս* (Եփր., Դ, 209):

Կիպարի. «Ի խընկարեր բլըրին վերայ Զոր *կիպարի* ծառ մի տեսայ, Ոսկի խընձոր մի կայ ի նայ, Ով չիաւատայ, ինքն է Յուդայ» (Ն. Շնորհ., *Հանելուկք*, *Քրիստոս ի խաչի*, տպ. "ի խաչն"): «Ոչ խոնարհի *կիպարի* յերկիր» (Կլիմաք., Հայկգ.): «Մայրն եւ *կիպարին* եւ ձիթենին» (Սարգիս, *Բ Պետր.*, Ա, Հայկգ.): «*Կիպարի ծառ*» (*Վստ.* Ի 19), «*Կիպարի ծառի* պտուղ» (ՅԻ 218), «*Կիպարւոյ* պտուղ» (ՃԿ 108, ՃՀՁ 114, ՃՂԹ 124). *կիպարի* (ՄԻԸ 143): «*Կիպարի ծառ*» (*Հայրուս.* 692): «*Կիպարու տակ*» (*Հայրուս.* 950, երես 224): *Վայրի կիպարի*. «*Վայրի կիպարու* պտուղ» (*Հայրուս.* 753):

Կիպրոս, *-ի*, *-իւ*. գրեա՛ եւ *Նոճ*. յն. *կիւպրոս*, [[գղ.]] *սիպրուս* կամ *Հէննէ*, *սիպրիւսի* իւղ, իսկ ի *կիւպրինոս* գրէ Ալեքս. *տրոէնի*. յերգ երգոց, Դ, 13, Ոսկան թարգմանէ զ*կիպրոս տրոէն*. տե՛ս եւ *Նոճ*: Տե՛ս *Հիննայ* ի *Հայրուս.* 1689: Յերգ երգոց Ա 14, Դ 13 երրայեցին ունի *քոփեր*, լտ. *սիպրուս* (Կելսիոս, հ. Ա., 222), որ ասէ *ալ-Հիննա* արաբաց . 223–225 յիշէ եւ զգղ. *տրոյին*, *տրոյեն*, որ է *տրոէն*: Էմին *կիպրոս* դնէ սխալմամբ *զաւշէ*, որ է յն. *կիւպէիրոն*, [[գղ.]] *սուշէ*:

Կիտրոն, *-ի*. Ազար., Պիսիդէս:

Կիւ, որ եւ *Մազտաքէ*. *Փինոյ խէժ*°. յորմէ՝ *Տկնակիւ*. աստի *Կուենի*. «*Ըռաքինէինէ*, որ է *կիւն*, որ է *տկնակիւն*» (Բժշ. Դ 156):

[[**Կիւպարիս, կիւպեռիս**, տե՛ս **Կիպարիս**:]]

Կլաք. չիք ի *Հայրուսակն*. ազգ ինչ ձմեռնային ազնիւ խնձորոյ ի Վան. «*Կլաք խնձոր*. ի մէջ ամենայն ձմեռնային մրգացն մի միայն պատուականագոյն համարեալ է սա, զորս մի մի ճաղեալ ի ծառոյն՝ այլեւայլ հնարիւք պահեն, որ դիմանայ զրագում ժամանակս. եւ զանուն սորին բնակիչքն *կլաք խնձոր* կոչեն» (Խրիմեան, *Նուիրակ Արարատեան*): «*Կլաք*. տեսակ ինչ ձմեռային լաւ խնձոր» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Կլմրոզ, գղ. *բետտըրավ*. «Ճակնդեղ, զոր ի Մուշ կոչեն նաեւ *կըլըմպոզ*, որ է *Տակ*. ըստ տաճկաց՝ *բանճար*» (Ինճիճ., 40): «Ճակնդեղ. ի Մուշ՝ *կլմպոզ*, այլուր՝ *տակ*» (Ճահրիմ.): «*Կլմպոզ*. ճակնդեղ, բանջար» [= *փանճար*] (Փիրղալէմ.): «Կարմրաբանջար, *կլմրօզ*, ճակնդեղ» (*Մանանայ*, 447): Այլ լուայ ի Տ. Սերոբէ Ալիշանէ եւ յայլմէ ումեքէ, որ տեղեակ էր վանեցւոց լեզուին, եթէ *կլմպոզ* է կաղամբ: Եթէ ստոյգ իցէ այս, ապա *կլմպոզ* է աղաւաղութիւն *կաղամբոս* բառի. «*Ղաննապիտ*, որ է ինքն ի *կաղամբոսին* ցեղերուն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 167ա):

Կլոր. ռամկօրէն անուն սեխոյ. տե՛ս *Սեխ* ի *Սեխենի*. «*Կլօր*. սեխ, *գավուն*» (Փիրղալէմ.): Տե՛ս *Դեղին կլոր* յիմ *Ստորին հայերէն* ի բառն *Խարրզակ*:

Կլուլ °. տե՛ս *Գլուլ*. պրս. «*Կիւլուլ*, 2. տե՛ս *Կիւլուք*». «*Կիւլուք*. ոլոռն, պուռչազ, զոր առնեն կեր եզանց եւ ուղտուց. որ եւ ասի *կիւլուլ*» (Գէորգ): «*Կլուլ*. տճ. *պիգէլիա*, *քիւլիւլ*» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 34). տե՛ս բուրք *քիւլիւր* ի *Հայրուս.* 881:

Կծմակոր, *-ոյ*, այսպէս եւ *գինեյկոր*, *խնդակոր*, *ողորմակոր*. արբ. *ալ-բոջ*, տե՛ս Լըկլէր, Ա, թիւ 135. «*Ալփոճ* եւ *ոլփալ*. *կծմակոր*» (Գաղ. Ա.). «*Ալփոճ* եւ *ոլբալ* կամ *կծմակոր*» (Գաղ. Գ). «*Ալփոճ* եւ *ոլփալ*. *կճանկոր*» (Գաղ. Դ): «*Ալպուճ*. ինքն խոտի մի տակն է, որ ի Հնդկաց կու գայ եւ ինքն ի *պուզէտան* կու նմանի եւ սպիտակ կու լինի եւ ի վերայ սեւուկ կէտկներ կու լինի, եւ համն լեղեհամ է. եւ ինքն խիստ փորձած է այն ցաւոյն, որ *չարայ* ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 17, *Հայրուս.* 27): *Հայրուսակն*, 1417, նոյնացնէ զ*կծմախոտ*, *կծմակոր*, *կծմակոլոր*, *կծմակոլոտ*. առանձինն գրէ, 1429, *կճանկոր*:

Կծմախոտ, կծմակոլոտ, կծմակօլօք. տե՛ս *Ծմախոտ*, *Հայրուս.* 1209. «*Կծմակոլոտ* կամ *Լակոտ*. բոյս է կծուահամ, ուտելի» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 34). «*Կծմախոտ* կամ *կծմակօլօք*. է խոտ

ինչ, որ նմանի կայծխոտի» (Բ 6):

Կծմաև. «*Կծմաև*. ի Խոտուչուր ծանուցուած է» (*Հայրուս*. 1418):

Կծմնծուկ. համն կծու է. տե՛ս եւ *Գնծմնծուկ, Կցմցուկ. կնծմնծուկ* (Աբանասեանց 75, գրեա՛). «*Կնծմնծուկ* (գաւառական), լտ. *բարբարէա*, [գղ. *բարբարէ*], տն. *խասթէրէ, ճէրաք օթու*, տեսակ ջրկի» (Ծահրիմ.): «*Կծմնծուկ. բարբարէ*» (Ա. Գալֆա, *Բառագիրք հայ-գաղղիարէն*). [[գղ.]] գետնի *կրեսոն*, վաղահաս *բարբարէ* (Լիտրէ): «*Կծմնծուկ*. տե՛ս *Կցմցուկ*» (*Հայրուս*. երես 317): «*Բծմնծուկ*. տն. *ֆրէնկ մաղտանօսու*, իտ. *պետրոսելլո, պետրոսեմելո*» (Ա. 39). *ֆրէնկ մաղտանօսու* = *սերֆէօյ*. տե՛ս ի *Խարսախոտ*:

Կծօխուր. տե՛ս *Կոծախուր, Կոծոխուր*. «Կեան խոտ, տն. *ըսըրկան օրու*» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313):

Կղեմ, ոզոր, չուան ոլորեալ» (*Բառք բաղիշեցւոց*, հաւաք. Հ. Սուք. Պարոն., թիւ 9):

Կղմուխ, *-մխոյ*, գղ. *օնէ*, արբ. *գայմուխ* (Րետտէն ի *Հէլէնիում*, h. Բ, 229): «*Ռասէն. կղմուխ*» (Բժշ. Ա. 145): «*Անտուզ*, որ է *ըռասանն*, որ է *ճանաճն*, որ է հայրէն *կղմուխն*. ինքն յիշած է ի վերայ ռային կամօքն Աստուծոյ» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 32). «*Զանճապիլ շամի*, որ է *ըռասանն*, որ է *անտուղն*, որ է հայ բառով *կղմուխն*. յիշած է յիր համարն» (անդ, 75): Թուրք «*զանատ*, 3, *կղմուխ*, խոտ» (Պօզան.). Նոյնպէս եւ «արբ. *ճէնահ*, բեւ, եւս *ինտազ օթու, կղմուխ*» (Պօզան.) եւ Էրկլէր, Բ, թիւ 1017, *ջենահ*: Թուրք. «*Ինտուզ օթու, կղմուխ*, խոտ» (Պօզան.): Պրս. *րասէն* (Գէորգ), ուր այլ ինչ բուի: «*Հռոմցի կղմուխ*» (*Հայրուս*. 1426):

Կմշտրուկ. «*Կմշտրուկ*. անուն խոտոյ, *օղուլ օթու*, որ է ըստ Մենինսքեայ՝ *մերկուրիալիս*, իտ. *մերկուրիալէ, մերկորելլո*, որ յոմանց կոչի *եապան ֆէսլիյէնի*» (Հայկզ., ԳւոկՆ.): «*Եապան ֆէսլիյէնի. կմշտրուկ*, սուտ ռահան» (Պօզան. ի *Ֆէսլիյէն*):

Կմոքուկ. *Հայրուս*. 1434:

Կնդրուկ, *-րկի, -աւ*, գղ. *սասս զուլսիս՞, բենժուէն՞* (Էմին՝ *օլիբան*). *կնդրկաւ*, Նար. ԴԳ 247:

Կնիւն, *-ոյ, -ով*, որ եւ *Ճիլ, Ճղեմն*, գղ. *ժոն*. Յովբ Ը 11, Խ 16: «Հեղեղուտ է *կնիւնոյ*» (Գր. Նազ., *Մկրտ*.): «Դարձեալ սատանայ ի միտս արկանէր նմա եւ ասէր, թէ "Այո, ե՛րբ. մինչ տեսանես զծերն եւ հնձես քեզ սակաւ մի *կնիւն*, լինի ժամանակ հնձոց"» (ՎՀ Ա. 493): «Գետինս անուզուտ հերկազործութեան. սահմանս լքեալ հեղեղավայրս *կնիւնոյ*. խոպանացեալ է տատասկաբեր անդաստանս» (Գր. Նար., *Աղաւբ*., ԼԹ, բ, 103): *Կնիւն*. Ստ. Ուռպ., ԿԲ, 248, երիցս 249: Յորմէ՝ *կնիւնաբեր*. «Լինի ցորենաբեր փոխանակ *կնիւնաբերին*» (Գր. Նազ., *Մկրտ*.):

Կնձնի, *-նւոյ, -նեաց*, որ եւ *Ճշղար, Մնջեղծառ, Մոծակի ծառ, Նշղարի, Պտղի*. «Անդնենկովի *Բուսաբանական բառարանում ուլմուս էֆֆուզա* տեսակին հանդէպ գրուած է "հայերէն՝ *կնձնի*" (երես 368)» (*Արաքս*, 1889, հ. Ա., երես 153, Ստ. Մալխասեանց, *Քննադատութիւն Արիստոմ Յովհաննիսեանի Ռուսերէն-հայերէն բառարանին*, Տփղիս, 1888). տե՛ս եւ Անենենկով եւ ի *Քնեբրփիւկ*: Պարսկերէն «*Սէտէ, կնձնի*. է ծառ ինչ, որ լինի ի Մավէրա՛ի նէՀր գաւառին եւ յայլ տեղիս. եւ այնչափ մեծ եւ խոշոր լինի, մինչ զի հազիւ արք չորք կարեն գրկել զբունն, որոյ եւ տերեւքն այնպէս խիտ եւ մեծ են, նաեւ բազում յոյժ, զի ի յատակ նորա անձրեւ ոչ անցանէ. եւ ի վերայ նորա բուսանին գնտակակերպ իրք. եւ ի գարնան եղանակի ի գնտակաց անտի ջուր կաթէ թանձր որպէս խիժ. եւ զայն խիժն առեալ՝ թանաք կազմեն, որ լինի յոյժ պատուական. եւ յետ կաթելոյ ջրոյն ի գնտակաց անտի՝ արտադրեալ գոյանայ նանն ի նոսա. եւ [ի] նոյն պատճառ նաննին ծառս այս կոչի եւս *աղալփէշէշ, սարէխքտար, սարէշքտար, տիրախթի փէշշէտար, փէշշէզղալ* եւ *տէրտար*. բուրքերէն՝ *գարա աղաճ*, իսկ արաբերէն՝ *շճճէրէթ իւլ-պագ*» [տպ. *շճճէրէ թիւլպագ*] (Գէորգ): — «*Աղալփէշէշ*. է անուն այնր ծառոյ, որ կոչի *գարա աղաճ*, որ եւ ասի *սէտէ*. եւ քանզի զոյ ի նմա իմն իրրեւ զքսակ, յորում գոյանայ մոծակ [տպ. մոժակ], յայն սակս կոչեցաւ այսպէս. եւ այս ծառ կոչի արաբ. *շճճէրէթ իւլ-պագ* [տպ. *շճճէրթիւլպագ*], որ եւ պարսկերէն *տիրախթի փէշշէտար*» (Նոյն): — «*Սարէխք*. մոծակ կամ մուն, *սիվրի սինէք*, որ եւ ասի *սարէշք* եւ *փէշէ*» (Նոյն). — «*Փէշէ*. տե՛ս *փէշշէ*» (Նոյն). — «*Փէշշէ*, մուն կամ մոծակ, բուրքերէն *սիվրի սինէք*» (Նոյն). «*Սարխալէ*, մոծակ, *սիվրի սինէք*, որ եւ ասի *փէշէ*» (Նոյն). — «*Տէրտար*. է ծառն

այն, որ կոչի թուրքերէն *գարա աղաճ*» (Նոյն)։

«*Օյմո, կնձնի.* է ծառ ինչ տերեւաշատ, զոր ի դաշտս տնկեն ի խնչակ որթոց. ոմանք ի յետնոց կոչեն եւ *պտեղն* ի յունական բառէն *բդելէա, գարա աղաճ*» (Ջախջ.)։ «*Տէրտար.* է ծառն այն, որ կոչի թուրքերէն *գարա աղաճ*» (Գէորգ)։ «*Օրմ*, կնձնի, *գարա աղաճ*» (Էմին)։ Պրս. «*տէրտար*, *կնձնի*, ծառ» (Պօզան.)։

«Ապա եթե ոք միտ եդեալ մեղմով ուշ ի կուրծսն՝ կա՛մ սերմանիս, կա՛մ այլ ինչ նման սերմանեաց գտանէ ի ծառսն, զի սաւսոյքն եւ *կնձնիք* եւ կաղամախիքն եւ այլ բազում ծառք, որ նոցին նմանք են, պտուղ իմն ունին ընդ թանձրախիտ տերեւովք» (Բրս., *Վեց.*, Ե, 93)։

Կնճիթ, *-ճթի*, եւս *-ճթան*. գղ. *սեզամ*, իտ. *սեզամո* կամ *սիզամո*. *կնճիթ* (Եփր., *Եք*, 163)։ «Վայրենի ցորեան եւ գարի եւ ոսպն եւ ոլոռն եւ *կնճիթ* երկրին բերել» (Եւս., *Քր.*)։ «Ընդէ՞ր զ՚ի բազմակսն գձէթն հրամայեաց ի ձիթենեաց զոլ եւ անմրուր։ Աւտար ինչ ոչ կարգեաց, թէ պարտ է մերձեցուցանել ի սուրսն, քանզի յայլազգեացն զձիթագործութիւնն *ի կնջիթէ* [կամ *ի կնճթէ*], յարմաւոյ, յընկուզոյ եւ որ նման սոցա աւտար համարեցաւ» (Փիլ., *Եք*, Բ, Եզ, 534)։ «Ձիթենի եւ ընկուզի եւ բեւեկնի եւ շուշմայի, զոր մեք *կնջիթ* [կամ *կնջիթն*] ասեմք» (*Սանահն.*)։ «*Սեմանոն. կնջիթ*» (Գաղ. Ա). «հատ *կնճթան*» (Մխ. Գոշ, Խ)։ — *Վայրի կնճիթ.* «*Բազր ալ-մորոյ. վայրի կնջիթ*» (*Թրգմ. դեղոց*). փոխանակ *բազր ալ-մարոյ*, որ է ունդ ալեւորկի, թուի գրելի *սեմսեմ բըրրի*, *վայրի կնջիթ*, *սեզեղա* (Լըկլէր, Բ, բիւ 1231)։ Պրս. *կիւնճիտ*, *քիւնճիտ* (Գէորգ)։

Կոզակ. «Ֆրանչիսկոս. էլ ի՞նչ *ինմից* ունիք։ — Սաֆար. Ունինք բարար [բարար բարար՞. եա], խնձոր, տանձ, ծիրան, դեղձ, նուռն, սերկեւիլ, շլոր, նուշ, թուզ, թութ, գիլաս [կեռաս] ու գոյնզգոյն անուշահոտ ու մեծամեծաց ցանկալի շամամն եւ գեղեցիկ *կոզակն* եւ քաղցրահամ փշատն» (Յ. Յ. Մրէտտէր, *Արամեան լեյզուին գանձ*, *Բզմ.*, 1880, 344)։ «*Կոզակ.* սոխի ծաղկի շուղ, որոյ վերայ կոկոն բացուի» (Փիրղալէմ.)։

Կոծախուր, կծօխուր, կոծոխուր. «*Կոծախուրն.* ծառ, որոյ պտուղն՝ թթուաշ» (*Մանանայ*, 447)։ «*Պէրպէրիս*, որ է ծորն, որ է *կծօխուրն*» (Բժշ. Բ, 335)։ «Ծորի [ի լս.՝ "որ է *կոծոխուր*"], որ օգտէ տաքութեան խարտէշ մաղձի, *սափրայի* եւ արենի» (Բժշ., Հայկզ.)։ «Ա՛ռ *զկոծոխուրն* ու զքիքն եւ զկորն ընտրէ» (Բժշ., Հայկզ.)։

Կոծոծ, ռմկ. *գոնծոծ*. *կոնծոծ* (*Հայրուս.* 1477). գղ. *պալիւր*՞. տե՛ս *Մասիս*, 7 դեկտ. 1881, Ն. տ.. տե՛ս եւ *Լոտիւս* ի Լիտրէ. «Հ. Փշեղէն պսակն ո՞րպէս էր։ Պ. Կեմ ոլորեցին եւ յամէն ազգ փշէ ի ներս հարին եւ զայդ, որ *կոծոծ* ասեն, բազաձեւ ի վերայ դրին» (Յոհ. Վանական, *Հրցմ.*)։ «Երնջակ, *գոնծոծ*, ըղտափուշ եւ ասոնց նման հաստ եւ բարակ փշեր» (*Արդի շիրակացիք ռուսաց Հայաստանի*, *Բզմ.*, 1875, 339)։

Կոկան. պրս. «*Կիւկէմ.* սեաւ պտուղ ինչ լեռնային, նման շլորոյ» (Գէորգ)։ «*Կիւկէմ*, պրս.. *կոկան*, ազգ ինչ վայրի սալորոյ» (Պօզան.)։ «Ջամիչ գնայ [=գնեցի], ու *կոկան* դարձաւ» (առած Տրանսիլվանիոյ հայոց, *Հանդէս ամս.*, 1895, 246ա)։

Կոկանենի, *-նւոյ*. Նո՞յն եւ *Մամխի*. թուի ի Ռոշքեանէ. տե՛ս *Հայրուս.* 1454. «*Կոկանենի.* վայրենի ծառ փշալից. որ մանր, բոլորակ սալորս բերէ. *սպինոս.* Բժշ. "Կոկանենւոյ պտուղն մաքրէ զորովայնն"». ստուգելի ի Բառագիրսն Ռոշքեանի. թուրք. «*Կիւկէմ աղաճը*, *կոկանենի*» (Պօզան.)։

Կոկոռ, գղ. *Նէնիւֆար*, *Նիմֆէա*. տե՛ս եւ *Հարսնամատն*, *Ծովային շուշան*. «*Կոկոռ* ծաղիկ, որ է *Նիլուֆարն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 132ա)։

Կոկոռոչ, կոկոռիչ՞, կոկոռունչ՞. «*Ալմո.* կոկոռչի տակ. շուշան ծաղիկն է» (Բժշ. Ա. 143). «*Կոկոռչի* ծաղիկ. *Նիլոֆար*», անդ, 144). *կոկոռչի* թուի փոխանակ *կոկոռոչի*։ «Արմատանան ծառք եւ տընկունք, ծաղկին ծառերըն պըտղատուն. Յետոյ բէրդօշն ու *կոկոռոչն* կու ջահառին ի հետ զամպուն» (Դաւ. Սալաձոր). գրածն՝ քոքոռօջն, սքօռնօշն։

Կոճ. «*Կոճ.* տնկ. *զէնճէֆիլ* կ՚ըսեն ասոր» (*Խորտզր.* 35), գղ. *ժենժամբր*. արբ. *օրուք սոֆր* (Լըկլէր, Բ, բիւ 1529)։ Դեղին կոճ, տն. *զէրտէչեաւ* (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*)։ Աստ գրեա՛ դեղեալն ի Վ։ *Կոճ* = արմատ, արբ. *ըրգ* (յգ. *ըրուգ*), արմատ, կոճղ (Պօզան.)։

կոն պղպեղ. տե՛ս *Կոնապղպեղ*. *կոն տաճղեղ* (Ռոշքեան, որ գրէ *կոնտակ դեղ*), *Հայրուս*. 1471.
սիրոյ կոն (մշեցւոց). տե՛ս *Արարատ*, 1908, Նոյեմբեր, Բ., երես 1029.
վրացի կոն, որ եւ *վրացի տակ*. *տաք կոն*, *զէնճէֆիլ* (Հ. Ներս.):

Կոնակ. *վրացի կոնակ* (սստ գրեա՛):

Կոնապղպեղ, որ եւ *սնգրուեղ* ըստ Նախնեաց. *կոն պղպեղ*, գղ. *ժնեժամբրը*. «*Զանճապիլ*, որ հայերն *կոն պղպեղ* կու ասեն. երկու ազգ է, մէկն՝ չինի, մէկն՝ հնդի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 75):

Կոնդէզ, կոնողիս կամ կոնովիզ. «*Բողբոս*. արգանդ կամ *կոնողիս*» (Գաղ. Ա). «*Բողբոս*. արգանդ» (Գաղ. Բ) եւ ապա գրէ «*Բողբոս. արգանդ* կամ *կոնողիս*» (Գաղ. Ա) «*Բողբոս. կոնողիս*» . «*Բողբոս. արգանդ* կամ *կոնողիս*» (Գաղ. Ա). «*Բողբոս*. կոնողիս» (Գաղ. Գ) եւ յետ 3 բառից՝ «*Բողբոս. արգանդ*». «*Բողբոս*. արանդ» (Գաղ. Դ) եւ յետ 3 բառից՝ «*Բողբոս. կոնդէ*»: ՅՆ. *բոլբոս*: Արանդ բուի ուղիղն ըստ Գաղ. Դ, եւ ոչ՝ *արգանդ*, որպէս գրեն Գաղ. Ա, Բ, Գ. տե՛ս ի *Հայրուս*. 160 *արանդ* եւ 191 *արանդուպարանդ*: «*Զկոնողիս* սխտորով ուտել լաւ է լուծման որովայնի» (Բժշ., Ռոշքեան ըստ *Հայրուս*. 1469): «*Կոնդէզն* դանաւար [զանաւար] է հազեր, հաւան չէ միւս գոյներուն» (Դաւ. Սալաձոր.): «*Կոնդիզ*. տանձաձեւ արմատ ինչ խոտոյ քաղցր ի կերակուր, ի խորս երկրի. ո՛չ *եէր էլմասին*» (Ա. 47): «*Կոնդէզ*. գետնախնձոր, որն որ հում կ'ուտուի» (*Բառք խոտբջրցոց*, Ա., 77): «*Կոժղէս*. բառ կարնեցւոց. *եէր էլմասի* քաղցր» (Բ 2): «*Կունուղայ*. ձմեռ ձիւնի տակ մնացած սոխ եւ սխտոր» (Դեւոնդ վ. Փիրղալէմ.). ա՛յլ լաւ բուի *գզխայ*, *Վստ*. ՄԻԴ 138:

Կոյոց ծաղիկ. «*Անթեմիս*. *կոյոց ծաղիկ*» (Գաղ. Գ). «*Անթէմիս*. *կոյոց ծաղիկ*» (Գաղ. Բ). «*Անթեմիս*. *կոոց ծաղիկ*» (Գաղ. Ա, Դ):

Կոնիոն, գրեա՛ ի *Մոլախինդ*. յՆ. *կովնիոն*, [[գղ.]] *սիգիւը*. տե՛ս անդ եւ *կոնիոն*". Ոսկ. *Ես*. ՇՁ 424. «Արիստակէս արբ *զկոնիոնն* եւ մեռաւ, որ է խնդամոլի» (Եւս., *Կանոնք*). Բրս. *Վեց*. Ե 89 *կոնիովն*. Նոննոս Գ ժզ 27: «Դեղ մահու՝ մոլախինդ *կոնիոնի* արմատ» (Մեսր. Երէց, Հայկզ.):

Կոնծեղ. «*Կոնծեղ* կամ *կոննեղ*. *պատիւլլագիզ*. *կոնծեղ*» (Հ. Մկ. Անան., *Բոզ. յաշխարհաբառէ ի գրաբառն*). «Կոնեղ. տե՛ս *կոնծեղ*» (անդ). «*պատիւլլագիզ* կամ *պատիւլլագիզ*. *կոնծեղ*» (անդ):

Կոնձօծ. տե՛ս *Կոծոծ*:

Կոպղ, տե՛ս *Մատուկ*. «*Կոպղ*. տեսակ մի փշոյ, որ զերեսօք գետնոյ տարածի. արմատն կոչի *Մատուկ*, որ նման է արմատոյ շրէզի. ուտելի երկոքեան» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*):

Կոպուղ. տն. *էնկինար* (*Զեռագիր բաղգիրք Հ. Արս.*):

Կոպռոշ, որ եւ *Տիպանուկ*, *Ցինկ*. « խոտ է դեղնածաղիկ, զորոյ գծաղիկն նմլեալ թէ կապես ի մարմինդ, խարան բանայ: Կարնեցիք՝ *ծունկ* կամ *ծինկ*, այլուր՝ *կոպռոշ*» (Ա. 33–34):

Կոպրոստուն, տե՛ս *Կապստան*. *կոզակ* ըստ Ռոշքեան, 1460:

Կոռոքուկ, տե՛ս եւ *Կոռքուկ*. «*Կոռոքուկ*, սունգն» (Հին բռգ., Նոր հայկզ. ի *Սունկ*, *Սունկն*):

Կոստ, գղ. *կոստուս*. տե՛ս Կոստ ի *Ստորին հայերէն*. *կապարասի* (*Հայրուս*. 1310). *կոստի տակ* 1480. *կոզակ* ըստ Ռոշքեանի, 1460. «Փրենի տակ, որ է *Վարսաման*, որ է *կոստա*» (Բժշ. 2892):

Կով. *կովու նակտիկ*. տե՛ս *Եզան նակատ յեզն*:

Կովացնծուկ, գղ. *պրիմըվեր*. «*Կովացնծուկ*. բառ Արցախոյ. լտ. *պրիմուլա վերիս*, *Հերբա պարալիզիս*, [գղ. *պրիմըվեր*]. ի սկզբան գարնան տայ տերեւս երկայնաձեւս, խորտաբորտս, տարածեալս ի գետնի. ծղօտքն՝ թզաչափ, բոլորշի, մազոտ. ծաղիկն՝ միաբերբի, սրուակաձեւ, դեղին, հոտաւէտ» (Շահիմ.): Համեմատեա՛ լտ. *Հերբա պարալիզիս* եւ *Անդամալուծի խոտ*, որ եւ *Սամսար ծաղիկ* (*Հայրուս*. 2697):

Կովլուկ. «*Կովլուկ*» (Բ 58). այսչափ միայն գրի անդ: «*Կովլլուկ*. վայրի խոտեղէն մի, որ ընկուզաչափ պտուղ բերէ, ըստ բառահաւաքի Սեբաստիոյ կողմանց» (*Հայրուս*., 1485):

Կովունակտիկ. «*Կովու նայտեկ*. խոտ ինչ ուտելի ի գարնան» (Փիրղալէմ.):

Կովրուն. «Ա՛ռ զիացի փայտն, որ է *կովրուն*, որ յանչրդի տեղ լինի. մանր կտորատէ՛ եւ շատ եփէ՛, որ բանձրանայ, եւ դի՛ր յաչքն երբ հեղ. թէ կոյր լինի, նա լուսաւորի» (*Բժշ.*, *Հայրուս*. 1489): «*Կաւրուշ*". *հացի ծառ* ըսուած է, բայց ո՛չ ըսողն եւ ո՛չ ըսածն յայտնի է ինձ» (*Հայրուակ* 1377):

«Բաննար մի կայ, *կովու ուրուկ* անեն ... չորցո՛ ... բէ դիւահարի տաս ուտել, բժշկի» (*Բժշ., Հայրուս.* 1487):

Կոտիկ. «Զաոիկ, շէկ ոսրն, *կոտիկ*, բարձուենեկ եւ ճամատարիոս» (Բժշ. Ա., *Հայրուս.* 1495). «Խաշխաշի կեղեւ, գարոյ ալուր, խնձոր, *կոտիկ* [տպ. խնձորկոտիկ, եւ 1086] հայմշուշ, *փուֆիլ*» (Բժշ. Ա., անդ 1621):

[[**Կոտեմ**]], **Կոտեմն**, *Վստ.* ՄՀԱ. 174: «*Կոտեմ*, կոտմուկ. բանջար ջրարբի, մշակեալ եւ վայրի» (*Մանանայ*, 1148): «Բարահարն զեփեալ *կոտիմին* ջուրն արբցնէ» (Բժշ., բուի ի Ռոշքեանէ, Հայկզ. ի *Բարահար): Թուրք կոտեմ (Հայրուս.* 1494): *Կծու կոտեմ (Հայրուս.* 1491): *Տանոյ կոտեմ (Հայրուս.* 1490):

Կոտիմն, *-տման*, գղ. *կարդամին*, ռմկ. *կոտիմ, -իմի*. տե՛ս *կոտիմն* եւ ի *Խաւարտ*. «*Կառտամա. կոտիմն*» (Բժշ. Ա., 144). «*Հորփ. կոտիմն*» (*Թրգմ. դեղոց*). «Հորփ. *կոտման* հունդ» (Գաղ. Ա). «Հորփ [Զ հորի]. *կոտման* հունդ» (Գաղ. Գ). «*Հորփ* [Զ հորի]. *կոտմանի* հունդ» (Գաղ. Գ): «Ա՛ռ կարաւսի հունդ եւ անիսոն եւ *կրտմանայ* [*կոտման ունտ*, Բժշ. Ա. 212] եւ առուի դաղձն» (Մխ. Հեր. Խ 118): Սեռ. *կոտման*, տե՛ս *յԱգռաւի ոտք*: «*Կոտման* հունդ» (Բժշ. Է 38): ՅՆ. *կարդամինէ, կարդամիս*, [[գղ.]] *կարդամին*: Արբ. *Հուրֆ* կոտեմ (Պօզան.): Լտ. *կարդամում*. կայ եւ *Նաստուրտիում*: *Կոտիմն* եւն (Բժշ. Ա., *Հայրուս.* 1490):

Կոտղէշ. չիք ի *Հայրուս. կոտղէշ* (Բ 58). այսչափ միայն գրի անդ:

Կոտմնտուկ. Շահրիմ.:

Կոտշուկ, գղ. *ավուան*: «*Կոտշուկ*, որ է տն. *եուլաֆ*» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 35):

Կորափի, Շահրիմ.:

Կորդիւն, *-եան*, որպէս *Նարդիւն, -եան* (տե՛ս յիմ Հայկզ.), զի *Նարդեան* է սեռական *Նարդիւն* կամ *Նարդին* բառի. կորրին, Աբանասեանց, 52. «*Թմբրա. կորդիւն*» (Գաղ. Ա). «*Թմբրա. կորդին*» (Գաղ. Բ). «*Թմբրա. կուրդին*» (Գաղ. Գ). «*Թոմբրա. կորդիւն*» (Գաղ. Գ): ՅՆ. *Թիւմբրա*, [[գղ.]] *սաթեթա*. լտ. *Թիւմբրա: Սահթար. կորդոյն*» (Գաղ. Ա). տե՛ս *սաթեթա* ի *Քիտրէ*, ուր դնի լտ. *սատուրէյա*: «*Կորդոն*. ծայրրին» (Բժշ. Ա. 144): «*Փառնջ բլի. կորդոյն*» (*Թրգմ. դեղոց*): «Զարիւնն հրամայէ մշտիկ զոպայիւ բարաւել, որ է տրցակ կանաչ խոտոյ, *կորդոյն* կոչեցեալ արդ կամ ծորրին» (Վրդ., *Մեկն. Եւից*, Հայկզ. ի *Կորդիւն*, ի *Ծորոր*): «*ոդրինն*, որ է ծարրինն, որ է *սահթարն*. յիշած է Աստուծով» (Ամրտ., *Անգ. անգ.*, Ալիշան 132ա): Իտ. *սանտորեջջա, կորդիւն* (Զախշ.). Նոյնպէս եւ Ճամճեան, *Բոգ. խտ.գղ.-հայ*, որ դնէ գղ. *սաթեթա*, պրս. *խիար* (Հայկզ. արաբ. *խբար* ի *Թիւմ*):

Կորդող, այսպ. *Հայրուս.* 1503. «*Կորդող[ք"]*. է խոտ ինչ. բուսանի յանջրդի եւ ի վայրի տեղիս. գեղեցիկ ծաղիկս ունի եւ անասնոցն միայն կերակուր» (Բ 7):

Կորդոյ ծիւք. ռամկօրէն *կրդու ծուք, կորդի ծիւք*. կայ գղ. գետնի *ռեզին*, Կասպից ծովի սեւաւուն *բիթիւմ* [Լիտրէ). «Գետնոյ խէժ. *կրդու ծուքն*» (Բժշ., Հայկզ. ի *Խիժ*): «Կան գեղեր ալ [ի գաւառին Մշոյ]՝ Ավրան, Տէրիք եւ ուրիշներ, որոնք էգ կանկարը չունին, նարնրուկի արմատէն կը հանեն ծիւբը. *կորդի ծիւքն* է աս» (Գ. Անդրէասեան, *Հայրենիք* լրագիր, 20 սեպտեմբեր 1895, Ա, գ):

Կորդում. «*Կօրդում*. մշտադալար խոտ ինչ վայրի, ուտելի անասնոց» (Ա. 77):

Կորեակ, *-եկան, ի կորեկնէ* եւ ռամկօրէն *կորեկոյ, կորեկի*, յորմէ *Ջիակորեակ*. ազգք՝ *գաւարս, մագուկ*. գղ. *միլ, միյչ*. «Ցորեան եւ գարի, *կորեակ* եւ հաճար» (Ես ԻԸ 25): *Կորեկ, -եկի* (Ա.Ն. Շիր., տե՛ս *Փամփուշտ* ի Հայկզ.): «Եւ դու ա՛ռ քեզ ցորեան եւ գարի, ոսպն եւ ոլոռն եւ *կորեակ* եւ հաճար եւ արկցես զայն յաման մի խեցեղէն եւ արասցես դու զայն քեզ հաց» (Եզեկ Դ 9). Ոսկ. *Ես* ԽԸ 339: «հատ *կորեակ* ուտէին» (Փրպ. *ա.* տպ. 190, *բ.* տպ. 331): *Ի կորեկանէ* (Եփր, հ. Դ, 204): «Ցորենոյ եւ կամ *կորեկան*» (Գր. Նիւս., *Կազմ*.): «*Ի կորեակ* կոչեցեալ սերմանէն» (Թ. Արծր. 134): «Եւս *կորեակ* ի *վերայ կորեկին*, Սրուանձտեանց, *Մանանայ*, 288–289: «Երկու հատ ինչ *կորեկոյ*» (*Տաւնական*): «*Կորեկ. տաքը*, զոր հաց կազմեն» (*Մանանայ*, 448): Յորմէ՝ *կորեկահատ* (Եզնիկ 191), գղ. *միլ, միյչ*:

Երուսաղեմի կորեակ (աստ գրեա՛):

Կորեակ թզոյ. սերմն կամ ունդ (Հ. Արս.). «Զտեսանիցե՞ս զթզենին, որպիսի՛ է բունն, որպիսի՛ շառաւեղքն ... եւ որ այնչափ եւ այնպիսի է, ի *կորեկանէ* միոյ յերկրի անկելոյ ծնանի» (Ոսկ. *Ա Թես* է 446), յորմէ եւ Բրս., *Մկր.*՝ «*Ի կորեկանէ թզոյ* եւ ի կտոյ միոյ խաղողոյ» (Հայկզ., որ մեկնէ "սերմն թզոյ"):

Հոռոմ կորեակ (*Հայրուս.* 1726), որ սխալ գրի *Խոռմոյ կորեկ* 434, 1118:

Մեծ կորեակ (*Վստ.* ԻԴ 21). «*կորեկի մեծի*» (Ա.Ն. Շիր., Հայկզ. ի *Փամփուշտ*):

Ջորեակ կորեակ (*Հայրուս.* 2635): *Սեաւ կորեակ* (աստ գրեա՛ զեղեալն ի Մ):

Կորնգան եւ ռամկօրէն **կորնգայ**, գղ. *լեւզեռն* «*Կորնգան*, -*ի*, որ եւ *Իշկորնկան*. կամ *կորինկ*, *կորնկան*, որպէս յն. *օրիղանոն*, այն է ըստ հյ. *զուիրակ* կամ որպէս ռմկ. *կորնկան*, խոտ ինչ ցած» (Հայկզ.): «*Կորնգան.* է խոտ ինչ, որ հասարակարար բուսանի ի խոտհունձս խիտ առ խիտ, արձակէ ծաղիկս դեղինս եւ գնտակաձեւս, զոր ոմանք սերմանեն իբրեւ զառուոյտ վասն անասնոց» (Հ. Պաւղոս Մեհերեան, Բ, 10): «Եթէ հարիւր բարդ խոլորձան, վեց *կորընկան*, Մին մանուշակ խըրձադիզեալ ... եւ այն վեց բարդ *կորընկանն*՝ Վեցաւրեայ գործքն Աստուածոյ» (Գր. Նար., *Տաղ յարութեան*, 473, 474): *Կորնգան* (Մխ. Գոշ, ԼԳ, 39): «*Կորընկան*, որ է զվիրակ» (Բժշ. Ա., *Հայրուս.*, 1511): «Զուիրակ, որ է իշկորնկանն, որ է *աքլիլմելիքն*, որ է *կորնգանն*» (Բժշ., *Հայրուս.* 1511): «*Կորնկան.* խոտ ինչ նման առտոյ եւ խոլորձան, վայրի եւ մշակեալ» (*Մանանայ*, 448): *Կորնկայ.* տե՛ս ի *Բարակոծիծ*: «*Կորնկան.* բոյս է նմանօրինակ առուոյտի. տերեւքն՝ մանր, եւ ծաղիկն՝ նմանաձեւ կարմիր, երկարազոյն. սերմն՝ իբրեւ զոսպան, այլ ոչ յղկեալ, խորտուբորդ» (Ա. 34):

Իշկորնգան եւ ռմկ. *իշկորնգայ.* «*Քլիլ մլիք* [Զ *քլիքմլիլ*], *իշկորնգան* հունդ» (*Թրգմ. դեղոց*): «*Իշկորնկան*, որ է *աքլըլմէլիքն*» (Բժշ. Բ 328): «*Քլիլմէլիք*, որ է *իշկորնգանի* հունտն» (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայրուս.*, 869): «Զուիրակ, որ է *իշկորնկանն*, որ է *աքլիլմէլիքն*, որ է *կորնգանն*» (Բժշ., *Հայրուս.* 1511): Հայկզ. «*Իշկորնկան*, որ է *կորնգան.* տե՛ս *Զուիրակ. Բժշկրն.*»: Թուի գղ. *մելիլո* կամ *կուրոն բուայալ:* Արբ. *իքլիլ իւլ-մէլիք* [=թագ արքայի]: Գղ. *մելիլո* է *Մեղրածուծ*, զոր տե՛ս: *Մելիլո* գործածի փոխ. օճառի ի լուանալ զհերս եւ զմօրուս եւ չտալ թափել. անուշահոտ է եւ վարի եւս ի բուրել զլաքեղէնս. բուրք. *եօնճա.* լուայ ի Հ. Եւգինէոսէ Ոսկանեան:

Կոցուկ. *Հայրուս.* 1514. «*Քեափլյու.* է խոտ իմն յոյժ բոյլ եւ բարակարուն. արպերէն *չիքեաի*» (Գէորգ): «Եւ հայն *կօցուկ* ասէ (*շուքաճ* փշոյ), եւ որձան որպէս *խիար* կ'ուտեն» (Բժշ., *Հայրուս.*, 3380): «*Կոցուկ*» (*Խոտրջ.* 62). այսչափ միայն գրի անդ: «*Կոծուկ.* խոտ ինչ միարուն, որ բարձրանայ իբր երկուս կամ երիս կանգունս, հանգոյն եղեգան դատարկ ի ներքուստ եւ ցնցաւոր, որոյ ստորին կողմն լնու երկուց մատանց եւ տակաւ ի նուրբն եզերի. ծաղկի շրջափիւռ դեղին ծաղկամբ ի գագաթան, որ մինչդեռ մատաղ է ի ժամանակս գարնան ախորժելի է ի ճաշակել, այլ յամարայնի դահացեալ՝ իբրեւ զեղէգն կարծրանայ» (Ա. 49): «Թերխաշ. է տերեւն *կոցուկ* բուսոյն» (Գ 26): «*Կոծուկ. Հալվաան աղա-ճը*» (Նշան Խտշեան, *Հանդէս ամսօր.*, 1895, 184բ). *Հալվաան* թուի *գալուգան տիքենի. չիւքեաի* (*Հայ-րուս.* 3380):

Կուգել. «*Գուգէլ* անուն ծաղիկ մի կայ, որ դեղ է ամէն անբժիշկ ցաւերուն. Փեննայ ծաղիկն ու լօշտակն Աստուած դեղ է տուել դարտերուն» (Դաւ. Սալաձոր.). *գուգէլ* թուի ի հրատ. Կոստանեանցի (*Նոր ժողովածու*, Բ պրակ, երես 73): «Խոտ մի կայ, *կուգել* ասեն. այնոր ջուրն յիրար խառնէ լօշտակի եւ նլի ջրոց հետ, դեղ մազի եւ մօրուաց, որ չթափին» (*Ախտարական* [տպ. *աղթարական*] *դեղարա-նութիւն*, *Հայրուս.* 1515):

Կուենի, արմատն՝ *կիւ*. ռամկ. *կուի*. «*Պիտռնէս. կուենի*» (Գաղ. Ա., Բ): Կայ յն. *պիտուս* = *պեն.* կայ եւ *պիտուսս, ռեզին դը պեն՞.* թուի յն. *պիտուինէ*, լռելեայն իմանալի *ռեսինէ*, *ռեզին դը պեն.* սխալ իմանայ *Հայրուս.* 1516: «*Կվենւոյ* փայտ կամ մարխի» (*Վստ.* ԾԲ 41). «*Կվենի* կամ մարխի փայտ» (ՄխԳ 132). «*Կվենի* կամ զէր մարխ» (ՄԺԶ 134). «*Կվենի.* պիշի փինւոյ» (ՄխԹ° 158): Երեք տեսակք մայրի ծառոց. **ա**. փինի, **բ**. *կուի*, բուրք. *սազըզ աղաճը* եւն, յորմէ գործեն մախր. **գ**. շոնի եւն (Իննին. 35, օրինակեա՛): Մարխ է պրս. *մէրխ*, տե՛ս ի Գէորգ: «*Կիւ*, յորմէ *կվի*, բուրք. *սազըզ*, *սազըզ աղաճը*»

(*Խոտբջ.* 15): Գղ. *մելեզ* եւ *լարիկս* ըստ Էմինի եւ ըստ Հայկզ., որ դնէ լտ. *պխչա, պինուս լարիկս.* գղ. *մելեզ* ասի եւս *լարիկս* ըստ Պուատըվենի: Էմին եւ Աւգեր *սադըզ աղաճը* ասեն *զլանտիսկ:* Նո՞յն իցեն *կուենի* եւ *հերձի:*

Կուծուռի, *-ուոյ,* որ եւ *գետնախնձոր, երիցուկ, խնձորխոտ.* «*Բաբոնաջ. կուծուռի,* որ է երիցուկ» (*Թրգմ. դեղոց*): «*Կուծուռի,* որ է *պապունաճն*» (Արմտ., *Անգ. անպ.,* Ալիշան, 133): «*Կուծուռի,* որ է երիցուկն, *պապատիան*» (Բժշ., *Հայրուս.,* 1522): «*Պապունիճ,* պրս. *պապունէ,* երիցուկ, յն. *փափատիա.* ի Մեծ Հայս՝ *կուծուռի,* կարճապուրի ծաղիկ» (Շահրիմ.): Պրս. *պապունէ,* արբ. *պապունէճ.* տե՛ս ի Գէորգ:

Կունուղայ. տե՛ս *Կոնոդիս:*

Կումկում. «*Կումկում.* է խոտ ինչ, որ նման *պուտ* խոտին, այս ինքն *հարսնուկի*» (Բ 6):

Կուռուղու. չիք ի *Հայրուսակն.* «*Կուռուղու.* արմատ ինչ խոտոյ ուտելի իբրեւ կաղին» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Կուտատուկ. տե՛ս *Կտատեակ:*

Կպչուն խոտ, ռամկօրէն. «*Կպչուն խոտ. եափչխան, եափչկան. կռուինջ*» (Հ. Մկ. Անան.):

Կպրէբ. «*դուտիլ սալիպ,* որ է *կպրերին* [այսպ.] տակն», ի լս.՝ "փենուճա կարծեմ" (Ձեռագիր Բժշկարան Ազգային մատենադարանին Գալատայի): «*Ղուտ էլ սալիպ. կպրէբի* տակ եւ փենուճա, որ է խաչափայտն» (Բժշ. Ա. 144):

Կռարանջար, *-ոյ.* Բժշ. Ա. 363, 377: *Կռան բանջար,* Բժշ. Ա., *Հայրուս.* 1536: «*Սարասխ. կռարանջար*» (Գաղ. Ա.). «*Սարխուս. կռարանջրի տակ*» (*Թրգմ. դեղոց*). «*Ղամբիլ,* որ է *կռարաննարն*» (Բժշ. Բ 331): «*Կամիէլ. կռարաննար*» [Ձ *կռարաննար*] (*Թրգմ. դեղոց*). *մի* եւ *փ*): *Սարախս* եւ *ղաբիլ* կամ *կափէլ* պիտի. Իբն էլ-Բէյտար նոյնպէս ի *քիլ դարու* (Լըկլէր, Գ, 1995). *Կիլլտարու* (Գէորգ). պրս. «*Սէրխս* է անուն դեղոյ իբիք յազգէ դեղորէից եւ է փայտ ինչ սեաւ, որ *քէփիլ* եւս ասի: Եւ բուսանի աս յեզերս ծովուն Կազրից եւ է օգտակար ոմանց մաղասական ախտից» (Գէորգ). «*Քէփիլ* նոյն է ընդ բառին *սէրխս*» (անդ): «*Սարախ.* ինքն սեւ տակ է, եւ ճղերն՝ յիրար կպած. աղէկն ի գէճ տեղ լինի» (Սիմ. Կամերկապցի, *Հայրուս.* 2713): *Հայրուս.* 2714 *սարախս* կամ *սէրախս* = լտ. *ֆիլիկս* = գղ. *ֆուժեր* = պտեր. խտ. *ֆելիչէ,* տե՛ս ի Ջախջ.. տե՛ս եւ ի Րէստէն, 452 *ֆիլիքս մաս:* «*Պթարիս* [=յն. *պտերիս* = լտ. *պտերիս* = գղ. *ֆուժեր].* ինքն տակ է եւ կեղեւ ունի ... լաւն այն է, որ սեւ լինի եւ ամուր լինի ... զտաքուկ ճինին ձգէ ... այսոր բ. *եէր ալթու* ասէ» եւն (Ամրտ., *Հայրուս.* 2604). Գէորգ ի *Կիլլտարու* դնէ բուրբերէն *այըրլթու,* Ամիրտովլաթ՝ *եէր ալթու,* իսկ Էմինեան ի *ֆուժեր*՝ *էյրէլթի օթու.* այսպէս եւ Աւգեր: «*Շարասխ.* Հին բժշկարանն ճճի հանող կամ սպանող բուսոց կարգին յիշէ զայս, որոց մէկն այլ է եղեւան», տե՛ս 641 (*Հայրուս.* 2287):

Կռայ. չիք ի *Հայրուսակն.* «*Կռայ.* ծաղիկըերան փոքր սեխ, *տիւյակ*» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Կռան. *կռանի ծառ, Հայրուս.* 1537, 1661. տե՛ս ի *Ստորին հայերէն.* «*Ջան.* ինքն ծառ մն է, որ իրենն մարան կու ասեն. յիշած է ի վերայ մեճին» (Ամրտ., *Անգ. անպ.,* Ալիշան, 73). յն. *մելիա,* [[գղ.]] *ֆրեն* (Լիտրէ ի *Մելեզ*):

Կռապալա, Բժշ. Ա., տե՛ս *Հայրուս.* բիւ 1538. տե՛ս *Քննադ. Հայրուս.,* համար ՃԾԱ: Տե՛ս յիմ *Ստորին հայերէն,* զհանելուկն *կռապալայի.* բուի գղ. *գրոզեյ.* գղ. *ֆրամբուազիէ* ըստ *Հայրուս.* 842: «Ծառերն, առանց չափական դասաւորութեան, խառն ի խուռն տնկուած են [յԵւդոկիա]. խնձորենիներն, տանձենիներն, բալենիներն, կեռասենին, դեղձին, թթենին, մոմոխն, սալորն, ֆարանց բալն (*մահալէպ*), զահրին* եւ *կռապալան* (տեսակ մը միջնահասակ ծառ, որոյ կարմիր եւ կլոր հատապտուղներն, ողկուզներով կախուած, շատ գեղեցիկ կ'երեւին, տեղացիք այս հատապտուղներն քաղելով՝ կը տանձ եւ 10–12 տեսակ խնձոր հաշուած են» (Ուսումնասէր, Եւդոկիա, *Արամ* Սիմէոն Գուլամիրեանցի, չորցունեն եւ կ'ուտեն. համն այնչափ ախորժելի չէ) առատ կ'անին պարտէզներուն մէջ. 15–16 տեսակ 1889, հ. Ա., երես 27):

* [[*Զահրին*]] անշուշտ այն է, զոր յերես 20 կոչէ ծէհիրի *թուփ,* որոյ հատապտուղն «կը ծառայէ կանաչ ներկ շինելու» (եւ):

«Ա[մ]լիլիս]. ամլիլիս = թուրք. կրապուլա, Հայրուս., թիւ 842, որ անգիտանայ. ինքն ծառ մն է, որ թուրքն [Զ թ.] կրապուլէ կ'ասէ, եւ տերեւն մրտի տերեւ կու նմանի, եւ միրգն նման է ցրդոյ [Զ ծրբոյ] պտղին: Եւ թէ զայս խոտիս զկեղեւն կեղեւեն եւ եռցնեն ջրով , եւ տաս եարաղանին եւ արծուոյն, օգտէ, փորձած է» (Ամրտ., Անգ. անպ., Ալիշան, 12. տե՛ս Լըկլէր, Ա թիւ 15, Բ թիւ 1403):

Կռատուկ, -տկի, որ եւ կեռոտնի. «Կռատուկ կամ կեռոտնի (աշխարհաբար), լտ. բարդանա լապպա, [գղ. բարդան]] ծղօտն՝ երեք կամ չորս ոտնաչափ ուղղաբերձ, տերեւն՝ լայն, կանաչ եւ ստորէ մազոտ, սպիտակ. ծաղիկն՝ մանր ծիրանի, եւ ծայրք կոնոնիցն [կոկոնիցն՞]՝ կռածոյ: Տեսակ մի սորա կոչի բամբկացող յերեւան, զի բեռինք բամբակի զճանապարհայն կուին ընդ այն. լտ. կիրկէա» [գղ. սիրսէ] (Տահիմ.): «Կոտկի ջուր» (Բիմիար. 75):

Կռենոնի. Վստ. ԾԴ 44. տպագիրն ունի կեռասենի. «Հ. Մեխիթեան կռնի եւ կռենոնի նոյն համարի» եւն (Հայրուս. 1544):

Կռէզ 1, գղ. գոմ՞. տե՛ս Կռիզ. «Եւ ետուն ինձ յանապատէ անտի իբրեւ կռէզ ինչ եւ ասեն. "Կե՛ր եւ գնա՛ զաւրութեամբն Աստուածոյ"» (ՎՀ Ա 190). միւս թրգմ.՝ «Յայնժամ ցուցին ինձ արմատ ինչ յանապատին իբրեւ զկոզի եւ ասեն ցիս. "Ա՛ռ, կե՛ր եւ գնա՛ զաւրութեամբն Աստուածոյ"»: Հայկզ. գրէ ի Գոզի եւ Կոզի. «կոզի ակասիա, փայտ անփուտ եւ բեբեւ». Գաբըրն., Տիեզ. պտմ., հ. Ա., 132 եւ ծան. 1: Կռէզ, կռէժ. լօք = գոմ լաք, որ եւ լաք (Լիտրէ ի Գոմ, 2). կռէզ (Հայրուսակ, թիւ 714). «Լօքն ի՞նչ է: Կռէզ է. բուսի կայ, կապռաշենեաց չափ, ի Սասունք լինի, ուր զազպէն իջանէ» (Յոհ. Վանական, Հարցմունք, Հայրուս. 1320): «Սամղ արաբ., կռէզ» (Թրգմ. դեղոց). արբ. սա՛մղի արէպի:

Գրոց կռէզ. «Գրոց կռէզ» (Բժշ. Ե 81): «Կիմերոս. գրոց կռէզ» (Գաղ. Բ). «Կիմերոս. կռէզ» (Գաղ. Ա, Գ, Դ). «Գրոց կռէզ. սամղ արապի» (Ասար):

Հոռոմ կռէզ, գղ. մաստիկ. «Սագահում. հոռոմ կռէզ» (Թրգմ. դեղոց). Հայկզ. գրէ ի Կիւ. «Կուռյ կռէզ, սագահում. Հին բոզ.» եւ ի Կռէզ՝ «Իսկ կուռյ կռէզ. սագահում, իբր հում սագըզ»: Պրս. «Իլքի ռումի Եշանակէ մազտաքէ, ծիւթ, որ ասի արպերէն մաստաքի» (Գէորգ):

Տանիկ կռէզ, գղ. գոմ արաբիկ. «Սամխ յարապի. տանիկ կռէզ» (Բժշ. Ա 145):

Հոսի կռէժ. տե՛ս ի Հոսի:

Կռէզ 2. «Կռէզ. լայն տերեւով մի տեսակ խոտ» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.): Կռէզի բաւ. «Լայնատերեւ բոյս ինչ անպէտ» (Մանանայ, 448):

[[**Կռէժ = Կռէզ 1**. միասին էին]]. «Ծաղիկ պարտիզից, Կռէժղ ի խընկից» (Գանձ): Ի կռէժ բառէ՝ կռիժարեր. «Յանբերրի ծառոց, Կռիժարեր տընկոց, Կո՛յս, քեզ հոտ խընկոց», Գանձ (Հայկզ.):

Կռիզ, որ եւ Կռէզ 2, Կռէժ, գղ. գոմ. հոյզ է. իսկ խիժ կամ խէժ ըստ Գաղիանոսի բառից՝ է ռեզին. «Իսկ զդեղոցն, որ ասեն, թէ պիղծ են, որք յանդիմանին յինքեանց բերանոց, քանզի դեղ գրոց է արջասպ եւ գղտոր եւ կռիզ, զոր եւ ոչ ճաշակել մարթի» (Վրթանէս Քերթող, Յղ. պատկերամարտաց, 340): «Հոյզ. խիժ կամ լացուր կամ կռիզ կամ մաղբ» (Բառք Քերթողականք, տե՛ս յիմ Հայկ. բռքնն., երես 26):

Կռմզան. «Ծնեբեկ եւ կռմզան» (ի Սիւնիս)», Կարապետ վ. Շահնազարեանց, Յոքրն Ստեփ. Ուռպ., 17:

Կռնի. «Կռնի. է բուսի ինչ փշալից, անմերձենալի, աղանման ամուր փշովք զինեալ. ամուր է փայտ իւր եւ կարմիր» (Հ. Պաւղոս Մեխիթեան, Բ, 32): «Այս լուսաղբիւրներու կամ ջերմուկներու քով կը գտնուին կռնի կամ ուրիշ բլեր» եւ ի ծան. 1, յերես 109 ասի. «Կռնին տեսակ մը փոքրիկ եւ անպտուղ ծառ է, փշալից. իսկ բուլ բառը բազմանիւղ կարն տունկերուն կ'ըսուի» (Լումայ, 1899, յունուար, երեսք 108–109, Մշոյ աշխարհ, յօդուած):

Կռնկուկ. Դաւ. Սալաձոր., Բզմ. 1869, 163:

Կռնուկ, տե՛ս **Կառնուկ**:

Կռոքուկ, -քկին. Հայրուս. 1548, Արանասեանց 92–93. «Հացածառ Սանդուխչեան կղզեաց, որ բերէ զարմատ պարարտ հանգոյն կռօրկի» (Մեսրոպ Թաղիադ., Ճնպհ., երես 78): Տե՛ս Սրոհունդ. «Կռոռրո. սրոհունդ» (Գաղ. Բ. չունին Գաղ. Ա, Գ, Դ):

Կոռնի. *կռօնի* (*Հայրուս*. 1554). «*Կոռնի. կապարոնա աղաճը*» (Նշան Խտշեան, *Հանդէս ամս*., 1895, 185ա):

Կոտանձուկ, տե՛ս եւ *Ճոտանձի*. «*Կոտանձուկ*» (Բ 58). այսչափ միայն գրի անդ. այս բուի կոտան սունկ ի *Հայրուս*, 1552:

Կտատեակ, *-եկի*, *-աւ*. ռամկօրէն կտատուկ եւ աղաւաղանօք *Քաքարուկ*. գղ. *մով*ʺ, *գիմով*ʺ, իտ. *մալվա*). որ եւ *դացուպանիր*, պրս. *փէնիրէք*, գղ. *փրոմաժոն*. «Մարգարէք կտատեկաւ կերակրեցան եւ մոլարգով կեցին նոքա» (Եփրեմ, *Կցուրդ* ԼԶ 15). բուի ակնարկել յ*Արիովք*, զոր տե՛ս: «*Աղթէար. կտատեակ*» (Գաղ. Ա). «*Աղթէարմ. կտատեակ*» (Գաղ. Բ). «*Ալթէաս. կուտատուկ*» [Զ *կուտակուտ*] (Գաղ. Դ). «*Աղթէաս. կատատեկ*» [Զ *կատակեկ*], (Գաղ. Գ): Յն. *ատտախա*, [[գղ.]] *գիմով*: «*Աքինոդոս. կտատեակ*» (Գաղ. Ա). «*Աքինօդոս. կտատեկ*» [Զ *կտակեկ*] (Գաղ. Բ): «Ա՛ռ կուտատուկ եւ դդմի բերուքս եւ շնխաղող եւ տուղտ. ի մէկ տեղ ծեծէ՛ եւ վարդի ձիթով շաղուէ՛ եւ ի վերայ գաղտկանն դի՛ր. եւ քանի ցամքի, այլ քա՛ց եւ դի՛ր ճինն» (Ասար, Բ 73): «*Կուտատուկի* հունտ» (Բժշ. ԺԱ 13): «*Քաքարուկ*. մոլոշ» (Ա. 37): «*Գաքարուկ. ճակէմ կէօմէճի*» (Ա. 32):

Կտաւ, *-ոյ*. Եփր., *Եյք*, Բ, 150:

Կտաւահատ. տե՛ս *Կտաւատ*, որ եւ *կտաւահատ*, *Հատկտաւ*:

Կտաւատ, *-ի*, գղ. *գրէն դը լեն*. փոխ. կանեփհատ, է *լապսուս կալամի* ի Գէորգ ի *Շահտանէ*: *Կտաւատ*, Յոհ. Մանդ. 210, Վստ. ԺԹ 18, ԻԶ 22, ՄԿԳ 168: «*Կտաւատ*. կտաւի հատ կամ հունդ, յորմէ վառելու ձէթ հանեն եւ սոյն ձիթով զօմէշ օծանեն» (*Մանանայ*, 448): «*Կտաւատ* է սուսամ» (Կալհօկեցի, Ե. 121, բ. 166): «*Հատ կտաւատի*» (Մխ. Գոշ, *Առակք*, Խ, 44). աւելի էր լոկ *կտաւատ* = *կտաւ հատ*:

Կտաւահատ (Վստ. ԻԶ 22 երկիցս. ՎՀ Ա 170 *բ*. բրգմ.): *Կտաւհատ* (Վստ. ՃԼԶ 96, ՅԻԷ 223): *Հատկտաւ*, *գրէն դը լեն*ʺ (ՎՀ Ա 710 *բ*. բրգմ.. ՎՀ Բ 157 *բ*. բրգմ.):

Կտրուկ, *-րկոյ*. *կտրկոյ տակ*. «Այլ դեղ չեմերիկ կազմելոյ: Փեննայի ջուր, գիոյ տակ, բրբկենի տակ, *կտրկոյ տակ* եփէ՛, պարզէ՛ ... եւ խնցո՛» (Բժշ. Ա 362): «*Կտրկոյ տակ*. աղվէսձուք, բ. *Թիլքի թաշագը*» (Բժշ. Դ 162): «*Կտրկոյ տակ*» (Ամրտ., *Հայրուս*. 63). «*Կտրկու տակ*. կոնտրկու տակ, կորկոտակ» (*Հայրուս*. 1500, անվկայ): «*Կտրկոյ տակ*, որ է աղվէսաձուքն, որ է *խուսաթ ըլ-սայլապն*» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 133):

Կրկիտ. «*Քարգզեր*. պզտիկ ծառ մ'է: *Քարգզեար*, *կրկիտ*» (Հ. Մկ. Անան., *Բոգ. յաշխարհաբառէ ի գրաբառն*). տե՛ս եւ *Հայրուսակ*, 1563, 1564:

Կրոկոս (Զ *կրովկոս*). Նոննոս. «*Կրաւկաւն*, որ է *չափարան*» (*Պտմ. վարուցն Ադամայ եւ Եւայի*, Ն. Մառ, *Ամառն. ուղ*., 29, *Թանգարան*, հ. Ա., 14):

Կցմցուկ, տե՛ս եւ *Գնձմնձուկ*, *Կծմնծուկ*. «*Կցմցուկ*. խոտ է, որոյ ծղօտն ազուցեալ է մասն ի մասն» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 34): *Հայրուս*. 1569:

Կօղայ, **կաւղայ**, *-ի*. գրի եւ *կօքայ*, *կաւքայ*. տե՛ս *Կօղայ* ի *Ստ. այ*.. *կօղայ* = արբ. [[գղ.]] *կոնկոմբրը խիթա* (որ է ազգ մի *խիյարի*), որ տե՛ս յիմ *Երկրորդ քննադատութիւն Հայրուսակի*. (զտի գայս յ3 ապրիլի 1898, յաւուր Ծաղկազարդի). տե՛ս եւ *Շինգղ*:

Կօքայ. տե՛ս *Կօղայ* ի *Ստ. հայ*.. տե՛ս ի *Կասկ*. «*Կօղայ*. վարունգ խոշոր, բ. *չէնկլիխար* ըստ Գէորգայ» (*Բոգ. Վստ*.):

Կօշ, գղ. *կուրժ*ʺ, *գուրդ*ʺ, *կալըբաս*ʺ. «*Կօշ*. ազգ ինչ դդմոյ կարծրակեղեւ եւ երկայնականք, զորս աման գինւոյ յօրինեն, որ որչափ հնանայ, իբրեւ զխնձոր կարմրերանգ զունաւորի եւ քանձրանայ, մատնէք նոքա տակաւ հիւրս ծծեալ ի գինւոյն ի նա արկելոյ» (Ա. 50): «*Կօշ*. նտով դդում. տն. *սու գապագը*» (*Բառք խոտբջրցոց*, Ա., 76):

Կօստ. տե՛ս Կոստ:

Հ

Հագնի, *-նոյ, -նեաց.* յն. *ագնոս,* [[գղ.]] *գատտիլիէ* կամ *ագնուս-կաստուս.* յն. *ագնոս,* հյ. *բարտի* (Հայկզ., տե՛ս անդ *Հագնի*). «Եւ առնուցուք ձեզ յաւուրն յառաջնում պտուղ զգեղեցիկ ծառոց եւ կողերս յար-մաւենեաց եւ ոստս ի տերեւախիտ ծառոց եւ յուռեաց եւ ոստս *հագնեաց* ի ձորոց՝ ուրախ լինել առաջի Տեառն զեւթն աւր» (Ղեւտ ԻԳ 40). Եբրայեցին ասէ *արաբիմ,* որ է լտ. *սալիկս* 'ուռի'. իսկ "ոստս հագնեաց" յաւելուած է Եւթանասնից, ասէ Օլ. Կելսիոս, *Հիերոբ.* Ա., 304–305: «Հովանոցանան ընդ նովաւ ծառք մեծամեծք հանդերձ անտառաւք եւ ձողք *հագնոյ*» (Յովբ Խ 17). Եբրայեցին *արաբիմ* 'ուռի' (Կելսիոս, Ա., 304): «Յորում զեւթներեակն ի տաղաւարս բնակեալ, համախմբեալ տանէր Իսրայէլ, բարձեալ ունելով կողերս արմաւենեաց եւ ձողս *հագնեաց* եւ զոստս եւ զուռս սաղարթագուարճս առ ի յիշատակ խորանաչու ընթացիցն, որ՝ ի Սինա» (Խոր., *Վարդավառ,* 330): «*Հագներգութիւն* ըստ հռոմին լսի գաւազաներգութիւն կամ ի հագնելոյ կարկատուն բանս: Կամ է հագներգութիւն եւք շնչոյ հագագին, զոր երաժշտականութեամբ նուագեն ի տաղս պարանցիկ երգոցն: Կամ ի հագուցանելոյ ընդ միմեանս եւ կարկատելով բանս՝ յիրեարս յեռել: Կամ *հագնին* փայտ է անուշահոտ որպէս սարդենին, որով երգէին» (Երզն., *Քեր.*) «ի զանազանից յայլ եւ այլ օրինակս» (Հայկզ. ի *Հագներգութիւն*), որ եւ ի *Հագնի* գրէ. «*Հագնին* փայտ է անուշահոտ» (Երզն., *Քեր.*): «*Հագնի.* սարդի, *Թէֆթէ*» (Հին բառգիրք մի, *Հայրուս.* 1573): «*Եայգընի* ըստ տրապիզոնեցւոց է *գըզըլ աղաճ*» (*Հայրուս.* 1573): Էմին՝ «*ագնուս-կաստուս, հագնի*»:

Հազ. արբ. *Հաշիշէթ իւլ-սիւալ,* [[գղ.]] *Հերբ ա լա տու, տիւսսիլաժ* (Լըկլէր, Ա., թիւ 647. տե՛ս անդ եւ Գ., 1707. Նոյն է եւ արբ. *սոալլի, տիւսսիլաժ* (անդ, Բ, 1189). տե՛ս եւ *Քիւրքնար* ի Գէորգ: *Հազի դեղ,* գղ. *տիւսսիլաժ:* «*Հազի դեղ.* յն. *բեկսիոն, տիւսսիլագո.* անուն խոտոյ. *ասլան փէնչէսի.* Բժշկրն.» (Հայկզ. ի *Հազ*): Կայ *հասի դեղ* (*Թրգմ. դեղոց*), այլ պիտի *հացի դեղ.* տե՛ս:

Հազար, *-ոյ, -ով,* գղ. *լէտիւ ռոմեն, շիկու.* Եզնիկ, 66–67. «*Հազար* կայր իմ ի պարտիզի [տպ. կայր ի մի պարտիզի]. եւ հռոմ մի եմուտ ի պատնառ[ս] զրաւսանաց եւ եկեր զհինգ եւ զհնգերորդ մասն հազարոյն: Եւ իմացեալ իմ յորկորութիւն առն[ն]՝ հանի զնա արտաքս եւ մտեալ՝ համարեցի զնա եւ գտի ունջ հարիւր եւ տասն: Արդ՝ գիտեա՛, թէ ընդ ամենայն քանի՛ ունջ լեալ է *հազարն,* եւ կամ քանի՛ ունջ կերեալ է հռոմին» (Ա.Ն. Շիր., *Յղ. կատարման համարողութեան եւ կերպից հարցման, Բազմավէպ,* 1855, 304ա. [լուծումն. հազարն ընդ ամենայն լեալ է ունջ 150. *ե* մասն 30, *ժե* մասն 10, մնացեալն 110 = 150]: «Խաւարտ, որ կոչի *հազար*» (ՎՀ ձեռագիր, Հայկզ. ի *Հազար,* ի *Խաւարտ*). չիք ի տպագրին: «*Զհազարդ* սակս բազմակերութեան եւ յոգնաբեղուն մանրագոյն մասնկաց» (Գր. Մագ., ՁԳ, Հայկզ. ի *Բազմաբերութիւն,* ի *Հազար*): «*Խասս* [Զ *խասա*]. *հազար*» (*Թրգմ. դեղոց*), արբ. *խասա:* Վստ. ՄԾէ 163: «*Հազարի* տերեւ», *Հայրուս.* 341. *հազրով* անդ, 1490:

Հազարի խէժ, գղ. *Թրիգաս.* «*Աֆիուն,* որ է սեւ խաշխաշին եւ *հազրի խէժն*» (Բժշ. Ա. 143):

Վայրի հազար. գղ. *լետիւ սովաժ.* տե՛ս եւ *Եղէգ.* Վստ. ՄԾէ 164, 165: «*Տարտաղուզ,* որ է *եղրդակն.* եւ այլոք [տպ. այլ ոք] *վայրի հազար* ասեն: Լաւն այն է, որ մեծ լինի ... տերեւն՝ զմանն յերեսացն կու տանի, եւ կաթն՝ զաչիցն սպիտակն կու տանի ... եւ զխտուտն այլ կու տանի. եւ թէ սպեղանի առնես, աւգտէ կարճահարին» (Ամրտ., *Անգ. անպ., Հայրուս.* 1863): Նոյն բուի եւ *իշհազրիկ* (*Հայրուս.* 870). տե՛ս եւ «լեղի *մառօլ*» ի *Կայծխոտ:* «*Հինդք. վայրի հազար*» (Գաղ. Ա.):

Հազարդարուն. չրուի [[գղ.]] *անիս էտոււալէ,* որ եւ *բադիան.* «Խաժն ու խալինն ու լալազարն, հոտիկն անուշ *հազարդարուն,* Վարդն ու *գուլվարդն* եւ հազրէվարդ երամըն ծանր է վարդերուն» (Դաւ. Սա-լաձոր.). Ալիշան սխալ կարծէ ուղղական *հազարդարա,* սեռական *հազարդարու* (*Հայրուս.* թիւ 1579): «*Հազարդարուն* [տպ. *հազարգարուն*], ըստ անուանն բուի գեղեցիկ ծաղիկ մ՚ըլլալ. յիշուի ի

լերինս Գեղամունեաց» (*Հայրուս.* թիւ 1578)։ «*Հազարդարուն* [տպ. *հազար տարուն*], անուշահոտ սպիտակ մանր ծաղիկ, որ ցողունին վրայ փնջաձեւ կը բացուի. ասոր սերմերը հացի երեսը կը ցանեն եփելու ժամանակ, եւ շատ համեղ է» (*Տեղագրական պատառիկներ, Նոր Պայազիտ (Գեղարքունեաց)*, ստորա-գրեալ ***, *Արեւելեան մամուլ*, 15 հոկտ. 1895, երես 919)։

Հազարվարդ. տե՛ս *Հազրէվարդ*։

Հազարտերեւեան, հազարտերեւուկ, տե՛ս եւ *Ջորմուրիակ*. գղ. *միլ-ֆէօյ*, արբ. *զու էլֆի էվրագ* (Լըկլէր, Բ, թիւ 1008). «*Մարեայֆիլաւն*, որ թուրքերէն *ալֆիայ* կու ասեն եւ *հազարտերեւէն* այլ կու ասեն. եւ տերեւն նման է առվոտի տերեւին, եւ ի գետինն կու ճապղի, յորժամ բուսնի ... Եւ ցեղ մն այլ կայ, որ ի Դամասկոս կու բուսնի, եւ տակն ի *լուֆահին* տակն կու նմանի ... Ասէ Պատեհին, թէ *հարփիլ* կու ասեն, յիշած է. եւ *տարխիանան*, որ է *մազմայըայ* կ'ասեն այսոր» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 204)։

Հազի դեղ. տե՛ս ի **Հազ**։

Հազորան կամ հազուրան. «*Հազորան* կամ *հազուրան, -ի, -աց, -նի*. որ եւ յոմանց *Սին* կոչի. որպէս լտ. իտ. *սորբում, սորբա*. պտուղ դիւրակուլ, ախորժ համով եւ դիւրիչ լուծման որովայնի. *իւվէզ*. այլ ի տեղիս տեղի աշխարհին հայոց վարի որպէս *ալոն հալըճը* (ըծ. իտ. *ազզերուոլա*). «Ըստ բժշկին՝ եկեր *զհազորանն*» (Մեսր. երէց Մամիկ.) (Հայկզ.), ի Ռոշքեանի *Բառարանէն* է։ «*Սին*, գղ. *սորբա. հազորան* պտուղն, *իւվէզ*» (Բժշ., Հայկզ.)։ *Հազորան* ի *Բառագիրս* Ռիվոլայ դնի «Խնձորի նման մեծ սինձի տեսակ է, երբ կարմիր կուտերով. *սորբուս պիկտուր*» (*Հայրուս.* 1582)։ «*Հազորան* կամ *հազուրան*» (Կալիօկ., 104). «*Հազորան* է *իւվէզ*, սպիտակ, մեծ եւ կարմրագոյն։ Մանրագոյնն եւ կարի կարմիր կ'անուանի *սինձ*, ոմանք կոչեն *ալուն*, այլք՝ *Մկնալուն*» (անդ, երես 131, թ. 321, 322)։ «Արեւելեան հին *Մշակութեան գիրքն* [Իպն էլ-Ավամ] *խայզուրան* կամ *հայզուրան* կոչէ բոյս մի, որ փշոտ տերեւներ ունի, տերեւոց մէջն այլ՝ կարմիր հատեր. ըստ բուսաբանից՝ է լտ. *ռուսկուս ակուլատուս*, գղ. *հու ֆրագոն* կամ *ֆրոլոն*» (*Հայրուս.* 960)։ *Մկնամիրգ = խազիրան*, անդ, 2076, զոր համեմատե՛ ընդ *Մկնալուն*. տե՛ս *խայզէրան, հայզէրան* ի Գէորգ։ Էմին՝ «*ազըրոլ, հազորան*, ալոճ, *հալըճ*»։ Արբ. *ազ-զըրուր*. տե՛ս *ազըրոլ* ի Լիտրէ, որ եւ *Թիւֆֆահի պէրրի*՝ խնձոր վայրի. տե՛ս ի *Խնձոր*. «մանր կարմիր խնձորոյ նման» կ'ըսէ եւ Ռիվոլա։

Հազորենի, *-նւոյ, -եաց*. «*Հազորենի, -նւոյ, -եաց*, գ., ծառ *հազորանի*. "Ի ներքոյ *հազորենւոյն* ննջէր" (Մեսր. երէց. Մամիկ.)» (Հայկզ.), ի Ռոշքեանի բառարանէն է։ «*Իւվէս ազաճը, հազորենի*, արօսի» (Պօզան.), գղ. *կորնիէ, սորբիէ*։ «*Ազըրոլիէ, հազորենի, հալըճ ազաճը*» (Էմին)։ «*Հազորան. սորբի ժէն [= ժենուս*. եւ] [[...]] — «*Հազորնի, սորբի*» (Ռիվոլա, տպ. Միլանու, 1621, երես 254). տե՛ս գմակագիր մատենին ի *Սիսարբաւղ*. «*սորբուս պիկտուս*» (*Հայրուս.*, թիւ 1582). բուի ի տպագրէն Պարիսի, 1633։

Հազրէվարդ, *-ի*, աղաւաղանօք՝ *հազարվարդ, հազրիվարդ, հատրէվարդ*, գղ. *ռոզ միւսկէ* ". «Փունջ սեւսին, սաղարթ ստեղնաշիտակ ըրնկոցն, Խուռն *հազրէվարդին* մանուշկաբեր բիւրին» (Գր. Նար., *Տաղ յարութեան Ղազարու*, 47)։ «Ա՛յ ծի՛, թ'ինձ աղէկ առնես, զիս ի յայս երկրէս խալըսես, Առնուս յիմ հեծելն, երթաս 'ւ անիհուն գետէն զիս հանես, Զամէն մանուշակ տամ քեզ, *հազրէվարդ*, զինչ որ դու գիտես [կամ ուտես ըստ այլ Ձ] (Խաչ." Կեչառ.", *Ոտանաւորք ի Պտմ. Աղեքսանդրի*, Հ. Սուք.)։ «Ա՛յ իմ նուռ ու նուշ բերա՛ն, նուռ ու նուշ ծաղի՛կ 'ւ ռահա՛ն, Դու *հազրէվարդի* նըման, մարըն չէ բերել քեզ նըման» (*Տեսայ իմ հոգուս հոգին*, 22)։ «Առեալ՝ տարան զնամակն ի դուռըն վարդին, *Հատրէ վարդին* դիմաց կարդացող բերին, Կանկնաւ [[կանգնաւ]] ի վերայ ոտից եւ գիրն ի յափին, Ընթերցաւ բարձրաձայն ի լուր ամենին» (Գր. կբ. Աղբ., *Յետ գընալոյ վարդին*, 137)։ «Գոյնըզգոյն ծաղկունք եկեալ՝ աւետարեր եղեն *պիւլպիւլին*, Մանուշակ ու *հազար վարդ* մատուցանեն, հա՛յ, կանանչ բըփին. Ուրախանան հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին» (*Ար'ե'կ որ մտնունք պաղջան*, 146)։ «Կարմրացեալ, գոյնըզգոյն կանանչ սերեալ ըզվարդենին, Մանուշակ թիւ պարանոց քաղցրատեսակ հոտոտելի. *Հազարվարդն* այլ բոլոր զգունովն դեղ եւ աղվոր, Կոկոնին հետ միաւոր, ի մէջ նոցա փառաւոր» (*Արեւելք առաջին*, 186)։ *Հազրէվարդ* կայ եւ ի Բռգ. Ռոշքեանի (*Հայրուս.*, 1583)։

Հազրէվարդ է թերեւս պրս. «*Նէսթէրին*. ծաղիկ ինչ սպիտակ եւ անուշահոտ եւ է նման վարդի, որ զամիսս երիս կամ չորս շարունակարար փթթի. ասի եւ *կիւլի նէսրին*, նաեւ *նէսթէրուն*» (Գէորգ). «*Նէսրին*. տե՛ս *նէսթէրին*. ասի եւ *կիւլի քիւզէ*» (անդ). տե՛ս անդ եւ *միւշքին վէֆատար* = *կիւլի, նէսրին*: Տե՛ս *Նիզըրէ* ի Մ. Դըվիկ, ուր արբ. *Նիւրին* մեկնի *ռօզ միւսկէ*. իսկ Պօզան՝ «*Նիսրին*, վարդ վայրի»: Տե՛ս ի *Հայրուս*. *Նզրու*՞ վարդ: *Հ* եւ *Ն* լծորդ են, որպէս *հիւր* = *նիւր*. արբ. *Նիր* = հուր, կրակ: «Աստուածային եւ մեծ մարգարէն Մովսէս ... ելեալ ի Սինէական լեառն եւ առեալ զեւթնարփեան ծաղիկն, զեղէգն, զկինամոնն, զմուռն, զնարդոսն, *զհազրէվարդն* եւ զհամասփիւռն եւ եփեաց զնա իւղ աստուածային» (*Յղ. Սուրբ եւ աստուածային իւղոյն*, զոր գտեալ սուրբ հարցն յարեւելս յԱղուանի գիրս եւ թարգմանեցին ի հայ գիր, Տաշեան, *Ցուցակ հայ ՁՁ մատենադարանին Մխիթ. ի Վիեննա*, երես 659ա). *եւթներփեան ծաղիկ* = "հրուկ, հիրիկ" բուն. տե՛ս *Հայրուս.*, թիւ 1757: Թերեւս «զեւթնարփեան ծաղիկն, զեղէգն» եւն. «եւթնարփեան ծաղիկ» = պրս. «*Հէֆթըրէնկ* [= եւթներանգ]. ծաղիկ ինչ եօթներանգ, որ յատուկ է գաւառին Հնդկաստանի: Իսկ ըստ մեկնութեան ուրումն՝ ծաղիկ ինչ, որ ասի պարսկերէն *պէնէֆշէի խայրի*» (Գէորգ):

Հազրի. Նո՞յն ընդ *Հազրէվարդ*, որ գրի եւ *հազրիվարդ*. «Ծաղկեալ շուշան ի հովտին, Եւ համասփիւռն՝ ի լերին. Հարիւրալամն *ի* [եւ՞, *Հայրուս.* 1584] *հազրին*, Ի միասին ցրնծացին» (Մարտիրոս վրդ., *Կայրեա՛, սուրբ կարուղիկէ*): Կայ եւ *հազրէ* ի Գր. Նար.. «Ի ծամին խնկեփին *հազրէ*» (*Աչքըն ծով ի ծով*, 465):

[[**Հազրիվարդ**, տե՛ս **Հազրէվարդ**:]]

Հալածուկ, **հալածուկ**. ընդեղէն մը (*Հայրուս.* 1586):

Հալեւորիկ. տե՛ս *Ալեւորեակ*:

Հալիք. «*Կերասին*. *հալիք*» (Գաղ. Ա., Գ, Դ). «*Կէսանին*. *հալիք*» (Գաղ. Բ). «*Կերասին*. հոյն» (Գաղ. Ա., Գ, Դ). «*Կէասին*. հոյն» (Գաղ. Բ). յն. *կրանէա*: *Հալիք* = կեռաս. «Դարձաւ Ղուկուղղոս ի համբաւաւոր բուրաստանսն իւր եւ ի մեծագանձ ստացուածս իւր ի Հռոմ (Հ. Յովսէփ Գաթըրճ., *Տիեզ. պտմ.*, հ. Ա., 556), տարեալ ընդ իւր յԻտալիա զառաջին տունկ *հալիք* մրգոյ ի Կերասուս քաղաքէ պոնտացւոց: *Հալիք*, ըստ Ռոշքեանի՝ լտ. *կերասիա* (*Հայրուս.* 1592): Նո՞յն եւ *հալլուկ* = *սին պտուղ*՞ (*Հայրուս.* 1593):

Հալլուկ, որ եւ *Գի*, տն. *իւվէմ* (Ձեռագիր բառգիրք Հ. Արս. Բագրատ.):

Հալուէ, -*ի*, գղ. *ալոէս*. *հալուէիւ* (Նար., ՂԳ, 255):

Հալֆայ, տե՛ս յ*Օտարածայն բառս եւ բոյսս* [որ չկայ Նորայրի գիւանում]. տե՛ս ի *Հայրուսակ*, թիւ 998, երես 235, ուր դնի *ստիպա տենակիսսիմա* (ըստ Լըկլէրի՝ յԻբն էլ-Բէյտար, Ա., թիւ 686). տե՛ս եւ ի *Հայրուսակն* եւ ի թիւ 1602, ուր շփոթէ *զհալֆա* ընդ *Հալվա*: *Հալֆայ* (*Վստ.*, ԽԲ, 33 երկիցս). «*հալֆայով* կամ խշրով պինտ փաթաթեա՛ զմիջոյն» (անդ, ՄԹ, 129), յորմէ՝ *հալֆայուտ տեղի* (անդ, ԽԲ 33 երկիցս):

Հաղարջ, -*ի*, գղ. *գրոզեյ*. կայ գղ. եւ *կասիս*, որ է *սեաւ հաղարջ*, իսկ *կարմիր հաղարջն* ասի եւս *գադել*. «*Հաղարճ*. *փռէնկ իւզիւմիւ*. *հաղարջ*» (Հ. Մկ. Անան.): «*Ռիբ*, ար., *հաղարջ*, *փրէնկ իւզիւմիւ*» (Զախչ., *Բռգ. իտ.-հայ.*). «*ուվա դե փրատի*. տե՛ս *ռիբ*» (անդ, յ'*Ուվա*). «*Հաղարջ*. գաւառական, տն. *Փրէնկ իւզիւմիւ. ռիբ, ուվա դե փրատի*» (Նոյն, *Բռգ. Հայ.-իտ.*): «*Հաղարճ*. ծառ փոքրիկ յԱրագած, որ ունի պտուղս մանր» (*Մանանայ*, 448): «*Հաղարջ*, լտ. *ռիբ ռուբրում*, իտ. *ռիբ*, անգղ. *կիւրրէնտս* [սուղեխ], գղ. *գրոզեյ րուժ*, արբ. *էնէպ նասարա*, թուրք. *փռէնկ իւզիւմիւ*» (Ռէստէն, հ. Բ, 386:

Հաղենան, «*գեօզչայ* սալոր» (Աբանասենց, 17, 18): «*Ալուչայ*. սալոր բոլորակ կանաչագոյն. *Հաֆիւ էրիկի*. *կէօկչէ սուլթան*. ասի եւ *հաղենան*» (Հայկզ., *Գաւառականք*): «*Էմպէրիալ*, 2. ազգ ինչ սալորոյ, *հաղենան*, *կէօքճէ սուլթան*» (Էմին): Տե՛ս *Ալոչա* կամ *Ալուչա* ի *Հայրուս*, 24:

Հաղիկայ, տե՛ս ի Հայկզ.. Եփր., *Վասն երաշտի եւ վաշխառուաց*, հ. Դ, 204. լտ. *ալիկա*:

Հաճար, -*ոյ*, գղ. *սեգլը*, որ եւ *Աշորայ*, *Ճոյփն*, *Տարեկան*. Ելք Թ 32, Ես ԺԸ 32, Եզեկ ԺԸ 25. «Իբրեւ հատ *հաճարոյ* ի մէջ երկուց երկանաց» (Գր. Արշ., *Մեկն. ընթերց.*, ԻԹ, 186): «*Նկանակ հաճարոյ*» (Գ Թագ ԺԹ 6): «Բայց ցորեանն եւ *հաճարն* ոչ հարաւ, զի ոչ էր բուսեալ, քանզի անագանավար էին»

(Եփր., Եղ Բ 150)։ *Հանար* (Եզնիկ, 294. *Հայբուս*. 3212. Մխ. Գոշ, *Առակք*, ԼԹ, 44). Հ.Գ. Մէնէվիշեան, *Բուսար*., 215, ի *Փեկոն* [17 Նոյեմբեր 1914]։

Հանարի կամ *Անարի*, *-րւոյ*, գղ. *հեորը*ˮ, *սապեն*ˮ. յունարէն *օսպրիօս*, *հետրը*. տե՛ս եւ ի Լիտրէ ի ստուգաբանութեան *հետրը* բառի։ «*Հանարի (կիւլէն)*» (Թումայեանց [Պաւղոս], *Պոնտոսի հայերը*, *Լումայ*, 1899, գիրք Բ, 150)։ Յովհ. Սեղրոս, *Կոմպենդիօ*, հ. Ա, 41–42, զ*հանարածառ* Խորենացւոյ բարգմանէ *ալբերօ ֆրումենտարիօ* եւ կարծէ ազգ ինչ *սագու*։ «Լինի ի նմա [ի Գուգարս] անալուբ [ˮ], եւ՝ *հանարի ծառ*, եւ՝ սերկեւիլ, եւ՝ տաւսախ» (Խոր., *Աշխարհ*., ընդարձակն, 34–35), որ ունի «*հանար ծառ* եւ սորովիլ», համառօտն, 610, *հանարածառ*։ «Անարի, որի պտուղները լինում [են] եռանկիւնաձեւ» (Աբանասեանց, 23)։ «*Հանարի*ˮ, *գայլըն աղաճը*» եղեալ եմ ի *Հետրը* յիմ *Գաղղ.-հայ*. տե՛ս անդ եւ ի *Լուպ* «*հանարի (գայլըն աղաճը)* ի *Սուրհանդակէ*։ «Ոչ գոյ բնաւ ոչ *անարի* ոմն բանից արժանի եւ ոչ սաւսի եւ նռնի ոչ բազում» (Պղատ., *Աւրէնք*, Դ, 118). այսպէս *անարի* Հայկզ. ի Յաւելուածին, որ եւ դնէ յն. *էլատէ* = գղ. *սապեն*, իսկ տպ. ունի *հանարի*։ «Տեսանես զեղբարսն մեր՝ զ*հանարի* եւ զփինի, զի ոչ են բազումք եւ ոչ ընդդիմանալ հողմոց կարեն՝ ի խոր արմատս ոչ ունելով» (Մխ. Գոշ, *Առակք*, ԻԲ, 25–26)։ «Անրի. տանկաց *կիւրկէն*. վայրի փայտ» (*Խոտրջ*., 43)։ «*Ֆագուս սիլվատիկա*, իտ. *ֆաջջօ*, գղ. *հետրը*, տճ. *գառա կիւրկէն* կամ *եապան կիւրկէն*, ըստ մեզ՝ փեկոն կամ կաղամախի» եւն (Բէստէն, հ. Բ 446–447 [21 մարտ 1905]։ «*Կիւրկէն*. կաղամախի» (Պօզան.)։ «*Անառ* է *օխլամուր*» (Պետրոս վ. Կալիօկեցի, *Ասիական նանապարհորդութիւն ի Հայս*, 328)։ Ոմկ. *աժրի* (Տէր Վարդանեան), *արժի* (Խտշեան) եւ *Հայբուս*. 17։

Հանարուկ, *-րկի*. Ագաթ.. «*հանարկի ծառ* յիշի ի կողմանս Հայաղուանից» (*Հայբուս*. 1609). *հնարկի* (անդ 1699). *Մեղու*, ԻԲ, 83։

Համամայ. Ամրտ.. «Լաւն ի Հայոց գայ» (*Հայբուս*., 50)։

Համասպրամ, **համասպրան**, *համասփիւռ*. *համասպրամ* բառի համառօտութիւնն բուի *Սպրամ*՝ անուն կնոջ. «*Սպրամ*՝ Աղուանից տիկին» (Մ. Կաղ., հ. Բ, 12), յորմէ եւ՝ *Սպրամիկ* (Մտթ. Ուռհ., 8, 35)։ Ի *համասպրամէ* բուի *Համասպրամուհի*՝ անուն կնոջ. տե՛ս ի Ստեփ. Ուռպ.։ Յն. *օնոսմա*։

[14 յունիս 1914] Տե՛ս յիմ *Դաւրի Սալածորեցւոյ Գովասանք ծաղկանց* ի Բանասէր Կ. Յ. Բասմաջեանի, 1901, հատոր երրորդ, պրակ Բ–Գ, երեսք 118–119, զոր ինչ գրած եմ զ«*Համասփիւռ* = *Համասպրան* ծաղկէ, ըստ կարծեալ *Հայբուսակին* (յերես 357), *հիքնիս* կոչուած ծաղկանց ցեղէն», եւ ըստ իս՝ բերեւս *աննման պիւլսատիլ* կոչուածէն, որ ասի ոմկ. *կոկըլուրդ*, որպէս *կոկըլուրդ* կոչի եւ *լիկնիգ կորոնեբ* ծաղիկն։ Այլ *համասպրամն* իցէ բերեւս լտ. *ասկլեպիաս ակիդա*, իտալերէն *էրբա լունարիա* [[...] Համեմատեա՛ ընդ «*Համասպրան* բազուր բուսոց» (Մխ. Գոշ, *Առակք*, ԻՋ եւ ԻԷ) եւ «*համասփիւռ* ծաղկանց *ամիրայ*» (տե՛ս յիմ յօդուածին *Դաւրի Սալածորեցւոյ*) «զաչս քաջատես առնէ» (Մխ. Գոշ, ԻՋ) եւ «կոյր աչերուն լոյս կու բերէ» (Դաւ. Սալածոր.)։ Համեմատեա՛ ընդ *Լուսնի ծաղիկ* . «Տերեւք նորա զհետ լուսնի ընթանան, զի առաջին օրն լուսնի մէկ տերեւ ստանայ, եւ յերբ լուսինն փլէ, նորա տերեւքն թափին» եւ այլն (*Հայբուսակ*, թիւ 938). նոյն է եւ *Լուսնարուք* յիմ *Հայ պարտէզ* ընդարձակագոյն [չկայ հեղինակի դիւանում]։

«Եւ այլն ամենայն *համասպրամն* ծաղկանցն» (Ագաթ. 480)։

«Տնկեաց զդրախտն եւ զարդարեալ յաւրինեաց զանազան եւ երփն երփն լի *համասպրամ* [կամ *համասփրամ*] ծաղկաւք» (Զքր. կբ.)։ «Իբրեւ հովիտս զարնանային զանազան եւ *համասպրամ* ծաղկաւք զարդարեալ եւ պանունեալ» (Նոյն)։

«Իբրեւ զմարգս *համասպրամ* ծաղկաւք լի» (Վարդան, *յԱնբառամն*)։ «*Համասպրամ* [տպ. *համոպրամ*]. արարատեան բառ. երկրի մը բոլոր ծաղկանց խումբը՝ *ֆլոր*» [տպ. խումբը ֆլոր] (Խաչատուր քհ. Տէր-Վարդանեան, *Ժողովրդական բառեր*, *Արեւելեան մամուլ*, 1895, դեկտ. 15, երես 764, թիւ 92)։

«Չքնաղ ծաղիկ ինչ լեռնային, որ գրի *համասպրան*» (Հայկզ., Յաւելուած) եւ *Համասփիւռ*։ *Համասպրան* (Մխ. Գոշ, *Առակք*, ԻՋ, 30–31). տե՛ս եւ զառակն ԻԷ։ *Համասպրանն* ունի 12 ոստ ըստ Մխ. Գոշ, 12 բազուկ ըստ Բժշ., 12 թեր ըստ Տիլան, 12 արմատ ըստ Սալածոր., 12 տարին մի անգամ

բուսանի ըստ Յակովբայ Կայնեցւոյ: «*Համասպրամ* բուի պրս. *ճէմսափֆէրմ*, որ շատ լինի ի լերինս Իսֆահանու» եւն (Գէորգ, ի *Շահպանին*), որում միաբանի եւ Ամրտ.. «*Սողոմոնի ռեհան. ռայըհանի սիւլէյմանի*, որ է *ճամսաֆրանն* (*համասպրամ*) եւ *Հայաստ սուլայման* այլ կ'ասեն. եւ ինքն ի Պարսից լերանքն կու բուսնի եւ ի Սպահան այլ կու բուսնի. եւ ինքն նման է սամբին, որ դալար լինի, եւ իր տերեւն կու նմանի տըղտին տերեւին. եւ ծաղիկն փոքր է, ի քաղեղան ծաղիկ կու նմանի. եւ ինքն կու չորցընէ» (Արմտ., *Անգ. անպ.*, *Հայբուս.*, 2663): Համեմատեա՛ *սողոմոն* եւ *համասպրամ*՝ տուիչ իմաստութեան: «*Մարզանկօշ* եւ *մարմահուզ* եւ *ճամսաֆրան* եւ *ֆարանճամուշք* եւ *պատրանպուէն*. այսոնք ամէնն մէկ մէկի փոխան են» (Ամրտ., *Անգ. անպ.*, *մարմահուզ*, Ալիշան, 200ա): *Ասպրամ* կայ եւ ի *Շահասպրամ*, որ է պրս. *շահէսփէրէմ*, *շահէսփէրղամ*:

Համասփիւռ [[տե՛ս եւ Համասպրամ]]. *Համասփիւռ* կայ եւ յԱմրտ., տե՛ս *Դեղնասփիւռ* ի *Ստորին հայերէն*: «"*Համասփիւռ* ծաղիկ: Այս է մեկնութիւնն Դիոնեսիոսի իմաստասիրի, որ ականատես եղեւ *համասփիւռ ծաղկին*", Բժշկրն., երկար առասպելք վասն ամենածաւալ ներգործութեանց անգիւտ ծաղկանս)» (Հայկզ.ի *Համասփիւռ*): *Համասփիւռ*. (օրինակեա՛ *Հայբուս*. երես 356): Տե՛ս եւ *Հազրէ-վարդ*:

«Շըրթունքդ է շաքար, խօսելըդ՝ ղանտ, Լեզուտ ի բերանդ անգին նռնար է. *Համասփիւռ* ծաղկի հոտ ի քէն կը բուրէ. Չէ քեզ օրինակ, քոյդ ա՛յլ փարքամ է» (Գր. կր. Աղբ., *Դու ես արեգակ*, 62). «*Համասփիւռ* ծաղիկ անթառամելի, Դու հազրի յալամ, բըժիշկ ամենի. Միշտ կանաչ կենաս քան զնըշտարենի, Ըզմեզ քո տեսուտ արա՛ արժանի» (Նոյն, *Գարունն է բացուեր*, 94). «*Համասփիւռ ծաղկի* նմանիս կամ փըքքեալ վարդն ի կոկոնէն» (Նոյն, *Աստուածանկար*, 93):

«Ծաղկեալ շուշան ի հովտին, Եւ *համասփիւռն* ի լերին. Հարիւրալամն ի [[եւ]] հազրին Ի միասին ցնծացին» (Մարտիրոս վրդ., *Կայթեա՛, սուրբ կարուղիկէ՛*, 534):

«*Համասփիւռն* ի մէջ ծաղկանցն, Որ մայր ասի իմաստութեան. Եռաց երկիր, եւ կակղացան, Բիւրք ի բիւրուց ծաղկունք բուսան» (*Աստուած անսկիզբն եւ անսահման*, 173):

«Ծառուի՛դ շիկագունիկ, դո՛ւ՝ *համասփիւռ*, ծաղկանց ամիրայ. Խընկենի լեառըն զմըռսեայ, շուշան հովտաց. հա՛յ, կանանչ բըփին, Ուրախանան հետ կարմիր վարդին, հետ ճերմակ վարդին» (*Ար՛ե՛կ որ մըտնունք պաղչան*, 146):

«*Համասփիւռ* ծաղիկն ունէր երկոտասան թեր. Այն երկոտասան թերն ալ իւր աշակերտքն էր. Ինքըն նըշանակէ Քրիստոս Տէրն մեր, Որ եւ խաչեցաւ Ադամայ խաթեր» (Տիլան, *Գովեմ զքեզ զանազան*, *Հայերգ*, 49):

«Այն *համասփիւռ* ծաղիկն, որ կայ, ծաղկեր ծաղկովն հազարագոյն. Կոյր աչերուն լոյս կու բերէ, թէ Տէրըն տայ ադամորդուն. Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան՝ տարւոյն. Ամէն *բըփին՝ գոյն մի ծաղիկ, հրեշտակք զմայլին անուշ հոտոյն: Այն արքայիկ օծն է թագաւոր, խիստ խորագէտ ու իմաստուն. *Համասփիւռին* կու հետեւի եւ զօրութիւն կ'առնու հոտոյն» (Դաւ. Սալաձոր.). (*Լումայ*, 1898, յունիս, 161). **բուփ* նշանակէ 'տերեւ' ըստ մշեցւոց: *Համասփիւռ*. գրեա՛ Յակովբ Կար-նեցի, *Տեղագիր Վերին Հայոց*, 20:

Համբարապետ, -ի, գդ. *սկամոնէ* °. «*Համբարապետո[[յ]] տակ*, որ է *սակամունի*» (Բժշ. Ա., 376). «*Համբարապետի տակ* չորցո՛, աղա՛ եւ տո՛ւր խավծով եօթն օր» (անդ, 315). «*Համպարպտի տակ* ծեծէ՛ քաշ, եղով տապկէ՛ եւ ի քիթն ա՛րկ» (անդ, 356). «*Համբարոյ տակ*», անդ, 376°. այս վերջինս բուի յիշեալն ի *Հայբուսակի*, 1614. «"Յառաջ ծեծէ՛ *զհամբարոյ տակն* մանր զէդ փոշի եւ գիրար խառնէ՛ եւ շաղէ՛ պախրի գոզով թանձր զէդ հայս" եւ այլն. քիչ մի առաջ յիշելով զայս՝ ուզեր է բացատրել կամ նոյնանիշը գրել եւ չէ գրած, զի գրէ "*Համբարոյ* (կամ *համբարապետոյ*) *տակ*, որ է" ... եւ տարակուսական նշան մի դնէ». ստուգելի է յԱ. Բժշկարանէ: Պրս. *անպարպէտ* է հյ. *մարեմխոտ*, *խնկողկուզուկ* ըստ Ամրտ., որ ասէ, թէ պարսիկք կոչեն եւս *ղուլխն*, *ֆիսիրկօզ*, *քխու* (*Հայբուս*. 1076): Կայ ի Գէորգ *Ղուլխն*, զոր յղէ ի *Խիւմպէրէ* եւ մեկնէ «1. կարաս փոքր. 2. ըռմբարտակ, *քումպարա*»:

Համբարձումն, գդ. *օրոն*. «Բարձունենկն *համբարձում* ծաղիկ ասեն» (Նորագիր Բժշկարան Ազգ. մատենադարանին): «*Համբարձում*. նարնջագոյն եւ բուրումնաւէտ [իմա՛ հոտաւէտ. եա] տեսակ մը

խոշոր ծաղիկ, որ առատօրէն կը բուսնի համբարձման տօնի միջոցներուն: Հոս [այս ինքն ի Սիվրիհիսար] սովորութիւն ունին իգական սեռն լուացուելու նոյն օր տաք ջրով, որուն մէջ կը թաթխէ սոյն ծաղիկներէն փնջիկ մը եւ կը քսէ իր մերկ մարմնին» (*Սիվրիհիսարի գաւառաբարբառը, Բիւրակն* լրագիր Կ. Պոլսի (շաբաթաթերթ), 1 օգոստոս 1900, երես 473ա): «*Արրոտիմոն*. բարձունենակ, որ է *համբարձում*» (Գաղ. Դ). տե՛ս *Արրոտինոն յՕտար*: *Հայբուս*. 1615:

[[**Համբարոյ տակ**, տե՛ս **Համբարապետ**:]]

Համեմ, տե՛ս եւ *Բոլորհամեմ*. տե՛ս եւ *Հացաղեղ*. գղ. *ամոմ*. «*Համեմ*. տճ. *թարհօն*» (Ա. 39): *Համեմ*. տե՛ս Աքանասեանց, 51-52: «*Համեմ*. բոյս ինչ, զոր ի գործ ածեն ի կերակուրս. ունի փոքր ինչ զհամ փայտոջլոյ: Խոտ վրացոց՝ *գինձի*. ըստ Գանձակեցւոյ Սիւնեաց՝ *գինձ*» (Հ. Սուք. Պարոնեան, *Գաւառի բառք բիֆլիզեցւոց կամ Սիւնեաց*, թիւ 15): «*Գինձ*. նոյնպէս եւ առ Վիրս. աշխարհաբար *համեմ*, *կորիանդրում*» (Ստ. Շահրիմ.): «*Համեմ*. հունտ ինչ մշակեալ» (*Մանանայ*, 448): «*Ամոնի*. *համեմ*» (Գաղ. Ա., Բ, Դ). «*Ամոնի*. *համիմ*» (Գաղ. Գ): Տե՛ս *ամոնում* ի Հայս (Ինճիճ., *Հնախ*., Ա., 175. *Հայբուս*. 1404, 1616): «*Համեմ*. *տէրաղ օթիկ*, *թէրէ օթի*» (Փիրղալէմ.):

Հայ խունկ. տե՛ս ի **Խունկ**:

[[**Հատրէվարդ**, տե՛ս **Հազրէվարդ**:]]

Հարիւրթերթի. տե՛ս ի *Վարդ*:

Հարսնամատն, գղ. *նեմֆէա*, *նենիւֆար*, նո՞յն եւ *Կոկոռ*. «*Նիմփա* [Ձ *նիփա*]. *հարսնմատն* կամ շուշան ի գետեզր» (Գաղ. Ա). «*Նիփա*. շուշան ի գետեզր» (Գաղ. Դ). «*Նիփա*. շուշան» (Գաղ. Բ): «*Հարսնամատն*. ծաղիկ է, երկայնութիւնն՝ մատնաչափ, անծղօտ» (Ա. 35): *Հարսնմատ* գրէ Հայկզ.: *Հարսնմատն* տե՛ս ի *Բոյսս* Խաչատուր ծի. Տէր-Վարդանեան, *Ժողովրդական բառեր*, հրատ. յԱրեւ. *մամուլ*: Գղ. *կոկլիկո*: Յորմէ՝ *Նոր*․*հարսնուկ*: «*Հարսնոյ ծաղիկ* կամ *հարսնուկ*. *կէլինճիկ չիչէյի*. տե՛ս *Պուտ*. Գաղիան.» (Հայկզ.): «*Պուտ*. *հարսնոյ ծաղիկ*. Գաղիան.» (Հայկզ. ի *Պուտ*): «*Պտուկ* կամ *պուտ* կամ *հարսնուկ*. կակաչ դառնահոտ կարմիր» (Ա. 36). «*Կումկում*. է խոտ ինչ, որ նմանի *պուտ* խոտին, այս ինքն *հարսնուկի*» (Բ 6):

[[**Հարսնոյ ծաղիկ**՝ **հարսնուկ**. տե՛ս **Հարսնամատն**:]]

Հացաղեղ, *-ոյ*. **հացի դեղ**. «*Համիմ*. *հացաղեղ*» (Գաղ. Ա). «Համեմ. *հացաղեղ*» (Գաղ. Դ): «*Նանխոյա*. սպիտակ *հացի* [Ձ *հասի*] *դեղ*» (*Թրգմ. դեղոց*): *Հացաղեղ*. տե՛ս Հայկզ.: Պրս. «*Նանխյան*, *նանխաՀ*, *նանխուՀա*. *հացաղեղ*, արջնդեղ» (Պօզան.): «*Ամոմ*, *հացաղեղ*, համեմ» (Էմին). պրս. «*ՆանխաՀ*, *նանքիչ*» (Գէորգ): *Հացի դեղ* (*Հայբուս*., երես 364, ծ. 2:

Հացենի, Աքանասեանց, 23. «*Հացենի*՝ ծառ անպտուղ, որոյ փայտն շատ կարծր է. տճ. *տիշպուդաք*» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313): «*Հացենի*. *տիշպուտաղ*, ուստ նորա՝ հանդէպ իրերաց» (Հ. Ներս.):

Հացի, *-ցւոյ*, որ եւ *հացիփի*, յորմէ՝ *Քարհացի*. տե՛ս եւ *Դղփի* = գղ. *ֆրասնոս*. *ֆրասնոս* ըստ Գաղիանոսի բառից, *ֆրեն* ըստ արդեաց: «*Հացի*. *տիշպուտաղ*» (Ինճիճ., 35-36, 381). առ սովաւ տնկեն զորբ ի Տրապիզոն: «*Հացի*. է ծառ ինչ, որոյ ոստք ուղիղ ելանեն դէմ առ դէմ. եւ է մանրատերեւ, եւ՝ յոյժ ամուր փայտ իւր եւ վարոցն, որով վարեն զեզինս» (Բ 34): «*Հացի* ծառ. լտ. *ֆրոմինուս*», գղ. *ֆրեն* (*Բառգիրք Քալանթարեանի*): «*Էրաբլ*, *հացի* եւ *ֆրեն*, ցախ, *տիշպուտաղ աղաճը*» (Էմին), այլ յ*Օրմ* *հացի* դնէ զ*ֆրեն*: «*Հացի*. ծառ է. *տիշպուտաք աղաճը*. *հացի*, *հացենի*» (Հ. Մ. Անան.): Հ. Արսէն յԻլիականին Հոմերի զ*մելիա*, գղ. *ֆրեն*, թարգմանէ մշտ *հացի*. [[Երկար մէջբերումներ, Ե 655-657, 694. Ձ 64, 65. ԺՁ 114-116, 812, 813. ԻԱ 160-162, ԻԲ 131, ԻԳ 714, 715]]: «*Հացեաց դրախտ*» (Փ. Բիւզ., Գ, ԺԴ, 38, 43. Խորեն., Գ, ԺԴ, 424): *Հացի* (Յոհ. կբ. 156): «*Սփենդասոս*. *հացի*» (Գաղ. Ա). «*Սփենդամոս*. *հացի*» [Ձ *հազի*] (Գաղ. Բ). Յն. *սֆենդամնոս*, *ֆրասնոս*: «*Ճնջղկի լեզու*. *հացի* ծառի ունդն է» (Բժշ. Ա 144). *Հայբուս*. 1764: «*Ալ նաթաՀ ըլ յասաֆիր*, որ է *լիսան ըլ-յասաֆիրն*, որ է *ծագու լեզուն*, որ է *հացին* ծառին փայտն. յիշած է ի վերայ լիւնին» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 20): «Հայերն կու ասեն, թէ այսոր [*լիսան ըլ-յասաֆուր*] *ծագու լեզու* կ՚ասեն եւ ննջղկի *լեզու* այլ կ՚ասեն. եւ իր ծառին *հացի* փայտ կու ասեն» (անդ, 11, տե՛ս ի *Ձագի լեզու* եւ *Հայբուս*. 1764): «*Լիսան ալ-ասփիր* [Ձ *սափիր*]. *հացի*

սերմ» (*Թրգմ. դեղոց*)։ «Ա՛ռ զհացի փայտն, որ է կովրուն» եւն (*Հայրուս*. 1489)։ Տե՛ս *Ճննդկալեգու* ի Հայկգ.։ «Անչրդի *հացի* փայտ» (Բժշ. Ա., *Հայրուս*. 163)։ Յորմէ ած.՝ «*հացուտ* պուրակ» (Փ. Բիւզ. Գ ժդ 38)։

[[**Հացի դեղ**, տե՛ս **Հացադեղ**։]]

Հացիքի, սեռական *հացըքու* (բառ գաւառի). *հացիքի* (*Արարատ*, ԺԹ, 445). յիշի ի *Հայրուսակ*, թիւ 1664, ուր եւ կամի ուղղել *հացի*, *գի*։ «*Հացըքու* (սեռական, *Արարատ*, 1900, մարտ, 120բ, ծան. 1)։ «Ջեւիչն ասաւ. "Բամակումս է վեր տուած *հացըքուց* շինած բուրը"» (*Մանկայի երգ* [ի Սանաշին], *Լումայ*, 1901, Գիրք Բ, 447)։

Հացխոտ. «*Հացխոտ*, աշխարհաբար. լտ. *Հալիմուս*» եւն (Ստ. Շահրիմ.)։ «*Հացխոտ*. աղէամ բանճար մի է. խարշափուն, *աղիմայ*» (Հ. Մկ. Անան.)։

Հացհամեմ, *-ի*, *-ոյ*, տե՛ս եւ *Բլբենի*. գղ. *փընիւգրեկ*, *սընըգըէ*։ Նոր Հայկգ. գրէ. «*Հացհամեմ*, *-ի*, *-ից*, գ. 1. յն. *աննեթոն*, լտ. *աննեթում*, արջնդեղ, սեւ գնտիկ, սեւ սոնին, *չէօրէք օթու*, *տուրագ օթու*. Բժշկրն. եւ Վստկ. [այլ սամիթ է այս. եւ]։ 2. Իսկ ի *Բառս Գաղիան*.՝ "*Հացհամեմ*, *Հուպան*" կամ ըստ Բժշկարանի՝ "*Հացհամեմն*, *չալմիզ*, *եարիխա*, *պոյ*, *պուլպէ*"». այն է ըստ Մենինսքեայ՝ «*Հուլպէթ*, *պօյ Թօխմի*, *եօնճէ*. *փալինճիյեան*, *փէնում գրեկում*», որպէս յն. *տելիս*, *բուկերոս* լտ.։ Պրս. «*Ջիյրէ* = արբ. *քէմման* = *չաման* = *կիւմեն*, ըստ այլոց խոտն *չաման* = *չէմէն* (Գէորգ)։ «*Ֆընիւգրեկ*, *հացհամեմ*, *Հոռոմ չաման*, *չէմէն*, *պօյ Թօխումու*» (Էմին)։ *Պօյի չաման* = *պաւէ* = *Հուլպէ* = *փընիւգրեկ*. տե՛ս *Հայրուս*., երես 681, ի թիւն 2039։

«*Բլբենի*, որ է *հացհամեմն*, որ է *Հապ ըլ-սավտան*» (Ամրտ., *Անգ. անպ*., Գ 52). այլ է *բլբենի* = յն. *տեղիս*, լտ. *տելիս* = գղ. *փընիւգրեկ*, այլ է *Հապ ըլ սավտայ* = գղ. *նիել*։ *Համմայիմ*, *Հելբէ*, *Հերբէ*, *Հելբեհ*, *փընիւգրեկ*. արաբերէն *Հուլբա* (Մարսել Դըվիկ)։ «*Հուլպա*. հոտով խոտ է. ցանծու է. բանիեով է. *քաթայի* կը գործածեն» (*Խոտրջ*.)։ «*Հէլպէ*, *Հուլպէ*. փասուլյեանման մանր հոտաւէտ հունտ բուսական յանապատի, զոր խառնեն ի հաց» (Տիրացու Հաննա, *Բառք Մխիթարայ Հերացւոյ*)։ «*Ֆէօնում կրէքում*. խտ. *ֆիեն գրեկո*. արբ. *Հէլպէ*. տճ. *պօյ Թօհումու*» (Բէստէն, հ. Բ, 457)։

«Եւ զի շինեալ էին փայտեղէն բերդս եւ տարեալ առ պարիսպն, եւ քաղաքին իմաստունքն ջուր *հացհամեմի* արկին ի վերայ եւ այրեցին, ձգելով կրակ ի նա» (Միխ. Աս., 216)։ *Հացհամեմ* (*Վստ*. ՃԻԷ 90 երիցս, ՃԽԲ 100, ՃԾԷ 107, ՃՀԴ 113)։

Հացհամեմի ունդ = գղ. *գրեն ժուայէօզ*. «*Հուլպէ*. *Հելիբովրա* կամ *հացհամեմ*» (Բժշ. Ա. 144)։ «*Հացհամեմի ունդ*» (*Վստ*. ՄՂԲ 196, Ամրտ., *Հայրուս*. 1000)։ «Ա՛ռ զարէալուր եւ *Հուլպայ*, որ է *հացհամեմի ունդ*, եւ տուղտ. զայս զամէնս աղա՛ եւ մաղէ՛» (Մխ. Հեր., ԻԷ, 75. *Հուլբայ* անդ Խ 117)։

Հացուպանիր, որ եւ *Աղեկտակ [աղջկտակ]*, գղ. *ֆրոմաժոն*. «*Հացուպանիր*, տճ. *էպէմ քէօմէճի*» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 35), պրս. *փէնիրէք* (Գէորգ)։

Հաւաժոր. «*Հաւաժոր*. բոյս, որոյ արմատն է խիստ կարմիր» (*Մանանայ*, 448)։

Հաւակուտկուտ, նոյն բուի (*Հայրուս*. 1672)։

Հաւակտուր, գղ. *ալսին*, *մորժըլին* (Շահրիմ.)։ *Հայրուս*. 1671 գրէ եւ *հաւակտիտ* առանց վկայութեան։

Հաւամիրգ, **հաւամրգի**. *գուշ եէմիշի*, *Լուտուտ* (տե՛ս). գղ. *բուա ա բալէ*, *բուլո*. «*Բալբալա*. *սիրխավարտցէ*. *հաւամիրգ*» (Գաղ. Ա)։ «*Բալբալա*. *հաւամիրգ*» (Գաղ. Գ)։ «*Բալբալա սիրխավալ*, որ է *հաւամրգի*» (Գաղ. Դ)։ բերեւս *բալանիրիս*, *բալանիրա*, յն *բալաններա*, որպէս կարծէ եւ Հայկգ. ի *Հաւամրգի*։ Պրս. «*քէխէչ* նշանակէ զբոյսն զայն, զոր կազմեն աւել» (Գէորգ)։ *Հաւամրգի* (Մխ. Գոշ)։ «*Հաւամրգի*. տունկ ինչ է, զոր աւելս մեծս կազմեն ըստ ցարասւոյն եւ կողովս հիւսեն, նմանապէս ցցարասին» (Բ 11)։ Գղ. *բուլո* *, *սորգո* *. Էմին՝ *բրիւեէր*. կայ պրս. *մէնիյէ* (Գէորգ)։ Տե՛ս *օզիրիս* եւ Լըկլէր, Ա., թիւ 200, Գ 1583։

Հաւետիկ. տե՛ս եւ *Աւետիկ*։

Հաւէն. պղպեղ, ո՛ր սեւ եւ ո՛ր կարմիր (*Բառք վանեցւոց*, Հ. Սուք. Պարոնեան, թիւ 19)։

Հաւլիլիկ. տե՛ս եւ *Կատուի լըլիչ* (*կատուի լիլիկ*^). տե՛ս եւ *լիլիկ* ի *Հայրուս*.. «*Հավլիլիկ*. խոտ է,

երկու թզաչափ կը բարձրանայ եւ ծառի պէսնակ կ'ըլլայ. ինք փշոտ է. պտուղն անուշ է առանց փուշի եւ ոսպի չափ կ'ըլլայ կամ խոշոր ալ կ'ըլլայ» (*Խորտրջ.*, 42): Կայ պրս. *հավլէլու*, լտ. *ֆէնիկուլում*, գղ. *ֆընուչ*, *ըէզէնէ* ըստ Բէստէնի, Բ, 494 եւ Ցանկ: Պրս. *խէվէլլու*. վայրի սամիթ, արբ. *ռազիյանէի պէրրի* (Գէորգ):

Հաւկթիկ, որ եւ *Մատիտեղ*. *Հայբուս.* 1679:

Հաւկտենի. նոյն բուի ընդ *Հաւամրգի*. ի բառիցն *հաւ*, *կուտ*. «*Դարչիչան* ... զերդ *հաւկտենի* է» (Բժշ., *Հայբուս.*, երես 677, թիւ 565, ուր մեկնի «այսինքն հաւկթի նման», այլ սխալ բուի: *Հաւկթենի* (Բ 58). այսչափ միայն գրի անդ: «*Հաւկթենի*. ցախ մի, ուսկից աւել կու շինեն» (*Հայբուս.* 1678):

Հաւկտիկ. բանջարեղէնի տեսակ մը (Ա. Յ. Այվազեան, *Յուշիկք բիւթանականք* [այս ինքն բառք Պրուսայի գաւառի]. (*Խիկար* Յ. Յ. Պարոնեանի, 1887), *ախզտեմ*, ըե՛ր, երես 59 [չպահպանուած]:

Հաւուկտիկ. «*Հաւուկտիկ*. տեսակ մը բոյս, որ գարնան իբր բանջար կ'ուտուի» (Յովհաննէս Գազանճեան, *Եւդոկիոյ գաւառաբարբառը*, *Հանդէս ամսօրեայ*, 1898, յուլիս, 209ա):

Հաւտխող, -ի, գղ. *մարրիւբ*. եւս՝ Հոտոսայ, Հոտոցայ. Նո՞յն եւ *Հոտոցուկ* (*Հայբուս.* 1738). Նման է ձայնիւ եւ *Հոտըզուենի*. «*Անճիտայ*, որ է *Հաշիշ ըլ- քալպն*. եւ հայն *հաւտխօ* ասէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 28ա): «*Հաւտխաւլ*, որ է *ֆարասիոնն*» (անդ, 138). «*Անճիտայ*, որ է *Հաշիշ ըլ- քալպն*. եւ *չէրնաթ* այլ կու ասեն եւ *սուֆ ըլ-յարզ* այլ կու ասեն. եւ ինքն *ֆարասիոնն* է» (անդ, 28): «*Պռա-սիօն*, որ է *հօտխուն*» (Բժշ. Բ 335): «Շանխոտ. *ֆարասիոնն*, *հոտոցան*» (Բժշ. Դ 175). «*Նարմուշք*, որ է *Նարմուշքն*, որ է *Նարմուշտայ* ... եւ ոմանք ասեն, թէ *հոտոսան* [կամ *հոտսան*] է» (Ամրտ. *Անգ. անպ.*, *Հայբուս.* 2189): Կայ գղ. եւ *սիկոպ*, որ եւ՝ ջրային *մարրիւբ*: Կայ գղ. եւ՝ *բալլոտ*, որ եւ սեւ *մարրիւբ*, յն. *բալլոտէ*. լտ. *մարրուբիում*, իտ. *մարրոբիօ*, է արբ. եւ տճ. *ֆէրասիօն* ըստ Բէստէնի: «*Շանշուեյիք*, *ֆարասիոն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ 438): «*Պրասիոն*. *մեղրածուծ*» (Գաղ.). «*ֆրասիոն*. *մեղրածծուկ*» (*Թրգմ. դեղոց*). «*փրասիոն*. *խորտակ ծորորուն*» (*Թրգմ. դեղոց*): Նոր Հայկզ. սխալ գրէ. «*Հօտխուն*, գ., անուն խոտոյ, որ ըստ յն. ասի *գայլոտն*, *լիկոպուս*, *լիկոպոդիում*, *ֆերասիոն*. Բժշկրն.». *հօտխօ*, զի *ն* դիմորոշ յօդ է: Շահիմ. *մարրուբիում* կոչէ զ"խոլորձ, որ եւ՝ շնխոտ". տե՛ս ի *Խոլորձ*. այս եւս սխալ բուի: Էմին՝ «*Մարրիւբ*, պրասի, տունկ ինչ, *ֆէրասիյուն*, *էնճիտէթ*». տե՛ս անդ եւ *լիկոպոդ*, *բալլոտ*:

[[**Հաւրծան**, գրուած **հաւըրծան**. տե՛ս **Խաւարծիլ**:]]

Հաւրուտ եւ մաւրուտ, ռամկօրէն **խօրօտ մօրօտ**, **հօրօտ մօրօտ**. «*Հորոտ* կոչեցեալ ծաղիկն՝ ի Յաննապոննուխ լեառն վերին Բասենոյ» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 89): Ագաթ. 480. Մխ. Գոշ, *Առակք*, Լ, 36: «Թէ խոցն որդնէ, *հօրօտ մօրօտ* ծաղկի տակ աղա՛ մանր, մեղրով եւ բացխով շաղէ՛ եւ դի՛ր. բափէ զորդն» (Բժշ. Ա., *Հայբուս.* 1761): «Ահա՛ գընան խընդիր *հօրօտ մօրօտ* ու ձունծաղիկն Ու դրկեն *թէզ* եւ ձէնեն զշուշանն, որ է ի մէջ դաշտին. Ելնէ, լըսէ եւ գայ այն *Նինոֆարն* ի մէջ ծովին, Ու ձէնեն զօսամբ ծաղիկն ու հետ իրենն *ըզնարկիսին*» (Կոստանդին Երզնկացի, *Այսաւր եղեւ պայծառ գարուն*, իմ *Երգարան*, Տետր Դ, 5):

«Որ թէ *զխօրօտ մօրօտն* ասեն, չէ նըման, Եւ կամ *ըզնունուֆար*, *Նարկիզն* եւ շուշան, Մուրտ եւ *մարուֆ* ծաղկունքն եւ *ամիրբէչխան*, Ոչ մանուշակ ծաղիկ՝ նըշանըն գարնան» (*Յորժամ պըլպուլն եկեալ՝ մըտաւ ի յայգին*, տաղ Ե, 165). ի *Ճռաքաղ* 1859 երես 153ա գրի. «Որ թէ *զհօրօտ մօրոտն* ... եւ Էմիր իշխան, Ոչ մանուշակ, նըշին, նըշանքըն գարնան»: «*Խօրօտ մօրօտ* մաւի ներկած՝ ժանկառի նման *սուրմայուն*. Աչեր հազար պիտի նայի, խառներ հետ ախլայխնծորուն» (Դաւ. Սալաձոր.):

Հաւրուտ եւ մաւրուտ. «Հէքաթների մէջ մեծ դեր են կատարում անմահական ծաղիկները, խնձորները եւ ջրերը. սրանց վերագրած յատկութիւնները հեքաթների ծնունդի չափ հին են ի հարկէ, հին ժամանակներից մեզ հասած, դրանք համամարդկային են եւ դարձեալ հերանոսական: Ջուրը տալիս է առողջութիւն, իսկ բոյսը՝ կեանքի երկարութիւն. երկուսն էլ արտայայտիչ են իրենց մէջ պարունակած ոգու զօրութեան. ջրի ոգի եւ բուսականութեան ոգի: Այս երկու ոգիների մարմնացումն են *հորոտն ու մորոտը**, իբրեւ գեղեցիկ ծաղիկներ, որոնք ժողովրդին ներկայանում են ճիշտ այդ ձեւով:

* Այս ծաղիկների անունները պարսկերէն նոյնանում են ջրի եւ բուսականութեան ոգիների անուններին. *Ամէշասպենդա՝ Հաւրվաղադ (հորոտ), ամէրվատատ (մորոտ)*» (Գալուստ, ի յօդուածին *Ճակատագրի տօնը (Համբարձում)*, վինեակ

հանելու սովորութիւնը եւ վիճակի երգերը, Արարատ, 1908, Նոյեմբեր, երես 1029):

Հաւրուտ եւ մաւրուտ. «մէկ ծաղիկ է» գրեցի յիմ յօդուածին Դաւթի Սալաձորեցւոյ, երես 119, թիւ 59: Տե՛ս եւ զհինգերորդ եւ զվեցերորդ *Ամշասպանդա* նախնի պարսից, որ կոչին *Խուրտատ* (շահապետ ջրոց) եւ *Ամէրտատ* (շահապետ ծառոց եւ պտղոց), որոնք իրարմէ երբեք չեն զատուիր: Տե՛ս ի *Պէպուն* եւ «Սոսուն դեղին ծաղկօք եւ Պայպուն կապոյտ ծաղկօք, որ ի միասին բուսանին եւ գիշերը իրարու կու փաթթուին»: Տե՛ս եւ յիբն էլ-Բէյտար, հ. Ա., թիւ 174, երես 160: [14 յունիս 1914:]

«*Հորոտն ու մորոտը*» եւ ի ծան. 1. «Այս ծաղիկների անունները պարսկերէն նոյնանում են ջրի եւ բուսականութեան ոգիների անուններին. *Ամէշասպէնդա՝ Հաւրվադադ (հորոտ), ամենվատատ (մորոտ)*» (Գալուստ, ի յօդուածին *Ճակատագրի տօնը (Համբարձումը), վիճակ հանելու սովորութիւնը եւ վիճակի երգերը, Արարատ*, 1908, Նոյեմբեր, երես 1029):

«*Մօրուտ, հօրուտ*. լտ. *Հիասինթուս բակեմոզուս զոզոնէի*. տերեւք հինգ կամ վեց ելեալ յարմատոյն՝ տարածին ընդ գետին, որոյ երկայնութիւն է իբր կէս ոտնաչափ, նեղ, շերտաւոր, ստուար. ծաղիկն՝ մանր, սկահաձեւ, միաթերթի, հերձեալս վերուստ ի հինգ շրթունս եւ ողկուզաձեւ համագումար ի գոյնս գոյնս: Յաճախ է տեսանել ի Հայս» (Տահիմ.):

«*Հօրուտ* կամ *հօրոտ, -ի, -ից*, գ., նոյն եւ ոմկ.. ծաղիկ գեղեցիկ եւ անուշահոտ իբրեւ զկանթեղաշար փունջ մանրիկ շուշանաց, հանգոյն սմպուլի. է՛, որ՝ կապուտակ, եւ է՛, որ՝ սպիտակ. *բուրեա, բիւրեա չիչէյի*» (Հայկզ.):

«Կանաչ ծարուր, *հօրուտ* կանաչ *թութիայն*, որ է ծաղիկ. Կարինոյ սարն լինայ» (Սիմ. Կամարկապցի, *Հայրուս*., 1178):

«*Օրոտ ու խորոտ. գարապաշ չիչէկի*» (Սիմ. Կամարկապցի, *Հայրուս*. 3259): Սխալ է ի *Հայրուս. խորոտ*՞ 1133, 2234, 3372. ուղիղն է *խոտոր* կամ *սխտոր*. ջնջելի է *խորոտ* եւ յերես 678, բ. 1133:

Լուայ ի Տ. Գարագաշ Քերոբէէ (ի հօրէ Կարապետ Գարագաշի), զի ծաղիկ *հօրօտ մօրօտի* է ի գոյն "լէյլակ"ի:

«*Թութեայ, թութեա չիչէյի. հաւրուտ*, ծաղիկ» (Պօզան.): Էմին՝ «*տիւրերէօզ, բրաքիոն*, *հօրուտ* եւ *մօրուտ*, տունկ, *թէպէր*». գղ. *տիւրերէօզ*՝ բոյս, որոյ ծաղիկն սպիտակ է եւ հոտաւէտ (Լիտրէ): Պրս. *Հարութ վէ մարութ*. անուանք երկուց անկեալ հրեշտակաց (տե՛ս ի Գէորգ): Կայ ի *Բառս Գաղիանոսի*. «*Եղեգորսքորոս. հաւրաւտ*» (Գաղ. Ա). «*Եղեգորսքորոս. հաւրօտ*» (Գաղ. Դ). «*Եղեգորսքորոս. հօրօտ*» (Գաղ. Գ). «*Եղեգորոքոս. հարուստ*» (Գաղ. Բ): «*Հօրուտ մօրուտ. զէրէն զիւմպիւլ*». այսպէս գրեալ եմ յիմ Առձ. ա. տպ.:

Հերձի, *-ձւոյ*, գղ. *լանտիսկ*. Նո՞յն եւ *Կուենի*. Դան ԺԳ 54. գղ. դնի *լանտիսկ* ի Սասի. տե՛ս *լանտիսկ* ի Լիտրէ: *Լանտիսկ* ասի եւս ռամկօրէն *մաստիկ դը Սիո* (Պուատըվեն). «Յաճախ է ի կղզին Քիայ», ասէ եւ Հայկզ. յոր սակս կոչի ի բուրքաց *Սագըզ ատասը*: Էմին՝ *լանտիսկ*: *Հերձի* եւ *սղոցի*, որ կը գտնուին միայն ի մարգարէութեան Դանիելի, յոյժ յաջող բառական թարգմանութիւնք են յունականացն *էքինոս*, գղ. *լանտիսկ* եւ *պրինոս*, գղ. *գրէօզ, չեն-վեր. էքինոս* բառին ծագումն բուն ի *էքիզո*՞ բայէն, որ է 'հերձում, պատառեմ', իսկ *պրինոս* է ի *պրիո* 'սղոցեմ' բայէ. Դանիէլ բառախաղ մի գործած է [քննելի յեբրայական լեզուի], եւ այս բառախաղ ճարտարութեամբ թարգմանեալ է նա եւ ի հայ լեզու. «ընդ *հերձեաւն ... հերձէ* զմեզ ընդ մէջ» (Դան ԺԳ 54, 55). «ընդ *սղոցեաւն ... սղոցել* զքեզ ընդ մէջ» (58, 59): *Հերձի* յայլ գիրս ասի յունականաւն *սքինոս* ... եւս *ծորենի*, *մաստաքի*: *Սղոցի* յայլ գիրս ասի *անձիանի* կամ *անձնի*. դը Ժնու սխալ թարգմանէ զ*հերձի* *սըրիզիէ* եւ զսղոցի՝ *պրիւնիէ* (քնն. ի Վուլգատայն): Սասի զ*Հերձի* թարգմանէ *լանտիսկ*. տե՛ս ի Լիտրէ:

Հինայ, *-ի*, գղ. *Հեննէ, տրոէն*՞. պրս. *փէթաք*, տե՛ս ի Գէորգ: «Եփ մարդ *հինա* դնէ ոտից եւ ձեռացն» (Բժշ. Ա 20): «*Հինայի* տերեւ» (*Հայրուս*. 718): «*Հինայի* ծաղիկ» (*Հայրուս*. 949):

Հինգտերեւ, հինգտերեւեան, հնգատերեւ (Հայկզ.). տե՛ս եւ *Մատնիկ, Սիրալախուր*, գղ. *ագնուս-կաստուս*. «Գողեց նանկ, որ է *հինգտերեւէն* խոտ» (Բժշ. Բ 325): «*Հապ ալ-ֆակ. փանջնակշտի* սերմ կամ *խնկատերեւ*» (Գաղ. Ա). «*Հապ ալ-ֆակ. փանջնակշտի* սերմն կամ *խնգատերեւ*» (Գաղ. Դ): «*Խալխա*, որ է *արսատն*, որ է *պխթանն*, որ է *սանկու սապուեայ*, որ է *չանճուշապուեան*, որ է *Հապ ըլ-*

փաղթն. եւ յայտնին այն է, որ *փանդայֆիլոն* է, որ [է] *հինգտերեւն:* Այս ամէն անուանքս *փանճանկուշտ* ասէ. եւ պարսկերէն 'վայրի պղպեղ' կու ասեն. եւ ի Շիրազ *տիլաշուպի* հունդ կու ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 103), «զորոյ *[զփէնճէնկիւշթի]* զսերմն կոչեն շիրազեցիք *թուխմի տիլաշուպ*» (Գէորգ ի *Փէնճէնկիւշթ.* տե՛ս անդ եւ *Տիլաշուպ): «Ակնուս քասթուս,* իտ. *ալբերո դել պեպէ* ... իսկ սերմն, որ գտանի ի ծաղկի անդ, է բոլորշի, գորշագոյն, ստուար, տտպահամ եւ համեմային զօրէն պղպեղի» (Ռէստէն): *Փանջնակշտի* բուն ուղղելի *փանջակշտի*, իսկ *խնգատերեւ* կամ *խնկատերեւ՝ հնգատերեւ.* այլ *Հայրուս.* 1078 գրէ նոյնպէս *խնկատերեւ:*

Հինի ծաղիկ, թուրք. *գընա չիչէյի,* գղ. *բալսամին.* Աքանասեանց, 64. *հինածաղիկ, հրաշածաղիկ, գընաչիչէյի, բուրաստանք.* լտ. *իմպատիենս.* տե՛ս եւ Մէնէվիշեան, *հինածաղիկ, բալսամինո,* երես 64:

Հիրիկ 1, խունկ. Ելք Լ 24, Եզեկ ԻԷ 19. *Պտմ. Թեկղի.* եբր. *կիդդահ* (Կելսիոս, Բ, 185):

Հիրիկ 2, շուշան, գղ. *իրիս.* «Ի յեզըր Փիսոն գետոյն բուսանիս, *հիրիկ* աններման, Դեւքըն սասանին ի քէն եւ լինին յոյժ հալածական» (Գր. կթ. Աղբ., *Դու ես յԱդինայ դրախտէն,* 81):

Հիւ, չիք ի *Հայրուսակն.* Նո՞յն եւ *Նիւ.* «Ոմանք՝ դառն, որպէս *հիւն,* սխտոր եւ սոխ» (Մտթ., *Վեցօր.,* 59):

Հնգատերեւ. տե՛ս Հինգտերեւ:

Հնդիկ. «*հնդիկ արմաւ*»: «*Հնդիկ ընկուզի ծառ*» (*Հայրուս.* 2178): «*Հնդիկ փայտ սեւաքոյր*», որ եւ *Եբենոս, Ոպնիազ (Պտմ. Աղեքս.): Հնդկցի ծոր:*

Հողմ[ա]խոտ. Բժշ. Է 78. «*Հողմախոտ.* յիշէ Կամարկապցին եւ թուրքերէն գրէ *զարընճա եու-վասի*» (*Հայրուս.* 1709):

Հողմավարդ, *-ի,* գղ. *շարդոն դը Նոտրը-դամ, շարդոն-Մարի,* որ եւ *լէ դը սենտ-Մարի* (Լիտրէ). «Ա՛ռ շէկ չամիչ ... եւ *պատվարդ,* որ է *հողմավարդ,* եւ *չուքազ* երեք երեք դրամ» (Մխ. Հեր., 84): Կայ եւ *շարդոն բենի,* որ եւ *կարթամ լենէօ:* «*Պատավարդ.* ինքն փշով խոտ մն է, մեծ տերեւնի ունի եւ հունդ ունի. նման է *ասփրի հնդի.* եւ լաւն այն է, որ տերեւն սպիտակ լինի ... Ասէ Պատեհին, թէ իրեն *շավքաթ ըլ-պազա* կու ասեն, եւ ինքն ի լերունքն եւ ի ավզոտ տեղեր կու բուսնի. եւ իր որձային հաստութիւնն մատի մի չափ լինի եւ այլ հաստ լինի. եւ իր յերկայնութիւնն ա̅, բ̅ կանկուն լինի եւ այլ աւելի եւ այլ պակաս լինի. եւ գունն սպիտակ լինի, եւ ծաղիկն մանուշկին գունովն լինի. եւ հունդն նման է *ասփրին հնդին.* եւ փուշ ունի. եւ լաւն այն է, որ տերեւն սպիտակ լինի» (Ամրտ., *Անգ. անպ.,* Ալիշան, 224. Գ 240): Տե՛ս *բեդեգար* ի Մ. Դըվիկ, որ ստուգաբանէ յարաբ-պարսկականէն *պատավարտ* = գղ. *շարդոն դը Նոտրը-դամ.* տե՛ս *Բադաւարդ* յՕտար: «*Ազսուս.* ինքն փուշ մն է, որ իր տերեւն նման է *շավքաթ ըլ-պայզին* տերեւին. եւ այն զէտ վարդ մն է, եւ ի վերայ զէտ բամպակ իրք մն կու լինայ [*այս է Անիւ*]. եւ ի լերունքն շատ կու լինայ. եւ ի Անդալիա այսօր *պարաս ըլ-պանճ* կու ասեն» (Ամր., *Անգ. անպ., Հայրուս.* 68). «*Ազսուն.* ինքն մաշն է, եւ իրենն *պատավարտ* այլ կ'ասեն» (անդ):

Հողմափայտ, ռամկօրէն հովափայտ, գղ. *լա գրանդ քելիդուան, էկլեր.* «*Մամիրան. հող-մափայտն*» (Բժշ. Ա. 145). «*Հողմափայտ,* որ է *մամիրանի չինին*» (Ամրտ., *Անգ. անպ.,* Ալիշան, 156). *Հայրուս.* 1300:

Հոյզ, *հուզոյ, սիւբստանս ռեզինէօզ,* տե՛ս ի Լիտրէ *Բոմ. խիժ ռեզին, կոէզ, գոմ.* «*Հոյզ,* խիժ կամ լացուր կամ կոիզ կամ մաղբ» (*Բառք Եբրողականք*). տես յիմ *Հայկ. բոյսք.,* երես 26:

Հոմնի, *-նոյ.* «*Հոմնի* հա՛ն իր տակովն, սրբէ՛ եւ կտրտէ՛ քաջ ... հա՛ն զերակն եւ ի ներս *հոմնի* լի՛ց եւ զհիւանդն ի ներս նստո՛» (Բժշ. Ա., 352):

Հոյն, *հունի,* ռամկօրէն հոն, հուն. տե՛ս եւ *Զողալ.* գղ. *կորնույ.* պրս. *սիւրխէք, չում, զըզըլճըգ* եւն (Գէորգ). Ագաթ. 476. «Ի կորզոյ *հունից* աղացեալ բրէին, արարեալ բլիթս» (Գր. Մագ., ԻՁ): *Բառք Գաղիանոսի.* տե՛ս ի *Հալիք:* «Լինի [ի Կիլիկիա] ... սերկեւիլ եւ յունապ եւ կասկ եւ *հոյն* յանտառի եւ *սինօպար* ի փինոյ» (Թովմա վդտ., *Նկարագիր Կիլիկիոյ, Ոսկիփ.* Գ 47): «*Ղարանիայ,* որ Ճ̅ չում եւ կո այլ ասէ եւ *հոն* այլ ասէ. եւ թուրքն *զզըլճուխ* ասէ եւ *զողալ* այլ ասէ. եւ Ճո *ակրանեայ* ասէ. եւ ինքն զլուծումն կու կապէ ... Ասէ գրոցս ժողովողն, թէ ինքն ծառ մն է, որ ի լերունքն կու բուսնի ի հով տեղեր, եւ տերեւն *ազատարախտին* տերեւն կու նմանի եւ ծիրապտղի եւ յորժամ խակ է, նա կանանչ է

եւ յորժամ հասնի, կարմիր լինի որպէս արուն, եւ համն տտիպ է, եւ կապող է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 16ա): «*Հուն. տն. գըգըլճըգ*» (*Խոտբշ.* 47):

Հոյնի, գղ. *կորնույկ*. «Շիտակ միմաղն եւ վայելուչ ծաղիկք, *հոյնիք*, էսխենիք» (*Յղ. ծառոց*):

[[**Հոն, հուն**, տե՛ս **Հոյն**:]]

Հոշի. Նո՞յն եւ *Հոսի*. Իննին., *Նոր Հայաստան*, 183: «Կաղնու երեք ցեղ. *հոշի*, որոյ տերեւքն՝ ձուաձեւ, մեծ եւ լայն քան զմիւս ցեղիցն. պլուտ իբր 5 հարիւրորդամետր երկայն եւ 8 հարիւրորդամետր շրջապատ. քաղցրահամ եւ ուտելի խորովելով: *Մարծըրի*. սորա տերեւք նեղ են եւ երկայն, պլուտքն՝ դառինք, հաւասար ըստ շրջապատին պլուտիցն *հոշւոյ*, այլ երկայնութիւն՝ կիսով չափ փոքր. սորա փայտն՝ ամրագոյն եւ տեսողագոյն քան զմիւս տեսակացն: *Գղըորի*. տերեւք նման *հոշւոյն*, այլ սակաւ ինչ փոքր, եւ պլուտքն՝ փոքր եւ նուրբ եւ դառն, զոր խոզքն ուտեն, ուստի եւ *խոզկաղին* կոչի. ի նմանէ ժողովի գղտոր» (*Արեւելք*, թիւ 771, Հ. Սուք. Պարոնեան, թիւ 17): «*Հօշի* բիր ֆօքլիան վերուց, զարկուց կրնկա նան, Պատաւ, ինկաւ ուըր քընճան» (Պարերգ սասնցոց, *Բիւրակն* լրագիր Կ. Պոլսի, 1 օգոստոս 1900, երես 47բ):

Մեկնին անդ. «Հօշի» = կաղնի ծառին մէկ տեսակը. «ֆօքլիան» = կանկար հանող. «զարկուց» = զարկաւ. «նան» = գարշապար. «պատաւ» = 'ինկաւ' բառին հոմանիշ, տեղական բառով. «ուըր» = վրայ. «քընճան» [քուննն°. ես] = երկար ծոպեր:

Հոշիրուակ, գղ. *ժոն օղորան°*. կայ պրս. *խօշպուլ*, ած.,'անուշահոտ' (Գէորգ). տե՛ս եւ *խուշրինակ* *յԱրքայիկ* ի *Ստորին հայերէն*. Խոր., *Աշխարհ.*, 616:

Հոշհոշիկ. նոյն բուի ընդ *Օշօշ*. «*Հոշհոշիկ*. բոյս, որ ծալ ծալ տերեւներ ունի եւ ծաղիկ սպիտակ եւ դեղնագոյն» (*Մանանայ*, 448):

Հոռոմ. *հոռոմ աւշինդր*. տե՛ս *Աւշինդր: Հոռոմ երնջայ*. տե՛ս *Երնջան: Հոռոմ երնջնատակ*. տե՛ս *Երնջան: Հոռոմ թաղբ*. տե՛ս *Թաղբ: Հոռոմ թուր*. տե՛ս *Թուր: Հոռոմ խունկ*. տե՛ս *Խունկ: Հոռոմ ծաղիկ*. նոյն *Հոռմանի ծաղիկ = Երիցուկ* (*Հայրուս*. 1749): *Հոռոմ կորեակ*. տե՛ս *Կորեակ: Հոռոմկոէզ*. տե՛ս *Կոէզ: Հոռոմ չաման*. տե՛ս *Չաման*, որ եւ *Հոռոմցի չաման: Հոռոմ սամիթ*. տե՛ս *Սամիթ: Հոռոմ սնֆուլ*. գղ. *ազարե*, արբ. *սիւմպիւլի րումի*. տե՛ս *Նար* յէմին եւ ի Պօզաճեան: *Հոռոմ սմբուլ* (*Հայրուս.* 2184), որ եւ *Հոռոմցի սմպուլ: Հոռոմ սոնին*. տե՛ս *Սոնին:*

Հոռմի նանէ, մարսամէ (Բժշ.), տե՛ս *Անանուխ* ի Հայկզ.. գղ. *մանթ-կոկ, մանթ գրեկ: Հոռմի շահտանա* (*Հայրուս.* 1938), որ եւ *Հոռմցի շահտանան*, գղ. *էպլիւրժ: Հոռմի սպանախ*. տե՛ս *Սպանախ: Հոռմի տարգոն* (*Հայրուս.* 365), որ եւ *Հոռմցի թարգոն:*

[[**Հոռմցի**]], **Հոռոմցի**. *հոռոմցի սմպուլ* (*Հայրուս.* 565), որ եւ *Հոռոմ սնֆուլ: Հոռոմցի փենունայ*. տե՛ս *Փենունայ:*

Հոռմցի աննիտան (*Հայրուս.* 1312): *Հոռմցի ընկուզ* (*Հայրուս.* 1720) եւ *Ճավզի ռումի* յՕտար: *Հոռմցի բոզիան՝ անիսոն* (Ամրտ., *Անգ. անպ.*). տե՛ս *Անիսոն* եւ *Հայրուս.* 109: *Հոռմցի բարղոն* (*Հայրուս.* 1391), որ եւ *Հոռմի Տարղոն: Հոռմցի կաղամբ: Հոռմցի կարոս* (*Հայրուս.* 1391): *Հոռմցի կղմուխ* (*Հայրուս.* 1426): *Հոռմցի ձիւբ: Հոռմցի շահտանան* (*Հայրուս.* 2247, 2343): *Հոռմցի չաման*, որ եւ *Հոռոմ չաման: Հոռմցի տատի* (*Վստ.* ԽԹ 38 եւ ծան. 2, *Հայրուս.* 2930): *Հոռմցի ցորեան = կակուլ* (*Հայրուս.* 1264 = *խպլուսա* 3026): *Հոռմցի քարասիա* (*Հայրուս.* 3159):

Հոսի. Նո՞յն եւ **Հոշի**. կայ յն. *օկիւա*, [[գղ.]] *Հեռըը*. «*Կորատ. հոսի*» (*Թրգմ. դեղոց*): «Զոր օրինակ այրէ հուր զանտառս զոչ պտղաբերս փայտից, եւ բոց կիզու *զհոսի*, որ՝ ի վերայ լերանց» (Դանիէլ Ասորի, *Մեկն. Սղ. ՁԳ*, *Հայրուս.* 1728): Նո՞յն եւ *Հունի* (Յոհ. Վանական, *Հայրուս.* 46): Նո՞յն եւ *Ոսի*՝ բուփ փշոտ ի Սիւնիս (*Հայրուս.* 2399): *Հոսի կոէժ*, գղ. *գամ ազըագանտ = տրակաքանթա, սագահում* (*Բժշ., Հայրուս.*, երես 680, թիւ 1728):

Հովափայտ. տե՛ս **Հողմափայտ**: Բժշ. ԺԱ 14. պրս. *մամիյրան, ծիծեռնախոտ, գոլանկըճ օթի* (Գէորգ):

Հովիւ. *հովուի բիր*, որ եւ *մատիտեղ*. *հովուաց բիր, հովուի զաւազան*. արբ. *ասա ըւր-ըաի* = *զաւազան հովուի*, գղ. *ռընուէ*. «*Պարսի անդարու. հովվի բիր*, որ է *մատիտեղ*» (Բժշ. Ա. 145): «Ա՛ռ

զառնալեզվի ջուր եւ բրսի անդտարի ջուր, որ յարապն *հովուի բիր* կոչեն, եւ ձուի դեղնուց ... զամէնն ի մէկ տեղ ժողվէ՛ եւ հոկնայ արա՛» (Մխ. Հեր., ԻԲ, 45): «*Հովուի բիր*» (*Վստ.* ՅԺՆ 214, ՅԺԸ 216): «*Հովուի գաւազան*, որ է *յասայի ասայի*, որ է *մատիտեղն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 156ա): «Ա՛ռ զառնալեզվի ջուր եւ *հովուաց բրի* ջուր եւ փրփրեմի ջուր ... զայս ամէնս յիրար խառնէ՛ եւ ի բան տա՛ր, որպէս այլ հոկնայի ըռասմն է» (Մխ. Հեր., ԼԴ, 96-97): Կայ լտ. *վիրգա պաստորիս*, իտ. *վերգա դել պաստոր*: Գրս. *պէրսխյանտարու* (= *պէրսխյան տարու*). է խոտ ինչ երկայն եւ փշալի, որոյ գլուխն է որպէս ձու, որ առ բժիշկս ասի *ասա իւռ ռաի*, այսինքն *հովուացուպ*, *չօպան տէկէնէկի*. ոչ վասն յենլոյ նորա ի նա, այլ վասն շատ ուտելոյ զսա հովուին ի քաղցնուլն» (Գէորգ):

Հովուի կլիր, օրորանչ. տե՛ս *Աղբերաց արիւն*. տե՛ս եւ *Առիւծախոտ*, *Կաղնձնի*:

Հովուի փող, գղ. *ֆլիւտ դը բերժէ*, *ֆլիւտո*, *պլանտեն դ'օ*, *պլանտեն ակուատիկ*, լտ. *ալիսմա պլանտագո*. թուրք. *չօպան տիւտիւյիւ*. «*Հովիւին փողն*, եւ թուրքն *չօպան տուտուկի* ասէ, եւ տերեւն նման է ջղախոտին տերեւին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ, 236): «*Միզմարի ռայի*, որ է *հովիւին փողն*, որ թ̅ *չօպան տուտուկի* ասէ. եւ տերեւն նման է ջղախոտին տերեւին. եւ յերկայնութիւնն մէկ մէկ թիզ կու լինի եւ այլ աւելի, եւ զազաքն՝ զէղ անգլուխ կու լինի. սպիտակ ծաղիկ կ'ունենայ, եւ ի դեղնութիւն կու ֆշտէ. եւ տակն ի սեւ վրացի կոճ կու նմանի, բայց անուշահոտ կու լինի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 206): Էմին՝ «*ֆլիւտ դը բերժէ*, *ֆլիւտո*. զառնալեզու ջրային. *չօպան տիւտիւյիւ*»:

Հոտըզուենի, որ եւ *Բարձուենեակ*. նման է ձայնիւ եւ *Հաւտիսոյ*. «*Հոտըզվենի* կամ *բացվենիկ*. խոտ է, որոյ տերեւն՝ իբրեւ զօշնդրի. բարձրանայ որպէս ոտնաչափ մի. ծաղիկն բոլորի ի բազում մանրիկ եւ սպիտակ ծաղկանց մակաւասար առ միմեամբք, նմանաձեւ *վանիլեայի*» (Հ. Եփրեմ Սեբեան, Ա., 35):

[[Հոտոսայ, հոտոցայ, հոտոցուկ, տե՛ս Հաւտիսոյ:]]

Հոփի, տե՛ս Ոփի:

Հրակ. *Հայբուս*. 1751:

Հրանուկ. *Հայբուս*. 1752:

Հրբուակ, -*ի*. չիք ի *Հայբուս*.. Խոր., *Աշխարհ.*, 615: Գրս. *խիյրպույա* նշանակէ համեմ ինչ (Գէորգ): «*Խէրպուէ*. փոքր *ղազուլէն* է» (Ամրտ., *Հայբուս*. 3330):

Հրիզոն. Խոր., *Աշխարհ.*:

Հրշակ. տե՛ս Գահրշակ:

Ձ

Ձագ. *ձագ* է աստ մեղուի ձագ, որպէս եւ *Ձագուց մեղր* = *օղուլ պալը*. գղ. *մելիս*, որ եւ *Թրնջխոտ*, թուրք. *օղուլ օթու*, պրս. *թիւրիւնճան*, զոր տե՛ս ի Գէորգ. կայ եւ [[գղ.]] *իւլմեր*, որ եւ *Հերբ օ (զ)աբեյ*:

Ձագի դեղ. «*Աթրունջան*, *ձագի դեղ*» (*Թրգմ. դեղոց*):

Ձագի կամ *ձագու լեզու*, որ եւ *Ճննդկի լեզու* կամ *Ճննդկալեզու*. թարգմանութիւն արաբերէնի *լիսան իւլ-ասֆուր*. «*Լիսան ըլ-ասֆուր*. եւ ինքն տարին պտուղն է ... եւ իր ծառին կեղեւն պալղամ կու լուծէ, եւ յիր տերեւն կապողութիւն կայ ... եւ իր փոխանն *ճավզն* է եւ կարմիր *թուտարին* է: Պատեհին ասէ, թէ ինքն ծառի մն միրգ է, որ պ̅ *աճր* կ'ասէ եւ *զուպանի քունճուշկ* կ'ասէ ... եւ իր ծառին տերեւն կապող է ... եւ հայերն կու ասեն, թէ այսոր *ձագու լեզու* կ'ասեն եւ ճնճղկի լեզու այլ կ'ասեն եւ իր ծառին *հացի փայտ* կու ասեն» (անդ, 111): «*Ձագու լեզու*, որ է *լիսան ըլ-յասաֆիրն*. յիշած է ի վերայ լիւնին եւ կատարեալ պատմած Աստուծով» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157): «*Ալ նաթաշ ըլ-յասաֆիր*, որ է *լիսան ըլ յասաֆիրն*, որ է *ձագու լեզուն*, որ է հացին ծառին փայտն. յիշած է ի վերայ լիւնին» (անդ, 20): Տե՛ս *զիւպանի քիւնճիւշք* (*լեզու ճնճղկի*) ի Գէորգ:

Ձագախոտ. 1. «*Փարընդամուշ. ձագախոտ*» (*Թրգմ. դեղոց*). կայ պրս. *փէլէնքմիւշք*, որ անշուշտ *փաղանգամուշկն* է *Աշխարհագրութեան* Խորենացւոյ, եւ ի Պօզանեանէ դնի հայերէն *Նարդոս*, իսկ ի

Բառս Ա Գաղիանոսի դնի. «*Կարիոփիլոն. փաղունգամուշկ*», յն. *քարիօֆիլլօն*, լտ. *կարիոֆիլլում*, յորմէ արբ. եւ պրս. *գարէնֆիլ* է գղ. *ժիրոֆլէ*, *ճօյյէ*. «*Կարիոփիլոն. ձագախոտ*» (Գաղ. Բ). «*Կարիոփիլոն. փաղանգամուշ(կ)* կամ *ծագախոտ*» (Գաղ. Գ). Էմին՝ *ճօյյէ, ծագախոտ, շահոբրամ, գարնֆիլ*: «*Ջագու խոտ* մն այլ, որ է *փարանճամոշքն*. յիշած է ի վերայ փէին յիւր համարն Աստուծով» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157ա): Տե՛ս ի Գէորգ եւ *խիւպէ*, որ նոյնպէս դնէ *գուշ ճթմէկի*. «*Թուտէրի*. է սերմն այնր խոտոյ, որ թուրքերէն ասի *գուշ ճթմէկի*, որոյ կարմիրն կոչի *Թուտէրի սիւրխ*» (Գէորգ):

2. Թուի գղ. *Թլասպի*. տե՛ս ի *Ստորին հայերէն* կամ ի *Բժշկարան* եւ *ծագխոտ* կամ *ծագուխոտ*, որ մեկնի *Թուտարի*, *Թուտարնած*, *պազր ըլ-լաճալա*, գղ. *ճրիսիմոն* (տե՛ս յ*Ապիկոյ խոտ*) = արբ. *Թուդերի* (Լըկլէր, Ա, թիւ 436), որ եւ *խալբա (խիւպէ)*, Բ, թիւ 753: «*Ջագու խոտ*, որ է բ̅, գ̅ ազգ *Թուտարիքն*. յիշած է ի վերայ բոյին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157): «*Թուտարին*. ինքն բ̅ ազգ է, մէկն՝ սպիտակ, եւ մէկն՝ կարմիր, եւ ա̅ յածունենիքն կու լինի, եւ մէկն՝ ի լերուննքն կու լինի եւ ի դաշտին կու բուսնի. եւ լաւն այն է, որ դեղինբար լինի. եւ թուրքն *ուսպարան* կ'ասէ եւ *գուշ աթմակի* այլ կ'ասէ ... Ասէ Պատեհին, թէ *Թուտարնած* կ'ասեն եւ *պազր ըլ-լաճվայ* կ'ասեն եւ *գասխայ* այլ կ'ասեն ... եւ այսոր հայերն *ծագխոտ* կու ասեն, եւ ի վերայ պատերուն եւ ի յածունենիքն այլ կու բուսնի» (անդ, 98ա):

Ջագխոտ. տե՛ս յՕձտակ:

Ջարխոտ, որ եւ *Դիւածառ* կամ *Դիւու ծառ* կամ *Դիւաց մազ* (յն. *ադիխօմանէս*, այս ինքն 'մազ ուրուականաց'), *Գետնի ծառ*, *Խոզի մազ*, *Պառաւ ծառ*, *Ջրհորի գինձ*, *Սկեզօրի մազ*, յն. *կալլիթրիկ*, *կալլիտրիքոն*, գղ. *ադիանտ*, *կապիլլեր*. տե՛ս *Ջարխոտ* ի *Հայկ. բուսար.*, Թ, 213: Արբ. *չար ըլ-անուզ* 'հեր պառաւոյ'. ասի եւս արբ. *գուզպարա հէլպիր*, *գիւզպիւր պիրի չավիւշէն*, *ճատէթ իւլ-քանա*, *սաքիօլ ճավիտ*, *սաքուլ վասիֆ*, *սէպիւլ ճրա*, *չար իւլ-ճրա*, *չար իւլ-ճինա* (Րէստէն, *Ատիանթում*): Պրս. *փէրսի նավշան*, *քէտի սավուշան* (Րէստէն, անդ). *փէրսիյավիւշ*, *փէրսիյաֆիւշան* (Գէորգ). Թտ. *կուրիանդոլո գէլ պոզզօ* (Րէստէն, անդ): [Գղղ.] *սկոլոպանդրը* արծուանանկ բուսանի ի ջրհորս:

«*Անդիանտաւն*. հո բառ է, եւ հայերն *ծարխոտ* կ'ասեն, եւ յ̅ *փարխսի աւշան* ասէ, եւ բ̅ *պալտրի ղարայ* ասէ. ինքն յիշած է ի վերայ պէին յիր համարն Աստուծով» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 32): «*Փարխս աւուշան*, որ է *ծարխոտ*» (Մխ. Հեր., ԻԳ, 52, 55): *Ջառ պառաւ* (Բժշ. Ե՝ հինն ԻԳ, 39):

«*Դիւու ծառ*, որ է *ծարխոտն*, որ է *փարխսու աւուշան*, որ է *քուզարաթ ուլ-պէրն*, որ է ֆրանկ. *գամպլում [գամփիլում] վէնէրիս*, եւ ինքն սեւ եւ հաստ մազի պէս է, եւ տերեւն նման է գնձի տերեւին, եւ տակն ֆիչ է ... եւ թէ օծես, օգտէ աչից եւ զխոզքն կու հանէ եւ զկուրծքն եւ զրոքն ի բանձր խառնուածէն յիստկէ ... Ասէ Պատեհին, թէ այս խոտս շատ անուանք ունի. *չէյր ըլ-ճին* եւ *չէյր ըլ-խնզիր* եւ *չէյր ըլ-յարզ* եւ *լեհեաթ ուլ-հիմար* եւ *լեհեաթ ուլ-ասվատ* եւ *քուզպարաթ ուլ-պէր* եւ *չէյր ըլ-ղուլն* է. եւ լաւն այն է, որ սեւ լինի, եւ տերեւն՝ կանանչ. եւ այլ աղէկն այն է, որ որձան ի կարմրութիւն ֆշտէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 64ա):

Ջեան ծաղիկ. տե՛ս Ջիւնածաղիկ:

Ջեառատաղ, **ձեռատաղ**, որ եւ *Մորենի*, *Կօծոխուր*, գղ. *ճպին-վինետ*. «*Ջեռատաղոյ տակ*. ծորենոյ տակ» (Բժշ. Ա 144): «*Բարբարիս. ծառատաղ*» (*Թրգմ. դեղոց*): «*Ղեկիոն. ծառատաղ*» (Գաղ. Ա). «*Աքինոս. ծորենի* կամ *ծառատաղ*» (Գաղ. Ա). «*Ղեկիոն. ծառատող*, որ է մորենի» (Գաղ. Բ). *ծորենի**: «*Զձառատաղոյ* տակին կեղեւն չորցո՛ եւ մանր աղա՛. ծվի դեղնուցով յարո՛ եւ յաչիցն ի վերայ ծեփէ՛» (Բժշ. Ա 249): Իսկ ի Բժշ. 744 գրի. «*Ջեռատաղու տակ*, որ է *ղաֆէթն*, որ է *երեսնակն*». *ղաֆէթ*, բերեւս փոխ. գրելոյ *ղարգատ* = *լիրիկում* (Լըկլէր, Գ, բ. 1632):

Ջէթրեմ, **ձիթրէն**. «*Ջէթրեմ* ուտել ստամոքսն զօրացնէ, զֆամին յանձնէն վարէ եւ դուրս ֆաշէ, ղաղիքն սրբէ, զճինճին սպանանէ, օգտէ խոչակի ցաւուն, հով գլխացաւին» (*Անուանք դեղերոյ*, *Հանեալ ի բժշկարանէ գրելոյ յամին 1786*, *յօդուած 39*, *յընդօրինակութենէ Տ. Սերոբէ Ալիշանի*): «Ջեր դրկած գիրքն է իրաւցնէ համով հոտով լիք, համն անուշակ՝ Արտամետու խնձորին, փափուկ, կաքնորակ, հոտն՝ անուշահոտ ուղցուն, դաղձուն, *ձիթրէնոյն*» (*Թուղթ առ Գարեգին վ. Սրուանձտեանց*, զոր գրած է *Համով հոտով* գրոցն առթիւ՝ «իր ընկերական բարձր դիրքով եւ գրական մեծ տաղանդով հանրա-

ծանօթ մը» [Թուխ Գրիգոր Օտեան] (*Մասիս շաբաթաթերթ*, հրատ. *Արեւելք* լրագրի), 12 յունուար 1885, երես 586բ). ստուգիւ Գրիգոր Օտեանի է. տե՛ս ամբողջ նամակն ի *Լումայ*, 1897, օգոստոս, 333, ուր սխալ տպեալ է "ուռցան, դադծուն, ձիթէնւոյն":

Ձի. *ձիու ագի*, Բժշ. Ե (հինն ԻԴ), 2. [[գղ.]] «*Գրել*, տունկ ինչ, *զէնէպ իւլ-խայլ*» (Էմին): «*Ձիու ագի*, որ է *զանապ ըլ-խայլ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157). «*Զանապ ըլ-խայլ*. ինքն խոտ մն է, որ եփ կատարեալ բուսնի, ի ձիու ագի կու նմանի. եւ ինքն ցեղ մն է եւ լաւն այն է, որ կատարեալ հասնի ... օգտէ ակռային մսերուն. որ թուլացել է, ամրացնէ եւ ուժովցնէ եւ զարուն թքնուլն կտրէ» (անդ, 81): *Ձիու բղունկ* (Բժշ. Բ 324):

Ձիալախուր. թարգմանութիւն յունականին *իպպօսելինոն*, լտ. *հիպպոսելինում*, *օլուսատրում* (Հայկզ.), գղ. *մասըրոն*, ուր եղեալ եմ *ձիալախուր**. Էմին դնէ գղ. *աչ.* «*Հիպսեղենիոս, ձիալախուր*» (Գաղ. Բ). «*Հիպսեղինէոս. ձիլախուր*» (Գաղ. Ա). «*Հիպսեղինոս. ձիլախուր*» (Գաղ. Դ):

Ձիակորեակ, որ եւ Գաւարս (Բժշ.). գղ. *պանիկ, պանիս*, տճ. *արնաուտ տարըը*, լտ. *պանիկում*, իտ. *պանիկո*, յն. *էլիմոս*. «Խոլորձ [գրածն՝ խօլորց]. ինքն իրեն բուսնող խոտ է, ձիակորեկի պէսնակ է» եւ այլն (*Խոտբշ.* 65, տե՛ս ի *Խոլորձ*): «*Ձիակորեկ*. յարապկերէն՝ *տուրա*, լադին՝ *բանիգում*» (*Անուանք դեղերոյ* եւն (Հ. Ղ. Յովնանեան):

Ձիաստաց, -*ի*, տե՛ս եւ *Պիծակ խոտ*. «*Ձիաստացի* հունդն եփէ՛ գինով [դեղ փորկապի] եւ խմցո՛» (Բժշ. Ա, *Հայրուս*. 1773):

Ձիթապտուղ. Ոսկ. *Եփես.* ԺԳ Յորդ. 815. Պոլլոդիոս, *Պտմ. հար. Եգիպտ.* 230, 260, 263. *Վարք Աբբայ Մարկոսի* 200 (եւ յ'ր. բրգմ. 200, 201). Աբ. *Անդ.*, 53:

Ձիթենապտուղ, գղ. *օլիվ*. Լծ. 901:

Ձիթենի, յորմէ՝ *Մոլաթզենի*. գղ. *օլիվիէ*. Երեմ Ե 17, ԺԱ 16. Եզնիկ, 207. Փիլ., *Յոբխն.* Բ 104. Յոհ. կր. 109, 142:

«Յաւուրս սորա [Կեկրոպայ] երեւեցաւ *ձիթենի* ի դղեկին Արենայ» եւն (Մխ. Ատ., 31). *ձիթենի դղեկին Արենայ* կոչէր յն. *մորիա*, լռելեայն իմանալի *էլեա*, 'Սրբազան ձիթենի', որ պահէր ի դղեկին Արենայ, յորմէ եւ *Ձեւս մորիոս* եւն. սխալ է Հայկզ.. տե՛ս յիմ Ոսկ. *Եա.* Խ 274:

«Դարձեալ գրեալ էր ի գիրս. ի բուսաբեր ձիթոց, զոր *շուշմայ* անուանեն, լինել միւռոնի մերոյ, եւ ոչ՝ ի ծառոց *ձիթենեաց*: Եւ այս՝ յիրաւի. եւ պատճառն՝ ոչ այլ ինչ, այլ զի ի Հայաստանեայց աշխարհին ոչ են *ձիթենիք* վասն ցրտութեան օդոյն, հարկ եղեւ զայն ինչ ձէթ, որ գիտ է յաշխարհին, ի նիւթ առնուլ միւռոնի*, եւ ոչ ինչ վնաս հոգեւոր տեսին յայսոսիկ, զի թէ նիւթոյն էր զօրութիւն, զայն նիւթ միայն արժանի էր խնդրել, յորում աստուածային ինչ ազդումն գոյր ի նմա: Ապա թէ քէնեալն օրհնութիւնն եւ աղօթքն միացուցանեն ընդ նիւթ ձիթոյն զաստուածային շնորհն, ոչ ինչ լինի առաւելութիւն կամ պակասութիւն, եթէ ի պտղոյ ծառոց իցէ ձէթն եւ եթէ՝ ի բուսոց. որպէս եւ արեանն Քրիստոսի նիւթ՝ գինին, յորո՛ց եւ իցէ գունոց ընդունելի է, եթէ՛ սեւ, եթէ՛ կարմիր եւ եթէ՛ սպիտակ» (Շնորհալի, *Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ*, գրեալ ի խնդրոյ Ալեքսի մեծի պռոտոստրատորի՝ փեսայի թագաւորին հոռոմոց Մանուէլի, տպ. Կ. Պօլսոյ, էջ 62). տե՛ս եւ ի հրատարակեալն ի Կիր. Գանձակ. Ոսկանայ, 77:

*Տե՛ս զոր ինչ ասէ զբանիցդ Շնորհալւոյ Ինճիճ., *Հնախ.*, Հ. Ա, 160, 174:

Բարի ձիթենի (Հռ ԺԱ 24). «ծառ բարի, պտուղ բարի» (Մտթ Է 17, 18, ԺԲ 33):
Ընտանի ձիթենի (Կիւր. Կոչ. Ա 4): *Կասլապտուղ ձիթենի* (Վստ. ՄՀԸ 180):
«*Ձիթենի* կանաչագեղ» (*Վկ. Բարեխայ եւ ուրսուն եւ չորից աշակերտացն*):
Արիստ. տե՛ս զվկ. ի *Շռնի* (*Սռնի*): «*Ձիթենի* պտղալից» (Աղ ԾԱ 10, Ովս ԺԴ 7):
Ձիթենի (ի Կիլիկիա) (*Վկ. Թադդեայ*, 503):
Ձիթենի ի Սիւնիս (Ստ. Ուռպ. ԽԹ 185): *Ձիթենի* յՈւտի (Խոր. *Աշխարհ.* 610):
Ձիթենի ի Գուգարս (Ստրաբոն, հ. Բ, 459, Գիրք ԺԱ, գլ. ԺԴ, հտծ. դ. եւ Ինճիճ., *Հնախ.*):
Վայրենի ձիթենի, որ եւ *Մոլաձիթենի* (Հռ ԺԱ 17, 24): *Վայրի ձիթենի* (Կիւր. Կոչ. Ա 4). տե՛ս յիմ *Բոգ. Յրան, Փրանչ*, 11:

Ձիթենւոյ խաղող, տե՛ս զԼըկլէր. գրեա՛ ի *Խաղող* յ'Որբ. «*Առապեհ ըլ-տարի* [Զ փատարի]. ինքն սեւ խաղողին ցեղէն է, եւ իր *ձիթենոյ խաղող* կու ասեն. եւ ինքն յիշած է կամօքն Աստուծոյ»

(Ամր., *Անգ. անպ.*, Ալիշան, 36ա):

«Ոստովք *ծիրենեաց» (Վկ. Ինդոսի*, 609:

[[**Ձիբբէն**, տե՛ս **Ձեբբեմ**:]]

Ձինկ կամ **ձունկ**. տե՛ս **Ցինգ**:

Ձիմէլ. գրեա՛ Ծիմել, որ է գղ. *բլեռ*. տեսակ ինչ Նուկտաւի (*Գւտ*. Ա. 49). «վայրի խոտ է ինքիրեն բուսած. աղցան կը շինեն ուտելու Մեծ պահոց մէջ» (անդ, 80):

Ձիւք. *մազապէք*. տե՛ս *Գազպէն*. «Գետնոյ խէժ. կրդու *ձուքն*» (Բժշ., Հայկզ. ի *Խիժ*): «*Հոռմցի ձիւք. քէհայ*, ֆռ. *մասդիքս*» (Ամրտ., Ալիշան, 201). տե՛ս *քիան մազդիկ* ի Գաղ.: «Մազտաքէ հոռմցի» (Ամրտ., Ալիշան, 201): «Բեւկնոյ խէժ. *յեյք բլ-պոտմ*. սպիտակ *ձուք*» (Բժշ, Հայկզ. ի *Բեւեկնի*):

Ձիւնածաղիկ [[**ձիւնծաղիկ, ձնածաղիկ, ձնծաղիկ, ձունծաղիկ**]], որ եւ *Ախլախնձոր*. նոյն բուի եւ *Սապտուկ*. գղ. *կոլչիկ*, տն. *մախմուր չիչէյի*. տե՛ս վկ. եւ ի *Սօսամբ* եւ Դաւ. Սալաձորեցի. կայ *ձիւնծաղիկ* գարնանային եւ *ձիւնծաղիկ* աշնանային. տե՛ս *Հայբուս*. բիւ 1779–1782. *ձիւնծաղիկ* եւ բիւ 2706, *սապտուկ*:

«**Ձեան** *ծաղիկ*. սպիտակ եւ դեղին անհոտ ծաղիկ, որ ձեան հալելուն պէս կ'երեւայ եւ կը ծաղկի» (*Մանանայ*, 448):

«**Ձիւնածաղիկ**. *սօն պահար չիչէի*» (Մինաս Էմիրեան, անասնաբոյժ, *Փունջ* լրագիր Կ. Պոլսի, 16 փետր. 1891, Դ, բ). քննելի, բէ իցէ՞ *կոլչիկ*: «Եղեւ հարսանիս արեգական, եւ առաքեաց, հրաւիրեաց զծաղկունսն առ հասարակ, զի ըստ զուգաւորութեան եւ անդ ի միասին ի հարսանիս գայցեն: Եւ լուեալ *ձիւնածաղկի* եւ այլոց այսպիսեաց՝ փութացան քան զրազումս ժամանել: Եւ ի ժողովելն այլոց, զի ի միասին վայելեսցեն, ոչ երեւէր նա, զի խորշակահար եղեալ՝ ցամաքեցաւ» (Մխ. Գոշ, ԼԲ): — *Գարնանային ձիւ-նածաղիկ*, արբ. *չանդելիդ* (Լըկլէր, Բ, բիւ 1345). տե՛ս եւ ի Գէորգ *չէնպէլեյտ*: — «*Ձիւնածաղիկ, ձնծաղիկ, խլօպուզ*, լտ. *Հերմոդակտիլուս*» (Ստ. Շահրիման.): «Գղ. *բուլ դը նեժ, ձիւնածաղիկ, գար օթու*» (Էմին). պրս. «*Հիւզպէ, ձիւնածաղիկ*. է ծաղիկ ինչ վայրենի. բուրքերէն *չիկտէմ չիչէկի*» (Գէորգ, *Պրս.–հայ.*):

Ձիւնծաղկի *տակ*. գղ. *Հերմոդարտ*, արբ. *սիւրէնճան*. «*Սոլընջան. ձոյնծաղիկ*» (*Թրգմ. դեղոց*): «*Նուպոկտաս. մուսաաճլէ* կամ *սօլնջան* կամ *ձոյնծաղկի տակ*» (Բժշ. Ա. 144): — «Ի Բժշկարանս եւ ի Հին բառագիրքն *ձիւնծաղիկն* եւ *ձիւնծաղկի տակն* մեկնի բառիւքս այսոքիկ. *սորընջան, սիւրիւնճան, մախրուր չիչէկի. կիւզպէ. խըլպուզ. խլօպուզ. խալխալ խնձոր*: Մէնինաքի ունի *կոլխիկում, կոլքիկում փլոս. մախմուր չիչէկի. կիւզպէ* [[...]], Հայկզ. բոգ.»:

«*Ախլախնձոր*՝ բառ կարմիրքցոց, այլուր ասի **ձնածաղիկ**. արմտիք սոխի պէս են» (*Գւտ*. Գ 5):

«**Ձնծաղիկ** կամ *ձնածաղիկ*. ծաղկի ի հալել ձեան. սպիտակ է» (*Գւտ*. Ա. 35): «**Ձնծաղիկ**, որ վասն զի յետ լուծանելոյ ձեան՝ իսկ եւ իսկ ծաղկի, յայն սակս կոչեցաւ յայս անուն. ի գործ ածեն ի դեղորայս, որ փարատիչ է տագնապոյ եւ այլոց ցաւոց: Տերեւք սորա խիտ առ խիտ սփռեալ են զերեսօք գետնի. ծիղ նորա՝ բզաչափ. ունի ի գլուխ իւր ծաղիկ փոքր, ոմանք՝ սպիտակ եւ ոմանք՝ ի գոյն մանուշակի. տեւէ զաւուրս չորս կամ հինգ. ունի սոխ փոքր կաղնաչափ» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 38): «*Ախլախնձոր* ըստ կարմիրքցոց. *ձնածաղիկ* ըստ խոտրջրեցւոց. արմտիք սոխի պէս է» (*Խոտրջ*. 40):

«**Ձունծաղիկ**, որ է *սորընջանն*. յիշած է ի վերայ սէին Աստուծով» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալի-շան, 157ա):

Ձկան այծենի. տե՛ս *Սօֆ* ի Գէորգ. կայ արբ. *ծովու բուրդ (այծենի)* = *սուֆ էլ բահըր*. [[գղ.]] *պին մարին* (Լըկլէր Բ բիւ 1423). *սուֆ* = բուրդ, անդ բիւ 1422. *ձկան այծենի* է ուղիղն. *այծենի* = այծի մազ:

[[**Ձկանածուենի**, տե՛ս **Ձուկն**:]]

Ձմերուկ, *-րկի*, գղ. *պաստեկ*. սեռ. *ձմերկի (Հայբուս*., 950, ե. 225): «Եւ խանդացեալ սեխ եւ *ձմերուկ* եւ այլ պտուղք բանջարաց եւ պարտիզաց՝ բաղբ եւ շաղգամ եւ ստեպղին, եւ սկսան չարախօսել [դճակնդեղէ], եթէ սաստիկ ամենեւին է եւ գոչող որովայնի» (Մխ. Գոշ, Ծ). «Մտեալ ոմն

ի պարտէզ՝ կամեցաւ հարկանել *զձմերուկ* եւ ուտել. եւ նորա զարհուրեալ՝ ասէ. "Զի՞նչ գործես, ա՛յր դու. ո՞չ գիտես, եթէ ձու եմ ես փղի"» (անդ, ԾԸ): «Այլ եւ ծաղրալից բանս, զոր գրեալ ես ի նամակի ատա, թէ "Միում առն անհնար է երկու ճանապարհաւ գնալ կամ Միով ձեռամբ *ձմերուկս* ունել երկու*"» (Մովսէս վրդ. Երզնկացի, *Թուղթ առ հատուածեալ եղբայրն Գրիգոր*): Տե՛ս *Ձմերուկ* յիմ *Ստորին հայերէն*:: *Թուրքերէն "Իքի գարփուզ պիր գոլթուգ արասընտա սըղմազ":

Վայրի ձմերուկ, որ եւ *Ագոխ*, *Դառն դդում*. *Հայկ. բուսաբ.*, 1789. թուրք. *ապուճէհլ գարփուզու*, [[գղ.]] *կոլոկենտ*:

[[**Ձներուկ**, տե՛ս **Ծներեկ**:]]

[[**Ձնծաղիկ**, տե՛ս **Ձիւնածաղիկ**:]]

Ձողայ, չիք ի *Հայրուսակն*. Բժշ. Բ 157:

[[**Ձուք**, տե՛ս **Ձիւք**:]]

Ձուկն. [[տե՛ս Ցինգ]]*ձկնածուեղն*, գորտնբուրդ (Ասար). տե՛ս *Գորտնբուրդ*. *ձկնայծեղն* (Լծ. Բ 523). «Հ. Ծռ-վայրին նապաստակ: Պ. Մարդասպան է եւ կակուղ մազ ունի որպէս բամբակ, մանելոյ պիտանի որպէս *ձկնայծեղին*. սորին օրինակաւ զսիրամարգին մանր մազն ծխեն յայն, ոյր հոտն գայ» (Վանական վրդ. *Հարցմունք*): «*Ձկնածուեղն*, որ է *գորտնբուրդն*, որ է *տաւշանը** յարապկերէն. յիշած է ի վե-րայ տունին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157ա): * Արբ. *Թոհլոբ* ջրի ասպ (Լըկլէր, Բ, թիւ 1451):

Ձկան մահարար, *ձկան սպանող*, որ եւ *Եզին ագի*, *Խնդատ*. պրս. *մահի զէհր* = ձկան թոյն. *փզոմոս*՝ խոտ ինչ, որ ունի գծաղիկ դեղին ... թուրք. *սըզըր գույրուղի*, արք. *ազան խւտ-տխւպպ*. ասի եւ արաբացուցեալ *պոզսիյր* (Գէորգ). *մահզէհրէճ*, [[գղ.]] *կոկ դիւ Լըվան*. տե՛ս *քօչչի օոիէնթալիս* ի Բէստէն, Բ, ուր դնէ զգ. *բինօն տ'էնտ*, *պալըզ օթու*. *Հայրուս*. թիւ 609. *մահիզեհրէ*, *մենիսպերմում կոկուլուս* (Լըկլէր, Գ, 2657 = *կոկ դիւ Լըվան*, Բ, 1263, ծան.): «*Ձկան մահարարն*, որ է *խոնտակն*, որ է *մահի զահրաճն [զահրաճն]*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157): «*Մահի զահրաճ*. մեծ *յասայի ռային* տակն է, եւ ինքն ի եէրողներուն է. լաւն այն է, որ նոր լինայ ... Ասէ Պատեհին, թէ իր պատմութիւնն *սամմի սամաք*ն է, որ թարգմանի 'ձկան սպաննող'. եւ ինքն տակ է, եւ կեղեւ՝ այլ յերկայն, եւ գոյնն՝ կողին զունովն է, որ ի դեղնութիւն կու քշտէ: Եւ ասցել է գրոցս շինողն, թէ այս խոտիս յերկայնութիւնն մէկ կանկուն եւ կէս է եւ այլ երկայն, եւ լինի, որ կարճ այլ կու լինի. եւ ծաղիկն դեղին է եւ անուշահոտ է եւ ծաղիկն ի մէջն կարմրագոյն ֆիչ մի եւ տերեւն մթնգոյն է ... իր *խասիաթ*ն այն է, որ թէ զիր հունդն ի ջուրն ցանես, ամենայն ձկներուն փորն ի վեր գայ ... եւ այս խոտիս 'ձուկն հարբեցնող' ասեն. եւ այս խոտս երեք ցեղ է, երկու ցեղն լեռան է, եւ մէկն վայրի է. եւ այն, որ լեռանն է, ուժով է, եւ *զալումաս* ասեն, եւ այն, որ վայրի է, ասցած է, թէ *մահի զահրայ* եւ *մահի զահրաճ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 197ա–198):

[[**Ձունծաղիկ**, տե՛ս **Ձիւնածաղիկ**:]]

Ձունկ կամ ձինկ. տե՛ս **Ցինգ**:

Ղ

Ղաժքի. «*Ղաժըքի*. ծառի մը անուն» (Հ. Սուք. Պարոնեան, *Բառք Սիւնեաց կամ բիֆլիզեցւոց*, թիւ 16): «*Ղաժի*, *ղաժքի*. վայրենի ծառոց կարգին յիշեն նոր գրողք մեր եւ ստորագրողք Գուգարաց կողմանց կամ Հաղբատոյ վանաց» [*Արարատ*, ԺԹ, 445. *Մշակ*, ԺԵ, 61. *Մեղու*, ԻԳ, 85] (*Հայրուս*. 1797): Նո՞յն եւ հացիքի (*Արարատ*, ԺԹ, 445), *Հայրուս*. 164:

Ղանձիլ. նոյն թուի ընդ *խանձիլ*. վայրի խստոր (գաւառական) (Ստ. Շահրիման.):

Ղղվակ. պտուղ նման զղեարի (*Խորտբզ*. 47):

Ղղվակենի. ծառ ղըղվակի (*Խոտբզ*. 47):

Ղղվիք, **ղղվիքի**. ծառ փոքրիկ, որ ըստ իմիք ունի նմանութիւն վայրի տանձենւոյ (*Գւռ*. Բ 7, 48):

«*Ղրդվիթ. չէթլէմպուկ, յոուտ, դդուիթ: Ղրդվիթի ծառ. չէթլէմպուկ աղաճը, յոտենի*» (Հ. Մկ. Անան., *Աշխ.-գրաբ.*):

Ղում. մսրացորեան (*Գւռ.* Բ 48): *Ղում* մեկնի 'նփած կորեակ» (*Փորձ*, Տփխիս, 1880, յունիս եւ յուլիս, էջ 146, *Ճանապարհորդութիւն Թէոփիլոս Դեյրօլի*):

Ղռա. տե՛ս *Կռայ*. փոքր կամ խակ *դուլմա* սեխ (Յովհ. Արանասեանց, *Երեւանի նահանգի բուսականութիւնը*, 57):

Ճ

Ճագոմ, գղ. *գի*, յն. *սռելիս*, [[թուրք.]] *չօքսէ աղաճը, պուրճ* (Աւգեր). տե՛ս *փիսքում ալպում* կամ *փիսքում գուէոչինում* ի Բէստէն, Բ, ուր դնէ տն. *պուռճ աղաճը*. «*Պանթումա*, որ է *կօկճա*, որ [է] *նագոմ*, որ է *չամամ*, որ է *եազ գըշ կօկճասի*, որ Ֆ *պուռճ* ասէ. ծիբենոյ ծառին վրայ կու բուսնի. ինքն խոտ մն է, որ տերեւն ծիբենոյ տերեւ կու նմանի եւ խիստ կանանչ եղեր ունի, եւ ի վերայ ճագերն հաւկիթ կ'ածեն. եւ ի նշին եւ տանձին ծառն այլ կու բուսնի» (Ամրտ., *Բժ. բոգ.*, Գ, 315): «Եւ թէ յոջլէ վախես, զտիպխն, որ ի կաղնոյն *ճագմնէն* շինես, ներքեւ ակինն ընդ ուռն վատաբ [փաթաթ] անցո՛, որ ոջիլն ի վեր չգայ» (*Վստ.*, ՁԱ, 66): «Թէ հին տանձենու եւ թէ՛ խնձորենու վրայ ձմեռ ժամանակ կ'անի մակարոյծ *չամում* կոչուած բոյսը, որ անասունք կ'ուտեն» (Ս. Հայկունի, *Տրապիզոնի հայ գիւղացու կեանքը, Արարատ*, 1905, նոյեմբեր, 1039):

Ճաքուռի. վայրի ուռի (*Գւռ.* Բ 58):

Ճակատ. կ'ըսուի *չայտարն*, որ աշունք շուտով կը ցանուի ու կը բուսնի» (*Գւռ.* Ա 82):

Ճակնդեղ, *-ոյ*, սեռ. *ճակնդեղի* (*Հայրուս.* 1756), որ եւ *բազուկ*, գղ. *բետտըրավ*, պրս. *չուղունդուր, չուղունդր. բազուկ* է *բետ, պուարէ*. յն. *սէֆուտլոն*, իսկ *սէֆուտլիոն* բուի, թէ է մանր տերեւ ճակնդեղոյ: *Բետտըրավ* չիք յիրն էլ-Բէյտար: Տե՛ս *ճակնդեղ, -ի* եւ *ճակընդղի* ի *Բազուկ*: Տե՛ս եւ *Խաշանուռ*: «*Բազուկ*. կանաչ տերեւ *ճակնդեղի*» (Փիրղալէմեան): «*Ճոռ*. *ճակնդեղի* տերեւ» (Փիրղալէմեան): Այսպէս եւ «*Մոլ*. տերեւ թթենւոյ»: «Որդիքն քո՝ տարակուսեալք, որ ննջեն ի կիցս ամենայն ճանապարհաց իբրեւ *զճակնդեղ* կիսեփեաց, լի էին ի բարկութեան Տեառն» (Եսայի ԾԱ 20), յն. ունի *սէֆուտլիոն*: «Զամենայն աչօք մռայլ մածեալ՝ նստէր ի սովոյ, եւ զոյնք ամենեցուն՝ իբրեւ *զճակնդեղ* խարշատեալ յեղեմանէ» (Մարութայի Վկ. *արեւելից, Սոփ.* Ի 92): «Փոքր մի *ճակնդեղ* աղախարշեալ՝ հանդերձ աղիւ ճաշակեաց առանց հացի ի խցին իւրում» (ՎՀ Ա 570). *բ.* թրգմ.՝ "Եւ եկեալ ի խուց իւր՝ եկեր փոքր ինչ *ճակնդեղ* անխարշ առանց հացի":

Ճամբակ, յն. *սաբալաթօս*, լտ. *սապալատտուս* (Հայկզ.), գղ. *չամպակ*. պրս. «*փաղիյէ, փաղիր*. է տեսակ իմն ծաղկան, որ հակեալ է ի դեղնութիւն եւ է նման շուշանի, այսինքն *զանպագ* ծաղկին, գոլով անուշահոտ եւ գեղեցկատեսիլ եւ յաճախ լինի ի Հնդիկս եւ կոչի ի նոցա լեզուն *չանփա* կամ *չէնփա*» (Գէորգ): «*Կարատա*. ամերիկեան *ճամբակ*. *կարատա* է ազգ հալուէի. *սապալաթ*, *ճամբակ*. [[գղ.]] *պիտ*՝ *ճանբակ* կտաւաբեր» (Էմին): Կայ եւ արբ. պրս. *զամպագ*. 1. շուշան. 2. հիրիկ (Պօզաճ.). Լիտրէ *զամբակ* եւ *սամպակ* ի Յաւելուածին առաքէ ի *չամպակ*, իսկ Մարսել Դըվիկ բուի զանազանել *զամբակ* եւ *զչամպակ*: «Եւ իբրեւ զկինամոն եւ որպէս *զճանբակ* խնկոց ետու հոտ» (Սիրաք ԻԴ 20):

Ճամբու խոտիկ. մանր խոտ տերեւախիտ» (*Մանանայ*, 448):

Ճանդան. գղ. *սանտալ, սանդալ*, սանսկրիտ *չանտանա* (տե՛ս *մասնտալ* ի Լիտրէ). պրս. *չէնտէլ, չէնտէն*, տն. *սանտալ*. «Լինի անդ [ի Հնդիկս] ... հալուէ, փաղանգամուշկ, քափուր, *ճանդան*, նայիբուակ, հրրուկ, զազերրուակ, գոյիրուակ» (Խոր., *Աշխարհ.*, 615):

Ճանդար. Կիր. Գանձակ. ժԹ 124. տե՛ս *ի Սաւս, Սաւսոյ, Սաւսի*:

Ճանդարի. *Հայրուս.* թիւ 1848. նոյն բուի եւ *Տնջրի = Ջնտրի = Ճանդարի = Սաւսի*. «Ազատդրախտ. *ջանդարի*» (*Թրգմ. դեղոց*):

Ճանդի. Հայկզ. բոգ. նոյն համարի ընդ *ճանդան*. «Ի սերմանց է եւ անուանեալն *արջնդեղ*, զոր

լուեալ արջու, ի ցաւել որովայնին առեալ եկեր՝ կարծելով դեղ ինքեան վասն անուանն եւ ինչ ոչ օգտեալ՝ ասաց. "Ո՜ խարու եւ *ճանճի*, որքա՜ն բարի էք որովայնի": Զանիմաստից եւ զորովայնամոլից առակս գուշակէ, զի քան զպիտանին եւ զսակաւն ընտրեն զբազումն եւ զխոշորն» (Մխ. Գոշ Խէ):

Ճանկխոտ. *Հայբուս.* 1391. տե՛ս եւ *Գետնամայր*, *Կենարար*. «*Քամաֆէյտօս*, որ է *ճանկխոտն*» (Բժշ. Բ 338):

Ճաննուր. ազգ սալորոյ. տե՛ս ի **Մամուխ**:

Ճաշկի ծաղիկ. Դաւ. Սալաձոր., *Բզմ.* 1869, 163 եւ *Հայբուսակ* թիւ 1857:

Ճապկի, ի *ճապուկ* բառէ. «*Ճապկի*. ճապուկ ճղերով փոքրիկ ծառ կամ թուփ: Հին ժամանակները դպրոցին յանցաւոր տղայքը ծեծելու համար ճապկի բիր կը գործածէին» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313). *բիր* չյարմարի (ես):

Ճապուռ. գղ. *կարմիր*. տե՛ս եւ *Քրմէնի չաման* ի *Չաման*. «Չաման վայրի, *քրէնի չաման* կոչի ի Բժշկարանս» (Հ. Ղեւ. ի *Վստ.*): «*Սիգիգոն*. *ճապուռ*» (Գաղ. Ա). «Ոփոտ. *ճապուռ*» (Գաղ. Ա). տե՛ս եւ ի *Չաման*. «Սեղեղի [սեզեղի]. ոփոտ»: «Եթէ ոք առնու *զճապուռն* եւ լեսէ եւ շող ջուր ածէ ի վերայ եւ ի տունն ցանէ, լուն սատակի առ հասարակ» (*Վստ.* ՃՁ 79):

Ճարճտուկ. նոյն եւ *Ճառտճառտուկ* (կրակի մէջ կը ճայթճայթէ) (Աբանասեանց 85–87). «Խոտ ինչ, որ ունի կապոյտ ծաղիկ» (*Մանանայ* 449): Տե՛ս *ճարճրտուկ* եւ ի *Կերդ*:

Ճարճրուկ. «*Ճարճրուկ*. խոտ ինչ ուտելի, ի վարիլ ճարճարտի» (Փիրղալէմ.): Ըստ ղրիմեցւոց՝ տն. *բատիքեա*. Գւռ. Ա 35. [[գղ.]] «*Շընիչ*. է բոյս ինչ, *ճէրճէր*» (Աւգեր). «Է խոտ ինչ, զոր անուանեն *Հընտիտեայ [Հնտիպեայ]*, որ է լեղի *սալաթան*» (Գւռ. Բ 35): «*Ճառնռուկ*. եղերդ, լտ. *չիկորիում*» (Ստ. Շահրիմ.). վիէնն. խտ. *ինդիվիա*, գղ. *անդիվ*, եղերդ, վայրի հազար, հինդք, *ճարճրուկ*, *աճը մարօլ*, *Հինտիպա*, *բատիքեա*. «խտ. *ռադիկիօ*, *չիկորէա*. եղերդ, ճարճրուկ, *Հինտիպատ*, *ռատիքեա*» (Զախջ.). պրս. *ճէրճէր (Թօզզա)*, ասրեակ (Պօզան.):

Ճարտարուկ. կայ *ճարտար*, որ թուի հիւանդութիւն ինչ մորթոյ. տե՛ս եւ ի *Ստորին հայերէն*. արբ. *ճէտէր* ծաղիկ (ախտ) (Պօզան.). *Հայբուս.* 2443. «*Պետոզզզիկոն*. *ճարտարուկ*» (Գաղիանոս): «Այլ բերեւս պէսպէ՞ս արուեստիւք [Հպարտանայցես]. եւ ո՞վ ոք յայնմ զմեղուօք եւ *զճարտարկօք* անցանիցէ» (Ոսկ. *Փիլիպ.* Է Յորդ. 430): Կայ եւ ունդ *ջատակուկ բուսոյ* (*Հայկ. բուս.* 2624):

Ճաւիկ, *Հայբուս.* թիւ 1867. «Վայրի ուտելի կանանչեղէնները են՝ աւելուկ, սինձ, *ճավիկ*, թթուաշ մանդակ, տերեփուկան» (*Տեղագրական պատառիկներ, Նոր Պայազիտ (Գեղարքունիս)*, *Արեւելեան մամուլ*, 15 հոկտ. 1895, երես 619, ստորագրեալ ***):

Ճբուկ. «Բոյս ինչ վայրի» (*Մանանայ*, 449):

Ճիլ, *ճիլ*, յորմէ՝ *Տափճիլ*. գղ. *ժոն*. տե՛ս եւ *Ճղեմն*, *Ճղեման ջուր*. «*Ճիլ*. կնիւն» (*Հին բառգիրք*). «Պրտու. տափակ *ճիլ*» (անդ). «Կնիւն. ճղեմն է, որ ի հեղեղատս բուսանի, մանր ու բոլոր *ճիլն*» (*Լծ. Նար.*, ԼԹ): «Տեսակ ինչ եղեգան, որոյ թանձրութիւնն է իբրեւ զփետուրս հաւուց, յորոց կազմի գրիչ» (*Գւռ.* Ա 49):.«*Ճիլ*. եղէգ, տն. *գամըշ*, եւս փսիար» (անդ 81): «*Ճիլ*. կնիւն. է տեսակ մի եղեգան կակուղ, եւ մէջն լի» (*Գւռ.* Բ 78): «Խոտ մի կայ, կուգել ասեն, այնոր ջուրն յիրար խառնէ՛ լօշտակի եւ *ճիլ* ջրոց հետ, դեղ մազի եւ մօրուաց, որ չթափին» (Բժշ., *Հայկ. բուսաբ.*, 1515): Յորմէ՝ *ճլուտ*. «զմարգն, որ *ճլուտ* կոչի» (Արձանագիր ՈՋԳ = 1235, Ալիշան, *Շիրակ*, 118–119, ի ծան.):

[[**Ճիշնառուր**, տե՛ս **Ճշնարօտ**:]]

Ճլակու. «*Ճլակու սոխ*. է տեսակ սոխոյ, նման *փրասայի*, որոյ տերեւքն եւ գլուխն են հաւասար հաստութիւն. անբարշամ պահի ի ձմերան» (*Գւռ.* Ա 35): «*Ճլակու*. ձողծիլ սոխ. եւս՝ ձմեռն պահելու համար» (*Խոտբջ.* 10):

Ճլզտրուկ, գղ. *օրքիս*°, *սատիրիոն*°. «*Ճլզտրուկ*. խոտ է ուտելի, նման *բատիքեայի*» (*Գւռ.* Ա 35). «*Ճլզտրուկ*. տն. *Թուլումպա օթու*, մէջը եղեգնաձեւ» (անդ 83): «*Ճըլըզտրուկ*. է խոտ ինչ պատուական. յարմատս սորին լինին մանր մանր կոնղէզք յոյժ քաղցր, եւ ասեն ոմանք, թէ այն է, յորմէ կազմեն մեղրապ, այսինքն *սալէպ*» (*Գւռ.* Բ 7). «*Ճլըզտրուկ*. խոտ նման *բատիքեայի*» (անդ 47):

Ճլեկ. «Մանր եւ կլոր հատիկ դառն, որ իբրեւ որմն գոյանայ ցորենւոյ հետ» (*Մանանայ* 449).

զնոյն գրէ եւ յերես 428 ի *ճըլլեկ*: «*Ճլլեկ*. 1. հունտ ինչ վնասակար ցորենի. 2. տեսակ մի փոքր տանձ» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Ճղեմն, *ճղեման*. տե՛ս եւ *Ճիլ, Ճլի ջուր*՝ դեղ. գղ. *ժոն օզորան*. ճղեմն (Լմր., *Սահմ. Բնեղ.*, 78): «Կնիւն. *ճղեմն* է, որ ի հեղեղատս բուսանի, մանր ու բոլոր ճիլն» (*Լծ. Նար. ԼԹ*): «Դալար *ճղեման* ջուր» (Բժշ., դեղ մազրափութեան), որ յայլում Ձ սխալ գրի *ջղերման* եւ այլուր *ճջեման*. «Ա՛ռ ի խոտիս [աւելկի տակի] ջրէն եւ *ճջեման* ջուրն եւ օծէ՛ զգլուխն» (դեղ գլխոյ եւ մօրուաց). այլուր՝ *ջրման*. տե՛ս *Հայկ. բուսար.*, թիւ 183, 1886, 2655:

Ճղօպուր, ընկոյզ. տե՛ս եւ *Ճողոպուր*. «Բառք հեբրայեցւոց. ը[ն]կոյզ, *ճղօպուր*, պօպօք» (Ղուկաս Վանանդեցի, *Պատկերասէր, պատկերատեաց*. Տաշեան, *Ցուցակ*, 378բ եւ *Հայրուս*. 1881): «*Ճողոպուրտ*. ընկուզ» (*Բառգիրք հայոց* Երեմիայ վրդտի., Լիվոռնոյ, 1689, երես 199):

Ճմնդուկ. «*Փրիկեն*. *ճմնդուկ*» (Գաղ. Դ): «*Ապլամ*, որ է *ճիմինդուկ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայկ. բուսար.*, բ. 1888): *Փրիկեն* թուի յն. *փրիւգանոն* 'շիւղ': *Ապլամ* թուի նոյն ընդ *պլամ* 'մացառուտ' (*Վստ.* Մի 136):

Ճննղկարլիթ, որ եւ *Աղնկտատ*, գղ. *մոլ*. (Բժշ., տե՛ս *Աղջկտակ* ի Հայկգ.): «Մոլոշ. աշխարհաբար *բերբետ*. վանեցիք՝ *ճննղկարլիթ*. ի Փայտակարան՝ *կուտատուկ*» (Ստ. Շահրիման.). «*Ճննղկարլիթ*. լտ. *ալթէա*, գղ. *մոլ*» (*Բոգ.* Քալանթարեանի, 88): «Ի գաւառս ինչ ի ռամկական բարբառս մեր անուանի *ճննղկարլիթ*», ասէ Ըէստէն ի բառն *Ալթէա*, գղ. *գիմով*, հայերէն *տուղտ*, տճ. *կիւլ Հարէմ* (Բ, 11): «*Ճննղկարլիթ*. տե՛ս *Տուղտ*» (Ստեփ. Կամենցացի):

Ճննղկալեզու, որ եւ *Ջագի լեզու*. թրգմ. արաբականին *լիսան իւլ-ասֆուր*. «*Նաշա*. ճննղկալեզու ասեն. խոտ է» (*Թրգմ. դեղոց*): «*Լիսան ալ-ասփիր [ասփիր]*. հացի սերմ» (*Թրգմ. դեղոց*): Պրս. «*գիւպանի քիւնճիւշք*. է սա դեղ ինչ ի դեղորէից անտի, որ բուսանի ի խոշոր ծառ եւ լինի որպէս գլեզու ճննղկան. արբ. *լիսան իւլ-ասաֆիր* եւ թարգմանի թուրքերէն *սէրչէ տիլի*» (Տ. Գէորգ, *Պրս.-հայ.*):

[[**Ճննղկան պաշար**, տե՛ս **Ճննղպաշար**:]]

Ճննղպաշար, տե՛ս եւ *Ծտապաշար*. Գււ. Ա. 99. «*Ճննղպաշար*. *մատմանախ*» (Գււ. Բ 58): «*Ճննղկու պաշար*. *ճպէ կէօմէճի*» (*Մանանայ*, 449): «*Ճննղկան պաշար*. աղչկուտակ [այսպ.]. *ճպէմ կէօմէճի*» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Ճշդար, **ճշդարենի**, որ եւ *Նշդարենի, Նշդարի*. գրեա՛ ի *Նշդարի*. գղ. *օրմո*. «*Ճշդարն* [ի Փիլոն *Նշդարի*] ծառ է մեծ, որ տունկ որբն ի վերայ ելանէ. եւ կայ ծառ, որ խոյս տայ ի նմանէ որբն եւ փախչի» (*Լծ. Փիլ.*):

«Ծառ մի *ճշդարենի* [գրած՝ *ճշդենի*] էր ի մէջ քաղաքին Պոռուայ» (*Յայսմ.*, յունիս ժգ). «Կամեցաւ անցանել ընդ *ճշդարենի* ծառն» (անդ): «Եւ եղեն նշանք մեծ եւ սքանչելիք ի տեղւոջն, յորում քարկոծեցին զնա [զԱյիթալաս]. եւ արժամայն արմատացեալ ծառ մի *ճշդարենի*, յորոյ տերեւոցն բժշկութիւնք լինէին երկրին այնորիկ ամենայն ցաւոց: Եւ զկնի հինգ ամաց նախանձ բերեալ անաւրէն մոգուցն եւ զբազումս ժողովեալ ի քրիստոնէիցն՝ եւ հատեալ զծառն» (*Վկայաբանութիւն Յովսեփայ քահանայի եւ Այիթալա սարկաւագի*, հրատ. Գալուստ Տէր-Մկրտչեանի, երես 235). Փ. Լազրանձ, յերես 148, թարգմանէ *միրտ* 'մրտենի': «Եւ յորժամ կամիցիք զովարանել զքաղաքս [Անտիոք], մի ասիցէք *զզաբնիզայ* կամ զբազմութիւն ծառոց մայրից *ճշդարենեաց* եւ ոչ՝ զաղբիւրս ջուրց» (Ոսկ., *Անդրի.*, ԺԷ, 879. Ճ. Դ. ծա): «Ապա պատահէ քեզ դաշտ մի սպիտակ իբրեւ զձիւն, եւ խոտ անոյշ բուրէ ի նմանէ, անջրդի, շառափնայոլով, եւ ի նմա բնակեալ սիւղ* եւ հիրդայն [Հիդրայն] եւ շունք երեքգլխեանք. եւ են անդ ծառք *ճշդարենիք* եւ նռնենիք, ծառ մի բուխ եւ քանձրատերիլ, ճեղքն՝ [իմա՛ ճիւղքն՝] մշքալից»:

**Սկիւղ*. տե՛ս «Սիկղ եւ հիդրայն ... սիկղն՝ շուն ասի երեք գլխի» (*Գիրք թղթոց*, 231 եւ 334):

Ճշնան[[ո]]ր, **ճշնանօր**. *ռող պիփուլան*. թուի նոյն ընդ *Ճշնարօտ*. *Ճշնանոր* (*Թորոս աղբար*, Ա., 12, օրինակեա՛ գերեսան 11-12): «Վայրի ծաղիկ յոյժ գեղեցիկ նման կարմիր վարդի, այլ մեծ քան զայն» (*Մանանայ*, 449):

Ճշնարոտ, գղ. *պիվուան*. գղ. *բուվրեօյ* բոչունն կոչի եւ *պիվուան*, յաղագս գունոյն. տե՛ս *Բուվրեօյ* ի Լիտրէ եւ հայերէն *ճշնանոր, ճշնարոր*. «*Փինոնա*. ոմանք *ճշնարոտ* ասեն, եւ այլք՝ *քահանայատակ, խաչափայտ*» (Բժշ. Բ 358): «*Ճշնարոտ*, որ է *փինունա*» (Ամրտ., *Անգ. անպ*., Գ, 212, Բժշ. Ե): *Ճիշնառուր* (Հ. Ղ. Ինճիճ., *Նոր Հայաստան*, 183):

Սպիտակ ճշնարոտ. «Դիւահարի բժշկելն այս է: Ա՛ռ սպիտակ *ճշնարոտի* [Զ *ճշնառօտի*] տակն, երեք բաժին արա՛. ա̅ բաժին ուտել տո՛ւր. ա̅ բաժին ուրբաթ [Զ օրբաթ] օր ծխել տո՛ւր ներքեւն, ծուխն իւրն գնայ. ա̅ բաժին առ իւրն պահէ. լաւանայ Աստուծով» (*Անուանք դեղերոյ*, յօդուած ԼԲ, ՌՄԼԵ = 1786, ընդօրինակութիւն Սերոբէ Ալիշանի). փոքր ինչ այլազգ է ի *Հայկ. բուսար*., 1900:

Ճողոպուր, տե՛ս եւ *Ճղոպուր*. բառ Արցախոյ. ՚ընկուզի՚ (Ստ. Շահրիման.):

Ճոմէր. «Է խոտ ինչ պատուական, որ բուսանի իբրեւ *գչավտարի* բոյս, հասկն ամենեւին ոչ զանազանի ի հասկից *չավտարից*. արմատն է խստրանման, բայց քաղցր, զոր փորելով հանեն տղայք եւ ուտեն. բայց ոչ յամենայն խոտհունձս բուսանին եւ ոչ սերմանին» (*Գւռ*. Բ 10). «*Ճոմէր*. է խոտ ինչ, որոյ բոյսն եւ հասկն նման է *աշորայի* կամ *չավտարի*. ունի արմատս նման խստորի, քաղցր. զայս խոտ վասն անասնոց հնձեն, եւ է յոյժ իւղային. ազազուն հունտ ունի երկայն» (անդ, 35):

Ճոյփն, որ եւ *Հանար, Տարեկան*. «*Զաւտար*, գղ. *սեգլը*. հայերէն *ճոյփն* ասեն» (Ամրտ., *Անգ. անպ*., Գ, 414, Բժշ. Ե): «Աժնիկ լինիս դու բարխանի, Որ պահոց օրերն կու եփվի. Դու հանդիպիս անեփ *ճոյփի*, Յետ կացի՛ր, ակռադ կու ցաւի» (Կոստանեանց, Ա., 59):

Ճոն. տն. *չավտար* (*Գւռ*. Բ 55). յորմէ՝ *ճոնախառն* (Բժշ. ԺԱ 15, *Հայկ. բուսար*., 1902): Տե՛ս եւ *Ճոնունկ*. գղ. *սեգլը*. «*Ճոն*. ընդեղէն է. հանար» (Հ. Մկ. Անան., *Աշխ.-գրար*.): «Էր սա [Բարսեղ] առաջնորդ դպրավանից յերկրին Շիրակայ յաւուրս կաթուղիկոսութեան Ներսիսի Շինողի, որ կոչիւր մականուամբ *Ճոն**, որ եւ հրամանաւ նորին Ներսիսի Շինողի որոշումն արարեալ շարականաց ... եւ այն շարականք ... կոչեցան *ճոնընտիրք*, որպէս գրէ Վարդան պատմիչ» (Գէորգ Տէր-Յովհաննէսեան, Հ. Գրիգորիս Գալէմքեարեան, *Ցուցակ հայ 22 Արքունի մտենդ. ի Միւնխէն*, թիւ 14, երես 29բ):

*Գուցէ վասն գոլոյ նորա վտիտ եւ նիհար, քանզի *ճոն* մեկնի "լինել վտիտ ցորենաման հատ, որ բուսանի ի մէջ ցորենոյն":

[[Ճոռ, տե՛ս Ճակնդեղ:]]

Ճունակ. «Աշորուկ. *չավտարի* պէս է ու խոտ է երկայն. առանց սերմի կը բուսնի. պոնտացիք *բուժա* կ՚ըսեն» (*Գւռ*. Ա 82):

Ճոխնձորի. տե՛ս եւ *Յոպտկի, Յովարդ. ցըր էրիկի*. *ճոխնձորի* (Բարխուդարեանց, երես 54):

Ճոնեկ. «Բանջար ինչ, որոյ արմատն սոխ է. քարշեն յերկրէ, հատանի յարմատոյն եւ արձակէ հիւթ ինչ, որով նախշեն մանկունք զձեռս իւրեանց պուտ պուտ կարմիր. հիւսեալ՝ չորացուցանեն եւ եփեն կերակուր» (*Գւռ*. Բ 35): «*Ճոնեկ*. խոտ մանրատերեւ» (*Մանանայ*, 449):

Ճոտանձի. «*Ճըռ-տանձի*» (Բարխուդարեանց, երես 54): Տե՛ս եւ *Կոտանձուկ*:

Ճփնի, գղ. *լորիէ-րոզ, օլէանդրը* (ըստ *Հայկ. բուսար*., 1915). «Բարոնան. *ճփնոյ ծաղիկ*» (Գադիանոս Բ. Գաղ. Գ ունի *շնփնածաղիկ*, թերեւս *ճփնածաղիկ*): «*Ճփնի*, որ է *դիփլայ*» (Ամրտ., *Բժ. բոգ*. Գ. 214): «*Դարխաննեկն*. հայ. որ է *ճփնին*» (Բժշ. Բ 326): «Տերեւն նման *ճփնոյ* տերեւին» (Բժշ., *Հայկ. բուսար*., 1391):

Մ

Մագարիկոն, չքուի հայ բառ. «*Քասնթին. մագարիկոն*» (Գաղ.)։ «*Մագարիկոն*՞. ռամկական կոչումն ստեպղինի եւ բրբնջուկի ի սերաստացւոց» (*Հայկ. բուսաբ.* 1920)։

Մազկար. չիք ի *Հայբուս.*. կայ անդ, 1925, «*մազկափ*՞, *մազկապ*՞. ձուք տուող կանգառն է ըստ պոնտացւոց. տե՛ս *Կանգառ վայրի*»։ «*Մազկաղ*. կաբխոտ է, եւ արմատ սոխի պէս է» (*Խոտրջ.* 63)։

Մազուկ. ազգ կորեկան. իցէ՞ նոյն ընդ *Գաւարս*. «Է սպիտակ եւ դեղնագոյն մանր կորեակ ինչ, որ տայ հարիւրաւոր» (*Գւռ.* Բ 35)։

Մազտաքէ. տե՛ս եւ *Կիւ. Հայբուս.* 1198, ե. 274. Մխ., *Դտ.*, 326։

Մազտաքի, ծառ. տե՛ս եւ *Կուեն*. գղ. *լանտիսկ*՞, որ եւ *Հերձի*, *Սինոս*. «Եւ այնոքիկ, որ ի չաչի ջանջխէ լինին, այսոքիկ են. խնձորենի, կեռասենի, *մազտաքի*, մրտենի, արքայականենի» (*Վստ.* ՄԻԸ 143)։

Մաքզենի, յն. *կոմարոս*, [[գղ.]] *արբուզիէ*. արր. «*քոալոր*, *չէճրէթ ելտ-տիւպ*, *արբուստուս* [*արբուտուս*՞], *ուվա ուրսի*» (Լըկլէր, Բ, 1290). «*Կաթալարի*. սարդասպան» (*Թրգմ. դեղոց*, *Հայբուս.* 2010). արր. «*կաթլաբ*, *արբուզիէ*, Գ, 1807, ուր գրէ *արբուստուս*, որ եւ *ճինա*, Ա. 519. տե՛ս *Կաթլարի յՕտար*։

Մաքզի ծառ. բուի իբր *Մաքզենի*, եւ ոչ սեռական *մաքուզ* բառի. հտ. «*կորբեզոլո*, *մաքուզենի*, *Հօճա էէմիշի աղաճը*. գիւղականք կոչեն եւ *ալբասրո*» (Ջախջ.). *Վստ.* ՄԽԴ 155. «*Խօճայ էէմիշի* պտուղը, *մաքուզ*: *Խօճայ էէմիշի* ծառը, *մաքուզենի*» (Հ. Մկ. Անան.)։

Մաքուզ. տե՛ս եւ *Խմորուկ*. լտ. *արբուտում*, պրս. «*քէյհին*, *մաքուզ*. բուրքերէն *գօճա էէմիշի*» (Գէորգ). տե՛ս եւ *քէհն*. հտ. «*կորբեզզոլո*, *մաքուզ*, *Հօճա էէմիշի*» (Ջախջ.)։

Մալաղի տանձ. տե՛ս ի *Տանձ*. արր. *կոտլաբ*, Ա. 246։

Մալաչի տանձ. «Անուշ մանրայ *տանձ մալաչի*, արօսի եւ մէհրէնիկ» (*Արեւելք առաջին*)։ «Ի սահմանի, որ [Արտամետի] լինին ... պէսպէս տեսակք խնձորոյ եւ տանձի, յորոց երկուքն կշռեն մի օգգա, որք կոչին *մեղրիկ տանձ*, *մալաչի տանձ*, որ ի ձմեռան հասանէ, *Նռնենի տանձ*» եւն (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 144)։ «*Մալաչի տանձ*. յարգի է սա քան զայլ ձմեռնային տանձս, զոր զգուշութեամբ առեալ ի ծառոյն եւ կախուան արարեալ՝ ի ներքնատունս կամ ի ջերմին սենեակս կախեն յառաստաղաց, որով դիմանայ ի ձմերան» (Խրիմեան, *Հրաւիրակ Արարատեան*)։

Մալի լեզու. եզան լեզու (*Գւռ.*, Ա. 35). «*Մալ*. արջառ, եզն, կով, գոմէշ» (*Բառք սասնցւոց*, հաւաք. Հ. Սուք. Պարոնեան, թիւ 12). «*Մալ*. ընդհանուր անուն կովուց, եզանց, արջառաց, գոմէշներու, մատակ գոմէշներու» եւն (Միհրան Մամիկոնեան, *Գւռնք.*)։

Մաղբ մայր փայտի. *Հայբուս.* թիւ 1936 (օրինակեա՛)։

Մաղասախոտ.

[[**Մաղասխոտ**, տե՛ս **Մաղսխոտ**։]]

Մաղսխոտ, Բժշ. Ա. 395. «*Մաղսխոտ*՝ գ̅ բուռն» (Բժշ. Ա. 395)։ «*Մաղասխոտ*, որ ի սարերն [ի սաղերն՞, սաղերն՞, ի սայլերն՞] բուսանի» (Բժշ., *Հայբուս.* 1944)։

Մամի ոջիլ. խոտ է բարակ եւ խիտ տերեւովք. ունդքն ի վերայ նորա նման ոջլոց» (*Գւռ.* Ա. 35)։

Մամխենի, [[գղ.]] *պրիւնելիէ* (Հ. Սուք. Պարոնեան, *Բառք սիւնեցւոց եւ բիֆլիսեցւոց*, թիւ 16)։

Մամխի, -*խւոյ*, էմին, գղ. *կրեկիէ*, *պրիւնելիէ*։

Մամխոպող. Դաւ. Սալաձորեցի, *Բզմ.* 1869, 163։

[[**Մամոխ**, տե՛ս **Մամուխ**։]]

Մամոխի, Ինճիճ., *Նոր Հայաստան*, 183։ Պտուղն ասի *Մամուխ*։

Մամուխ. գրեա՛ ի *Մամխի*. «*Մամոխ*. է փոքրիկ սալոր, որ ի լերինս լինի ի բուսս եւ է քաղցր յոյժ» (*Գւռ.* Բ 37). «*Մամոխ*. տն. *ցըր էրիկի*» (անդ, 57): Տե՛ս *մամոխ* եւ ի *Կռապալա*:

Պրս. «*լիքէք, մամուխ*, որ է թթու շլոր. *էշքի էրիք, ալուչի, Թիւրշ*» (Գէորգ). [[գղ.]] *պրիւնել*, «Ազգ սալորոյ մանր, կլոր, մուք մանուշակ, միջուկը կանաչ. երբ ցուրտ ուտէ, կարմիր մանուշակի գոյն կ'առնու» (Հ. Սուք. Պարոնեան, *Բառք սիւնեցւոց եւ բիֆլիսեցւոց*, թիւ 16): «*Մամուխ. տաղ էրիկի, պրունուս սիլվեստրիս*. ծառն՝ փշալից. պտուղն իբր զհատ խաղողոյ բոլորշի է, սեաւ հարեալ ի կապոյտ. միսն՝ պինդ, կանաչագոյն եւ համն տտիպ» (Ստ. Շահրիմ. ի *Դամոն*): «*Մամուկ սալոր, մամուխ*, որ է վայրի սալոր, *ցըր* սալոր» (*Բառք Բիւթանացւոց*՞, Հաւաքումն Հ. Սուք. Պարոն., թիւ 4). «*Պարեախ* սալոր, ըստ ռուսահայոց՝ ճաննուր. *ճան էրիկի*» (*Բառք Բիւթանացւոց*՞, նոյնն, անդ): «*Մամուխ* (հայոց) [այս ինքն՝ Հայերէն]. *ճան էրուկ* [տն.], շլոր» (Սիմ. Կամերկապցի): «*Մամուխ*. փափուկ կամ միրգ բոլոր եւ սեաւ» (*Հին Բռգ.*), Յաւելուած ի Ջեռագրէն Տ. Յովհաննէս Հիւնքեարպէյէնտեանի. նոյն է եւ ի *Բառգիրք հայոց* Երեմիայ վրդ., Լիվոռնոյ, 1698, երես 293: «Ա՛ռ զկանանչ առջասպն ... եւ զջուրն պտղին, որ ի լադինն *շուբալէ* [գղ. *սորբ*] կոչի եւ զվայրի թթու խնծորին եւ զվա[յ]րի *մամուխին* միապէս եւ միաչափ եւ զջուրն թթու նռան եւ *նշատիր* եւ հասարակաց աղ» (*Բժշկարանութիւն*, էջ 27): «*Մամուխ*. ծառ ինչ յԱրարատ, տերեւք նորա՝ նման խնծորենւոյ. կորիզ նորա՝ ի չափ եւ ի ձեւ բալի. շլորահամ, թխագոյն. ուտեն եւ քաղցրաւենիս շինեն» (*Մանանայ*, 449):

Մամուխիկ. «չպէտք, անգործ, խոպան, պարապ» (Փիրղալէմ.):

[[**Մամուկ, տե՛ս Մամուխ:**]]

Մամուռ, գղ. *մուս*. կայ եւ Լոռ: *Մամուռ ջուրց*. կայ *մուս ակուատիկ*. Բրս., Վեց., Է. Նեմես., ԲՆ. Ա., 22 երկիցս: *Մամուռ քարի*, որ եւ *Քարաքոս*, գղ. *լիքեն*. նոյն բուի եւ *Լաւռ* (ՎՀ Բ 132, բ. թրգմ.). ՎՀ Ա. 399, բ. թրգմ.. *Սոփ*. ԺԲ 38, 40, Վկ. *Սուքիասանց*:

Մայր. Արիստ., տե՛ս զվկ. ի *Շոճի*՝ *Սոճի*. «*Փայտիւք մայրից*» (Խոր. Բ խթ 271): «*Մայրարուսակ* լեառն Մեծրաց» (Ստ. Ասողիկ Գ խդ 279):

Մայրձըթի, գրածն՝ *մարծլթի*, տե՛ս *Հոշի*:

Մանանիխ, գղ. *սենըվէ*, ռմկ. *Մաննեխ*. «Իսկ ի գալ միւսոյ ամին յղէր դեսպանս իշխանն Իսմայելի [*առ Լեւոն արքայ յունաց*], իբրեւ խրոխտալով զարհուրեցուցանել կամեցեալ՝ մեծամեծս փքայր: Տայր տանել, որպէս լուաք, ընդ պատգամին սերմն *մանանխոյ* զչափ երկուց գրուաց եւ գրէր առ թագաւորն յունաց» *եւն* (Ղեւոնդ երէց, *Պտմ.*, 189): «Իսկ յետ Աբդալայի Մահմէտ՝ որդի նորա. եւ առաքէ առ Լեւոն երկու գրիւս *մանանեխ* եւ զօր զկնի եւ չկարաց վնասել» (Վարդան, *Պտմ.*, 76): «Քանզի որպէս ունի յինքեան յիշատակարանն զանբիւ զօրուն զչափ համարոյ հատոյ երկոտասան գրուաց չափ *մանանխոյ*, որք նուաբեկեալք ջրահեղձոյց անդնդավիժակք ընկղմելութեամբ սատակեցան յամենի ալեաց կուտակելոց» (*Վկայաբանութիւն Համազասպայ եւ Սահակայ*, *Սոփ. հայկ.*, ԺԲ 62). *Երկոտասան* բուի ուղղելի *երկու*: Յորմէ՝ ռմկ. *մաննեխուտ*. «Մէկ՝ արտ ի տափիս, մէկ՝ ի *Մաննեխուտին*» (Արձանագիր ՈՃԵ = 1206, Ալիշան, *Շիրակ*, 120ա):

Սպիտակ մանանիխ. «*Ասփեգ*. սպիտակ *մաննեխ*» (*Թրգմ. դեղոց*). պիտի *ասփեդ*: «*Հուրփ*, որ է սպիտակ *մաննեխին* ունտն» (Բժշ. Ա. 40): «*Հուրբ*. սպիտակ *մանանեխի* ունտ» (Բժշ. Ա. 144):

Վայրի մանանիխ. տե՛ս եւ *Ջագախոտ*. «*Սիրինջիա*. *վայրի մաննեխ*» (*Թարգմ. դեղոց*). լտ. *Թլասպի*, գղ. *սենըվէ սովաժ*:

Մանդիկ, ռմկ. *մէնդիկ*. նո՞յն ընդ *քեղ*, գղ. *լիվեչ*. բուի այլ ինչ, եւ ոչ նոյն ընդ *Մանդակն*, *մանտակ*, որպէս համարի *Հայբուս*.ի թիւ 1969. կայ ի Բառարանին Ռիվոլայի, այլ չէ յայտ՝ *մանդի՞կ*, թէ *մոնդակն*. «*Մէնդիկ* (քեղեցւոյ բառ). մաղտանոսի կը նմանի, բայց անկէ սակաւ ինչ երկարութեամբ. գոյնը՝ կանաչ. քիչ կը բարձրանայ. զօր իւղով կը տապկեն ուտելու համար» (Խաչատուր Քհ. Տէր-Վարդանեան): Պրս. «*քեաշիմ* է խոտ մին, որում *մէնտիք* ասեն» (Գէորգ):

Մանի. «Անձնին, դղքին, *մանին*, հացին, կեչին եւ խածին» (*Յղ. ծառոց*): «*Մանի*. է ծառ ինչ իբրեւ զկաղնի, որոց բազմաց դիպի ի ստորին կողմն արմին բարակագոյն լինել քան զվերին. տերեւք նորա՝

իբրեւ զտերեւս ծիրանւոյ. փայտ նորա՝ փուտ, ի մուք գիշերի առաւել քան զայլ ազգս փուտ փայտից լուսատիպ փայլէ» (*Գւռ.* Ա. 40): «*Մանի.* է փոքրիկ ծառ անպտուղ. միայն տերեւքն՝ կերակուր անասնոց» (*Գւռ.* Բ 7): «*Մանի*, տճ. *ըստրուճ*» (*Խոտրջ.* 43). կայ տճ. *ըստէրճան*, լտ. *իմպերատորիա օստրութիում* կամ *աստրանտիա* կամ *լասերպիտիում գերմանիկում*. իտ. *իմպերատորիա* (Բէստէն, Բ, 190). տե՛ս *Արքայիք խոտ*: «*Մոնի. սոռիչ աղաճը*» (Նշան Խտշեան, *Հանդէս ամս.* 1895, 185բ): «*Մոնի.* տեսակ մի թեղի, տերեւներն՝ աւելի ուռիի տերեւներու կը նմանին. ոլորուելով բարձրացած մեծ ծառ է» (*Արարատ*, ԻԵ, 430. *Հայբուս.* 2106):

Մանիշակ. տե՛ս **Մանուշակ**:

Մանծան, իտ. *մելանծանո*. «*Պատընճանն*, որ է *մանծանն*» (Բժշ. Բ 695 եւ Ասար Սեբաստացի):

Մանկախոտ, տե՛ս *Մանգախոտ* ի *Հայ. բուս.* 1967:

[[**Մաննեխ**, տե՛ս **Մանանիխ**:]]

[[**Մաննեխուտ**, տե՛ս **Մանանիխ**:]]

Մանուշակ. «Ծիրանարոյր *մանուշակ*» (Թէոդ., *Ի կոյսն*). «Ծիրանացեալ *մանուշակ*» (*Կոչ. ընծ.*, ԺԶ 344. տե՛ս ի *Յակինթ*): *Մանուշակ* (Գր. Նար., *Տաղք*, 473, 474): *Մանուշակ* Ձ, իսկ տպ. *մանիշակ* (Ագաթ. 480), Ոսկ. *Ա Տիմ.* ԺԷ Յորդ. 160: Ասորերէն *մնիշքո* (*մնիշկո՞*):

Ծիրանի մանուշակ ((Գր. Նար., *Տաղք*, 465. տե՛ս եւ ի *Յակինթ*):

Մանուշակի ծէք (*Հայկ. բուս.* 2255): *Մանուշակ սպիտակ*. «*Ղեւկոյիոն. մանիշակ սպիտակ*» (*Բառք Գաղ.*):

Մանտակ. տե՛ս եւ *Մանդիկ*. «*Մանտակ*. խոտ ինչ ուտելոյ աղիւ համեմեալ» (Փիրղալէմ.). *Հայկ. բուս.* 1969, *մանտակ* ն. 421 յղի ի *մանդակ*: «Է բանջար ինչ, որ ի լերինս բուսանի. ունի սպիտակ ծաղիկս, եւ նուրբ մազով պատեալ ոստք իւր, որոյ արմատն անուշահոտ է» (*Գւռ.* Բ 36): «*Մանտակ* [ի Բաղէշ], ի պարսկահայոց կոչեցեալ *շուշան*, որ է խոտ անուշահոտ, նման տերեւոցն տապղինի, այն է *համուճի*, եւ ի գործ ածի ի կերակուրս» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 168 եւ 41). «*Մանտակ*. բանջար ի Մուշ» (անդ, 183): «Շահպոկ [ի Մեծ Հայս]. օճատակ է. [ի Մեծն Հայս] *մանտակ*. իտ. *բիստորտա* [գդ. *բիստորտ*]. տերեւն յարմատոյ անտի բուսանի լայն, սրածայր, երակաւոր, ծղօտն՝ ոտնաչափ, ծաղիկն՝ ծիրանի, հասկաձեւ» (Ստ. Շահրիմ.): «*Մանտակ*. բանջար վայրի. աղջուր դնեն եւ ուտեն» (*Մանանայ*, 449): Կայ պրս. *մէնտիյէ*. «*Քեաշիմ*. է խոտ իմն, որում *մէնտիյէ* ասեն» (Գէորգ):

Մանրագոր 1 (ըստ եբրայեցւոց). «Սոյնպէս զունակ զունակ եւ երփն երփն ծաղկանցն. որպէս *մանրագորն* ու վարդն եւ շուշանն եւ ասպուզան [տպ. ասպազան] եւ յասմիկն, անիարն եւ սմնակն» (Ագաթ. 480 *բ*. տպ.): — «Գնաց Ռուբէն յաւուրս հնձոց եւ եգիտ խնձոր *մանրագորաց* յանդի եւ եբեր զայն առ Լիա՝ մայր իւր: Ասէ Ռաքէլ ցԼիա՝ քոյր իւր. "Տո՛ւր ինձ *ի մանրագորաց* որդւոյ քո[յ]": Եւ ասէ Լիա. "Ո՞չ իցէ քեզ շատ, զի առեր զայրն իմ. միթե եւ *զմանրագո՞րս* որդւոյ իմոյ առնուցուս": Եւ ասէ Ռաքէլ. "Ոչ այդպէս է. ննջեսցէ ընդ քեզ զայս գիշեր փոխանակ *մանրագորաց* որդւոյ քոյ": Եւ իբրեւ եմուտ Յակոբ յանդէ ընդ երեկս, ել Լիա ընդ առաջ նորա եւ ասէ. "Առ իս մտցես այսաւր, քանզի ի վարձու կալայ զքեզ փոխանակ *մանրագորաց* որդւոյ իմոյ"» (Ծնն Լ 14-16): — «*Մանրագորք* ետուն զհոտ իւրեանց, առ դրունս մեր՝ ամենայն մրգաբերք» (*Երգ երգոց* Է 13): — «Յերկնաւոր *մանրագորս* հոտոտեցար, զհետ հետոց դորա ուսի՛ր վերաբերիլ» (Եղշ. *Այլակ.* 225): — «Անուշահոտ *մանրագորն*, բարաշխ կաղնիք եւ լայնանիստ ընկուզիք, քաղցրահամ տանձիք» (*Յդ. ծառոց*, *Հաւաքումն բանից նախնեաց*, ԺԶ, 67): — «Գնասցուք ի դաշտ ինչ մրգաւէտ տնկոց եւ բերցուք անտի *մանրագորս* ի պատիւ սրբոյ մաւրս մերոյ եկեղեցւոյ» (*Տաւնապատճառ*, *Հայբուս.* 1979): — «Մոկք ... ունի ի մրգոց գաիրշակ եւ *մանրագոր*» (Խոր., *Աշխարհ.*, 608): — «Տունկս զաւսացեալ, նեցուկս խորտակեալ, փայտս ամենեւին փտեալ, *մանրագորս* աղաւաղեալ ... բոյսս արմատաքի խլեալ» (Գր. Նար., *Աղաւթք*, ԿԷ, բ, 173):

Մանրագոր 2 (ըստ յունաց). «Ընդ այլ սերմանիս, որ են ի դարման կերակրոց մերոց, տուան դարձեալ եւ այլ արմատք, որ անուանեալ կոչին *եղեբորոս* եւ *ակոնիտոմն* եւ *մանրագոր* եւ կարն *մեկոնիոն* արմատոյ» (*Վեցաւր.*, Ե, 88). «*Մանրագորաւ* բազում անգամ բժիշկք քուն ածեն այնոցիկ,

որոց քուն հատեալ իցէ յաչաց» (անդ, 89)։ «*Զմանրագորն* եթէ ոք լոկ ուտիցէ, սատակիչ է եւ խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց»։ «Մինչեւ դու երբաս, Ղազարոս համակ ի քո՞ւն կայ. միթէ ի *մանրագորա՞ց* թմբրեալ իցէ եւ կամ ի սաստիկ անապակաց զթմբրեալ իցէ» (Մամբրէ, *Ի յար. Ղազարու*, 39). տպ. *զմրեալ* եւ ի ծան. «Մի օրին. *զմբրեալ*». Մամբրէ առեալ է ի Փիլոնէ։

Մաշ. պրս. *մաշ*, լտ. *փազէոլուս. մունգո* Իբն էլ-Բէյտար, հ. Գ, թիւ 2060. *Հայկ. բուս.* 3196. տե. *պիզէլեա, մաշ,* ոլոռն (Պօզան.). գղ. *պըտի պուա՞*. «*Մաշ. պօկլունա*» (Ամրտ., *Բժ. բոգ.*, Գ, 214)։ «Կազմեալ կայր *մաշ* ի դարմանս հիւանդաց եւ սնափառէր. եւ այլոց սերմանց եւ հնդոց ոչ տարեալ՝ այպանենն զնովաւ, թէ "Իշխանն մեր, որով կեան հիւանդք եւ առողջք, ոչ այդքան պարծի, եւ դու ծանծաղամիտ գոլով՝ ընդ որում *մաշ* կոչիս, փքաս, ոչ գիտելով, եթէ ժամանակաւոր է պէտք քո"» (Մխ. Գոշ, ԽՋ)։ «*Մաշ. պիզէլեա*» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*)։ «*Մաշ*, որ է *պիզին* կամ *բիզելին*, ոլոռնաձեւ, զոր ուտեն մարդիկ» (*Գռ.* Բ 11)։ Պրս. «*մէշիւ*, ոլոռն. թուրքերէն *պուրչագ*» (Գէորգ)։ Պրս. «*մաշ*, հայերէն եւս *մաշ*, որ է յայտնի իմն ի տեսակաց ընդեղինաց. ասի եւ *մէրտիմէք*, որ վրիպակաւ ասի թուրքերէն *միւրտիւմէք*» (Գէորգ)։ «*Մաշ.* չոր, մանր ոլոռն կանաչ կամ սեաւ» (Հ. Սուք. Պարոնեան, *Բառք բիֆլիզեցւոց կամ Սիւնեաց*, թիւ 15)։ Այն *մաշն*, որ ամբողջ ուտի հանդերձ պատեօքն կամ փոճոկօքն, որ փափուկ են, եւ շուետերէն ասի *սոկերէրտեր*, գղ. ասի *պուա գուլիւ, պուա գուրման, պուա մանժտու, պուա սան կոս* (տե՛ս *Պուա* յիմ *Գաղղ.-հայ.*)։

[21 Հոկտեմբեր 1913] *Կարմիր մաշ.* ուղիղ թուի, եւ ոչ *կարմիր մոշ.* «*Կարմիր մաշոյ մուզաւարայ* ուտէ նշի ձիթով» (Մխ. Հեր., Ե, 9), "կարմիր" յիրն էլ-Բէյտար, երեսք 267–268. տե՛ս *մաշ* եւ *Հիւլ գ'ամանդ զուս* յիրն էլ-Բէյտար, հ. Գ, երես 270. տե՛ս յ*Օտար*։

Մաշկամիրգ. գղ. *շատենյը.* մարթի ասել *մաշկամրգի* զծառն, որպէս *հաւամրգի*. «Տուրուբերան ... ունի եւ զազպէն եւ մեղր եւ *մաշկամիրգ* եւ սպիտակ նաւթ եւ երկաթ» (Խոր., *Աշխարհ.*, 608)։ «Գտանի [ի Տուրուբերան] պստակ եւ *կաստանոն*, որ է *մաշտամիրգ* [[մաշկամիրգ]] եւ մեղր անոյշ քան զամենայն երկրի եւ երկաթ» (Խոր., *Աշխարհ.*, ԻԲ, 41)։ «*Մաշմուրք*, տե. *քէստանէ.* հասարակ շագանակն է այս» (*Խոտրջ.*, 43)։ «*Մաշմիրգ. շատենյը, քէսթանէ*» (Միհրան Մամիկոնեան, *Գաւառականք*, Տրապիզոն, Բաբերդ, Կարին, Մուշ)։ «Թոլ. *մաշմրգին* վրայի փշոտ ամանը» (Նշան Գ. Խտշեան)։

[[**Մաշկմրգենի**]]. «*Մաշկմրգենի (քէսթանէ)*» (Թումայեանց [Պաւղոս], *Պոնտոսի հայերը*, *Լումայ*, 1899, Գիրք Բ, 150)։

Մառուլ. յն. *մառուլիոն* կամ *մառուլլոն*, [[գղ.]] *լետիւ.* արմատ բառիս է անյայտ։

Մասուր, *-սրի, -սրէ*, որ եւ *Ազաւուկ.* արբ. *խուէյիգ խուլ-քէլպ*, [[գղ.]] *ռոնս* (Լըկլէր, Բ, 1290, 1298, իսկ Բ 1579, Գ 228 *էգլանտին*). գղ. *գրատ-կիւ։ Մասուր* Ա. 84. տե՛ս եւ *Մամասուր* (Ամրտ., *Բժ. բոգ.*, Գ, 267)։ «*Ցուլեխ ըլ-քալպ*, հայ. *մասուր* եւ թուրք. *իթ պուռնու* ասեն» (Բժշ. Գ, *Հաւաքումն բնութեանց պտղոց*, 31). տե՛ս *Իթ պուրունու* յ*Օտար*։ «*Իթ պուրնի. յուլեխ լ-քալպ. մասուր*» (Բժշ. Գ 158)։ «*Մասուր.* պտուղ վայրենի վարդի, հաւկթաձեւ» (*Գռ.* Բ 57)։ «*Մասուր.* պտուղ վարդենւոյ, որ թերթերն թափելէ յետոյ կը կարմրի եւ կը հասուննայ» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313)։ «Ամենայն պտղի *մանրագոր* ասեն, որ ծաղիկն ի ծայր ունին, որպէս *մասուրն* եւ սինձն. եւ դարձեալ ազգ մի խնձոր կայ վաղահաս, *մանրագոր* ասի, ուստի քաղեաց Ռուբէն» (*Լծ. Նար.* ԿԷ)։ «*Մասուր.* պտուղ վայրենի վարդի կարնաձեւ» (*Գռ.* Բ 57)։ «*Մասուր.* թուփ փշալից. պտուղ նորա՝ վարդագոյն եւ ի չափ ձիթապտղոյ» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*)։ «*Մասուր.* վարդի պտուղ. սերմի պարկ» (Փիրղալէմ.)։ «*Մասուր.* անհոտ վարդի ծառի պտուղ. թթու է. հազի դեղ համարին եւ կերակրոց մէջ գործածեն» (*Մանանայ*, 449)։ «Ա՛ռ հայ խունկ ... դարիսեն ... կալընկալ ... յերկայն պղպեղ... վարդի պլպուկ հանած ի *մասրէն*» (Բժշ. ՊՄԷ [ՊՁԷ վիեննացւոց], երեսք 106–107)։

Մասրէ տիտոս. ի *մասո՞ւր* բառէ (*Հայբուս.* 2984)։ *Մասրի կուտ* (Բժշ. Ա. 314)։

Մասուրենի. «*Մասուրենի*, որ է վայրի վարդ ծառացեալ» (Ինճիճ. 183)։

Մասրենի, գղ. *էգլանտին.* «Նա՝ խնդալով ցընծայ 'ւ ուրախանայ այն *մասրենին* Ու մըտէ ի բուրաստան, քան [*] ժողովէ զայլ ծաղկնին. ժողովեցան զինչ [Զ զինձ] որ ծաղիկ կայ ի յերկրի

գարնանային, եւ խորհուրդըս չարութեան եւ ննջութեան վարդին կամին» (Կոստանդին Երզնկացի, *Այսօր եղեւ պայծառ գարուն*, Տնտր Դ, 6). Ես գրեալ եմ "այնմ ... ենին", իսկ ի *Հայկ. բուս.* 1987, ուր վրիպակաւ Թուլկուրանցւոյ վերագրի, "այն մասրենին": «Օձն փաթթեցաւ ի *մասրենին* եւ անկաւ ի գետն. տեսեալ զնա գայլուն՝ ասէ. "Ահա չարն ի չարն հեծեալ է, եւ չար է, որ վարէ զնոսա"» (Խիկար, *Հայբուս.* 1987): «*Մասրենի* ծաղիկն Դանիելի նմանի» (Աւետիք Ամդեցի [կամ Տիգրանակերտցի], *Հայբուս.* անդ). Դաւ. Սալաձորեցի:

Մասրի. «Փշոտ կամ սուտ վարդ» (*Բառք խոտրջրեցւոց*, Ա., 84):

Մատիտեղ, -*ի*, որ եւ *Հովուի բիր*. թուրքերէն *մաթուխթուկ օթու*. գղ. *ռընուէ, սպերգիւլ, տրենաս* ըստ Էմինի. *մատիտեղ* եղի զ*ռընուէ*. պրս. *պէրսիյանտարու* [թուի *պէրսիյան տարու*, եւ ոչ *պէրսի յանտարու*], արբ. *սաա իւռ-ռաի* (Գէորգ): «*Պարսի անդարու. հովվի բիր, որ է մատիտեղն*» (Բժշ. Ա 145): «*Բրսի անտարուի* ջուր [որ է *մատիտեղն*]. ինքդ *հովուի բիր* կոչի» (Մխ Հեր., ԻԶ 68): «*Բրսի անտարի* ջուր, որ յարապն *հովուի բիր* կոչեն» (Մխ. Հեր., 45): «*Պոլիտանոն. մատիտեղ*» (Գաղ. Ա): Լտ. *պոլիգոնում*, գղ. *ռընուէ*, որ է արբ. *սաա իւր-րաի*», այս ինքն "գաւազան հովուի" ըստ Աւգերի եւ Էմինի: Ի Բժշ. մեկնի «Հովուի գաւազան, *չօպան տայաղի, սաայի ռայի*» (Հայկզ.): Նո՞յն եւ լտ. *վիրգա պաստորիս*: Հ. Ղ. Ալիշան *մատիտեղն* գրէ ի *Բառարանին Վաստակոց* ի բառն *Հովուի բիր*. այսպէս եւ *Հօտիսոն*: *Մատիտեղ* = թուրք. *մաթուխթուղ օթու*. այսպէս գրեալ եմ յ*Օտար* ի *Պարսիան դարու*. բոզ. թէ առեալ եմ ի Րէստէնէ. քննելի անդ ի *վիրգա պաստորիս*: Իսկ ի Գաղ. Բ գրի. «*Հախլալամ. մատիտեղն*». արբ. *հէլ ուլ-հալէմ* է Գառնադմակին. տե՛ս Գառնադմակին ի Հայկզ.. կայ *իլ ալէմ*. տե՛ս *ժուբարբ* յԱւգեր եւ *սեդում մինուս* ի Րէստէն:

Անջրդի մատիտեղ. Բժշ. Է (հին ԺԸ) 64. թուի *սանտինոդ*, որ եւ *տրենաս, ռընուէ*:

Մատմանախ. տե՛ս ի *Ճննղպաշար*:

Մատնախաղող. (գրեա՛). *Հայկ. բուսար.* 1992: Կայ թուրք. *քարմաղ իւզիւմիւ*. տե՛ս ի *Խոտորուկ*:

Մատնէգազ. «Գազն է փուշ ինչ իբրեւ գրուփ բարձրացեալ, զոր Քուրդ կոչեն *կավան*, եւ է բազմատեսակ. բայց զգազպէ բերէ միայն այն տեսակ գազին, որ բազմահերձ է նման մատանց ձեռին, զոր եւ վասն այնորիկ կոչեն *մատնէգազ*: Զգազպէ սորա ժողովեալ բնակչաց եւ ընդ մաղ անցուցեալ՝ զալիւր նորա արկանեն ի պարկ կամ ի տիկ, որ պնդանայ յոյժ, մինչեւ հարկ լինի կացնաւ խորտակել» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 57):

Մատնիկ, որ եւ *Հինգտերեւեան*, *Հնգատերեւ*. «*Բնճակօշտ*, որ է *մատնիկն*, որ է *պէնտաֆիլօն*», Բժշ. Ե (հին ԻԴ) 333: Աշխարհաբար՝ *մատնկեր*, լտ. *վիտեկս, ագնուս կաստուս*, որ եւ Գողեաց նանկ. տե՛ս ի Ստ. Շահիմ.:

[[**Մատնկեր**, տե՛ս **Մատնիկ**:]]

Մատուկ. տե՛ս եւ *Մէտիւք*, տե՛ս եւ ի *Կոպղ*. «Է խոտ ինչ, որ ունի զերիս կամ զչորս մատնակերպ արմատս, զորս խարշեալ՝ ուտեն. բոյս իւր հաստ է եւ կոուեալ յերեսս երկրի. ունի կարմիր ծաղիկ բրդանման, զոր մաքրեն դանակաւ զտերեւս ի նմանէ եւ ուտեն իբրեւ շաղգամ» (*Գւռ.* Բ 35): «*Մատուկ*. մանր խոտ փափկատերեւ» (*Մանանայ*, 449): Նոյն թուի եւ *Մտուկ* ի *Պեհիարոն*: «*Մատուկ, մատուկք*» (*Հայբուս.* 1996): «*Մատուկ, մատուտակ*. քիչ ուտելի խոտ ինչ» (Փիրղալէմ.): *Մատուտակ* է բուն հին անունն, իսկ *մարուխ* է ռամկօրէն, որպէս յայտնի ի Միխայելէ Ասորւոյ [2 մայիս 1914]:

Մատուտակ, -*ի*. գղ. *ռեգլիս* եւ *պիվուան* (Էմին). գղ. *ռեգլիս*, որ եւ *Մարուխ*, զոր տե՛ս. «Է բոյս *պիան քէօքիւ*, յորոյ վերայ իջանէ գազպէն կամ *զուգրէր Հէլվասին* (*Գւռ.* Բ 37): «*Գլիկօ. մատուտակ*» (Գաղ.): «*Գլիկուրեզէն. մատուտակի* արմատ» (Գաղ.), լտ. *գլիկիրրհիզոն*, գղ. *ռեգլիս*: «*Մատուտակ*. թանձրատերեւ խոտ ինչ դառնահամ, որոյ վերայ գազպին կ'իջնայ» (*Մանանայ*, 449): [2 մայիս 1914] «Իսկ Մելիք Յեսոյն շրջեալ եւ տեսեալ զտունս գանձուց Սալահատինին եւ զարմացեալ ընդ յառաւելութիւնն եւ ընդ պատուականութիւնն, զոր ոչն կարծէր, ագահեաց ի յինչսն [տպ. ի յինչսն] եւ ոչ կամեցաւ տալ ի նմանէ եղբաւրորդւոյն իւրոյ, այլ եւ արար զնա ծաղր, քանզի եգիտ նա տուն լցեալ *մատուտակով*, զոր կոչեն ըստ աշխարհաց *մարուխս*, կուտեալ ի պէտս ինչ. զայն երարձ քան բեռն եւ կնքեաց մատանեաւ եւ առաքեաց առ նա» (Միխայէլ Ասորի, տպ. 1870, երես 508): «Եւ Մելիք Յեսոյն

շրջեալ եւ տեսեալ զտունս զանձուցն Սալահադնին՝ ագահեցաւ եւ ոչ ետ, այլ մտեալ ի տուն մի լցեալ *մատուտակ* եւ զայն եբարձ քսան բեռն եւ մատնեհարեաց ծածկարար եւ առաքեաց առ նա: Եւ յորժամ ետես զխարէութիւնն, խոցեցաւ անմխիթար եւ ամաչեաց յոյժ, այլ ոչ էր ձեռնհաս առնել նմա ինչ» (Միխ,. Ասորի, տպ. 1871, երես 503):

Մարախ. տե՛ս եւ Հայկզ. ի *Մարախ* եւ ի Յաւ. *մարուֆն*°. «Շուշան, կանաչ մուրտ ու *մարախն* Ու մանուշակըն մէկ դարձան, Գնացին, վարդին երկիր պագին, Զտեղտն ունէին իւրեանց յալամ» (*Աստուած անսկիզբն եւ անսահման*, 173):

Մարանդիտակ. տե՛ս *Կազմարէ*. կայ լտ. *մարանտա* ի Լիտրէ *Սալանգա, Հէրէչէ*: [[Տե՛ս եւ *Մրուանտակ*:]]

Մարգի ընկոյզ. տե՛ս *յԸնգոյզ*:

Մարբուզ. նո՞յն եւ *Նափուզ* (*Հայբուս*. 2191). «Ծաղիկ է. կարծեմ, թէ Ս. գրքին մէջ Սողոմոնին ըսած *նարդոսն* է» (*Խոտրչ*.):

Մարդախոտ, գղ. *մանդրագոր*. *մարդախոտ* (Բժշ. Ա. 39): «*Լոփալի. մարդախոտ*» (Գաղ.): «Հայերն *մարդախոտ* ասեն» [մանրագորին] (Ասար Բ 198): «*Ասլի լուֆահ*, որ է *ապուխ սանամին*, որ է *սարանըը դուսարուպն*. յիշած է ի վերայ սէին, եւ հայերն *մարդախոտ* ասեն, եւ հռ. *մանդրագուրայ* ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 138ա):

Մարդածաղիկ. բուն թարգմ. յունարէն բառի. տե՛ս ի ստորեւ. տե՛ս եւ *Արանց ծաղիկ*. Բժշ. Ա. 391. յիշէ եւ Ինճին., *Հնախ*., Ա., 177. «*Մարդախոտ* հանելոյ: Դեղ մի կայ, *մարդախոտ* ասեն եւ *մարդածաղիկ*. լինի ի բարձր լերուոք եւ ի ծմակ տեղ լինի, եւ ազգեր են: Է, որ յապառաժուտն լինի, եւ է, որ՝ յաղբերակունք: Իր ծաղիկն՝ կարմիր որպէս հուր եւ օգուտ մարդկան, մանաւանդ կարմիրն, այն, որ տակն որպէս մարդ է: Է, որ արու է, եւ է, որ՝ էգ: Արուն, նման առն, եւ էգն՝ կնոջ: Եւ գտանի ի լերինսն, զի լուսատու է: Երբեմն վառի զեղ կայծակ եւ ժամ մի անցնի: Եր գտնուս, փորէ՛ բոլոր տակին եւ կործէ՛ ի վերայ աման մի եւ մատնեհրէ՛ երեք հետ զինք եւ գնա՛ յարեւացայթքն, բոլորն փորէ՛ զտակն եւ արձակ, որ մազմզկէն չկտրես: Եւ ապա տար ի նա ի մօտ աղչքին մի զարդարած գ̅ օր հետ իրաց, եւ նա առաւել ի հետ պայծռնայ: Եւ յ̅գ օրն գնա՛ դու, եւ՝ աղջիկն, եւ՝ շուն մի, եւ եր ծաղիկն լուսաւոր է, կապէ՛ տոռն մի ի տակն եւ զմէկայլ դեհն՝ ի շանն վիզն եւ դու ի զատ կա՛ց եւ կոչէ՛ զշունն ի քեզ: Եւ ի քաշել շանն՝ կտրէ զտակն, եւ շունն սատկի: Ապա ա՛ռ զտակն եւ պահէ՛, եւ յամենայն ումեք պիտանի է: Եւ որ բ̅, գ̅ հետ առնու յիրմէ, մահդեղ ի վերայ չմտէ, եւ դեւք փախչին յիրմէ, կախրդութիւն եւ դեղ չահոկէ իր: Եւ թէ գինով եւ մեղրով տաս ամլոյ, ծնանի եւ զառն զօրութիւն յաւելու: Եւ դիւահրի թէ տան, դեւք փախչին: Գողոյն թէ քացխով եւ մեղրով տան, օգտէ եւ ամենայն իրաց օգուտ եւ ցաւոց դեղ: Եւ իրեն տանուն [իրենտ անուն, տե՛ս *Հայբուս*. թիւ 950, երես 225] ասեն հելլենացիքն *ամառոտանթոս*», ունի լինել յն. *անդռոսանթոս*] (Բժշ. Ա. 391, յընդօրինակութենէ Սուքրեանի):

Մարեմայ խոտ, մարեմխոտ. տե՛ս եւ *խնկողկուզիկ*, *Թոբբ*. բուն գղ. *մարժոլեն*. շուետերէն *մեծրամ* է գղ. *մարժոլեն*. քննելի, թէ շուէտացիք ուստի՛ առած են զ*մեծրամ* = *մարեմխոտ* [4 նոյեմբեր 1905]. արբ. *միւհրի մէրէմ*, լտ. *սիգիլլում սալոմոնիս*. արբ *պուհուր մէրէմ*, լտ. *ստիրակս*. տճ. *պուխուրի մէրեէմ ճըմաըը*, արջտակ (Հայկզ.). գղ. *մարժոլեն* եւ իտ. *մայորանա*, հյ. *մարեմ* դնեն Աւգեր, Զախչ. եւ վիէնն. իտ.. այսպէս եւ Ռոշքեան. տե՛ս *Մարզանգոշ* ի Հայկզ., *Հայբուս*. 3065: «*Զաղա* եւ *մահուզ*. *մարեմխոտ*» (*Թրգմ. դեղոց*). «արբ. *ճառէթ*, խնկողկուզիկ» (Պօզան.). «*Մարեմխոտ*. *ճուռէն*. սուրբ Գրիգորի խոտն է» (Բժշ. Ժ 170): «Զուիրակ. բորբն է կամ *Մարեմայ խոտն*» (*Լծ. Փիլ*.): «*Մարեմխոտ*, որ է խնկողկզուկ» (Ամրտ., *Բժ. բոգ*. Գ 221): «*Ջաւտա*, որ է *ճաւտայ*, որ [է] *մարեմխոտն*, որ է խնկողկոյզն. յիշած է ի վերայ նէին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 226): «Սուրբ Գրիգորու ծառն, որ է *ճաւտան*, որ է *մարեմխոտն*, որ է խնկողկզուկն» (անդ, 230ա): «Եղջերուն յորժամ հիւանդանայ, *մարեմխոտ* ուտէ եւ լաւանայ» (Բժշ., *Հայկ. բուսաբ*., 2015). այս է գղ. *գլէկտամ*, ողկուզուկ:

Մարեմայ ծաղիկ. *կարյոֆիլլատա* (*Հայբուս*. 389). լտ. *կարյոֆիլլատա վուլգարիս* կամ *գէում ուրանում*. իտ. *կարիոֆիլատա*, գղ. *բընուատ օֆիսինալ* (Բէստէն, հ. Բ, 402) [4 նոյեմբեր 1905]. Լիտրէ

դնէ *գէում ուրրանում* ի *Բընուատ:*

Մարզանոն. Հայկզ. ի *Մարզանգոշ* եւ ի *Մկնականջ*. «*Հափստոն [=Հւոստոն = միւսոմոն].* *մարզանուն*» (Գաղ.):

Մարիամի ծառ, որ եւ *Լուացտակի ծառ*. «*Մարիամի ծառ*, որ է *լուացտակին ծառն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ 22):

Մարիամածամիք, իբր *Մարեմայ ծամիկ*, *Մարիամայ ծամ*. լտ. *ռադիկս կարիոֆիլատա*. «*Մարիամծամիք*, հայերէն. *ռադիքս քարյօֆիլատա*, լատիներէն» (Կ. Քօշարեանց, 131): «*Քարիօֆիլատէ ըրատիքս. քարանֆիլ քէօքիւ.* արմատ մի է երկան, բարակ, վրան ունի դրսէն սեւագոյն կունդեր. մէջը՝ ճերմակ. թարմին հոտը՝ համեմաւոր. չորը՝ տաք եւ այրող. բռնցնող» եւն (Օղուլլուխ., 164-165):

Մարխ. տե՛ս ի *Ստորին հայերէն:*

Մարճակ. տե՛ս ի *Ստորին հայերէն:*

Մարմնատակ. Ամրտ., *Բժ. բոգ.*, Գ:

Մարուխ, *-ուխոյ* կամ *-ուխի*, որ եւ *Մատուտակ*, զոր տե՛ս. [[տե՛ս եւ **Մատուկ**]]. յորմէ՝ *Քաղցրամարուխ*, գղ. *ռեգլիս*. է բոյս ինչ, նման բուսոյ *պիան քէօքին*, զոր լնուն յակս անուոց ի տեղի *խաթրանի*» (Գւո. Բ, 36): «*Ռարա սուս. մարուխի քամուքս*» (*Թրգմ. դեղոց*): «*Քաղցր մարուխոյ* զտակն եւ զրուզն եփէ՛, եւ յաւուրս եօրն բաժակ արբցէ» (*Որիբասեայ բան*): «*Մարուխ.* արմատ քաղցր ի ուտելն» (Փիրղալէմ.):

Մաւրուտ. տե՛ս *Հաւրուտ մաւրուտ:*

Մաք. կայ արբ. *խաշխաշ մաքրուն*, [[գղ.]] *պավո կորնիւ* (Իբն էլ-Բէյտար, հ. Բ, թիւ 796): «*Խաշխաշ. կիւմկիւմ.* տե՛ս *Մաք*» (Հ. Մկ. Անան, *Բոգ. աշխ. գրար.*). «*Մաք.* խաշխաշ, *կիւմկիւմ, մաք, մագ,* մեկոն, մեկոնիոն» (Նոյն, անդ): «*Մաք.* տե՛ս *Մեկոն*» (Նոր հայկզ., *Աշխարհիկ բառք*): «*Պապավեր* ... ըստ մեզ՝ *մագ* կամ մեկոն» (Բէստէն, հ. Բ, 67):

Մելիլովտա, գղ. *մելիլո*. «Ի կոկոնաց եւ ի պտկոց՝ իջելոյ ցողոյ ի վերայ, յինքեանս ծծեն [մեղուք] եւ մանաւանդ ի թիմացն եւ յայլոցն եւս ոմանց գետնանախանձիցն, որ յարանուանակի անուանեն *մեղիղովտայ*» (Փիլոն, *Յղ. բան ունել եւ անասուն կենդանեացդ*, 132):

Մեխակ. պրս. *միխէք*, գղ. *կլու դը ժիրոֆլը* կամ լոկ *ժիրոֆլը*:

Մեկոն, մեկոնիոն. տե՛ս *յԱպրասամ*, ի *Մքինոս:*

Մեղմերդ = կաղնչնանի տակ (Ասար, *Հայրուս.* 2037). յորմէ՝ *Իգամեղմերդ:* Կաղանչանն = *ոփթիմալոս.* է արու եւ էգ. տե՛ս Լըկլէր, Գ, 2302:

[[**Մեղրածծուկ**, տե՛ս **Թորք**, **Մեղրածուծ**:]]

Մեղրածուծ. 1. լտ. *մելիլոտում*, գղ. *մելիլո*. «*Մեղիղոտոն. մեղրածուծ*» (Գաղ. Ա), որ եւ *Մեղրածծուկ*. աստ գրեա՛ զԱմրտ.. օրինակեա՛ զ*Մեղրածծուկ*, զոր գրեալ եմ ի *Թորք* (Հ. Պ. Մեհերեան). տե՛ս եւ *մեղրածուծ* յէմին ի *Բալտա* եւ ի *Լիկոպոդ:* «*Փրասիոն*, որ է *մեղրածուծ*. ի Ձերունոյ քարերն շատ կու բուսնի» (Ամրտ., *Անգ. անպ.. Սիսուան*, 536 ա-բ). տե՛ս զայս եւ ի *Հայրուս.* թիւ 2045, ուր ասէ "Բժշկարան մի": «*Մեղրածուծ.* բորբիկ բանջարի ծաղիկն, որ նման *զանաֆիլի* բացուի. սոյն ծաղկանց բունը ծծեն, որ քաղցրահամ է» (*Մանանայ*, 449):

2. Գղ. *մարրիւբ*. «*Պրասիոն. մեղրածուծ*» (Գաղ. Բ). «*Ֆրասիոն. մեղրածծուկ*» (*Թրգմ. դեղոց*). արբ. «*ֆէրասիյուն.* իտ. *մարոբբիօ* է խոտ ինչ, որ կոչի եւ *պրասսիօ, պրասսինէ, ֆէրասիօն*» (Ջախջ., *Իտ.-հայ.*):

Մեղրապող. Եփր. Դ 205. *մեղրապողիւ* (Զգաւն, ԺԳ, 240), Սուտ-Կալլ., 154:

Մեղրարար, գղ. *մելիլո*. Լծ. Բ 883. տե՛ս եւ *էքլիլ իւլ-մելիք* ի Բառագիրս *Վաստակոց:*

Մեղրէպան. վայրի սիսեռ (*Գւո.* Բ 58):

Մեղրիկ ծաղիկ. Դաւ. Սալածորեցի: *Մեղրկան ծաղիկ*. «Ա՛ռ զեզրկան [բուփ զմեղրկան] ծաղիկն» եւն (*Հայրուս.* թիւ 622), որ ի Տաշեան գրի «Ա՛ռ դազրկան ծաղիկն»:

Մեղրիկ վարդ. Իննին. 302. «*Մրղիկ [մեղրիկ] վարդ.* սպիտակ, փոքր տեսակ մը վարդ յասմիկի

(*նաւէմի*) նման» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313):

Մեղրիկ տանձ, թերեւս կոչեցեալն գղ. *թէօրրէ*. Ինճիճ. 144, 302. «*Մեղրուկ*. տեսակ ինչ տանձի ի Վան» (Փիրղալէմ.): «*Մեղրիկ* [ազգ տանձի], յոր անուն կոչեն ամենեքին, որ է տանձ փոքր եւ կակուղ» (Ինճիճ., 398): «*Մըրղիկ* [Հաւանականօրէն *մեղրիկ*] տանձ. թուրքերն եւս կ'ըսեն *միրղիկ արմուտու* [տպ. *արմուտը*]. տեսակ մը տանձ հաւկթի մեծութեամբ, որ յարգի է» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, երես 352):

Մեղրուկ 1. (*Մեղրիկ*, Դաւ. Սալաձորեցի, Բզմ. 1869, 163). «Սոյնպէս գունակ գունակ եւ երփն երփն ծաղկանցն որպէս ... ններգիսն եւ շամպղիտակն եւ *մեղրուկն*, հօրուտն եւ մօրուտն» (Ագաթ. 480, այլ օր. *մզուրկն*): «Կակաչն եւ *մազրուկն* եւ հարբազն [խարփուզն՞/մարբուզն՞]» (Թ. Սաւալանեան, *Ձեռագիրք Երուսաղեմի*): «*Մեղրուկ*, գղ. *վիպերին*՞. ծաղիկ է նման եզնալեզուի ծաղկին. *մեղրուկ*» (Հ. Մկ. Անան., *Աշխ.-գրր.*):

[[**Մեղրուկ 2**]]. «*Մեղրուկ*. տեսակ ինչ տանձի ի Վան» (Փիրղալէմ.):

Մեռինայ. տե՛ս *Ակոնիտոն*:

Մեռոնի ծառ. տե՛ս ի *Ստորին հայերէն*:

Մերուղան՞ մերուշան՞. «Նաեւ ի ծաղիկս զվարդ, *զմերուշան*, պասպուզան արական ասացին եւ զշուշան եւ զմանիշակն՝ իգական» (Երզն., *Քեր.*):

Մէզմուղ. լտ. *փուլմիանա* (Պլին.), [[խտ.]] *փուլմիանա*:

Մէտիւք. նո՞յն եւ *Մատուկ*. «*Հավուճի* պէս երեք մատի ձեւով արմատ մ'է» (Գւռ. Բ 2). ճիշտ այսպէս եւ *Մատուկ* (*Հայբուս.* 1996):

[[**Մէնդիկ**, տե՛ս **Մանդիկ**:]]

Մէրի շլոր. վայրի սալոր, կարմիր կամ դեղին (Հ. Սուք. Պարոն., *Բառք Սիւնեաց կամ թիֆլի-զեցւոց*, թիւ 16):

Մէրնեկ. տեսակ ինչ տանձի (Փիրղալէմ.):

[[**Միխնի**, հորիզոն. 2 գծով ջնջուած]. «տե՛ս *Մինխի* ի *Հայբուս.*, երես 436 եւ *միխնի*, *մծխի*, *մցխի* անդ, թիւ 2070, իբր գղ. *բուա դը բրեզիլ*. կայ *Միխնի* ի Նոր հայկազեանն եւ յԱռձ., այլ ի *Գիրս վաստակոց*, ՀԱ., 58, գրի *փինի*:

Միրաբաղանոս. գղ. *միրոբալան*. «Եւ շուրջ էին ծառքն յառաջ ասացեալքս նմանք այնց ծառոց, որ յեգիպտոս *միրաբաղանոսն* ասեն»:

Միրգ.

Միւռիկինա, որ եւ *Միւրիկէ*. յն. *միռիքի*, լտ. *միրիկա*. «Գտաք յանապատին ծառ մի՝ *միւռիկինա*. դադարեցաք իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ նովաւ ի ստուերին» (ՎՀ Բ 40):

Միւրիկէ, գղ. *տամարիս*, (որպէս թարգմանէ Ֆիլոն). յն. *միրիքի*, գղ. *տամարիկս*. տե՛ս *Միրիկա* ի Լիտրէ: «Նայեաց դարձեալ եւ ընդ միւս եւս ծառ, որ կոչի *միւրիկէ*, որ ջրարբին եւ ոստին է, զի ընդ ջրարբիս ջրարբի է եւ ընդ ոստինս ոստին համարի. եւ եթէ միաս [[՞]] մարգարէ յիրաւի նմանեցոյց նմա զմարդիկ, որ ունիցին զգործս իւրեանց զչարութիւն յերկուս կերպարանս աշխարհի» (Բրս., *Վեցաւր.*, Ե, 104): «Եւ եղիցի իբրեւ *զմոշավայրի* յանապատի եւ մի տեսցէ, յորժամ գայցէ բարութիւն» (Երեմ ԺԷ 6): «*Մուրիկ*. մոշի» (Գաղ. Բ):

[[**Մկնալոչ**, տե՛ս **Մկնալուճ**:]

Մկնալուճ. տե՛ս եւ *Ալուճ*. «Է ծառ ինչ կամ թուփ, զորոյ պտուղն անուանեն *մկնալուճ*, որ ունի զմանր կարմիր ալուճ, որպէս է տեսանել ի *փիէստոյ* ի ցանկս պարտիզաց» (Գւռ. Բ 36): «*Ալոչ*. ասի եւս պտուղ ինչ ծառոյ, գոյնն՝ կարմիր, համն՝ քաղցր» (*Մանանայ*, 441): «*Մկնառուչ*. պտուղ ինչ վայրենի նման կեռասի» (Փիրղալէմ.):

Մկնականջ. [[գղ.]] «*ալսին*, *մորմըլին*, *միոզոտիս*, *օրեյ դը սուրի*. *մկնականջ*, *փարէ գուլաղը*» (Էմին.). տե՛ս եւ *մուրոն*: Տե՛ս եւ *Մարզանգոշ*: «*Անդանաւփար*. *մկնականջ*» (Գաղ. Բ): «*Ադանալփար*. *կատվականն*» (*Թրգմ. դեղոց*): «*Մկան ականջ*, որ է տզրուկ խոտն» (Բժշ. Բ 332): «*Մկնականջ*, որ է *անաղալիս*» (Բժշ. Դ՝ հին ԺԱ 143), գղ. *մուրոն*: Պրս. *մէրզէնկիւշ*, արբ. *մէրզէնճիւշ* (*մէրզէն* մուկն,

կիւչ ականջ), է լտ. *մայորանա*, *օրիգանում մայորանա*, իտ. *մաջջորանա*, *օրիգանո Հերակլիոտիկո* (Բէստէն Բ 241). «Երակղեան զուիրակ» = *օրիգանում մայորանա* (ՄէՆէվիշ. 170): Գղ. *մարժոլեն* եւ իտ. *մայորանա* է նոյնպէս *մէրզէնկիւշ* ըստ Ջախջ. եւ վիէնն. իտ. բռգ.. նո՞յն եւ տն. *սըչան գուլաղը*: Ըստ Հայկզ. բառարանին՝ է գղ. *ալսին* կամ *մորժըլին*: Ըստ Դ Բժշկարանի՝ է գղ. *անագալլիս* կամ *մուրոն*. Աւգեր. զ*մուրոն* դնէ *սըչան գուլաղը*: Նոյնպէս եւ Ուղուրիկեան *մարզանգոշ* դնէ զ*մարժոլեն*: «*Ազան ըլ-ֆար* [*Հայբուս.* 2072], որ է *մկան ականջն*, որ է *անագալլիոն*, որ է *սամուխն*, որ է *սամսիմոնն*, որ է *ըռայհանի տաւուտն*, որ է *չիմչիրան*, որ է *ղասսւան*, որ է *յանղուրն* [*յանղարն*], որ [է] *մարտաղօշն*: Եւ այս ամենայն անուանքս *մարնանկօշին* անուանքն է, եւ հոռմն *մուրուսի* [*միոզոտիս*] եւ *խլիտի* կու ասէ, որ է *ազան ըլ-ֆարն*: Ինքն խոտ մն է, տերեւն՝ մանր, որպէս մկան ականջ կու նմանի, եւ հունդն որպէս գինձ կու նմանի. եւ ինքն երեք ցեղ կու լինի. եւ լաւն այն է, որ աղէկ հոտ ունենայ եւ սուր լինի: Իպն Պայտարն ասէ, թէ տերեւն նման է *մկան ականջի*, եւ ինքն կու բուսնի ի յածուներն եւ ի յայգիքն: Եւ մէկ խոտ մի այլ կայ, որ ի լերունքն կու բուսնի, եւ ի տակէն զէդ առվոտի ճղեր կու եղանէ. եւ տակն ի մօտ կարմիր կու լինի, եւ մէջն փուն կու լինի եւ մանր տերեւնի կ'ունենայ եւ յերկայն. եւ բուրքերն *հուժհուժ կաւզի* կու ասեն ... Ասցած է, թէ խոտիս աղվորն այն է, որ ի յաւզոտ տեղեր բուսնի, եւ տերեւնին եւ ճղերն ի գետինն ճապրի մանր զերդ *մկան ականջ* տերեւնի ունենայ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 14):

Մկնաղի, կայ յն. *իւպերիկոն* եւն. «*Հիոյիփարկոն. մկնաղի* ասեն. ծառի կտեւ» (*Թրգմ. դեղոց*): *Մկնաղի, Հայփարիխոն*: *Մկանաղիք* (Բժշ. Ա. 278): «Ջրանջարն, որ *մկան աղիք* ասեն, եփէ՛ գինով եւ խմեցո՛» [զահացաւ ունողին] (Բժշ. Ա., *Հայբուս.* 2073):

[[**Մկնառուչ**, տե՛ս **Մկնալուն**:]]

Մկնասոխ, **մկնսոխ**, այսպէս եւ *մկնդեղ* = *արսընիկ*. «*սիլ, մկնասոխ, սառ սօղանը*» (Էմին.). «*Ասկալիակլաս. մկնսոխն*» (Բժշ. Ա. 143). բրգմ. պարսկականին *փէհամուշ. փիյազ*՝ սոխ, *մուշ*՝ մուկն. տե՛ս *Շիլլա* ի Բէստէն: Գղ. *սիլ*, յն. *սքիլլա*, լտ. *սկիլլա*: Յորմէ՝ *մկնսոխած հացախ* (*Վստ.*), տե՛ս ի *Ստորին հայերէն*: *Մկնասոխ* է թարգմանութիւն պարսկականին «*Փիյազմուշ* [*փիյազ*՝ սոխ, *մուշ*՝ մուկն]. է արմատ ինչ նման սոխի, որ ի վայրի բուսանի եւ է դեղ իմն օգտակար. արպերէն *պասալիւլֆար* [*պասալ* = սոխ, *ֆար* = մուկն]: Այսինքն *սոխ մկան*, զոր թէ ուտիցէ մուկն, սատակի» (Գէորգ): Ասի եւս պրս. «*Փէյամուշ*, վայրի սոխ, որ լինի սպիտակ. բուրք. *սառ սօղանի* եւ արպերէն *պասալի ււնսուլ*: Եւ ի գիրս բժշկարանաց՝ *խզիլ*» (Գէորգ): Ասի եւս պրս. «*Փիյազաէչլի*. թարգմանի վայրի սոխ. *եապան սօղանի* եւ նշ. զայն, որ ի գիրս բժշկարանաց կոչի *խզիլլ* եւ արպերէն *պասալիւլ ունսուլ* եւ *պասալիւլֆար*» (Գէորգ):

Վայրի մկնասոխ. «*վայրի մկնասոխ*» (*Թրգմ. դեղոց*):

Մնեւ. «Հանար եւ *մնեւ* ի միասին ուրախ լինէին, իբրու անդրժելիք էին բոյնոց: Եկեալ զազանաց եւ անասնոց, կտրեալ եւ կոխան արարեալ եւ զղջացեալ՝ ասեն. "Անխայելոյ աղագաւ զանձինս պատեցաք եւ այժմ վարկպարազի ապականեցաք"» (Մխ. Գոշ, ԼԹ):

Մնրուր. «Արբ. *մէնսուր*. 1. մանուշակ. 2. ծագախոտ, շահոքրամ» (Պօզան.). պրս. *մէնթուր*. բուն գղ. *ժիւլիեն*, զոր Էմին դնէ "գիշերական մանիշակ", եւ Ակադ. ասէ լինել նման *ժիրոֆլէի*: «Եւ ի միջոցս ծառոցն երակ երակ անուշահոտ ծաղկունս սերմանել, վարդենի, մանուշակ, *զաֆրան*, *մնրուր*, ասպուզան, նոնէս [նռճէս] եւ այլ այսպիսիք» (*Վստ.* ՄԻԸ, 142):

Մնջեղ ծառ. *Վստ.* ԽԷ 36. բուն գղ. *օրմ*, իսկ ի *Բառս Վաստակոց* դնի գղ. *էրաբլը*: Տե՛ս եւ *Մոծակի ծառ* ի *Ստորին հայերէն*: *Մնջեղ* = մժեխ, մժիխ, որ սխալ է կարծեմ. Նոյնպէս եւ ի *Հայբուսակ* 2088:

Մշկան լեղինջ, **մշկան նեղին**, որ եւ *Լեղակ*, գղ. *ինդիգո*. «*Ալ խոզազ*. *մշկան լեղինջ*, որ է լեղակ» (Գաղ. Ա., Գ). «*Ալ խոզազ*. *մշկան նեղին* [Ջ *մշկանն եղին*], որ է լեղակ» (Գաղ. Դ). տե՛ս *Ալխոզազ* յՕտար. Հայկզ. գրէ *մշկան եղին* յեղին. կայ արբ. *հուզէզ*:

Մշկի ծաղիկ. *Հայկ. բուս.* 938. «*Մուշկարամչեր*. *մշկի ծաղիկ*, որ է *սօզ*» (*Թրգմ. դեղոց*, ուր յետեւյառաջ են տողքն): *Մուշկի ծաղկի տակ* = *կիպեռիսի* տակ (*Հայկ. բուս.* 1407):

Մշմշի. տե՛ս *Արմայկաղնի*:

Մշտիկ. տե՛ս եւ *Զոպայ*: *Զոպայ մշտիկ* (Կիւր., *Կոչ*. Գ 29 երկիցս). *մշտիկ*, անդ ԺԷ 387. *մշտիկ* Սղ Ծ 9 = *զոպայ* Ոսկ. *Ես*. ԼԳ 204. *մշտիկ զոպայի* Ելք ԺԲ 22, Յովհ ԺԹ 29: «*Զուֆայ չոր*, որ եւ արապերէն *զուֆայի նապիտ*, եւ հայ. *մշտիկ* ասէ, եւ ֆռ.՝ *իզըսուուս իմիտայ*, եւ ինքն ի յածուեներն կու լինի ... Ասէ Պատեհին, թէ ինքն խոտ մն է, որ տերեւն ի հինայի տերեւ կու նմանի, եւ լաւն այն է, որ ի յերուսաղեմայ ի լերուներն կու բուսնի, եւ խիստ աղէկն ի յեգիպտոս կու լինի, եւ ի հոռմաց երկիրն այլ կու լինի, եւ մէկ մէկ ծաղկներ ունի ի մէջտեղն, եւ ծաղիկն կապոյտ է, եւ յերկայ-նութիւնն մէկ թիզ է» (Ամրտ., *Բժ. բոգ.*, Ալիշան, 89):

Մոլաթզենի, որ եւ *ժանտաթզենի*, *Թզենի կատաղենի*, *Յիմար թզենի*.«Ի վերայ քան *զմոլաթզենին* ելից սպանանելով զանդամս զերկրաւորս՝ զմարմին խոնարհութեանս ցայնքան, մինչեւ զՅիսուս ընկալայց» (Գր. Նազ., *Առ որս*, Բ, Հայկզ. ի *Յայնքան*): Գ Թագ Ժ 27, Ա ՄՆ ԻԷ 28, Բ ՄՆ. Ա 15, Սղ ՀԷ 47 *թզենի* (Ոլ. Կեյսիոս, *Հիերոք*. Ա 310, որ նշանակէ եւ Ես Թ 9, մերս՝ այլազգ), Ամովս Է 14 (մերս՝ *թուզ*): Ասի եւս *Մոլաթուզ*, *Վայրի մոլաթուզ*. *վայրի մոլաթուզ* Բրս. *Վեց*. Ե 98. *մոլաթուզ* Փիլ., *Յոչն*. Բ 104:

Մոլաթուզ, *-թզոյ*, որ եւ *ժանտաթուզ* եւ *Յիմար թուզ*. «Զի՞նչ եւ Ամովս. ո՞չ այծս արածէր եւ կծուէր *մոլաթուզս*» (Գր. Նազ., *Առ որս*, Ը, Հայկզ. ի *Մոլաթուզ*). «Երէ այծարած, որ *մոլաթուզ* կծուիցէ, մարգարէ գործէ» (Նոյն, *Պենտեկ*., Հայկզ. ի *Մոլաթուզ*), որ յԱմովս է 14 թարգմանեալ է *թուզ*: *Թուզ մոլաթուզ* (Բրս. *Վեց*. Ե 98): «Մարգարէք կտտեկաւ կերակրեցան եւ *մոլաթզով* կեցին նոքա» (Եփրեմ, *Կցուրդք*, ԼԶ 15):

Մոլախինդ, *-խնդի*, *-իւ*, որպէս եւ *Մոլաթուզ*, *Մոլածիրենի*. որ եւ *Խնդակոր*, *Խնդամոլ*, *Խնդամոլի*, *Կոնիոն*. Եզնիկ 67, Վկ. *Եփիմիայ կուսի* 487: «Զարդարութիւնն խլելով եւ մոլախինդ արմատն տնկե-լով» (Սրգ. *Յկ*. Գ 43բ). «Յանգործութենէ մշակացն *մոլախինդ* բուսեալ» (անդ, Դ, 70ա), ըստ Հայկզ. ի *Մոլախինդ*, ուր յերկուս եւս իսկ տպ. ունի "մշակաց մոլախոտի": Տե՛ս եւ *մոլեխինդ* ի Համամ, ի Սարգիս երկիցս, զորս Հայկզ. կարծէ *մոլախոտ*: Գրի եւ *մոլեխինդ*, *մոլէխինդ*:

Մոլածիրենի, որ եւ *Զիրենի վայրենի*. Փիլ., *Յոչնս*., Բ, 104:

Մոլեխինդ, Խոր. Բ ըր 384: Ստեփ. Ուռպ. ԺԳ 35. «Դառնանայ յաւշինդիրն [յաւշնդերն՞] եւ յա-պակագործ հիւրս համի *մոլախնդիւն* փոփոխեալ լինի» (Գր. Նիւս., *Կազմ*.): «*Մոլախինդ* ի *կոնիոն* արմատոյ» (Մեսր. երէց): «*Կոնիոն*. *խնդամոլի*» (Գաղ. Գ). «*Կոնէոն*. *մոլեխինդ*» (անդ): «*Կոնթոն**. *խնդամոլի*» (Գաղ. Ա). «*Կոնդոն**. *խնդամոլի*» (Գաղ. Դ). «*Կոնիոն*. *մոլեխինդ*» (Գաղ. Դ). «*Կոլէոն*. *մոլէհունդ*» (Գաղ. Բ):

* Այս կոնթոն եւ կոնդոն սխալ գրութիւնք են, զորս Հայկզ. կարծէ *ակոնիտոն* ի *Խնդամոլի*, ի *Մոլախինդ*:

«Սոկրատ եւ Փիլոպիմեն դատապարտեալք են ի մահ՝ արբմամբ *մոլախնդի* [13 նոյեմբեր 1915]:

Իգախնդամոլի [Զ *իգախնկամոլի*]. ատ գրեա՛:

Խնդակոր (Ոսկ. *Ես*. ԾԶ 424): *Խնդամոլ* (Եփր. *Ի Յովսէփ*, հ. Դ, 102):

Խնդամոլի. «Սոկրատէս արբ զ*կոնիոն*ն եւ մեռաւ, որ է *խնդամոլի*» (Եւս., *Կանոնք*):

«*Կոնիոն*. *խնդամոլի* [Զ *խնգամոլի*]. *փրիփա*» (Բժշ. Ա 144):

«*Խնդամոլոյ* [Զ *խնկամոլոյ*] *տակ*» (անդ, *Հայրուս*. 1072):

Մոլէխինդ, Յովհ. կթ. 142, տպ. *մոլեխինդ*:

Մոլ թթենոյ. տե՛ս ի *Թթենի*:

Մոլոշ, ՎՀ Բ 263 թ. թրգմ.:

Մոխրի. «տեսակ ինչ մանտր փշատի» (Փիրղալէմ.):

Մոծակ, տե՛ս եւ *Մնջեղ*. գղ. *օրմ**. տե՛ս *Թեղի*. Էմին՝ «*օրմ*, կնձնի, *զարա աղաճը*». Րէստէն՝ «*լտ. ուլմուս*, կնձնի, *զարա աղաճ*, յն. *փթիլէա*»: «*Մոծակի* ծառ. թեղի» (Ասար): «*Մէտէ*. կնձնի. է ծառ ինչ, որ լինի ի Մավէրահ նէհր գաւառին եւ յայլ տեղիս եւ այնչափ մեծ եւ խոշոր լինի, մինչ զի հազիւ արք չորք կարեն գրկել զբունն, որոյ եւ տերեւքն այնպէս խիտ եւ հոծ, նաեւ թաղում յոյժ, զի ի յատակ նորա անձրեւ ոչ անցանէ: Եւ ի վերայ նորա բուսանին գնտակակերպ իրք, եւ ի գարնան եղանակի ի

գնտակաց անտի ջուր կաթէ թանձր որպէս խիժ. եւ զայն խիժն առեալ՝ թանաք կազմեն, որ լինի յոյժ պատուական: Եւ յետ կաթելոյ ջրոյն ի գնտակաց անտի, արտադրեալ գոյանայ ճանճ ի նոսա, եւ նոյն պատճառաւ ճանճին ծառս այս կոչի եւս *ղափշշշէ* [*"փշշշէ*՝ մուն կամ մոծակ, *սիվրի սինէք*". Տ. Գէորգ], *տիրախթի փէշէտար, փէշէզգալ, փէշշէխանէ, սարէխքտար* [*սարեխք*՝ մոծակ կամ մուն, *սիվրի սինէք*. Տ. Գէորգ], *սարէչքտար, տէրտար* ["է ծառն այն, որ կոչի թուրքերէն *գարա աղաճ*", գրէ ի կարգին], թուրքերէն *գարա աղաճ*. իսկ արաբերէն *չէճէրէթ բուլպագ*» (Տ. Գէորգ, *Գրս.-հյ.*):

Մոմոչ. տե՛ս *Սոորին հայերէն*. որ եւ *Խոզկաղին*. տե՛ս եւ *Բալուտ*:

[[**Մոնի**, տե՛ս **Մանի**:]]

Մոշ. ա՛յլ է եւ *Մոլ*, զոր տե՛ս ի *Թթենի*: «*Մոշ*. միրգ սեաւ եւ ծծուկ ըստ թթոյ, որոյ տունկն ըստ որթոյ ուռս արձակէ, բայց է կարի փշուտ ըստ վարդենոյ, որ *մոշի* ասի» (*Բառգիրք հայոց* Երեմիայ վրդտ., Լիվոռնոյ, 1698, երես 215): «*Ոլաիկ. մոշ*» [Զ *մոլ*] (Գաղ. Ա.): «*Ոլաիկ* = արբ. *խուլէյգ* = պտուղ մորենւոյ». տե՛ս *Ցուլեխ յՕտար*: Տե՛ս եւ ի *Տկողին*: *Մոշ* թուի արբ. *մոսսա, մեսպիլուս կոտոնէաստեր* (Լըկլէր, Գ, թիւ 2140). "*Մոսսա* պտուղն է *այլեկ* մացառի" (անդ, ծան.): Ուղիղ թուի *Կարմիր մաշ*. տե՛ս ի *Մաշ*: «*Մոշ* = ծառ ինչ վայրենի, որոյ պտուղն նման մորենւոյ է, զոր ուտեն» (*Մանանայ* , 449):

Կարմիր մոշ. «Գարեջուր խմէ իսպիտակ շաքարով եւ *կարմիր մոշի* [տպ. *մաշի*] *ուզաւարայ* ուտէ նշի ձիթով» (Մխ. հեր., Ե, 9): «Խուրս՝ *կարմիր մոշի* հնդով օգտէ հազի եւ արոյնկերի» (*Հին բժշ., Հայկ. բուսաբ.*, 2109). Ես նշանակեալ էի առանց վկայութեան *կարմիր մոշոյ ունտ* (Բժշ. Ա., 51): «Առնուն զ*մոշին կարմիրն*» եւն (Վստ. ՋԴ 72): *Մոշ* պտուղն *կարմիր* է գունով. տե՛ս Իբն էլ-Բէյտար, հ. Բ, 1578, երես 464:

Մոշայ, մոշենի, որ եւ *մոշի*. *գաթըր չիչէյի*. «Ես եմ եղեալ ի տանէ նոցա, եւ արտաքոյ պարսպին ի պրակս [[պուրակս՞]] *մոշենեաց* արարի ինձ դադարս եւ անդ կացի ամս երիս» (*Պտմ. վրաց*, 48). «Եւ չոգան, գտին զնա յաղօթս ի մացառս պուրակին *մոշենեաց* առաջի խաչին» (անդ, 55):

Մոշի, *-շւոյ*. թուփ, որոյ պտուղն է *մոշ*. «Մորենի. փոքրագոյն քան *զմոշի*. նոյնպէս եւ՝ պտուղն» (*Բառգիրք հայոց* Երեմիայ վրդտ., Լիվոռնոյ, 1698, երես 215). տե՛ս այլ վկ. եւ ի *Մոշ*: Տե՛ս եւ *Գազ*: Յորմէ՝ *մոշավայրի*, որպէս *էշ* = *իշավայրի*. «*Մուրիկ. մոշի*» (Գաղ. Դ) (Գաղ. Բ *Մպերիկ*). յգ. *միուրի*, գղ. *տամարինս*, տե՛ս *Միրինա* ի Լիտրէ: «*Գազ*, որ է *մաւշին*, որ է *տարֆայ*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 58ա). «*Իւլ*, որ է *մաւշին*, որ թուրքն *խլղան* կու ասէ» (Նոյն, անդ). «*Գաչմազին. մոշոյ* [Զ *զմոշոյ*] պտուղ» (Բժշ. Ա. 143):

Ածուղ մոշի (տե՛ս ի *Սոորին հայերէն*). սխալ է *այծուղ մոշի* ի *Հայկ. բուսաբ.*, 214:

Մոշու տերեւ, տե՛ս *Հայկ. բուս*. 965: *Մոշու պտուղ*, տե՛ս *Հայկ. բուս*. 214, 2584:

Մոր. Էմին՝ [[գղ.]] *միւր սովաժ, միւրոն*. «Ակքանն թանչար ինչ է եւ կամ թուփ փոքրիկ, նման *մորի* կամ կաղանչանն» (Կիւր., *Թագ.*). "Նման *մրտի*" թուի ուղիղն. տե՛ս ի *Կաղանչանն*: «*Մոր. պէօյիւրթլէն*» (Ճամբ., *Վեցլեզ.*, 30):

Մորեմուկ. *մորենի* (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*). «Մորիմուկ. *մորենի*» (*Մանանայ*, 449):

Մորենի. Էմին՝ [[գղ.]] *ռոնս* (ուղիղ թուի). «*Մոր. պէօյիւրթլէն*» (Ճամբ., *Վեցլեզ.*, 30). Փիլ., *Յոբխն.* Բ 104, Եփր. *Եւք* Ա. 136. *անարգ մորենովն* (անդ Գ 154): Տե՛ս եւ *Առիւծ մորենի*: *Մորենւոյ տակ* (Վստ. ՅԺԳ):

Մորի, տե՛ս *մորի* եւ ի *Տկողին*: Գղ. *փրեզ*. «բառ լօռեցւոց ի Գուգարս. *փրակօլա*» (Գւռ. Ա. 36). «Ելակ. *մորի*, տճ. *չիլէք, չիլթ, ճէննէթ մէյվէսի*, իտ. *փրակոլա*» (անդ).

Մորմ, *-ոյ, -ով*. տե՛ս եւ *Շանլոլիկ*. գղ. *մորել*, որ է թունաւոր, իսկ *սոլանում*, որ է *շնխաղող*, ուտելի է. գղ. *մորել, սոլանում* (Էմին). «*Սոտլիքոն. մորմն*» (Գաղ. Ա). «*Ստոռոքնու. մորմ*» (անդ). «*Տրիքնոն. մորմն*» (անդ). լտ. *սոլիկնոն*, գղ. *մորել*: «*Քակոնիջ. մորմոյ* պտուղ» (*Թրգմ. դեղոց*). տե՛ս *ալկեկանժ* ի Մարսել Դըվիկ, ուր ասի, թէ ըստ Ռիչարտսընի է *մորել* կամ *բելլադոն*:

[[**Մորմենի**]]. *մորմենի, Հայկ. բուս*. 808, 823, 1294, 1987:

Մորմիկ. «մոր, պտուղ ինչ. տճ. *ըզմավուլա*» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313):

Մոցքոր. պզտիկ, բարակ ծներեկ. լուայ ի գեղջի սպասաւորէ Տ. Մկրտչի Մուրատեան ի Գառը

քչօյ. բուի, թէ *ծնէրեն* կոչեն զիասն:

Մունուղէզ. սխալ բուի *մոոնուղէզ* ի *Հայբուս.* 2111. «Ուտելի արմատ խոտոյ, *սալէպ* (Փիրղալէմ.). «Սէզեր ժողվելը այգեպանի պարտքն է. փոքրիկներն ալ *մունուղէզ*, մոնիկ, խիարուկ, խինձ կը հանեն քախանիչք կամ չեղբեկ կոչուած գործիքներով» (*Այգեգործութիւնը Վանի մէջ, Հայրենիք* լրագիր Արփիարի, 30 ապրիլ 1895, Գ, ա):

[[**Մուրվանդակ,** տե՛ս *Մրուանտակ:*]]

Մուրտ, *մրտոյ* կամ *մրտի.* տե՛ս եւ *Մրտենի, Մրտի.* ՎՀ Բ 422, Թ. Արծր. 105 (որ չիք ի Սեբիոս 151). պրս. «*մուրտ.* մրտենի. արպերէն *միրսին*, իսկ բժիշկք՝ *աս*, նաեւ *Հապպէլաս*» (Գէորգ). նաեւ՝ *Աս. մէրսին ադաճի*, պտուղն՝ *ասմար*, արաբերէն *Հապպ էլ-աս.* տե՛ս անդ եւ *Ասմար:* Յորմէ՝ *մուրտխաթան* = մուրտաստան. «Տերեւս *մրտոյ* խնկենեաց» (Նեեմ Ը 15). *մուրտ* ես ԽԱ 19, Ծե 13. Ոսկ. *Ես.* ԽԱ 281. Բրս. *Վեց.* Ե. Լմբ. *Պտրգ.:* Տե՛ս եւ *կաղանչանն:* «Նման մեզ լինելով *մրտի* տեսլեամբ … անուշահոտեալք նման *մրտի*» (Մխ. Գոշ, *Առակք* Իե 28, 29). Նոր հայկզ. սխալ իմանայ յառաջին տեղւոջ ուղղական *մրտի, -տւոյ*, իսկ զերկրորդն իմանայ սեռական *մուրտ* բառի: [[Տե՛ս եւ *Մրտիտակ* բ. նչ.:]]

Մրտոյ հատիկ, մրտի պտուղ, որ եւ *Հապալաս* = արբ. *Հապպ էլ-աս.* «*Մուրտղանէ* [Ձ *մարդ-կան*]. *մրտոյ հատիկ*» (*Թրգմ. դեղոց*). տե՛ս *Մուրտանէ, Մուրտտանէ* ի Գէորգ: «*Նապխ* եւ *մրտի պտուղ*» (*Հայբուս.* բիւ 2172):

Մրտի տակ (*ասա գրեա՛*). 1. *տակ*, այս ինքն՝ *արմատ մրտի* կամ *մրտենւոյ:* Տե՛ս եւ *Մունուղէզ:* 2. *Վրացի կոն:*

Մոնիկ. «հողի կաղին, արմատ ինչ ուտելոյ» (Փիրղալէմ.). «*Մոնիկ.* ուտելի արմատ մի ըստ *Մշակի*» [Ը 88] (*Հայբուս.* 2135):

[[**Մտուկ,** տե՛ս **Պեհիարոն:**]]

Մրգենի, մրկենի. «*Մրկենի.* է ծառ ինչ» (*Գւռ.* Բ 36):

Մրիվանդ. սպիտակ ծաղիկ ինչ (*Մանանայ,* 449): «Մանրագոր. խնձորի խոտ կամ *մորի*» (*Հայկ. բուս.* 1083): «Ցուցեալ եղեւ արիւն խաղողոյ եւ *մորւոյ* փղացն առ ի յորդորել զնոսա ի պատերազմ» (*Գիրք առաքինութեանց*), Հայկզ. ի *Մորի*, ուր յաւելու. "որ ի Ա Մկ. Զ 34 ըստ հյ. *զմուոս*, յն. *մօռօն*, այսինքն բուր կամ պտուղ մորենւոյ":

Մրկիբ. Ինճին, *Նոր Հայաստան*, 201:

Մրղիկ վարդ. տե՛ս *Մեղրիկ վարդ.* [[*Մղրիկ.* տե՛ս եւ *Մեղրիկ տանձ:*]]

Մրուան. Դաւ. Սալածորեցի, Բզմ. 1869, 163:

Մրուանտակ, մուրվանդակ, *մարանդիտակ.* ուղիղն բուի ***մրուանդի տակ, մրուանդտակ.*** տե՛ս եւ *Սրեր:* Գղ. *ազարէ, կաբարէ:* «*Քէտի օթու.* սրեր, խոտ» (Պօզան.): Պրս. «*Միհրկիյա, միհրկիյահ* (թարգմանի "խոտ սիրոյ").[այլ է *մուպարէք օթու* = *Լուս[ն]ի ծաղիկ*]. է խոտ իմն հոչակեալ. բուրքերէն *մուհապպէթ օթի.* եւ ասի, թէ ի խոտոյ աստի եթէ ոք դոյզն ինչ ծրարեալ առ իւր ունիցի, որ ոք զնա տեսանէ, ի հարկէ սիրելութիւն առնէ ընդ նմա» (Գէորգ): «*Ասարո.* խոտ ինչ լեռնային: *Էզարուն, քէտի օթու*» (Զախջ.). «*Վալերիանա.* է խոտ ինչ, որ կոչի եւ *ֆու*, որոյ արմատն է բժշկական. ունի ծաղիկ քաղցրահոտ. զայս տունկ կարի ախորժեն կատուք. վասն որոյ եւ թաւալին ի վերայ նորա որպէս եւ ի վերայ *գատտարիա* տնկոյն. *քէտի օթու*» (Նոյն, անդ). «*ֆու, վալերիանա.* խոտ ինչ, ըստ ոմանց կոչի *աղբղբուկ*» (Նոյն, անդ). «*գատտարիա.* է խոտ ինչ. ստուգաբանի *կատուախոտ*» (Նոյն, անդ): «*Մրուանտակ,* խմորախոտ, լտ. *ասարում*, արբ. *ասարուն* (Ստ. Շահրիման.): «*Ասարօն.* բուրք. *քատու օթի* ասէ. հայ. *մուրվանդակ*, որպէս *մէհրիկյայ*» (Բժշ. Դ): «*Ասասարոն. մազմազի* կամ *մարանդիտակ* կամ նարդին. ամէնտ կազմորենի տակ է» (Գաղ.): «*Մուրվանդակ. ասարօն*» (Բժշ. Դ 171): «*Մըրի-վանդ.* սպիտակ ծաղիկ ինչ» (*Մանանայ*, 449):

«*Ասարոն*, որ բուրքերն *քատի աւթի* ասեն, եւ հայերն *մուրվանդակ* կ՚ասեն, եւ պարսկերէն *մեհրկիյայ* ասեն: Եւ ինքն բարակ տակեր են եւ անուշահոտ: Եւ հինգ ցեղ է … Ասէ Պատեհին, թէ ինքն խոտ մն է, որ տերեւն նման է լատանի տերեւին, եւ իր տակն ի բան կու անցնի, եւ տերեւն այլ մանր է քան զլատանին տերեւն, եւ ծաղիկն կարմիր է, եւ հունդն աման ունի որպէս աղվէշ բ(ն)կին հնդին. եւ

այլ կու լինի, որ ծաղիկն ծիրանի կու լինի: Եւ այս խոտս շատն ի հոռմաց երկիրն կու լինի: Եւ ինքն բ̄ ցեղ է. բարակ է եւ հաստ է: Եւ ինքս տակ է, մազմզտուկ ունի եւ թելեր ունի բարակ որպէս նարտին, որ է *սունպուլի ռումին*: Եւ *նարտինին* մազմզտուկն բարակ է եւ ի դեղնութիւն կու քշտէ որպէս *մամիրան*: Եւ *աաարոնն* ի հաստութիւն եւ ի բարակութիւնն ի մէջն է: Եւ հոտն նման է որպէս *սունպուլի հնդիին* հոտին: Եւ ոմանք ասցել են, թէ *աաարոնն սունպուլի ռումիին* տակն է» (Ամրտ., *Անգ. անպ.*, 40–40ա):

«Խրատք *մրաւնդակին. մրուանդակն* ծաղիկն է, որ է ստոյգ *սիրայծաղիկ*. ինքն կանաչ է» եւն (Տաշեան, *Ցուցակ* եւն, 791ա:

Մրտահատ. Բժշ. Է 27, [[գղ.]] *բէ դը միրտ* 933ա):

Մրտենի, *-նւոյ*. «Առակէ զնոսա ի *մրտենի* եւ ի տօսախ ի ժամ ազատութեանն» (Գէորգ, *Եւ.*): «Ի տեղւոջն բուսաւ ծառ մի *մրտենի*» (*Յայսմ. Նոյ.* զ̄): *Մրտենի* (*Հայրուս.* թիւք 1784, 2132): «Հին բուսաբանք կամ բնախօսք համարին, թէ *մրտենին* սիրող է նռնենւոյ, եւ թէ իրարու մօտ ըլլան, շատ պտղաբեր կ'ըլլան» (*Հայրուս.* թիւ 2132, երես 448):

Ածական. «Զարդարեալ ոստովք *մրտենեաւք*» (Ճ. Բ. եւ *Յայսմ.* յուլիս Ժդ): «Տերեւ ձիթենի, Բողբոջ *մըրտենի*» (Գանձ):

Մրտենի տակ (անդ (*Վստ.* ՃԾԵ 106).

Մրտի, *-տւոյ*. կայ *մրտի* եւ ի Հայկզ. ի Մխիթար Գոշէ, այլ անդ սեռական է *մուրտ* բառի. տե՛ս ի *Մուրտ*. «Փայտն, որ յարմատ թթու նռան հարկանեն, որ քաղցրանայ, կէսք *կասլիկ* ասեն. ա՛յլ կայ. տանիկն *կասաւփ* ասէ. բայց *մրտին* է» (Վանական վդտ., *Հայրուս.* թիւ 1334):

Մրտիտակ. *ա.* Նշանակութիւն՝ «*Հապալասոյ մրտենւոյ տակ*» (Մբ. 130): «*Երիաս*, որ է *մրտին տակն*» (*Անանուն Նուսխայք*, ի կատարած Մխ. Հերացւոյ, 45). համեմատե՛ *երդնիաս* = *ը՛րգ իւն նիասու*. երիաս ուղղելի է *երգի աս* կամ *երղ աս*, տակ *մրտի*, արբ. *ը՛րգ* [յգ. *ուրուզ*] "արմատ, կոճղ". *երգի աս*, որպէս եւ *Հապ ալ-աս*, արբ. *աս* = *մուրտ*. տե՛ս Լըկլէր, Բ, թիւ 1533. *իրք էլ-քաֆուր* = "*կամֆրի արմատ*", այսինքն *զերոնբադ*. տե՛ս անդ եւ զթիւսն 1535 եւ 1525, 1529, 1530, 1531, 1536 [գուշակեցի զայս ի 23 մարտի 1898]: — «*Երիոս*. աղուէսու սուսեր» (Գաղ.): «*Անճուպար*. ինքն խոտ մ'է, որ ի գետեզերքն կու լինի եւ ի *մրտենուն տակերն* կու բուսնի» եւն (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայկ. բուս.* 122):

բ. Նշանակութիւն [գրեա՛ ի *Մուրտ*]. «*Վրացի կոճ*, որ է *մրտին տակն*» (*Վստ.* ՃԱ 76): «Ա՛ռ *մրտի տակ*, որ է վրացի կոճն» (անդ, ՅԹ, 209). *մրտին տակն*, *մրտի տակ* (անդ, ՃԼԲ 82). *մրտի տակ* (*Հայկ. բուս.*, 1009, ե. 240, տող ա):

Մօֆա. «*Մանթարի* եւ *տիրիմիզի* նման, որ հում կ'ուտուի» (*Խորտշ.* 42):

Յ

Յակինթ. գղ. *ժասենթ*, որ գրի եւ *հիասենթ*. «Նոյն անձրեւ ընդ ամենայն աշխարհ ցօղէ եւ իջեալ լինի ի շուշան ծաղկի սպիտակ եւ մատուցեալ ի վարդ՝ կարմիր երփն հարկանէ, ծիրանացեալ զմանուշակն երեւեցուցանէ. եւ յայլս մատուցեալ՝ երփն երփն կապուտակի հարկանէ [ի] *յակինթ* ծաղիկ. եւ ազգի ազգի գոյնս բանջարաց յազգս յազգս բաժանեալ գտանի» (Կիւր. *Կոչ. ընծ.* ԺԶ 344): «Ի մանուշակն ծիրանի, ի *յակինթն* կապուտակ» (Ոսկ. *Ա. Կոր*):

Յակինթոս (*Զ յատինկոս*) (Նոննոս Գ հդ):

Յակոբուկ, գղ. *ալկեկանժ* (եւ էմին), *կոկըրէ*. «*Յակոբուկ*. կարմիր միրգ է ի շնխաղողին ցեղէն. *քաքանաճ, քուքումաճ, Հապ ըլ-յարուս*» (Բժշ.): «*Քակոնիջ*. մորմոյ պտուղ» (*Թրգմ. դեղոց*), գղ. *ալկեկանժ*. կայ գղ. *խակորէ*. յն. *ալիկակաբոն*. կայ արբ. *օկուբ* = յն. *սիլիբոն*:

Յակրի, գղ. *Թիւիա*". ազգ ինչ *ցրդւոյ* (*սաբին*) կամ *գիոյ*. գղ. "*սովորական հու*" ըստ Խաչիկ Ուղուրիկեանի, որ նոյնացուցանէ ընդ յն. *աղոխա* (*Մասիս*, 7 դեկտ. 1881 Ն. տ.). գղ. *Ներպրէօն* ըստ

Սափարեանի: «Որպէս մայրն եւ նոճն եւ շոճն եւ բեղօշն եւ սարդն եւ սարոյն եւ սօսն եւ *յակրին* եւ գին» (Ագաթ. 477): «Որպէս գին եւ *յակրին* եւ նոճն եւ մայրն» (Սարգիս, *Բ Պետր. Ա*): «Սոյնպէս եւ սոքա, ասէ, ձեւանան ի ծառս պտղատուս եւ պիտանիս եւ մարդասիրութեամբն Աստուծոյ ի բազում դարմանս վայելեն. եւ են անպտուղք ամենեւին. բարձրաձողկ իբրեւ զկաղնիս եւ իբրեւ զսաւս եւ զկաղամախ եւ փշաբերք որպէս *յակրին* եւ դժնիկն [Հայկզ. ի *Յակրի*՝ "որպէս *զյակրի* եւ զդժնիկն"] եւ պտղաբոյսք որպէս ձիթենին» (Սարգիս Շնորհ., *Մեկն. Յուդայ*, Բ, 819բ): «Ուռուտք, գի, *ակրին* լայնատերեւ» (Թ. Սաւալանեան, *22 Երուս.*):

Ռմկ. *ագրի*, *ակրի*. *ագրի*, տն. *արտուճ աղաճը* (գեղջ.) (Խտշեան). «*Ակրի*. տն. *արտուճ*. վրայի տերեւներ նռնի կը նմանին, անոր պէս ալ ձմեռ չի թառամիր» (*Խոտրջ*. 62): *Յակրի* բուի *սեդր* փշալից եւ կարճ, պտուղն նման գիոյ եւն (Լըկլէր, Բ, 1317 եւ ծան.): *Սարին* = *ցրդի* (Լըկլէր, Ա, համար 7): Կայ յն. *օքիւկեդրոս*: Արբ. *չերբին* = *օկխեդր* (Լըկլէր, Ա, համար 7, երես 13). *սեդր* (Բ, համար 1317). *սեդր* կամ *օկխեդր* (Բ, համար 1416). *սեդր* (Գ, համար 1622): Տե՛ս *Շերպին* ի Գէորգ. տե՛ս *Շիրպին*, *Հայբուս*. թիւ 2667: «*Ակրի*. ազգ գիոյ փոքր քան զգի եւ առաւել ուղղաբերձ. տերեւքն չեն սրածայր որպէս զգիոյն եւ զցրդոյն, այլ՝ ստուարածայր եւ կարճ քան զնոցին» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 35):

[[Յամպար, Հորիզոն. գծով ջնջուած]]. ոչ է ծաղիկ, այլ նիւթ ինչ անուշահոտ, գղ. *ամբըր գրի*:

Յասմիկ. արբ. եւ պրս. *եասէմին*. արբ. *եասիմ*, *եասիմուն*. «Շուշանն եւ ասպազան *[ասպուզան]* եւ *յասմիկն*, ամեարն եւ սմնակն» (Ագաթ. 477): *Յեսմիկի ծէր*. տե՛ս ի *Ջիւզի*, *տոր զուկի*:

Յորի. տե՛ս *Ոփի*:

Յունապ, գղ. *ժիւժիւբ*, արբ. *հիւննապ*. ՎՀ Բ 422. «Ջուսպ. *յունապ*» (Բժշ. Ա 143): «Փուշքդ որպէս բուսան: Պտ. Ամբրաւբն, *յունապին*, փշատին եւ այլ այսպիսիքս ի բնէ էին» (Վանակ., *Հրց.*):

Յունապի, գղ. *ժիւժիւբիէ*. «Յանմտից ոք եհար *զյունապի*՝ կարծելով զնա դժնիկ. որոյ զայրացեալ՝ ասաց. "Ո՛ անագորո՛յն, զտունկ ի պտղոյ արժան է ճանաչել, եւ ոչ՝ ի տեսակէ"» (Մխ. Գոշ ԺԸ):

Ն

Նախածաղիկ, գղ. *պակըրետ* բուի. տե՛ս եւ *Հայկ. բուս*. 2165, ուր յիշէ ի Ստեփանոսէ Կամենցացւոյ (խնդրելի): Տե՛ս *Նախածաղիկ* եւ ի Մէնէվիշեան, *Բուսաբանութիւն*, երես 147, ուր կոչի եւս *անբառամ ծաղիկ*: «Նորատունկ նշդարենի, *նախածաղիկ*՝ գուշակող գարնան, Լիմոնի, նարընջենի, կարմիր ծիրանի. հա՜յ, կանանչ բըփին, Ուրախանան հետ կարմիր վարդին, հետ ներմակ վարդին» (Խասպէկ երէց, *Ար՛ն՛կ որ մրտնունք պաղջան*, 146): «Եւ շարէ տերեւ հազար՝ նըման կարմիր նըռան հատին, Այն՝ Ստեփանոս *նախածաղկին* 'ւ ա՛յլ մարտիրոսք, որ ի կարգին» (Յովհ. Թլկ., *Այսաւր եղեւ պայծառ զարուն*), ըստ Կոստանդնի Երզնկայեցւոյ, տե՛ս Կոստ. Երզնկ., ԺԲ երես 123:

Նայիրուակ, -ի. լտ. *կալամուս արոմատիկուս*, որ եւ *եղեգնախունկ*, *խունկեղէգն* [9 օգոստոս 1915]. գղ. *պակըրետ*. իտ. «*Մարգերիտինա*. է ծաղիկ ինչ սպիտակ եւ խայտախարիւ եւ բուսանի ի Ջատկին. կոչի եւս *պրատելլինա*» (Ջախջ., *Իտ.-հայ.*). «*Պրատելլինա*, *մարգերիտինա*. ծաղիկ ինչ գարնանային» (Նոյն, անդ): Պարսկերէն *Նայեբուակ* ունի լինել *Նէյ* [*Նէյլի* ^] *պուլա*, այս ինքն՝ եղէգն անուշահոտ, գղ. *կան օդորանտ*. տե՛ս *Կան* յիմ *Բոգ. գաղղ.-հայ.* ա՛յլ է *ռոզօ օդորան*, եւ՝ ա՛յլ *ժոն օդորան*: «*Նայիրուակ*. եղեգնախունկ» (Ստ. Շահիմանեան): «Լինի անդ [ի Հնդկաստան] ... պղպեղ եւ սնգրուէղ եւ ամենայն բովինայք, հալուէ, փաղանգամուշկ, կափուր [տպ. քափուր], ճանդան, *նայիրուակ*, հրրուակ, գազբրրուակ, գոյիրուակ, կասիմոն, դովողակ [տպ. գովողակ], շահաւոր մարդարիշար եւ բազում դեղք բժշկականք» (Խոր., *Աշխարհացոյց*, 615), որ յընդարձակեալն, 44, գրի. «Լինի պպեղ եւ առոմ[ա]տայք, որ է բոյանոք [տպ. "առոմատս, որ է բուանոս". տե՛ս յիմ *ձեռագրին* 181], ախիրիրոյեկ [= հրրուակ], գոզի բոյեկ [= գազբրրուակ], ազսիրոյեակ, կասիմոն, դըւաղակ, շահաւոր սարքուկողակ [տպ. շահաւորասար, քակողակ], հալւա, փաղանգամուշկ, կաքուր, ճանդան, նայիրոյակ

եւ բազում դեղք»:

Նաշտ, գղ. մեծ *սանտրէ*. «*Կենդարիոն*. դերեփուկ մեծ կամ *նաշտ*» (Գաղիանոս Գ):

Նապաստակ. *նապաստակի ականջ*. թարգմանութիւն տանկականին *թավշան գուլաղը*, որ է *յօշ*, *արանց ծաղիկ* (Պօզան.): Կայ գղ. *օրեյ դը լիեվրը* ի Լիտրէ: «*Աղան ըլ-արնապ*, որ թուրքն *թավշան գուլաղի* ասէ, որ է *լապստկին ականջն*. ինքն մէկ խոտ մն է, որ մէկ կանգուն ի գետնէն ի վեր կու ելնէ եւ ծիրանի ծաղիկ ունի, նման է քրանի ծաղկին եւ մէկ նուղի միջէն կու ելանէ. եւ յետեւ մանր ճղեր կու բուսնի շատ, եւ միջի ճղին հաստութիւնն մէկ մատի չափ է. եւ տերեւն նման է ջղախոտին տերեւին, բայց գոյնն քիչ մի սեւութիւն կու քշտէ. եւ տերեւին վերայ սպիտակ *զաղապ* ունի. եւ յորժամ հանեն եւ յերեսուին քսեն, զերեսն կարմրցնէ եւ զգունն աղէկցնէ» (Ամրտ., *Անգ. անպ*., 15):

Նավրուզ. «Ծաղիկ է, որ ի սկիզբն գարնան ծաղկի» (*Մանանայ*, 450):

Նարգէս. տե՛ս *Ներգիս*:

[[**Նարգիզ, նարկիզ**]]. «*Նարկիզ. նարգիզ ծաղիկ*» (*Մանանայ*, 449):

[[**Նարդ**]]. «*Նարդ*, որ է *կաղմուրէ*» (Բժշ. Ա. 145):

Նարդան.

Նարդէս. գղ. *ֆերիւլ*. *սագապենում* է խէժ *ֆերիւլի*. կայ յն. եւ *նառթիքս*, զոր Լիտրէ մեկնէ *բուստ* (տե՛ս *Նարթեքս*). լաւագոյն բուի գրել *նարթէս*. «Մանուշակք եւ վարդք եւ քրքում եւ *նարդէս*» (Փիլ., *Յղ. Յառաջախն*. Բ 106): «Այլազգի կերպարանս ունի հոյզն *բաղսամոս* ծառոյ, եւ՝ այլազգի կերպարանս հոյզն եւ կաթն *նարդէս* ծառոյ [Փիլոն դնէ *ֆերիւլ*], որ լինի յեգիպտոս եւ ի Լիբիայ աշխարհին» (Բրս. *Վեց*. Ե 101): «*Կարճներգէսն*, որ յեգիպտոս *տօսախ* կոչեն» (*Յղ. ծառոց*, *Հաւաք. բանից նախնեաց*, ԺԶ, էջ 67):

[[**Նարդին**]]. *նարդին վայրենի*, որ եւ *Կազմարէ*, *կազմորէ*. գղ. *նար սովաժ*, *ազարէ*, *կաբարէ*. «Ասարոն. վայրենի *նարդին*» (Գաղ.):

Նարդիս. Խոր., *Աշխարհ*., այլ ի Զ *կարդին*. տե՛ս *Կարդին* ի Հայկզ.:

Նարդիւն, սեռ. *նարդեան*, գործ. *նարդեամբ*. տե՛ս յիմ *Հայկզ*.. յորմէ՝ *նարդիւնաբեր*, *նարդիւնահոտ* եւ պրս. *Նէրտին*:

Նարդոս. գղ. *նար*. *նարդոս*, որ է *Բալասենի* (*Պտմ. վարուցն Ադամայ եւ Եւայի*, Ն. Մառ, *Ամառն. ուղ*. 29, *Թանգարան* Ա. 14): *Նարդոս ընտիր* (Գր. Նար. ՂԳ ժա 255): «*Նարդոս* եւ քրքում» (Երգ երգոց Դ 14):

Նարինջ, պրս. *նարինճ*, *նարէնճ*, *նարէնք*. իտ. *պորտոգալլօ*, յորմէ թուրքերէն *փորթուգալ*. գղ. *օրանժ*. «Տրտունջ եղեւ տնկոց ամենեցուն զբազաւորէն իւրեանց, թէ առաջօք բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ, զի զոմանս ի տունս բնակեցոյց որպէս *զնարինջ* եւ զոմանս՝ ի բուրաստանս եւ զոմանս՝ յայգեստանս, եւ պատուին ի մարդկանէ, եւ զոմանս՝ իբրեւ զանարգս ի վայրի զպտղաբերս, որ եւ կերակուր լինին խոզից եւ կոխան գազանաց» (Մխ. Գոշ Ի): «Ցուցանէր եւ զնշանն, զոր բերեալ էր, այս ինքն՝ խաւարտս եւ կանաչս, *նարինջս* եւ թրունջս եւ այնու հաւաստէր զբանն» (Ստ. Ուռպ. Ի 56): *Նարինջ*՝ անուն մօր Սիմէոնի Ապարանեցւոյ (Գալուստ Տէր-Մկրտչեան, *Ան. Շիր*., երես 1):

Նարնջենի, գղ. *օրանժէ*. «Ծառ *նարընջենի* ես դուն, քեզ հազար անուն կու պիտի, Որ մէկն է ի համք եկել, մէկ ծաղկել, մէկ ծաղկեթափել» (Տաղ սիրոյ): «Նորատունկ նռշդարենի, նախածաղիկ՝ գու-շակող գարնան, Լիմոնի, *նարընջենի*, կարմիր ծիրրան» (Խասպէկ երէց, *Ար'ե'կ, որ մրտնունք պաղչան*, 146): «Ծառ *նարընջենի*, ծաղիկ ծովային, Դու սալվի չինար, տունկ պալասանի» (Գր. կբ. Աղըմր., *Գարունն է բացուեր*, 95):

Նգածաղիկ. սխալ բառ. ուղիղն է *Գնդածաղիկ*:

Ներգիւն (ասա գրեա՛ զ *Նեգիւն*). իցէ՞ *ներգիւ* եւ դիմորոշիւ՝ *ներգիւ'ն* [20 մարտ 1912]: Տե՛ս եւ *նապղ ի Փշատ*:

Նեխուր. տե՛ս *Լախուր*:

Ներգիս, որ եւ *նարգէս*. նո՞յն եւ *Պէպուն*. պրս. *նէրկիզ*, *նէրկիս*, *նէրճիս*. գղ. *նարսիս*. «Սոյնպէս գունակ գունակ եւ երփն երփն ծաղկանցն, որպէս ... անիարն եւ սմակն, *ներգիսն* եւ շամպղիտակն եւ

մեղրուկն» (Ագար. 477): «Խնձոր եւ *նարգէս*, նռնունս եւ կինամոնս» (Վարդան, *յԱնթառամն*, Հայկզ. ի *Նուռն*):

Ներգիւն, գղ. *լոտիւս*, *ալիզիէ*, *միկոկուլիէ* ըստ Էմինի. տե՛ս *Ներգիւն* ի Վիրգ. *Մշ.* Բ ծան. 84, ուր գրէ եւ *Ներգիւնակերք* կամ *յոտոսակերք*. «*Ղոտոս, ղոտոս. Ներգիւն, Ներգոյն*» (Գաղ.). թուի ուղղելի *Ներգիւ*, *Ներգոյ* կամ *Ներգիւն*, *Ներգու*. թուի, թէ յԱմբրոսիոս Թէսէոս *Ներգիւն* եղեալ է իբր յն. *լոտոս*. տե՛ս ի *Գաւառական բառս* Հ. Սուք. Պարոն., թիւ 17:

Նիւ, *Նրւոյ*. տե՛ս եւ *Հիւ*. ատի՝ *ծավեմ* թուի *Նուիկ*. «Ի ձմեռնային ժամանակի քաղեն *զՆիւ* լերինն եւ թթուեցուցանեն աղիւ եւ ջրով եւ զոպայիւ, եւ որպէս ինքեանք իսկ ասեն, կարի օգտակար է ի տապ աւուրս խորշակի» (Եղշ., *Այլակ.*, 237):

Ննի, գղ. *ամմի*. «*Ամի*. ունդ նանխոյ, որ է *Ննի*» (Գաղ. Գ). «*Ամէ*. ունդ նանխոյ, որ է *Ննի*» (Գաղ. Ա). «*Արմա. Ննի*» (Գաղ. Բ). «*Նամէոս. Ննոյ* սերմ» (Գաղ. Ա, Բ, Գ):

Նշդարենի, **Նշդարի**, գղ. *շարմ* (Էմին). տե՛ս ի *Նախածաղիկ*. «*զՆշդարեւք* ՝ որթք» (Փիլ. *Յղ. բանուեղ*, 169): «Նոճ ի նոճ յեռից սափոր եղեգնաշէն տնկոյն Մատնօրինօրէն *Նշդարենի* ռահ» (Գր. Նար. *Տաղ ծննդեան*, 464): «Երկուց խնձորից Նշդարենի ոստոց» (Տաղ Յովհ. Մկրտչի, Հայկզ., ուր *խնձորից* մեկնի 'այտից'): «Էր ի մէջ քաղաքին ծառ մի *Նշդարենի*» (Հ. *Յայսմ.* յունիս իը), ուր յոյնն ունի *կիւպարիս* (*Հայրուս.*): «*Նշդարենի*, որ է *չինար*» (Ամրտ., *Հայրուս.* 2208):

Նշենի, **Նշի**. տե՛ս *Երեքժուէն*. գղ. *ամանդիէ*: «*Նշենի* դառնենի» (Բրս. *Վեց.* Ե 97):

Նշօշ. ատի՞ եւ *Քարնշուշ*. «*Դեղիքոն*, *Նշաւղ*, որ է կատաղին» (Գաղ.). տե՛ս եւ *Կատաղին*, *Կատղենի*, *Կատղէն*:

Նոճ 1, **Նոճի**. պրս. *նուճ* մայր ծառ (Պօզան.). գղ. *սիպրէ*. պրս. *սերվ* եւ *ազատ* (Գէորգ, գրեա՛). պրս. *նաճ*, *նաճու*. տե՛ս ի Գէորգ: *Նոճի* (Արիստ.). տե՛ս զվկ. ի *Շոճի* (*Սոճի*). Պլատ. *Աւրէնք*. տե՛ս ի *Հանարի*: *Նոճի Եսբեմեայ*. տե՛ս *Շոճի Եսբեմեայ* ի *Շոճի*:

Նոճ 2, որ եւ *Կիպրոս*, գղ. *տրոէն* (ըստ Ռընանի). «Ողկոյզ *Նոճոյ* է եղբօրորդին իմ ինձ ի մէջ այգեստանեացն Ենգադդեայ» (Երգ Ա 13). «Տեսանել, թէ ծաղկեա՛լ իցէ որթ, թէ ծաղկեա՛լ իցէ *Նոճ*, եթէ ծաղկեա՛լ իցեն նռնենիք» (անդ Զ 10):

Նորգենի. Ինճին. 36, 183. «Է ծառ ինչ, որոյ վայտն է կարմիր եւ պատուական» (*Գւռ.* Բ 37): «*Նորգենի*. ծառ, կեղեւն՝ մրնագոյն դեղին եւ բնութեամբ կակուղ» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*): «*Նորգենի*. ծառ նման կեռասենւոյ. փայտն նորա՝ կարմիր եւ պատուական, իսկ պտուղն կոչի տն. *մահլուպ*» (Հայկզ., *Գաւառականք*): «Գաւառիս [Եւդոկիոյ] մէջ կը գտնուի նաեւ *մահալէպ*, տեսակ մը հաստապտուղ նիշտ լտոյտի նման, որոյ խաղն եգիպտացիք (*այսպ.*) դեղի տեղ կը գործածեն. տերեւներն մեծ քանակութեամբ ածխական թթու ծծելնուն պատճառաւ՝ մթնոլորտի մաքրութեան մեծապէս կը նպաստեն: *Սալէպն* եւ անիսոնն առատ կ՚անին բլուրներուն վրայ» (Ուսումնասէր, *Եւդոկիա*, հրատ. *յԱրամս* Սիմէոն Գուլամիրեանցի, 1889, հ. Ա, երես 20): «Պտղատու եւ անպտուղ ծառներու ամէն տեսակներն կը գտնուին այս երկրի մէջ [*Զարաանճաղ, ի Հարաւոյ Դերսիմի*]... *Մալլամի**, որոյ փայտն կարծր է. եւ վերան կեռաս կը պտուղատեն. սորա հոտից օձն կը փախչի» (Ս. Հայկունի, *Դերսիմ*, *Արարատ* Էջմիածնի, 1896, մայիս, 240):

* «*Մէհլէպ*. ծառ է. վրան *քիրազ աչլամիչ* կ՚ընեն» (Սիմ. Կամերկապցի, *Հայրուս.*, 2343):

Նորհարսնուկ. «Է ծաղիկ ինչ նման կակաչի, բայց տեսակաւ տարբերի ի նմանէ, զի սա ծառանայ եւ արձակէ ոստս մանրամազ, իսկ կակաչն՝ ոչ, այլ է լերկ, եւ արմատն սոխ է» (*Գւռ.* Բ 37):

Նուարկտակ. Բժշ. Ա 37:

Նուարտակ. գղ. *պասսըրաժ* եւ *լեպիդոն*, *լեպիդիում* *Նուարտակ* (Էմին.). «*Շաղռայն*, որ է *Նվարտակն*» (Բժշ. Ա 144): «Հնդիկ *շատռէճ* ["Հնդկական մի դեղի անուն է", ասէ Մարսել Դըվիկ *գչէտարաջ*], որ է *Նուարտակն*» (Բժշ. Ե, հին ԻԴ, 38). անդ էջ 14 դարձեալ *ֆիւմտերը* մեկնի, եւ ոչ թէ *պասսըրաժ*: «*Հնդիկսատաճ* (*Հնդիկ սատաճ* [*սատռաճ*]), *Նուարտակ*» (*Թրգմ. դեղոց*): Ա՛յլ է «Հնդիկ սատաճ. հնդի կարկաժի տերեւ» (*Թրգմ. դեղոց*): «*Սատճ*. հնդիկ կարկաժի տերեւ» (Գաղ. Ա): «*Սաղէճ Հնդի*. ի հնդկաց գայ, զէդ կասլայի տերեւ է» (Բժշ. Ա 145): *Սարքուլա* = *սէրկէլէ*. տե՛ս *չէյթէրէ* ի

Գէորգ: «Շահթառած. Նուարտակն, որ է *արթուխան*, որ է *անձխոտն*» (Բժշ.): «Նուարտակ. յնգնկան *արթուղա* ասեն. *չէտարան*, *աշապ*, *սարքուշա*, *լէպխոն*» (Բժշ.): «*Սորին. Նուարտակ*» (Գաղ. Ա). Հայկզ. ի Նուարտակ իմանայ յն. *ագոլիքս*, ազգ ազգ ագռաւու. պրս. *շահթէրէ*, *շահթէրէճ* = անձխոտ, շփոթեալ է ընդ *շէյթէրէ*. տե՛ս գրառոյդ եւ զ*խամիշէ* ի Գէորգ: *Անձխոտ* շփոթեալ է ընդ *Նուարտակի*, ասէ եւ *Հայկ. բուս.*, բիւ 111, 2220:

Նուիկ, Նուազական Նիւ բառին. Նուին: Գղ. *ճստրագոն*, *արոմ*. կայ եւ *բխորտ*, *սերպանտեր*: Պրս. *նէվէշթ*, *թէրխուն*, որ եւ Կանապ: Նոյն բուի եւ *Լուին*: «Նուին. *Նուիկ*» ենն (Տահիմ., օրինա-կեա՛): Լտ. *սերպենտարիա*, *դրակոնտիում*: Իտ. *դրակոնեյլո*, *եըլան եաստըղը*, *այր փանճարը*, *գուրտ գուլաղը*, *լուֆ* (Բժշ., Հայկզ.): Իտ. «*Արոն*, *ջիկերո*. գղ. *արոմ*, *պիէ-դը-վո*. գոնգ, ոլոռն եգիպտական. բոյս ինչ եւ արմատ, փղականջ, բոտատակ, *եըլան պըչաղը*, *գուլգաս*, *աղան խւլ-ֆիլ*» (Վիէնն. իտ.): Էմին զ*ճստրագոն* դնէ *շաւաշարիւն*, *Նուիկ* եւ զ*սերպանտեր* եւ զ*սերպանտին*՝ *շաւաշարիւն*, *Նուին*: Պրս. «*Նէվէշթ*, *թարխուն*. է տեսակ ինչ խաւարտի, զոր ուտեն մարդիկ ընդ կերակրոց. ասի եւ *թէրխուն*, խաւարտ իմն, որ կերեալ լինի իբրեւ զկոտեմ, զոր արապացուցեալ՝ *թարխուն* ասեն» (Տ. Գէորգ):

«Նուին, *Նուիկ*» (Բժշ. Ա 145): «*Նուիկ*. բանջար վայրի, առողջարար. չորացուցանեն եւ պէսպէս կերակուր կազմեն» (*Մանանայ* 450): — «*Լուֆ*, որ հայերէն *Նվիկ* կ'ասեն. եւ լաւն այն է, որ սպիտակ լինի: Տաք է եւ չոր է յերկրորդ *տարաձան*, կտրող է եւ բացող է ... Իպն Պայտարն ասէ, թէ ինքն երեք ցեղ կու լինի: Եւ բուրքն *խլան զավի* կու ասէ այնոր համար, որ որձան ի յօձի խորխ կու նմանի: Եւ մէկ ցեղին այլ *փղի ականջ* կու ասեն: Ասէ Պատեհին, թէ ինքն *ֆիլկոշն* է: Եւ ինքն գ̄ ցեղ կու լինի: Եւ ա̄ ցեղին հոռոմն *տրաղխոին* կու ասէ, որ թարգմանի *լուֆի Հայլըայ*, եւ *լուֆ ալ սխտ* այլ կու ասեն եւ *լուֆի քապիր* այլ կու ասեն: Եւ բ̄ ցեղին այլ հոռոմն *այուրան* [յն. *առօն*°, գղ. *արում*°] կ'ասէ, եւ *պարպարիքն ապրաթի* ասեն, եւ անդալիացոց լեզուաւն՝ *սուրվան*. եւ ինքն *լուֆի սաղիրն* է, եւ այնոր *ճաւտ* կ'ասեն: Եւ գ̄ ցեղին հռ̄ *արխազան* կ'ասեն. եւ ինքն *Հարխան* է, եւ եգիպտացիքն այսոր *տավիրայ* կ'ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 114): «*Թարխուն*. *Նուին*, *արոմ* կամ *դրակունկուլուս*, բուրք. *քուֆ*, *եըլան եաստըղը*» (Վստ. Ցանկ):

Նուկտաւ, տն. *սէմիզ օթու* (Գտ. Ա 49). «*Նուկտաւ*. է բանջար ինչ ինքնաբոյս եւ բուսնի յածուքս , այս ինքն ի փոքրիկ պարտիզի, այլ եւ ի վայրի. կազմեն աղցան եւ այլ կերակուր» (*Գտ.* Բ 8): «Ծեմել [գրածն ծիմէլ]. տեսակ ինչ *Նուկտաւի*» (Ա. 49), որով հաստատի *փրփրեմ օնաշի* լինել *ծիմել*. տե՛ս բուրքերէն *փիրփիրիմ օյնաշը* յիմ *Քննադատութիւն Հայբուսակի*, համար ՄԾԳ. եւ բուրքերէն *փիրփիրիմ* (ըստ մեզ՝ *փրփրեմ*), անդ համար ԻՁ եւ ծան 2.:

Նումայի. *Վստ.* ԾԳ 42, ՄԻԸ 143:

Նումանի. «Նռնի, մրտենի, սանտալի եւ սարդ, *Նումանի* ծաղիկ եւ փըբըբեալ վարդ» (Գր. կբ. Աղբ., *Դու դրախտ յեդեմայ*):

Նուշ.

Նուռն. ՎՀ Ա 239, Պղատ. *Աւրէնք* Ը 299: *Նռունք*. Սուտ-Կալլ. 154:

Նռնէս, որ եւ *Մահմետայ բիս*. տե՛ս ի *Գայլաբիս*. տե՛ս *Վստ.* ՄԻԸ 142, ուր տպ. ունի *Նռնէս*:

Նռնենի. *Պիտ.* Թ զ 546. Փիլ. *Յոյխն.* Բ 104. Ստ. Ուռպ. ԽԹ 185: «*Նռնենի* գեղեցկապտուղ» (Արիստ., տե՛ս զվկ. ի *Շռնի՝ Սռնի*): «Գաւազան փշալից *ի Նռնենեաց*» (*Վկ. Ակակ.* 84): «*Նռնենիքրդ* զուգաշար» ենն (*Ար՛ե՛կ մտնունք պաղջան*, 146): Ձաք ԺԲ 11. Եղշ., *ի չարչ. Քրիստոսի* 277. Եղշ., *ի մատն. Քրիստոսի* 254:

Նռնենի բրուենի. Բրս. *Վեց.* Ե 97:

Նռնենի Սոդոմայ. «Կան ծառք [ի սպառուածի Յորդանան գետոյ] եւ պտուղ ունին, եւ պտուղն բարկութեանն Աստուծոյ յիշատակիչ է: Կան *Նռնենիք*. եւ զփայտէն իսկ ասացից. եւ պտուղն գեղեցիկ իսկ երեւի ի վերայ եւ զանտեղեակսն բազում յուսով լի առնէ. իսկ յորժամ ի ձեռն առեալ՝ հատանիցէ, պտուղ ամենեւին ինչ ոչ է, բայց մոխիր եւ փոշի շատ ցուցանէ ի ներքս ամբարեալ. այնպիսի է եւ երկիրն ամենայն» (Ոսկ. *Ա Թես.* Ը Յորդ. 453): Գրեա՛ եւ զիրն էլ-Բէյտար, հ. Բ, 1544, *օշար*, *սա-կեպխաղ*, ուր ասի, թէ պտուղքն նման են խնձորոց. գրեա՛ եւ զհ. Բ, 1199 *սիւքքէր էլ-իւշար*, ասկե-

պիադի շաքար, ուր ի ծան. ասի *ասկլեպիաս գիգանտէա* կամ *պրոկերա* եւ *կալոտրոպիս*: *Յաշր*, *յօշր* ըստ Ամիրտովլաթայ, *Հայբուսակ*, 2982, ուր սխալ թուի *տորոն խոտ*: «Եւ դիակունք սուրբ ման-կանցն որպէս գծաղիկ *Ճոնենեաց* հարեալ ի կարկտէ եւ անկեալ ի սուրբ Բեթղեհէմ» (Շարական ման-կանցն Բեթղեհէմի, *Մանկունք*, 602):

Նռնենի տանձ. Իննին. 144. «*Նռնենին* կամ Նարնջաձեւ *տանձ*. յաղագս նմանելոյ ձեւոցն առեալ զայս անուն. եւ առաւել եւս տոկուն է սա քան զայլ ձմեռնային տանձս» (Խրիմեան, *Հրաւիրակ արարատեան*):

Նռնէս, մեկոն. տե՛ս ի *Սմինոս*, տե՛ս ի *Ստորին հայերէն*:

Նռնին. խոտ մի է, զոր ժողովեալ գիւղականացն ի մատաղ ժամանակին՝ իւղով կամ կաթամբ անուշեն եւ ուտեն» (Գւռ. Բ 7):

Շ

Շահասպրամ, որ եւ *Թագաւորասպրամ*, *Ռահան*, գղ. *բազիլիկ*. պրս. *շահսիփէրհէմ*, *շահսիֆէրհէմ* եւն, *շահսիփէրմ*, յորմէ *շահասպրամ*. տե՛ս զառաջին բառդ ի Գէորգ. տե՛ս անդ եւ *Հազբու*:

Շահդանակ, շահնդակ. թուի [[գղ.]] *չէնըվիս*, կանեփհատ. «*Հապսալանդոս*. պզրդատուն կամ կառն փշի ունդն» (Բժշ. Ա. 144), որով՝ «*շահդանակ*, այս ինքն կանկար փշոյ սերմն». թուի ուղղելի *կառն*: «Կորնայք ... ունի զառիկ եւ ի պտղոց *շահնդակ*» (Խոր. *Աշխարհ*. 608), հին տպ. *շագանակ*, երկու օր. *շաղդանակ*, միւս եւս մեկնութեամբ «*աշահդանակ*, այսինքն գանգար փշոյ սերմն»: Այս *շագանակ* կարծեցեալ է գղ. *շատենյը*, յորմէ եւ *շագանակենի* կոչեցեալ է ծառն, *շատենյիէ*. այլ ըստ Նախնեաց՝ *շատենյը* ասի *մաշկամիրգ*. կայ պրս. *շահտանէ*, *չէհտանէ*՝ «ինչ մի մեծ հատիւ. մազ-տաքէ մեծ եւ ազնիւ. հատ, սերմն կանեփի» (Պօզան.):

Շահոքրամ, գղ. «*ճօյճ*, ծագախոտ, *շահոքրամ*, *գարէնֆիլ* (Էմին): «*Խարաֆուլ*. *խարէմֆիլ* ծաղիկը. մեղեակ. *շահոքրամ*» (Հ. Մկ. Անան., *Բռգ. յաշխարհաբառէ ի գրաբառն*): Սխալ գրի *շահո-գրամ* ի *Հայբուս*. 2253. «*Շահոքրամ*. *տունիկա*, *կարյոֆիլլուս փլոս*. *գարէնֆիլ չիչէյի*» (Ստ. Շահրիմ.):

Շահպրակ, պրս. *չէպպուշ* "գիշերաքոյր". գղ. *միրոֆիլէ*:

Շաղապատուկ, որ եւ *Սիրող*. ոմկ. *շաղիպատուկ* (զոր աստ գրեա՛). գղ. *լիեր*:

Շաղգամ, շողգամ. յն. *ռապիւս*, գղ. *նավէ*. բազում ուրեք ի Գաղղիա ասի եւս *ռավ* (Լիտրէ). պրս. *շէլղէմ*, արբ. *շէլճէմ*. լտ. *նապուս*, իտ. *նավոնո*, *ռապա*, *նապո*. իտ. *ռապա շողգամ*, *շալկամ* (Ջախջ.). իտ. «*նապո*, տե՛ս *նավոնէ*» (Ջախջ.). «*Նավոնէ*, *շողգամ* ինչ երկայն, նուրբ եւ դեղին. *ուզուն շալկամ*» (Նոյն, անդ): «*Շաղգամ*. *շողգամ*» (Փիրղալէմ.):

Շողգմրուկ. Ամրտ., *Հայբուս*. թիւ 759:

Շաղգմուկ. է բոյս վայրի շողգամի (Գւռ. Ա. 36). «*Շաղգմուկ*. 1. տեսակ ինչ խնծորոյ. 2. խոտ ինչ նման շողգամի» (Փիրղալէմ.):

Շաղինտր. «Ոչ ամենայն *բանջար* [Հայկզ. ի *Յմախ*, իսկ ի *Բան*՝ *բաներ*] ուտելի է, որպէս բանք, *շաղինտր* եւ այլք ոմանք դառինք եւ կէսք մահաբերք իսկ» (Վարդան Արեւելցի, *Մեկն. ԾՆՆ.*): Իցէ՞ *շաղինկղ*, *իշաշինկղ*, զի ուր ի Գաղ. Դ գրի «*Կալ Հմար. շաղինկղ*», Գաղ. Ա. եւ Գ ունին «*Կալ Հմար. իշաշինկղ*». տե՛ս *Իշաշինգղ*:

Շաղիպատուկ, ի *շաղապատիմ* բայէ. թուրքերէն *չարմաշուղ* (Լըկլէր Գ 1786): Իսկ *Բաղեղն*, որ եւ *Պատատուկ*, գղ. լիեր, *կոնվոլվիւլիւս*: «*Կուսուս*. *շաղիպատուկ*» (*Հայբուս*. երես 225). արբ. *քիսուս* (*Թրգմ. դեղոց*): «*Ղուսուս*. Իպն Պայտարն ասէ, թէ ինքն ի քարերուն եւ ի պատերուն ի մէջն կու բուսնի եւ կու կպչի: Եւ Սինեայ որդին ասէ, թէ ինքն մեծ ծառ մն է, սպիտակ եւ կարմիր եւ սեւ կու լինի ... Ասցել է Պատեհին, թէ *ղուսուսն ղալլուսն* է եւ ինքն յայտնի է, որ է *Հապ ըլ-մասաքինն*: Եւ ինքն մեծ *լապլապն* է, եւ իր տերեւն քան զմանր *լապլապին* տերեւն մեծ է. եւ այսոր ի Շիրազ *մարչայ* կու

ասեն: Եւ ինքս շատ ցեղ է. ա̄ ցեղն սպիտակ է եւ ա̄ ցեղն սեւ է եւ այլ *պաղի* ցեղին *զառ* կու ասեն: Եւ ինքն երեք ցեղ է: Եւ այն, որ սպիտակ է, միրգն այլ սպիտակ է: Եւ այն, որ սեւ է, միրգն այլ սեւ է եւ ի սեւութիւն կու քշտէ. եւ գոյնն *զաֆրանի* լինի. եւ ոմանք այսոր *պաւսիոն* կու ասեն. եւ իրեքում ցեղն. որ այն որ *զառ* կու ասեն, ինքն թեթեւ է եւ իսկի միրգ չի բռնել եւ չի բուսնիլ. եւ ճղերն բարակ է, եւ տերեւն փոքր է, եւ ամենայն ցեղն *զուսուսին* սուր է եւ կակուղ է. եւ այսոր ի մէկ ցեղնէ *լատան* կու լինի, եւ այն ցեղն տաք է եւ այլ պաղի ցեղերէն հով է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 176ա–177):

Շամամ. «Փոքր սեխ, ի չափ խնձորոյ, գոտեւոր, գունաւոր եւ անուշահոտ» (*Մանանայ*, 450): «*Շամամ* գեղեցկախայտ», տե՛ս ի *Կասկ* եւ ի *Կոզակ*:

Շամամիկ, *Հայկ. բուս.*, 77:

Շամղիտակ. "*շամղիտակ* եղեալ եմ [[գղ.]] զ*Կուսկուզ ռուայալ. չիմլիտէճ*", լտ. *Հերմոդակտիլուս*". «լտ. *Հերմոդակտիլուս, չիմլիտէճ*» (Մէնինսքի, *Օնոմ.*). պրս. «*չէմլիթա*, տե՛ս *Հիւյեէ*. արպերէն *Հուլպէ*: Եւ այլուր գրի, թէ է ծաղիկ իմն անուշահոտ» (Գէորգ): «Սոյնպէս գունակ գունակ եւ երփն երփն ծաղկանցն որպէս մանրագորն եւ վարդն եւ շուշանն եւ ասպուզան եւ յասմիկն, անիարն եւ սմնակն, ներգիւն եւ *շամղիտակն* [այլ օր. *շամպղիտակն*] եւ մեղրուկն, հօրօտն եւ մուրօտն եւ մանիշակն եւ այլն ամենայն համասպրամն ծաղկանցն եւ ծառոցն բոյսք բողբոջոցն զարնանւոյն երեւեսցի յետ ձմերանոյն» (Ագաթ. 477):

Շամրայ, գղ. *փլնույ*, որ եւ *սամիթ վայրենի*, *հոռոմ սամիթ*. զնոյն ասէ Ամրտ. *զռազիան* բուսոյ, որ է *փլնույ* (*Հայկ. բուս.* 2668). «Եւ աւձից աչք յորժամ ցաւիցեն, երթայ, ուտէ զ*շամրայ*, այս ինքն զսամիթ վայրենի եւ ողջանայ» (Բրս. *Վեց.* Թ 186). այսպէս *շամրայ* յԱնտոնեանց օրինակին, որ ի Բարսեղ Գ, երես 103 գրի *ջամրա*, իսկ տպ. 186 ունի *շումրայ* եւ ասէ ի ծան. «Յօրինակին թուի *դումրայ*»: «*Ռազիեանէ*. սամիթ ընտանի, *մարուֆ սէպզէ տիւր*. արպերէն *շիմրէ*. ասի եւ *ռազիեանէճ*» (Գէորգ, *Բոգ. պրս.–հայ.*):

Շամրաշ, **շամրաս**, նոյն եւ *Շամրայ*. տե՛ս *Հայրուսակ* 2269. կայ անգլիերէն *շամրոկ*, գղ. *տրեֆլ* [[երեքնուկ]]. «Սոսկալի պայծառ ծաղիկ, *Շամրաշ*՝ ծաղկանց անդրանիկ, Ցաւոցս իմ լե՛ր դու բժիշկ» (Զաքարիա եպիսկոպոս Գնունեցի, *Անեղ լոյս ընդ Հաւր Որդին*, *Տաղարան Ա.*, տողք 554–555 [21 աւգոստոս 1906]: «Թէպէտ եւ բոլոր մարմինն ապականի, երթայ առնու ծաղիկ մի, անունն *շամրաս*, եւ զգոհեալ մարմինն նովաւ ողջացնէ» (*Աղօթ.* ԺԲ 75):

Շանագի, տն. *իթ զուլբուղու*. «*Ումսուհ*. ինքն խոտ մն է, որ բ̄ բարկուկ եւ պինտ եւ հաստ ճղեր ունի. Նման է ձիթենու տերեւին ... եւ կարմիր պտուղ ունի, եւ յորժամ հասնի, սեւնայ. եւ թուրքերէն այլ այս երկուքիս *իթ զուլբուղի* կու ասեն, որ է *շան ագի*. եւ ինքն հանկուստ հանկուստ կու լինի. եւ թէ զայս խոտս քամեն եւ զինքն խառնես, գլուծումն կտրէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 221ա):

Շանլեզու, տն. *քէօփէկ տիլի*". տե՛ս *Ձոիկ աղբիւր* ի *Բառգիրքն Ստորին հայերէնի*:

Շանլոլիկ. թուի ի բառէն *Լոլիկ*, որ է *տոմատ*. տե՛ս եւ *Ցոլոլիկ*. «*Շանլոլիկ*. մորմ, վայրի պտուղ ինչ հաղարջի մեծութեամբ եւ գունով, որ յետոյ կը սեւնայ» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, երես 313):

Շան սխտոր. *Հայրուս.* 2282:

Շանսխտոր. տե՛ս եւ *Շնսխտոր*. «*Շանսխտոր*. խոտ ինչ աղիւ համեմեալ վասն պահոց» (Փիրղալէմ.):

Շանխոտ. «*Շանխոտ. փէրասիոն*» (Բժշ. Դ 175):

Շանձուկ. տե՛ս եւ *Աւաղիմ* ի *Բոգ.* [[°]]. «*Խուասթ ըլ-քալպ*, որ թուրքն [[այսպ.]] *շանձուկ* ասէ. եւ ինքն խոտ մն է, որ տերեւն ի գետինն կու փռուի, եփ կու բուսնի. եւ տերեւն նման է ձիթենու տերեւին. եւ ճղերուն յերկայնութիւնն մէկ թիզ կու լինի. եւ տակն ի յայն խոտն կու նմանի, որ թուրքն *իթ քասարի* կու ասէ. եւ երկու նուղ մէկ մէկի վերայ, մէկն ի լի եւ մէկն թերի կու լինի, եւ ծաղիկ ծիրանի կու լինի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 127):

Շանշռելիք. *Հայկ. բուս.* 1735. թուրք. *իթ սիտիլի*:

Շատահնտիկ.

Շատծլուի, որ եւ *Ուղտափուշ*, գղ. *չարդոն*. «*Շատծլուի*, որ է *Ըղտափուշն*» (Բժշ. Բ 333):

Շատոտուի, գղ. *պոլիպոդ*. «*Շատոտվի*, որ է *պասվայիճն*» (Բժշ. Բ 333):

Շարասխ, Բժշ. Ա. 76, 363:

Շարշարուրիկ, Դաւ. Սալաձորեցի, Բզմ. 1869, 163:

Շարուկ եւ պառկուկ ծիրան, ի Բալու (Իննին., *Նոր Հայաստան*, 224): Գրեա՛ եւ *Ծիրան*:

Շարտաղուկ, որ եւ *Շտաղուկ*. դեղձի (*Մանանայ* 450). «*Շարտաղուկ*. դեղձ» (Փիրղալէմ.):

Շաւաշարիւն, **շաւաշ-արիւն**. տե՛ս *սանկուխս տաաքօնիս* ի Բէստէն, Բ, 357, ուր նկարագրէ զխէժդ եւեթ: Գղ. *սան-դը-դրագոն*. 1. բոյս ինչ, տեսակ իմն *պասխանս*. 2. ռեզին ինչ *դրագոնեկ* ծառոյ, որ է ազգ ինչ արմաւենւոյ: Էմին գղ. *ճսարագոն* դնէ *շաւաշարիւն*, նուիկ, *եըլան եասթըղը*, *թարխուն*: «*Դրակոնդիոն. շաւաշարիւն*» (Գաղ.): Թուի պարսկերէն *խունի սիւյավուշ*, այս ինքն արիւն Շաւաշայ որդւոյ Կայկաւոս [Քէյքեավուս] թագաւորի Իրանու, զոր սպան տարապարտուց ի մատաղ հասակին Ափրասիյապ [Էֆրասիյապ] արքայ թուրքաց» (տե՛ս *Սիյավուշ* ի Տ. Գէորգ): «*Խունի սիյավուշ*. իր ինչ նման քարի. *իգի գարտաշ գանը*, արբ. *տամ իւլ-էխէվէյն* եւ թարգմանի "արիւն երկուց եղբարց": Իսկ այլուր մեկնի, թէ է փայտ ինչ կարմրագոյն, որով ներկանեն մտեստախս եւ զհանդերձս. *պագամ աղաճի*, գղ. *բրեզիլ*: Եւ այս է պատճառ անուանակոչութեան սորա, զի յորժամ Էֆրասիյապ սպան զՍիյավուշ, ի տեղւոջ անդ, յորում սպանեալ՝ հեղաւ արիւն նորա, բուսաւ յայնմ ժամու ծառ մի. եւ այն է ծառն փայտիս այսորիկ, ըստ սնոտի կարծեաց նոցա» (Տ. Գէորգ, *Պրս.-հայ.*): Գղ. *բրեզիլ*՝ *պագամ*: «*Դարաչինէն [դամ ախվէն՞]* եւ *խոնի սաւաշան* [գրածն՝ *խոնսի աւաշան*], *Աղբրաց արիւն*» (Գաղ. Ա., Գ): Կայ եւ *փարի սինավշան*, արբ. *պիրի շավուշէն*. «*Պառ շաւոշան. Սկեգօրի մազ* եւ *Զարխոտն* է» (Բժշ. Ա. 45):

Շաւառն, գղ. *կան օղորանտ*. տե՛ս եւ *Խունկնեղէգն*: «*Հասապ ը-դարիրա. շաւառն*» (Գաղ. Դ), տե՛ս յ*Օտար*: *Ղասապ ըլ-դարիրայ*, որ է հայ բառով *շաւառ եղէգն*. լաւն այն է, որ գոյնն *եադութին* գունովն լինի ... Ասէ Պատեհին, թէ բարակ եղէգ է որպէս գրիչ. եւ այլ բարակ եւ ինքն երկու ցեղ է. մէկ ցեղն ի շուշմային փարտն կու նմանի. եւ այն ցեղն՝ կարճկուկ, եւ երկայնութիւնն մէկ թիզ է եւ այլ քիչ մի յերկայն: Եւ մէկայլ ցեղն կոկ է, եւ յերկայնութիւնն՝ մէկ կանկուն, եւ համն՝ սուր եւ լեղի, եւ գոյնն՝ մրնգոյն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 164ա): «*Շաւառնէ* տաղաւար շատ էր արարեալ» [Պետրոս առաքեալ] (Վանական վրդ., *Հայկզ. Բուսբ.* 646, ուր սխալ մեկնի՝ «*Շաւառնէ* նշանակէ *տաղաւար*»:

Շաքարաբուղխ եղէգն, գղ. *կան ա սիւկրը*:

Շաքարկենի, այսպէս եւ *Գարեկենի* [[այսպ.]]. գրեա՛ ի *Խնձոր*. ազգ քաղցր խնձորոյ, որպէս տն. *չէքէր էլմասը*, *կիրաէ չիրին* եւ իտ. *մորոսինո*. Հայկզ. ի *Գաւառականք*:

Շեպ. եւ *Հայրուս*. թիւ 2300. բոյս ինչ լայնատերեւ եարակելի (*Բառք տփղիսեցւոց եւ Սիւնեաց*, հաւաքումն Հ. Սուք. Պարոն., թիւ 6):

Շեր, տե՛ս եւ *Շշի*, *Շուղ*. Էմին դնէ [[գղ.]] *սօորակս*. թուի գղ. *ալիբուֆիէ*. ծառ, որ տայ *զտխւրակ*. «Եւ առ Յակոբ գաւազան՝ *շէր* դալար [Հայկզ. "գաւազան *շեր*՝ դալար"] եւ ընգուզի եւ սաւսոյ» [սաւսոյ՞] (Ծնն Լ 37). եբր. փոխ *շեր* ունի *լիբնեհ*, որ է *պոպուլոուս ալբա* (Օլ. Կելսիոս, *Հիերոբ*. Ա. 292). փոխ. *ընգուզի*՝ *լուզ*, որ է *ամիգդալուս*, նուշ (անդ) եւ 253). փոխ. *սաւսոյ*՝ *արմոն*, որ է *պլատանոուս* (անդ եւ 512): Եւրանեաւունք փոխ. *շեր* ունին *ստիւրակս* (անդ 293). փոխ. *ընգուզի*՝ *կարեա*, որ է [[՞]] (անդ 253). փոխ. *սաւսոյ*՝ *պլատանոուս* (անդ 513):

Շէկխարի, տե՛ս *Ծնոսմ* ի Լիտրէ եւ *Հայրուս*. թիւ 3251 եւ Լկլէր Ա. թիւ 193:

Շրուկ. գրեա՛ ի *Տանձ*. տեսակ տանձի, քրուաշ (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*):

Շիկատակ, որ եւ *Սնգոյրատակ*, գղ. *բելլադոն՞*. տե՛ս զոր ինչ գրեմ յ*Աղուեսու* **խաղող**. տե՛ս եւ *Կարմիրտակ*. «*Իենասափիր*. *շիկատակ* ասեն կամ *սնգոյրատակ*» (Գաղ. Գ):

Շիկոռ. գրեա՛ ի *Տանձ*. «Տանձ, բայց ո՛չ սարի տանձ է եւ ո՛չ *պաղի*. անոր համար *շիկուռ* կ'ըսեն» (Գւռ. Ա. 87):

Շինգղ, **շինկղ**. տե՛ս եւ *Կօղայ*. տե՛ս եւ *Իշաշինգղ*. *շինկղ*= *կօղայ*. [սոուզեցի զայս յ3 ապրիլ

1898, յաւուր Ծաղկազարդի]. տե՛ս ի *Կօղայ*: «*Շինկղ*, որ է պրս. *չէնկխիար*» (Հ. Ղ. ի *Հայրուս*. 1570). բուի պրս. *չիյնկիյար* կամ *չիյնխիյար*. տե՛ս Գէորգ. տե՛ս անդ եւ *Շիյն*, 2: «*Շինկղ*. *կօղայ*» (Բժշ. Ա. 144): «*Շընգղ*. տեսակ ինչ մեծ վարունգ» (Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան, *Գաւառականք*): Արբ. *գըսսա*. տե՛ս *չիյնկիյար* ի Գէորգ: «*Կալ [կաթ ալ՞] Հմար. իշաշինկղ*» (Գաղ. Ա, Գ): «*Կիթ էլ Հիմար. իշկոյ վարունգն*» (*Թրգմ. դեղոց*):

Վայրի շինգղ, որ եւ *Իշաշինկղ*: «*Աշնախիստ. վայրի շնգղի* հունդ» (*Թրգմ. դեղոց*): Տե՛ս *Նաղիշտ* ի *Հայրուս*. 2166: «Կօղայի հունդ» (Մխ. Հեր. 51):

Շլոր, որ եւ *Սալոր*. տե՛ս եւ *Մէրի շլոր*. «*Շլոր*. սալոր» (Փիրղալէմ.): «*Կոկոմեղոն. շլոր*» (Գաղիանոս Գ):

Շլորենի, [[տե՛ս]] յ*Ալաժաիրի* [[*Հայրուս*.՞]] թիւ 20:

Շլորի, յորմէ՝ *Շլորուտ*:

[[**Շլորուտ**]], գղ. *պըռւնըլէ*. *Շլորուտ բերդ* (Ստեփ. Ուռպ. Կ 246). տե՛ս եւ *բեղուտ*, *լորուտ*, *խնձորուտ*, *կեչուտ*, *հացուտ*, *տանձուտ*:

Շկլաւր. տե՛ս եւ *Բկլօր*:

Շղլան գտակ. «անպէտ բոյս ինչ, նման սունկի» (*Մանանայ*, 450): «*Շղլանգտակ*. տանց մէջ բուսած վայրենի սունկ» (Ղեւոնդ վ. Փիրղալէմ.):

Շմորտակ, որ եւ *Արծպայ*. բառ գաւառի, [[գղ.]] *սաՀօննէր*. տե՛ս յիմ *Գղ.-հյ.*:

Շնազոխ. շան ազոխ*. *Հայրուս*. 2327:

Շնախստոր, [[*Հայրուս*.]] թիւ 3379:

Շնակ, տե՛ս *Խոզկաղին*. բուրքերէն *փալամուտ*, գղ. *գլան*. «Երկրին [Մշոյ գաւառին] արդի վանառականութեան նիւթերն են կենդանիք եւ մորթենիք, որ մեծ առատութեամբ կ'ելլեն ... մոմ եւ խէժ Պօլիս կը տարուին, քիչ ալ *շնակ (բալամուտ)* Կարին կ'երթայ, նոյնպէս նաեւ գինի, իւղ, շրէզ եւ բրտի ամաններ» (*Մշոյ աշխարհ*, *Լումայ*, 1898, յունիս, 149): «*Շնակ*. այսպէս կոչէ Ռիվոլա ի *Բառագիրսն* վերոյիշեալ *շկլորը*» (*Հայրուսակ*, թիւ 2330):

Շնահաւոր խոտ = *աետարանուտանի*, *տէրանուտանի* = յն. *խերոբոտանի*, [[գղ.]] *վերվեն*. տե՛ս եւ *աղաւնարօտ*. բուրք. *գուլթլունճա օթ*. *խուլթլուշաՀ* = "շնորհաւոր բազաւոր" (Ստեփ. Ուռպ., Հ, 344). բուրք. *գուլթլու* "բախտաւոր, երջանիկ, բարեբախտ" (Պօզան.). [[Հմմտ.]] *շնորհաւոր (քաղաք)* = արբ. *խիրշաՀր* (*Վկ. Թէոդ. Կեսար*. 554), արբ. *խայր*:

Շնարք եւ շնրհօք. «*Շնարք*. արմատ* մը, որով մշեցի կօշկակարները իրենց կաշիները կը [[տպղեն]]** եւ մաս մըն ալ Էրզրում կը ղրկեն. տարեկան 3. 600 օխայ կ'արտադրուի, 2 1/2 ղրուշէն» (Գ. Անդրէասեան, *Մուշի տնտեսական վիճակը*, *Հայրենիք լրագիր* , 14 սեպտ. 1895 Ա. Ե.):

* Սխալ թուի *արմատ*, զի *փալամուտ* է [[գղ.]] *գլան*:

** Տպ. թուի *կը տրպզեն*, այլ ուղիղն է *կը տպղեն*, գղ. *տաննէ*. «Քաղաքի [այս ինքն Խարբերդի] եւ Խոյլու գեղի մէջ մեծ քանակութեամբ գոմէշի եւ եզան կաշիներ *կը տարաղեն*» (Գար. վ. Սրուանձտեանց, *Թորոս աղբար*, հ. Բ, 79):

«*Անանուխ*. աննուխ կամ *շնրհօք*» (*Բառգիրք հայոց* Երեմիայ վրդի., Լիվոռնոյ, 1698, երես 17):

Շնթելուկ. Աբանասեանց 74. տե՛ս եւ *Թելուկ*:

Շնթեռ. անպիտան լոռն (*Գւռ*. Ա 87):

Շնխաղող, *-ոյ*, գղ. *սոլանոմ*. որ եւ *Աղուեսու* **խաղող**, բրգմ. արբ. *ինէպ իւս-սալէպ*. տե՛ս եւ *Մորմ*. «Ապա բէ գառնալեզուի ջրով եւ *շնխաղողի* ջրով զկուրծսն օծանէ, շատ օգտէ» (Մխ. Հեր. 19, *Վստ*. ՅԱ 205, ՅԼ 224): «*Շնխաղող*. բոյս ինչ, որոյ պտուղն կարմիր եւ մանր լինի, նման հաղարջի, զոր ուտեն» (*Մանանայ*, 450): «Յակորուկ. կարմիր միրգ է ի *շնխաղողին* ցեղէն. *քաքանաճ*, *քուքումաճ*, *ապըլ յարուս*» (Բժշ.). գղ. *ալքեքանժ* է *սոլանէ*: «*Քակոնիջ*. մորմոյ պտուղ» (*Թրգմ. դեղոց*). *մորել* է մորմ, որ է բունաւոր, իսկ *շնխաղող* է ուտելի: Պրս. «*սէկէնկիուր (շնխաղող)* եւ *սէփէնկիուր*, արբ. *ինէպ իւս-սալէպ*. բուրք. *իթ իւզիւմիւ*» (Գէորգ): Տե՛ս *քաքնաջ* յիմ *Բառս Գաղիանոսի*:

Կարմիր շնխաղող = *Յակորուկ* (*Հայրուս*. 2150, 2329):

Շնորհաւոր խոտ. կայ գղ. *գրասիոլ*. «*Շնորհաւոր խոտ*» (Մինաս Էմիրեան, անասնաբոյժ, *Փունջ* լրագիր, 16 փետրուար 1891, Դ, բ). թուի եղեալ իբր [[գղ.]] *գրասիոլ*, զի Մինասդ վարի բառիւք բառարանին իմոյ. տե՛ս ի *Բոգ. ակոնիտ, էլլեբոր:*

Շնսխտոր. տե՛ս եւ *Դանտալայ*. «Բանջար վայրի, նման եւ ի համ սխտորոյ, զոր արմատով հանեն, աղջուր դնեն եւ ուտեն» (*Մանանայ*, 450):

[[**Շնրիօֆ**, տե՛ս **Շնարֆ**:]]

Շնֆաֆուկ. «Փուշ ինչ, որ բուսանի յաւերակս» (*Մանանայ*, 450. տե՛ս անդ եւ 299):

Շշի. «Առնու երիս գաւազանս. շերբ, զոր *շշի* ասեն եւ պարսկերէն՝ *մուլթանայի*» (Վրդն., *ԾՆՆ*): «Գաւազանօք ընկուզի եւ սօսի եւ *շշի* ... ծնանէր ի ջուր աւազանին նկարէնս եւ խայտախարի գառինս եւ գոշասպիտակ մաքիս» (Վարդան, *Ներբ. ի Գր. Լուս., Սոփ.* Ե 55): «Շեր. *շուշ* կամ շեւ կամ շիւ» (Երեմիա Մեղրեցի, *Ռսկիփ.*, Գ, 159):

Շողգամ, տե՛ս *Շաղգամ:*

Շոն, տե՛ս եւ *Շօն. [[շոն]]* կայ յԱգար. 480, այլ տե՛ս անդ. չիք *շոն* բառ. սխալ կարծէ Հայկգ., թէ *շոնոյ* սեռականին ուղղականն իցէ *շոն:* «Ոչ նոնին [պէտի *սոնին]* այժմ եսբեմիայն, այլ սա ծաղկեալն ահարոնեան. Ոչ սա ոստ ղոմպիական, այլ փոխադրող ջրոյն դառնութեան» (Գր. Մագ., *Յաղագս խաչանշան գաւազանին* եւն, տողք 14–15, երես 89): «Պարտ եւ արժան էր ողրալ *շոնոյն [= շոնւոյն],* վասն զի անկաւ մայրն» (Գր. Նազ., *Կարկդ.*, Նոր հայկգ. ի *Շոնի):* «Ողբասցէ, ասէ, *սոնին*, զի անկաւ մայրն» (Բարսեղ, Գր. Քեսունցի, 492. տե՛ս *Սոնի):*

Շոնի, *-ւոյ*, որ եւ *սոնի*, գղ. *պեն*, որ եւ յն. բառիւ *պեւկէ*. Պղատ., *ԱւրէՆք*, Դ, 118: «Ո՛չ իսբմիական *շոնի*, ո՛չ նեմէական լախուր, որովք երիտասարդքն թշուառականք պատուեցան» (Գր. Ասծր., *Ի Կիպրիանոս):* «"Ո՛չ իսբմիական *շոնի*". *շոնի* ծառ զտեսականութիւն ունի զնշանակ» եւն (Նոննոս, Ե, բ, գրեա՛ ամբողջ): «Զպաշտօնեայս աստուածոցն պսակէր ոստովք ձիթենեաց եւ եսբեմիական *շոնիւք* [=*շոնեաւք] (Վկ. Իգնոսի* 609):

Շոնի բուփ. Պտմ. վրաց, 48, զոր Բրոսէ, Ա., երես 103, ծ. 5., գրէ *զոնի*. «ի ներքոյ տնկոյն *շո-նեաց*» (անդ, 57). «հատին զծառն *շոնի*» (անդ, 60), որ ի Հայկգ. *Յաւել*. գրէ *զոնի*, յորմէ եւ Առձ. ա. եւ բ. տպ.:

Շոմին. տե՛ս եւ *Ծմել, Սպանախ*. պրս. շումին. «*շոմին*, ծմել» (Պօզան.). «Ասպանախ, որ հայերէն *շոմին* ասէ եւ *ծմել* այլ կու ասէ. ինքն ցանծու է, յածուենիքն կու բուսնի եւ վայրի ալ կու լինի. եւ լաւն այն է, որ ի յանձրեւն բուսնի ... զկուրծին կու կակղացնէ եւ օգտէ հազին, եւ հուննն օգտէ կրծոց ցաւին եւ զփորն կու լուծէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 41ա): *Շոմին*, սեռական *շոմնի* հոլովի ի Հայերէն բառագիրս աշակերտաց Մխիթարայ Աբբահօր, հ. Բ, 86, զոր տե՛ս *յԱւելուկ:*

Շուախոտ. տե՛ս *Շուէ* ի *Ստորին հայերէն*. խոտ ինչ, նման սիզոյ (Գւռ. Ա. 36). «*Շուի*. սրինգ (Երեւան)» (Փիրղալէմ.):

Շուշան, *-ի*, *-աց*. խոտ. տե՛ս ի *Մանդակ*. «Արեւորդիք պաշտեն զ*շուշան* ծաղիկն» (Մխ. Սպար., տե՛ս ի *Հանդէս ամս.*, 1896, 16ա). Ստ. Ուռպ., ԺԸ, 45. «Անուշահոտ *շուշանաց*» (Յովհ. Սարկաւագ, *Աղօթք*, ԺԴ 80. *Սոփ. հայկ.* ԺԵ):

Շրգաւ. շրգրաւ. պտուղ վայրենի վարդի, բոլորաձեւ. տճ. *քէմիչէք* (Գւռ. Բ 57): «*Շրգաւ*". կարմիր մանր պտուղ ունի, ըստ բրգնիքցոց» (*Հայրուս*. 2372): «Վարդիւք եւ *շուշանաւք*» (Խոր., *Վար-դավառ*, 334): «Անուշահոտ *շուշան* ծաղիկն» (Ագաթ., Յոչբ. 18):

«Գոհար վարդ, *գոհար շուշան* » (Գր. Նար., 482):

Ծովային շուշան. Հայրուս. թիւ 2359. «Ծաղիկս ծովայինս այս *նոնոֆարն* է» (*Հայրուս.* թիւ 2214): «*Ծովային շուշան* ծաղիկ, բուսեալ ի տանըս Թորգոմի, Առոգեալ արեամբ սրբոցըն Պետրոսի եւ Պաւղոսի» (Ն. Շնորհ., *Տաղ. Հոփիս.):* «*Ղարէնֆիլ* շնորհատեսակ, դու *նունուֆար ծաղիկ ծովային*, Լանվէրտի սիւմպիւլ հիմտի, տիպ տենչալի» (Խասպէկ երէց, *Աբ'են որ մտանէք պաղչան*, 146): «*Շուշան* ... ի գետն Եփրատէս» (Մխ. Գոշ, ԻԶ, 32): «Ծաղիկ ծովային» (Գր. Նար. 482). տե՛ս զոր ինչ գրեցի ի Սալաձորեցի (*Բանասէր*, երեսք 126–127, ի *Սուսամբար):* «*Նինոֆարն* ի մէջ ծովի»

(Կոստանդին Երզնկացի, *Տաղարան*, Տետր Դ, 5): «*Ննուֆար*. հարսնամատն, կոկոռ, *շուշան ջրային* կամ *ծովային*. *Նոնոֆար* է տունկ ինչ լճային, որոյ տերեւք եւ ծաղիկք տարածին զերեսօք ջուրց. կոչի եւ *նինֆէա. նինէվֆէր, էմլիւֆէր չիչէյի, կէօլ սուսէնի*» (Ջախջ., *Իտ.-հայ.*):

Շուշան լերին. տե՛ս եւ *Սմնակ*. «*Շուշան հովտաց. նինոֆարն*, որ ի ջուրս բուսանի, դեղին գունով եւ ոչ է *շուշան լերին*, որ սպիտակն է» (Գր. Տաթեւ., *Մեկ. Երգ. երգ., Հայրուս.* թիւ 2360):

Շուշան հովտաց. «Մարդիկ առոյգք եւ զուարթք ընդ սուր եւ ընդ հուր որպէս ընդ *շուշանս հովտաց* խաղային» (Լմբ., *Պտ.*, 118). «Ընդ փուշս մեղացն որպէս ընդ *շուշանս հովտաց* խաղամք մտաւք» (անդ, 538):

Շուշան վայրենի (Մտթ Զ 28), որ ի Ղուկ ԺԲ 27 ասի լոկ *շուշան*:

Շուշմայ, շուշմայի, որ եւ *Կնճիթ*. «Ի բուսաբեր ձիթոց, զոր *շուշմայ* անուանեն» (ՇՆ., *Թուղթ.*, տե՛ս զվկ. ի *Ջիթենի*): «Ջիթենի եւ ընկուզի եւ բեւեկնի եւ *շուշմայի*, զոր մեք կնջիթ ասեմք» (Սանահն.):

Շուշմիր, լտ. *կարդամոմում*, [[տճ.]] *գագուլէ, շուշմիր* (Մէնինսքի, *Օնոմաստիկոն*). գր. *կարդամոմ*, տճ. *գագուլէ*. «Եւ այն, որ փոքր *գագուլէն* է, *շուշմիկեր* ասեն եւ *շուշմիր* այլ ասեն. եւ ինքն երեք ցեղ է. *Հալիլային* կտին չափ մեծութիւնն» (Ամրտ., *Բժ. բոգ.*, Գ, 173): «*Շիմշիրայ* մն այլ, որ *շուշմիր* կու ասեն. ինքն փոքր *գագալուն [գագուլէն]* է» (անդ, 298):

Շտաղուկ. տե՛ս *Շարտաղուկ*. «*Ըշտաղուկ. չէֆտալի*, դեղձ» (Հ. Մկ. Անան., *Բոգ. աշխ.-գրբ.*). «Դեղձ. *ըշտաղուկ, չէֆտալի*, դեղձ», (նոյն, անդ):

[[**Շրէզ**]], **շրէժ** [[անվկայ]], **շրէշ**, [[**շրէշտ**]]. գրեա՛ յ*Ողին*: Պրս. «*սիրիշիմ*. է սա արմատ ինչ, զոր չորացուցեալ եւ ջրով թրջեալ՝ ի գործ ածեն ի կպուցանել զիր ինչ. բուրք. *չիրիշ*» (Տ. Գէորգ, *Պրս.-հյ.*): Յն. *ասփոդելոս, անթերիկոս*: Գղ. *ասպոդել*. կայ գր. *գլիւտեն*: Վիէնն. իտ. *ասփոդիլլո, չիրիշ օթու*: Տե՛ս *ասըհօտէլուս* ի Բէստէն: «*Ասփոդիլլո*. է խոտ ինչ, որոյ արմատք են բողկանման, յորոց կազմեն ի սովու զտեսակ ինչ հացի» (Ջախջ. *Իտ.-հայ.*). «Ի սովի ուտեն մարդիկ զառաւօտի եւ *զվերվերան* եւ *զամոմուկ*» (*Հայրուս.* 2794): Տե՛ս եւ [[Նորայրի]] *Բոգ. Ստորին հայերէնի*: «Ծաղիկն ելանէ ի գագաթան եւ է կարմրախառն սպիտակ եւ շուշանաձեւ» (Բէստէն, *Ասըհօտէլուս*):

«**Շրէզ** բլուր» (Խոր.): — «Մշոյ լեռնային մասերու, մանաւորապէս Սասունի արտադրութիւններն են *շրէզ* (*օղին* ըսուած բոյսի արմատը). տարեկան 60. 000 *օխա*. այս թիւը կրնայ կրկնապատկիլ, եթէ գեղացիները ծուլութիւն չընեն ու շատ հաւաքեն. շրէզը մեծ մասով Բաղէշի մէջ կը սպառի, ուր կտաւի համար *քիթրէի* տեղ կը գործածեն» (Գ. Անդրէասեան, *Մուշի տնտեսական վիճակը, Հայրենիք* լրագիր, 14 սեպտ. 1895, Ա., Ե): — «Պուլիկ. դեղնագոյն բողբոջ *շրէզ* բուսոյ, յորմէ նմանութեամբ՝ ձագ սագի, գր. *ուազոն*» (Հ. Սուք. Պարոն., *Բառք կարճեցուց*, թիւ 19):

«**Շրէշ** կամ *շրէզ*. բանջար ինչ զարնանային, զոր ուտեն հում կամ տապա-կեալ» ((Հ. Սուք. Պարոն., *Բառք կարճեցուց*, թիւ 19): — «*Շրէշի* բլուրք, վասն առատութեան բուսուցանելոյ զբանջարն *շրէշ* եւ զրոխ» (*Այրարատ*, 204բ): — «Բոյս է ցածուն իբրեւ թզաւ բարձր եւ նմանաձեւ տերեւոց սուսամի, զորոյ զտերեւսն եփեն եւ ուտեն, եթէ՛ դալար՝ զամառն, եւ թէ՛ ցամաքեալ՝ զձմեռն. իսկ զարմատն մանրեալ ի փոշի՝ մածուցանեն թուղթ. տճ. *չիրիշ*» (*Գւռ.* Ա. 36): — «*Աշրաս*, որ է *խունսան*, որ է *շրէշն*, որ է *ասրախն*. եւ ինքն յիշած է յիր համարն կամօքն Աստուծոյ» (Ամրտ., *Անգ. անգ.*, Ալիշան, 32). — «*Ասղուլուս* [ասփուտուս՞]. ինքն տակ մն է, որ ի ջաղացքն կու աղան, եւ ինքն *շրէշն* է, որ է *խունսայն*» (անդ, 37). «*Խունսայ*, որ է *աշրասն*, որ է *շրէշն*, եւ տերեւն նման է *կանդանայի* տերեւին եւ ի գագաթն. սպիտակ ծաղիկ ունի, եւ տակն կաղնոյ պտուղ կու նմանի, բայց շատ կու լինի. մունկրերն եւ զտակկրերն զինքն ի գործ կու արկանեն. լաւն այն է, որ ի լինքն լինի ... եւ զինքն պսպղացնող է եւ *ճլէ* պտուղ է ... եւ իր ծաղիկն եւ միրգն լուծումն կու առնէ ... եւ զկանացիքն բանայ եւ զարուն յորդորէ. եւ թէ զիր տակն տլէ այնեն եւ կամ սպեղանի այնեն, որոյ ձուքն ունի, օգտէ ... եւ իր ծաղիկն եւ միրգն կ'ու[տ]վի ... ասցել է գրոցս ժողովողն, թէ այս խոտիս *պտղմախ* կու ասեն *պարպարի* լեզուաւ. եւ ինքն սուր է եւ կոկ է» (անդ, 128ա): — *Շրէշի տակ* (*Հայկ. բուս.* 1009):

«**Շրէշտ**. բանջար վայրի, որոյ բոյնն [*բոյսն*] ի թարմ եւ ի չոր իւղով տապակեն, իսկ արմատն աղան, որ է *չիրիշ*» (*Մանանայ*, 450): — «*Շրէշտ*. ազնիւ բանջար ինչ լեռնային» (Ղեւոնդ վ.

Փիրղալէմ.):

Շփռաւելուկ, *յԱւելուկ* բառէ. տե՛ս եւ *Շեղի աւելուկ*. Աբանասեանց, 76. շփռաւելուկ, *Նոր դար*, Է, 102, *Հայբուս*. 2326:

Ո

Ոլեռն. ՎՀ 582 թ. թրգմ.. Մխ. Գոշ, *Առակք* ԽԳ 46 [[Հմմտ. *ոլոռն*]] (*Ե* եւ *Ո*):

Ոլոռն, գղ. *ֆեվ*. «Պետրոս սակաւ լումայիւքն *ոլոռանցն* [յն. "լումայի ոլոռամբքն"] կերակրեալ» (Գր. Նազ. *Աղք*., Նոր հայկզ. *յՈլոռն*, յորմէ եւ Ն. Շնորհ.): «Սակաւ *ոլոռամբք* շատացեալ լինէր [Պետրոս առաքեալ] յաւուրն, որպէս վկայէ Գրիգոր Աստուածաբան ի բանն, որ յաղագս աղքատասիրութեան» (Ն. Շնորհ., *Թուղթ ի Միջագետս Ասորւոց յԱմայք կոչեցեալ Ծահանցին*, տպ. Կ. Պօլիս, էջ 159): *Ոլոռն*, Նոննոս, Գ, կ, 59: «Կործանեա՛ ինձ զՊիրագորայ զլռութիւն եւ *զոլոռունս* որփիականս» [Գր. Նազ.], *Առ որս*, Ա, ուր հին *Լծ*. ի լս՝ "Որփեւս *ոլոռն* օրինադրեաց չուտել» (*Հայկզ. յՈլոռն*): «Մեծ *ոլոռունք* Պիրագորականաց» (Դ. Անյ., *Սիմ*., Թ, 166): «*Շնբեռ*. տեսակ մի անպիտան *ոլոռն*». *աստ գրեա՛*:

Ոլոռն ոլոռն. Ղուկ ԻԲ 44, Բրս. *Վեց*. Գ 60, յորմէ եւ Ան. Շիր. 47:

Ողկոյզ. գրեա՛ *յՈրբ*. «Ջոր *ողկուզոյ*» (Եփր. *Ել* Ա 143):

Ողկուզուկ. տե՛ս եւ *Խանբէփար*. բուն գղ. *գիկտամ*. յորմէ՝ *Խնկողկուզուկ*. «Իսկ ի Կրետէ յորժամ այծ նետիւ հարցի, այն, որ կոչի *ողկուզուկն*, խնդրէ եւ կերեալ, դիւրաւ վէրն բժշկեալ լինի» (Փիլ., *Կենդ*., 144): Լիտրէ դնէ *բասմուլում* կամ *գիկտամ*. քննելի, թէ կայցէ՛ յունարէն *վօթրիտիօն* անուն բուսոյ, իբր փոքրիկ ողկոյզ, զի *վօթրիս* է ողկոյզ: «*Դիկտամեաւ* բանջարով զվէրս Ենեայ դարմանէ Աստղիկ» (Վիրգ., *ԵՆ*. ԺԲ, Նախադրութիւն, երես 262). իսկ անդ տող 426 թարգմանի *խանբէփար*:

Ողին, *-ղնի*, որ եւ *Շրէշ*. աստ գրեա՛ զ*Ըղին*, զ*Օղին*. «*Օղին*. տե՛ս *Շրէշտ*"» (*Մանանայ*, 452): *Օղին* կամ *ըղին* (Ինճին. 41, 168–169. *օղին* 183): «Ջողնի տակն մանր աղա՛ եւ քացխով շաղէ՛ եւ դի՛ր [ի վերայ ակռայի], հանէ՛» (*Հին բժշ*., *Հայկ. բուս*. 2389). այս է անշուշտ իմ գրածն «*Ողնիտակ*. Բժ. Ա. 260). «Ջողնիտակն մանր աղա՛ եւ քացխով շաղէ՛» (Բժշ. Ա 260, յընդօրինակութենէ Սուքրեանի):

Ողորմակոթ, այսպէս եւ *Խնդակոթ*. բանջար ինչ (*Մանանայ* 450, Աբանասեանց 81):

Ոպնիազ.

Ոսկեխոտ. տե՛ս *Ոսկէխոտ*, *Ոսկոյ խոտ* ի *Հայբուսակ*, թիւ 2400 եւ յիմ *Քննադատ*. *Հայբուս*., համար ՃԿՋ եւ *Յաւելուած* ի համարն ՃԿՋ: Պրս. «*զէրկիյա*. է խոտ իմն, որ շատ լինի ի Հնդիկս, եւս եւ ի գաւառին հոռոմոց եւ փայլի ի գիշերի որպէս ոսկի, զոր թէ ուտիցէ ոչխարն եւ այլք ի յանասուն կենդանեաց, ստամունք նոցին որպէս ոսկի երեւին. եւ թարգմանի *ոսկեխոտ*» (Գէորգ): «*Քիմիայ օթի*, որ ձմերուկի տերեւներու նման է. բժիշկներ իբրեւ դեղ կը հաւաքեն. ոչխարն, որ կ'ուտէ, ատամները իբրեւ ոսկի կը փայլեն» (Ս. Հայկունի, *Դէրսիմ*, *Արարատ* Էջմիածնի, 1896, մայիս, երես 240բ): Ա՛յլ բոյս բուն պրս. *զէրկիյա* = *ոսկէխոտ*. տե՛ս ի Գէորգ:

Ոսկեծաղիկ. գղ. *քրիզանթեմ*. Կիւր., *Կոչ*. ԺԵ 321. «Սուրբ *Խռուսանթոս*, որ է *ոսկէծաղիկ*» (Տաշեան, *Ցուցակ* եւն, 30բ):

Ոսկենղիկ. *Գւռ*. Բ 57. ոչ դնի մեկնութիւնն:

Ոսկի եղէգն. թարգմանութիւն տաճկականին *ալթըն գամըշ* (Բժշ.). յն. *լիսիմախիա*, լտ. *լիսիմաքիա*. «*Լուսիմաճիուս*, որ թուրքն *ալթուն ղամիշի* ասէ, որ թարքմանի [[այսպ.]] *ոսկի եղէգ*. եւ ծաղիկն նման է ոսկուն գունին, եւ տերեւն՝ նման ուռու տերեւին. եւ ի ջրեզերնին կու բուսնի. եւ ամէն տերեւ ի ա̅ *պուղունէն* ելանէ. եւ թէ սպեղանի առնես եւ դնես ի վերայ խոցին, բուսուցանէ, եւ քթին արունն կու կտրէ, եւ յուսկից, որ արիւն ելնէ, կտրէ. եւ թէ զտերեւն քամես եւ զջուրն խմես, զկրծոց զարուն թքնուլն կտրէ եւ աղեց զանբրուն այլ օգտէ. եւ թէ կանայք զէղ *չափ* վերցնեն, զհին արուն, որ

յարգանդէն զայ, կտրէ. եւ թէ ծնեն, ամէն սողունքն եւ թռչունք փախչին, եւ մկներն սպաննէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 113):

Ոսկիխոտ. Տաշեան, *Ցուցակ*, 471բ. «Խամլըերդ. է միւս երեւելի լեառն Խնուսայ, որ է մի ի բազկաց նոյն Պինկէօլայ, ի յարեւելակողմն նորա. որոյ խոտ եւ այլ բերք ունին զօրութիւն իմն, զոր չիք ուրեք տեսանել. ոչխարք, որք արածին անդէն, լինին արտաքոյ կարգի մեծ քան զոչխարս այլ ամենայն տեղեաց: Այլ որ առաւել սքանչելին է, ի հիւթոյ խոտոցն ոսկեզօծին երբեմն ատամունք անասնոց նարակելոց անդէն, ի զարմացումն ամենեցուն: Քուրդք վրանաբնակք կրկին հատուցանեն *պէյին* սակս այն լեառն արածելոյ զանասունս իւրեանց» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 80): «Խուրծիլ կամ *ոսկի խոտ*» յԱրագած լերին, որ ոսկեզօծէ զատամունս ոչխարաց (Պերճ Պռօշեանց, *Հանդէս գրականական եւ պատմական*, 1889, Բ, երես 3, տե՛ս անդ):

Սըւրուկ, այսպէս եւ *Խըւրուկ*. ասա գրեա՛ զ*Սվրուկ*. նո՞յն եւ *Սորոկ, Սորուկ*: Տե՛ս եւ *Թեյլուկ*, տն. *իշտիրի*. «բուրքերէն *իշթիր* եւ արպերէն *պագլէի նէժմանիէ*» (Գէորգ): *Սիփիլրապէրկ* = բեյլուկի [բաւ-

լուկի °] տերեւները «ծածկած սպիտակ փոշու նման հիւրով» (Աբանասեանց, 73-74): Պրս. «*Սփիդյապէրկ* [= սպիտակատերեւ] է անուն խոտոյ իրիք, որ ասի թուրքերէն *իշթիր* եւ արաբերէն *պագլէի նէմանիէ*» (Գէորգ): *Պագլէի նէմանիէ* է *ծիմել*, *բլիտ*. թերեւս գրելի էր *պագլէ զէհապիյա* = [[գղ.]] *արրոշ*. տե՛ս ի *Թաղթ*: Նո՞յն ընդ *Ծիմել* = գղ. *բլիտ*: Նո՞յն ընդ թուրքերէն *իշթիր* = *Ծիմել*:

Սքեր. գղ. *ազարէ*, *վալերիան* (Էմին). գղ. *ազարէ* ասի *կազմորէ*, *մրուանտակ*, *վայրենի նարդին*: *Սքեր* է թերեւս լտ. *սատուրէա*, գղ. *սարիետ*, որ է *կորդիւն*. «*Սահթար*. կորդոյն» (Գաղ. Դ). Նոյն բուն եւ *ըսպար* ի *Նուսխայս*, յետկուսէ Մխ. Հերացւոյ, 146, այլ տե՛ս անդ եւ *ասարոն*, 144, 145:

[[**Սիբէխ**]]. Աբանասեանց 71. կայ պրս. *սիպէխ*, որ եւ է *հէմէկ* աղ:

[[**Սիզարբալ**, տե՛ս **Սիսարբաւղ**:]]

[[**Սիզարոյս**, տե՛ս **Սէզ**:]]

Սիզարբալ, տե՛ս *Սիսարբաւղ*:

Սին, գղ. *կորմ*, *սորբ*. «Սինձ. ար. [= արաբերէն] *զաբուր*, լղ. [= լատիներէն] *սաւրպա*» [= *սորբա*] (Հ. Ղ. Յովն., *Անուանք դեղերոյ*). իտ. *սորբա* (լտ. *սորբում*, իսկ ծառն *սորբուս*): «Ա՛ռ ... զջուրն պտղին, որ ի լադինն *չուրպէ* [լտ. *սորբում*] կոչի» (*Բիմիար*., տե՛ս ի *Մամուխ*): Տե՛ս *սինձ* եւ ի *Հազորան*:

Սինձ 1, տե՛ս եւ *Սէզն*. տե՛ս եւ *Վայրի* **խնձոր**. տե՛ս եւ *Սնձենի*, *Սնձի*, *Սնձնի*. «*Սնձի*, որ է *ալուճն*» (*Վստ*. Մխե 155): «*Սինձն*, որ է ալօնն» (Բժշ. Բ 326): «Ալօնն. վայրի խնձորն է, որ է *սինձն*» (Բժշ. Դ 154): «*Զարուրի ճապալի*, որ է վայրի խնձորն, որ է *ալուճն*, որ է հյ. բառով *սինձն*. լաւն այն է, որ հասուն լինայ ... իր փոխանն *ղուպայրան* է, որ է փշատն» (Ամրտ., *Անգ. անպ*., Ալիշան, 74ա): «*Մեզմեզիոն. սինձն*» (Գաղ.). յն. *մէլիմիլօն*, տեսակ իմն յոյժ քաղցր խնձորոյ (Լիտրէ ի *Մարմելադ*). յն. *մեսպիլան*, [[գղ.]] *նեֆլը*: Հայկզ. իմանայ *մուշմալա*. Պօզանեան *սինձ* դնէ *զմիւշպլա*. Էմին *սինձ* դնէ *զկոմպոտ*: «Ամենայն պտղի մանրագոր ասեն, որ զծաղիկն ի ծայր ունին, որպէս մասուրն եւ *սինձն*, եւ դարձեալ ազգ մի խնձոր կայ վաղահաս, մանրագոր ասի, ուստի քաղեաց Ռուբէն» (*Լծ. Նար*., Հայկզ. ի *Մանրագոր*): «Սերկեւիլն ... փորոք է քան զ*սինձ*» (*Հայկ. բուս*. 2738). «*Սինձ* զփորն կապէ», 2752: «*Սինձ*, որ է *բիտան*, որ է փշատն» (Բժշ. Բ 336): «*Բօշմուրուք. սինձ*, որ բու[ր]քն էմլիկ կ'ասէ կարծեմ (Ձեռագիր *Բժշկարան* Ազգային մատենադարանին Գալատայի), «որ բ. *էմլիք* ասէ [գրածն՝ "որ բու քէմլիք"] (*Հայկ. բուս*. 2753). տե՛ս եւ *Բամպլուկ*:

[[**Սինձ 2**]]. «*Սինձ*, որոյ տերեւք իբրեւ մանրաբեկք առկախեալք, ծաղիկն՝ դեղնագոյն. գրուն սորա կամ, որպէս կոչեն, զործանն առանց եփելոյ ուտեն, որոյ հիւթ զձեռս մածուցանէ, իսկ զէզ նորա՝ խարշելով» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 40): Այսպէս եւ Սիմ. Կամերկապցի (*Հայկ. բուս*. 2753): «*Սինձ*. անուշ խոտ, զոր մարդիկ եւս ուտեն» (Գար. վ. Սրուանձ., *Մանանայ*, 451): «*Սինձ*. աշխարհաբար *Փամփարայ*, իտ. *սկացոններա* [գղ. *սկորսոներ*], *սքօրչինա*» (Ստեփ. Շահրիման.): «*Սինձ*. խոտ ինչ» (*Գւռ*. Բ 52): «*Սինձ*. խոտ է ուտելի հում» (*Գւռ*. Բ 69):

[[**Սիպեխ**]], **սիպեղ**, [[**սիվեղ**]], **սիւեղ**. ա՛յլ է եւ *Սուեղ*. գղ. *պիսանլի*°. տե՛ս զպատկերն ի Մէնէվիշեան 154 (*կռարանջար*): «*Սիպեղ*. խոտ ինչ ուտելի» (*Գւռ*. Բ 3): «*Սիպեխ*. է բանջար ինչ, զոր առնեն կերակուր ի մատաղ ժամանակի» (*Գւռ*. Բ 8):

«*Սիպեխ. էպերվիէր դը սավուաժար*» (*Արեւելեան մամուլ*, 15 մարտ 1894, երես 146):

«Մատուտակ եւ *սիվեղ*» (Ասար, *Հայկ. բուսար*., թիւ 2754): «*Սիվեղան* [*որպէս կորեակ, -եկան*] արմատ եփէ՛ մեղրով եւ գինով, եւ ուտէ» (Բժշ., *Հայկ. բուսար*., թիւ 2754): «*Սիւեղ*. բանջար ինչ, որոյ տերեւքն են նման *մաղտանօսի*. ծառանայ» (*Գւռ*. Բ 4): «*Սիվեխ* եւ ըստ այլոց *սիպեխ*. տերեւքն՝ քլաչափ, սղոծաձեւ, եփեն եւ ուտեն» (*Գւռ*. Ա 37): «*Սիւեղ*. խոտ ինչ ուտելոյ» (Փիրղալէմ.): «*Սիւեղ*. բանջար, զոր աղջուր դնեն եւ ուտեն» (*Մանանայ* 451):

Սիսարբաւղ, **սիզարբալ**. «*Սիսարբաւղ*. այսպէս գրուած ի Բառգիրս Րիվոլայ, իբրեւ ի զարնան բացուող [տպ. բացւող] ծաղիկ մի» (*Հայբուսակ*, թիւ 2756): Տե՛ս եւ Մէնէվիշեան, *Կենդանաբանութիւն*, 303: Տե՛ս զնկարագիր որդան կարմրոյ յԻնճիճ., *Նոր Հայաստան*, 41 եւ Բզմ., 1843, առ ի 56ա –57բ: «Լինի [յԱյրարատ] որդն [ի] *սիզարբալ* յարմատոյ զարդ կարմրութեան» (Խոր., *Աշխարհ*.

ընդարձակեալն 34), ուր տպ. ունի «Լինի որդն *սիզարբերեալ*», եւ ի ծան. 3 ասի. «Յօր. *սիզարրալ*». իսկ համառօտն՝ «Եւ ունի Այրարատ ... որդն յարմատոյ *սիզոյ* առ ի զարդ կարմրութեան գունոյ» (610-611) եւ յերես 611 ի ծան. 2՝ «Հին տպ. *սիզարբերեալ յարմատոյ*»: «Որդնն թուի ատ [[գղ.]] *կոշընիլ*, եւ ո՛չ *կերմես*: Տե՛ս եւ գղ. *էկարլատ*, թուրք. *չիչէք* եւ *խաքէրլէթ պէօճէյի*: ՅՆ. *պրինու անթոս* = *կերմես* = "սղոցւոյ ծաղիկ". տե՛ս եւ ի Պօզան., *կերմես* ի Լիտրէ, ուր ասի, թէ գտանի ի վերայ սղոցւոյ: Տե՛ս *պեմպրընել* ի *Հայրուս.* եւ թիւք 210, 2740 եւ *սուրպուլ* թիւ 2812 եւ *զօրպօլ* թիւ 1831. տե՛ս եւ *չուշար* (*Հայրուս.* 2364). գղ. *պեմպրընել*°, տե՛ս Ալիշան, *Յուշիկք*, հ. Ա., 52-53 եւ *Հայրուսակ* թիւ 2748: Թուի *սկլերանթուս պերեննիս*. տե՛ս Մէնէվիշեան, *Բուսաբանութիւն*, երես 199: Տե՛ս եւ *Լեղի կաղնի* ի *Կաղնի*: Յիբն էլ-Բէյտար հ. Գ, 1756 ի *կերմես* ասի, թէ այս որդն գտանի ոչ միայն ի լեղի կաղնւոջ (կամ ի սղոցւոջ), այլ եւ ի վերայ փշոտ տնկոց:

Սիսեռն, *-եռան*, լտ. *կիկեր*, գղ. *պուա շիչ*, *սեզըրոն*. «*Սիսռան ջուր*» (Մխ. Հեր. Խ 117): «*Դալար սիսեռն*» (*Վարք սրբոյն Իլարիոնի*, *Սոփ. հայկ.* ԻԲ 107):

Սիսղանի ծառ. Ամրտ., *Բժ. բոգ.* Գ 286. «*Շաճար ըլ-տիգ*, որ է *սիսղանին ծառն*» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 220ա): Իցէ՞ *տարչիչղան* (*Հայկ. բուս.* 53, 2185). անդ 1851 գրի *չաճար ըլ-տէգ* (*թՀալ*) եւ ասի գղ. *չեվրըֆէօյ*:

Սիրալախուր, տե՛ս եւ *Հինգտերեւեան*. տե՛ս եւ *Մանրիկ*. յն. *պենտաֆիւլլոն*, որ եւ *պենտապե-մեյոն*, [[գղ.]] *պոտանտիյ* կամ *կենտըֆէօյ*. գղ. *կենտըֆէօյ* (ԷմԻՆ). «*Պնդափիլոն. ւսրալախուր*» (Գաղ. Ա.). «*Պնդափիւղոն. սիրալախուր*» (Գաղ. Բ):

Սիրածաղիկ. թարգմանութիւն պարսկականին *միհրկիյա* կամ *միհրկիյահ*. տե՛ս ի *Մրուանտակ*

Սիրիսիրի, որ եւ *Զորսնուկ* (վանեցւոց). տե՛ս *Արարատ*, 1908, Նոյեմբեր, երես 1029:

Սիրող. գղ. *լիեր*, որ եւ *Շաղապատուկ*. տն. «*սարմաշըգ*. ծառ է, որ ծառի վրան կը պլլուի» (*Բառք խոտըջր.* 42): Արբ. *աշգ* 'սէր' եւ *աշգա* 'բաղեղն'. տե՛ս ի Գէորգ *Լէպլապ*: *Սիրող* յիշէ եւ Կամերկապցի իբր պատատուկ, բաղեղն (*Հայրուս.* 2764): «*Սիրող. սարմաշըղ աղաճը* (գեղջ.) (Նշան Գ. Խտշեան, *Բառք Տրապիզոնի*): «*Սիրող*. որբի տերեւներու նմանող տերեւներ ունեցող տեսակ մը *սարմաշըխ*» (Միհրան Մամիկոնեան, *Գաւառականք*, *Տրապիզոն*, *Խարբերդ*, *Կարին*, *Մուշ*):

Սիրոյ կոն (մշեցւոց), գրելի ի *Կոն*. տե՛ս *Արարատ*, 1908, Նոյեմբեր, երես 1029:

[[**Սիւտկուրանջար**]]. «*Սիւտկուրանջար*. խոտ ինչ համեղ լեռնային» (Փիրղալէմ.):

Սլիկ. տե՛ս *Սախսիկ*:

Սխտոր. տե՛ս *Խստոր*. կայ գղ. *այլիէռ*:

Սխտորուկ. գրելի ի *Խստորուկ*. «Բանջար վայրի, համով եւ նմանութեամբ սխտորի» (*Մանանայ* 451): «*Սխտորուկն* [*Զ սղտուրուկն*] զանձն տաքացնէ, սերմն յաւելցնէ. թէ աղով կամ քացախով ի ներքս ակռին դնես, օգտէ գոդութեան» (*Անուանք դեղերոյ*, յօդուած Լ, Բժշ. ՌՄԼԵ = 1786, յընդօրինա-կութենէ Սերոբէի Ալիշան): «*Գեանդալան* կամ *սխտորուկը*» եւն (Աթանասեանց, 77). *գեանդալա*, որպէս գրի անդ յուղղականն յերես 70 «ժը. *գեանդալայ*» եւ դիմորոշիւ *գեանդալա*՛ ն, իսկ *Հայրուսակ* թիւ 2767 «Թ[ուրքերէն] *գեանդալան* կոչուի» [ըստ Աթանաս 77]. *գեանդալա*'ն, որպէս *սխտորուկ*' ը: Կայ պրս. *կէնտանէ*, *կէնտէնա* 'պրաս, պրախ, փրասէ', արպերէն *սումի պէրրի*» (Գէորգ). արբ. *սում* = 'խստոր': *Գեանդալա* թուի աղաւաղութիւն պրս. *կէնտանէի* [15 Հոկտ. 1913]: «*Քուռաթ*, որ է *կանտանայ*» եւն (Ամրտ., *Հայրուսակ* թիւ 2612): Տե՛ս *Խստորուկ* եւ *Գանտալայ* ի կարգին:

Սկայազաւրի մազ, տե՛ս *Սկեզօրի մազ*. *շար իւլ-ճէպպար*, որ թարգմանի "մազք հսկայի" (Լըկլէր, Բ, թիւ 1324). *սկայազաւրդ* է Սիյովիւշ դիւցազնն պարսից, զոր տե՛ս ի Գէորգ. պրս. *փէր Սիյավիւշ* կամ *Սիյավիւշան* = "բազուկ Սիյավիւշի" (Շաւարշայ°, որպէս *շաւաշարիւն* = *խուենի Սիյա-վիւշ* կամ *Սիյովիւշ*°. [գտի զայս յ'2 ապրիլի 1898]:

[[**Սկեզօրի մազ** = **Սկայազաւրի մազ**:]]

Սկղավ *[[սկղաւ]]*. տե՛ս ընդարձակագոյն ի *Հայրուսակ* թիւ 2770. «*Սկղավն* բուսանի ի լերինս եւ ի քարուտ տեղեստան եւ է անծաղիկ եւ անսերմն, բարձր է զէդ կանգուն մի եւ հաստ քան ի բոյթն. նղերն՝ նօսր եւ սփռին ատ եւ անդ որպէս կաղնչնանի, եւ տերեւն նման լեզուց եւ բոյթի ձեռին. ներքի

դեհի տերեւն դէպ ի վայր է, եւ վերի դեհին՝ ի կանգուն, եւ միջին՝ նմանութեամբ որպէս ականն գրել [*որպէս ակ անգրել*", 14 նոյեմբեր 1913], եւ դրուցի տերեւն՝ խարտեշ, ոսկեգոյն» (Բժշ. Ա. 89, յընդօրինակութենէ Սուքրեանի):

Սղանգն, *սղանգան* եւ ռմկ. *սղանգի*, *սղանկի*. գղ. *արխաղլըչ լօնգ*. «*Արխատղընքիա. սղանգն*» (Գաղ. Ա, Բ, Գ, Դ). «*Արխատղընկի. սերկայն ղանգն*» (Գաղ. Գ). «*Արխատղընքի. երկայնս ղանգն*» (Գաղ. Բ). «*Արխատղղգիա. սղկնգան տակ*» (Բժշ. Ա. 143): Սխալ գրի *Ալանկի տակ*, փոխանակ *սղանկի տակ*, լաւ եւս *սղանգան տակ*. «*Զրեվանդ*, որ է *ալանկի տակ*. բ̅ ազգ է, երկայն եւ բոլոր. ոմանք ասեն *որդնտակ*. ար. *զրայրուանդ*, լդ. *արիսդոլ լօնկայ*» (Հ. Ղ. Յովն., *Անուանք դեղերոյ*): «Յերկայն *զրեւանդ. ալանկի տակ*», գրածն՝ *ալանկի տակ* (*Թրգմ. դեղոց*): «Ա՛ռ սապո եւ քապրենոյ տակի կեղեւ չորցուցած կէս կէս դրամ. սեւ պղպեղ, *սասրօն*, *զըռեւանդ* յերկայն, որ է *սղնկան տակն*. *երիսս*, որ է մրտին տակն» (*Նուսխայք*, ի շալակ Մխ. Հերացւոյ):

Սղոցի, յն. *պրիոս*, լտ. *իլեկս* ըստ Հայկզ., գղ. *ժանս*. Էմին զ*ժանս* դնէ *բեղօշ առապարին*, *մշտադալար կաղնի*. իտ. *էլչէ*, *լեչչո*. զյն. *պրիոս* Լիտրէ դնէ լտ. *կուերկուս իլեկս* ի բառն *Պրինոս*. յն. *պրինոն* է սղոցեմ, *պրիոն* է սղոց. «*Լեչչո* կամ *էլչէ*. սղոցի, *փէրնար աղաճը*» (Զախչ.). «*Էլչէ*. *էլչինա*. ծառ ինչ, *փէրնար*, *փարնար աղաճը*. սովորաբար կոչի *լեչչո*» (Զախչ.). տե՛ս եւ *Լեղի կաղնի* ի *Կաղնի* եւ *Սիզարբեալ*, *Սիսարբաւղ*: *Սղոցի* յայլ գիրս ասի *անձեանի* կամ *անձնի*:

Սմբուլ. արբ. *սումպիւլ* 'յակինթ ծաղիկ'. *սնփուլ* մեկնի 'նարդոս' ի *Բառարանի Վաստակոց*. Էմին զ«*ժասենթ* դնէ 'յակինթ ծաղիկ', *սումպիւլ*», իսկ զ*նար*՝ *սունպիւլի րումի*. Պօզաճեան զ*սումպիւլ Հինտի* կամ *րումի* դնէ *նարդոս*:

Սմբուկ, գղ. *օբերժին*. «*Պաթինկեան* [երեւի, թէ է պարսկացուցեալ ի բառէն *պատինճան*]. բերք ինչ փափուկ, զոր ի գաւառս ինչ կոչեն *սմբուկ* հայկական բառիւ. թուրք. եւ արք. եւս *պատինճան*» (Գէորգ, *Բոգ. պրս.-հայ.*): Ի լեզու պրովանսալ *օբերժին* կոչի *մինգաս*, այս ինքն 'իշու պոչ' (տե՛ս Լիտրէ):

Սմնակ. ստոյգ բուի *յասմիկ* կամ ազգ յասմկան = պրս. *սէմէն*. տե՛ս *ժասմեն* ի Լըկլէր Գ 2298 եւ Բ 916. տե՛ս եւ Բ թիւ 1253 *սուսէն*, որ եւ արք. *բաղըքի* = սպիտակ շուշան, Բ թիւ 1024. դիտելի է, զի ի Բ, թիւ 895 դնի "իւղ սպիտակ շուշանի", եւ ի թիւ 896՝ "իւղ նարգիսի" [գտի զայս ի 21 աւգ. 1900]. բերեւս պրս. «*սէմէն* սպիտակ վարդ եռասաղարք. *իւչ եափրագլը ագ կիւլ. կիւլի սիփիտ իւ սէպերկ*» (Գէորգ). «*սէմէն*. պրս. յասմիկ, *եասէմի*» (Պօզաճ.), յորմէ՝ *սէմէնզար*, *սէմէնթէն*, *սէմէնպէր*, *սէմէնսա*. իտ. «*Ֆիորալիզո*. ծաղիկ ինչ դաշտային, որոյ տունկ կոչի *բատտիսեգոլա*, *փէյղամպէր չիչէյի*. *պէպիւրճի*» (Զախչ.): Տե՛ս եւ *Շուշան լերին*, գղ. *միւգէ*՞: «*Սմնակն* եւ Ներգիսն» (Ագար. 480 բ. տպ.) . «*Սմնակն* տաք ու չոր է, օգտէ պլղամին եւ գինութեան եւ հով բնութեան [*Հովըսնութեան*՞] մարդոյ եւ գլխացաւի, որ՝ ի հովէ եւ ի *սաւտայէ*, եւ որ կէս գլխոյն ցաւի, եւ՝ ան ցաւուն, որոյ ծնօտն բափի» (Հին բժշ., *Հայկ. բուս*. թիւ 2779). «*Հաճէա զսմնակին* գործն այնէ, եւ իրենց ծէքն օգտէ ջղացաւու ի հովէ» (Հին բժշ. անդ 2230):

Սմսմուկ. *Հայկ. բուս*. 2794. բուի յարաբացի *սիւմսիւմ* բառէն, որ է 'կնճիթ, շուշմայ'. տե՛ս *քիւնճիտ* ի Գէորգ:

Սնգոյրատակ, որ եւ *Շիկատակ*, գղ. *բէլլադոն*. «*Լիննասափիր*. շիկատակ ասեն կամ *սնգոյրատակ*» (Գաղ. Գ). «*Լիննասափիր*. *սնկորի տակ*» (Գաղ. Բ). «*Սփոնկարի* [գրածն *սփուկարի*]. *սնգոյր*» (Գաղ. Ա). պրս. «*սէփէնկիւր*. շնխաղող, մորմ» (Պօզաճ.):

Սնգրուեղ, որ եւ *կոճապղպեղ*. Բժշ. Ա. 305, 351. բուի, թէ վկայութիւն 305 երեսի Ա. Բժշկարանին է այն, որ գտանի ի *Հայբուսակն* թիւ 2783. «Մեղր եւ զմուռ, գինի եւ *սնգրվեղ*, երկու երկու դեկան աղա՛ եւ խախաջեցո՛»: Իսկ վկայութիւն 351 երեսին վաղ իսկ գրեալ եմ ասէն յ*Օձտակ*. «Կղբու ձու, բաշխտակ, կօստ, ծագխոտ, տարապղպեղ, *սնգրուեղ*, իգարոդի տակ, օձտակ, մեղր. միաչափ զաղալոյն աղա՛ եւ զամէնտ յիրար խառնէ՛» (Բժշ Ա. 351). գրեալ եմ զայս ըստ մասնէ եւ յիմ *Գաղղ.-հայ. բռգ* ի *Բիստորտ*: Տե՛ս *սնգրուէղ* ի Հիւբշման, *Արմ. Գրամմ*., Ա., թիւ 581, երես 238: *Սնգրվեղ* (Զ *ընգրզեղ*՝ Զ փոխ. *Վ*). Բժշ. Է 81 [3 Հոկտ. 1913]: «Լինի անդ [ի Հնդիկս] ոսկի եւ արծաթ եւ պղինձ,

անագ, մարգարիտ եւ ակն ամենագոհար, պղպեղ եւ *սնգրուեղ* եւ ամենայն բովինայք [2 ՁՁ բովաճառք, բռաճառք], հալուէ, փաղանգամուշկ» եւն (Խոր., *Աշխարհացոյց* 615). յԸնդարձակեալն 44 գրի *սնկրուեղ*. անդ 45 եւ ի *Տապոռպանիա* գրի երկիցս *սնկրուիլ*, *սնկրուիլ*, որ է Պտղոմեայն *զիւզզիբեր*, անդ, զդ. թրգմ. 59 ծան 2 եւ 60 ծան 3:

Սնդրիտակ. տե՛ս *սրկակիւ* ի Մարսել Դրվիկ, որ դնէ "տեսակ ինչ *պանէ*"ի, արբ. *չափագուլ*. «*Շափակուլ. սնդրիտակ*» (Բժշ. Ա. 145). «*Շահսկալ. անդրիտակ*» (*Թրգմ. դեղոց*). «*Կարդամանա. անդրիտակ*» (անդ): Տե՛ս *սեկակալ* ի Լիտրէ, Յաւել., անուն տեսակի իրիք *պանէ*'ի (գազար): Արբ. «*չէգագուլ*. ստեպղին վայրենի» (Պօզան.):

Սնիք. կայ արբ. *սիւնիւճ*, յունապ. «*Սնիք*. զկեռ» (Գաղ. Ա.): «Եւ *սնիք* թէ եփես անձրեւջրով եւ տաս, օգտէ» (Բժշ. Ա. 322):

Սնձենի, սնձի, սնձնի. ա՛յլ է եւ *Անձիանի ծառ*, *Անձնի*. *սնձնի* բառի աղաւաղութիւն բուն *Սզնի*, զոր տե՛ս. «Զփիլիմոն կախեցին զծառոյ *սնձնւոյ* եւ նետաձիգ լինէին ի» (*Յայսմ. ժզ*). կամ *անձնոյ* կամ *սնձնիոյ* կամ *ի սնձենի ծառ մի*: «Եւ այնոքիկ, որ ի չաչի ջանջխէ լինին, այսոքիկ են. խնձորենի, կեռասենի, մազորաքի, մրտենի, արքայկաղնի, *սնձնի*, նռնենի եւ այլ այսպիսիքս» (*Վստ*. ՄԻԸ 143): «Վասն սերկեւիլի, դամոնի, կեռասի եւ *սնձեաց*, որ է *պլուճն*» (*Վստ*. ՄԽԵ, վերնագիր, 155):

Սնչիկ. ազգ ծմեռային տանձի. տն. *զըշ արմուտու* (*Հայկզ. Գուկնք*.):

Սնփուլ. մեկնի *նարդոս* ի *Բառարանի Վաստակոց*. «*Սնփուլ*. ի Հնդկաց գայ, որպէս մազմզուկ է» (Բժշ. Ա. 145):

Հայեցի սնփուլ. «Ա՛ռ մուռ երեք տրամ, *հայեցի սնփուլ*, որ ի լեառն լինի, նուկի մի, պղպեղ կէս նուկի» (*Վստ*. ԾԴ 121):

Հոռոմ սնփուլ. «Խոտիշ. կազմարէ կամ *հոռոմ սնփուլ* կամ ասարոն» (Բժշ. Ա. 144). «*Հոռոմ սնփուլ*, որ է *ասարոն*» (անդ 116): Լիտրէ դնէ *Նար սովաժ*, *կաբարէ*, որ եւ ասի *ազարէ*:

Սոխ, *-ոյ*, *-ով*. տե՛ս եւ *Կալէշ*. պրս. «*սուխ*. նոյն է ընդ բառին *փիյազ*, որ է սոխ. թուրքերէն *սօղան*» (Գէորգ). տն. *սօղան*. *սոխով* (Զգուն ժԳ 240): «Եգիպտացիք դարձեալ *զսոխ* եւ զխստոր [տպ. զսոխ եւ սխտոր] աստուածս անուանեցին, եւ՝ զպտուղս, որով կերակրիմք, որք յորովայն մտանեն եւ յաղբիս ելանեն, զայնս պաշտեցին» (*Վկ. Ապողոնի*, 140–141): «Ամաչեմ ասել, սակայն ասացից. արդ եւ *սոխոյ* անգամ երկիր պագանեն» (Կիւր., *Կոչ*., Զ, 97):

Սախի, սաղի. *Հայբուս*. 2828. «Է փոքրիկ ծառ, որոյ պտուղն է կարմիր եւ մանր եւ քաղցր. եւ զկեղեւ ծառոյս հանեն եւ փսիաթ կազմեն» (*Գռ*. Բ 8): «*Սախի*. ասոր տերեւներն ալ քարխնձորիի պէս են. եւ առանձնութիւն մըն ալ կայ, որ կ'ըսեն պառաւներ, թէ որ մէկը ասոր փայտ վառելու ըլլայ նէ, ինք *սախա* կ'ըլլայ, այս ինքն անձը կ'ուռի եւ կը մեռնի» (Խ[[ոտբշ.°]], 62–63):

Սոխուկ. «մանր բանջար վայրի, համով եւ նմանութեամբ սոխի. աղջուր դնեն» (*Մանանայ*, 451). «*Սոխուկ*. խոտ ինչ ի պէտս պահոց» (Փիրղալէմ.):

Սողնիկ. «*սերմոլլինո*. լատիներէն *սերպիլլում*. զայս բոյս ոմանք ի յետնոց կոչեն *սողնիկ*» (Զախջ., Յաւելուած), որ ի բառարանին գրէ. «*սերմոլլինո*. խոտ ինչ քաղցրահոտ, նման ծոթրնոյ, այս ինքն *տիմոյի*. *կիւվէյի օթու* կամ *քէքլիկ* (քերեալ է եւ լինի *քէքլիկ*) *օթու*»:

Սոճի. «Քանզի որք եւ արմաւենիք, թզենիք եւ ձիթենիք, որպէս ասէ քերթողն, պտղովն են պիտանացու. իսկ ա՛յլ անպտուղքն զայլ պէտսն կատարեն, մայրք եւ տասաւխք, *սոճիք* եւ նոճիք. եւ այլք են պտղատուք պտղոց քաղցունք, սակայն ոչ շտեմարանին իբրու զտանձինս եւ զնռնենիս զեղեցկամիականն *սոճի*» (Արիստոտէլ, *Պատմութիւն յաղագս աշխարհի*, 626–627): «Երակլեան *սոճին* ... եւ ոչ իսր-ասէ, *սոճին*, զի անկաւ մայրն"» (Բարսեղ Քեսնացի, *Ողբերգական բանք ի մահն Սիրի Պաղտինի*, Գր. Քեսնացի երէց, 492). [[Հմմտ.]] «Ողբասցեն սարոյք, զի մայրք գլորեցան» (Զաք ժԱ. 2):

Սոնիճ, արբ. *չէհնիզ*, պրս. *չունիզ*. «*չէհնիզ*, *չիննիզ*, *չունիզ*, լտ. *նիգելլա*» (ՄէՆ., *Օնոմ*.). զդ. *Նիել*-արջնդեղ, որ է *սոնիճ* ... զաւազանաւ բափի *սոնիճ*» (Գէ., *Եսա*.): «*Ասրոզոզիկէ*. արջնդեղ, որ է *սոնիճ*» տե՛ս եւ *Սեւուկ հնդիկ*. որ եւ *Սեւ սոնիճ*, տե՛ս ի *Սեւ հնտիկ*. որ եւ *Արջնդեղ* ըստ գրոց. «Սերմանէ

(Գաղ. Բ): «*Հապի սալմայ*, որ է *չոնիգն*, որ է սեւ գնտիկն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Գ 141):

Հոռոմ սոնին, յն. *մելանթիոն*, լտ. *մելանթիում*, գղ. *պուավրեթ*. «*Մեղանթիոն. հոռոմ սոնին*» (*Բառք Գաղիանոսի*):

«*Սեւսունինչ [= սեւ սոնին. եւ*]. սուսամի չափ փոքր սեւ հունդ ինչ, համեմիչ հացի» (Փիրղալէմ.):

[[**Սոսան, տե՛ս Սոսուն:**]]

Սոնոպրի, գղ. *պեն*. տե՛ս եւ *Փինի:*

Սոսուն, սուսուն. տե՛ս աստէն եւ *Աղբերաց արիւն*. գրի ծեքելով եւ *սօսըն*. «Իր զգացումները օրրող, իր վայրի լանջքը յուզող, նունուֆարներու, սարիւրհանններու, *սօսըն* ու պէյպունները[1] եւ դրախտի հազարումէկ ծաղիկներու բոյրերով հալած՝ հովիկին մէջ, կը զգար, կը զատէր, լեռի ստորոտէն իր սրտին եկող տաք շունչերու համն ու բոյրը». եւ ի ծան. 1. «*Ծաղիկի փոխուած սիրահարներ*» (Տաւիկ, *Վարդէի սիրուն*, Նորավէպ գաւառի կեանքէն, *Մասիս* շաբաթաթերթ Տիգրան Արփիարեանի, 1902, յունիս 8, երես 361): *Սօսըն*՝ անուն կնոջ (Տաշեան, *Ցուցակ*, 591բ երկիցս): «Լինին [ի Վարագ] եւ խոտք զանազանք, զոր օրինակ՝ խաւրծիլ եւ *սոսուն* կամ *սուսուն* անուշահոտ յոյժ, ի գոյն դեղին եւ խոտն եւ ծաղիկ նորա» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 147). [[ՀՀճա.]] *Սոսան*. «Շամղիտակ. յԱյրարատ՝ ծործորակ. ի Փայտակարան՝ *սոսան*, որով ներկեն կանայք զմանածն ի գոյն կապոյտ, լտ. *սիմֆիտում* [գղ. *գրանդ կոնսուդ*]. ստուգաբանի շամղիտակն բռքախոտ, որոյ հինգ տեսակ են» (Ստ. Շահրիման.): Տե՛ս եւ *սօսըն յԱղբերաց արիւն:*

Սորեակ կամ **սորեկ 1**. տե՛ս եւ *Քուրիմ*. «Ունդ նման կորեկան. բ[ուրքերէն] *գուրիմ:* Ասի եւ գայլոց արմտեաց. շփոքի յոմանց եւ ընդ բանջարն *սարբեակ*» (Նոր հայկզ., *Աշխարհիկ բառք):*

Սորեկ 2. տե՛ս *Որբ սորեկ յՈրբ:*

Սորոկ, սորուկ. նոյն եւ *Սրւրուկ*. «Կայ եւ մի այլ իւղաբոյս *սորոկ* անունով» եւն (Աթանասեանց 33): «*Սորուկ*. կտաւատի տեսակ մի» [ըստ *Մշակի*, ժԵ, 131], որոյ եղը կու հանեն. կ՚ըլլայ եւ կարմիր գունով» (*Հայրուս.* թիւ 2802):

Սուեղ, տն. *գազ այագը* (Գւռ. Ա. 37):

Սուլթան վարդ, բաղդ, տն. *կիւլ խաթէմ* (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, երես 313) եւ Նաիապետ ի տաղին *ժամիկ մ՚աչերուտ ի զատ*, տող 94:

Սուլու. *սուլու*, *տուկու*, կորեկ, *ուվուս*. տե՛ս ի Կամենից, Ալիշան 57:

Սունկ, *սնկան*. «*Սունկ* ծառոյ եւ *սունկ* դաշտի. *մանթար*» (*Մանանայ* 451): «*Սունկ* ուռի ծառի եւ դաշտի. *մանթար*» (Փիրղալէմ.): «Տակն որպէս *սունկն*» (*Հայրուս.* 245):

«Ընկուզի ծառոյ *սունկն*» (*Վստ.* ՄԾԴ 161): *Թնօպի սունկն: Կաղնւոյ սունկն* (*Վստ.* ՂՋ 74):

Սունկն կոչեմք այժմ եւ զգղ. *լիէժ*. քննելի, թէ կա՛յ ի գիրս. բուի, թէ կայ *սնգեղի* = *լիէժ* ի Ստեփ. Կամենցացի. տե՛ս *սնգեղի* ի *Հայրուսակ* Ալիշանի թիւ 2781: Կայ *փշակաղնի* ի Բժշ. Ա. 373, զոր Մէնէվիշեան, *Բուսաբանութիւն*, երես 214, համարի *կուերկուս սուբեր*, գղ. *լիէժ:* Նոր Հայկզ. ի *Սունկ*, *Սունկն* կարծէ յն. *բրոտոս*, *ապաժոյժ:* «*Պրուղիաս. սունգն*» (Գաղ. Բ, չիք ի Գաղ. Ա.): Թերեւս *մուկոս* = *միւկէս* = յն. *միւկէս* 'սունկ', իսկ Նոր հայկզ. ի *Սունկ*, *Սունկն* կարծէ յն. *սոնկոս* (տե՛ս անդ): Թերեւս զի բուրքերէն *մանթար* նշանակէ ե՛ւ *սունկ* ե՛ւ *լիէժ:*

[[**Սուսամբ, տե՛ս Սօսամբ:**]]

Սուսամբար. անուշահոտ խոտ (*Մանանայ* 451):

Սուսամբուկ, Ինճիճ. 37:

Սուտ ընկուզի, Բարխուտ. 54:

Սուտ ռահան.

Սուտ վարդ.

Սպանախ, տե՛ս եւ *Ծմել*, *Շոմին*. գղ. *բոն-հանրի սպանախ վայրի*. տն. *խափանաք*. լտ. *սպինաքիա*, *սպինաքիում*, իտ. *սպինաչէ: Հոռմի սպանախ*, գղ. *արրոչ*. տե՛ս *Կոտոր յՕտար* եւ *Հայրուս.* 1796:

Սպանդ, տե՛ս եւ *Պատինճան*, *Հայկ. բուս.* 1072. գղ. *հարմալ*, *մոլի*. պրս. «*սիփէնտ*, *իսփէնտ*, *սպանդ*, ծիւնածաղիկ, վայրի փեգենայ» (Պօզան.): «*Սպանդ*. սատիկ դառն եւ գարշահոտ խոտ, որ

բուսանի ի գերեզմանոցս» (*Մանանայ* 451): «*Հարմալ*, որ է *սպանդն*, որ է *ուզարլիկն* ... եւ ինքն արբեցնող է. եւ թէ մեղրով ի յաչքն քաշեն, զաչքն սրացնէ ... Իբն Պայտարն ասէ ... ցեղ մ'այլ *սպանդ* կայ, որ տերեւն ի լեղկի տերեւ կու նմանի, եւ ի գետինն կու նապղի եւ [[→ ի]] բուսանիլն եւ ծաղիկն ի մանուշկի ծաղիկ կու նմանի: Եւ ատեն կու լինի, որ ի գետնէն ի վեր ղ̅ կանգուն յերկաննայ եւ գլուխն զեղ սխտոր կու լինի. եւ թէ զտակն լոսեն եւ սուսամի ձիթով կանայքն շաֆ այնեն եւ վերցնեն, զարգանդին բերան բանայ: Ասէ Պատեհին եւ պատմէ զխօսքն Սիմաւոնին եւ ասէ, թէ կարմիր է եւ սպիտակ: Եւ այն ցեղն, որ կարմիր է *Հարմալի յարապի* ասեն, եւ հռ. *մոլի* ասէ, եւ պ. *սանդալի տանիճ* ասէ: Եւ տերեւն նման է ուռու տերեւին եւ այլ փոքր է: Եւ ծաղիկն սպիտակ է, նման է *հասամին* ծաղկին: Եւ հոտն անուշ է: Եւ աս[որերէն] *պապանթի նանայ* ասէ: Եւ այն, որ կարմիր է, *Հարմալի յամի* ասեն, եւ պ. *սպանդ* ասէ, եւ ի Շիրազ *նիւանդ* եւ *Հազար սպանդ* ասեն: Եւ ինքն ի վայրի *սազապին* ցեղերուն է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 139):

Սպարակ. պրս. *ասպարագ*: Ըստ Հայկզ.՝ տն. *ղէրտէ չէօփ, նարազան, զարիր*: ՏՆ. *ղէրտէ չէօփ* է լտ. *տերրա մերիտա* կամ *կուրկումա օֆֆիկինարում* կամ *կուրկումա լունգա* (տե՛ս Բէստէն Բ 172. տե՛ս եւ *Ջէրտչօպէ* ի Գէորգ): Պրս. «*խափէրէք*՝ փայտ ինչ դեղնագոյն »Պօզան.): Պրս. «*խափէրէք* է փայտ իմն դեղնագոյն, զոր ջրով եռացուցեալ՝ դեղին գոյն ներկանեն. եւ յետ այնորիկ ի լեղակն քարշեալ՝ լինի *նէֆթի* գոյն աննման, զոր կոչեն *խափէրէք նէֆթիսի*» (Տ. Գէորգ, *Պրս.-հայ.*): «Զարիր. ինքն բոյս է եւ վարդ է, որ ի լերունքն կու բուսնի, եւ ի Շիրազ այնոր *ասպարակ* կ'ասեն, եւ ի Հոռմոց երկիրն եւ հայերէն *բսպորաք* կու ասեն, եւ ինքն յայտնի է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 74):

Ամերիկեան սպարակ, գղ. *փիւստէ* (Էմին). *տեր-մերիտ* է փոշի *կուրկումայի*:

Սպիտակախրուկ. տե՛ս ի *Խրուկ. Հայբուս.* թիւ 1164:

Սպիտակ բանջար. «Է խոտ ինչ, զոր ժողովեն գիւղականք եւ հիւսեալ զնոյն՝ չորացուցանեն եւ ի ձմերայնի կերակուր կազմեն» (*Գւռ.* Բ 8):

Սպիտակ խունկ. տե՛ս ի *Խունկ*:

Սպիտակուկ. «Սպիտկուկ, այս ինքն *սպիտակուկ*» եւն (Ինճիճ. 169, 183):

Սպիտկուկ, որ եւ *Տօնի բանջար*. «Է բանջար ինչ մազատերեւ, տարածեալ ի վերայ երկրի: Զունի արմատ, այլ արմատն սոխ է: Քարշելով կորզեն յերկրէ եւ հիւսեալ՝ չորացուցանեն եւ նովաւ հերիսայ եւ փիլաւ եփեն յոյժ համեղ եւ մասնաւոր անուանեն *Տօնի բանջար*, զի ի Յայտնութեան նոյն բանջարովն առանց մսոյ հերիսայ եփեն. գրեթէ առ հասարակ եւ զնոյն հերիսան ուտեն յաւուրս ուրօրէից. սորին վասն *Տօնի բանջար* անուանեն» (*Գւռ.* Բ 41): «*Սպիտկուկ*. սպիտակ բանջար վայրի, զոր չորացուցանեն եւ կերակուր կազմեն» (*Մանանայ* 451):

Սպրամ. տե՛ս *սիփէրմ* ի Գէորգ. *Հայկ. բուս.* 2826. «*Սպրամ*. աւելուկի նման բանջար, պրս. *խապա-րամ*» (Հրաչեայ Աճառեան, *Հանդէս ամսօրեայ*, 1908, ապրիլ 124բ, թիւ 2): Աստի բուի *Սպրամիկ* անուն կնոջ (*Պտմ. Աղուանից*):

Սսեղ. պտուղ սողւոյ (*Հայբուս.* 2828):

Սսխի, սսղի. *Հայբուս.* 2828. «Է փոքրիկ ծառ, որոյ պտուղն է կարմիր եւ մանր եւ քաղցր. եւ զկեղեւ ծառոյս հանեն եւ փսիաթ կազմեն» (*Գւռ.* Բ 8):

Սվրուկ, *սըրուկ* [[տե՛ս]]. «Խոտ վայրի, զոր ոչխարք ախորժանօք ուտեն» (*Մանանայ*, 451): «*Սվրուկ*. է անուն խոտոյ» (Փիրղալէմ.):

Ստաշխն, յն. *ստաքդի*. յն. *սդաքսին* է 'կաթել'. տե՛ս *Էպիստակիս* ի Լիտրէ. «զստակտէից [տպ. զստակէից], որ է *ստաշխն*» (Ոսկ. Ես. ԼԹ 243 . տե՛ս [[աստէն]] ի *Ստաքտիկէ*: *Տաշխ* (Սեբեր. Ը 150):

Ստաքտիկէ. տե՛ս եւ *ստակտէ* ի *Ստաշխն*. պարսիկ *ստաքտիկէ*, գղ. *տերեբինթիաբեն*° (պրս. *թէրէն-կիւպին*). «Եւ էր [[այսպ.]] ի գետ անդ ծառք սքանչելիք ... եւ արտօսր ուղէին իբրեւ զպարսիկ *ստաքտիկէ* եւ հոտ կարի յոյժ անուշ եւ պիտանացու» (*Պտմ. Ալեքս.* 126):

Ստեպղին, *-ղնի*, արբ. *խաթուըլին*, *խաթուֆլին*. ռմկ. *տապղին* (Ինճիճ. 168). *ստեպղին* = յն. *ստաֆիւլինոս*. արբ. *խաթաֆլին* (Ըկլէր Ա. թիւ 96). պրս. *կէզէր* (Գէորգ). արբ. *ճէզէր* (Ըկլէր Ա. թիւ 481). «Տապղին. *ստեպղին, Հավուճ*» (Փիրղալէմ.). «*Դոկո*. վայրի ստեփղնի [[այսպ.]] հունդ» (*Թրգմ. դեղոց*):

Ստեպղին վայրի.

Ստեպղնուկ, ոմկ. *Տապղնուկ*:

Ստիւրակ, ծառն կոչի գղ. *ալիրուֆիէ*. յն. *ստիւրակս*, [[գղ.]] *ստիրակս* կամ *ալիրուֆիէ* ծառ, խէժ. յորմէ՝ *ստիւրակեայ*, ած., յն. *ստիւրակինոս*. «Եւ սուրբն Արանազինէս հայեցեալ յերկինս եւ մեծագոյն հառաչեալ առ Տէր՝ եհար երիցս ի վերայ գլխոյ վիշապին *ստիւրակեայ* գաւազանաւն, զոր ունէր ի ձեռին իւրում, քանզի կրէր սովորաբար. եւ առժամայն հերձեալ՝ գազանն սատակեցաւ» (*Վկ. սրբոյն Արանազինեայ, Վարք եւ վկ. սրբոց*, հ. Ա., 47-48). տպ. *ըստիւրակէ*, իսկ Նոր հայկզ. *ստիւրակեայ*, ըստ Ճ. Գ.:

Ստորովենի, որ եւ *Ստրոբողոն*. յն. *սդրօվիլօս*. «Զպօղոս գլխատեցին առ *ստորովենի* ծառովն» (Ճ. Բ.): «Եւ գլխատեցին զնա [զՊաւղոս] ի տեղւոջն կոչեցելոյ Մասան [այլ Զ Մական, Կ եւ *Ս*], մերձ առ *ստորովենի* ծառովն» (*Գործք Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոյ [-լոց], Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց*, հ. Գ, 24-25). տե՛ս անդ 25, ծ. 2 զայլ ընթերցուածս *ստորովենի* բառի. սխալ է անդ, 43, "առ ստորոտով ծառոյն":

Ստրոբիլի, տե՛ս *ստրոբիլ* ի Լիտրէ. «Միւրիիքն, *ստրոբիլիքն*, *լիպխարոն*, *քնէսն*» (*Յղ. ծառոց*):

Ստրոբողոն. Եփր. [*ՅԱբրահամ եւ ի պատարագն Իսահակայ*], հ. Գ, 209:

Սրափուշ. բուն թարգմանութիւն յունականին *օքսիաքանթա*. *օքսիս*՝ սուր, *աքանթա*՝ փուշ. լտ. *օքսիականթաս*, գղ. *էպին վինետ*. լտ. *օքսիականթուս*, գղ. *օբեպին*:

Սրոհունդ. տե՛ս եւ *կոռոթուկ, կռոթուկ*, տե՛ս *Կոռոթո* յՕտար. «*Կոռոթո. սրոհունդ*» (Գաղ. Բ. չունին Գաղ. Ա, Գ, Դ). բուն *սարվայի հունդ*. *սարվա* ըստ մեր բժշկարանաց է արբ. *խիրվա* = [[գղ.]] *րիսեն*. տե՛ս *Հայբուս*. թիւ 2949. որով եւ *կոռոթո* = *կրոգովն [կրոտովն]* = յն. *կրոտովն*, [[գղ.]] *տիկ* եւ *գրեն դը րիսեն*. իսկ արբ. *տէնտ* = [[գղ.]] *կրոտոն տիգլիում* (Լըկլէր Բ թիւ 886): Նոր հայկզ. գրէ. «*Սրոհունդ*. գ. *կորիս, իգոս, Հիպերիկոն*. անուն խոտոյ. *կոռոթո, սրոհունդ*. Գաղիան.»:

Սքինոս, որ եւ *ծորենի, մաստաքի, հերձի* ըստ Դան ԺԳ 54. յն. *սքինօս*, լտ. *սքինուս*, գղ. *լանտիսկ*, իտ. *լենտիսքիո*. «Քանզի այլազգի կերպարանս ունի հոյզն ծառոյն, որ անուանեալ կոչի *սքինոս*, այլազգի կերպարանս ունի հոյզն *բաղսամոս* ծառոյ, եւ այլազգի կերպարանս՝ հոյզն եւ կարն *նարդէնոս* ծառոյ» (Բրս. *Վեց*. Ե 101): Թուի շարունակութիւն վկայութեանն յ*Ապրասամ*՝ «Ի դափնէ եւ *ի սքինոսի* եւ յայնոսիկ, որ քաջաշունչ է» (Գր. Նիւսացի, *Կազմ*. ԼԲ). Հայկզ. սխալ իմանայ յն. *սքոինոս*, *եւենկուս* եւն. տե՛ս *Մեկոն, Քաջաշունչ* եւ *Քրքում* ի Հայկզ.: «*Սքինոս*. է ծառ, որ հայերէն *հերձի* կոչի. *սքինուս*. Նիւս., *Մարդ*. ԼԲ ի դափնի եւ *ի սքինոսի քաջաշունչ*» (Ռոշքեան): «Ապրսամն ծաղիկ է, յորմէ ասեն անոյշ եղանէ խունկ. քրքումն յոյժ ջերմ է, եւ ապրսամն՝ յոյժ զով, եւ մեկոնն, որ է ննէսն, միջակ. *խինքենոն [ընթերցի՛ր սքինոսն]* մրտենին է եւ քաջաշունչ, իբրու թէ հոտեղ է» (*Լծ*. Բ 707, *Լծ. Կազմութեան* գրոց Նիւսացւոյ):

Սօղբլիթ°. տե՛ս յ*Աղբերաց արիւն*:

Սօս, սօսի, սօսոյ, որ եւ *Տնջրի = Ճանդարի* °, տե՛ս. յն. *լէւգի*, լտ. *լենկէ*, գղ. *պէօպլիէ բլան*, օբ°. էմին՝ *պէօպլիէ բլան, սօսի, աք գավագ աղաճը, պլատան*, լայնատերեւ, *սօսի*, *չինար աղաճը*. «Ասի ոմն ի նոցանէ թագաւոր այնչափ յղփացեալ բարեկեցութեամբ, մինչեւ ծառ հանգոյն *սօսոյն* ծառոյ ոսկեղէն գործել եւ երկինս ի վերայ եւ ընդ այնու նստել եւ այն զի զօրաժողով եւս լինէր ընդ արս հմուտս տալ պատերազմ ... Ո՞րչափ քան զ*սօսոյն* ոսկեղէնն, որ յերկրէն բուսանի, լաւ է ... զի՞նչ ընդհատ իցեն ի նմանէ, որ զ*սօսոյն* ոսկի գործեաց անմտութեամբ, ոք որ այժմ զափորս ոսկիս գործեն եւ պտուղս եւ կաւշարայս» (Ոսկ. *Կողոս*. Է, Յորդ., 602, 603): «Եւ ծառ *սաւսի*, զոր *ճանդար* կոչէին, մերձ յոյժ առ քաղաքն մեծ, տեսին զնա յանկարծ շրջեալ իւրովի» (Կիրակոս ԺԹ 124): *Ճանդար* = պրս. *չէնար*, *սօսի* (Գէորգ): Պրս. *չէնար*, արբ. *տուլպ, պլատան* (Լըկլէր Ա 523, Բ 875): *Ջնար* (Իննհն. 35): «Դիւկէ. *սօսի* կամ կաղամախ» (Գաղ. Ա. եւն. տե՛ս ի *Կաղամախ*):

Սօսամբ, սուսամբ. ծաղիկ ինչ. «Ահա՛ զընան խընդիր հօրոտ մօրոտ ու ծունծաղկին Ու դրկեն *թէզ* եւ ձէնեն զշուշանն, որ է ի մէջ դաշտին. Ելնէ, լըսէ եւ գայ այն նինոֆարն ի մէջ ծովին, Ու ձէնեն *զսօսամբ* ծաղիկն ու հետ իրենն ըզնարկիսին» (Կոստանդին Երզնկացի, *Այսաւր եղեւ պայծառ զարուն*,

իմ *Երգարան*, Տետր Դ, 5)։ «Ռահան, ենճի եւ մըրտենեին, *Սուսամբ*, ճարկիզ եւ ճրճենեին, Վարդն եւ գխընձորն ընծայ բերին, Աստուած օգնէ թագաւորին» (Մարտիրոս Ղարաճասրի, *Աստուած օգնէ թագաւորին*, Կոստանեանց, *Նոր ժողովածու*, Դ պրակ, 1903, երես 19). իսկ ի Մոռոզեան *Տաղարանին* Նոր Նախիջեւանի, յերես 97, գրեալ է. «Ռահանի ճուղ եւ վարդի Շուշանն յերկինս* եւ ճռճենեին Վարդ ու խնձոր ընծայ բերին. Աստուած օգնէ թագաւորին»։

*Պիտի «*Սուսամբ*, ներկիս». այլ է *շուշան*, այլ է *սօսամբ*, որպէս յայտ է ի վկայութենէն Կոստանդնի Երզնկայեցւոյ։

[[Սօսն, տե՛ս Սոսուն, սուսուն։]]

Վ

Վաղամեռուկ, *-ոկի*, ռմկ. վաղմեռուկ, *-ոկի*. յն. *սխինէնդօն, սխինանթօս*. լտ. *սքոէնակառմ, եուենկուս օդորատուս*, կայ լտ. *սքոէնոս*, գղ. *ժոն օդորան*. յն. *սքոինանթոս, ժոն օդորան*. «*Օթխօր. մէքէ այրըղին է*». — «*Վաղմեռուկ. օթխօրն է, որ [է] մէքէ այրըղի*» (Ձեռագիր *Բժշկարան* ազգային մատենադարանին Գալատայի)։ «*Ութխօր. վաղամեռուկ*» (Բժշ. Ա 143)։ «*Աթխար. վաղամեռուկ*» (Գաղ.)։ «*Վաղմեռկի* ճղեր» (*Հայկ. բուս*. 832)։ Գղ. «*ժոն օդորան, վաղամեռուկ*, բոյս ինչ, *Թիպնի մէքքէ*» (էմին)։ «*Թիպնի մաքքի*, որ է *իթխիրն*, որ է հայրէն *վաղմեռուկն*. եւ յիշած է յիր համարն ի վերայ ինին Աստուծով» (Ամրտ. *Անգ. անպ*., Ալիշան, 94)։ «*Իթխիր*, որ է հայ բառով *վաղմեռուկ*. ֆռ. *սիկինանդում* եւ *խլալիմամուն* եւ ա[որի] *սաճիլիս* ասէ, եւ հռ. *սանճումիս* ասէ։ Եւ ցեղ մն ալ *տունիս* ասեն, եւ *սախուֆաս* այլ կու ասեն եւ *Թիպնի մաքի* այլ կու ասեն եւ պ *կուրպայի տաշտի* կու ասեն։ Լաւն այն է, որ յորժամ ծամեն զինքն, համն զէդ *ղարանֆուլի* համն գայ եւ մազտաքէի, որ յիրար խառնած լինի, եւ հոտն մանուշկի լինի. եւ իր փոխանն *ղասապ ըլ-զարիրան* է։ Սինեա որդին ասէ, թէ ի սէզ կու եմանի, ի Մաքքու կու գայ, եւ լաւն այն է, որ բարակ լինի եւ պինդ եւ անուշահոտ։ Եւ թէ զիր եղն յերեսն օծես, շուտ մօրուք բերել տայ» (անդ, 100ա)։ «Ասցել է Ռուֆաւսն, թէ այս խոտիս (*Նաշա*, որ թուրքն *տուկմայունճայ սունպուլկայ* կու ասէ) , *խիլալիմամոն* կու ասեն եւ *Թումսայ* այլ կու ասեն եւ *պուտինայի քոճի* այլ կու ասեն» (անդ, 133ա)։

[[**Վայրենի**]]. *վայրենի ցորեան*. տե՛ս ի *կնճիթ*։

[[**Վայրի**]]. *վայրի ազոխ*. *վայրի բողկ*, *վայրի գինի* (*Հայրուս*. 489). *վայրի երիցուկ*, տե՛ս ի Գաղ. *Ալարգամէչ*. *վայրի եղնջան*, տե՛ս *Եղնջնան*, *Պատավարդ*. *վայրի խնձոր*, *ազըրոլ*. *վայրի ծորորուն*, տե՛ս ի Գաղ. *եպիթիման*. *վայրի կարաւս*. *վայրի կնճիթ*. *վայրի ծմերուկ*. *վայրի ճարդենի*, տե՛ս ի Գաղ. *Ակարոն = ասարոն*. *վայրի պատըեջան*. *վայրի պուտ* (*Հայրուս*. 1967)։

Վան, ճոյն ընդ *բեւեկն*. տե՛ս եւ 2861 *Հայրուս*.. «*Պաճ ուլ-ղատրա*, որ է *չիտլաղուճ* թուրքերէն, եւ հայերէն *կապուի* ասեն, որ է *բուտումն*, որ է *վանն*» (Բժշ., *Հայրուս*. 388)։ *Վանի խէժ*. պրս. *վէնիկզէտ*, տե՛ս ի Գէորգ. «*Բեւեկնոյ խէժ*, զոր ի Հայս *Վանի խէժ* կ'անուանեն» (Հ. Ղ. Ալիշան, *Հայրուս*. 337)։

Վաշտեւորի, Իննին., *Նոր Հայաստան*, 382։

Վառվառուկ, *-ոկի*, ռամկօրէն վառվռուկ. պրս. *վէն*, որ եւ *խինճէք*, *խիւնչէք* (Գէորգ). տե՛ս եւ *Ղզվան* ի *Հայրուս*. 337։ «*Ալուսան*. խոտ մի է, որ հայն *վառվառուկ* կ'ասէ» եւն (*Անուանք դեղոց*, Սերոբէ Ալիշան, համար 35. ընդարձակ գրեա՛)։ «*Ալուսան*, որ հայերէն *վառվռուկ* ասեն ... եւ թուրքն այս խոտիս *ղունտուզ օթի* կու ասէ, եւ [Պարսպն] *Հաշիշ ըլ-քալպէ* կու ասէ, որ թարգմանի ի հայ բառ 'կատղած շան դեղ'» (Ամրտ., *Անգ. անպ*.. տե՛ս եւ *Հայսուսակ* բիւ 2865)։ «*Ալուսան. վառվռուկ*» (Բժշ. Դ 143)։ «Իշու *խիյար. ալլուսան, վառվռուկ*» (Բժշ. Դ 158)։ Էմինեան՝ «*բեճեն, վառվառուկ*, փշաքեղ, *զունտուզ օթու*»։

Վատիրակ. «*Որոկոմա. վատիրակ*» (Գաղ. Բ). *զատիրակ*°, *զուիրակ*°։

Վարդ, արբ. *վէրտ*. Ստ. Ուռպ. ԺԸ 45։ «զանբառամ կուսուբեան բացատերեւ *վարդն*» (Խոր., *Ճառ Հռիփս*., 312, 319)։ «Բացատերեւ վարդիւք» (Խոր., *Վարդավառ*, 337). «վարդիւք եւ շուշանաւք» (անդ 334)։ *Վարդ*. յորմէ՝ *վարդավառ, վարդուտ*, ած., Ստ. Ուռպ. ԽԹ 185. գոյական անդ, 186՝ «Բերի *ի*

վարդուտս»:

Ի վարդ ծաղկէ յատուկ անուանք (տե՛ս եւ Բզմ. 1843, 231ա).

Արանց՝ *Վարդ* (Յոհ. Մամիկ. 9), *Վարդազար* (Տաշեան), *Վարդան*, *Վարդգէս մանուկն* (Խոր. Բ կե 308). *Աւանն Վարդգէսի*, անդ Բ ժգ, 198, կե 308. *Վարդիկ Հայր*, *Վարդուհրի պարսիկ* (Յոհ. Մամիկ. 49-51). *Վարդերես* (Ցանկ առ Տաշեան, ի Կամենից). *Վարդեւան* (Տաշեան), *Վարդուրախ* (Տաշեան), *Վարդիշխան* (Տաշեան):

Կանանց՝ *Վարդանոյշ*՝ կին Մանուելի (Բիւզ.). *Վարդանդուխտ*՝ դուստր Մանուելի (Բիւզ.). *Վարդէ* (Տաշեան), *Վարդիբեր* (վարդի բերր)՝ *Սօս եւ Վարդիբեր*. *Վարդերուփ* (*Թորոս աղբար*, Մասն Բ 341). տե՛ս *Ոսկերուփ*, կին, ի Տաշեան 666բ. *Վարդէսանամ* (Տաշեան 666բ տող ա.). *սանամ* = արր. *ապրուսանէմ* = մանրագոր. տե՛ս ի Պօզան. *չալրու* 2 եւ *ապրուսանէմ*. արր. *սանէմ* = կուռք:

Տեղեաց՝*Վարդաբերք* (Գ Մակ Է), *Վարդաբլուր* (Տաշեան), *Վարդագլուխ*, *Վարդահերի [= Վարդգէս] գեւղ* (Մտր. Ուռհ. 411, տպ. Էջմ.). *Վարդենի* (Տաշեան). տե՛ս *Վարդենիք* եւ ի Ստ. Ուռպ. եւ *Վարդենիս* յԻննին., *Ստրգրբ.*:

Գոհար վարդ, *գոհար շուշան* (Գր. Նար. 482):

Դեղին վարդ անուշահոտ ի Տիարպէքիր (Իննին., *Նոր Հայաստան*, 220, 221):

Կարմիր վարդ (Խոր., *Ներբ. Հռիփս.* 321. *Վկ. Ատոմայ Գնունւոյ եւ ընկերացն*, *Սոփ. հայկ.* ժԹ 76):

Կարմրավարդ, գղ. *ռոզ ռուժ*. «Դաշտ *կարմրավարդից* վառեալ Կանաչ սաղարթից [կանաչ-սաղարթից] բերրից» (տաղ, Հայկզ. ի *Կարմրավարդ*):

Հարիւրբերրի, տե՛ս Բզմ. 1843, 230ա *հարիւրաբերր*: «*Հարիւրբերրի* , ած. գ., յն. *էկատոֆիւլլոն*, *կենտիֆոլիում*. ազգ բազմաբերր վարդի. *վէրտի միւզաֆ*, *սատպէրք* (Բժշկրն., Հայկզ.). պրս. *սատպէրկ* (Գէորգ):

Սուլթան վարդ , տե՛ս եւ ի կարգի Ս Նշանագրի:

Սուտ վարդ. տե՛ս ի *Մասրենի*. կայ եւ ի Դաւ. Սալածորեցի:

«*Վան կիւլիւ*, Նաեւ *քիշմիշ վարդ*» (Իննին.).«Կը յիշուի Նաեւ *Վանի վարդը*» (Մէնէվիշեան, *Բուսաբանութիւն* երես 111): Տե՛ս *Վան կիւլիւ*, Ներմակ վարդ քիչ մը դեղնագոյն տերեւներով (Բզմ. 1843, 230ա):

Վարդ Բաղիշոյ (Իննին., *Նոր Հայաստան* 169):

Քեաֆիր վարդ (Իննին., *Նոր Հայաստան* 38-39): *Քեաֆիր վարդ* տե՛ս եւ *Հայրուս.* երես 590. Կ. Կոստանեանց, *Գրիգորիս Աղթամարցի եւ իւր տաղերը*, երես 47 սխալ մեկնէ *զքաֆուր [վարդ]* 'ներմակ', շփոթելով ընդ պրս. *քեաֆուր* եւ այլն:

Քեաֆուր վարդ, Նահապետ Խառակոնիսացի, տող 683:

Վարդապետ, *վարդապետիկ*. «*Վարդապետ*. կոնաձեւ, մուք լրջակապուտակ ծաղիկ մը, որ վայրի *սխմպիւլի* տեսակ մ'է» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313-314):

Վարդապետի ժախ. տե՛ս ի *ժախ*:

Վարդապետի կանաչ. տե՛ս ի *Պատրինջ*:

Վարդապետիկ. *Հայրուս.* թիւ 2880. «Ծաղիկ, որոյ կոկոն՝ վեղարաձեւ կապտագոյն» (*Մանանայ* 451):

Վարդենի. «Եւ գեղեցիկ վայելչութիւն *վարդենեաց* առանց փշոյ էր յառաջ քան զանէծսն, եւ ապա, յետոյ եկն, յարեցաւ ի վայելչութիւն նորա փուշն վնասակար, զի յորժամ հայեցեալ՝ տեսցուք, թէ յորպիսի՛ հոտ անուշութեան եւ յորպիսի՛ տեսիլ ցանկալի, զի՛նչ ժանտ յարեալ է, ի մօտոյ ի սմին յուշարար յիշատակէ ի միտ առեալ՝ իմասցուք, եթէ զորպիսի՛ վնասս շահեցաք մեք մեզ մերով անձամբ, եւ նկարեալ, նկատեալ ունիցիմք զառաջին զմեղսն ի մտի, յորոյ պատճառս բուսաւ փուշ եւ տատասկ յերկրէ ի պարտաւորութիւն յանցանացն» (Բրս. *Վեցօր.* Ե 92-93): Նոյնպէս եւ Միլտոն անփուշս կոչէ զվարդս դրախտին. «Ծաղկաւէտ ծոց շըրասուն ինչ ծործորոց սփռէ զիւր զանձս, երփնազարդ ծաղկանց երանգս եւ գեղափթիթ ըզվարդ անփուշ» (*Կորուստ դրախտին*, Գիրք չորրորդ, տող 228, 229):

Վարնգենի, **վարնկենի**.

Վարունգ, պրս. *վարէնք*. ասորերէն *կատուլժ խմոր*. լտ. *կոկումիս ագինուս* կամ *սիլվեստրիս*, գղ. *կոնկոմբրը սովաժ*, տե՛ս ի Բէստէն. գղ. *կոնկոմբրը սովաժ, կոնկոմբրը դ'ան*, Լիտրէ ի *Կոնկոմբրը*: «*Էշէք խըյարը*. իշկոյ վարունգ. ազոխ վայրի որբոյ. դդում վայրենի» (Պօզան յէշէք): Թուի գղ. *կոլոկինտ*, յոյժ կծու վարունգ. Սուտ-Կալլ. 154. *իշկոյ վարունգ*, որ եւ *Սատանի խիար*. Նո՞յն եւ *Իշաշինգղ*. «*Կիթ էլ Հիմար, իշկոյ վարունգն*» (*Թրգմ. դեղոց*):

Վարսակ, գղ. *ավուան*:

Վարսնակ, յն. *սպարտոս*, կեղեւովն չուան կը գործեն ([[*Հայբուս.*°]] 1302). գղ. *սպարտ*, որ եւ *ալֆա*°. «Խոտ այն է, որ չուան կու մանեն» (Բժշ. Ա. 395). *Վարսնակ խոտ*. ի լուսանցին նշանակի "այն է, որ չուան կու մանեն» (Բժշ. Ա. 395):

Վերվերան, *Հայկ. բուս.* 2794:

Վիգն, վիկն. ռմկ. *վիգ, վիկը* (Հայկզ.). պրս. *ֆիյկ*, տե՛ս *ֆինճ* ի Գէորգ. գղ. *վես*. սեռ. *վգան*°, *վգին*°. ֆիկ, սեռական *ֆիկի* (Ամրտ., տե՛ս *ֆիկ* ի *Հայբուս*. թիւ 3265). Ջախջ. ի *լերո* դնէ սեռական *վգնի*, ի *վեկկիատո*՝ գործիական *վգնաւ*, ի *վեկկիոզո*՝ բացառական *ի վգնէ*: «*Բեկոս. վիգն*» (*Բառք Գաղիանոսի*, տե՛ս անդ): «Ի սերմանիսն չէ հնար, եթէ *վիկն* ոք սերմանեսցէ եւ ցորեան հնձեսցէ» (Ոսկ. Գղ., հին Զ, իսկ նոր ԶԶ *սիկ*), Ճ. Գ. . *վիգն*, Նոր Հայկզ. ի *Վիկն*, որ եւ ի *վիգն* գրէ. «Ոչ է հնար, եթէ *վիգն* ոք սերմանեսցէ եւ ցորեան հնձեսցէ (Ոսկ. *Գաղ*. ի Ճ. Գ.)»: «Զոր աւրինակ ի սերմանիսն ոչ է հնար, եթէ *վիգն* ոք սերմանիցէ եւ ցորեան հնձեսցէ, զի այնպէս ի դէպ է ըստ ազգի սերմանն եւ հնձոցն լինել. Նոյնպէս եւ ի գործս. որ սերմանէ ի մարմին փափկութիւն, ցանկութիւն, արբեցութիւն, զղժնդակսն հնձեսցէ անտի» (Ոսկ. *Գաղ*. Զ 432-433):

Վրացի խունկ. «*Ռաղինիճ. վրացի խունկ*» (*Թրգմ. դեղոց*). այս բուի գրեալն ի *Հայբուս*. թիւ 1169. «*Դարինիճ. վրացի խօսակ*», որով ոչ ինչ գործ ունի ընդ *դարունաճ*:

Վրացի կոճ, գրելի ի *Կոճ*. յորմէ՝ *Իգավրացի կոճ*. գղ. *էլլեբոր*, պրս. *խարպագ*, որ եւ *Մրտիտակ*. «*Խարբակ. վրացի կոճ*» (*Թրգմ. դեղոց*). «*Էղբուբրոս. Հավթան* կամ *վրացի կոճ* կամ *խարբակ*» (Բժշ. Ա. 143): «*Եղբուբրոս*, որ է *խարպախն*, որ է *վրացի կոճն*» (Ամրտ., Անգ. անպ., Ալիշան, 72):

Սեւ վրացի կոճ (Մխ. Հեր. ԽԱ. 128 եւ Ամրտ., տե՛ս *Հայբուս*. թիւ 1733):

Սպիտակ կոճ (Ամրտ., տե՛ս *Հայբուս*. թիւ 1462): «*Փււղու. վրացի կոճ*» (Գաղ. Բ, չիք ի Գաղ. Ա):

Վրացի կոճակ, գրելի ի *Կոճակ*. Նոյն բուի ընդ վերնոցն: «*Ազարիկոն. տարազ վրացի կոճակի*» (Գաղ. Ա, Բ, Գ), այս ինքն "ազգ վրացի կոճակի". «Գնդածաղիկ. երկու *տարազ* են» (Բժշ. Ա., *Հայբուս*. 501). «Եղնին երկու *տարազք* են» (Բժշ. Ա., անդ 160):

Վրացի տակ (Բժշ. ԺԱ. 14). անշուշտ նոյն է ընդ *վրացի կոճ*, զի *կոճ* եւ *տակ* մի եւ նոյն ինչ է, արր. *ըրգ*, տե՛ս ի *Կոճ*:

Տ

Տակ, գղ. *բետըրավ*. «Բազուկ է եւս խոտ ծանօթ, զոր եւ պառաւունք առ մեզ *տակ* կոչեն. նակնդեղ ասի ի գրոց, *բետա*. Առաք. Լէ. "Բազկի բբու ուտէաք", Բժշկ.» (Ստեփ. Կամենցացի): Տե՛ս եւ *Կարմիրտակ*: «*Տակ*. նակնդեղ» (Յովհ. Գազանճեան, *Բառք եղոկիացւոց*, *Հանդէս ամս*. 1898, հոկտ.-նոյ. 300բ):

Տանդռնեկ. տե՛ս եւ *Դանդռնուկ*. «*Տանդռնեկ*. բանջար վայրի» (*Մանանայ* 451):

Տանդռնիկ. տե՛ս յիմ *Բաղուածոյս*, 7:

Տանծոտ, Իննին. 129:

Տանձ, սեռ. *տանձոյ*. յորմէ *Խոզատանձ*, *Կարմրատանձ*. կայ գղ. *պուար դ'անգրուաս*, *պուար դ'էտրանգիյոն*: *Տանձ* (Պղատ., *Աւրէնք*, Ը, 299): Տե՛ս *Ամրասկի*, *Անչիկ*: «Արմատս ոստոց հատանեն եւ ի ցիցս կապեն ի ծառս *տանձոյ* եւ [յ]այլ բուսս, որ լինի շուրջ զսեսեկաւն, եւ ասեն, թէ դեղ է չբերմնոտի» (Դաւիթ՝ որդի Ալաւկայ. տե՛ս Հ. Բրս. Սարգսեան, *Բննադ. Յովհ. Մանդակ*., 199):

«Տանձի տեսակները եւ անունները տարբեր են. զոր օրինակ՝ *վաղահաս (Թէզ գէլէն)* տանձ, *մեղրակ տանձ, ենձնուկ տանձ, դդդեկ տանձ, պոկօշ տանձ, մարտիրոս տանձ, չալաբիկ տանձ, մուաց տանց, մալաչիկ տանձ, մերնիկ տանձ, նռնեկ տանձ, մալաղի տանձ: Մալաղին* պատիւ ունի անուանի տանձից արխայ թէ՛ իր համեղութեամբ եւ թէ՛ մեծութեամբ» (Սրուանձտ., *Մանանայ*, 98–99):

«Տանձք Կիւմիւշխանէի (ի Պոնտոս Կապադովկիոյ)՝ *ջէրմայի, ապպասի, մէհրանի, հաճի համ-զա, մեղրիկ, շալղամ [տպ. ղալղամ] արմուտի, կէլին արմուտի, պլըտըրճին պուտի*» (Ինճիճ. 398): «Այս տեղի [Կիւմիւշխանէի] պտուղներուն մէջ նշանաւոր է *հաճի համզէի տանձը*, շատ խոշոր եւ շատ համեղ, որուն գինը այս օրեր 40–60 փարայ կ'արժէ օխան» (Գ. Անդրէասեան, *Ծամբուն երկայնքը*, *Հայրենիք* լրագիր, 28 հոկտ. 1895, Ա, ե): «Ի պտղոց Կիւմիւշխանէի անուանի են երեք տեսակք տանձի՝ *ջերմայի, չալկամ արմուտու* եւ *հաճի համզա*» (Հ. Ներս. Սարգսեան, Բզմ. 1863, 398):

Արօսի, աբօսսի. ազգ ինչ տանձի. տե՛ս ի *Ստորին հայերէն*:

Կարմրատանձ (Ագաթ.):

Տանձենի. *Հայկ. բուսաբ.*, 55. «*Աղթապաս*. իւրն ծառ մն է, որ ի *տանձենի* կու նմանի, բայց շատ փշեր ունի, եւ պտուղն ի մրտենու պտուղն կու նմանի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 21ա):

Տանձի. գղ. *պուարիէ*. *Սիսուան* 210ա, Արիստ.. տե՛ս զվկ. ի *Շռնի (Սռնի)*:

Տանձիկ, Հայկգ. ի *Դեղձուկ*:

Տանձուտ, Ստ. Ուռպ. 374:

Տաշխ. տե՛ս *Ստաշխն*:

Տապղին, ռամկօրէն. տե՛ս *Ստեպղին*:

Տատաշ, տե՛ս ի *Դամբ*. «Փուշս եւ *տատաշս*» (ՎՀ Բ 415 բ. բրգմ.): «Ա՛ռ չոր մանիշակ եւ *տատաշ* եւ բաքինին եւ տուղտ ... զայս ամէնս եփէ՛ եւ ի բան տա՛ր» (Մխ. Հեր. ԻՁ 67). «Ա՛ռ *տատաշ* եւ բաբունին» (անդ Խ 117): «[[...]] Թէ բուսանի քեզ փուշ *տատաշ*, քո երեսաց քըրտինքըն կե՛ր» (Մոռոզեան *Տաղարան*, երես 115, *Այն առջին մեղքի ու չարիքն*, տողք 1–4):

Տատաշի հնդի, (*Հայրուս*. 1462): *Տատաշի ջուր*, (*Հայրուս*. բիւ 269):

Տատրակ, գղ. *կարդոն*°. տն. *տէվէ թապանը, փամպուգ օթու* (Գւռ. Ա. 37): «*Տատրակ*, յորոյ վերայ պատեալ կայ նիւթ ինչ նման նուրբ բամբակի, զորոյ զրուն կեղեւեալ՝ ուտեն» (Ինճին., *Նոր Հայաստան* 41): «*Տատրակ* ասի եւ բանջար ինչ ի Հայս, մանաւանդ յերկրին Բասենոյ, նման կաղամբի եւ երնջնակի, որոյ բունն է ուտելի կեղեւելով» (Հայկգ.): «Թիլախաղ յԱրցախ, իսկ ի Տայս՝ քեղի, իսկ ի Մուշ եւ ի Բասեն ասեն *տատրակ, լասերպիտիում, ֆերուլա ասսա ֆետիդա*» (Ստ. Շահիմ.):

Իշու տատրակ, իշտատրակ. «*Իշու տատրակ* կամ *իշտատրակ*. տերեւն նման է տատրակի, բայց փոքր քան զնա, իսկ ծաղիկն կարմրագոյն է» (Ա. 37). «*Իշու տատրակ, իշտատրակ*. է բոյս կարմիր ծաղկամբք: Տե՛ս *Տատրակ*» (Գ 32):

[[**Տարապղպեղ**, տե՛ս **Դարապղպեղ**:]]

Տարեկան, գղ. *սեգլը*, տն. *չավդար* (Հ. Ներս. *Բառք մշեցոց*): «*Տարեկան*. տեսակ է ցորենոյ. *չավդար*» (*Մանանայ* 452): «*Տարեկան*. տեսակ մի սեւագոյն ցորեան. *չավդար*» (Փիրղալէմ.): «*Տարեկան*. քոյոց [[°]] Յունանու մարգարէին» (*Թանգարան հին եւ նոր նախնեաց*, հ. Ա., 348 երկիցս, տե՛ս անդ): «*Տարեկան (չավդար)*» (Պետրոս վրդ. Կալիօկեցի, *Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս*, 39, 86):

Տաւսախ [[տե՛ս եւ *Տօսախ*]]. գղ. *բիւի*. Ես ԽԱ 9. Ագաթ. . Խոր., *Աշխարհ*.. Դաւիթ Անյաղթ, *Սահմանք* Ջ 156. Արիստ., տե՛ս զվկ. ի *Շռնի (Սռնի)*. «Տնկեցից ի դաշտս զմուրտն, զսարդն եւ զսարոյն ... առակէ զնոսա ի մրտենի եւ ի *տաւսախ* ի ժամ անազատութեան» (Գէ., *Ես*., Հայկգ.): «Իբրեւ զդաստան *տաւսախոյ* յանցս վտակաց, զոր տնկեաց Տէր» (Եփր., *Թիւք*, Դ, 253): « "Արա՛ դու քեզ տապան յանփուտ փայտից". զեղեւին ծառոյ ասէ, իսկ եբրայեցին եւ ասորին՝ ի *տաւսախէ* [Թուի *տաւսախեայ*] տախտակաց ասեն. բայց եւ ռամէրան ասի 'անփուտ փայտ'» (Կիւր. Աղեքս., *Մեկն. Արար*., Հայկգ. ի *Տօսախ*):

Տաւսախեայ. Ոսկ. *Ծառք* 61:

Տաւսախի. Ոսկ. *Ճառք* 61:

Տափափուշ.

Տափնիլ. «*Տապնիլ*. տափարակ պրտու, որոյ գլուխն երկայն կլօրակ լինի եւ յոյժ խիտ եւ նուրբ բամբականման, զոր ոմանք խառնեն ընդ կրոյ եւ ծեփեն զորմն» (Գ*ւռ*. Բ 42). [[ՀՀմտ.]] «Պրտու. *տափակ նիլ*» (Հին բռգ.):

Տաքդեղ, գղ. *պղպեղը*. տե՛ս ի *Սոորին հայերէն*. «*Տաքտեղ* [այսպ.]. պղպեղ» (Փիրղալէմ.): *Կոն տաքդեղ*. տե՛ս ի *Կոն*:

Տաքկոն, գղ. *ժենժամբըը*, տն. *զէնճէֆիլ* (Հ. Ներս., *Բառք մշեցոց*):

Տերեւատ. ստուգաբան.՝ *տերեւ-հատ*. լատ. *մազարիոն* (Հայկզ.), ք**նն**ելի. գղ. է *կամելէ*. տե՛ս *մեզերէոն* ի Մարսել Դըվիկ. էմին՝ «*կամելէ, թիմելէ, լորէոլ, բուա ժանտիյ*». «*Մազարիոն*. *տերեւատ*, որ տերեւին ծայրն սուր է» (Բժշ. Ա. 144): «Սրծայր *տերեւատ*» (Բժշ. Ա. 44). տե՛ս *Սրծայր* յիմ *Սոորին հայերէն*: «*Մազրիոն*. *տերեւատ*» (*Թրգմ*. *դեղոց*): «*Տերեւատ*. *մազարիոն*. *չուլափայ*, *զամարան*, *Հաֆպուտաճ*» (Բժշ.): «*Մազարիոն*, որ բուրքն *ղուլափայ* կ'ասէ, եւ հ. *տերեւատ* կ'ասէ. եւ իւրն եէրողներուն է. եւ տերեւն նման է *զայթունի* տերեւին. եւ իւրն բ̅ ցեղ կու լինի. մէկն մեծ եւ մէկն փոքր կու լինի. լաւն այն է, որ տերեւն մեծ լինի … Ասէ Պատեհին, թէ իւրն *խամալանն* է. եւ իւրն երկու ցեղ է. ա̅ ցեղն *աշխանե* եւ իւրն սպիտակ *մազարիոնն* է, յիշած է. եւ ա̅ ցեղն այլ այն է, որ գրոցս շինողն ասցել է, թէ ի Շիրազ *սաւթու* կ'ասեն եւ պարսկերէն՝ *Հաֆթպարկ*. եւ իր տերեւն քան *զզայթունին* տերեւն փոքր է. եւ մէկայլ ցեղն քան զմրտենուն տերեւն մեծ է եւ թանձր է, եւ գոյնն ի դեղնութիւն կու զայնէ. եւ լաւն այս ցեղն է, եւ ուժն ի *չիպրիմին* ուժին կու նմանի» (Ամրտ., *Անգ*. *անպ*., Ալիշան 197): «*Ասատ ըլ-յարզ*, որ է *տերեւատն*, որ է *մազարիոնն*. յիշած է ի վերայ մենին յիր համարն Աստուծով» (անդ 37ա). յն. *քամալէլէոն* (գետնառիւծ) եւ տեսակ ինչ ուղտափշի. շփոթեալ է ընդ *քամալէիա* = *տերեւատ*, որպէս ասէ եւ Իբն էլ-Պէյտար, Բ, 743. տե՛ս անդ *սաատ ըւլ-արզ* = *սեւ քամելէոն*, թիւ 742:

Տերեփուկ. գղ. մեծ *սանտորէ*. «*Դերեփուկ* մեծ կամ *նաչտ*» (Գաղ. Գ). թերեւս «*Դերեփուկ*, մեծ կամ *նաշտ*» (պրս. *նէշթ* 'բոյլ'): «*Կենդան*. *տերեփուկ* մեծ» (Գաղ. Ա): «*Կնտարիոն*. *տերեփուկ* մեծ կամ *չանդակիկ*» (*Հայկ*. *բուս*. 2947): «Բարակ *ղանդարիոն*» (*Հայկ*. *բուս*. 703, 1294, 2947). «Հաստ *ղանդարիոն*» (2947):

Տերուկ եւն [[*տերեփուկ*, *տերփուկ*]], Հայկզ.:

[[**Տզկանեփատ**, տե՛ս **Տիզկանեփատ**:]]

Տզրուկ խոտ, որ է *Մկնակաձշն* (Բժշ. Ա՝ հին ԻԴ, 43). արբ. *քաթել էլ-ալաք* 'որ սպանանէ զտզրուկս', *անագալլիս* (Լըկլէր Գ թիւ 1731). գղ. *մուրոն*, լտ. *անագալլիս*, *մուրգելինէ*, *ալսինէ*: «*Մկնակաձշ*, որ է *անագալիս*» (Բժշ. Դ՝ հինն ԺԱ., 143): «Մկան ականջ, որ է *տզրուկ խոտն*» (Բժշ. Բ 332): «*Անագալիս*, որ բուրքն *սուլուկ օթի* կ'ասէ, եւ *սամանի* եւ կարմիր այլ կու լինի» (*Հայբուս*. 2950):

Տիզկանեփատ, սեռ. *տիզկանէփտի*. գղ. *րիսեն* [[*լուծողական բույս Հունտ*]]. լաւ եւս *տզկանեփատ* (ի բառիցն *տիզ* եւ *կանեփհատ*). տե՛ս *Խիրվա յՕտար*: «Ճնանննի ձէթ հ. . [*Թուրք*.] *կէնէկըրչէք եաղը*» եւն (Քօշաբեանց 131): *Գեռչակ* (Արանասեանց 32): «*Տզկանեփատ*. *կէնէկէրչէք*» եւն (Ստ. Շահրիմ.): «*Խարվա*. *տիզկանեփայտն*» (Բժշ. Դ 160): *Կէնէկէրչէք* (Ինճին., *Նոր Հայաստան*, 38 (տե՛ս), լտ. *րիկինուս կոմմունիս*, անդ 236: Յն. *ռիլի* եւ *ռիլիեկիւարիոն*, *րիսեն* կամ *պալմա-քրիստի*, ծառ, 1238բ: Պրս. *պիյոէնճիյը* (Գէորգ), [[*Թուրք*.]] *կէնէ օթու*: Տե՛ս եւ *Կանեփայտ* փոխ. *կանեփատ*, *կանեփհատ* ի ունտ է զէտ *տիզկանեփայտ*» (Հին բժշ., *Հայկ*. *բուս*. 1024): Յն. *կիկի*, *րիսեն* եւ *կրոտոն*, *տիկ* եւ *րիսեն*: «*Խարատ*. «Եւ այն, որ հին ձէթն է, ուժն *տիզկանեփատին* պէս է … եւ ասցած է, թէ հին հոռոմ ձիթին փոխանն *տիզկանեփտին* ձէթն է. եւ այլ ասցած է, թէ բողկին ձէթն է» (Ամրտ., *Անգ*. *անպ*., Ալիշան, 77ա): «*Խարվայ*, որ է *տիզկանեփայտն* … եւ իր ձէթն զմանն յերեսացն տանի եւ զպալղամն լուծէ եւ զերկայն եւ զտափակ ճիճին հանէ եւ օգտէ այն խուլինջին, որ ի պլղամէ լինի, եւ օգտէ արգանդին շրջելուն … եւ իր ձէթն ի թան կու մտէ խիստ … Ասէ Պատեհին, թէ այսոր պարսկերէն *պատանճիր տանճիրն*, որ է *տիզկանեփատն*. յիշած է» (անդ 118): «*Հապ ըլ-խասվայըն*, որ է *պատանճիրն*» (անդ 135):

Տիկնակիւ [[տե՛ս Տկնակիւ:]]

Տիմորմ. տե՛ս եւ *Լոլիկ, Պոլտիկ.* «Նոյն գաւառականն [բալուցւոց] ունի *տիմորմ (տոմաթէս)* բառը, որ *տիկինի* նման ազնուատոհմ հայերէն է» (Մ. Ս. Գաբրիէլեան, *Ակնայ գաւառաբարբառը*, *Հանդէս ամս.* 1909 յուլիս 223ա):

Տիրիբ. «Ուռիի պէս է, բայց ճիւղերն փափուկ է [[այսպ.]] եւ երկայն, որով տակառ [սակառ], այս ինքն *սէփէտ* կը շինեն՝ Կարին ֆաղաֆ խաղող տանելու, այս ինքն երկայն ճանապարհի կը գործածուի» (*Խոտրջր.*, 62):

Տիրիմիդ. «*Մանթարի* պէս է, եւ կ'եփեն ու կ'ուտեն, բայց ինքը *մանթար* չէ» *(Խոտրջ.* 42):

Տիւլակ. «տհաս սեխ, կռայ» (Փիրղալէմ.):

Տխկի. տե՛ս *Դղֆի:*

Տկնակիւ. այս բուն ուղիղն, եւ ոչ *տիկնակիւ.* գղ. *սեղրի*, խէժ, որ հոսի ի *սեղրէ. սեղր* է ազգ ինչ *մելեզի.* տն. *չամ սաղըզը.* «*Տկնակիվն*, որ է *չամի* խէժն» (Բժշ. Բ 781: «*Ըռաքինէին*, որ է կիւն, որ է *տկնակիւն*» (Բժշ. Դ 156):

Տկողին. տե՛ս *տկողին* եւ *յԱղբերաց արիւն*, ուր զանազանի ի կաղնէ:

Տկօ՛ղէն. ղարաբաղցւոց բարբառով կը նշանակէ 'կաղին'. տե՛ս *Արարատ*, 1899 սեպտեմբեր երես 399ա:

Տղտղիկ. գրեա՛ ի *Տանձ.* տեսակ մի տանձի անուն է (Փիրղալէմ). ի *Մանանայ* գրի *ղըղղըղեկ:*

Տնջրի, որ եւ *Սաւսի.* բերեւս *ջնդրի/ջնտրի = ճանդարի.* տե՛ս ի *Սաւսոյ.* «*Սօսի. տնջրի*, որ է *չինարի*» (*Բառգիրք* հայոց Երեմիայ վդտի., Լիվոռնոյ, 1698, երես 294): «*Տնճերի* կամ *տնջրրի.* այսպէս անուանէ սօսին բառգիրք մի. նոյնպէս ըսուի եւ յարեւելեան հայս» (*Հայբուս.* թիւ 2971). «Սօս, սօսի, սուսի. ռամկօրէն կոչուի *տնների* կամ *տնգերի*» եւն, անդ, թիւ 2848:

Տոլ. ա՛յլ է *տոլ*, ա՛յլ է *Տոլի.* «*Ջրի տոլ.* ջրի դդում», [[թուրք.]] *սու գապաղը* (*Հայկ. բուս.* Ն. 682, թիւ 2972): Գէորգ գրէ *տոլ*, ոմկ. *սու գապաղը* (*Բառարան Վաստակոց գրոց* ի *Տոլի*):

Տոլի, տոյլի. բուրբերէն *տալեա* կամ *տալեէ* 'ուռ, բարունակ որթոյ' (Պօզան.): «*Ջտոլի* սիրէ» (*Վստ.* Կ 49). «Եւ ի վերայ պատին *տոլիք* ազգի ազգի տարածել» (անդ ՄԻԸ 142). «*Տոլոյ* տերեւ տո՛ւր արածել» (անդ ՅԺԴ 213): *Տոլի* = 'բարունակ'. տե՛ս Մխ. Հեր. Խ 117: «Ջտեսանե՞ս զբգենիդ եւ *զտոյլիդ* [այլ Ձ զտելիդ*]. ի կորեկանէ բլոյ եւ ի կտոյ միոյ խաղողոյ եղեն այնպէս» (Բրս., *Մրկ.*, Հայկզ. ի *Տոյլի*), որ եւ յաւելու. «այլ ձ. *տելի.* տե՛ս եւ *Տորր*»: Փոխ. *տոյլի*՝ *որբ* ասի յՈսկ. *Ա Թես.* Է 446: «[[...]] Վարեաց նոյն թագաւորն [[Հայոց՝ Հեթում Բ]] զսուլտանն զաւուրս վեց մինչեւ ի տեղին կոչեալ *Տոլի*, որ է զաւազն մօտ ի Մըսր չորս աւուր ճանապարհ գնացողացն ըստ սահմանին ... Այլ իբր գնաց թագաւորն [Հեթում Բ] մինչեւ ի նոյն տեղին *Տոլի* կոչեալն, զի մօտ էր [ի] Խահրէ [= Կահիրէ], եւ ինքն էր միայն. երկեաւ, թէ ըմբռնեսցի կամ ոչ ընտրեսցէ դառնալ ընդ աւազն: Անդ ի տեղին յայն թագաւորն հայոց Հեթում նշան եդ ի դուռնն այն իջեւանաց տանն, նա եւս ի նոյն բարունակն, այս է ի *տոլին:* Ի մէջ բակին եհար բրովն եւ հետս արար ի գուշակ եւ ի նշան, եթէ թագաւորն հայոց վարեաց մինչեւ աստ զսուլտանն եւ ոչ կարաց հասանել» եւն (Ներսէս Պալիենց ի կարգի գրոց Ֆրա Մարքինի. տե՛ս Զմչ. Գ, երես 374): Նոյն եւ ի Դիւլորիէ, *Դոկ. արմ.*, հ. Ա, 657, ուր թարգմանէ *տոլի* երիցս, իսկ յերես 658՝ *արմաւենի:*

Տոտրին. գրեա՛ ի *Խնձոր.* «*Տոտրին.* վայրի խնձորի, բրու խնձորի ծառ» (Միհրան Պ. Մամիկոնեան, *Հաւաքածոյ գաւառական բառից, Տրապիզոն, Բաբերդ, Կարին, Մուշ*»:

Տորոն, տորուն, տուրուն, տօրուն. *տորուն, -րնոյ*, որպէս *ցաւղուն, -ղնոյ.* գղ. *զարանա*, լտ. *էրիթրոդանում.* «*Էրիթրոդանոն. տորուն*» (Գաղ. Բ. գրածն՝ «*եղիթադրանոն. տորուն*», իսկ Գաղ. Դ *տաւրուն* եւ Գաղ. Գ *տորուն:* «*Ալ խասրա. տուրուն*» (Բժշ. Ա 143, գրածն՝ *ալ փասրայ:* «*Զտօրունն* եւ զլեղակն յիրար խառնեն, այս ինքն զսեաւն եւ զկարմիրն, ծնանի լու[ր]ջ. իսկ յորժամ յալաժահրն ձգեն, որ է դեղին, կանչի, եւ նիւրն բնական սպիտակ լինի» (Մտ., *Վեցօր.* Բ օր. 60): «*Տօրուն.* պօյայի խոտ է» (*Գւռ.* Ա 92): Տե՛ս *ստեպղին վայրի* ի Հայկզ., ուր դնէ իտ. *բոբբիա, գերոն*, լտ. *րուբիա* է գղ. *զարանա. տորոն.* ֆննելի *գերոն:* «Որպէս այծն, որ ուտէ *զտորունն* եւ ասէ. "Եւ ի կենդանութեանս ուտեմ զքեզ. թող յետոյ հանեն զտակք քո եւ ներկեն զմորթիս իմ"» (Խիկար, *Հայկ. բուս.* 2981):

Կեննուկ տորոն. բուն *Կէննէի տորոն* (Իննին., *Նոր Հայաստան*, 41, 281), այս ինքն Գանձակայ

Աղուանից. «Գոգնոցս ներկեր եմ *կեննուկ տորոնով*, Սրտիկս լեցեր է գունտ գունտ արիւնով», երգ Բղեցւոց (կեղեցւոց)՝ *Բամպակ եմ ցաներ Խարբերդու օվան (Մասիս* շաբաթաթերթ, հրատ. *Արեւելք* լրագրի, 11 օգոստոս 1884, երես 15ր): Տե՛ս *Գեանջայ տօրօն* եւ յերուանդ Լալաեանց, *Ազգագրական հանդէս*, 1897, 335. կայ եւ *Գեանջայ նուռ (Լումա*, 1900, Գիրք Ա., 319):

Տե՛ս *տորոն Գանձակայ* յինննին., *Նոր Հայաստան* , 41, 209, 281:

Տորունի տերեւ (Հայբուս . 1533, 2549):

Տորոն/տորուն եւ Յովհաննէս Ալթընեան, հայ. տե՛ս յիմ Քաղուածս էմմ. Լը Մառ, երես 240: Տե՛ս եւ *Ալթըն (Ժան)* ի [[բառագիրս]] Դըզորրի: «*Արմենի* լրագրում հրատարակուած է այն արձանի պատկերը, որ ֆրանսիացիները կանգնեցրել են Ավինիօնում հայազգի Յովհաննէս Ալթընեանին (Ժան Ալթըն), որ մտցրել է *տորոնի* կուլտուրան Ֆրանսիայում: Ալթընեանը Հին-Ջուղֆայից էր: Նա գաղթեց Ավինիօն 1756 թուին, ցանեց *տորոնի* սերմը կոմս Կլօզէմէտի հողերում եւ սկսեց պատրաստել ստացուած *տորոնից* այն ներկը, որ արդիւնագործական աշխարհում յայտնի դարձաւ *բուրխա տինկտորում* անունով, աւելի ստոր յատկութիւն ունեցող բուսական ներկերից զանազանելու համար: Այն ներկերը, որ հռոմայեցիք տարածել էին Ֆրանսիաում, կոչւում էին *վերանխտա*, եւ նրանց սերմերը եւս բերուած էին Փոքր-Ասիայից: Յովհաննէս Ալթընեանի աջող փորձը նրա վրայ դարձրեց Լուդովիկոս ԺԲ-ի [պետք ԺԵ-ի] մինիստր Բերտէնի [Հանրի-Լէոնար Ժան Բերտէն] ուշադրութիւնը, եւ նա Ալթընեանի առաջարկութեամբ բերել տուեց Կիպրոսից աւելի լաւ տեսակի *տորոնի* սերմեր՝ Վօկլիւզի, Մարնի, Վերին եւ Ներքին Գարօննայի, Լուարայի, Ներքին Հռենոսի եւ հիւսիսային Ֆրանսիայի դաշտերում սերմանելու համար: Հետեւանքն այն եղաւ, որ 1789 թուին միմիայն Պրովանսից Անգլիա արտահանւում էր 150.000 փունտ ստերլինգի *տորոն*, իսկ էլզաս-Լօտարինգիայից՝ է՛լ աւել: 1810 թուականին Վօկլիւզում գործում էին 50 աղօրիքներ *տորոնի* չոր արմատները աղալու համար. Իտալիա, Անգլիա, Հօլլանդիա, Ամերիկա եւ Ռուսաստան արտահանուող *տորոնի* քանակութիւնը հասնում էր 60.000.000 ֆրանքի: Ինչպէս յայտնի է, *տորոնի* գործածութեանը վերջ դրեց *ալիզարինը*, որ 1868 թուին գտան քիմիկոսներ Կրէբ եւ Լիբերման: Մինչեւ Ալթընեանին արձան դնելը, ֆրանսիական բուսաբան Ֆ. Պըտի այն նոր բոյսը, որ նա գտել էր հարաւային Ֆրանսիայի աղի լճերում, անուանեց *ալթենիա* ի պատիւ Ալթընեանի» (*Մշակ*, 25 հոկտեմբեր 1902, Գ, գ): Տե՛ս *զարանս* եւ ի Վ. Մեգրը, *Դիկսիոններ կլասիկ դէ (գ)օրիժին*:

Տորնուկ. «Վայրի տորոն, որով ներկեն գրազում ինչ. յոյժ նուազ է բոյս սորին եւ պատատեալ ընդ միմեանս. ունի դեղին մանր ծաղիկս սփռեալ ընդ բոյսս իւր կիսով չափ» (*Գւռ*. Բ 42):

Տուղտ, *տղտի*, գղ. *գիմով*. *Հայկ. բուս*. 1296 երկիցս, ուր հոլովի *տղտի*, *տղտով* 1733: «Ա՛ռ *զտուղտն* գտակովն եւ բարունակովն» եւն (*Վստ*. ՃԿ 108). «Ա՛ռ չոր *տղտի* տակ» եւն, անդ ՃԿԵ 110: «Սուլթան վարդ. *տուղտ*. տե. *կիւլ խաթէմ*» (Յովսէփ Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, 313): Նա եւ *ննեղկարլիք* ըստ ոմանց *տուղտ*: *Տղտի ջուր*. *Վստ*. ՄԴ 193, ՄԴԲ 196, ՄԴԸ 204:

Դեղդ. Մանանայ 443: *Կարմիր տուղտ* (Աբանասեանց, 66):

Սպիտակ տուղտ. տե՛ս *Հայկ. բուսաբ*. ք. 2988. տե՛ս եւ *Թեղի*. տե՛ս *աղճա օթ*, *սուլթան օթի*: «*Տեխտ*. աղտահան ծաղկի արմատ» (Փիրղալէմ.) = *աղտահան* (*Հայբուս*. 1625): «*Սպիտակ տուղտ* = *Հարֆա*» (Ասար. *Հայկ. բուսաբ*. ք. 1658). «*Սպիտակ տուղտ* = *Հալպուպ*» (Ամրտ., անդ, 1601). «*Սպիտակ տուղտ* ի կտաւի ծրարած» (Մխ. Հեր. ԻԳ 52):

Տտնեղ. «Ազգ ինչ սեաւ խաղողոյ, որոյ հատք են բոլորակ ոչ յոյժ մեծութեամբ, համով քաղցր եւ ջրալիր, յորմէ յոլով գինի ելանէ եւ այն՝ ազդու եւ զօրաւոր, եւ մրուր նորա՝ սակաւ, եւ ինքն՝ վնիտ (*Գւռ*. Ա 49):

Տտուզ, սալոր սեւ (*Գւռ*. Ա 92): «*Տտուզ. սալոր*» (*Խոտրջր*., *ւռ*. Բ 3 եւ *Խորտջր*. 48):

Տրատէ. բուի գղ. *սեւկ դ'իպոսխտ*. տե՛ս *Քօշմօրուք*. «Լինի ի Լիկիա խունկ զիւգին, եւ՝ *տրատէ* ի ծառէ ծորելոյ որպէս զխիժ, լոյծ որպէս մեղր կամ որպէս մրուր» (Խոր. *Աշխարհ*. 600): «Հին Բժշկարանն շատ հեղ յիշէ "Քօշմօրուաց քամուքս, որ է *տարաքիր*" ըսելով» (*Հայկ. բուսաբ*. ք. 3233):

Տօլ. «դդում (Հաւաքումն Հ. Սուք. Պարոն., թիւ 5, *Բառք բիւրանացւոց*):

Տօնի բանջար. տե՛ս ի *Սպիտկուկ*:

Տօսախ, *-ոյ*. [[*տե՛ս Տաւսախ:*]]

Տօտուր. *Խոտրջ*. 48, ուր գրի «*Տտուզ* [առանց մեկնութեան], *տօտուր* [առանց մեկնութեան]. *տտուռն [տտուռ*]* ազգ սալորոյ» (Տաhրիմ. ի բառն *Դամոն*):

Ց

Ցարի. «Եւ ոմանք ի տերեւոց *ցարւոյ* եւ ի կորզոյ հունից աղացեալ բրէին, արարեալ բլիթս, եւ այն էր նոցա կերակուր» (Մագ. ԻԶ):

Ցախ. «Վառելի նուրբ փայտ, ուստի եւ *ցախ աւել*՝ աւել նուրբ ոստերէ շինուած» (Հ. Սուք. Պարոն., *Բառք բաղիշեցւոց*, թիւ 19): *Ցախ* եղի *գըրիւէր. բալէ զը բրիւէր, ցախաւել*. «*Ցախ.* փշոտ բոյս, *ղարա թիքէն*, զոր ի գործ ածեն ի վառել ի բոնիր հացի» (Հ. Սուք. Պարոն., *Բառք թիֆլիզեցւոց կամ Սիւնեաց*, թիւ 15): «*Ցախ.* վառելիք» (Փիրղալէմ.). «*Ցախաւել.* տանեաց համար փայտի շիւղից աւել». «*Ցախաւիլել.* մեծ աւելիւ աւլել, մաքրել» (Նոյն, անդ): «ԵՆ զարմանալի ծառք, որպէս կիպարն, ցախն» (Վրդն., *ԾՆՆ.*): Հայկզ. յունարէն դնէ *սփէնդամնոս* եւ լտ. *ակեր*, որ է զդ. *էրաբլ*. Էմին զգդ. *էրաբլ* դնէ *ցախ*:

Ցարասի. Էմին՝ զդ. *բուլո*. «Բողոք առ միմեանս կալան *ցարասի* եւ հաւամրգի ... եւ տրտնջէին ասելով. "Զիա՞րդ նման մեզ լինելով մրտի տեսլեամբ եւ փանաքութեամբ վարդ՝ եւ այնքան պատուին, զի ի տունս բնակեն նոխազունից եւ յեկեղեցիս, եւ մեք անարգ լինիմք գործիք զաւելորդս տանց եւ գոմից մաքրելով" » (Մխ. Գոշ, ԻԵ): «*Ցարասի* է տունկ ինչ, զոր մեծ աւելս կապեն, որովք մաքրեն զախոռս, զգոմս եւ զկալս» (Հ. Պօղոս Մեհերեան, *Գւռ.* Բ 11):

Ցաքի. «Ազգ ինչ թփոյ յոլովափուշ» (*Գւռ.* Ա. 45): «*Ցաքի.* փշոտ ծառ է, այգեաց պատ կը շինեն» (*Գւռ.* Ա. 93): «Դժնի. *ցաքին* է կամ փշփշուտ» (Հին բռգ.): *Ցաքուտ.* այսպէս եւ *Թեղուտ* անուն տեղւոյ, *լորուտ, հացուտ, շլորուտ.* «Եւ բազում աշխատութեամբ եւ մեծամեծ ծախիւք ածեալ էր [ջուր] ի լեռնէն Զագէձորոյ եւ բերեալ ի *ցաքուտն*, որ՝ հանդէպ վանիցն յայնկոյս գետոյն. եւ արար զամենայն առապար եւ փշալից վայրն վարդուտ եւ տնկալից» (Ստ. Օրբ., ԽԸ 185): «Ամեն մի ձոր, ամեն մի սար, անտառ, դաշտ, աւերակներ, ծմերանոցներ, մատուռներ, մինչեւ իսկ առանձին քարեր գիւղացիներից անուն են ստացել: Օրինակ՝ Տաթեւի շուրջը պատահում են *Կոտրած խաչ, Ընկուզուտ*, որտեղ մեծ քանակութեամբ ընկուզենիներ կան. *Փրխաձոր*, որտեղ են գիւղացիների փարախները. *Աղուեսատափ, Ծակ-քար, Աձի հող, Ցաքուտ*, որտեղ բուսնում են մեծ քանակութեամբ *ցաքի* կոչուած փշոտ թփերը» [եւն] (Ս. Ճ., *Ճանապարհորդական նկատողութիւններ*, յօդուած հրատարակեալ ի *Նոր-դար* լրագրի Տփղեաց, 18 նոյեմբեր 1887, Բ, դ). յիշի այս եւ ի *Պտմ.* Ստ. Օրբ. ԽԸ 185-186, ուր կայ եւ արձանագիր եկեղեցւոյն:

Ցինգ. յոյնն դնէ *ախի*, որ բուն բառ եբրայեցի *ախի* կամ *ախու* 'կանաչ', բերեւս զի կանաչ մնան տերեւք տնկոյս, որ զուարճանայ միշտ առ ջրովք (տե՛ս *Կանաչ* ի Հայկզ.): «*Զունկն.* խոտ է, որոյ տերեւն նման է *մաղտանոսի*» (*Գւռ.* Ա. 35): «*Ծիպանուկ.* խոտ է, եւ ասոր ծաղիկ կը ծեծեն ու կաղինի կպենով մարդու մարմնոյն վրայ կը կապեն, որով վէրք կը բանան ու երկար ատեն կը բանցնու *ֆիթիլով* առողջութեան համար. տն. *եազը օթու*. ծաղիկն՝ դեղին եւ կարմիր» (*Խորոզ.* 35): «*Ցինկըն* դեղին ծաղիկ ցընծայ, Փայլի, ծըփայ մէջ ջըրերուն» (Դաւիթ Սալաձորեցի, *Տաղ ծաղկանց*):

Ցմախ. *շիկատեն*, իտ. *սանգուե* = 'աւշինդր': Ստ. Կամենից. դնէ լտ. *սիլատս, լավեր*, զոր տե՛ս ի Պազինի, (Հայկզ.): Ասոր. *կանդուշ, կունդուշ, սապոնարիա օֆֆիկինալիս Հերբա*, [[...]] որ է 'սպիտակ *եղերդոս*': *Ցմախ.* յն. *էլլեբորէ* (*Պտմ. Աղեք.*, 141): «*Բունտուշն. ցմախ*» (*Թրգմ. դեղոց*): «*Եղջրոսս. ցմախ*» (Հին բռգ.): «Խաշնդեղ. *ցմախ*» (Հին բռգ.): «*Սեղուա. ցմախ*», լտ. *սալվիա**. իտ. *սլւոէ* է զդ. *ալոէս*. տե՛ս ի Զախջ. իտ. եւ ի վիենն. Նոյնպէս եւ *շիկատեն* է աղաւաղութիւն *սխեկոարեն (ալոէս)* բառի, որ է *սապը սկուտրի*:

«Զիւր *ցմախոյ*» (Էմին): «*Ցմախ.* վայրի ծառիկ մի է. եւ ասոր *եափրախն* ալ կու նշանակէ, զոր կնիկները ծծերնուն վրայ կու դնեն, երբ որ կ'ուզեն զտղան ծծեն կտրել. *ցմախ:* Տե՛ս եւ *ցմախտակ*» (Հ. Մկ. Անան., *Բոգ. աշխ.-գրաբ.*): Նոյն բուի 'լեղիամ ծաղիկ'» = *վերատրում* (*Հայկ. բուս.* 901): «Ոչ ամենայն բաներ* ուտելի է, որպէս *ցմախ*, որպէս բանք*, շաղինտր եւ այլք ոմանք դառինք եւ կէսք մահաբերք իսկ» (Վարդան Արեւելցի, *Մեկն. ԾՆՆ.*, Հայկզ. ի *Բան*): *Հայկզ. դնէ *բանջար* ի *Ցմախ*, այսպէս եւ *Հայկ. բուս.* 2262, իսկ *բանք* նոյն *թուի ընդաղմէշ բանջ, ժիւակիամ*:

Ցմախտակ. ըստ Հ. Ղեւ.՝ լտ. *սուրութիում*, որ է գղ. *սապոններ*. տե՛ս *սուրիւթին* ի Լիտրէ, ուր դնէ յն. *սպուութիոն* 'սապոններ': Ստ. Լեհ. օնառախոտ դնէ զլտ. *սուրութիում*, յորմէ եւ էմին՝ զգղ. *սապոններ*: Բժ. Ա. 335, Բժ. Է 27: «*Զամարիքայ. քունտուղ*, ցմախտակ, *վօյնիկ օթի*» (Բժշ. Դ 176): «Սոնին լեսած ափկից մի, *ցմախտակ* լեսած, սեւ ձիւր չորս նուկի, խայծղան երեք նուկի» (*Վստ.* ՑԻԷ 223): «*Ցմախտակ. քունտուս, քունտուսէ, քունտուշ, քուրդուշտ.* ցմախին քէօքն է, որ կը փոնկտացնէ. ցմախարմատ, ցմախատակ, *ցմախտակ*» (Հ. Մկ. Անան., *Բոգ. աշխ.-գրաբ.*):

Ցորեան. տե՛ս եւ *Աւետիկ, Դիր, Խանառ.* Սղ Դ 8: «*Գալասութ.* եղայ [եղի՞] ցորեն աղանձ շինել» (Փիրղալէմ.): Տե՛ս եւ «*գագոգիրոս. եղիտամն*» յիմ *Բառս Գաղիանոսի*:

Կարմրուկ ցորեան. գղ. *էպէանտրը.* պրս. *խէնտէրուս* 'կարմիր ցորեան', *գըզըլճէ պուղտայ* (Գէորգ): Նո՞յն եւ *Կարմրահատ*: «*Խանդարօս.* ոմանք այսոր *կարմրուկ ցորեն* կ'ասեն» (Ամրտ., *Բժ. բոգ.* Դ 129):

Վայրենի ցորեան. տե՛ս զվկ. ի *Կննիր*:

Ցորենուկ, որ եւ *Փստփստուկ.* խոտ ինչ, որոյ տերեւքն նման են ցորենոյ, որ եւ *փստփստուկ.* ըստ դրիմեցոց՝ *չրուշտէ* կանաչ» (Գուռ. Ա 37):

Ցոլոլիկ. բուխ ի բառէն *լոլիկ* = *տոմատ*, յորմէ եւ *Շանլոլիկ.* «*Ցոլոլիկ* (արարկերցու բառ). կեռասի նման մանր համեղ պտուղ մի» (Խաչատուր քհ. Տէր-Վարդանեան, *Ժողովրդական բառեր*, *Արեւմամուլ*, 1897, մարտ 15, Ցաւ. երես 21): [*Հմմտ.*] «Մոսկուայի մի խումբ հայեր, որ այնպէս տգեղ կերպով մի առանձին նարպկութեամբ իրանցից *Նըռ կոմիտէ* կազմեցին եւ ի լուր աշխարհի թմբկահարեցին ... մտածել են մի ակնրանոց [*թուփ* գղ. *կլիսպ.* եռ] բաց անել» (*Մարտ*, խմբագիր-հրատարակիչ՝ Արշակ Թումանեան Կայծունի, Մոսկուա, 1915 ապրիլի 20, թիւ 5, երես 6ր):

Ցոխնձորի. գրածն՝ *Նըոխնձորի.* տե՛ս ի *Խնձոր, Խնձորի*:

Ցոպտկի. *Հայրուս.* թիւ 3018:

Ցոսալոր, զոր ասեն հայերէն կէս բուրբերէն *ցըռ էրիկի.* տե՛ս ի *Խնձոր*:

Ցովարդ. *Հայրուս.* թիւ 2875, 3029:

Ցոտանձի. գրածն՝ *Նըռ-տանձի.* տե՛ս ի *Տանձի*:

Ցրդենի, տե՛ս եւ *Ծրդենի, ծրդի.* գղ. *սարին.* տե՛ս *սալինա* ի Զախջ.: «*Ցրդենի* (Եղիա մարգարէի). Ցոհ. Երզնկ., *Մեկն. Մտթ.*. *բեւեկնի* դնի յեփրեմ, *Թգ.*, 439 եւ Դ Թգ ԺԹ 4. յոյնն ասէ *արքէւթու*, որ է *գի.* տե՛ս *Բեւեկնի* ի Հայկզ.: *Ցրդենի*, Ինճին. 183:

[[Ցրդի]]. տե՛ս եւ *Ծրդի* [[եւ *Ցրդենի*]]. *ցրդւոյ.* «Եւ փոխանակ *ցրդւոյն* եռն բուսցի, եւ փոխանակ դժնկին մուրտ ելցէ» (Ես ԾԵ 13. բերի բուի յՈսկ. *Ես.* ԾԵ 417): «*Ցրդի.* փոքր քան զգիհի եւ զյակրի եւ անյարմար ի պէտս շինուածոց, ուստի գործեն ցից եւ ածուխ, որ լինի զօրաւոր քան զածուխս այլոց փայտից» (Ինճին., *Նոր Հայաստան* 35): Պտուղն կոչի *Կարմրուկ* (տե՛ս): «*Ցրդի*, լտ. *սաբինա* [գղ. *սաբին*], տճ. *սաճ ադաճը.* արմն՝ ստուար, փայտն՝ խստանիւթ, ներքուստ՝ կարմիր, տերեւն՝ նման եոնի» (Ստ. Շահրիման.): «*Սաբին. սաչ աղաճը*» (Աւգեր): *Ցրդի* (*Հայկ. բուսաբ.*). *ցրտի ծառ*, 512, 782: «*Ջրդի*, որ է *սուպհուլին* ծառն. յիշած է լիակատար ի վերայ ոյին յիր համարն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 157): «*Ուպհուլ*, որ է ծրրուն պտուղն, որ է բուրք. բառով *սառուճ եմիշի.* ինքն երկու ցեղ է, սեւ եւ կարմիր, եւ լաւն այն է, որ կարմիր լինի ... զգլուխն շուրջ կու ածէ, յորժամ եոր քամոցին մէջն տապկեն շրիկ ձիթով եւ յականջսն կաթեցնեն, զխլութիւնն տանի, եւ իր պտուղն օգտէ ընտաւորին եւ զպեղծ զգայութիւնն տանի եւ օգտէ խղձակելուն եւ զկանանց հայզն բանայ ... եւ իր տերեւն խոցերուն միս կու բուսուցանէ» *[[եւ.Ն]]* (անդ, 222): «Այլ մի՛ առ այս աղբիւր փիճիք եւ *ցրդիք* եւ եոնիք տնկեսցուք, զի այսպիսին անպտուղ է» (*Մեկն. Գծ. ԻԲ, Բարոյ.* 198). այլ *ցրդի* չէ անպտուղ:

Փ

Փաքեխ. Նո՞յն եւ *Պքեխ*. «Տեսակ ինչ սեխի երկայնաձեւ» (*Գւռ.* Ա. 37), արբ. *Ֆըգըխ* ՚սեխ՚:

Փաղանգամուշկ. բուի գղ. *ժիրոֆլէ* կամ *ժիրոֆլիէ* կամ *Հօյէ*, որ է *գարէնֆիլ*, այն է *Մեխակ* եւ *Մեխակենի*. եւ Հայկզ. *փէլէնկ միւշք* ղնէ զնարդոս. Էմին *սպիկ*. *հիւսամէ օթու*. ըստ Էմինի՝ գղ. *լավանդ*, *սպիկ*. պրս. *փէլէնքմիւշկ*, նարդոս, ծաղիկ (Պօզանեան). լտ. *Նարդուս կելլիկա*, *փէլէնք չիւք*. *փէլէնքմիւշք*. Մենինսքի, *Օնոմաստիկոն*՝ *Նարդուս*. «Լինի անդ [ի Հնդիկս] ... պղպիղ եւ սնգրուեղ եւ ամենայն բովինայք, հալուէ, *փաղանգամուշկ*, *քփուր*, *ճանդան*, նայիրուակ» (Խոր., *Աշխարհ*. 615): «*Փաղանգամուշկ*. ծարխոտն կամ *փարանճամուշկ*, ինքն ղաղձն է» (Բժշ.), ուր բերեւս գրելի է *ծագախոտ* կամ *ընծախոտ*, զի *փալանկն* է *ինծ* (Հայկզ.): «*Կարիոփիլոն*. փաղանգամուշկ կամ ծագախոտ» (Գաղ.), լտ. *կարիոֆիլլում*, գղ. *սիրոֆլիէ*. Էմին՝ գղ. *սիրոֆլիէ* ՚ծառ ծագախոտոյ՚. Էմին՝ *լավանդ* ՚ազգ ինչ նարդոսի՚. *փաղանգամուշկ*՝ *լավանտա*, *հիւսամէ օթու*: «*Հապաղի ղարանֆալի [-ֆուլի] ֆարանճամուշքն* յիր համարն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 138). «*Ղարանֆուլի պօստանի*, որ է *ֆարանճամուշքն*» (անդ 163):

[[**Փայլասենի, տե՛ս Բալասենի:**]]

Փայտիչ. «Անթառամ կարմիր ծաղիկ, յորմէ աւել գործեն» (*Խոտբ*. 60):

Փափառ, տե՛ս եւ *Փերփեր*. «Խոտ ինչ անուշ ուտելոյ. *սէմիզ օթ*» (Փիրղալէմ.): «*Բարբառ*, բեր-բեր, փրփրեմ բանջար, *սէմիզօթու*»(*Մանանայ* 442): «Երբ խաղողը սկսի ծաղկիլ եւ ամէն տեղ բբուաշ անուշահոտութիւն մը սփռել, այգին կը պարարտացնեն աղբելով, ապա բահծէր* կ'ընեն առուները, ուր կը սերմանեն բողկ, շողգամ, ստեպղին, *փափառ (սէմիզ օթ)*» (*Այգեգործութիւնը Վանի մէջ*, *Հայ-րենիք* լրագիր, 30 ապրիլ 1895, Գ, ա): *«*Բահծէրել*. բահի ծայրիւ գետին փորել» (Փիրղալէմ.):

Փարայ.

Փարփինայ, *-ի*, որ եւ *Անմեռուկ*, գղ. *պուրպիէ* (*Արարատ* 1909, յուլիս-օգոստոս 655, ուր գրի ընդարձակ):

Փեգանայ, փեգենայ, յն. *բիղանօն*, լտ. *բիւտա*, գղ. *բիւ*. պրս. *փէյղէն* եւ արաբացուցեալ *ֆէյճէն* = *փեգենայ* (Գէորգ):

Փեննայ, փենունայ, գղ. *պիվուան*, յն. *Հպիալտիոն*. պրս. *ֆավանիա*, արբ. *ուտ իւս-սալիպ* (փայտ խաչի). ստոյգ է փեննայ (տե՛ս ի Գէորգ). տե՛ս *բէօնիա* ի Բէստէն Բ 96, ուր ղնէ տճ. *չագայիգ*. գղ. *պիվուան* է յոյնն *բէօնիա*, որ ծագի ի *Պէօնէ*՝ դից բժշկութեան (Լիտրէ): Կայ արբ. *պարանէճ*, *պարունէճ*, յորմէ ծագի գղ. *գարոնիկ*: «*Դարունաճ*. փեննա» (Գաղ.): «*Փանունա* ծաղիկ եւ խոտն. *այու կիւլին* է» (*Արուեստաբանութիւն*, ձեռագիր Անտոնեանց թիւ Զ. ՃԻԶ): Հայկզ. ղնէ զ*փեննայ* յն. *ֆէնիս*, գղ. *անեմոն*: Կայ յն. *բէօնիա*, *պիվուան*, ի հնումն ի գործ եղեալ ի բժշկութեան, բէպէտ եւ Մխ. Գոշ անգիտան ի բժշկութեան ասէ զ*փեննայ*. քննելի: Յո՛ւշ, զի եւ գյոպոպ վարէ նոյն Գոշ իբր արագիլ: *Փեննայի ջուր*. տե՛ս ի *Կտրուկ*: «Մեր վարդապետն Գաղիանոս յիշել է, թէ *փեննայն* եբր ի բազուկն կապեն կամ ի վիզն յուխտաւորին, օգտէ» (Մխ. Հեր. № 120):

«*Ղուտ ըլ-սալիպ*. կպրէբի տակ եւ *փենունա*, որ է խաչափայտն» (Բժշ. Ա. 144): «*Ուդսալիբ*. *փեննա*» (Գաղ. Բ): «*Օդ սալիբ*. *փեննայի տակ*» (*Թրգմ. դեղոց*): «Խոտ մի է, որ կոչի *փենունայ*, եւ ոմանք ասեն ... այլք՝ *պաոնիա*, ոմանք՝ *գեղմինաթ*, այլք՝ *ողիոստոն*, եւ ինքն կպրէբն է» (Բժշ. Ա, *Հայ-բուս*. երես 240): «*Փինոնա*. ոմանք նշնարօտ ասեն, եւ այլք... քահանայատակ, կակծիբակ, *պան-տուստան*, *լուսա-բոն*, խաչափայտն» (Udշ. Բ 358, տե՛ս ի *Կակծիբակ*): «*Ֆուվանիա* , որ է *յաւսալիպն*, որ է խաչափայտն. եւ ինքն խոտ մն է, որ ծաղիկն կարմիր է. եւ ինքն էգ եւ որձ այլ կու լինի. եւ լաւն այն է, որ հոռմցի լինի. տաք եւ չոր է, յերկրորդ *տարաճան*. եւ ինքն ունի զհալողութեան ուժն եւ զկա-պողութեան ուժն եւ օգտէ ըխտաւորին ... եւ միրգն օգտէ *քապուսին* ... եւ իր հունդն օգտէ

ստամոքին վատուժութեան եւ զփորն կու կապէ ... Ասէ Պատնին, թէ էգ եւ որձ է. եւ տերեւն նման է ընկզին տերեւին. եւ այն, որ էգ է, ի ծարերն զէտ նշի կեղեւին նման ունի եւ յորժամ հասնի, կարմրուկ պահ-կներ ունի եւ զէտ նռան հատեր» (Ամրտ. *Անգ. անպ.*, Ալիշան 237): *Հոռոմցի փենուեայ* (Բժշ. է 4):

Փերփեր, -*ի*, որ եւ *Փերփերեն*, *Փրփրեմ*. *փերփեր*, *փրփրեմ*, որ եւ *Անմեռուկ*, խոնկորակ, փրփրեմ. արբ. *ֆիրֆիր* 1. անմեռուկ. 2. մանիշակ. 3. անուշահոտ ինչ (Պօզան.): «*Հասալ* [այս ինքն *յասալին*], որ է գոյնն կանաչ *փերփերի* [ապ. փէրփէրի] գոյն, եւ կայ ի յինքն կարմիր կէտեր շատ. եւ մօտ ֆռանկն *մախալուլ* է. եւ պինդ է ի բանիլն. եւ շատ է, ամէն տեղ կայ» (Սարգիս Բերիացի, *Վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց*, Առաք. Թաւրիժ., տպ. Էջմ., 457):

Ախմարաց փերփեր, անդ 458. այսպէս եւ *աղվաշ բանկ*:

Հորի փերփեր (*Հայբուսակ*, թիւ 1743, 3055, առանց վկայութեան):

Փերփեր Բարի. տե՛ս եւ *Փարփառ*. *ղայա ղօրուղի*, Բժշ., Հայկզ.. տն. *գայա գօրուգու* է գառնադմակ ըստ Պօզան.. տե՛ս *յԱգոխ* (վայրի). տե՛ս *Վայրի ագոխ* = *Անմեռուկ վայրի*, *Հայբուս.* 15: *Փերփեր*, Բժշ. ժԱ 18: Իտ. *ֆարֆարո*, խոտ ինչ. *ասլան փէնչէսի* (Ջախջ.): *Այլգոյոն. փրփրիչ*» (Գաղ.): Լտ. *ախգօօն* է գղ. *ժուբարբ*, *գայա գօրուգու*:

Փերփերան. Հայկզ. նոյն համարի ընդ *Փրփրեմ* եւ դնէ յն. *անտրաքնի*, լտ. *պորտուլակա*: «Բզուրկ բակլէ. *փերփերնի* հունդ» (*Թրգմ. դեղոց*): «*Փերփերանի* հունդ տասն դրամ» (Մխ. Հեր. ԻԳ 50). «Կերակուր՝ *փերփերան* տո՛ւր եփած եւ փերնոկած ոսրն դդմով», անդ 51. «Ա՛ռ *փերփերանի* հունդ հինգ դրամ», անդ 51: «*Անդրքնէ. փերփերան*» (Գաղ. Ա., Բ). «*Անդրքնէ*. փերփերան կամ խոնկորակ կամ անմեռուկ» (Գաղ. Գ). «*Բակլաթ ըլ-Համկա. փալփալնահին*, որ է խոնկորակ» (Գաղ. Գ.). գրածն՝ *բակլաթ ըլ-Համկնա*. արբ. *պագլէթ իւլ-հէմքա*, լտ. *պորտուլակա* (Մենինսքի, *Օնոմաստիկոն*). պրս. *ֆէրֆախ*, անմեռուկ (Պօզան.):

Փինի. [[1.]] բուի նոյն ընդ լտ. *պինկէա*, յորմէ գղ. *պինկէա*, այս ինքն *սասին*, *պեպս*: *Փինի* է *պեն* ըստ Ամիրտովլաթայ, տե՛ս *Բարսիլիկոն* յիմ *Բոգ*.: Հ. Արս. *փինի* դնէ *զՀեմբը*: *Փինի*. Մխ. Գոշ, *Առակք*, ԻԲ, 25. համեմատեա՛ զոր ինչ ասէ Մխ. Գոշ զփինւոյ ընդ այնմ, զոր ասէ որնոտ *զպինուս* ծառոյ. տե՛ս յեղեւին: «*Փինի*, որ է հասարակ *չամ*» (Ինճին., *Նոր Հայաստան*). Հ. Ղեւ. դնէ ի Վստ. *պինուս պինկէա*: «*Արգատ*. ինքն *փինոյ* ծառն է, որ պտուղ չի տար, եւ յիւրմէն սեւ ձիւթ կու շինեն եւ կուպր» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 43ա). այլ տե՛ս *փինոյ պտուղ* (*Հայկ. բուս.* 1523): «Եւ ես անպիտան կու մնամ, թէ այս ի *փինոյ* ծառէն կու հալի եւ իջնու» (Նոյնն, անդ, *ալամվալի*, այս ինքն Դաւիթ մարգարէի մեղր, 17): «Այլ մի՛ առ այս աղբիւր *փինիք* եւ ցրդիք եւ նոնիք տնկեսցուք, զի այսպիսին անպտուղ է» (*Մեկն. Գծ.* ԻԲ, *Բարոյ*. 198): «Ունի [Ատանա] եւ անտառս կաղնի եւ մանաւանդ փինի ծառոց, որով կոչեն հայկազուն բնակիչքն զամենայն *չամ* ծառս. յայն սակս մի ի գաւառաց Ատանոյ ի բարբառ տաճկաց *Սարը չամ* կոչեցաւ, սակս առատութեան ծառոյն» (Հ. Ղուկ. Ինճին., *Նոր Հայաստան* 357):

«Եւ է ի մէջ մայրի անտառացն, որ *փինի* ասեն [ի կողմանս Մամրվանի] եւ *ազատ** *մայրի* կոչեն, որ ոչ սկիզբն տեսեալ ոք կայ եւ ոչ ծայրն հասեալ, զի ասեն, թէ գնացեալ՝ հասանէ մինչեւ ի Կովկաս լեառն՝ ի Դուռն Ալանաց, ի Կասբիական ծովն, որ է Կիլան» (Յակովբ Կարնեցի, *Տեղագիր Վերին Հայոց*, 19). «Վարսուն ոռք երկայն փայտն եւ գրկաչափ լայն եւ հաստ *փինի փայտն*՝ մէն ղուռուշ, որ մինչեւ ի ծայրն ոստ չկայ, որ ի տեսնելն մարդ հիանայ եւ ապուշ մնայ» (անդ 41–42):

**Ազատ մայրի. այլ անուն փինի ծառոյ*". *արյառ*" Ամիրտովլաթայ:

Գետնի փինի. *սանավպար ըլ-էրզ*, յն. *խամէբիտիս*. տե՛ս Ճանկխոտ ի Հայկզ.:

Փինոյ խէժ (*Հայկ. բուսաբ.* 355, 2078): «Թէ եփեն հոռոմ ձիթով [դմկնսոխն] եւ *փինոյ խէժ* խառնեն եւ ծեծեն եւ օծեն ի ձեռքն, որ նղքել լինի, օգտէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 100). տե՛ս եւ ի *Բազիլիկոն* յիմ *Բոգ*., որ եւ *սոնոպըի ծառի խիժ* (Վստ. ՄՂԳ 197, *Հայկ. բուս.* 1391):

Վարի եւ իբր ածական. *փինի փայտ* (Վստ. ՃԾԱ. 104):

[[2.]] «*Փինի*. ազգ մրտոյ յոյժ գիրի, յորմէ ստաշխն եւլանէ. *պեղիասմուս*. Բժշկ. "Արա՛ սպեղանի ի փինւոյ"» (Ստեփ. Կամենից):

Փիփերբ, գղ. *մով*. այս բուի ուղիղն, եւ ոչ՝ *Բիբերբ*, զոր տե՛ս:

Փղինջք. «Պտուղ *փղնջքի* թփոյ ի չափ սիսռան, եւ կորիզ նորա՝ նման կեռասի» (Հ. Նեբս., *Բառք մշեցւոց*): «*Փղինն* նման փշատի, այլ բոլորակածեւ եւ քաղցր յոյժ» [ի Սասուն] (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 201): «*Բղինջք*. է պտուղ ինչ զնտակաձեւ մեծ քան զսիսեռան, կարծրակորիզ, սակաւամիս, բայց յոյժ համեղ. յաճախ լինի ի Սասուն ի լերինս նորա մեծամեծ ծառս, որոյ փայտն ամուր եւ խիտ է յոյժ» (*Գւռ.* Բ 19):

Փղնջքի. «Թփանման բոյս կարծրոստ. պտուղն՝ *փղինջք*» (Հ. Նեբս., *Բառք մշեցւոց*):

Փղոմոս. գղ. *բուլոն բլան*. Բրս. *Վեց*. Թ 186: Նոյն եւ *Փտոռ* հայերէն (տե՛ս *Հայբուսակ* թիւք 3109-11), ուր սխալ է *փողոսեաւ*° փոխ. *փղոմոսեաւ*:

Փնկայ, փնկի. «Է բանջար ինչ, որ ի լերինս եւ ի մայրիս բուսանի խիտ առ խիտ. տերեւքն՝ նման մաղտանոսի, եւ արմատն՝ դեղին, անուշահոտ, զոր հիւսեալ՝ չորացուցանեն եւ կանաչ տապակեալ՝ ուտեն» (*Գւռ.* Բ 43): *Փնկա*, *փնկայ* յիշէ Ինճիճեան ի կարգ բանջարոց Մշոյ, 41, 183: «*Փնկի*. բանջար վայրի» (*Մանանայ* 452):

Փշակաղնի. Բժշ. Ա. 373. «Ի կաղնի ծառն պտուղ լինի, ո՛չ կաղին է, ո՛չ՝ գդբոր, ո՛չ՝ շկլոր, ապա խոշոր եւ գերդ փուշ փուշ լինի» (Բժշ. Ա., *Հայբուս.* թիւ 2320): Մէնէվիշեան, *Բուսաբանութիւն*, երես 214. *կուերկուս սուբեր*, գղ. *լիէժ* կոչէ. *փշակաղնի*: *Բնսն ապխնոցա*. կէս գաղղիերէն, կէս լատիներէն ի լատիներէն պարգեւագրին, զոր շնորհեաց արքայ Լեւոն Ա. յամին 1212 Տեւտոնեան (Ալաման) ձիաւորաց. տե՛ս *Սիսուան*, 200ա եւ ծան. 2, 201բ ի ծան.: Տե՛ս եւ *Մոխրի*:

Փշատ. պրս. *սինճիտ* փշատ, թուրք. *իկտէ* (Գէորգ). *սինճիտի բաղի կարմիր փշատ* (Գէորգ): Գղ. *օլիվ դը Բոհեմ* ըստ Ուղուրիկեանի (տե՛ս *Մասիս*, 10/22 յուլիս 1980): «*Կոփ* [*ուղղելի Թուփ կուկի*]. այլ ցեղ ամբրաւ, որ գերդ *փշատ* է» (*Թրգմ. դեղոց*): «*Ղուպայրայ*, որ հայերէն *փշատ* ասեն, եւ պ̅ *սանճատ* ասէ, եւ թ̅ *իկտայ* ասէ. լաւն այն է, որ յիստակ լինի ... չի բողուր մարդ խմօղ շատ հարբենայ եւ զփորն կու կապէ ... զմերձաւորութիւնն կու կտրէ, եւ ծաղիկն զկանանց սերմն կու շարժէ, եւ զիր չարութիւնն տանի *փանիռն*. եւ իր փոխանն *նապղն* է: Իպն Պայտարն ասէ, թէ զծաղիկն ժողվեն եւ յիւրմէն ճիւղ մի կտրեն, որ ծայրն ա̅ տերեւն ունենայ եւ զայն ծաղիկն ի հօն շարեն եւ *Հալղայ* այնեն եւ զգլուխն բանան եւ ի գլուխն անցնեն. զմարդն ուրախ առնէ եւ զսիրտն խնդացնէ եւ զհոգսն տանի» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 171ա):

«*Փշատի ծառ*» (*Հայկ. բուսաբ.* 280): — «Ֆրանչիսկոս. էդ ի՞նչ *խեմիչ* այ *փշատ** ասացածդ: Սաֆսար. *Փշատի* ծառն մեծ հաստ ու փշոտ ծառ այ, որ ուրիշ բանի պէտք չի, թէ ոչ այրելու համար, *դարա* շատ խոչ եւ փուշ ունի. էնտուր էս պտղի անունն *փշատ* այ, իբր թէ փշահատ: *Ամմա* մոխրագոյն եւ պզտիկ տերեւ ունի, ծաղկած ժամանակն՝ խիստ անուշահոտ: Պտուղ ունի երկայն ինչպէս *զէյթուն* քաղցրահամ. կեղպն՝ բոցագոյն, ներսն՝ բամբակագոյն, ուտելիք կորիզն *ճիժի զէյթունի* նման» (Յ. Յ. Տրէօտէր, *Արամեան լեզուին գանձ*, Բզմ. 1880, էջ 344):

*«*Թրապզան խուրմայի է տեսք փշատի*» (Ինճիճ. 382). *ար. չորրիզա*, *սորբ*. այլ սխալ է. զի նկարագիրն է փշատուոյ. Լըկլէր, Գ, 1627 «*ձիթապտղոյ չափ է*» կ'ըսէ:

Փշատենի, փշատի. [[տե՛ս եւ *Փշատ*]]. *արգուզինէ*°. կայ ի Լիտրէ *պալիիւր*. Աւգեր՝ *վիտոն, իյռէ աղանը*: Պրս. *սինճիտի*, յունապ (Գէորգ): «Նշենիք, քնարենիք, *փշատենիք*» (*Յղ. ծառոց*):

Էմին *սեաւ փշատ* դնէ *զսեբաստ* եւ *սեաւ փշատի*՝ *զսեբաստին*:

Փշատի, գիւղ Ակնայ. տե՛ս յԻնճիճ., *Նոր Հայաստան*, 308:

Փշաքեղ. սխալ է, տե՛ս *Իշաքեղ*:

Փշփշուկ. բանջար վայրի (*Մանանայ* 45): «*Փշփշուկ*. խոտ ինչ ուտելոյ» (Փիրղալէմ):

Փոբոբ. «Է բոյս ինչ ընդ մէջ թփոյ եւ խոտոյ, որ փայտ է եւ յամենայն ամի նորոգ բուսանի. նմանս իմն երեւի ընդ գունոյն եւ ընդ տերեւոյն տօսախի, զոր ի սեւորակ ներկս ի կիր առնուն» (*Գւռ.* Ա. 52): «*Փոբոբ*. տօսախի նման բուփ մի կամ բոյս տարեկան, որ սեւ ներկելու ի գործ ածուի: Այսչափ նշանակած էր բանասէր մի» (*Հայբուս.* 3079):

Փոխի կամ փոխ կամ բող. Ինճիճ. 3940:

Փոքի. Բժշ. Ա., *Հայկ. բուս.* 3095:

Փոնդատ, յն. *մազա*. «*Մայզարա. փոնդատ*» (*Թրգմ. դեղոց*): «*Փոնդատի* ալիւր» (*Տնպ*. Ա. 542:

Փոնկալ. «Ա՛ռ բազրցախի տակի կեղեւ դ̄ դ̄ր, փռանկի փոշի [կամ փշտի] հունտ եւ սեւ պղպեղ» (Նորագիր *Բժշկարան* Ազգային մատենադարանի Գալատայի). ի լուս.՝ "փուշ մի է, ն̄. *փոնկալ* ասէ, թուրք. *պուտղանան* կ՛ասէ":

Փստփստուկ, որ եւ *Ցորենուկ*:

Փտոր, **փտուռ**. *փայ. ուռ* կամ *փայյ. ուռ*. տե՛ս եւ ի *Գաղմագիճ յՕտար*. կայ արբ. *ֆուտր* կամ *ֆուտուր* 'սունկ'. տե՛ս *Գոտիրոն* ի Մարսել Դըվիկ. «*Մարկ. փտուռ*» (Գաղ. Ա.), ուր անորոշ է գրեալն *փոսուռ* կամ *փուտուռ*. «*Մարկ. փրուր*» (Գաղ. Դ). տե՛ս եւ *Փորոր*. «Դիհ. *փիրու*» (Գաղ. Ա, Գ, Դ):

Փրերուկ. *խուրմայ* (Սիմէոն Կամերկապցի). *Հայկ. բուսաբ.*, երես 60 ի թիւն 221. տե՛ս եւ *Ագռաւի ծաղիկ* ի նոյն բառագրոց:

Փրիրուկ. արմաւ (Բոգ. տպ. ի 1728). *Հայկ. բուսաբ.*, երես 60, ի թիւն 221. տե՛ս եւ *Ագռաւի ծաղիկ* ի նոյն բառագրոց:

Փրփրեմ, *-ի*, որ եւ *Անմեռուկ*, *Փերփերան*. թուրքերէն *փիրփիրիմ* (Գէորգ ի *Փէրփէշէն*): «*Փրփրեմի* հնտի ջուր» (Մխ. Հեր. ԺԲ 24): «*Փրփրեմի* հնտի կարն», անդ, ԺԲ 24, ԺԷ 30, ԺԹ 32, որ եւ «*Փերփերանի* հնտին կարն» (ԼԴ 98). «Եղերդակն եւ *փրփրեմ*», անդ ԺԵ 27. «Հազարն եւ *փրփրեմն*», անդ, ԻԲ 46. «*Փրփրեմի* հունդ», անդ ԻԲ 43 երկիցս, ԻԳ 55. «*Փրփրեմի* ջուր», անդ, ԻԲ 45, ԼԴ 96-97:

Ք

Քարարուկ. տե՛ս *Կոտտեակ*:

Քալէշ. ազգ սոխոյ (Արանասեանց 50). *կալէշ*, տե՛ս ի Խաչատուր Քհ. Տէր-Վարդանեան:

Քահանայատակ. արբ. *քէհիանա* (*Հայկ. բուս.* 3123):

Քահանայուկ, (*Հայկ. բուս.* 1009, ե. 239):

Քաղ, *Պիտ.* 394:

Քաղրան, յն. *քալվանի*, լտ. *գալբանում*:

Քաղցրամարուխ. Ասար, գղ. *ռեգլիս*:

Քաղցր հունտ. տե՛ս յ*Անիսոն*. թրգմ. արաբականանին *Հալվա* ('քաղցր կուտ') (Լըկլէր Ա. թիւ 159, ծան. եւ թիւ 571):

Քապրենի, տե՛ս *Կապարենի*:

Քապրխոտ, Բժշ. Ա. 330. բուի գրելի *կապարխոտ*:

Քապրցախ. տե՛ս *Կապրցախ*:

Քաջբեր. խաղող կարմրագոյն (Հ. Ներս., *Բառք մշեցոց*):

Քաջվարդ. փենունեայ (Բժշ.):

Քառ. տե՛ս *Կապար*:

Քարախունկ. գղ. *բդելլիում*. ազգ ինչ բեւեկնոյ է, որ տայ զքարախունկ (*Հայկ. բուս.* 2124): «*Քարախունկ*. բեղօշ ծառոյն խիժ պատուական» (Բժշ., Հայկզ. *Քարախունկ*):

Քարակոծիծ. «Բասէն եւ Ալաշկերտ կորնկայի սերմ ունեցողները հաւասար չափով ցորենի հետ կը խառնէին ու կ'ուտէին: Կորնկայ ըսուածը առոյտի մէկ տեսակն է, զոր կը ցանեն կենդանիներու ձմրան ուտելիքի համար: Նոյնպէս Ալաշկերտի լեռները փխրուն քարերուն վրայ *քարակոծիծ* անունով բազուկի սերմի նման կոծիծները քերելով՝ բերին ու հաց եփեցին, կերան, հաւասար ալիւր խառնելով: Թէ եւ այդ կոծիծները ամէն տարի կը գտնուին, բայց այս տարի պէտքն զգալի եղաւ. անունն ալ "Երկնապարգեւ մանանայ" դրին» (Թուղթ ի Կարնոյ գրեալ ի 28 մայիսի 1894, *Հայրենիք* ամսագիր Կ. Պոլսի, 11 յունիս 1894, Ա., զ):

Քարաձանձ, **քարձանձ**. «*Պիտրէս. քարաձանձ*» (Գաղ. Ա). *պիտրէս* է թերեւս *պիտրիէս*, յն. *բի-*

դիուսա, չօփորք: «*Հայպրա. քարձանձն*» (Բժշ. Ա. 144): «*Քարաձունձ*. լտ. *սալվիա*, տճ. *տիշ օթու*» (Ստեփ. Շահրիմ.), գղ. *սոժ*: «*Քարձանձ*. ուրձն կամ խոտ» (*Բնրբ. բոգ.*), գրածն՝ *քարձանձուրձն*: «Կաք-ուարօտ. *քարձանձ*» (Ասար): Տե՛ս եւ *կովացնծուկ, մարգացնծու* ի Ստ. Շահրիման.:

Քարանանուխ, որ եւ *սարի անանուխ, լերին անանուխ*, [[գղ.]] *պուլիո*. «Ա՛ռ սակաւ մի *գուփայ* եւ սակաւ մի լերին դաղձն, որ է *քարաննուխն*. զայսոնք եփէ՛ մեղրաջրով եւ քամէ եւ տո՛ւր, որ խմէ» (Մխ. Հեր., ԼԴ, 100): «Եւ տե՛ս, թէ աչքն ցաւի մեղուին, *քարաննուխ* ծխեա՛» (*Վստ.* ՄԴ 191) եւ ի ծան.՝ "Բնագիրն ունի *օրիգանում*, որ է 'զուիրակ' կամ 'կորնգան' ":

Քարասերմնիկ, գղ. *գրեմիյ* (եւ էմին). թարգմ. յունականին *լիթօսփերմօն*, լտ. *լիթոսպերմում*. «*Քարասերմնիկ*. խոտ, որ միայն ի քարինս բուսանի, որոյ սերմն է կորեակ, *լիթոսպերմոն*. Բժշկ.» (Ստեփ. Կամենից):

Քարափառփառ, քրփառփառ. տե՛ս եւ *Փերփեր քարի*. բո՞յս. տե՛ս *Գտո.* Ա. 97. իցէ *պէհլաղ էլ-հաճար, լիքեն* (Լըկլէր Ա. 372):

Քարաքոս, գղ. *լիքեն*. «*Քարագործ*. քարերի վրայի *փառն*» (*Գտո.* Ա. 99). «Կարմիր *քարաքոս*», Զ *քարագոս* (Բժշ. Է 20). «Կարմիր *քարաքոս*» (Բժշ. ԺԱ. 20):

Քարբեկ, լտ. *սախսիֆրագում* (Հայկզ.). էմին՝ *պաս-պիեր* եւ *սախսիֆրաժ*. գղ. *սախսիֆրաժ*. «*Քարբեկ*. խոտ, որ զքարն յերիկամունսն մարդոյ բեկանէ. *սախսիֆրագում, սեսելիս. Գաղ. բառ.*» (Ստեփ. Կամենից):

Քարգղեր. «*Քարգղեր*. պզտիկ ծառ մի է. *քարազգեար*, կրկիտ» (Հ. Մկ. Անանեան, *Բոգ. աշխ.-գրար.*):

Քարի քրեւս, որ եւ *Ազատքեղ*. յն. *պետրոսելինոն*. «Քարի *քրէվսի* ունտ» (Բժշ. Ա. 48):

Քարխնծորի. վայրի կարմիր խնծոր (Խոտբշ. 62). կայ գղ. *բոկլոտիէ, պոմիէ սովաժ*:

Քարխոտ, [[Թուրք.]] *գարա գաֆէս* (Պօզան)., գղ. *գրանդ կոնսուդ*. իտ. *կոնսոլիդա մաջջորէ*. յն. *սիմֆիդոն*, լտ. *սիմֆիտում, սոլիդագո* (Հայկզ.), տճ. *սիմֆիթ* (Պօզան.). «*Քարխոտ*. խոտ, որ '*մեծ հայվազ*' կոչի, ի մէջ քարանց բուսանի, զրարակ ոստս ունի, է անուշահոտ եւ քաղցրահամ. *սիմֆիտում*. Բժշկ., *Գաղ. բառ.*» (Ստեփ. Կամենից):

Քարհացի. գղ. *օռն՞. օռն բուի կարնտերեւի*, տե՛ս. Վիրգ., *Մշ.*, Բ, ծան. 69, ուր եւ ի ծան. 71 կոչի *ազատ հացի*. «Է ծառ ինչ վայրի, որոյ փայտն ամուր է, եւ ոստք իւր՝ հանդէպ միմեանց» (*Գտո.* Բ 44). յիշէ եւ Իննին. 183 ի կարգի ծառոց Մշոյ:

[[**Քարձանձ, տե՛ս Քարաձանձ:**]]

Քարճին. պրս. *կէլուկիյր*, *քարճին*. է տեսակ ինչ լեռնային տանձի. *ախլագ. պօղազ պլան*» (Տ. Գէորգ, *Պրս.-հայ.*). գղ. *պուար դ'անգուաս*. դաժան տանձ, *պօղազ պլան արմուտու*» (էմին). «Վայրի տանձ» (Հ. Ներս., *Բառք մշեցւոց, Գտո.* Ա. 37). «*Գարճին*, որ է տանձ վայրի» (Իննին., *Նոր Հայաստան*, 84). «*Քարճին*. է վայրի տանձ, որ ի վերջն հոկտեմբերի եւ ի նոյեմբերի հասունանայ եւ լինի ի լերինս ինքնեկ» (*Գտո.* Բ 45): «*Քարչին*. վայրի տանձ» (*Մանանայ*, 452):

Քարնշուշ, ի *Նշօշ* բառէն՞. տճ. *թաշ նանէսի* (*Գտո.* Ա. 37):

Քարոս. տե՛ս *Կարաւս:*

Քարսոն.

Քաւառ. տե՛ս *Կապար*. «Պրաս. պռաս կամ *քաւառ*» (*Բառգիրք* հայոց Երեմիայ վրդ., Լիվոռնոյ 1698 երես 273): «Քառ կամ *քաւառ*, այն է *քէպէրէ*» եւն (Իննին. 40):

Քափուր. տե՛ս *Կափուր:*

Քեղ, գղ. *բերբ՞*, իտ. *սիո* կամ *գորգոլեստրո՞*. իտ. *սեպլո* է խոտ ինչ կարնարուղի (Ջախջ.). աստի *Ազատքեղ, Իշաքեղ, Քեղակարօս*. «*Քեղ*. զօրութիւն ունի հովային» (Բժշ. Ա. 91, յընդօրինակութենէ Սուքրեանի). *քեղ* յիշի ի *Գաղթականութեան Վասպուրականի*, երես 61: «*Քեխ*. բոյս է բարձր իբր մարդաչափ. ծղօտն՝ զրեթէ բազկաչափ բոլորակ, տերեւն՝ մեծ եղնդէտ, կեղեւեն զծղօտն եւ ուտեն. զովարար է» (*Գտո.* Ա. 37): «*Քեղ*. է միւս այլ տեսակ բերխաշ խոտոյ, համովն՝ սակաւ ինչ լեղի, այլ օգտակար» (*Գտո.* Ա. 49): «*Քեղ*. է բանջար ինչ լեռնային եղէգանման, զոր սակաւ խարշեն եւ դնեն

յաղջուր եւ զանազան կերակուր եփեն» (*Գւռ.* Բ 44): Յիշէ եւ Ինճիճ. ի կարգի բանջարոց Մշոյ, 183: «Քաշմն. *քեղոյ սերմ*» (*Թրգմ. դեղոց*): «Դակիկ, որ է մանի [*մանր*] *քեղոյ* սերմ» (Գաղ. Գ): «Հիպոկրատէս *պողիպոն* ասէ. ի գետեզր բուսանի» (Բժշ. Ա. 91): «*Քեղ.* պարարտ եւ մացառանման բանջար հոտաւէտ, որոյ ցօղուն խաշեն, աղջուր դնեն եւ իւղով տապակեն» (*Մանանայ* 452): «Քեղ, *-ոյ*, խոտ. զոնամրի տեսակ է, որ զինքն ըստ արեգականն ի ծագմանէն մինչեւ ցմուտ նորին թէպէտ եւ ամպ լիցի, շուրջ ածէ. *քրեսոոն.* Գաղ. *բառ.*, Բժշկ. "Քեղոյ սերմն է օգուտ սմին"» (Ստեփ. Կամենից): Կայ լտ. *քրեսոուս*, գղ. տեսակ իմն *շիկորէի*: *Քեղ* Ա. Բժշկարանի = յն. *պեպլոս*՝ տեսակ իմն *էօֆորբի*, առ հասարակ *ռեվեյ-մատեն*. իսկ պեպլիոն = վայրի *պուրպիէ* = գղ. *ռեվեյ-մատեն* = *էուֆորբիա Հելիոսկոպիա* (Լիտրէ):

Քեղակարօս.

Քեղասերմ (Բժշ. ԺԱ. 15):

Քեներփիւկ, տե՛ս եւ *Գինարր*, *Գնարրուկ* (*Գաղթականութիւն Վասպուրականի*, 51, 57): «Լինի յայս լեառն [Վարագայ] մանուշակ, *քենեփիւկ* [էջ 38 գրէ *քեներփիւկ*], որ է ծաղիկ կապուտագոյն եւ անուշահոտ յոյժ, նման ձեւոյ շուշանի, յորոց ոմանք ի ներքոյ ծաղկին բերեն սպիտակ ինչ փոշի պատեալ շուրջանակի, զոր ժողովեալ բնակչացն՝ ի գործ ածեն ի դեղ ցաւոց եւ զինուբեան աչաց» (Ինճիճ., *Նոր Հայաստան*, 147 եւ 38):

«*Գինարրուկ.* կապուտափայլ ծաղիկ. ազնիւ եւ անուշահոտ է ծաղիկս այս, քան զայլ ամենայն ծաղկունս լերին Վարագայ, զորմէ ասեն ոմանք, թէ չգտանի յայլ ուրեք. սակայն մարթ է գտանել ի Բիւրակնեան լերինս կամ յայլ ջրարուխ մարմանդավայրս» (Խրիմեան, *Հրաւիրակ արարատեան*):

«Եթէ նա *[Արիստղոմ Յովհաննիսեանց]* նայած լինէր Աննենկովի բուսաբանական բառարանը, նա կը տեսնէր, որ հայ ժողովուրդն այս բոյսը (ռուս. *աւրիկուլա* = գղ. *օրեյ դ'ուրս**) կոչում է *քնարրուկ* (ռուս. *գնարրուկ*, երես 272)» (Ստ. Մալխասեանց, *Քննադատութիւն Արիստղոմ Յովհաննիսեանցի Ռուսերէն-հայերէն բառարանին*), որ տպագրեալ է ի Տփղիս 1888, *Արաքս* Սիմէոն Գուլամիրեանցի, 1899, հ. Ա., երես 154. այս քննադատութիւն հրատարակեալ է անդ յերեսսն 137-160. հարցի ցԳուլամիրեանց (յամին 1896), թէ զի՞նչ է Աննենկովի բուսաբանական բառարանն, այլ չկարաց տեղեկացուցանել զիս. տե՛ս զայս Աննենկով եւ ի բառն *Կնձի*:

*«*Օրեյ դ'ուրս. պրիմըվեր օրեյ դ'ուրս, պրիուլա աուրիկուլա, պրիմուլաաէ*» (Լիտրէ, յ*Օրեյ* 18. տե՛ս *պրիմուլա աուրիկուլատա* ի *Հայբուս.* թիւ 2512:

Քեքերդ, գղ. *սիլֆիում*°, *սաա փոէտիդա*°. «*Սիլփու. քեքերդ*, որ է ուպանատակ» (Գաղ. Ա). «*Սիլփու. քեքերբ*, որ է ուպանի տակ» (Գաղ. Գ):

Քնարենի, գղ. *կորնուէյ*. տե՛ս եւ սատէն *Ներգիւն*. տե՛ս *Նապ*, *Նապխ* ի *Հայկ. բուսաբ.* բ. 2172. տե՛ս եւ *Քունար* 3209. պրս. «*քիւնար* է տեսակ իմն մրգոյ. թուրքերէն *սիտրէ նէմիշի*» (Գէորգ, *Բոգ. պրս.-հայ.*): «Թրենիք, Եշենիք, քնարենիք, փշատենիք» (*Յղ. ծառոց*): Նա եւ Հրաչեայ Աճառեան ստուգաբանէ իբրեւ զիս. «*Քնար* (բոյսը): Այս բառը առանձին գործածուած չէ, բայց իրմէ են *քնարուկ* Ագար., *քնարենի*, *Հրու.* 3199. երկուքն ալ ծառերու անուններ = պրս. *քիւնար* «տեսակ մը ծառ եւ անոր պտուղը. տճկ. արբ. *սիդր*, լտ. *զիզիփուս սպինա Քրիստի* փշոտ բոյսը. նոյնը նաեւ արաբ. *քիւնար*, զոր *Գամուս* պարսկերէն փոխառեալ կը համարէ» [այսպ.] (*Հանդէս ամսօրեայ* 1908, ապրիլ. 121բ, թիւ 9):

Քնարուկ, *ապարալսամոնն*. «Կիտրոնն եւ ապա *բալսամոնն* եւ դափնին եւ ձիթենին գեղեցիկ եւ սերկեւիլն եւ մուրտն եւ ընկոյզն եւ նուշն եւ *քնարուկն* եւ հաճարուկն եւ թուզն եւ նուռնն եւ հոյնն» (Ագար. 478):

Քողակ.

Քուռար. արբ. *քիւրրաս*, պրաս, գղ. *պուառո*. «*Պռասիոն. քուռար*» (Բժշ. Ա. 144):

Քուրիմ, թուրքերէն° *գուրիմ*. տե՛ս ի *Սորեակ*. գղ. *սորգո*, տե՛ս եւ *Հուլկ*. «Է ազգ ինչ ընտիր ընդոյ մեծ քան զկորեակ, որոյ հասկն աւելի քան զթիզ մարդոյ երկար ձգի, իսկ թանձրութիւն՝ ըստ բարձրութեան մատին մարդոյ, իսկ երկայնութիւն բուսոյն ի մարդահասակ մինչեւ եղանէ եւ զանցանէ,

զոր իբրեւ գրրինձ զկնեպն հանեն գործեօք կորկոտակազմից, յորմէ դոյն ինչ արկեալ յեփոց՝ անեցուն գոլով՝ լնու զամանն ողջոյն եւ բանձրանայ, զոր ըստ հանոյից մարթ է եփել իբրեւ զեղինձ կամ պլուր. համով է ախորժելի եւ օգտակար, մինչեւ հիւանդաց զայն միայն մատակարարել» (*Գւռ.* Ա. 41): «*Քուրիմ. խլիմ*, որ է հաւատալի [այս ինքն հաւերու տալու] հատն մանանխոյ» (*Գւռ.* Ա. 96): «*Քուրիմ.* անուն ընդոյ փոքրկան» (*Գւռ.* Բ 48): «Սորեակ. սորեկ, *քուրիմ*, լտ. *մելիկա սորգում* [գղ. *սորգօ*] տեսակ է կորեկի, որոյ է բազում ծղօտք եղեգնաձեւք ցուք ոտնաչափ բարձր, տերեւն՝ ոտնաչափ երկայն, չորս մատնաչափ լայն: Ծաղիկն խուրձ է հասկաձեւ, երկայն ոտնաչափ մի» (Ստ. Շահրիման.):

Քռեկ. «*Շախրուն. քռեկ*» (Բժշ. Ա. 145). «*Պրինգ. շախրուն*, որ է վայրի խաշխաշ» (անդ 145):

Քռեկան, Բժշ., Ասար: «Ա՛ռ *քռիկանն*, որ է *շպրամն* [ի վերեւն գրի "սուտլուկէն, որ է *կաղցնա*"] եւ եփէ՛ զինքն ջրով եւ զջուրն քամէ՛ ի *մաթրաթ* մի» (*Արուեստարանութիւն*, ձեռագիր Անտոնեանց): Պրս. «*չէփրէմ*, թուրքերէն *սիւտլիւկէն* կամ մի տեսակն նորա» (Գէորգ), գրեա՛ ամբողջ. որ եւ պրս. «*չիրլկիյա* = կաքնխոտ» (Գէորգ): Արբ. *շորրոմ, ֆօֆորը պխոխւզ, ֆօֆորրխա պխոխւզա* (Իբն էլ-Պէյտար հ. Բ թիւ 1276): «*Շիպրիմն*, որ է կաղնեանա, որ է *սութլիկէն*» եւն (Ամրտ., *Անգ. անպ.*, *Հայրուսակ* 1277, գրեա՞): «*Շպրուն*. կաղնչնանի տակ եւ անվնաս, մծրնցին ասէ» (Բժշ. Ա. 145): «*Քռեկան* կամ ըստ մծրնացւոց՝ կաղնչնայ. իտ. *ճաուլա* [գղ. *տիթիմալ*], արբ. *սէյսէպ*. ծղօտն՝ ոտնաչափ բարձր, նիւղալից, տերեւն՝ նման սոնւոյ, ծաղիկն՝ մանր, խստագոյն» (Ստ. Շահրիման.):

Քռիկան, գղ. *էպիւրժ, կատապիւս*, իտ. *կատապուցցա* ի Զախջ.. «*Շրրամ. քռիկան*» (*Թրգմ. դեղոց*): «*Կռիկանն*, որ է *շպրիմն*» (Բժշ. Բ 548): Զկայ պրս. *չէպրէմ*, գղ. *էպիւրժ*. տե՛ս *լաթհիրիս* ի Բէստէն Բ 157, ուր *թիթհիմալուս*, 173, գրի արբ. *չէվրիմ*, պրս. *չէրաէմ*. պրս. «*չէպրէմ*, տճ. *սիւտլիւյէն*, կաղանչանան» (Պօզան.):

Քսին. «Այլ եւ յանշունչս գտանես այսպիսի զօրութիւնս ի բոյսս եւ ի *քսինս*» [*քարինս*"] (Մագս., *Ի Դիոն.*):

Քսխայ. «*Քսխայ*. մանտրտիկ սոխերը, զոր կը զատեն ու ուրիշ տեղ կը տնկեն, որ անին. մանրասոխ» (Հ. Մկ. Անան., *Բոգ. աշխ.-գրր.*):

Քսուկ, (Փիլ., *Յոջխն.*, Բ 104):

Քրեւս, քրէվս, քրէֆս. տե՛ս *Կարօս*: *Քարի քրէվս* (Բժշ. Ա. 48), թրգմ. յունականին *բէտռօսէլինօն*, որ եւ *Ազատքեղ*: «*Քարի քրէվսի* ունտ» (Բժշ. Ա. 48):

Քրսամն -*ման*, -*մամբ*. այս բուի ուղիղն, եւ ո՛չ՝ *քիսամն* [[գծով ջնջուած ու՝ "գրեա՛ *Քրսամն*. *քրսամն* թուի ուղիղն]]. շփոթութիւն *Ի* եւ *Ր* նշանագրաց. *քրսամն*, էմին՝ գղ. *օրոբ, ճաս*. պրս. *քէրսէնէ* (Գէորգ). արբ. *քէրսէննա* (Լըկլէր Գ թիւ 1912). *օրոբ* = *կէրիսինէ* (Ալգեր). *օրոբանչ* = *խանիգ էլ-խաննէք էլ-քէրսէնա* (տե՛ս *յԱռիւծխոտ*). իսկ արբ. *գըրսաննէ, գըրսաննէթ* = ակֆան, ուղտափուշ (Պօզան.). արբ. *քարսանա* = *էրինգիում* (Լըկլէր Գ թիւ 1754). իտ. *էրինջէ* = *գըրսաննէթ* (վիեննն. իտ.). կայ յն. *կօննարոս* փշոտ բուփ. «*Քրսամամբ* խնուին զզօրութիւնս [այս ինքն զարուեստ՝ զառնի անդամս] տանջելոցն եւ զաւազանս սրբալս վարէին ընդ նստոյ տեղիս» (Եւս., *Պտմ.*, Գ, զ, 158). *քրսամամբ* եւ Զ Աբրահամ երիցու. իսկ Նոր հայկզ. գրէ. «*Քիսամն, ման*, գ. ... *Քիսամն*, *որոպոս*. Հին բռգ.: *Քիսամամբ* (կամ *քրսամամբ*) խնուին զզօրութիւնս (այս ինքն զարութիւնս) տանջելոց. Եւս. *Պտմ.* Գ, 6»: «*Որոպոս*. *քիսամն*» (Գաղ. Ա.):

[[**Քրփառփառ**, տե՛ս **Քարափառփառ**:]]

Քրքում, -*քմոյ*, -ով եւ *քրմի, ի քրմէ*. եբր. *քարքօմ*, արբ. *քիւրքիւմ*, յն. *քրօքօս, քրօքօն*, լտ. *կրոկիւս, կրոկում*, սանսկրիտ *կիւնկիւմա*, տե՛ս *Կրօսին* ի Լիտրէ, Յաւել.: [2–4 փետրուար 1908] պրս. «*կիւրկիւմ*. տե՛ս *զէրտէչաւ* [որ է կարծեմ գղ. *կիւրկիւմա*]. իսկ ըստ ոմանց՝ *քրքում*, արբ. *զաֆրան*» (Գէորգ, *Բոգ. պրս.-հայ.*): Պրս. *կիւրկիւմ* չիք ի Հիւբշման: Արբ. «*քիւրքիւմ. քրքում*» (Պօզան.). պրս. «*կիւրկիւմ. քրքում*» (Պօզան.): Եբր. *քարքօքոմ* (Նոր հայկզ. ի *Քրքում*): Գրեա՛ զիրն էլ-Պէյտար, Գ 1917, *քորքոմ, քուրքումա*, ուր *քորքոմ* կոչի եւ *սաֆրան*. տե՛ս անդ Բ 1110 եւ *զաֆերան, սաֆրան* (*կրոկուս սատիվուս*), ուր նոյնպէս հոմանիշ դնի *քորքոմ*: Ըստ Կ. Յ. Բասմաջեանի (*Բանասէր* 1907, թիւ 2, երես 55–56)՝ *քրքում* ոչ է լտ. *կրոկուս*, գղ. *սաֆրան*, այլ՝ *կուրկումա* (գրեա՛ ամբողջ):

«Նարդոս և *քրքում*, խունկնեղէգն և կինամոմոն, հանդերձ ամենայն ծառովք [տպ. ծառօք] Լիբանանու» (Երգ երգոց Դ 14): — «Եւ արդ՝ զիա՞րդ իմացուք զայս, զի թէ ամենայն իմիք, որ ունի գրոյս, սերմն անուանեցաւ, և ահա տեսանեմք, զի եղեգան սերմն ոչ գոյ, և ո՛չ սիզոյ, և ո՛չ *քրքմի*, և ո՛չ պրտուի» (Բրս., *Վեցաւր.* Ե. 83): — «Մանուշակք և վարդք և *քրքում* և նարդէս» (Փիլոն, *Յղ. յառաջխն.*, Բ 106). «Մանուշակք և վարդք և *քրքում*», անդ 119:

«Ունի [Ճենաստան] և իրէշ և մուշկն և սիրամարգ շատ, *քրքում* անբաւ, ապրիշում շատ և ազնիւ» (Խոր. *Աշխարհացոյց*, 616), որ *յԸնդարձակեալ աշխարհացուցին*, 46, գրի. «Ունի իրէշ և մուշկ և սիրամարգ [տպ. շիրամարգ] շատ և այլ հաւս պիտանիս և *քրքումս* անբաւս, մինչ զի հեծեալ ոք ի սպիտակս [այսպէս Զ, իսկ տպ.՝ ի սպիտակ], գերդակ ձիով, սպիտակ բազէիւ երբեալ յորս՝ դառնայ դեղնացեալ ամենեւին». վերջին մասն բուի ուղղելի՝ «մինչ զի հեծեալ ոք ի սպիտակս [և] սպիտակ բազէիւ երբեալ յորս՝ դառնայ գերդակ ձիով, դեղնացեալ ամենեւին»: Համեմատե՛ զայս վկայութիւն Խորենացւոյ *Աշխարհացուցին* ընդ ՁԱ գլխոյ Բ գրոց *Պատմութեան* նորին. տե՛ս խոնարհագոյն ի բառն *Քրքմաւէտ*: — «Զինչ և սքանչելի խառնակութիւնն ամպայարուցին և պանծալւոյն Հռեայ, յորժամ զնոսա ամաչեցուցեալս [ամաչեցեալս՞] հաւանեցուցանէ ի միջաւրէին, թէպէտ և բանարարքն հանդերձ չափովն ողոքիցեն զնա, անիարս ի ներքոյ տարածելով ցաւղալիցս և *քրքում* ի վեր բուսեալս յերկրէ և նարդոս» (Գր. Նազ., *Առաջին արձանական Յուլիանոսի*), որ ի Նոննոսի *Մեկնութեանն առասպելաց*, Գ, իդ, գրեալ է. «Ապա զարդարեալ՝ ելանէ [Հերա] առ Զեւս և շարժէ զնա ի տռփանս և ի պակշոտութիւն. և ապա երկիր բխեաց զխոտս և զծաղիկս, որզան՝ կրոկոս, ղովտոս և յակինտոս», Զ «կրոկոս, պղովտոս և յատինկոս»:

Գր. Նիւսացի, *Մեկն. Երգոց երգոյն.* խնդրելի վկայութիւնն:

«Նա և ծաղիկ եւս լինի [Հարսնացեալն Քրիստոսի], որպէս նարդոսն և *քրքում*, որ մինն ջերմ է, և միւսն՝ անուշահոտ. այնպէս պարտ է ջերմին սիրովն Քրիստոսի վառել և բորբոքել զհոտ առաքինութեան և ամենայն բարեգործութեան: Ասեն *զքրքմէն*, թէ միջասահման է, ո՛չ կարի հով և ո՛չ կարի ջերմ, այլ ի չափու ունի զիւր զաւրութիւնն» (Գր. Նար., *Մեկն. Երգոց երգոյն*, Դ, 309). «յարմարութեամբ հոտոյ *քրքմոյ*» (նոյն, *Աղաւթ.* ՂԳ, ժա, 255). «*Քրքում* վակասիր պըտուղըն սնանէր խունն տերեւով» (նոյն, *Տաղ Վարդավառին*, 482). աստ *քրքում* բուի ածական, իբր 'քրքմագոյն':

«Սապէս կամելով մեր գյաւշուածս կիտին, զոմանս ի շամփուրս հարեալ ի վերայ Հեփեստեայ, զոմանս ի սանի հանդերձ Պոսիդոնիւ ամոքեալ ... և զոմանս գծաւրէն կտապս և դարձեալ խորտակեալս մանրագոյն պարսկական խորտիկս և զայլս որակացեալս ոսկետեսակ *քրքմով* ռետին մակաւասար արկեալ և ոքսեմելի» (Գր. Մագ., *Թուղթ առ Մամիկոնեանն*՝ "Խոստացար երբեմն մեզ", երեսք 148–149). «Խառնեալ *քրքմով*» (նոյն, *Թուղթ առ Հնծացին Գրիգոր*՝ "Զհազարդ սակս բազմաբերրութեան", երես 503):

«Նարդոսիւ և *քրքմով*» (Վարդան, *յԱնքառամն*, Նոր հայկզ. ի *Քրքում*):

Ածանցք *քրքում* բառի.

Քրքմացան. «Երիզապատ պնդեցի զգահոյս իմ, պաստառալիր եգիպտացւովք զարդարեցի, *քրքմացան* պատրաստեցի զանկողինս և զտուն իմ կինամոմով խնկեցի» (Առակք Է 16, 17): — **Քրքմաւէտ.** «Սքանչելի է և աշխարհն [Ճենաց] առատութեամբ ամենայն պտղոց և գեղեցիկ բուսովք զարդարեալ, *քրքմաւէտ* և սիրամարգաշատ և բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց և իրէշից, և որ յայծեմունսդ անուանեն» (Խոր. Բ ձա 344). համեմատե՛ վերագոյն ի բառն *Քրքում* ընդ վկայութեան *Աշխարհացուցին* Խորենացւոյ: — **Քրքմատեսիկ.** «Իսկ նորա [Յիսուսի] մնացեալ միայն ի վերայ խաչին ... արտասուէր սուրբ *քրքմատեսիկն* արեամբ» (Աթանաս, *Ընդիմասացութիւն Արիանոսի հերձուածողի*, 181). Նոր հայկազեանն գրէ. «*Քրքմատեսիկ*. քրքմատեսիլ, քրքմագոյն, իբրև զքրքում. Արտասուէր սուրբ *քրքմատեսիկն* արեամբ, Աթ. Ը», այլ յն. *աղբերամոս*: — **Քրքմեմ,** գղ. *սաֆրանէ*. «Ուրման ետ իշխանութիւն Աբղլայի [ի] պատիւ [տպ. Աբղլայի (և) պատիւ] *քրքմել* զհերս և զմաւրուս» (*Պատմ. Աղուանից*, տպ. Շահնազար, հ. բ, 10): — **Քրքմեղ.** «Եւղք անոյշք ի նմա [յերջանիկն Արաբիա] և ծաղիկք վեշտասան. հալի. ջափու, մաղապ, խալոկ [տպ. խալոկ և ի ծան. 4

"Հին տպ. *խախակ*. մի օր. *խալոկ*. այլ օր. *խաղուկ* որ է *քրմեղ*"], քբի, աղխունա, խալար, բուխտակ, նարդոս, բալասան, բան, յասմիկ, նարան, վարդ, մանուշակ, մատզգոշ» (Խոր., *Աշխարհացոյց* 612). գրեա՛ եւ ըստ Ընդարձակեալ օրինակին, 39, զոր տե՛ս եւ յիմ ընդօրինակութեան, 153, ծան. 5:

Քօշի լեզու. «*Լիսէնթայս. քօշի լեզվի* քամուքս» (Բժշ. Ա. 47):

Քօշիմօրուք, քօշմօրուք. *քօշմօրուք* եւ *սինձ* նոյն բուի. տե՛ս *Սինձ*. գղ. *փրազոպոգոն քօշի մօրուք*, է *սալսիֆի*. *փրազոպոգոն* ուտելի բոյսն (Լըկլէր Բ 1466): Արբ. *լիհեէթ իւթ-թէյս* (մօրուք քօշի). պրս. *խափէլէնճ*. «Է խոտ իմն, որոյ բնութիւնն է ցուրտ եւ չոր, որ հատանէ զարիւնն ռնկաց [[այսպ.]] եւ զարիւնն ելեալ յայլոց անդամոց եւ մեծապէս օգտէ հնացեալ վիրաց. արբ. *լիհեէթ իւթ-թէյս*, այս ինքն *մօրուք քօշի*» (Տ. Գէորգ, *Պրս.-հայ.*): «*Քօշմօրուաց* քամուքս, որ է տարափիր» (Հին բժշ., *Հայկ. բուս.* 3233): Կայ գղ. *բարբ-դը-բուկ*, *սալսիֆի սովաժ*. տե՛ս եւ *Հայկ. բուս.* 3964: *Հիպոսխտիդ* է բոյս ինչ բուսեալ առ արմատով *սիստիս* տնկոյն, *թէքէ սաքալը*: «*Քօշմօրուք*. սինծ, որ բու[ր]ք. *ճմլիք* կ'ասէ կարծեմ» (Նորագիր *Բժշկարան* յԱզգ. մատենադարանին Ղալաթիոյ): Գղ. *իւյմեր* (էմին): Գղ. *Հիպոսխստ*: Յն. *Հիպոկխստիս*: «*Լաճէտ թասխ*. *քօշմօրվաց* քամուքս» (Բժշ. Ա. 143): «*Քօշիմօրվաց* քամուքս» (Բժշ. Ա. 48): «*Քօսի մօրուս*. բանջար վայրի» (*Մանանայ* 452): «*Գոնմորուքն*, որ է *քօշմօրուքն*» (Բժշ. Բ 325): «*Քօշմորվի* [տպ. քօզմորվի] քամուքս» (Մխ. Հեր. ԻԶ 69): Գղ. *բարբ դը բուկ* կամ *դը շեվրը* է Երնջակ: «*Քօշմօրուք*. *սալսիֆի*» (*Արեւելեան մամուլ*, 15 մարտ 1894 երես 146): «*Լեհեաթ ըլ-թէս*, որ է *քօշմօրուքն*, ինքն խոտ մն է որ ի քուռաք կու նմանի. տաք է եւ չոր է յԲ̅ *տարաճան*. կակուղ է եւ զակռան կ'ուժովցնէ եւ զրուլութիւնն կու տանի եւ կրծոց եւ թոքին խոցերուն աղէկ է եւ զստամոքն կու ուժովցնէ եւ զփորն կու կապէ եւ օգտէ աղեց զանցերուն եւ զարուն գօզելն եւ *գնազաֆն* կու կտրէ եւ զանծին թուլութիւնն կու տանի եւ զպեղծ խոցերն կու ողջացնէ. եւ թէ սպեղանի առնես, օգտէ ջղերուն եւ իր առնելոյն չափն ա̅ *մթխալ* է, բայց ըղեղան *գնն* կու առնէ եւ գիր չարութիւնն տանի *ըռղիանն* եւ իր փոխանն *արասխոն* է: Ասէ Պատեհին, թէ ինքն բոյս մն է, որ հոռոմ *հուվաֆասատախս* [յն. *իբօսքիսղիս*] կու ասէ. եւ ինքն լատանի ծառին ներքեւն կու բուսնի, եւ ի գետնէն կարմրգոյն կու ելանէ. եւ պ̅ *ասպալանճ* կու ասէ, եւ յարապն *զանապ ըլ-խայլ* կու ասէ, եւ ի Սպահան շանաք կ'ասեն. եւ ինքն զքբին արիւնն կու կտրէ. եւ իր փոխանն վարդհունդն է եւ կամ նուլինարն իր չքօքն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 110):

Քօլօզիկ. «Դեղին ծաղիկ ինչ» (*Մանանայ* 452):

Օ

Օձ. *օձադեղ*, *օձի դեղ* (Բժշ. Ե՝ հին ԻԴ 41): *Օձի խաղող* (Ասար). տե՛ս *Խաղող*:

Օձի ծառ՝ *սխտոր*. *սերպանտին օձի ծառ*. «*Օձի ծառ*, որ է *ջնդխանան*. եւ *օձի ծառ* այլ կու ասեն» (անդ): Կայ *սերպանտին*, ծառ եւ տունկ, *ժենախանէ*, տե՛ս Լիտրէ: *Ճնդխանա* = պրս. «*կէնտանէ*. պրաս, պրախ, *փրասէ*, արպերէն *սամի պէրրի* (խստոր վայրի)» (Գէորգ). իսկ *սումի պէրրի* է *տենկրիում սկորդիում* (*Հայկ. բուսար.* 3242): «*Օձի սխտոր*. *ճնդխանան*» (Բժշ. Դ 151): «*Օձի սխտորն*, որ է *ջնդխանան*» (Ամրտ., *Անգ. անպ.*, ալիշան 49):

Օձատակ կամ *մանտակ* կամ *չահպոկ* է գղ. *բիստորտ* ըստ Ստ. Շահիմեան.:

Օձխի. տեսակ մի փշոյ, տերեւքն նման երեքնուկի (Հ. Ներս., *Բառք մշեցւոց*):

Օձտակ, տճ. *եըլան քէօքիւ*^, լտ. *սալվիա*^, գղ. *սոժ*^. «Կղրու ձու, բաշխտակ, կօստ, ձագխոտ, տարպղպեղ, սնգրուեղ, իգարողի տակ, *օձտակ*, մեղր, միաչաք զաղալոյն աղա եւ զամէնտ յիրար խառնէ'» (Բժշ. Ա. 351): Լտ. *սալվիա*, *եըլան քէօքիւ*, *տիշ օթու*, *սալպիյէ* (ՄէՆ., *Ծաղ.*):

Օղին կամ **ըղին**. գրեա՛ յՈղին. տե՛ս Շրէշ. «*Օղին կամ ըղին*. խոտ առողջարար, զոր ուտեն (ի *Բաղէշ*). իսկ զարմատսն նորա կամ ըստ բարբառոյ նոցա՝ զմղեղսն գործեն շրէզ, այն է *չիրիշ*, ի պէտս կօշկակարաց եւ կտաւագործաց» (Իննին., *Նոր Հայաստան*, 168 եւ 41, 183): «*Օղին*. տե՛ս *Շրեշտ*» (*Մանանայ* 452):

Օշինդր. *օշինտր* (Բրս., *Վնց.* Ն 101. Ջ Անտոնեանց ունի *ափսինթին*): «*Օշինդր*. դառնահամ խոտ. գործածեն ի ցքի եւ դնեն ի գինւոջ. եւս իբրեւ դեղ եփեն եւ ջուրն խմեն. *փիլէն օթի*» (*Մանանայ* 452): — «*Աւշինդր*, որ յ̅ *աֆսնդին* ասէ եւ ր̅ *փալին* եւ ի *փարճաւշանի [նավշան պիտի]* ասէ: Եւ ինքն խոտ մն է, որ տերեւն ցրիւ է, եւ ձեւն տերեւին նման է սոխպղնի տերեւին, եւ ծաղիկն դեղնագոյն է, եւ տերեւն սպիտակ գոյն է, եւ համն խիստ դառն է: Եւ ինչս ի հոռմաց երկիրն շատ կու լինի եւ ի Խորասան այլ կու լինի: Եւ իր փոխանն *չեհէն* է կամ *ճաւտան*: Իպն Պայտարն ասէ, թէ գիր ջուրն ի թանաքն խառնես եւ գիր գրես, թանաքն ամուր լինի եւ ի թղթէն չելնէ, եւ թէ ի սնդուկն դնես, չուտէ ցեցն: Ասցել է, թէ *խաթրախ* ասեն, եւ ինչս շատ ցեղեր է, Խորասանի եւ ըռումի, սիսի [Սիս] եւ տարսուսի [Տարսուս] եւ *Նապտի* եւ *սուրի*: Եւ ինքն տրամնային ցեղերուն է: Եւ գրոցս շինողն ասէ, թէ ինքն վայրի *պարանճասիֆն* է եւ յիր ցեղերուն է: Եւ իր ծաղիկն նման է *ախճաւանին* ծաղկին եւ այլ փոքր է եւ լեղի է որպէս *սապոն*, բայց *ախճաւանին* ծաղիկն սպիտակութիւն ունի, եւ այս չունի: Եւ լաւն եւ աղէկն հոռմցին է եւ սուսին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան, 48ա):

Լեռնային օշինդր (*Վստ.* ՃՋՋ 119): *Հոռոմ օշինդր* (Մխ. Հեր., 126):

Օշակ, [[1.]] «պրս. *խուշագ*, արբ. *խուշաճ*, խէժ ինչ անուշահոտ, *գոմ ամոնիակ*. 2. քաղբան, տն. *գասնը*» (Պօզան.): «*Մորհամ* պղնձով վասն նորմսելոյ. այրած պղինձ, *օշակ*, տաճիկ լեղ, որ գէղ քար է» (Բժշ. Ա 370): «*Ուշախ*, որ է *վաշախ*. ինքն խէժ է եւ սպիտակ է ... եւ յորժամ տրորեն եւ օծեն, օգտէ *խանազիրին* եւ հալէ. եւ օգտէ լխտաւորին եւ զկոպին թանձրութիւնն տանի ... եւ *զղխշան* եւ *զքալաֆն* տանի եւ զմանն եւ զսպին այլ տանի: Եւ զերկայն եւ զտափակ ճինճին հանէ: Եւ օգտէ *քամեստնոյ* ... գփտած միսն ուտէ ի խոցերուն ... եւ իր փոխանն *սեքպինաճն* է կամ *տաղատիրն* է ... Ասէ Պատեհին, թէ *աւշաճն* է, եւ *կիլեաթի* այլ կու ասեն. եւ ինքն *լիզալի զահապն* է. եւ յիշած է ի վերայ լուին» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 47): — *Կապոյտ օշակ* (Բժշ. ԺԱ 5):

Օշնայ. արբ. *ուշնա*, յն. *բիւոն* (Լըկլէր Ա թիւ 85). *աշնէ* (Գէորգ ի *Տիւմալէ*). պրս. *խուշնէ* (Գէորգ), ուր եւ *տիւմալէ* = դըւաղակ. արբ. *խուշնէթ* 'մամուռ, լօռ, քարաքոս' (Պօզան.). լտ. *մուսկուս*, *խուշնէթ* (ՄէՆ., *Օնոմ.*). լտ. *մուսկուս արբորէուս* ըստ Ստ. Շահիման., գղ. *բրիոն*. «*Օշնայ*, որ է կաղնի ծառին բուրդն, որ՝ ի կեղեւէն» (Բժշ. Է 14): «*Աւշնայ*, որ է կաղնուն ծառին բուրքն [[այսպ.]]. լաւն այն է, որ սպիտակն է, եւ հոտն սուր լինի, ի տաքութիւն եւ հովութիւն միջակ է եւ քիչ մին կապող է: Եւ թէ *զաւշնան* ի գինուն մէջն թրջես, եւ ով որ յայն գինուն խմէ, խելքն երթայ ... Ասէ Պատեհին, թէ իրենն *շայպաթ ըլ-յաճուզ* եւ *կարքազմայեայ* այլ ասեն եւ *կարքազմայեայի պաղտատի* այլ ասեն, եւ պ̅ *տավալայ* եւ *տավալի* այլ ասէ եւ *տավայը լ-մուշք* [պիտի *տովայի լ-մուշք*] ասեն: Եւ ինքն փինոյ ծառին եւ կաղնոյ ծառին վերայ կու բուսնի եւ ընկզին ծառին վերայ այլ կու բուսնի: Եւ լաւն այն է, որ սպիտակ լինի: Եւ ես՝ անպիտանս ծառայ ծառայիցն Աստուծոյ, տեսայ, որ ի գետինն այլ կու բուսնի: Եւ անուշահոտն լաւ է, եւ այն որ սեւ լինի, չէ աղէկ, այն հինդի է» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 48):

Օշնայի տերեւ (*Հայկ. բուս.* 938):

Օշնան. պրս. *խուշնան* (Գէորգ). արբ. *խուշնան*, տն. *չճօյէն* (Պօզան.). լտ. «*սապոնարիա*, արբ. *խուշնան*» (Բէտէն Բ 321). լտ. «*Հերբա ալկալի*» (ՄէՆ., *Թեսաւրուս* Ա 179). «*սուդ*, օշնան. *խուշնան*, *սապոներ*, օշնան փրփրական. *սալիկորն* ազնիւ օշնան, գղ. *սուդ*» (ԷմԻն). գղ. *կալի*, տե՛ս եւ *ղալըի* (*Հայկ. բուս.* 967). «*Ղալըի* (*ալկալի*"). ինքն քար մն է սուսծու, եւ լաւն այն է, որ շուտ տրորի եւ ի *յօշնանէն* զուգվի եւ ինքն ի ներկրնուն թանն կու մտնէ. եւ *շապի յասֆուր** այլ կու ասեն, եւ ի Շիրազ *ղալեայ* կ'ասեն» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 166ա). * արբ. *շէպ ըլ-աւսֆուր*, *սուդ* (Լըկլէր Բ թիւ 1280. Գ թիւ 1828). տե՛ս եւ *Գալեէ* ի Գէորգ ի բառն *Խէժէն*, *Խէժէնաէ*:

«Աւշնան [[տե՛ս]], որ է *լողանն*. ինքն շատ ցեղ լինի. եւ լաւն այն է, որ համն աղի լինի ... եւ իրմով կու լուացուին ... եւ իր փոխանն վասն լուացուելոյ *սապոնն* է: Իպն Պայտարն ասէ, թէ ... ինքն երկու ցեղ կու լինի. մէկն սպիտակ է, մէկն կանանչ է. եւ թէ այս կանանչ ի կրակն ծխեն, անասունն եւ թռչունքն փաղչին [[այսպ.]] յօթեւանէն: Ասէ Պատեհին, թէ ինքն *խարսն* է, եւ ինքն երկու ցեղ է. եւ *զասուլ* այլ կու ասեն. եւ լաւն այն է, որ համն *պորային* համովն լինայ եւ կանանչ եւ նուրբ լինայ, եւ

յաղի տեղեր լինի, ի *քուֆան*, ի խէչ կու լինի. եւ լաւն այն է, որ սպիտակ լինի. եւ մէկ ցեղ այլ, որ տերեւն մօտիկ է փինո [[այսպ.]] տերեւին. եւ իր ժ. դրամն մարդն կու սպաննէ» (Ամրտ., *Անգ. անպ.*, Ալիշան 47). «*Հուրս*, որ է *աւշանն*. յիշած է յիւր համարն Աստուծով» (անդ 156). «*Ուշխան*, որ է *օշնան*, որ է բուրֆ բառովն *չօղան* կ՚ասեն. յիշած է» (անդ 222ա)։

Պարսիկ աւշնան, սպիտակ աւշնան (Հայկ. բուս. 3255)։

Օշօշ. կայ գղ. *մարգըրիտ*. գղ. *պակրետ*՞. տե՛ս *օշօշ* եւ ի բառն *Գետնախնձոր*. ծաղիկ է դեղին եւ սպիտակ գարնանային (Գեռ. Ա. 38)։ «*Օշօշ*. վայրի ծաղիկ յԵրեւան» (Աթանասեանց 66)։ Նոյն բուի եւ *Հոշհոշիկ*։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՑՈՒՑԱԿ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ
ԺԲ — ԺԷ ԴԱՐՈՒՑ
ՉԵՒ ԵՒՍ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՑ
(բաց ի նշանակելոցն աստեղբ)

Առ յարգոյապատիւ Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան՝
Աթոռակալ Մխիթարեան ուխտին Վիեննայ

[**Մանօթութիւն.** — Այս մատենագիտական *Ցուցակը*, որ վերջերս յայտնաբերեցի հեղինակի անտիպներում, դիւանում 4:0. 12:4, լրացնում եւ ճշգրտում է այն՝ *Անուանք մատենագրաց եւ մատենագրութեանց յիշատակելոց ի բառարանիս*, որ 2000 թ. հրատարակել եմ Նորայրի *Բառագիրք ստորին հայերէնի* աշխատութեան վերջում՝ էջ 753 — 767, քաղելով սեւագրութիւնից: Այն այստեղ զետեղում եմ իբրեւ յաւելուած՝ անյայտութիւնից փրկելու համար:]

Դարք

ԺԲ° **Արուսայիտ.** չգիտեմ՝ բէ սա՞ իցէ Արուսայիտ բժիշկ, յորոյ խնդրոյ գրեալ է Ն. Լամբրոնացի զ*Անուանս քաղաքաց-շինողաց*. տե՛ս *Սիսուան*, 561ա, ի ծան.. կայ յԱզգային մատենադարանին Պարիսի, բ. 100, Հայ ձեռագրաց նախկին հաւաքումն, 249ա, "Քաղաքք եւ շինողք նոցին". յիշէ զայս Պրիւղոմ ի գղ. բրգմ. Ար. Լաստիվերտցւոյ, երես 67, ծան 1 (Յաւ.). *Կազմութիւն մարդոյ:*

ԺԵ **Աբրահամ Անկիւրացի.** **Ոտանաւոր պատմութիւն առման Կ. Պօլսի ի թուրքաց*, հրատարակեալ ի Տ. Ք. Պատկանեանէ ի *Նշխարք մատենագրութեան հայոց*, Պետերբուրգ, 1884, երես 59-64. բերի եւ սխալաշատ է յոյժ օրինակն Տ. Ք. Պատկանեանի: Իսկ *Ոտանաւորն յառումն Կաֆայ քաղաքի* ոչ է Աբրահամու Անկիւրացւոյ, այլ՝ Ղարլանի ուրումն ի ԺԶ դարուն. տե՛ս ի Ցուցակիս Ղարլան: Նոր Հայկզ. յիշէ "Աբր., *Ողբ*, Կոստ." ի *Խսար:*

ԺԵ **Ազարիա,** առանց մականուան. *Տաղ գինւոյ*՝ "Արարիչ Տէրըն քաղցարացաւ ի յԱդամայ", տունք 11, չորեքտողեան:

ԺԵ **Ամիր Մուսէ Նախաշ կամ Նախշիպանտ.** պրս. *նագշպէնտ* "նկարիչ". կայ եւ *Նակշիպենտք*՝ ազգ մի տէրվիշաց Հաստատելոց յամին 1319. տե՛ս *Տերվիշք* ի Դըզորբի (տեղեկութիւն ինձ համար).

**Տաղ ի Ստեփանոս մանուկ նահատակեալ ի թուրքաց ի Կ. Պօլիս յամին 1471*. "Յինըն հարիւր հայոց թուականն եւ ի քըսան բիւըն լըրման", տունք 30, չորեքտողեան:

ԺԵ **Ամիրտոլվաթ Ամասիացի,** բժիշկ. *Ախտարք*, թարգմանեալ յարաբացի լեզուէ յամին 1474. տե՛ս *Երկրագունտ*, ամսաթերթ Կ. Պօլսի 1884, երես 551-552.

Անգիտաց անպէտ, որ է բժշկական բառագիրք բուսոց, անասնոց եւ հանածոյից. գործ պատուական յոյժ. յօրինեալ թարգմանաբար յամին 1478.

Օգուտ բժշկութեան, որ է բժշկարան յերկուս մասունս. թարգմանաբար յօրինեալ յամին 1466

յարարացի, ի պարսիկ եւ ի յոյն գրոց:

ԺԳ **Առաքել Անեցի**. *Երազահան*, թարգմանեալ յարարացի լեզուէ յամին 1222. հատուած մի հրատարակեալ է ի *Բազմավիպի* 1848 երես 84:

ԺԵ **Առաքել Բաղիշեցի կամ Պոռեցի**՝ աշակերտ Գրիգորի Խլաթեցւոյ. *Ողբ յառումն Կ. Պօլսի ի թուրքաց*, ոտանաւոր. "Արդ ամենայն ազգք եւ ազինք Ողբան ընդ քեզ, քաղաք Ստըմբո՛լ".

Պատմութիւն Յովասափու, ոտանաւոր, տպ. յԱմստերդամ, 1668. տե՛ս *Հայկական մատենագիտութիւն* երես 676.

Տաղ ի սուրբ Աստուածածինն եւ ի Գաբրիէլ հրեշտակապետն. "Ականջ դրէ՛ք բանիս", հրատարակեալ առաջին անգամ ի *Բազմավիպի* 1865 երես 266. երկրորդ անգամ՝ յ*Արեւելեան մամուլ* 1884 երես 180:

ԺԵ **Առաքել Սիւնեցի**, եպիսկոպոս, աշակերտ Գրիգորի Տաթեւացւոյ.

Գովասանութիւն ի վերայ Սաղմոսի՝ "Իմանալի այս բուրաստան".

Խրատ ձեռնադրութեան, Խրատք քահանայից եւ կանանց նոցին, Մեկնութիւն Սահմանաց Դ. Անյաղթի, Յիշատակարան ի վերայ Աստուածաշունչ գրոց, Պատմական քերթուած ի Գր. Լուսաւորիչ.

Ադամգիրքն կամ *Կողգիրքն* եւ *Ոտանաւոր պատմութիւն սրբոյն Ներսեսի* հրատարակեալք են:

ԺԵ **Առաքել**, չգիտեմ՝ Բաղիշեցի՞ն, թէ Սիւնեցի՞ն. *Գանձք*, թուով 23. *Տաղք*, թուով 52:

ԺԵ **Ասապով**, առանց մականուան. *Տաղ աղօթական առ Աստուածածինն*՝ "Առ քեզ գոչեմ արտասուելով", տունք 7, չորեքտողեան:

ԺԶ **Ասար Սեբաստացի**, բժիշկ. *Բժշկարան*:

ԺԶ **Աստուածատուր պատրիարք**. *Թուղթ գրեալ յԵրուսաղէմ ի դուռն սրբոյն Յակոբայ ի թուին ՌԼԸ* [1589] *ի Նոյեմբերի Ը, առ լեհացի հայս վասն ծռազատկին, յաւուրս Գալուստ եպիսկոպոսին Իլովայ*:

ԺԳ **Արիստակէս** գրիչ. *Արուեստ գրչութեան*.

Բառագիրք. «Ըրստակիսի բառագիրք» յիշի երկիցս ի *Քերականութեան* Յոհ. Երզնկացւոյ, այլ չգիտեմ, թէ հասե՞լ իցէ առ մեզ.

Լրումն մեկնութեան Մատթէի աւետարանին, որ՝ ի Շնորհալւոյ, որիշ ի գործոյ Յոհ. Երզնկացւոյ (տե՛ս *Սիսուան*, 516ա): Այս գործ է, զոր նշանակեալ եմ ի *Հայկ. բառաքնն.*, 22. (ծանօթութիւն ինձ համար): Ի *Հայկ. հին. դպր.* որիշ որիշ գրին Արիստակէս մեկնիչ եւ Արիստակէս գրիչ:

ԺԸ **Աւետիք Ամդեցի կամ Տիգրանակերտցի**. *Ժամանակագրութիւն*. տե՛ս *Սիսուան* 532ա, 544 ծան. 1.

Բառագիրք ջուղայեցւոց. կարծեմ՝ պահի յարքունի դիւանին Վենետկոյ:

ԺԳ **Բարսեղ** արքեպիսկոպոս. *Քերականութիւն* . տե՛ս *Սիսուան* 519ա:

ԺԳ ***Բժշկարան***, գրեալ ի վայելումն Հեթմոյ պատմչի Կոռիկոսացւոյ յամին 1294. այս թուական 1294 է թուական գրչութեան ձեռագրին, այլ բուն *Բժշկարանն* է հնագոյն, զի ասի թարգմանեալ յարարացւոյն յաւուրսն յաղթող արքային հայոց Գագկայ, այս ինքն Գագկայ Բի, յամսն 1042-1044 (*Շիրակ* 96). տե՛ս *Շիրակ* 96ա, *Սիսուան* 337, *Հայկ. հին դպր.* 654. պատուականագոյն քան զամենայն Բժշկարանս, զորս տեսեալ եմ:

ԺԳ°, ԺԴ° ****Բժշկարան գրաստու***, բերի. բուն թարգմանեալ ի գաղղիերէն լեզուէ. հրատարակեալ է յինէն ի *Բազմավիպի* 1867:

ԺԱ°, ԺԲ° **Գաղիանոսի** բժշկապետի **բառք**. հաւաքումն անուանց բուսոց, ծառոց, անասնոց, հանածոյից եւ անդամոց մարմնոյ: Կայ տպագրեալ ընդ *Աղբարք* գրոց (առանց թուականի եւ առանց անուան տպարանի) *Բժշկարան Գաղիանոսի*, այսպիսի մակագրաւ. "Բժըշկարան եւ հաքիմարան. ըստոյգ եւ զարմանալի. մեծին Ճալինոս հաքիմին արարեալ". տե՛ս *Հայկ. մատենագիտ.*, երես 20 (ծանօթութիւն ինձ համար):

ԺԳ Գէորգ Սկեւռացի, խմբագրողն *Մեկնութեան Գործոց առաքելոց,* որ տպագրեալ է ի Ս. Ղազար, 1839.

Արուեստ գրչութեան. Դրուատ ի Յոհաննէս աւետարանիչ, տե՛ս *Միսուան,* 104ա, 556ա.

Մեկնութիւն Եսայեայ:

ԺԳ Գրիգոր Է Անաւարզեցի, կաթողիկոս. *Դրուատ ի տօն ամենայն սրբոց.* "Կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի սուրբ", տե՛ս *Միսուան* 241 ծան. 4.

Թուղթ առ Հեթում Բ թագաւոր, ռամկօրէն լեզուաւ. տե՛ս *Միսուան* 154բ, 241բ.

Թուղթ առ Օշին իշխան.

Յայսմաւուրք, որ Եշանակի ի Նոր հայկազեանին համառօտութեամբս Հ. *Կիլիկ..* տե՛ս *Յայսմաւ.* ի Ցուցակի Նոր հայկազեանին:

ԺԲ Գրիգոր Զ Ապիրատ, կաթողիկոս, եղբօրորդի Ն. Շնորհալւոյ (*Շնորհալի եւ պարագայ իւր,* երես 79. տեղեկութիւն ինձ Համար).

Աղօթք ի խորհուրդ սուրբ հաղորդութեան.

Ոտանաւոր՝ "Յորժամ զիս ինձէն զրտայ ու ես ընդ իս սակաւ խօսեցայ":

ԺԵ Գրիգոր Խլաթեցի Ծերենց. *Գանձ,* բուռվ 41.

Դատաստան կամ որոշումն խնդրոյ իրիք պսակի. Թուղթ.

Խրատ ժամատեղեաց, Ճառ ի ծնունդ Աստուածածնի, Ներբող տնօրինական տեղեաց.

Պատմութիւն նահատակութեան վկայից իւրոյ ժամանակին. Տաղ, բուռվ 23:

ԺԲ Գրիգոր Մաշկաւոր, ի Յեսուանց վանաց Մարաշու. տե՛ս Մտր. Ուռհ. 417. տե՛ս եւ *Շնորհալի եւ պարագայ իւր,* 217-220, ուր կայ եւ հատուած մի. սա է Եշանակեալն *Մաշկ.* համառօտութեամբ ի Նոր հայկազեանին.

Գիրք աղօթական վայից եւ մեղայից:

ԺԶ Գրիգորիս Աղթամարցի, կաթողիկոս Աղթամարայ. *Ոտանաւոր յԱղեքսանդր Մակեդոնացի.* պատառիկ մի հրատարակեալ է ի *Միսուան* 400բ ի ծան..

Տաղ, բուռվ 12.

"Ահա այգիք մեր ծաղկեցան".

"Այբէն մինչեւ ի քէն". սորա բուի. 'Գրիգոր մեծ թարուեի' կոչէ զանձն յերրորդ տողին:

(Յաւ.) "Անեղին տանար, Բանին բարերար" (Ձեռ. Մխիթ. Վիեննա., *Հանդէս ամսօր.* 1891, սեպտ. 26ա).

"Արեգակնափայլ գեղով".

"Գարունն երեկ պըլպուլն յայգին". սորա բուի. սկզբնատառք տանցն յօդեն զանունն *Գրիգորիս.*

* "Գարունն է բացուեր", հրատարակեալ ի *Բազմավէպի* 1861 երես 148, սխալոտ. կայ հրատարակեալ եւ ի *Քնար հայկականի* Միանսարեանց, երես 374, ուր վերագրի Պաղտասար դպրի. չգիտեմ, թէ ա՞յլ տաղ իցէ "Գարունն է բացուել" սկզբնաւորութեամբ, զոր Հ. Ղ. Ալիշան վերագրէ Յակոբայ Սսեցւոյ. տե՛ս ի Ցուցակիս Յակոբ Սսեցի.

"Դու դրախտ յեդեմայ", "Դու ես արեգակ", "Դու ես յԱդինայ դրախտին".

(Յաւ.) "Եղուկ ու հազար մի վայ" (Ձեռագիրք Մխիթ. վիեննա.), յօրինեալ յամին 1515 (ՁԼ.Դ., *Հանդէս ամսօր.* 1891, սեպտ. 259բ).

"Ծաղկունքն ասեն. Հերիք արա՛ ", յօրինեալ յամին 1523 ի խնդրոյ Աստուածատրոյ Մեծոփեցւոյ.

(Յաւ.) "Մարմինս զիազիս զըրկէ" (Ձեռագիրք Մխիթ. Վիեննա., *Հանդէս ամսօր.* 1891, սեպտ. 259բ).

"Մաքուր պատկերով".

*"Յետ զընալոյ վարդին", հրատարակեալ ի *Բազմավէպի* 1861, երես 146. թերի եւ սխալոտ:

ԺԲ Դաւիթ Գանձակեցի՝ Ալաւկայ որդի. տե՛ս Կիրակոս Գանձակեցի, 66, 101 եւ Վարդան Արեւելցի, Պատմ. 121.

Հարցմունք Արքայութիւն քահանայի եւ պատասխանիք Դաւթի քահանայի:

ԺԲ Դաւիթ Սալաձորեցի. *Տաղ ծաղկանց. առաջին անգամ հրատարակեալ չյիշեմ յորում լրագրի. երկրորդ անգամ հրատարակեալ յԱրեւելեան մամուլ, 1884, երես 137, 177. սխալոտք են եւ երկոքին հրատարակութիւնքդ:

ԺԲ Դաւիթ քահանայ. Ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ՝ յԱյրարատոյ նահանգէն, ներբողական գովեստի բան. տե՛ս Շնորհալի:

[Դ] **Եպիփան Կիպրացի** (սուրբ), ի Դ դարու. *Վասն ականց պատուականաց, հրատարակեալ ի Բազմավիպի, 1856, երես 46-50:

ԺԴ Եսայի Նչեցի. Բան հականառութեան ընդդէմ փռանկաց, Ի բանն «Սիրեցից զքեզ, Տէ՛ր»:

Դաւանութիւն հաւատոյ ընդդէմ պարոն Հեթմոյ կիւռիկոսցոյն պատասխանի թղթոյն, գրեալ առ Օշին Պայլ (Սիսուան 340ա, 557բ).

Թուղթ շրջաբերական առ Հայս, Մեկնութիւն Եզեկիելի ի խնդրոյ Ստեփ. Ուռպելեան, Մեկնութիւն Քերականի, Նախերգան նառի կամ մեկնութեան, Վասն մոլորման զատկին, Վիճաբանականք վասն ջրախառնութեան եւ սուրբ Աստուածածնին.

*Երաժշտական արուեստ, թարգմանեալ յարարացի լեզուէ, հրատարակեալ ի Բազմավիպի 1875 երես 359-366:

ԺԷ Երեմիա Քէօմիւրճեան՝ եղբայր տեառն Կոմիտասայ. Ոտանաւոր պատմութիւն Սաբեթայի-Սեւի՝ սուտ մեսիային հրէից: Տե՛ս զուարճալի պատմութիւն Սաբեթայիս յԱռաքել Թաւրիժեցի, տպ. 1884, երես 503-514: Զգիտեմ, թէ նո՞յն իցէ հրատարակեալն առանց թուականի եւ առանց անուան տպարանի «Տետրակս այս, որ կոչի Սապէթայի Սէվու. Համբաւեալ ի հրէից՝ ումն խաբեբայ Սապէթայ անուն, կամէր կրկին մոլորել զմոլորեալսն». տե՛ս Հայկ. մատենագիտ., երես 610.

Պատմութիւն թագաւորաց Օսմանեանց.

Պատմութիւն պատերազմին Պեզաց, այն է՝ գերմանացւոց.

Ջատագովութիւն վասն ծիսից.

Վիճաբանութիւն ընդդէմ հրէից վասն այլ եւ այլ խնդրոց.

Տաղք.

"Ահաւոր, սոսկալի, դէմք հիանալի", ի սուրբ Աստուածածինն, տունք 5, չորեքտողեան.

"Ա՛յ ջո՛ւր յորդախաղաղ". "Ա՛յ ջո՛ւր, պաքելոց դու գովացարան".

"Երամք երկնային թռչնոց խըմբեցան".

"Երանեալ կոյս", ի սուրբ Աստուածածինն. վերնագրի՝ Ըստամպօլցի Քօմուրճիզատէ Երեմիա՛:

Ունի եւ Տաղս տպագրեալս. տե՛ս Հայկ. մատենագիտ., երես 446:

Տարեգրութիւն կամ պատմական ժամանակագրութիւն անցից իւրոյ ժամանակին:

ԺԸ Եփրեմ Սսեցի, կաթողիկոս Սսոյ. Մեկնութիւն Յովհաննու հաւաքածոյ (Սիսուան 219 ծան.). տե՛ս զՅիշատակարան Յովհաննու մեկնութեանն յԵփրեմ կաթողիկոսէ յԱրարատ 1888, ապրիլ, երես 222-223, յորմէ պատառիկ մի՝ ի Սիսուան.

Պատմութիւն Աշպահից տոհմին, բերի, ոտանաւոր, հրատ. ի Սիսուան, 220-221.

Պատմութիւն կաթողիկոսաց հայոց (Սիսուան, 219բ).

Եօթնագրեանք կամ Արուեստ Վեցհազարեակի (Ցուցակ Նոր հայկազեանին). տե՛ս համառօտ տեղեկութիւն զգրոյս ի Բազմավէպն 1847, 163-156:

ԺԴ Զաքարիա Տործորեցի, եպիսկոպոս. Թուղթ առ Յոհան Սիւնեցի (Ցուցակ Նոր հայկազեանին):

ԺԷ Զաքարիա Վաղարշապատեցի, աշակերտ Մովսիսի Սիւնեցւոյ. Պատմական յիշատակարան վասն աշակերտացն Մովսիսի կաթողիկոսի Սիւնեցւոյ:

ԺԶ Թադէոս 1, առանց մականուան. Տաղ յաղագս հարուածոց աշխարհին Հայոց յերեսաց պարսից:

ԺԶ **Թադէոս** 2, առանց մականուան. *Տաղ ի տնօրինականս փրկչին*՝ "Հա՛, մըտա՛ք յամիս մարտին", տունք 19, չորեքտողեան. յիշի ի *Բզմ*. 1852 66ա:

ԺԵ **Թովմա Մեծոփեցի**, վարդապետ, մատենագիրն *Պատմութեան Լանկթամուրայ*, որ հրատարակեալ է.

Բաժանումն ազգականութեան, Հաւաքումն թղթոց վարդապետաց հայոց, Մեկնութիւն Դանիելի:

ԺԷ՞ **Թովմա Վանանդեցի**, վարդապետ. չգիտեմ, թէ Թովմա Վանանդեցի եպիսկոպո՞սն իցէ, տպագրիչն ԺԷ դարու.

**Ի սուրբ տեղիս Հայաստանի*, ոտանաւոր, հրատարակեալ ի *Ճռաքաղ* ամսագրի, Բ, երես 121, 135:

ԺԴ **Իշոխ** (այսինքն Յեսու), քահանայ ասորի, թարգմանիչն *Պատմութեան* Միխայելի Ասորւոյ. *Գիրք քննութեան*:

ԺԴ **Իսրայէլ Խաչենեցի**. *Յայսմաւուրք*.

Լուծմունք այլեւայլ գրոց. Ենխագրոյն հաւաքումն լուծմանց է անուանեալն *Լուծմունք Բ*, ի ձեռագիրս Ս. Ղազարու, գրեալ (կարծեմ) ի ԺԴ դարու:

ԺԶ՞ **Խաչատուր Երովպացի**, քահանայ. **Նկարագիր Վենետիկ քաղաքի*, ոտանաւոր. հրատարակեալ ի *Բազմավիպի* 1847 երես 172-177:

ԺԴ **Խաչատուր վարդապետ Կեչառեցի** (աղաւաղիչն *Պատմութեան Աղեքսանդրի*՝ թարգմանելոյն ի Մ. Խորենացւոյ).

Ոտանաւոր յԱղեքսանդր Մակեդոնացի. պատառիկ մի հրատարակեալ ի *Սիսուան*, 399-400.

Տաղք. "Այս կեանքս է յերազ նըման" (խրատական). "Ես եմ կորուսեալ ոչխար (զղջական). "Զայս ահագին աւուրքս որ հասաք" (պատմական).

(Յաւ.) "Թէ մարդ ես ու միտ ունիս, ես տամ քեզ խըրատ մի քանի". յիշի յ*Այրարատ* Ալիշանի, 268ա.

(Յաւ.) *Գանձ յԱւետիս Աստուածածնի*. յիշի յ*Այրարատ* Ալիշանի, 268ա.

(Յաւ.) "Խաչատուր վարդապետի Կեչառեցւոյ ժողովեալ ի ստոյգ օրինակէ Վասն գալստեան Աստուծոյ առ մարդիկ կուսածին թագաւորին՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ Զժամանակն եւ զթագաւորն համառօտ" (Մատենադարան Մխիթ. Վիեննայ, *Հանդէս ամսօր*. 1891, օգոստոս 232ա): Հ. Սուք. Պարոնեան յղեալ է զայս ի Վենետիկ. գտանի ի Կրաւփորեան Ձեռագրին՝ *Պատմութիւն Աղեքսանդրի* (Հանդէս ամսօր. 1891, Եոյ. 323բ): Սկսեալ յաշխարհարար Եերածմանց, կարճ ի կարճոյ, համառօտ պատմութիւն (Հին եւ Նոր կտակարանաց), յարարչութենէ մինչեւ ի Գալուստ Ս. Հոգւոյն (յիշի յ*Այրարատ* Ալիշանի 268ա):

ԺԴ **Խաչիկ** երէց, առանց մականուան. *Տաղ գինւոյ*՝ "Տեսէ՛ք զամանըս դըմենի", տունք 10, չորեքտողեան:

ԺԶ **Կարապետ**, առանց մականուան. *Տաղ*՝ "Պիւլպիւլն է հագեր ի յոտըն կօշիկ", տունք 9, տուն մի հայերէն եւ տուն մի թուրքերէն, փոխ առ փոխ:

ԺԶ **Կարապետ Բաղիշեցի**, վարդապետ, ի գեղջէն Փարխնդոյ (Առաք. Թաւրիժ. 341). սա իւրն թուի ինձ յիշատակեալն ի Յովհաննէս քահանայէ Տէրզնցւոյ ի *Սաղմոսարանին* տպելոյ ի Եմանէ ի Վենետիկ յամին 1587. տե՛ս *Հայկ. մատենագիտ*. 596.

Գանձ Գրիգորի աստուածաբանին "ի գծողէ այսմ Գանձարանիս յանմիտ Կարապետէ Բաղիշեցւոյ" (տե՛ս *Գանձարան* ի Նոր հայկզ.).

Տաղ աշխարհացոյց գեղեցիկ. "Եկա՛յք, Ադամայ որդի՛ք, արարա՛ծք ամէն, միաբան", յօրինեալ ի թուին ՌԺԴ (1565).

Տաղ՝ "Աստուա՛ծ իմ Յիսուս". *Տաղ*՝ "Կաթողիկէ եկեղեցիս":

ԺԴ **Կարապետ** վարդապետ 1, առանց մականուան. *Համառօտութիւն Մեկնութեան կաթողի-կեայց թղթոց ի Սարգսէ Շնորհալւոյ*, հանդերձ պատմական քանիւք ի սկիզբն գործոյն:

ԺԴ Կարապետ վարդապետ 2, նո՞յն ընդ վերնոյն. *Խրատ մանկանց*, ոտանաւոր, այբուբենական կարգաւ. "Ամենայնի սկիզբն եմ ես". այս է նշանակեալն 'Կրպտ. ոտ.' համառօտութեամբ ի Ցուցակի Նոր հայկազենին: Ինձ թուի, թէ այս *Խրատ* քաղեալ է ի բանից Սեբերիոնի եպիսկոպոսի կամ Հօրն Եսայեայ՝ որ ի *Վարս հարանց*, հ. Բ 507-522. համեմատեա՛.

ա. «Մի՛ առկողմնեսցես զքեզ յորմ, մի՛ թողացուսցես զոտս քո որպէս զանասուն», ՎՀ 513. ա. «Մի՛ զկուռըս քո տացես որմոյ, Մի՛ մեկներ զոտս ըստ անասնոյ», Կարապետ վարդապետ (տե՛ս *Կուռն* ի Նոր Հայկզ.):

բ. «Եթէ յորոնջ նեղեսցէ զքեզ, ընդէ՛ս զշրթունս քո առ ի յոչ բանալ զբերան քո եւ Հանդիցես ի նմանէ». բ. «Թէ գայ յօրանջ անասնապէս, Ընդեա՛ զշըրթունըս մարդկապէս», Կարապետ վարդապետ (տե՛ս *Յօրանջ* ի Նոր Հայկզ.):

ԺԵ Կիրակոս, առանց մականուան. *Տաղ*՝ "Էշ մ'ունէաք խիստ ի յօրաց", տունք 8, չորեքտողեան:

ԺԴ Կիրակոս Արեւելցի կամ Գանձակեցի, մատենագիր *Պատմութեանն*, որ տպագրեալ է. ի *Հայկական հին դպրութեան*. զանազանին Կիրակոս Գանձակեցի եւ Կիրակոս Արեւելցի, այլ ես հաւանեալ եմ Հ. Ղ. Ալիշանի, որ գրէ ի *Սիսուան* 555ա. «Կիրակոս Արեւելցի (Պատմիչն) աւարտէ *զՅայսմաւուրսն* ի Սիս յամին 1269».

Ի Տեառնընդառաջն. "Հուր է սէրն Քրիստոսի". *Յայսմաւուրք*:

ԺԵ Կիրակոս Երզնկացի, յօրինող անհամ շարականին *Արեւելք գերարփին*.

Առօրք՝ "Աստուածածին՝ տաճար բանին". այլ *Առօրք*, նորի՞ն՝ "Տէր Աստուա՛ծ, մեծ եւ հզօր".

Գիր շրջաբերական առ համօրէն հայասեր ազգս՝ "ՅԱստուծոյ ամենակալէն".

Մեկնութիւն Հարիւրաւորաց կամ Հարիւրեկաց նուագի.

Տեսութիւն ութ խորհրդոց նուագի:

ԺԷ Կոմիտաս Քէօմիւրճեան, նահատակեալն ի Կ. Պոլիս յամին 1707 (*Սիսուան* 218 ծան. 4).

Ողբ ի վերայ ազգին.

**Ոտանաւոր բանք ի Գործս առաքելոց*, տպ. Կ. Պոլիս 1704. տե՛ս *Հայկ. մատենագիտ*. 308.

Տօնացոյց երից ազգաց՝ հայոց, յունաց եւ հռոմայեցւոց. կարծեմ՝ տպագրեալ է:

ԺԴ Կոստանդին Երզնկացի, տե՛ս *Բազմավէպ* 1866 երես 80.

Ոտանաւորք, թուով 22. 7 միայն հրատարակեալք են. մի՝ ի *Բազմավիպի* 1848 երես 209, հինգ՝ ի *Բազմավիպի* 1866, եւ միւս եւս՝ ի *Բազմավիպի* 1862 երես 98, ըստ մասին:

ԺԴ Կոստանդին Դ թագաւոր՝ որդի Հեթմոյ ջամբռլայի. *Ողբք ի մահ եղբօր իւրոյ Ճուֆրէի* (*Սիսուան* 413բ, 520ա):

ԺԴ՞ Կոստանդին Սրիկ, տե՛ս *Սիսուան* 517ա. *Գանձ* մի. *Տաղք*, թուով 18:

ԺԴ Հեթում Կոռիկոսացի, մատենագիր *Ժամանակագրութեան*, որ տպագրեալ է ի Ս. Ղազար յամին 1842 ընդ թարգմանութեան *Պատմութեանն թաթարաց*.

Համառօտ պատմութիւն Ռուբինեանց, *Սիսուան* 549բ:

ԺԲ-ԺԴ Հեթում-Հեղի՝ որդի Օշնի՝ տեառն Լամբրոնի. *Դաւազանագիրք*, թարգմանեալ ի լատին լեզուէ յամին 1210, *Սիսուան* 510ա:

ԺԶ Ղարլան. **Ոտանաւոր* (անշուք եւ անարուեստ) *յառումն Կաֆայ քաղաքի ի թուին ՌԼԲ* (1583), հրատարակեալ ի Տ. Ք. Պատկանեանէ ի *Նշխարք մատենագրութեան հայոց*, Պետերբուրգ 1884, երես 65-66:

ԺԶ Ղազար, առանց մականուան. *Տաղ սիրոյ*՝ "Ծով ա՛չք, ամ քանի՞ խոլոռով", տունք 34, չորեքտողեան:

Կայ եւ Կոյր Ղազար *գույումճու օղլու*, որ ունի *Տաղ սիրոյ*՝ "Հինգ բանի կու նըմանիս":

ԺԶ Ղուկաս Կեղեցի, վարդապետ. տե՛ս Առաքել Թաւրիժ. 487. *Տումար հռովմայեցւոց*, ոտնաչափ յօրինեալ ի թուին ՌԶ (1557) ի խնդրոյ Պետրոս վարդապետի Երզնկացւոյ՝ Զուպուխ կոչեցելոյ:

ԺԷ Մաղաքիա Ճէվահիրճեան. *Տաղերգութիւն*, *Սիսուան* 363բ. կայ հատուած ի *Տաղերգութեանս* ի *Բզմ*. 1850 232:

ԺԴ Մաշտոց Ջահկեցւոց. *Ցուցակ* Նոր հայկազենին:

ԺԵ Մատթէոս վարդապետ, աշակերտ Գրիգորի Տաթեւացւոյ. *Գանձ*, թուով 3.

Մեկնութիւն աւետարանին Ղուկայ, Մեկնութիւն Գործոց, Մեկնութիւն Վեցօրէից, Ներբող ի Գր. Տաթեւացի եւ ի Կարապետ եղբայր իւր.

Տաղ՝ "Մեծի հանդիսի աւուրս". *Քաղուած գրոցն Եւագրի.*

Քարոզք, թուով 50, յորոց երեք միայն հասեալք են առ մեզ:

ԺԴ Մարքին (**Ֆրա Մարքին**՝ Մարտինուս Պոլոնուս, ի կարգէ Դոմինիկեանց ԺԴ դարու). *Պատմութիւն կայսերաց եւ քահանայապետաց Հռովմայ*, թարգմանեալ ի ԺԴ դարու ի ձեռն Ներսեսի Պաղոն կամ Պալիեանց:

ԺԷ Մարտիրոս Կաֆացի, տե՛ս եւ **Քէֆէցի**.

Տ ա ղ ք (սորա թուին).

*"Այսօր խըմբեք քաղցր եւ յորդոր", հրատ. ի *Բզմ.* 1875 106.

"Աստուած զայս տունըս չէն պահէ".

*"Սիրտս ի փորիկս դողայր վախուս", հրատ. ի *Հայոց երգք ռամկականք*. տաղս խաղալիկ է ի Զախու *(չայր)*:

ԺԷ Մարտիրոս Ղրիմեցի, վարդապետ. չգիտեմ՝ նո՞յն ընդ Կաֆացւոյն. *Համառօտ զաւազանագրութիւն*, ոտանաւոր, *Սիսուան* 531բ:

ԺԷ Մարտիրոս վարդապետ, առանց մականուան. *Տաղ՝* "Կայրեա՛, սուրբ կարուղիկէ՛", տունք 24, չորեքտողեան:

ԺԶ Մինաս Եւդոկիացի, յօրինող *Ողբոցն ի վերայ Օլախաց երկրի հայերուն*, որ հրատարակեցաւ յԱմսօրեայ հանդիսի Միաբանութեանն, 1888, երես 39, 62: Եւդոկիացի (անշուշտ իբր Թոխաթեցի) կայ ի Յիշատակարանի գրչաց յամին 1634. «Արդ գրեցաւ գիրքս այս ... ձեռամբ անարհեստ եւ մեղաներկ անձին Յովհաննէս կոչեցեալ, որ եմ Եւդոկիացի, ով. ՌՁԳ» (Քրիստոսի 1634), *Հնոց եւ Նորոց*, երես 37.

Գովասանք հերիսայի, յօրինեալ յամին 1563. "Ի հողոյ հաւասար անձնէ", տունք 34, չորեքտողեան:

ԺԶ Մինաս, առանց մականուան. *Տաղ զղջական՝* "Ես գիտէի, թէ աշխարհիս էր ինձ մընալու», տունք 18:

ԺԶ Միքայէլ, առանց մականուան. *Տաղ՝* "Ի պըլպուլէս հացէ վարդենուս բարեւ", տունք 12, չորեքտողեան. սկզբնատառք տանցն յօդեն Ի տէր Միքայէլ:

ԺԳ Մխիթար Այրիվանեցի, յօրինող *Պատմութեանն*, որ հրատարակեալ է.

Գանձք, թուով 16. *Տաղ ռամկախառն՝* "Աստուած յերկնից խոնարհեալ":

ԺԵ Մխիթար Ապարանեցի. *Գիրք տրամաբանութեան ուղղափառաց:*

ԺԲ Մխիթար Հերացի, բժիշկ, յօրինողն *Ջերմանց մխիթարութեան*, որ տպագրեալ է ի Ս. Ղազար 1832.

Մխիթար իմաստուն բժշկապետի Վասն քարանց եւ յատկութեանց նոցա եւ բժշկութեանց ականց:

ԺԳ Մխիթար Սասնեցի. *Մեկնութիւն երից Թղթոցն կաթողիկեայց Յովհաննու առաքելոյ.*

Մեկնութիւն Հանգստեան Յովհաննու առաքելոյ.

Յաղագս մարդեղութեան Բանին, ճառք 10. *Վարք Մխիթարայ Այրիվանեցւոյ:*

ԺԳ Մխիթար Սկեւռացի (*Սիսուան* 101բ, 163բ, 516բ, 518բ).

Վասն պատրիարքական աթոռոյ, ընդդէմ յունաց. գրեալ ի խնդրոյ Յակոբայ եպիսկոպոսի Կաստաղօնի.

Վիճաբանականք:

ԺԵ Մկրտիչ Նաղաշ, եպիսկոպոս. կայ արաբերէն *նաքքաշ*, որ նշանակէ, 1. նկարիչ. 2. քանդակիչ. կայ եւ *նաղաշ*, որ նշանակէ 'կարմիկ'. չգիտեմ, թէ Մկրտիչն նկարի՞չ էր, թէ կարմահասակ. տե՛ս յԱռաքել Թաւրիժեցի 486.

Գանձք, թուով 29. *Թուղթ առ Կոստանդին կաթողիկոս Վահկացի.*

Տաղք, թուով 5, յորոց երկուքն յիշին ի *Սիսուան* 545ա. կայ եւ *Տաղ*"Ղարիպին կեանքն է լալի,

ողբերգական", տունք 21. յ19դ եւ 20դ տանց գլուխս աճ «Նաղաշն ասաց թէ»:

ԺԶ Մկրտիչ Տարօնեցի. *Տաղ խրատական*, գրեալ յամին 1577՝ "Օրհնեալ անմահ թագաւո՛ր", տունք 42, երկտողեան, մեծաչափ:

ԺԴ Մովսէս Երզնկացի. *Կանոնական խրատք*՝ "Ի դամբարանէ սրբոյ Լուսաւորչի".

Ոսկիփորիկ. գայս *Ոսկիփորիկ* անուն առաջին անգամ (կարծեմ) ի վար արկեալ է Մովսէս Երզնկացի. տե՛ս *Դարգնածեւ* ի Նոր հայկգ. եւ ի *Հայկ. հին դպր.* 460.

Պատասխանի ի Տրապիզոն առ հատուածեալ երէցն Գրիգոր՝ "Ընաւից բարեաց":

ԺԷ Մովսէս Ջուղայեցի, կարողիկոս. *Ժողովածու գիրք, խրատական եւ քարոզական.*

Սահմանք իրաց, ըստ այբուբենի՝ "Ագահութիւն" եւ այլն:

ԺԷ Մովսէս, առանց մականուան.

Տաղք. *"ՆԿ, իմ սիրուն սիրելագո՛յն", հրատ. ի *Բազմավիպի* 1875, 106.

*"Մեկնեցայ հայրենեացն իմ աստ մընալով», *Բզմ.* 1858, 135.

*"Մեղմիկ հարաւային հողմոյն", *Բզմ.* 1849, 287.

*"Մենացեալ այրիմ սիրով", *Բզմ.* 1870, 311:

ԺԷ Մուրատ Խիկար. *Տաղ զարնան*՝ "Մարտըն գայր ծաղկընէրով", հրատ. ի *Բզմ.* 1862 66 եւ ի *Ընար հայկականի* Միանսարեանց 378, ուր թերի է. սխալք կան եւ ի հրատարակութեան *Բազմավիպին:*

ԺԷ Յակոբ Գրիգորենց, քահանայ. **Գովք Պրիբանիոյ*, ոտանաւոր գրեալ յամին 1675, հրատ. ի Ս. Ղազար 1875:

ԺԶ Յակոբ Եւդոկիացի, քահանայ. ինձ թուի, թէ Յակոբս այս եղբայր է Ստեփանոսի Եւդո-կիացւոյ, վախճանեալ յամին 1601 կամ 1604, որպէս յայտնի ի տաղէն գրելոյ յամին 1604 ի Ստե-փանոսէ Եւդոկիացւոյ.

**Տաղ վասն կենաց մարդկան*՝ "Աստուած ըստեղծեաց ըզմարդն ի հողէն», հրատ. ի *Բզմ.* 1865, 208:

ԺԵ Յակոբ Դ կարողիկոս. *Թուղթք վասն արոոյն Աղբամարայ:*

ԺԷ Յակոբ Դ կարողիկոս **Ջուղայեցի.** տե՛ս Հանդէս ամսօրեայ 1887 երես 195գ ծան. 1. *Թուղթ դաւանութեան*, տե՛ս Առաքել Թաւրիժեցի 266:

ԺԵ Յակոբ Մեղրեցի. *Մեկնութիւն Տոմարի*, ի խնդրոյ Թովմայի Մեծոփեցւոյ, *Սիսուան* 394ա:

ԺԴ Յակոբ Նետրարենց, եպիսկոպոս. *Դանձք խաչի.*

Տաղք. "ՅԱստուծոյ ընտրեցար դու բարի", ի Ս. Գէորգ զօրավար, ի խնդրոյ Մովսեսի. սկզբնա-տառք տանցն յօդեն Յակոբ եպիսկոպոս. հրատարակեալ ի *Վկայաբանութեան Ս. Գէորգայ*, Ս. Ղազար 1849 երես 68-69.

"Յաւուր յարութեան", "Մրանչելի սուրբ Նշա՛ն պատուեալ":

ԺԷ Յակոբ Սսեցի, հռետոր (*Սիսուան* 219-220). տե՛ս ի Կիրակոս Գանձակեցի 212 ծան. 2.

Տաղք. "Ականջըդ բա՛ց, գրանս լսէ՛" (վասն բշուառութեան ազգիս).

"Այս տաղ չափական" (Ենկարագիր Կ. Պօլսի). "Ասաց Դաւիթ" (գինւոյ).

"Գարունն է բացուել" (ի գարուն). տե՛ս ի Ցուցակիս զոր ինչ գրեցի յանունն Գրիգորիս Աղթամարցի.

"Դժար զավար" (սիրոյ). "Մովսէս ասեմ ըզհրաշալին" (ի մարգարէս).

"ՅԱստուծոյ շինեալ քաղաք պատուական", ի սուրբն Երուսաղէմ, յօրինեալ յամին 1635. սկզբնատառք տանցն յօդեն *Յակոբ քահանայի ասացեալ է:*

ԺԴ Յովհաննէս Արքայեղբայր, եղբայր Հեթմոյ Առ., եպիսկոպոս.

Մեղեդի ապաշխարութեան, *Սիսուան* 145բ. տե՛ս *Հայկ. հին դպր.* 688-689.

Յիշատակարանք յայլ եւ այլ գիրս, արձակ եւ չափաւ. կայ պատառիկ մի ոտանաւոր հրատ. ի *Բզմ.* 1865 երես 385.

Տաղ յարքայն Հեթում, մինչ ի Տարսոն էր, *Սիսուան* 144բ.

Տաղ ի սուրբ Աստուածածինն, *Սիսուան* 145բ:

ԺԴ Յովհաննէս Գանձակեցի. *Մեկնութիւն ընթերցուածոց, Տօնապատճառ:*

ԺԷ* Յովհաննէս վարդապետ, առանց մականուան. թուի Յովհաննէս Անկիւրացի տպագրիչն, տե՛ս *Բզմ.* 1850 345-346. ինձ թուի, թէ սա է յիշատակեալն ի *Նոր մատենագրութեան* (Ս. Ղազար 1878), յերես 295, 368, 371-373. անտեղի համարիմ զյիշատակութիւն ռամկախօս մատենագրիս ի *Հայկական հին դպրութեան*, երես 760.

**Տաղ թռչնոց*. զայս տաղ ես ինքն գտի ի մատենադարանի Յ. Հարց Անտոնեանց յՕրթաքէօյ յամին 1879, ի նօտրագիր եւ սխալոտ ձեռագրի եւ հրատարակեցի ի *Մասիս* լրագրի, 1879, Նոյեմբեր 28, 29, դեկտեմբեր 2, 19, Ն. տ.. վարսուն եւ մի տունք են տաղիս, իւրաքանչիւր տուն՝ չորեքտասան: Պակասեն *գ̅-ժ̅գ* տունքն եւ սկիզբն *ժ̅դ* ին, զի թուղթ անկեալ է յօրինակէն: Այս տաղ է, յորմէ Ստեփ. Կամենիցացի վկայութիւնս ի մէջ առնու յիւրում *Հայերէն-լատիներէն բառարանին*:

ԺԴ Յովհաննէս Գառնեցի, տե՛ս Կիրակոս Գանձակեցի 200-205. տե՛ս եւ *Հայկ. հին դպր.* 769-770.

Աղօթք, թուով 23. *Բան շահաւէտ*՝ "Արդ որ ցանկայ եւ փափագէ".

Խրատ վասն կրօնաւորաց՝ "Աստանօր պիտոյ է մեզ".

Պատմութիւն աստուածատես արանց.

Վասն պատուելոյ զօր կիւրակէին՝ "Միաշաբաթ օր է կիրակի":

ԺԴ Յովհաննէս Գոլոտնեց կամ Կոլոտիկ. *Լուծմունք Դիոնեսիոսի.*

Մեկնութիւն նայեայ քաղուածոյ:

ԺԴ Յովհաննէս Դամասկացի, վարդապետ յունաց յԸ դարու.

Փիլիսոփայական եւ աստուածաբանական մատեան, թարգմանեալ յԺԴ դարու ի վրացերէն լեզուէ ի ձեռն Սիմէոնի քահանայի (Ցուցակ Նոր հայկազեանի):

ԺԴ Յովհաննէս Երզնկացի, որ եւ Պլուզ՝ Ծործորեցի, որ եւ Մաշած կամ Մաշածին (*Բզմ.* 1851, 214ա). ի *Հայկ. հին դպրութեան*, 732, ասի, թէ *Պլուզ* նշանակէ 'կապոյտ աչուի'. 'կապուտաչուի' մեկնի եւ ի *Բզմ.* 1851 214ա (Հ. Ղ. Ալիշան), այլ ես կարծեմ, թէ նշանակէ 'կարճահասակ'.

Ասացուած ի բան Ճի՝ սաղմոսի, որ ասէ. «Տէ՛ր, կաղացի առ քեզ» (*Սիսուան* 254բ).

Խրատք եւ քարոզք, թուով 33.

Ճառ ի Ծնունդ եւ ի Մկրտութիւն Տեառն, խօսեցեալ ի Սիս, *Սիսուան* 224բ:

Ճառ, խօսեցեալ յամին 1283, յաւուրն, յորում օրհնեցան ծիւորք արքայորդիքն Հեթում եւ Թորոս, *Սիսուան* 224բ.

Մեկնութիւն Քերականի.

Յորդորակ ասացուածի եկեղեցւոյ, ի խնդրոյ Ստեփանոս վարդապետի Կոռիկոսցւոյ. վերջաբանն միայն կայ ի ձեռագրիս Ս. Ղազարու, *Սիսուան* 313.

Տ ա ղ ք.

Ոտանաւոր յայրուբենս՝ "Ադամայ որդիքդ ամէն ու ծնունդ ի հողեղէն», *Հայկ. հին դպր.* 742.

Այլ *Ոտանաւոր յայրուբենս*՝ "Այրն արարած ըզքեզ ասէ".

"Երկուս ի մի տեղ բերած".

"Յակո՛բ, զարթի՛ր ի քնոյ մեղաց", տունք 46, չորեքտողեան. վերնագրի 'Յովհաննու մեծի, մականուն Պլուզ ասացեալ, ի խնդրոյ Յակոբայ մանկտաւագի եզնգացւոյ'.

"Յամենայն մեղաց ի զատ դու կացի՛ր", տունք 13, չորեքտողեան. սկզբնատառք տանցն յօդեն թերի Յոհաննեսի վարդա. (խրատական).

"Օրհնեալ Աստուծոյ անունն", տունք 62, չորեքտողեան (խրատական):

Ունի եւ այլ տաղս ռամկօրէն եւ գանձս:

ԺԵ-ԺԶ Յովհաննէս Բ Թուլկուրանցի կամ Թլկուրեանց (*Սիսուան* 218բ), կաթողիկոս Սսոյ (1489-1525), *Սիսուան* 218բ, *Բզմ.* 1863 երես 375բ (ի ծան. ինձ Համար). *Գանձք*, թուով 9.

Տ ա ղ ք, թուով 15. "Աչե՛ր, ի՞նչ ես անցեր յետեւ" (խրատական).

"Աստուած գըրած եւ մարդասէր" (ի սուրբն Այնէքսիանոս).

"Աստուծոյ անունն օրհնեալ" (ի քաջն Լիպարիտ), հրատարակեալ ի *Սիսուան*, երես 226. թերի եւ

կամաւ այլայլեալ ի պատճառս թուրքին. կան եւս երկու սխալք. 10դ տունն ուղղելի է ըստ իս՝ «*Վաթսուն Հազար մարդ կոտրեցիր Ու զՄանչակին գոված տըղան. Առիր զթախտըն Սուլթանայ, Բերիր ձիան ու չատ թախտան*» . թախտան կամ թաղրան նշանակէ 'աւար, կողոպուտ, գդ. բիւտեն'. եւ ի 24դ տան գրեալն «*Բաշ Լիպարիտ*, ուսիր *Յոհան. Բրիտանէից Համար մեռան*» *գրելի է ըստ իս* «*Բաշ Լիպարիտ*ու Սիր *Յոհան Բրիտանէից Համար մեռան*»:

"Արե՛կ, արե՛կ, իմ խուփ սուրար" (սիրոյ). (պրս. *խուպ*, 'գեղեցիկ').

"Գիւղ մի կայր, Նարեկ կ'ասեն" (ի Գրիգոր Նարեկացի).

"Դու ես գարնանային վարդ" (սիրոյ). "Ես քո սիրուն չեմ դիմանար" (սիրոյ):

*"Է՛, մա՛հ, քանի զքեզ յիշեմ" (վասն մահուան). հրատարակեալ ի *Բազմավիպի* 1859 երես 375, սխալոտ. ոչ է բարւոք եւ բաժանումն տողիցն, զի երկու տողքն գրելի են ի միում տողի, այսպէս. «*Է՛, մա՛հ, քանի զքեզ յիշեմ, կու դողամ ու կու սարսափիմ. Զըկայ քան ըզքեզ չեղի ու ամէն լեզւոյ լեղի ես*» եւն: Այսու չափով 7 — 3 — 5, զոր պատշան է մեծաչափ կոչել, գրեալ են եւ Տաղք Գր. Նարեկացւոյ. «*Եւ ձայն առիւծուն առեմ, / որ գոչէր / ի քառաթեւին*»: Միատող գրէ եւ Հ. Արսէն Բագրատունի ի Գաղղիական քերականութեան երես 555 ի 11դ օրինակին: 33դ տան Տաղիս Թուլկուրանցւոյ գրեալն՝ «*Նախատեաց զիմաստութիւն Ինքն ի յինքն ասաց քուի քեզ*» ուղղելի է՝ «*Նախատեաց զիմաստութիւն, ինքն ի յինքն ասաց՝ Թո՛ւ ի քեզ*», քուրքերէն "*Թի՛ւ եււզինէ*", որ յայլում օրինակի գրեալ է «*փո՛ւ ի քեզ*»: Ի վերջին տան գրեալն՝ «*Զինեւ անատուն տարին լըցեր Ու ի մահուն զուան Համեալ ես*» ուղղելի է ըստ այլում օրինակի՝ «*Զեօրանատուն տարին լըցեր 'ւ ի մահուն զուան ես, թէ գիտես*»:

"Ըզքեզ, Աստուա՛ծ, խոստովանիմ" (զղջական).

"Ըզքեզ ունիմ յոյս 'ւ ապաւէն" (զղջական)

*"Հոգւովըդ սուրբ ես եւ ամբիծ" (ի Քաջն Լիպարիտ), հրատարակեալ ի *Բազմավիպի* 1863 երես 376, ուր ասէ Հ. Ղ. Ալիշան, թէ յօրինողն է Յովհաննէս Թուլկուրանցի. այլ ի *Սիսուան* երես 226-227 ասէ, թէ «անծանօթ է յօրինողն»:

"Յորժամ կամէր Հայրըն զըրած" (ի Գլխատումն Յոհ. Մկրտչի).

"Քանի՞ դատիմ ի հետ մեղաց" (խրատական).

"Քեզ հոգեւոր խըրատ մի տամ" (խրատական).

"Օրհնեալ անուն Արարողին" (վասն չար կանանց):

Ունի եւ տաղ քուրքերէն. "*Քիմաէ ալէնի ալըմէզ խալ*"[Ոչ ոք գիս չէր գիտեր. ՄՄ]:

Իսկ *Արարածքն*, որ է *Գիրք ծննդոց* տաղաչափեալ, հրատարակեալ յամին 1724, որպէս թուի, ի Կ. Պոլիս, տե՛ս *Հայկ. մատենագիտ*. 63-64:

ԺԲ° Յովհաննէս Կլիմաքոս, նշանաւոր յոյն ի Զ դարու. *Սանդուղք Երկնից*:

ԺԳ Յովհաննէս Ծլուզ, վարդապետ, *Սիսուան* 154բ. **Տաղ յելս Գր. Լուսաւորչի ի Վիրապէն*, հրատարակեալ ի *Բազմավիպի* 1848 երես 196:

ԺԴ Յովհաննէս Որոտնեցի, որ եւ Կախիկ.

Ի բանն «Եւ յամսեան». *Ի բանն Յորայ* «Զի՞նչ երկիր է, յորում լոյսն ազանիցի».

Ի բանն առաքելոյ «Մարդով եղեւ մահ».

Լուծմունք Ստորոգութեանց եւ Պերիարմենիասի Արիստոտելի, համառօտեալ ի Գրիգոր Տաթեւացւոյն.

Հաւաքումն երկուց ճառից Փիլոնի վասն նախախնամութեան.

Մեկնութիւն Եսայեայ, համառօտ. *Մեկնութիւն Յովհաննու աւետարանին, համառօտ:*

Մեկնութիւն չորեքտասան Թղթոցն Պաւղոսի, համառօտ, հանդերձ լուծմամբք Յառաջաբանից Եւթաղի.

Նախերգան մեկնութեան կամ քարոզի՝ "Ո՛վ Տէր Աստուա՛ծ իմ՝ Յիսուս Քրիստո՛ս":

ԺԵ Յովհաննէս Ջուղայեցի կամ Սպահանեցի, Մրքուզ կոչեցեալ, վարդապետ.

Աղօթք, մակագրեալ «Անարժան յամենայնի Յովհաննէս վարդապետի Իսպահանցոյ արարեալ աղօթք առ Հայր եւ յՈրդի եւ ի սուրբ Հոգին, ի թվին ՌՃԽԳ (1694), յուլիս Բ»:

Ունի եւ գիրս մի հրատարակեալ, տե՛ս *Հայկ. մատենագիտ*. 471-474:

ԺԴ Յովհաննէս Վանական, վարդապետ.

Բան հաւատոյ՝ "Հաւատ ի Հօրէ սկսեալ, յՈրդի եւ ի Հոգի".

Ի բանն «Հայեա՛ց յանձն քո»՝ "Դուք արարչական խնամոցն Աստուծոյ".

Ի բանն «Տէ՛ր, զլուր քո լուայ»՝ "Զարդ գեղեցկութեան երկնից".

*Խրատ դաւանութեան յաղագս բխման Հոգւոյն սրբոյ, հրատարակեալ ի Պատմութեան Կիրակոսի Գանձակեցւոյ, տպ. Ս. Ղազարու, 1865, երես 193-197. սխալոտ.

Հարցմունք եւ պատասխանիք (ի սուրբ Գրոց).

Մեկնութիւն Յոբայ. Յաղագս անհուն որդանցն (Հայկ. հին դպր. 713).

Յաղագս լուծման (լուցման՞) ծրագալուցին՝ "Զի՞նչ է ճրագալուցին".

Յաղագս տարեմտին՝ "Աստուծով իմաստնացեալն Սողոմոն".

Պատճառք առաջաւորաց պահոց՝ "Յոլովք են բանք վասն պահոցն".

Վասն Թադէի առաքելոյ՝ "Կենսարուխ սուրբ աւետարանն".

Տեսութիւն յՈւրախացի՛ր, պսա՛կ կուսից:

ԺԴ Յովհաննէս Քռնեցի. Գիր շրջաբերական առ Հայս:

ԺԴ Ներսէս Կրակացի, յազգէ Հովծեծենց. սա է, որ յիշի ի Սիսուան 318ա. այլ Հովծեծեցն կարծեմ ուղղելի է Հովծեծենց, զի յիշեմ Հովծեծենց ընթերցեալ ի ձեռագրին Ս. Ղազարու.

Բան վասն ողորմութեան. ի բանն «Եւ այգուցն իբրեւ դարձաւ»՝ "Ունկն դի՛ք, եղբա՛րք":

ԺԶ-ԺԷ Ներսէս Մոկացի. այս Ներսէս կոչեցեալ է ի ժամանակակցացն Բեղլու (պըյըլը), զի մեծ էր բեղն», ասէ Առաքել Դաւրիժեցի ի Պատմութեան.

Ողբ յառումն Երուսաղեմի, ոտանաւոր՝ "Ի հոլովել ժամանակին":

Տաղ ի Փոխումն Աստուածածնին՝ "Աստուած եւ Տէրն ամենայնի". տե՛ս ի Ցուցակիս, զոր ինչ գրեցի յանունն Ստեփաննոս Շատախեցի. կայ պատառիկ մի հրատարակեալ ի Բզմ. 1862 երես 232:

ԺԴ Պրոկղ իմաստասէր Դիադոքոս, ի Ե դարուն. Շաղկապք աստուածաբանականք, թարգմանեալք յԺԴ դարու ի ձեռն Սիմէոնի Քահանայի փրացւոյ (Ցուցակ Նոր Հայկազեանի):

ԺԴ Սարգիս Բերիացի, Քահանայ, «հմուտ լեզուի արաբացւոց, օսմանցոց եւ փռենկի, եւս եւ յունաց, արուեստագործ ականց պատուականաց». Յաղագս ականց:

ԺԴ Սարկաւագ Բերդակցի. *Տաղ գինւոյ. "Խաղո՛ղ, զքեզ գովել պիտի", տունք 16, չորեքտողեան, հրատարակեալ ի Բանասէր հանդէսի, հ. Բ երես 437, կիսատ եւ սխալոտ. կայ հրատարակեալ եւ ի Քնար հայկականի Միանսարեանց երես 392, նոյնպէս կիսատ:

ԺԴ Սարկաւագ, առանց մականուան. *Տաղ սիրոյ՝ "Կուզէլ մ'ես յերէկ տեսայ ի քաղաքն ի յԱնգուռիա" (Անկոնա), հրատարակեալ ի Քնար հայկականի Միանսարեանց, երես 167:

ԺԷ Սթէլլութի Փրանկիսկոս (Ֆրանչեսկօ Ստելլուտի). "Բնազննութիւն (Փիզիոգնոմոնի), համառօտեալ ի գրոցն Յ. Մ. Պորտայի (Ջամբատտիստա Պորտա), անուանի բնախօսի Նեապոլսեցւոյ ի ԺԶ դարուն, գիրք չորք. թարգմանեալ ի ձեռն Յոհաննու վարդապետի Կ. Պոլսեցւոյ (որ ինձ Թուի Յովհաննէս Յակոբ Հոլով), ըստ ոճոյ նորոց, ի խնդրոյ պարոն Գասպարի՝ որդւոյ խօճա Սահրաբին": Տե՛ս Գարեգին, Նոր. մտնգր. 292. տե՛ս Յակոբ Հոլով, Բզմ. 1850 348ա:

ԺԶ Սիմէոն Ապարանեցի, վարդապետ, յօրինող Վիպասանութեանն Պահլաւունեաց եւ Մամիկոնեանց, որ տպագրեալ է. Ողբ ի վերայ վանից Մեծոփայ:

ԺԷ Սիմէոն Գառնեցի. Լուծմունք գրոցն Պրոկղի իմաստասիրի:

ԺԷ Սիմոն Ջուղայեցի, վարդապետ, յօրինող Տրամաբանութեան եւ Քերականութեան, որ հրատարակեալք են. տե՛ս Հայկ. մատենագիտ. 673, 700.

Տաղ ողբական ի վերայ անձին:

ԺԴ Սմբատ Գունդստապլ, յօրինող Պատմութեան կիլիկեցւոց եւ թարգմանիչ Ասիզացն Անտաքայ, որ հրատարակեալք են. Օրէնք:

ԺԴ Սուքիաս, առանց մականուան. Տաղ՝ "Իմ սիրուն պըլպուլ պատուական", տունք 9. սկզբնատառք տանցն յօդեն Ի Սուքիասայ է:

ԺԶ-ԺԷ Ստեփանոս Եւդոկիացի, քահանայ.

Տաղք. "Երբ որ ամառըն մօտեցաւ", ընդդէմ լուոց եւ ճանճից, գրեալ ի Ղրիմ յամին 1614.

«Ի թվականիս հազար 'ւ յիսնի", ողբք ի վերայ վաղամեռիկ եղբօր իւրոյ Յակոբ քահանայի Եւդոկիացւոյ, գրեալ յամին 1604.

"Կաֆա քաղաք, Երման դրախտի", գովութիւն Կաֆա քաղաքի:

Ունի եւ տաղ յօրինեալ յամին 1596, յորմէ յիշին չորք տողք ի *Բազմավիպի* 1865 երես 187ա:

ԺԶ-ԺԷ Ստեփանոս Կեղեցի. *Տաղ վասն կանանց խարէութեան*՝ "Փառք քեզ, բազում'ք փառաց", տունք 8, չորեքտողեան, մեծաչափ, այսինքն 7 — 3 — 5:

ԺԳ Ստեփանոս Կրակացի, արքեպիսկոպոս Տարօնի. *Կանոն օրհնութեան Ջաւու, Միսուան* 517ա:

ԺԳ Ստեփանոս Շատախեցի. տե՛ս զայս Ստեփանոս յԻննին., *Նախ.*, Գ, 214, ծան. 2.

Տաղ ի Ննջումն Աստուածածնի՝ "Աստուած եւ Տէրն ամենայնի". տե՛ս եւ զՆերսեսի Մոկացւոյ *Տաղն ի Փոխումն Աստուածածնի*, որ սկսանի "Աստուած եւ Տէրն ամենայնի". չգիտեմ՝ նո՞յն է, թէ երկու այլ եւ այլ տաղք նովին սկզբնաւորութեամբ:

ԺԳ Ստեփանոս Երէց. այս Ստեփանոս երէց է, որ յիշի ի *Հայկ. հին դպր.* 761.

Տոմարագիտութիւն, գրեալ ի խնդրոյ Հեթմոյ Կոռիկոսացւոյ յամին 1287, *Միսուան* 556ա. «Ստեփաննոսի երիցու տումարագիտի՝ որդւոյ Յոհաննիսի քահանայի, ասացեալ յաղագս ընթացութեան արեգական քաննւուր ամաց եւ շրջագայութեան լուսնին իննեւտասներեակ ամաց, որ լինի միահամուռ ընդ ամենայն ամք հինգհարիւր երեսուն եւ երկու» (*Մաշտ. Կիլիկ.*, Նոր հայկզ. ի *Տոմարագէտ*):

ԺԳ Ստեփանոս քահանայ. *Արուեստ դպրութեան, Արուեստ Ներկարարութեան.*

Արուեստք փոյատ շինելոյ եւ մխելոյ, այսինքն ջուր տալոյ, թարգմանեալ ի պարսիկ լեզուէ, հրամանաւ թագաւորին Հեթմոյ Առոյ, *Միսուան* 518ա:

ԺԳ Վահրամ վարդապետ, յօրինող *Վիպասանութեանն Ռուբինեանց*, որ հրատարակեալ է.

Լուծմունք գրոց Պորփիւրի.

Հարցմունք Հեթմոյ թագաւորի եւ պատասխանիք Վահրամայ.

Ճառք յայլ եւ այլ տօնս, Միսուան 516բ.

Մեկնութիւն օրհնութեանն Դեբովրայ՝ "Հրաշափառ է խորհրդածութիւն".

Վասն վանառականաց տասանց (այլաբանական գրուած զայլ եւ այլ ախտից):

ԺԳ Վարդան Արեւելցի, վարդապետ, յօրինող *Պատմութեանն* եւ *Ներբողինին Գր. Լուսաւորչի* յամին 1271 (Յօչրն. Ալիշանի *Պատմութեան Վարդանայ*), որ հրատարակեալք են.

Հաւաքածոյ ի Հարանց վարուց. Մեկնութիւն Դանիելի, համառօտ.

Մեկնութիւն Երգոյ երգոց, ի խնդրոյ Կիրակոսի Գանձակեցւոյ, գրեալ յամին 1265.

Մեկնութիւն Հինգ գրոցն Մովսիսի մարգարէի, ի խնդրոյ Համազասպայ առաջնորդին Հաղբատայ, աւարտեալ յամին 1261.

Մեկնութիւն Սաղմոսաց, համառօտ, ի խնդրոյ Յովհաննու Բագրատունւոյ առաջնորդին Հաղբատայ, գրեալ յամին 1251, հրատարակեալ յԱժդերխան յամին 1797, յանուն Վարդանայ Բարձրբերդցւոյ. տե՛ս *Հայկ. մատենագիտ.* երես 422: Այլ Հ. Ղ. Ալիշան Վարդանայ Արեւելցւոյ վերագրէ ի Յառաջաբանի *Պատմութեանն* Վարդանայ, Ս. Ղազար, 1962, երես գ-դ. միայն թէ չիմանամ՝ առ ի՛նչ զՅովհաննէս առաջնորդ Հաղբատայ կարծէ յաջորդ Համազասպայ, ուր այլք համարին նախորդ Համազասպայ: Եթէ *Սաղմոսաց մեկնութիւնն* գրեալ է յամին 1251 ի խնդրոյ Յովհաննու, եւ *Հնգամատենին մեկնութիւնն* գրեալ է յամին 1261 ի խնդրոյ Համազասպայ, ապա ուրեմն ուղիղ կարծեն, որք զՅովհաննէս դնեն նախորդ Համազասպայ.

Մեկնութիւն Տէրունական աղօթից.

Յայտարարութիւն բանից ի սուրբ հայրապետն Յովնան Աւձնեցի, ի խնդրոյ Համազասպայ առաջնորդին Հաղբատայ. գտանի ի Մատենադարանին Էջմիածնի. տե՛ս *Հայկ. հին դպրութիւն* երես 722 ծան. 1:

ԺԴ Վարդան Բարձրբերդցի, աշակերտ Յովհաննու Արքայեղբօր, տե՛ս *Սիսուան* 147ա, 149ա, 516բ.

Մեկնութիւն դժուարիմաց բանից աւետարանաց, ի խնդրոյ թագաւորին Հեթմոյ (Բի). զայս գործ՝ Բարձրբերդցւոյ վերագրէ Ղազար Եր. Ջահկեցի. տե՛ս ի Յառաջաբանի Վարդանայ *Պատմութեանն*, Ս. Ղազար, 1862, երես *բ*:

ԺԴ՞, ԺԴ՞ Վարդան Մարաթացի, վարդապետ, նշանակեալն Մարաթ. համառօտութեամբ ի Ցուցակի Նոր հայկազեանին.

**Աղօթագիրք*, հրատարակեալ է. տե՛ս *Հայկ. մատենագիտութիւն* երես 639:

ԺԴ՞ ԺԴ՞ Վարդան վարդապետ, առանց մականուան.

**Աշխարհագրութիւն*, համառօտ, հրատարակեալ ընդ *Բառագրոց Երեմիա* վարդապետի ի Լիվոռնոյ ի թուին ՌՃՀԷ (1728), տե՛ս *Հայկ. մատենագիտ.* երես 88: Այլ ի *Հայկ. հին դպրութեան* երես 724 ասի, թէ տպագրեալ է ի Կոստանդնուպօլիս յամին 1728, եւ ի *Հայկ. մատենագիտութեան* երես իգ՝ յամին 1728 ի Կ. Պօլիս նշանակի տպագրեալ *Բառգիրքն Երեմիայ*: Առաջին անգամ հրատ. ի Կ. Պօլիս յամին 1728 եւն, երկրորդ անգամ հրատ. ի Պարիս յամին 1819 ի ձեռն Յովհ. Սէն-Մարտէնի գաղղիացւոյ, *Մեմուար* եւն, հ. ա, երես 406-452 եւ ծանօթութիւնք 454-471:

**Առակք*, թուով 168. այս *Առակք* են, կարծեմ, հրատարակեալք *Աղուեսագիրք* անուամբ նախ յԱմստերդամ յամին 1668 եւ ապա յէջմիածին յամին 1698. տե՛ս *Հայկ. մատենագիտ.* երես 21, *Նոր մատենագիտութիւն* երես 27, *Բզմ.* 1851, 184ա, *Հայկ. հին դպրութիւն*, երես 723: Իսկ Սէն-Մարտէն յամին 1825 հրատարակեալ է ի Պարիս 45 առակս եւեթ հանդերձ գաղղիերէն թարգմանութեամբն.

Բանք յաղագս ԺԲ ականց, նմանութեամբ ԺԲ առաքելոց.

Դաւանութիւն հաւատոյ. Հայկ. հին դպրութիւն երես 722.

Մեկնութիւն Քերականի, ի խնդրոյ թագաւորին Հեթմոյ. որո՞յ Հեթմոյ. *Հայկ. հին դպրութիւն* , երես 723:

Ցանուն Վարդանայ վարդապետի կան եւ *Աղօթք*, *Խրատք ռամկախառն*, *Տաղք*, *Քարոզք*:

ԺԴ Վարդան (կամ Վահրամ) **Սեւլեռնցի**. Վարդան կամ Վարհամ գրի ի *Հայկ. հին դպրութեան* երես 730-731. տե՛ս Յառաջաբան *Պատմութեանն* Վարդանայ, Ս. Ղազար 1862 երես *ժ*. տե՛ս եւ *Սիսուան* 243ա եւ ծան. 1, 408բ.

Թուղթ ի դիմաց Կոստանդինի կաթողիկոսի առ Հեթում Ա. թագաւոր:

ԺԵ Տատուր Արզրումցի. *Տաղ գինւոյ*՝ "Յոյս կենաց արդարութեան", տունք 25, չորեքտողեան:

ԺԴ Տիրատուր վարդապետ. Նոր հայկզ. ի *Բացերեւական* յիշէ զՏիրատուր յ*Ոսկեփորիկէ*, ուր նախադասութիւնն է իմաստասիրական. «Հինգն աստին զինք մեզ նրման, Եւ հինգն ունի երկու բերան. Բազում իրաց է նա նշան, Կու մեռանի եւ է կենդան», Տիրատուր վրդ. (*Բզմ.* 1850 երես 160բ. մեկնի Լուսին անդ 224).

Հանելուկք իմաստասիրականք՝ "Իններն միայն 'ւ ընկեր չունի", տունք 24. *Քարոզք*:

ԺԴ Քերովբէ, առանց մականուան. *Տաղ մեռելոյ*՝ "Յերեկ հողվերօրդ անցայ", տունք 11, չորեքտողեան, մեծաչափ:

ԺԴ Քէֆէցի, առանց մականուան. տե՛ս եւ Մարտիրոս Կաֆացի. *Տաղ սիրոյ*՝ "Յանկարծակի մէկ մի տեսայ", տունք 6, չորեքտողեան:

ԺԴ՞, ԺԴ՞ *Քիմիաբանութիւն*. «Գիրք արուեստի քիմիական, արարեալ առաջին փիլիսոփայիցն եւ իմաստասիրացն», թարգմանեալ յարաբացի լեզուէ. գտանի յԱզգային մատենադարանի Պարիս քաղաքի, Նախկին Հաւաքումն, թիւ 109, որոյ օրինակն գաղափարեալ կայ ի ձեռագիրս Ս. Ղազարու:

ԺԲ-ԺԸ *Քնար ռամկական*. այսպէս կոչեմ ես զ*Հաւաքումն* երգոց, տաղից եւ ոտանաւորաց, որ ի ձեռագիրս մակագրի *Երգարան*, *Տաղարան*, *Խաղատետր*, *Գիրք ոտանաւորաց*: Բաց ի նշանակելոցն ի Ցուցակիս անուամբք յօրինողացն, կան եւ հարիւրաւոր տաղք առանց անուան յայլ եւ այլ նիւթս, յորոց 56 միայն գաղափարեալք են յինէն:

Քօթնայ Խլաթեցի. *Տաղ գգչական*՝ "Ա՛յ Տէ՛ր տերանց, մեղայ քեզ", տունք 32:

ԺԳ Օշին սպարապետ, տէր Կոռիկոյ. *Թուղթ առ Գրիգոր Է Անաւարզեցի*, ոտանաւոր, գրեալ յամին 1294. հրատարակեալ ի *Բազմավէպի* 1852 երես 184:

ԺԳ Ֆրիկ, որդի Թագվոշի, Նորօրորդի Դողոնայի. *Տաղ*՝ "Իմ սի՛րտ, վատին մի՛ լըսել", "Կ'ուզե՞ս որ ազիզ կենաս":

Սկիզբն գրութեան ցանկիս՝ 11 ապրիլ 1888:

Աւարտ գրութեանն՝ 18 ապրիլ 1888:

Ստոքհոլմ, 21 ապրիլ 1888:

Նորայր Ն. Բիւզանդացի

❄

[3500тр.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրա
996003526

[illegible]
3526